



Այս գիրքը Ռուբեն Ջար-  
յանի և Աղամյաննե խորա-  
գուզ աշխատության այն  
ժամ է, որ նվիրված է Հայ-  
ակե և զրերդակի ստեղծա-  
գործության և արվեստի  
վերլուծությանը։ Ուրվագծե-  
լով արտիստի բեմական  
կյանքի ստոյնանական  
դարպացումը՝ մելոդրամո-  
ւից գեղի ռուսական և հայ-  
ուսական դրամատուրգիան,  
Հեղինակը կանգ է առել  
նրա խաղացանկի գլխավոր  
գերերի վրա։ Առանձին  
գլուխ է Հատկացված ռու-  
սական կերպարներին  
(Զայկի, Արբենին), Հատուկ  
ուշագրություն է դարձված  
շեքսպիրյան գերակառա-  
րումներին (Օթելլո, Ար-  
տբա, Համեկա), որոնց  
վերլուծությունը զրագեց-  
նում է զրքի կեսից ավելին։  
Այս աշխատությունը Ա-  
ղամյանի ստեղծագործու-  
թյան և արվեստի ծավա-  
լուն վերլուծության անդ-  
րանիկ փորձն է։



A

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСКУССТВ

РУБЕН ЗАРЯН

АДАМЯН



ИСКУССТВО

ИЗДАТЕЛЬСТВО  
АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐՎԵՍՏԻ ԽՆԱՏԻՍՏՈՒՏ

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

792(47.925)(092 Արմայշ)

50

ԱԴԱՄՅԱՆ

==

ԱՐԳԵՍԾՈ

A 5583

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1960




Տպագրվում է Հայկական ՍՍՌ Դիտուրյունների ակադեմիայի  
Խմբագրական-Բրասարակական-Խորհրդի  
ռեօշմամբ

3322  
4






τ α το α ε α τ



---



Երբ հետազոտող հայացքը փորձ է անում թափանցելու և դիտելու Պետրոս Աղամյանի տաղանդի զարգացման օրինաչափությունները, ապա մեծ արվեստագետ ստեղծագործական կյանքի ներքին ընթացքը ներկայանում է շրջու տարբեր շրջափուլներով. առաջին՝ 1866—1878—տաղանդի հաստատման շրջան, երկրորդ՝ 1879—1882—որոնումների և ինքնահաղթահարման ժամանակաշրջան, երրորդ՝ 1883—1888—վերելքի և հաղթանակների տարիներ և, վերջապես, շրրորդ՝ 1888—1891—ստեղծագործական դադար:

Այս շրջաբաժանումները, հարկավ, պայմանական են, ինչպես այս կարգի ամեն մի սահմանում մեկը մյուսից կտրուկ և թվաբանական նշտությամբ անշատված չէ:

Աղամյանի բնմական զարդացման ամենածաղկում տարինները համընկնում են 80-ական թվականներին, նույսաստանի կյանքում մի այնպիսի ժամանակաշրջանի, երբ երկրում մոլեգնում էր ոճակցիան, տարածում իր տիրապետությունը հասարակական կյանքի բոլոր ձեւերի վրա: Հուսալքումն ու դատապարտվածությունը

իշխաղ արամադրություններ էին: Անզրագառնալով այդ տարիներին՝ Գորկին ասում է, որ «գրականությունը իր համար հերոս ընտրեց ոռչ-հերոսիա»<sup>1</sup>, նբարի քաղաքական այս իրադրությունը, բնականաբար, ազդել էր նաև թատրոնների գործումնեության վրա: Թատերական խաղացանկում կատարվող ակամա փոփոխությունները ցույց են տալիս, թե ինչպես թշվառության մեջ սփոփանք գտնելու, անկատմատթյան արգարացման, մռամ իրականության հետ հաշտվելու, առնասարակ անկռմային տրամադրություններ արտահայտող պիեսները բարենպաստ ողացնաներ էին գտնել:

Ծիշտ չի լինի, սակայն, եթե 80-ական թվականների գեղարվեստական կյանքի ընութագրությունը կանգ տոնի այդ կետի վրա: Այդ տարիների համար ընորոշ է և՛ գա, և՛ հակառակը:

Այս, մենք, ունուցիոններներս հեռու ենք ուսակցիոն ժամանակաշրջանների ունուցիոն գերը բացառելու մտքից, — ասում է Վ. Ի. Լենինը, — մենք գիտենք, որ հասարակական շարժման ձևը փոխվում է, որ ժողովրդական մասսաների անմիջական քաղաքական ստեղծագործության շրջանները պատմության մեջ փոխարինվում են այնպիսի շրջաններով, երբ թագավորում է արտաքին անդորրություն, երբ լուր կամ քնած են (ըստ երևույթին՝ քնած) տաժանելի աշխատանքից ու կարիքից խեղճացած և տրորված մասսաները, երբ առանձնապես արագ ունուցիոնանում են արտադրության եղանակները, երբ մարդկային բանականության առաջավոր ներկայացուցիչների միտքը հանրագումարի է բերում անցյալը, կառուցում է հետազոտության նոր սիստեմներ և նոր մեթոդները<sup>2</sup>:

Լենինը այս գրել է Ալեքսանդր Երրորդի տիրապետության ժամանակաշրջանի մասին, որի կապակցու-

թյամբ ասկում է, թե «ոկավել է մտքի և բանականության հնըթը»<sup>3</sup>:

Ռուսական գեղարվեստական կյանքի որ բնագավառն էլ վերցնելու լինենք, կտեսնենք, թե այդ տարիներին արվեստի ինչպիսի դլուխ գործոցներ են ստեղծվել Բավական է հիշել Տոլստոյին և Սալտիկով-Շչեղովինին, Երմոլովային և Լենսկուն, Ռեպինին և Սուրբկովին, Չարեկովսկուն և Ռիմսկի-Կորսիկովին, որոնք իրենց լավագույն ստեղծագործություններով անհաշտ դիրք բռնեցին գեղի տիրող իրականությունը:

Ահա այս գործիներն են, և սրանց հետ միասին ուրիշները, որոնք ռուսական կյանքի այդ մղձավանշային տարիներին լենինի ասած «մարդկային բանականության առաջակոր ներկայացուցիչներն են» եղել:

Այս տասնամյակում էր, որ ազատազրական ձրգաւումներն ավելի սերտ միավորման կողեցին ռուսական մշակութիւն երկու այնպիսի օշախների ականավոր դեմքերին, ինչպիսին էին Մոսկվայի համալսարանի պրաֆեսորները և Մոսկվայի փոքր թատրոնի դերասանները:

Այդ միավորմանը մեծապես նպաստել է դեպի համաշխարհային մշակութիւն ներկայացուցիչները, հատկապես դեպի Ենթապետական եղած սերու Համալսարանական ամքիոնից պրոֆեսորները, քեմից դերասանները ներկայացրել են Ենթապետական և դա առիթ ժառայացրել խոսելու բարձր մարդկայնության մասին: Եվ այդ ձևով նրանց հասարակությանը կողմնորոշել են դեպի վեհաջարները այն ժամանակներում, որոնց մասին Դորկին ասել է, թե «ուսակցիայի գորշ ու ծանր ամպերը լողում էին երկրի վրա, հույսի վառ աստղերը մարում, վհատությունը և տաղառուկը ճնշում էին երիտասարդությանը, մութ ուժերի արնաշաղաղ ձեռքերը նորից ու արագ գործում էին ստրկության ցանցեր»<sup>5</sup>:

Հասարակական գեղարվեստական մտքի նույնատիպ  
խմորմներ դիտվել են նաև ինչպես ուկրաինական և  
վրացական, այնպես էլ հայկական իրականության մեջ:

Աղամյանը իր գարաշբանի ահա այդ տրամադրու-  
թյան կրողներից է, «մարդկային բանականության ա-  
ռաջավոր ներկայացուցիչներից» մեկը:

Աղամյանը մենակ չէ Նրա կողքին է Բաֆֆին, որի  
պատմական երկու վեպերը՝ «Դավիթ Բեկ» և «Սամվել»,  
հենց զրա անմիջական արտահայտությունն էին: Այս-  
տեղ են նոր ծիլ արձակող երկու հեղինակ՝ Երիվան-  
դադեն և Հովհաննիսյանը: Սակայն այդպես էր ոչ  
միայն գրականության մեջ, Կերպարվեստում՝ Բաշին-  
չաղյանը, հետո Վարդգես Սուրենյանցը, երաժշտության  
մեջ՝ Կարա-Մուրզան:

Գեղարվեստական մատուցության զանազան բնա-  
գավառների այս ներկայացուցիչները, որքան էլ իրարից  
տարրեր իրեն անհատականություններ, ինչպես նաև  
միմյանցից այլ՝ տաղանդի ու թոփշքի թափով, նույն  
գործն էին անում՝ բարձր պահել ժողովրդի արժանա-  
պատվությունը, թույլ շտալ երրեք, որ գաղափարական  
նահանջների այս խառնաշփոթ տարիներին նա կորցնի  
հավատը իր ուժերի ու ապագայի նկատմամբ:

Նույնն էր անում նաև Աղամյանը, այն տարբերու-  
թյամբ, սակայն, որ ողբերգակի գործունեության շրջա-  
նակներն ավելի լայն էին: Եթե Բաֆֆին և մյուսները  
գործում էին հայ իրականության սահմաններում, ապա  
Աղամյանը մեկն էր նրանցից, որի ստեղծագործական  
կյանքը սկիզբ առնելով հայ միջավայրում, ինչպես մի  
հորդառատ գետ՝ դուրս եկավ իր ափերից, ընդգրկեց  
նոր տարածություններ: Զկտրելով իր կապը հայունի  
իրականությունից, լինելով նրա արտահայտիչը, նա  
միաժամանակ դարձավ ոռասական հասարակության,

նրա ամենալայն զանգվածների մտքերի ու ձգտումների թարգմանը։ Այն, որ նա իրու արվեստագետ այդ տարիներին իրեն գտավ Շնթսպիրի մեջ ու այդ հոգի վրա մեծացավ՝ անսպասելի երևույթ չէ։ Ինչպես Ռաֆֆին հեռավոր ժամանակների հերոսական պատմությունը կյանքի կունելով, այնպես էլ Աղամյանը շնթսպիրյան կերպարների միջոցով բնմից հաստատում էր մարդու անկապտելի սերը դեպի աղատությունը, աղատագրական ձգտումների վեհությունը, մարդու գեղեցկությունը։ Տեղին կլինի այստեղ հիշել, ինչ էնգելսն ասել է Վերածնության դարաշրջանի լուսալոր մարդկանց մասին, բանի որ նույն դժերն արտահայտվել են շնթսպիրյան հերոսների մեջ։ «Մի բան, որը հատկապես բնորոշ է նրանց համար, դա այն է, որ նրանք համարյա բոլորն էլ ապրում են իրենց ժամանակի բուռն շահերով... պայքարում են ումանք խոսքով ու գրչով, ոմանք՝ սրով, իսկ ոմանք էլ՝ թե՛ մեկով և թե՛ մյուսով միասին։ Այստեղից էլ բխում է բնավորության այն լիակատարությունը և ուժը, որոնք նրանց դարձնում են ամրողական մարդ»։

Աղամյանը մեկն է նրանցից, որ ռուսական մշակույթի երեսի գործիչների հետ մեկտեղ, բռնության ժանր տարիներին, իր խորապես ժողովրդային ստեղծագործությամբ հասարակության միտքն արթում էր պահում, բարձր մզումներ տալիս նրան։ Խավարի ու բռնության դեմ ըմբռուտացող հերոսների պայծառ կյանքի պատկերմամբ, իդեալականի և իրականի ողբերգական բախումը ներկայացնելով, նա պայքարի էր կոչում դատապարտվածության, ճնշող իրականության հետ հաշտության եղբեր գտնելու դեմ, հանուն իսկական ու բարձր մարդկայնության հաստատման։

Այդ ամենը ճշմարիտ արվեստի ուժով։

Աղամյանի բեմարվեստն այն ժամանակվա զեղարվեստական մտածողության բարձրակետերից է: Նա ոչ միայն ընդունեց այն, ինչին հասել էին իր նախորդները, այլև նրանց բեմական մշակույթի զարդարումը մղեց առաջ, նվաճելով արվեստի անմատչելի բարձունքներ: Դրանով պետք է բացատրեն, որ անցյալ դարի 80-ական թվականների ռուսական թատերական աշխարհը ճանաչեց Աղամյանի բեմական անհավասարելի մեծությունը և գասեց նրան համաշխարհային հռչակի հասած դերասանների շարքը:

ԳԼՈՒԽ  
ԱՌԱՋԻՆ

ՊԱՅՔԱՐ ԱԿԱՄՎԱՆԻ ԴԵՄ  
ԱԴԱՄՎԱՆԻ ՀԱՄԱՐ

THE AMERICAN HERALD  
QUOTED IN FULL



## ՄԵԼՈՂՐԱՄԱՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

Երբ Պետրոս Աղամյանը Պոլսից փոխադրվեց Թիֆլիս՝ երեսուն տարեկան էր, Դերասանական կյանքի շուրջ տասնհինգամյա ճանապարհ էր անցել Միշտ չէ, որ այդ տարիներին խաղացել էր, եղել էին ընդհատումներ, երբեմն կարճ, երբեմն երկար ժամանակով, Պատահել էր նաև այնպես, որ Աղամյանը մի քանի թատերաշրջան ընմ չէր բարձրացել ծվ, այնուամենայնիվ, Թիֆլիս տեղափոխվելու տարին արտիստի բեմական կենսագրությունը աշքի էր ընկնում բազում դերակատարումներով, մոտ 250 դեր՝ պատկառելի թիվ, որ նույնիսկ աներևակայելի է թվում:

Մի կողմից ազգային պատմական ողբերգություն, մյուս կողմից եվրոպական մելոդրամա: Երկու դեպքում էլ գրական հիմքի աննախանձելի մակարդակ, Ահա այն հոդը, որի վրա նրա տաղանդը արմատ է գցել ու հասկ առել:

Աղամյանը Թիֆլիս եկավ որպես մելոդրամայի դեռասան:

Աղամյանի փայլատակող ձիրքը Պոլսում այնպես էր շլացրել, որ բացի մասուրանությունից, ոչ մի այլ խոսք չի ասվել նրա մասին: Եվ այդպես էլ արեաք է լիներ: Նա, որպես զերասան, թեև բարձր բոլորից, բայց այդ միջավայրի հարազատ ծնունդն էր, այնտեղ իշխող գեղարվեստական մասածողության և ճաշակի ոգով դաստիարակված: Նրա նկատմամբ վերապահություն չկար և չէր էլ կարող լինել: Որպեսզի զերասանի շրջապատը սկզբունքային վերաբերյալ, նախ պետք է ինքը՝ շրջապատը, սեփական վերանայման անհրաժեշտության մտքին հանգեր, հեռանար այն ճանապարհուց, որի վրա կանգնած էր տարիներ շարունակ: Ցոթանասունական թվականներին, այսինքն՝ այն տարիներին, երբ Աղամյանը ձևավորվում էր սրակես զերասան, պալսահայ իրականության մեջ զվարացու հարցը հայրենական թատրոնին սպառնացող առաջգալնացման վրանցն էր: Նրա շուրջ ծավալ առած վեճերն ու բախումները այնքան ուշադրություն, միտք ու նուանդ էին պահանջում, որ մնացած հարցերը ամեններն առպարհեց չեին գալիս, պարզապես երկրորդական էին թվում:

Թիֆլիսում թատերական կյանքը բոլորովին այլ ընթացքի մեջ էր: Պոլսի հետ համեմատած, այստեղ տարբեր տրադիցիաներ էին իշխում: Եվ երբ Աղամյանը հանդեռ եկավ Պոլսից իր հետ բերած մելոդրամաներում՝ «Սեր առանց համարման», «Լյուի Ռիզին», «Արյան բիծ» և այլն, նրանով հիացան և ոչ նույն շափով, քան Պոլսում: Սակայն Աղամյանով ոգևորված ների կողքին ու նաև նրանց մեջ քննադատաբար տրամադրվածներ էլ կային: Աղամյանի խաղացանկի նկատ-

մամբ առարկություն չունենալով, կամ էլ, ունենալու գեղքում, որան էական նշանակություն չտալով, առաջինները սքանչացած էին՝ տեսնելով բնությունից առատութեան օժաված այնպիսի մի փայլատակող անհատականություն, որի նմանը Թիֆլիսի հայ բնությունը էին այդ շեր երևացել, Թնհաղատական մոտեցում հանդես բերողները վերական նշանակություն էին տալիս արտիստի խաղացանկին Նրանք այդ համարում էին արվեստադեահ գնահատության զվարավոր ելակետը։ Եվ որա հիման վրա քնինաղատում էին Աղամյանի արվեստը, ավելի ճիշտ՝ այդ արվեստի ուղղությունը, Բացի այդ, կամ, ավելի ճիշտ՝ այդ բոլորից շատ ու նախ և առաջ նրանց զբաղեցնում և մտահոգում էր թատրոնի զարգացմանն սպառնացող այն վտանգը, որ ստեղծում էր նման խաղացանկը։

Այն պայքարը, որ անցյալ դարի 80-ական թվականների սկզբներին ծավալվել է մեղանում մելոդրամայի զեմ՝ հատուկ ուսումնասիրության նյութ է և արժեն, որ թատերագիտական միտքը խորանա որա մեջ, մանավանդ որ այդ հարցի պատմությունն ուսանելի կողմեր ունի և այսօրվա համար իսկ հիմա մի-երկու խոսք միայն որա մասին։

Մոշալովի արվեստի ուսումնասիրության ապրուվը ու Ալպերս տուաշարկել է վերանայել թատերագիտական պրականության մեջ մելոդրամայի նկատմամբ, դեռևս Գոգովի ժամանակներից արմատացած, բացասական հայացքը։

Գոգովն իր վրդովված ձայնը բարձրացրել է մելոդրամայի տիրապետության դեմ, եվ այլ կերպ ինչպես կարող էր լինել, երբ, նրա ասելով, մելոդրամայի հեղինակները շուրջ հինգ տարի թատրոնի օրենսդիրներ դարձան։ «Օ՛, Մոլոր մե՞ծ Մոլիսու դրում է Գոգով»

լը, — ոռւ, որ այնպիսի լայնությամբ և լիակատարությամբ ես զարգացրել քո բնավորությունները, այնպիսի խորությամբ հետևել նրանց բոլոր կողմերին, ոռւ խիստ, շրջահայաց հետևինք, և դռ՛ւ, ազնիվ, բոցավան Երևեր, որ կարողացել ես այնպիսի պոհետականությամբ պաշտպանել մարդու արժանապատվությունը, նայեր, թե ձեզանից հետո ի՞նչ է կատարվում մեր բեմում ։

Գոգոլը նկատի ունի մելոդրամայի, իր խոսքով առած՝ հրեշավոր տիրապետությունը:

Աւերսը հաստատում է, թե Գոգոլի հարձակումները մելոդրամայի վրա՝ հասկանալի են, որովհետև նա ոմելոդրաման դատապարտել է սնիփական դրամատուրգիայի պոհետիկայի տեսանկյունից ։

Տարօրինակ հարցադրում. ապա էլ ի՞նչ տեսանկյունից կարող էր Գոգոլը նայել և դատել Միայն և միայն իր պոհետիկայի նվաճությունը է ու լավ, որ այդպիս է, նրա ողոնտիկան ոնալիզմի պոհետիկան էր, նվաճությունից նա կարող էր քննել մելոդրամայի խընդիրը: Գոգոլի պայքարը մելոդրամայի դեմ՝ պայքար էր ոնալիզմի համար: Ոչինչ չէր կարող կանգնեցնել նրան: Իր մի հողվածում նա դժգոհել է, որ մելոդրամայի աշխաւացումը զուգադիպել է մի շրջանի, երբ այնքան սրված էր բնականության պահանջը գրականության մեջ և թատրոնում: Ռիալիզմի հաստատումը գրականության և արվեստի մեջ Գոգոլի գրական կյանքի զըլիսավոր նշանաբանն էր: Պայքարել հանուն ոնալիզմի՝ նշանակում էր պայքարել ոռուական գրականության և արվեստի ապագայի համար: Պայքարել հանուն ոնալիզմի, նշանակում էր պայքարել ոռուական գրականության ժողովրդային հիմքերի ամրացման համար: Նվաճության ամենը, այն ամենը, այդ թվում և մելոդրաման,

որ կարող էր խոշքնդուել ռեալիզմի ընդերմանը, այստեւ  
է խստագույն դատապարտության ննթարկվենք:

Տրտնշալով մելոդրամաների հեղեղից, Գոգոլը միան-  
դամայն իրավացի հարց է տալիս, թև ու՞ր է մեր կյան-  
քը, Ո՞ր ենք մենք, Ժամանակակից բոլոր կրթերով և  
տարօրինակություններով։ Դունք նրա ինչ-որ արտացո-  
լումը տեսն՝ ենք մեր մելոդրամայում»<sup>5</sup>:

Գոգոլյան հայացքը դարձել է տիրապետող նաև հե-  
տագա ժամանակներում։ Նրան վերանայելու բալոր  
փորձերը միայն ժամանակավոր հաջողություն են ունե-  
ցել<sup>6</sup>:

Մեզ թվում է, որ պատմականորեն հիմնավորված  
պետք է համարվի նաև այն վրդովված բողոքը, որ Թիֆ-  
լիսի հայկական և ռուսական ժամուկը բարձրացրել է  
մելոդրամայի դեմ։

Այն մելոդրամաները, որոնք առատությամբ աեղ  
զրավեցին հայ բեմով՝ մեծ ժամանք փոքր մտքերի և  
զեղարվեստական առումով էժանագին պիհսներ էին։  
Հաստատվելով թատրոնում, նրանք իշեցրին խաղա-  
ցանկի գաղափարական մակարդակը։ Խաղացանկից նթե  
շանենք դուրս վանեցին, աւագ գոնս հետին շարքը մղե-  
ցին ունակութական դրամատուրգիայի նմուշները, նը-  
րանց հետ միասին նաև հասարակական մերկացնող  
ուղղության տրամփիան, որ ժառանգություն էր մնա-  
ցել 60-ական թվականների հայ թատրոնից։

Մելոդրաման ուներ պաշտպաններ և հակառակորդ-  
ներ։ Ոչ միայն հասարակության մեջ, այլև թատրոնի  
ներսում։ Դերասանական կազմը միատարր չէր, հետե-  
վապես բոլորի դիրքը չէր կարող նույնը լինել Բացի  
թատրոնի ղեկավարներից, մելոդրամայի կողմնակից-  
ներ էին ինչպես Պոլսից տեղափոխված, այնպես էլ տե-  
ղական գերասաններից մի-երկուարը։ Հիմնական դեմքը,

իհարկե, Աղամյանն էր, Նա էր որոշիլ ուժը։ Մելոդրամային ամբողջ խաղացանկը կառուցված էր նրա վրա։ Աղամյանի և նրա նման մտածողների դիմաց կանգնած էին հատկապես այն դերասանները, որոնք զաստիարակություն էին ստացել 60-ական թվականների տրագիդիաների սգով, սունդուկյանական պիեսների օրինակի վրա։ Այդպիսին էր Գևորգ Զմշկյանը։ Այդպիսին էր նաև Ամիրան Մանդինյանը, որը հենց սկզբից հակասության մեջ է հղել թատրոնի դեկավարության վարած քաղաքանության հետ։

Երկու քաղվածք Մանդինյանի հիշատակարանից։

«Մեր առանց համարման» թիմադրության առաջին իսկ փորձերին Մանդինյանն իր հիշատակարանում գրել է. «Միանդամայն շեմ հասկանում ինչ նշանակություն ունի այս պիեսան՝ որ հենց առաջին ներկայացման համար ընտրել են ներկայացնելու»<sup>7</sup>, Մի այլ գրանցման մեջ նա արտնչում է «Մեր առանց համարման», «Արյան բիծ» պիեսներից, բայց լի համարձակվում ձայն հանել՝ տեսնելով հաջողությունը և հանդիսատեսի հափշտակությունը։ Իսկ մի օր էլ, ինչպես իմանում ենք հիշատակարանից, նա թատրոնի զեկավարությանը հայտնել է իր բողոքը. «Պարունեն'ր, — ասել է Մանդինյանը, — այս ի՞նչ եք անում, մի՞թե կարելի է ժողովրդին կերակրել այդպիսի հնացած և անհամ ու անբովանդակ ներկայացումներով»<sup>8</sup>։

Մելոդրամայի հարցի շուրջը ծավալված պայքարին լայն մասնակցություն ունեցան ժամանակի բոլոր թերթերը, ոչ միայն հայկական, այլև ուստական։ «Մեղուշայաստանին» և «Կավկազը» պաշտպանում էին, «Մշկը» և «Տիֆլիսսկի վեստնիկը» դատապարտողի գիրք էին զրավելլ։

«Մեղու Հայաստանին»։ «Մեր առանց համարման»

մելոդրամայի առթիվ նշում է. «Ընտրած պիեսան էլ նույնպես շատ լավ էր և ավելի հարմար մեր այժմյան կյանքին»<sup>9</sup>, Նույն թերթը «Այսուի Դիդիե» մելոդրամայի մասին գրել է, թե «իբրև դրամա բարձր տեսակիցը չէ», չումի ոչ գրական, ոչ էլ գեղարվեստական արժանիքներ, բայց, այդ բոլորից հետո, միանդամայն անսպասիլի նորակացություն է կատարում. «Յանկալի կլիներ, որ Լյուսի Դիդիեն կրկին ներկայացնեն»<sup>10</sup>, Երբ բնմազրում են «Արյան բիծը», նույն «Մնջու Հայաստանին» կարծիս քննադատում է, նկատելով, թե «Գեղինակը է ֆեկտների նտքից ընկած» է, համեմատում է բննգալան կրակի հետ, որ իր փառավոր և գեղեցիկ գույներով մի պահ շլացնում է և «մի քանի բոսկից հետո հանգըռմ և էլ հետք չի թողնում»: Եվ, չնայած դրան, ասում է. «Այնուամենայնիվ պիեսան մեր հասարակության համար լավ է և նպատակահարմար»: Իսկ նույն օրը ներկայացված՝ Մոլիենի «Թոնի ամուսնության» մասին գրված է, թե «այդ կոմեդիան թույլ է»<sup>11</sup>:

Ահա և «Կավկազին» դիրքը:

«Սեր առանց համարման» պիեսը հայտարարվում է «հաջողված և շատ մտածված դրամա իտալական կյանքից»: Թերթը ողջունում է թատրոնի ջանքերը՝ «ընդլայնել իր շրջանակները և դուրս գալ ազգային ողբերգությունների անձուկ մթնոլորտից կամ էլ տեղական կյանքին նվիրված պիեսներից»<sup>12</sup>:

Բարերախտարար, այդպես չէին մտածում ամենքը: Օրինակ, մի այլ ոռուական թերթ, «Տիֆլիսսկի վեստնիկը», ոչ բացարձակ, բայց ըստ էության հակադրվում է «Կավկազին»: Բացասարար արտահայտվելով «Արշակ Բ» պատմական ողբերգության մասին, ոչ գրական, ոչ էլ բեմական արժանիքներ շտեսնելով նրա մեջ, թերթը ինդիր է դնում, որ շավելի լավ կլինի կենցաղային

պինսներ բեմադրել, ինչպես և ժամանակակից լավ հայերների թարգմանելով խաղալ օտարազդի հեղինակների ընտիր գրվածքները <sup>13</sup>:

Առաջին հայացքից կարծես ոա ոչ մի առնչություն չունի «Կավկազի» հայտնած մտքի հետ, Բայց միայն առաջին հայացքից Տեղական կյանքը պատկերող պիեսները «Կավկազ» համարում էր աղղային սահմանափակության արտահայտություն և կոչ էր անուամ թատրոնին այնպիսի պինսներ բեմադրել, ինչպես «Սեր առանց համարման» մելոդրաման է, «Տիֆլիսուկի» վեստերկը, ընդհակառակը, տեղական, կենցաղային կոմիգիաների բեմադրությունը գտնում է անհրաժեշտ և միաժամանակ խորհուրդ է տալիս եվրոպական դրամատորգիայի լավագույն նմուշներն օգտագործել, իսկ փակագները բանալու դիպրում այդ նշանակում է, որ սկսեք է խուսափել «Կավկազի» կողմից այնպիսի շուրջըն գովարանված մելոդրամայից և նրա նման պինսներից:

Այնուհետև, նկատի ունենալով «Կավկազի» հոգվածագրի այն միտքը, թե հայ թատրոնը մինչ այդ միայն հայկական պատմական ողբերգությամներ է բեմադրել կամ էլ տեղական պինսներ և «Սեր առանց համարման» ներկայացմամբ անդրանիկ փորձն է արվել օտար երկրի կյանքն ու մարդկանց պատկերել՝ ասում է, որ հայկական խաղացանկը այնքան էլ աղքատիկ չէ, ինչպես այդ մտածում են շատերը:

«Տիֆլիսուկի» վեստնիկը միառժամանակ հետո կրկին հանդես է գալիս այդ հարցերի շուրջ:

«Հայկական խմբի մասնաժողովը, — գրում է նա, — շարունակում է ժողովրդին հրամցնել ֆրանսիական ներկայացումներ» <sup>14</sup>, Զափազանց ընորոշ ձևակերպում — ֆրանսիական ներկայացումներ: Ոչ թե պինսներ, այլ

ներկայացումների Սա արդեն վկայում է այն մասին, թե  
ապագայնացման վտանգն ինչ շափնքի է հասել, որ ան-  
հանգստացնում է ոռուական թերթի խմբազրությանը:

Դրանից հետո հայուարարում է. «Մենք կլոենք»:

Այս արդեն պահանջ է, կտրուկ և որոշակի պահանջ:  
Այս այն թերթն է, որ ժամանակին, դեռևս սնականմքնը  
ամսին, այսինքն՝ գործի բոլորովին ակորին, թատրոնի  
զեկավարությանը խորհուրդ էր տալիս ինքնուրուցին դրա-  
մատուրգիային ավելի լայն տեղ տալ և մտահոգվել, թե  
ինչպես անել, որ կարելի լինի նրա հետագա դարձա-  
ցումն ապահովել:

«Կավեկազսկի կուրիերը» նույնպես բացասական վե-  
րաբերմումը ուներ գեղի մելոդրամային խաղացանկը:  
Թերթն ամննախատ որակումներ է տալիս այն պիեսնե-  
րին, որոնցով հեռնդված էր հայկական թատրոնը:

«Ֆրանսիական դրամատուրգիայի նեխած խոհանո-  
սը», — որում է նա, — այն էլ ամենավատթար ճաշակի, ա-  
պականն է նաև հայկական բեմը և, եթե կարելի է արդ-  
պես արագահայտվել, շառաւտանացրել է հայ դերասան-  
ներին: Դժվար է արատկերացնել մի բան, որ ավելի ուս-  
տիւնային, ավելի սխոլաստիկական, մարդկային բնու-  
թյան հետ ընդհանուր ունեցող լիներ, քան երևա-  
կայությամբ և դիվային ամրարտավանությամբ համեմ-  
ված անհետեթ բովանդակություն ունեցող այդ աննշան,  
խզճուկ ֆրանսիական մելոդրամաները»<sup>15</sup>:

Վերադառնանց «Տիֆլիսսկի վեստնիկի» հայուարա-  
րությանը Նա իր խոսքը պահեց: Երկու ամսի լափ լուս  
մնաց, ոչ մի տողով շանդրադավ հայկական թատրո-  
նին, մինչև որ նրա բնմում ներկայացվեց «Խոաթարա-  
լան»: Այս ներկայացումը թերթի համար մի առիթ էր՝  
կրկին վերադառնալու հայկական թատրոնի ուղղության  
հետ կապված հարցերից մի-երկուսին:

Ողջունում է թատրոնի քայլը՝ «Խաթաբալայիշ» բեմագրությունը Այն, որ վերջապես ներկայացվեց ինքնուրույն պիես, որտեղ ո՞չ սպանություն կա, ո՞չ թունավորում, ո՞չ էլ հանդուցյալների հարությունն թեև ժողովուրդ թիւ էր հավաքվել, բայց, թերթի ասելով, խաղը հաջող է անցել, կենդանին և աշխատյժ, որովհետեւ բոլոր դերասաններն էլ, բացի մեկից, իրենց տեղումն էին:

Եռորդ Մասիսյանի դերակատարի մասին է: Առարկելով Լալայանի պիես մի անփորձի Մասիսյանի նման պատասխանառու դերը տալու դեմ, Հոդվածադիրը հարց է տալիս. մի՞թե ավելի բավ չէր լինի, եթե նրա փոխարեն այդ դերում հանդիս դար Աղամյանը: Եվ նա սկսում է զենք մզեկ թատրոնի զեկավարության հետ. Գիտենալով, թե ինչ առարկություն կարող է ներկայացվել, նրա փոխարեն ասում է, և ապա ինքն էլ հերքում:

Լավ իմանալով թատրոնի զեկավարների այն պահճառարանությունը, թե հայկական ժամանակակից պիեսներ չեն դուռը, որովհետև հաճախորդներ չեն ունենում և, ընդհակառակը, մեկողբանանը են բնմադրում, որովհետև նրանց ներկայացումների ժամանակ դաշինք լիփեցում է լինում, հոդվածադիրը հակադրում է դրան. Հայտարարում այդ մուացածին պատճառաբանությունն եթե «Խաթաբալայիշ» օրը մուտքը փոքր էր, ապա մեղավորը ոչ թե պիեսն է, այլ թատրոնի զեկավարությունը, որը մոլորության մեջ լինելով, կարծում է, թե մուտքիր են տալիս «Փարիզի աղքատները», այսինքն՝ մելոդրամաները, և ոչ թե նրանց մեջ զրադված Աղամյանը<sup>16</sup>:

Թերթի առաջարկը՝ թե լավ կլինի, որ Մասիսյանի դերը Աղամյանը կատարի, պետք է հատուկ ուշադրության առնելի և կարևորիլի ոչ միայն նրա համար, որ թատրոնի զեկավարությանը հետաքրքիր միտք է տրվել, որը և հետագայում կենսագործում գտավ, — դա կարևոր է և այն

իմաստով, որ դրանով փորձ է արիստ Աղամյանին ավելի կապելու աղջային իրականության և նրա պատկերման հարցերի հետ:

Մելոդրամայի գեմմդիլող պայքարում իր համառ Հետևողականությամբ աշքի ընկալ «Մշակը»:

«Մշակը», Աղամյանի առաջին ներկայացումից սկզբամ, ընսադատական վերաբերմունց հանդիս բերեց դեպի այդ կարգի պիեսների բնմադրությունը, նա շկամեցավ դերասաններին, այդ թվում Աղամյանին մի, և մահավանդ այդպիսի, ովինսի հիման վրա զնահատական առաջ Կարծենով թե թատրոնը հասարակությանը, այնուամենայնիվ, հասարակորությունն կտա Աղամյանին տեսնելու ոչ մելոդրամաներում ևա:

Սիալվում էր:

«Մշակը» գովական է համարում ռևաթարալայիշ բեմադրությունը: Բարձր է զնահատում «Դոն Կարլոսը», բայց վաղաժամ գոյնում նրա բնմադրությունը մեր դերասանների ուժերուլու իսկ մյուս պիեսները, որ մելոդրամաներ էին, դադավարագուրկ, գեղարվանստական արժեք շռմեցալ գրվածքներ, ենթարկվում են «Մշակի» խիստ թնադատությանը, ինչպես և վրդովեցուցիչ զարմանքին, թե ինչու պետք է մեր հասարակությունը այդ կարգի ներկայացումներ տեսնի:

Թնրթը պատմական ակենարկ է կատարում:

Հայ թատրոնի սկզբնաւորության տարիներին պատմական պիեսներ էին միայն բնմադրում, հետագայում բհմից ոլառելովնեց մեր ժամանակակից կյանքն իր տիպերով, իսկ հիմա տիրապետող դարձավ ֆրանսիական մելոդրաման:

«Մշակի» Հոդվածագիրն ասում է, որ թեև Սունդուկյանի և Միքայել Տեր-Գրիգորյանի ժամանակակից պիեսները 60-ական թվականներին շունեին պատմական

ողբերգությունների հաջողությունը, բայց և այնպէս զբանք, ըստ էության, իր ժամանակի առաջադիմական երևություններ էին, որպես ոհալիստական գործերը. Դրանք հասարակական կյանքի ցավու խնդիրներն էին արծարծում, ազգում նրա վրա, մզում կյանքն առաջ, մի կողմ թողած նաև այն, որ գեղարվեստական արժանիքներով ժամանակակից դրամատուրգիան պատմականից առավել էր Այժմ հրապարակ նկատ մելոդրամաները հասարակությանը չեն կարող տալ նույնիսկ այն, ինչ ժամանակին տալիս էին պատմական սղբնրդությունները, որովհետեւ վերջիններս ոինչքան էլ անհամ լինեին գեղարվեստական կողմից, ինչքան էլ անհիշտ լինեին պատմական հետազոտության կողմից, ունեին մի արժանավորություն—նրանք բոլորն էլ ունեին մի հասարակական միտք, մի ձգում, մի տենչենցիա, այն է ծննդյան էին ժողովրդի մեջ սեր գնովի հին անցյալը, ոգմորում էին ամրոխնը, ազգասիրություն էին տարածում հասարակության մեջ՝<sup>17</sup>:

Իսկ ի՞նչ էին մելոդրամաները:

«Կարենի է վնասակար համարել այն ժանր-մունք սովորականների դրվագքները, որոնց հեղինակություններն այժմ հետզհետեւ ներկայացնում է Թիֆլիսի այժմյան հայոց թատրոնական կոմիտեությունը: Զանազան դրվածներ, ինչպես «Արյան բիծ» կամ «Սեր առանց համարման», ամեն փոքրիշատե լուրջ կրիտիկայից ստոր են, Դրանցով կարելի է միմիսայն ժողովրդի ճաշակը փլացնել և մոլորեցնել հասարակությունը... և այդ արածութեալը կարող է լինել անուղղելի... Այդ տեսակ պիհոնները կատարյալ absurdum են»<sup>18</sup>:

«Մշակը» միանգամայն իրավացի քննադատության եր ենթարկում թատրոնի զեկավարության բանած ուղղությունը: Դա առողջ և սկզբունքային քայլ էր: Սակայն

ոխալվում էր և այն էլ զարաշար, երբ այդ դրամատուրգիան կապում էր Հյուզոյի ռոմանատիզմի հետ Դրությունը շի փրկում այն, որ նա Հյուզոյին իր ուղղության մեջ համարում է հսկա: Որքան էլ հոգվածագրի կողմից հայ թատրոնում բնմադրվող մելոդրամաների հեղինակները ստոր համարվեն Հյուզոյի համեմատությամբ, սխալը մնում է սխալ, որովհետև այդ դրամատուրգիան ո՞չ ձեզով, ո՞չ գաղափարական, ո՞չ էլ գեղարվեստական մտածողության իմաստով առնչության մեջ չէ Հյուզոյի ռոմանտիկական դրամայի հետ:

Պաշտպան կանգնելով ռեալիզմին՝ «Մշակը» բացառում էր ռոմանտիզմը թատրոնում, նա կովում էր ռոմանտիզմի դեմ ոչ թե իրը մի անցած դրական ուղղության, այլ ընդհանրապես, թեև հայ իրականության մեջ, հատկապես վիճապերության բնագավառում, նրա իսկական ծաղկումը շատ մատիկ անցյալի հետ է կապված, ըստ որում առնշնչելով մի այնպիսի հեղինակի անվան հետ, ինչպես Բաֆֆին էր, որը, գոնե այդ տարիներին, վայելում էր «Մշակի» լիակատար հովանավորությունը, «Մշակը», ինչպես երևում է, ունալիզմի պահանջը տարածում էր դրամատուրգիայի և թատրոնի վրա միայն, հանգուժում, սակայն, վիպագրության մեջ, տպագրելով Բաֆֆու ռոմանտիկական այնպիսի գործեր, ինչպես «Տեսնթը», «Ձալալեդինը» և այլն:

Հոգվածում պարզապես ասված է, որ ռոմանտիզմը սխալ և վնասակար ուղղություն է: Դա մի սխալ է, որ կրկնվել է նաև հետագայում, երբ ոչ պատմական մոտեցումը «Մշակին» ստիպում էր ունալիզմից դուրս ոչինչ լրնդումնել, նրա սահմաններից դուրս ամենայն ինչ հայտարարել ոչ-ճիշտ, վնասակար, սխալ

«Մշակը», ինչպես երևում է, ռոմանտիզմի դեմ առարկությունը չուներ, երբ հարցը վերաբերում էր ազգա-

յին-ազատապրական գաղափարների գեղարվեստական-մարմանավորմանը: 1877—78 թթ. ուսւ-թուրքական սատերազմի տարիներին, երբ Արևմտահայաստանը թուրքական լժից ազատագրելու և նրա՝ ուսւական տիրապետության տակ անցնելու գաղափարն էր խմբովում, Քաֆֆու ոռմանտիկական վեպերը կենսական անհրաժեշտություն էին: Խսկ հնտու, երբ խնդիրը վերաբերում էր այն պայքարին, որ մզվում էր բուրժուական հասարակության ստեղծման ճանապարհին, նաև ապատական-ավատական տնտեսաձևերի դիմ, պաշտպանում էր սեալիզմը: «Մշակի» կարծիքով բնմից ներկայացվող պիտի որքան մոտ լիներ իրականությանը, նրա այլանոցակ կողմերի պատկերմանը, այնքան ավելի սրություն կըստանար մերկացումը, այնքան ավելի կուժեղանար քննադատությունը կրանքի ա'յն երևույթների, որ անհարիք էին ժամանակակից կրանքի հասարակական կերպին:

Բայց սա՝ ի միջի այլոց:

Մի որոշ ժամանակ անց, նկատելով, որ թատրոնի զեկավարությունը ոչ մի նշանակություն չի տվել այն քննադատությանը, որ թատրոնի գործունեությունը դրտավ «Մշակի» և այլ թերթերի էջերում, իր պարտքը համարեց նորից դառնալ այդ խնդիրներին:

1879-ի վերջերին «Մշակը» հանգես նկավ մի ընդարձակ հոդվածով:

Ոչ մի շեղում նախկին դիրքերից, հետևողականորեն և նույն խստությամբ խոսվում է թատրոնի զեկավարության ուղղության մասին, որը թերթի կողմից որակվում է որպես սխալ և վնասակար ուղղություն:

«Այն ժամանակից մինչև այժմ,— ասում է հոդվածագիրը,— թատրոնական կոմիտետը հետևում է նույն ուղղությանը այն զանազանությամբ, որ առաջ ներկայացրած պիեսները նոր էին մեր հասարակության հա-

ժար, մինչդեռ այժմ, փոքր բացառությամբ, նույն պիես-ները կրկնվում են: Մի փոքր հետո ասվում է, որ բեմագրվում են ոռմանտիկական պիեսներ, ինչպես առաջ, ու այն էլ այնպիսիներ, որոնց անունը ոչ մի օրինավոր բնմի աֆիշայի վրա այլևս չեք տեսնի՛ <sup>19</sup>:

Մելոդրամայի դեմ «Մշակի» հայտարարած պատերազմը առողջ էր և մեր թատրոնի, այդ թվում նաև իր՝ Աղամյանի շահերին մոտ, անկախ նրանից, թե Աղամյանը կամ թատրոնի դեկավարները պայքարի այդ թեժ պահին հասկանո՞ւմ էին այդ, թե՞ ոչ:

Սակայն միաժամանակ նշենք, որ մելոդրամայի համատարած ոչնչացումը ծայրահեղություն էր: Ժխտել թատրոնի խաղացանկում մելոդրամայի՝ տեղ գրավելու իրավունքը, իշորէին, ճիշտ չէ: Մի բացասական հայտարարի տակ բերել բոլոր մելոդրամաները նույնպես ճիշտ չի լինի: Բացի գեղարվեստական մակարդակի տարրերությամբներից, բովանդակությամբ և գաղափարախոսությամբ, մելոդրամաները նույնպես տարրեր են միմյանցից: Կան մելոդրամաներ, որոնք հասարակական հարցեր են բարձրացնում, բայց կան և այնպիսիները, որոնք բուրժուական բարյականության հաստատմանն են ծառայուն: Այնպես որ մի վերաբերմունք մշակել բոլոր մելոդրամաների նկատմամբ՝ դատապարտել անխորիր կամ համատարած արգարացման ենթարկել, ոչ միայն սխալ, այլև անխորնեմ կը ինի:

Վերոհիշյալ ընդհանրացնող հոգվածաշարից հետո այս անդամ արդեն խմբադիր Դրիգոր Արծրունու ստորագրությամբ հրապարակվեց մի հոգված և ույրը ներկայացման մասին:

Արծրունին չի ժխտում, որ «Կուլյը» և նման այլ պիեսներ հասարակության մեջ ընդունելություն են գտնում: Դա բացատրում է նրանով, որ աէֆեկտներ շատ կան, թե՛ն

պիեսայի ամբողջ ընթացքը վերին աստիճանի ան-  
միտ է»<sup>20</sup>:

Լինելով այն հաստատ համոզմանը, թե թատրոնը  
պետք է կրթողական ազդեցություն ունենա ժողովրդի  
վրա, նա գտնում է, որ դրան կարելի է հասնել երկու  
ճանապարհով՝ «իդեալական գաղափարներ ներշնչելով  
ժողովրդի՝ մեջ և կամ ժողովրդական իրական իլանքից  
պատկերներ ներկայացնելով»: Նա դիմում է թատրոնի  
գեկավարությանը. «Եթե դուք կամ ենում եք սկսել ժողո-  
վրդի վրա ազգել իդեալական դպրոցի միջոցով, ժանո-  
թացնել նրան ընդհանուր մարդկային անմահ գաղա-  
փարների և տիպերի հետ—ներկայացրեք երևելի դրադ-  
ների, կլասիկայի հոչակված, ձևի և մաքի կողմից կա-  
տարյալ գրվածները»:

Եվ առաջարկում է բնմ բարձրացնել այնպիսի պիես-  
ներ, ինչպես «Մթելոն», «Ավազակները», «Տարտյուֆը»,  
խորհուրդ է տալիս ընդհանրապես դիմել Ենթապիրին.  
Դյութեին, Մոլիերին, Դրա Հետ միասին, նրա կարծիքով,  
թատրոնը միայն այն ժամանակ կարող է հասնել իր իս-  
կական նպատակին, եթե կլասիկ դրամատուրգիայում  
չսահմանափակի իրեն և, ձեռք-ձեռքի աված, ընթանա-  
դպրոցի, լրագրության, գրականության հետ միասին,  
ապրի հասարակական կյանքի հարցերով, «երբ նա հա-  
րուցանում է օրական խնդիրներ, մղում է, դրդում է հա-  
սարակությանը դեպի առաջադիմություն, զարթեցնելով  
նրա՝ մեջ իր հասարակական երևույթների ինքնաքննա-  
դատությունը»: Նա պարզ ասում է, որ «թատրոնը նույ-  
նը պետք է անի, ինչ որ անում է ամենօրյա լրագրի ա-  
ռաջնորդող հոգվածը: Նա պետք է զարթեցնի օրվա հար-  
ցերը, Ռուսական գրականությունից բերում է օրինակ-  
ներ, հիշում է Տուրգենևին, ասում է, թե նրա «Որոշորդի  
հիշատակարանը», «Ռուսին», «Նախօրեին» և «Հայրեր

և որդիներք ստեղծագործությունների աշխարհ գալը հասարակական կյանքի ինչ նշանավոր երևույթներով էին պայմանավորված: Բերում է օրինակներ Պոտեխինի, և Դյաչենկոյի զրամատուրդիայից: Եվ ապա ավելացնում է, որ մեր հասարակական կյանքն էլ ունի իր ցավոտ և այրող հարցերը, որոնց պարտավոր է անզրադառնալ թատրոնը՝ «ընտանիքի բռնավորությունը, մեր օրիորդների ստացած դատարկ ուսումը, որով նրանք չեն կարող իրենց համար մի կտոր հաց ճարել, մեր անհարազատ երեխանների անօգնական դրությունը, մեր ամուսնական շահասեր հարաբերությունները, սեփական աշխատանքով ապրելու խնդիրները, մեր բարձր ուսում ստացածների հասարակական մակերեսույթի տակ ընկնելը և նրանց անտարրերությունը դեպի մեր առաջադիմությունը... և այլն, ինչքան ուզում եք...»:

Ահա թե ինչ հարցեր պետք է զրադեցնեն թատրոնին, եթե կամենում է «կրթողական ներգործություն ունենալ ժողովրդի վրա»:

Անկասկած առաջադիմական էր թատրոնը կյանքին մատեցնելու սպահանչը, որ առաջ էր քաշում «Մշակը»: Դրա համար միասին, լմուռանչը, որ նրա առաջադրած հարցերի լուսմբը՝ մարդկանց վրա բարոյական ներգործություն ունենալու և այդ ճանապարհով մի ամրադր հասարակություն վերագաստիարակելու գաղափարը լիբառալ մտածողության մակարդակից շեր բարձրանում նա կողմնակից էր հին տիտի առևտրականների, վաշխառուների, ընդհանրապես կյանքի ասիսկան ձևերի քննադատությանը: «Երբ լրագրությունը (ուզում է ասել ինչպիսին «Մշակն» է. — Ռ. Զ.) և բեմը (այսինքն՝ ինչպես «Մշակն» է ուստիերացնում. — Ռ. Զ.) ձեռք-ձեռքի տըզած միմնույն գաղափարները կհայտննեն, միմնույն նըպատակին կձգտնն, այն ժամանակ մի հասարակության

բարոյական վերանորոգության գործը կարելի է հաջող ված համարելու:

Գրականության և արվեստի վերաբերյալ Արծրունու հայտնած մտքերը, զրեթե լիովին, համընկնում էին այն շահազրդապատճեններին, որ այդ ընտառավառում հանդես էր բերում գեղարվեստական աշխարհի դեմոկրատական հատվածը: Այդ զուգագիտությունը ունետք է բացատրել նրանով, որ արվեստի և զբանահամբայան մասին Արծրունու զարգացրած հայացքները նրա լիբերալ-բուրժուական աշխարհայնցողության ամենաառաջավոր մասն են կազմում: Բացի այդ, վճռական դեր էր խաղում նաև այն, որ այդ մտքերը արծարծվել են մեր հասարակական կյանքի զարգացման մի շրջափուլում, երբ ավատական տնտեսաձևերի գիմ բուրժուազիայի հայտարարած պայքարը համընկնում էր արհեստավորության, ընդհանրապես դեմոկրատական խավերի տեսդ դժգոհությանը առետա-վաշխառուական կապիտալից: Չենք հիշատակում այլևս այն, որ Արծրունին, նրա հետ մեկտեղ ՇՄՀ-կը», ընդհանրապես բուրժուական լիբերալ դաշտավարախոսությունը կյանքի հին ձևերի դիմ կովկեցն որոշ էին պարզաբ ժողովրդի անունից: Խոկ եթե այս ամենի վրա ավելացնենք և այն, որ այդ տարիներին ցարական կտորավարությունը ի հակառապություն արդյունաբերողների, զորացնում, ամրապնդում էր ազնվականների աղղեցությունը երկրի կյանքում այն աստիճան, որ ունակցիոն դիրքերից անխնա քննադատության էր նեթարկվում կապիտալիզմն իր ներկայացուցիչներով, ասկա միանգամայն հականառաւի կողառնա օրայքարի ճակատի ժամանակավարկությունը ընդհանրապես այդ շրջանում՝ բուրժուազիայի և դեմոկրատիայի միջև:

Վերադառնանք Արծրունուն, տեսնենք, թե ի՞նչ առաջարկ է անում նա:



Թիւ

Ա. Դյումա. «Հանճար և անտուկություն»



«Եթե մենք ինքներու չենք կարող հեղինակել և պետք է բավականանանք միայն թարգմանական թատրոնական պիեսներով, — զրում է նա, — զոնե թարգմանենք սուար գրականությունից այնպիսի պիեսաներ, որոնց առաջնորդող գաղափարը հարմար է գալիս մեր կենսական օրական խնդիրներին, բայց ոչ թե «Կույր», «Նկարչի դուստր», «Սեր առանց համարման» և ուրիշ նման անմիտ պիեսաներ»:

Այսպիսով, ուրիշնե, «Մշակը» պարբերաբար հանդես է գալիս և քննադատում բնմի ղեկավարության վարած բաղադրականությունը:

«Մշակն» ասաւ է, թե իրեն շատ լավ հայտնի է, թե ովքեր են թատրոնի այժմյան ղեկավարները. որանցից մեկը կարող է լավ ֆինանսիստ լինել, մյուսը՝ հմուտ վաճառական, երրորդը՝ խմբագիր, մի ուրիշը՝ իրավաբան, բայց ոչ թատրոնի ղեկավար. Այդ ամբողջ կազմի մեջ Սունդուկյանը միակն է, որ ռհասկանում է ինչ է, բնմը, ինչ է թատրոնը, ինչ է արհեստը, ինչ է գեղարվեստը, ինչ են բնմի պահանջողությունները...»: Եվ թերթը եղրակացություն է կատարում. ուրեմն նրան պետք է ճանաչել զործի ղեկավար. Մինչդեռ նա էլ, որ եղել է ոմեզ մոտ ռեալական ուղղության հիմնող և դրա գլուխ, այժմ իր հին ուղղությունը թողած դարձել է ոռմանտիկական ուղղության կուսակից»<sup>21</sup>:

### Նախ:

Նկատենք, որ Սունդուկյանը ևս տարածայնության մեջ էր թատրոնի խաղացանկի նկատմամբ։ Վերագրել այդ սեփական պիեսները շրեմադրելուն կամ սակավ ներկայացնելուն՝ ոչ միայն սխալ կլինի, այլ կնշանակի վարկարեկիլ կասկածի տակ առնել զրամատուրգի վերաբերմունքը դեպի թատրոնը։ Բացի այդ, Սունդուկյանը

Հրաժարական նամակ է Հրապարակել, բողոքնով, որ  
պիեսների ընտրության ժամանակ ինքը նկատի չի առ-  
նըվել:

Երկրորդ:

Եթե մելոդրամայի շուրջ ծավալված պայքարը գա-  
զափարական հիմքեր շուներ, հապա ինչո՞վ բացատրել  
այն նշանակալի տարրերությունը, որ կար 60-ական և  
80-ական թվականների սկզբներին հայ թատրոնի մե-  
տրության խաղացանկերի միջև:

Մելոդրամաներ խաղացվել են հայ բնմում նաև 60-  
ական թվականներին, այն զանազանությամբ, սակայն,  
որ նրանք խաղացանկում դերակշիռ մաս չէին կազմում  
և բնույթով էլ տարրեր էին: Այս շրջանի մելոդրամանե-  
րը նույնպես դրական բարձր արժանիքներ շունեին.  
Բայց, դրա փոխարեն, գոնե անբօվանդակ չէին և յու-  
րաքանչյուրը նրանցից հասարակական որևէ խնդիր էր  
շոշափում: Վերցնենք Մելվիլի «Սեր և նախապաշար-  
յունք մելոդրաման»: Ինչպիս մյուս բոլոր մելոդրամա-  
ները, սա ևս կառուցված էր զգայացումց սյուժեի վրա:  
Բայց այստեղ գոնե արծարծվում էր և հասարակական  
թեմա՝ «դերասանի թշվառ վիճակը բուրժուա-արիստո-  
կրատական հասարակության մեջ, տաղանդի վեհության  
թեման, արվեստագետի իրավունքների և արժանապատ-  
վության հաստատման թեման»: Դրա համար էլ այդ տի-  
եսը սիրով խաղում էին նվրոպայում՝ Սալվինին և Ռո-  
սին, Ռուսաստանում՝ Լենսկին, մեղ մոտ՝ Զմշկյանը:  
Մինչդեռ 80-ական թվականների մելոդրամաներում,  
իհարկե, ոչ բոլորի, բայց մեծ մասի մեջ, ոկյանքի իրա-  
կան բախումը կորցնելով իր հասարակական սրությու-  
նը՝ փոխարկվում էր բարու և շարի վերացական պայ-  
քարով», այդ էլ, ի վերջո, հանգում էր նրան, որ «բուր-  
ժուական իրականությունը մելոդրամայում պատկերվում

ևր որպես ներդաշնակություն, որ խախտվում է սոսկ առանձին շշարագրութերից կողմից:

Ոչ մի շնդում չկատարելով իր համոզումներից, «Մշակը» թատրոնի խաղացանկի արժատական վերափոխման պահանջ է դնում, բանավեճի մեջ է մտնում այն թերթերի հետ, որոնք հիացած են Աղամյանով և, կուրացած նրա տաղանդով, չնեն նկատում կամ շեն համենում նկատել, թե հասարակական շահագրգությունների տեսակենտից ինչ կործանարար ճանապարհի վրա է կանգնած թատրոնը և նրա հետ միասին՝ Աղամյանը: «Մշակը» խնդիր է դնում հրաժարվել ֆրանսիական մելոդրամաներից, բեմադրել Սունդուկյանի պիեսները, այդ ողբով նոր հեղինակություններ ստեղծել, թարգմանելիս, բացի կըստիկ դրամատուրգներից, աշքի առաջ ունենալ ժամանակակից հեղինակներին, առաջին հերթին Օստրովսկուն, նրա պիեսները թարգմանել և խաղալ հայ բեմում, որովհետեւ նրանք թե՛ պատկերված իրականությամբ, թե՛ տիպերով, թե՛ բարձրացրած հարցերով մնջ, մեր հասարակական կյանքին ու մարդկանց մոտ են, հասկանալի ու հարազատ:

Այլ կերպ ասած՝ «Մշակն» իր բոլոր հոդվածներով՝ գրված թատրոնի հարցերի շուրջ, մի նպատակ ուներ՝ ոչ միայն մատոնացույց անել թատրոնի ներկա անհեռանկար, անբուլանդակ սովորն, այլև նշել այդ վիճակից նըրան հանելու ճանապարհները: «Մշակը» կամենում էր վերակենդանացած տեսնել 60-ական թվականների թատրոնը, այն շրջանը, երբ բեմում իշխում էր Սունդուկյանի ոգին, երբ ներկայացնում էին Օստրովսկի, Սովորիլին, Ենքառիր, Մոլիեր, Շիլլեր, և եթե մեկ-մեկ էլ մելոդրամաներ, ապա զոնե այնպիսիները, որոնք թեկուզ աղոտ շափուլ, բայց և այնպիս հասարակական հարցեր էին արծարծում:

«Մշակը» կամենում էր թատրոնը կապել կյանքի հետ, մղել նրան գեղի հասարակական մերկացնող ուղղություն։

## ԱԴԱՄՅԱՆԸ ԲՆՍԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ

Գաղափարական բախումների շինացած մթնոլորտում առաջ քաշվեց այն խնդիրը, թե մելոդրամային դրամատուրգիան, որով հեղեղված էր Հայ թատրոնը, ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ դերասանական արվեստի զարգացման վրա։ Այդ հարցին միանգամայն բացասական պատասխան է տրվել։

Այժմ, երբ ընթերցողի համար պարզ է, թի «Մշակի» կարծիքով ինչ էին իրենցից ներկայացնում Հայ թատրոնում բեմադրվող պիհենները, տեսնենք, թե ինչպես է վերաբերվել նա Ադամյանին, որպես դերասանի։

Երբ առաջին ներկայացումը կայացավ, «Մշակը» հրաժարվեց Ադամյանի և մյուս դերակատարների մասին արտահայտվելուց։ Շնազի մասին, — զրում է «Մշակը», — այս անգամ մենք ոչինչ չենք ասի։ Մենք չենք կամենա այդ ներկայացման խաղի տպավորության տակ մասնակցողների մասին մեր կարծիքը Հայուններ։ Մենք կապասնեք մյուս ներկայացումներին, մանավանդ։ Ու այդ տեսակ սիթեսայի մնջ անկարելի է զնանատել դերյաւանաների արժանավորությունները» <sup>22</sup>։

Իսկ թե ինչ կարծիք ուներ նա «Սեր առանց համարձան» պիեսի և մյուս համանման մելոդրամաների մասին, որոնք աղքատ են լինում թե՛ բովանդակությամբ և թե՛ գեղարվեստական արժանավորությամբ, արդեն հայտնի է։

Դրա հիման վրա էլ նա գտնում է, որ «ամենալավ

դերասանք այդպիսի պիեսայում հազիվ թե կարողանացայց տալ իր բնդունակուրյունը» <sup>23</sup>:

«Մշակիր քննադատության տևական ելակետը ճիշտ էր և առողջ: Թա որքան իրավացի էր վերոհիշյալ պիեսն այդպես գնահատելիս, այլ հարց է, թեև այստեղ ես նա լիովին ճիշտ էր, սակայն կարենորն այն է, որ այս գեղարում գործ ունենք քննադատական այնպիսի ըմբռնման հետ, որը գերասանի խաղը չի անշատում պիեսի արժեքը, գանում է, որ առաջինը չի կարելի գնահատել անկախ երկրորդից:

Միանգամայն բնական ենք համարում, որ «Մշակը» պետք է քննադատարար վերաբերվեր գեղի Աղամյանի արվեստը, որը ձևավորվել էր մելոդրամային դրամատուրգիայի հիմքերի վրա: Նվազականալի է: Լինելով ռեալիզմի շատագով, նա դերասանից պահանջելու էր իրականությանը հարազատ մնալու մի այնպիսի աստիճան, որը չէր կարող ունենալ, իր իսկ որակումով ասած՝ ուժանտիկական ուղղության դերասանը: «Պարզ է,— զրում է «Մշակը», — որ սոմանտիկական ռեալիզմարի մեջ խաղացող գերասանները պետք է ուժանտիկական շեղուային պատկանեն: և անբնական, հակառակիստական պիեսաներում չի կարելի իրական, ռեալիկան կերպով խաղալ» <sup>24</sup>:

«Մշակն» ընդհանուր առմամբ իրավացի էր: Բայց նրա քննադատության մեջ կա միակողմանիություն և դա պայմանավորված էր այն սրությամբ, որով այն ժամանակները մելոդրամայի «լինել թե լինելու» խընդիրն էր զրված: Սակայն այժմ, երբ այդ պայմանը պատմությանն է պատկանում, կարելի է և հարկավոր է քենել հարցը իր բազմակողմանի առումներով: Այստեղ մի այդպիսի հարցի շուրջ ծավալվելը անհարկի մի գործ կլինի, սակայն մեղ զրադեցնող խնդրի առնչության

սահմաններում չենք կարող, թեկուլ մի արտահայտությամբ, չնշել նրա երկու տարրեր ծայրերը:

Նախ՝ պետք է աշխի առաջ ունենալ դեռևս 60-ական թվականների թատրոնից ժառանգություն մնացած կենցաղայնության վտանգը մեր դերասանների արվեստում։ Ահա այդ վտանգի հաղթահարման ճանապարհին մելոդրաման ինչ-որ շափով խաղացել է դրական դեր։ Պատմական այն իրադրության մեջ թերեն դա պետք էր բարձր տրագիդիայի ժանրին՝ սկզբում Շիլերին, ապա Շերսադիրին անցնելու համար։

Անդրադառնանք հարցի մյուս ծայրին, Զմուռնալով մելոդրամայի նշանակությունը վերսիշչալ առումով, պետք է նկատենք, որ նույն դերը, այն էլ ավելի խոր ակոս բանալով՝ մելոդրաման կեատարեր, եթե նրան ընտրությունը կատարողները գաղափարական ճիշտ կողմենորոշում ունենային։ Եթե նախապատվությունը տրվիր ոչ թե, ասենք, «Սեր առանց համարման» մելոդրամային, այլ դարձյալ թող սեր լիներ, բայց նախապաշարումն էլ հետք, այսինքն՝ Մելվիլիի պիեսին, — որ նույնպես մելոդրամա է, — կամ մի՞թե կարելի է «Արյան թօին» տալ առավելություն՝ Դյուկանմին և Դինոյի հայտնի մելոդրամայի նկատմամբ («Թուղթ խաղացողի կյանքը»)։ Բայց ոյլդին շի եղել եկ զա էլ ծայրահեղ բացասան առաջ գոներ է բացել նշակետն այն էր, որ դաղափահանդրկությունը և գեղարվեստական որակի ուականը միացած լինելով, մելոդրաման դարձնում էին ավելի վնասարեր, բան օգտակար դերասանի համար։ Դա է պատճառը, որ 80-ական թվականներին նորից է առաջ բաշվում բելինսկիական այն հայեցակետը, թե դերասանի տաղանդի զարգացումը հիմնավոր կախումն ունի զրտանատուրդիայի մակարդակից։ Որքան կյանքին մոտ, որքան գաղափարուիլ բարձր, որքան բարձրարվեստ է

ովիսաք, այնքան դերասանը իր կարելիությունների գըր: ոնորման համար լայն հնարավորություններ է ստանում: Եվ ընդհակառակը:

Դուցք պայքարը երբեմն ընդունել է ծայրահեղ ձեւներ, անհարկի սրություններ: Անշուշտ ալդ եղել է Կարեւորք, սակայն, սկզբունքն է: Իսկ այդ տեսակետից մելոդրամայի գեմ կովազները կանգնած էին պաղափարական ճիշտ դիրքերի վրա: Այդ թարբեներին պայքարը մելոդրամայի գեմ հայ թատրոնում նշանակում էր նախ և առաջ պայքար ռեալիզմի համար, թատրոնի հասարակական կրթական նշանակության բարձրացման համար:

Եթե մելոդրամաները ոչ թե այդպես հախուս թափով խուժեին թնմ, այլ լինեին հատուկենու, հայկական և ռուսական, ինչպես նաև նվյուպական ռեալիստական դրամատուրգիայի գնտիր նմուշների կողքին և այդ մի քանիսից ընտրությունն էլ կատարվեր լրջաւթյամբ ու խընամքով, այնժամ, հավանաբար, այդպիսի կրթութ պայքարի անհրաժեշտություն զգացվեր: Այդ պայքարը կոչել էր ինքը կլանքը, նրա զարգացումը, քաղաքացիական ոյն շահագրգոռությունը, որ հանդես էր բերվում թատրոնի ապագա ճակատագրի նկատմամբ:

Այդ պայքարը ծավալվում էր գործույան նշանաբանի տակ, բեմը ուսումնական ամրիոն դարձնելու ձգտումով և այն հասկանալի մտահոգությամբ, թե ի՞նչ խոսք է ասվելու այդ ամրիոնից, այդ խոսքն ի՞նչ ուղղություն է տալու հասարակությանը:

Մի խոսքով, «Մշակը, ընդհանրապես մամուլը, հայկական և ռուսական, պահանջում էր բեմից վտարել հասարակության մտքին և հոգում անունդ շտվող և ճաշակն աղավաղող մելոդրամները: Պահանջում էր վերականդնել Սունդուկյանի դրամատուրգիայի իրավունքը թատ-

բանի նկատմամբ ենողիր էր դնում՝ բանալ հայ թատրոնի փակ դռները Դրիբոյեղովի, Օստրովսկու, Սուխովու-Կորիլինի պիեսների առաջ, և վերջո, պահանջը հանգում էր նրան, որ հայ բնմից երևան Եկկերի և Եկքսպի-րի հերոսները՝ իրենց կրծերով և բախումներով:

Իրավացի պահանջներ:

Հայ իրականության մեջ ոճալիումի համար մղվող պայքարի պատմության ուշադրավ էջերից է սա:

Սակայն երր «Մշակը» փորձում է իր միտքը բնմական իրականությամբ հաստատել, թերթն ընկնում է ժայրահեղ միակողմանիության մեջ, հանդես բերելով անսրող միտումնավորություն:

«Մշակն» այն անսակնախ վրա էր կանգնած, թե կա-ռիք չկա Պոլսից ուժնը հրավիրել նվ որպեսզի ցույց տա, թե ինքն իրավացի է, իր առաջ մի պարզ նպատակ է որեն՝ ապացուցել, որ հրավիրած ուժերը մի առանձին արժեք չեն ներկայացնում:

Ժխտում է Առտղիկին Ժխտում է Սիրանույշին: Այն-քան միամիտ չէ, որ մեկի կամ մշտակ մեջ ոչ մի արժանիք լտեսնի: Չի ասում, թե ձիքը շունեն, բայց նրանք, «Մշակի» կարծիքով, շշատ և շատ խղճմտարար պետք է աշխատեն ծանոթանալ բնմական արվեստի և գրականության հետ:

Թերթը նույն ձևով է վարվում նաև Աղամյանի հետ: «Մշակի» հողվածագիրն ասում է, թե առաջին իսկ ներկայացումից հետո իր համար պարզ էր, որ Աղամյանը «միշտակ ընդունակությունների տեր մի դիրասան է»: Այս ծայրահեղ խստությունը, որով նա արտահայտվում է Աղամյանի մասին, թերևս արդյունք է այն կըրթի, որով թերթը հարձակվում և ժխտում էր ոռմանտիկական ուղղությունը, համարելով ալդ, հիշեցնենք, որ-իսալ և վնասակար:

թայց ոչ, դա այդպես չէ։ Այդպես չէ թեկուզ այն պատճառով, որ նա ընդունում է, թե ամեն մի ուղղություն էլ կարող է ունենալ իր և՝ միշտ ներկայացուցիչը, և՝ տաղանդավոր, և, նույնիսկ, հանճարեղու «Մշակը» լի ընդունում Աղամյանի ոչ ուղղությունը, հայտարարելով այն ոռմանտիկական, ոչ էլ տաղանդավոր լինելը, թեկուզ որպես այդ ուղղության մեջ իրեն գրանուրով արևեստագիտ։

Չի կարելի ապել, թե նա փորձ չի անում իր ասածն ապացուցեն, Տեսարաններ է մեջ բերում, հիշում խաղից տարբեր կտորներ, առանձին մանրամասնություններ և քննադատության հնթարկում։ Ինչպես և չներ կարող ասն, թե նրա քննադատությունը միայն և միայն ոչ ճիշտ դատողություններից է կազմված։ Այսպես, օրինակ, թերթը ճիշտ է նշում մելոդրամային խաղացանկի աղղեցությունը նրա արվեստի վրա, բեմական խոսքի հացած եղանակը, արտաքին տպավորությանը մեծ տեղ տալը և այլն։ Այս դիտողությունները ճիշտ են։ Դրանց հաստատումը կարելի է գտնել և դրական սպով գրված հոդվածներում։ Եվ, այնուամենալիք, գարմանալի է, թե ինչպես է, որ «Մշակը» լի կարողացել այդ, թեկուզն շատ լուրջ, թերությունների ետենք տեսնել, թե ինչպիսի մեծ տաղանդ է կանգնած։

Սա չի նշանակում, թե Աղամյանին հայտարարելով միշտ դերասան՝ «Մշակը» նրա մեջ արժանիք չեր տեսնում։

«Մշակը» գտնում է, որ նա «շափից դուրս աշխատաւուր զերասան է, աշխատասիրության կողմից կարող է որինակելի լինելու։ Բացի դրանից, ասում է, որ «ընդունակ է հասարակությունը գրավելու»։

«Մշակը» պետք է պատասխան տար և այն հարցին։ Թե հապա ինչո՞ւ Աղամյանը հասարակության մեջ այդ-

պիսի մեծ հաջողություն ունի: Նա բացատրում էր դա  
այն վերաբերմունքով, որ հանդիսատեսն ունի դեպի գր-  
րական հերոսը, այն կարեկից վիճակով, որի մեջ գտնե-  
զում է կերպարը, կամ հերոսի կատարած սխրադորժու-  
թյամբ, որ ազնիվ ոգնորության է մատնում դահլիճը և  
այլն, Թերթը և հոգվածագիրն իրենց նեղություն շէի:  
պատճառում պատասխանելու այն հարցին, թե ինչո՞ւ  
ապա որոշ գերեր, նույնպես հերոսների, որ կատար-  
վել էին անցյալում և, ըստ որում օժտված գնրասան-  
ների կողմից, շէին թողել այդպիսի մեծ տպավորություն,  
ոչ էլ խելաճեղ հափշտակության էին մատնել թատերա-  
սրահները, ինչպես այժմ, Ազամյանի ժամանակ:

«Մշակին» դուր լէր գալիս մյուս թերթերի և մանա-  
վանդ ոռւսական մամուլի ոգնորությունը Ազամյանով:  
Զէր կարողանում թաքցնել իր վրդովմունքը Ազամյանուն  
հիացած հասարակության զեմք Երրեմն նույնիսկ մի-  
րավորական արտահայտություններ էր գործածում նը-  
րանց նկատմամբ: Վեճի մեջ էր մտնում թերթերի հետ,  
երրեմն բացահայտ, երրեմն ակնարկով, բայց միշտ հա-  
կադրվելով նրանց հիացմունքին, համարելով այդ մոլո-  
րության արդյունք: Այսպես, օրինակ, «Լյուսի Դիդիե»  
ներկայացումից հետո «Կավկազ» լրագիրը հրապարա-  
կեց հիացական հոգլած Ազամյանի խաղի մասին: Ա-  
զամյանը կատարում էր Դիդիեի դերը, որը վերջուն  
խելագարվում է: Հոգվածում ի միջի այլոց առված է,  
թե «այդ ներկայացմանը ներկա գտնվող մի բժիշկ վր-  
կալեց, որ պ. Ազամյանի ներկայացրած խելագարու-  
թյան տեսարանը անշափ բնական էր, ինչպես այդ պա-  
տահում է իրականության մեջ, մի բան, որին ինքը,  
որպես բժիշկ վկա է եղել ոչ մեկ անգամ»<sup>25</sup>: Ծվ ահա  
«Մշակը» «Կավկազի» հետ բանավեճի է բռնվում: Նախ  
ասում է, որ շատերից լսել է, որ Ազամյանը խելագա-

ոռությունը շափազանց բնական և ճիշտ կերպով է ներկայացնում, հետո էլ գրում է, թե մի բժիշկ, որ շատ խելագարներ է տեսել ու բժշկել, հաստատել է այդ ծվանից հետո հակառակը ապացուցելու համար ասում է, որ ինքը երկու անգամ տեսել է Աղամյանի խաղը նույն ներկայացման մեջ, ուստաչին անգամ Դիդիեն մի կերպ խելագարվեցավ, երկրորդ անգամ ուրիշ կերպ՝ Այսինքն՝ խելագարության բուդի առաջին և երկրորդ ներկայացումների ժամանակ մեծ զանազանություն կար կարճ ասենք՝ խելագարության խաղը մտածված չէր, այլ պատահմունք միայն։ Դերի մշակումը Աղամյանի կողմից, որի արդյունքը եղել է ավելի կատարյալ խաղ, քան սկզբում, և միաժամանակ ինչ-որ մանրամասնությունների մեջ տարրեր առաջինից, հնարավոր է նույնիսկ զգալի տարրեր՝ առիթ է տվել «Մշակի» հոդվածագրին անհիմն մեղադրանք հարուցելու, թե պատահմունք է և ոչ մտածված օթե մտածված չի խաղում Աղամյանը, հապա ինչո՞ւ հենց ինքը նույն հոդվածում ասում է, որ մեր մյուս բոլոր գերասանները կարող են օրինակ վերցնել Աղամյանից, թե ինչպես պետք է դերը ուսումնասիրելի է' լ ի՞նչ օրինակելի ուսումնասիրության մասին է խոսքը, եթե խաղը մտածված չի ատացվում, եթե դերասանը իր խաղի ամենադժվարին մասում իրեն պատահականության է հանձնում 23։

Ինչպես հաշտեցնել այս հակասությունը, Պետք է ներկատել, որ այս հոգիածում այլ հակասություններ էլ կան, որոնք իրավունք են տալիս հնթաղրելու, թե հոդվածադադիրը մի կերպ է մտածում, բայց բոլորովին այլ կերպ գրում։ Իսկապես Ահա թե ինչ խոստովանությունների ենք հանդիպում հենց նույն հոդվածում։ «Մենք ինքներս խոստովանում ենք, որ շատ խիստ ենք դեպի այ. Աղամ-

յանը և շարունակության մեջ էլ խիստ կլինենք: Մենք այդպես չէինք վերաբերվի գեղի պարոնը, եթե նրան տաղանդ, հանճար չհամարեին: Այն գեղքում մենք կասեինք, որ հայոց բեմի համար պ. Աղամյանը լավ է. մինչև անգամ շատ լավ է»<sup>27</sup>:

Անհրաժեշտ է արդյոք այս հատվածը մեջբերելու: Հետո ծավալվել, խոսել ընդարձակորեն և զարմանալ, թե այդ ինչպես մի-փոքք առաջ գրվածը, թե նա միշին ընդունակությունների տեր դերասան է, այդքան շուրջ մոռացվեց և դարձավ լավ, անգամ շատ լավ դերասան:

Որ «Մշակը» գեղի Աղամյանը միտումնավոր դիրք է գրավել՝ անկասկած է, ինչպես և անկասկած է այն, որ այդ միտումնավորության պատճառը պետք է որոնել ավելի թատրոնի ղեկավարության նկատմամբ թերթի ունեցած վերաբերմունքի մեջ: Աղամյանն այստեղ զոհ է: Ստվեր գցել Աղամյանի վրա, կարողանալ ապացուցել, որ նա այն չէ, ինչ կարծվում է՝ նշանակում է զեկավարությունից խլել հենց այն, ինչ նրան հասարակության մեջ այդքան հաջողություն է բերում: Այս է հոգվածագրի թագնված նպատակը: Բայց այդ պետք է կարողանալ և ապացուցել «Մշակը» շկարողացավ: Եվ դա միայն կարողության պակասի հետևանք չէր, այլև այն բանի, որ կան այնպիսի անհերթելիորեն բացահայտ երևույթներ, որ ինչ էլ ուղղում են արա, միննույն է, ոչ ոքի շեմ կարողանա հակառակն ապացուցել:

Այս հոգվածը, նրա հեղինակի կամքին հակառակ Աղամյանի օգտին է խոսում իր որոշ հատվածներում: Այսպես, օրինակ, մի տեղ ասված է, թե «Թատրոնական խմբի անդամներից գրեթե յուրաքանչյուրը սկսեցին հետևել պ. Աղամյանին»: Եվ որպես բացառություն, որ չի ենթարկվել Աղամյանի ազդեցությանը՝ հիշատակվում

Գևորգ Տեր-Դավթյանը, Պարզ է, թե հոդվածագիրն ինչի է այս արել. որպեսզի մեծարելով Տեր-Դավթյանին՝ վերջինիս հակադրի Աղամյանին, Թերթը իրավացի է, երբ ուսալիղմի սկզբունքը պաշտպանելիս հենվում է Տեր-Դավթյանի նման արտակարգ շնորհներով օժտված դերասանի արվեստի վրա: Այս շատ լավ է: Բայց, դու հետ միասին, պարզվում է հօգուտ Աղամյանի և այն, որ հայ դերասանները, գրեթե ամբողջ խումբը, գտնվում է Աղամյանի արվեստի ազդեցության տակ: Ուրեմն ոչ միայն հասարակությունն է հիացած Աղամյանով, այլև դերասանները, գուցե և նույնիսկ նրանք, որոնք սույրարի մեջ էին նրա դեմ:

Ահա և մի այլ օրինակ: Նույն հոդվածում գրված է, թե շատերի կարծիքով Ստրելսկուն պետք է ուղարկել Աղամյանի մոտ դասեր առնելու Ստրելսկին Թիֆլիսի ուսական թատրոնի դերասաններից էր, այն լավագույն ուժը, որին վստահում էին հերոսների դերեր: Ստրելսկին հասարակության սիրելին էր: «Մշակը» վրդովվում է դրա դեմ, շիմանալով, որ մի քանի տարի հետո համեմատությունները շատ ավելի մեծ շափեր են ընդունելու և ինքն էլ արձագանքելու է դրանց իր էջերում: Այն ժամանակվա համար սա ևս կարևոր վկայություն է: Թող «Մշակը» վրդովվի, բայց դրա փոխարեն, ինչպես այն ժամանակվա ընթերցողը, այնպես էլ մենք հիմա դրա հիման վրա հնարավորություն ունենք գաղափար կազմելու, թե Աղամյանը ամենակարճ ժամանակվա ընթացքում ինչ մեծ տպավորություն է թողել հասարակության տարբեր շերտերի վրա, որ նրան ոչ միայն դերադասում են իրենց նախկին կուռքից՝ Ստրելսկուց, այլև այնքան տարբերություն դնում նրանց միջև, որ վերջինիս համարում են աշակերտ առաջինի հանդեպ:

Թերեւս հարկ Ալիներ այս մանրամասնությունների մեջ մտնել, եթե «Մշակը» Աղամյանի արվեստի գնահատության հարցում մնար այն սկզբունքի բարձրության վրա, ինչ նրա և ընդհանրապես թատրոնի խաղացանկը քննադատելիս Այլ հարց է, եթե նա, ընդունելով նրա ձիրքը, ցավիր, որ այդ բացառիկ ուժը սխալ ճանապարհի վրա է կանգնած, վնասակար դաստիարակություն է ստացել Թող քննադատեր ուղղությունը, սակայն շրացասեր, որ գործ ունի մի արտակարգ արվեստագետի հետ։ Այն ժամանակ ո՞չ «Մշակը», ո՞չ էլ նրա հոգվածագիրը շէին մեղադրվի մանր և անսկզբանք միտումնավորության մեջ։

«Մշակի» քննադատության մեջ, այնուամենայնիվ, կար մի իրավացի կես։ «Կույր» ներկայացման մասին շատ թերթեր գրեցին, թուլորն էլ հիացմունքով արտահայտվեցին Աղամյանի խաղի մասին։ Գրեց նաև «Մշակը»։ Այս անգամ, որպես քննադատ, հանդիս եկավ Արծունին։ Ավելի զուար, քան իր աշխատակիցները, ավելի բազաթավարի, քան նրանք, քննադատում է Աղամյանին։ «Կույրին» նվիրված քննադատականում Արծունին շի խոսում դերասանների խաղի մասին, իր այդ վարմունքին տալով հետևյալ բացարպությունը։ «Ինչքան է, երևելի լինեին դերասանները, — զրում է նա, — այդ տեսակ անճուռնի պիեսայում անկարելի է դատել դերասանի խաղալու շնորհի վրա»։ որովհետև, նրա կարծիքով, անհնար է գնահատել կամ քննադատել դերասանի խաղը «արվեստական», օդային, անբնական, իրականությունից զուրկ, անհարմարություններով լի պիեսաներում։ Եվ անմիջապես ավելացնում է։ «բայց ուրիշ կողմից ես հավատացած եմ, որ ոչ մի օրինավոր դերասանները շի համաձայնի խաղաւ «Կույրի» պես մի արվեստական դրվածքի մեջ։

Արծրունին առաջարկ է անում.

«Երող պարոն Աղամյանը փորձի մի անգամ խաղալ ու թե միայն հանրածանոթ պիեսայի մեջ, որի տիպերը անմահ են և որի ձևը տնհանդիմանելի է, բայց մինչև անգամ փորձի մեր տեղական զրողի, Սունդուկյանի ռէլի մեկ զոհ» գրվածքի, թեև թույլ, բայց իրական և կենդանի Միքայելի դերը ներկայացնել,— և այն ժամանակ եօ կասեմ նա լավ դերասան է թե ոչ»<sup>28</sup>,

Ի՞նչն է այս դեպքում Արծրունու ասածի մեջ ճիշտը: Նրա առաջարկի մեջ կա առողջ պահանջ՝ կապել Աղամյանին լուրջ զրամատուրգիայի հետ, այն կլասիկ պիեսնիրի, որոնց մեջ արծարծված են ընդհանուր մարդկային գաղափարներ՝ գեղեցիկ և կատարյալ ձևի մեջ: Այս պահանջի առողջ կողմն այն է, որ քննադատը կամենում է Աղամյանին տեսնել ազգային իրականության հետ և բարտ կապերի մեջ: Մի խոսքով՝ Աղամյանի շուրջ օրորի ծավալ առնող և ընդարձակվող գրականության մեջ այս այն լուսավոր կետն է, երբ քննադատը կամենում է գերասանին ետ պահել էժանագին զրամատուրգիայից, ջույց տալ նրա կործանարար աղքեցությունը և մզել նրա տաղանդը դեպի գործունեության այնպիսի ոլորտներ, ուր ճշմարիտ ձիրքը փայլ առնելու և փայլ տալու համար լայն ասպարեզ կգտներ:

## ԻՆՔՆԱՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ

Այն քննադատությունը, որ ծավալվեց Աղամյանի արվեստի շուրջը, որքան էլ ծայրահեղ և միակողմանի, չէր կարող անհետանք անցնել: Աղամյանը, զգայուն հոգու և սուր մտքի տեր արվեստագետ, չէր կարող չնըկտան այն առողջ հատիկը, որ կար քննադատության

մեջ։ Իսկ եթե սրան ավելացնենք և այն, որ այդ քննադատության մեջ երբեմն կարելի էր նկատել բնեմական արվեստի ըմբռնման տեսակետից նուրբ և դիպուկ դիտողություններ, ապա ևս առավել Աղամյանի համար, երբ ցավի պատճառած մորմոքն անցնում էր, հասկանալի պիտի լիներ քննադատության շահեկանությունը։

Ի՞նչ էր, վերջինիքը, քննադատությունը պահանջում Աղամյանից՝ բնական ճշմարտացի խաղ, հավատարմություն իրականությանը։

Դրան նպաստող մի այլ ազդակ ևս կար, Աղամյանը չէր կարող հենց սկզբից շնկատել այն տարբերությունը, որ կար պոլսեցի և տեղացի գերասանների խաղակերպի միջև։ Եթե պոլսեցիների մեջ ուժեղ էր գեղեցկության ձգողումը, որը նվաճվում էր իրականությունից շեղվելու գնով, ապա տեղացիների արվեստի մեջ կար իրականությանը հավատարիմ մնալու իշխող պահանջը։ Համապատասխան զաստիարակությունը և մանավանդ թիֆլիսում գտած իր հաջողությունը կարող էին Աղամյանին սկզբներում խանգարել տեղացի գերասանների արվեստի այդ թանկազին կողմը ըստ արժանվույն զնաւուել։ Բայց թվում է, թև մի շրջան միայն։ Հայտնի է օրինակ, մի այսպիսի փաստ։ Աղամյանի նոր եկած ժամանակները թատրոնում խաղում էին «Պեպո»։ Աղամյանը զրադված չէր։ Զրադված չէին նաև Աստոիկն ու Սիրանուշը։ Նայում են ներկայացումը և հավանում, նույնիսկ շատ հավանում։ Աղամյանը զարմանք է հայտնել։ Թե ինչո՞ւ հասարակության մեջ շկա այն ոգմորությունը, ինչ նկատվել է իրենց ներկայացրած մելոդրամաների ժամանակ։ Հավանել են պիեսը, հավանել են Չմշկյանի «Պեպո», Տեր-Դավթյանի Գիքոն, Մանդինյանի Կակուլին, Ավալյանի Զիմզիմովը, մի խոսքով՝ հավանել պիեսը և ներկայացումը։

«Պնդոյի» նկատմամբ պոլսեցի դերասանների, այդ թվում նաև Աղամյանի հիացումը սիրալիրության մի սովորական շռայլում չէր։ Այդ ներկայացումով հիացել հն ամենքը, ում վիճակվել է նայել—թող այդ լինի Պետքրուգրդի բնմի աստղը՝ Սավինան կամ աշխարհ շրջած էռնեստո Ռոսսին։ Եվ անկարելի էր չհավանել, որովհետեւ այդ ներկայացումը իսկապես բեմական արվեստի մի կատարյալ կոթող էր։ Իսկ այդ ներկայացման մեջ ավելի, քան մի այլ տեղ, ռեալիստական արվեստը արագացավել է բցուրնդացած ձևով։ Թանի որ Աղամյանը գնահատել է, ապա ուրեմն պետք է մտածել, որ եթե ոչ այդ ժամանակ, ապա զոնե հետո այդ ներկայացումը պետք է ծներ ինչ-որ մտքեր կամ խորհրդածությունների առիթ տարւ Այսպես, օրինակ, Աղամյանին մեղադրում էին, որ նա արտաքին էֆեկտին մեծ տեղ տվող դերասան է։ Զէր կարող այդ լընդունել, որովհետև դա իսկապես այդպես է եղել՝ լինելով մի ամրող դաստիարակության արգասիք։ Այն պիեսները, այսինքն՝ մելոդրամաները, որոնց մեջ հանգես էր գալիս՝ իրենց մեջ մեծ շափով կրում էին արտաքին էֆեկտի տարրու Ուրիշն գերասանի խաղակերպը թելադրված էր դրամատուրգիայի բնույթով ու ոճով։ Աղամյանի առաջ, բնականաբար, պետք է այսպիսի հարց կանգներ։ իսկ եթե փոխվի դրամատուրգիան, խաղացանկը Այդ ինչպես ու ։ օրինակ, որ Տեր-Փավիթյանը և Վարդուհին, մեկը Գիրու, մյուսը՝ Շուշան, բավական երկար զրուցում են բեմում, և հասարակությունը, Աղամյանն էլ նրանց հետ կլանված լսում է։ Տեսարանն ամրողապես կառուցված է կենդանի խոսքի վրա, մի այնպիսի դիալոգի, որի օգնությամբ աստիճանաբար գծագրվում են կենդանի բնակորություններ։ Ուրեմն՝ նղբակացություն։ առանց արտաքին էֆեկտի օգնության էլ տպավորություն կարելի է

դործել, ըստ որում մեծ ապավորություն։ Մտածել է՝ որդյոք Աղամյանը մի պահ իրեն դնել Տեր-Դավթյանի, ունզ իր գերը չէր, կերպարը կոլորիտով և բնավորությամբ հյութավորելու այդ ոճը ևս օտար էր իրեն։ Ընդհանրապես այն կենցաղայնությունը, որ նկատվում էր ունդուկյանական ոգով դաստիարակված գերասանների մեջ՝ Աղամյանի ճաշակով չէր Բայց դա չէր խանգարում նրան նիշտ հետևությունների հանգել։ Նա այդ կարող էր ժերժել, բայց հիմնականը, խաղի պարզությունը, իրականության նկատմամբ գերազանց հավատարմությունը՝ չէր կարող ընդունել։ Այդ մասին մտածելիս չէր կարող հիշել, որ քննադատությունը, նույնիսկ մելոդրամային ներկայացումների ժամանակ, միմյանց հակադրել է Տեր-Դավթյանին և իրեն։ Տեր-Դավթյանի պարզությունը, իրականության խոր զգացողությունը մի հիմք էր Աղամյանին կշտամբելու, ասելու համար, թե երբ այդ նրկու դերասանները բեմի վրա հանդիպում են, ապա Աղամյանի խաղի արվեստական լինելը նկատելի է առավել շափով։

Նվազ դեր շի խաղացել և այն, որ այդ ժամանակները Աղամյանը ուսաւական թատրոնին, նրա ներկայացուցիչների արվեստին և զրա հետ միասին ուսաւական զրամատուրդիային, զրականությանն ընդհանրապես ծանոթանալու լայն հնարավորություն ուներ։

Հայկական թատրոնն իր ներկայացումները տալիս էր ամառային թատրոնում, որը մշտապես զբաղեցրել էր Ս. Ա. Պալմի կողմից զլիսավորած ուսաւական թատերախումբը։ Հայ դերասանները, այդ թվում և, իհարկե, Աղամյանը, ազատ մուտք ունենալով թատրոն՝ հաճախ էին լինում ուսաւական ներկայացումներին։

Մի կողմ թողած այն ոգևորությունը, որ առաջացրել էր ուսաւական զրականությունը իր հիմնական բնույթով,

Աղամյանը հասկանում էր, որ հարցը մի կամ երկու գերասանի խաղի մեջ չէ, որոնց նա կարող էր հավանել կամ շհավանել, ոչ էլ գրականության առանձին երևույթների, այլ ուղղության, ընդհանուր ուղղության մեջ։ Ե՞ս այդ ժամանակ, և՛ հնտադայում, երբ անցավ Ռուսաստան՝ Աղամյանը արվեստի որ բնագավառին էլ աշք էր պահում, տեսնում էր, որ տիրապետող հոսանքը ունելումն է, այն ուղղությունը, որը և զգաստացնում էր նըրան՝ ստիպելով վերանայել սեփական արվեստի մի քանի էական կողմերը։ Դա հարմարում չէր շրջապատճին, ոչ էլ նրա որահանշին, ինչպես կարող է սխալմամբ ենթադրվել։ Դա իսկական արվեստագետի հանդիպումն է արվեստի մեծ ճշմարտության հետ, որը, ինչպես այդ հանախ է պատահում, հարկադրում է վերարժեքավորել որոշ երևույթներ և ըմբռնումներ։ Հրաժարվել այն բոլորից, որ իրեն արգեն աղմկալի հաջողություն էր ըերեկ՝ զյուրին գործ չէր։ Միայն մեծ արտիստն աներկյուղ կարող էր այդպիսի քայլի զնալ։ Մեկին զա կարող է արգեն նվաճված փառքի կորսայան առաջ կանգնեցնել, մյուսի առաջ՝ լայն ընթացքի հորիզոններ բանալ։ Աղամյանը, հանդուզն ու խիզախ արվեստագետ, ինքնավերանայման ճանապարհն է բնում:

Տարրերությունը մեծ էր, փոփոխությունն անհանաշելի, թեև բնավ հակված շենք բաժանելու այն ժայրահեղ հայացքը, ըստ որի Աղամյանը ոչինչ էր, երբ Պոլսից եկավ, Այդ վերափոխությունը թերևս այնքան զարգացում չէր, որքան թոփի, Եվ այն ստեղծադորժական վերափոխությունը, որ ապրել է Աղամյանը որպես դերասան, թոթափելու Պոլսի տվածից շատ բան և ընդունելու այն նորը, լավը, որ կար թիֆլիսյան միջավայրում իր ծննդավայրի համեմատությամբ՝ տեղի է ունեցել դիմադրությամբ, ներքին ոլայքարով։

Ինքնահաղթահարման դժվարին ճանապարհ էր այդ՝  
Միանգամից և հեշտ չէր կտրել ճանապարհը, թայց ին;  
Եղել է՝ եղել է կարճ ժամանակամիջոցում, եթե ուրիշ-  
անը մի այդպիսի ճանապարհ կտրելու համար երկար-  
ուարիների պետք ունեն, ապա բացառիկ օժուլած մար-  
դիկ կտրում-անցնում են այն աներևակայելի կարճ  
միջոցում:

Դրա համեմատ վերափոխվում է Աղամյանի խաղա-  
ցանկը, Ամենանշանակալին այն է, որ այդ խաղացան-  
կում տեղ է զրավում Եեքսպիրը և այն էլ՝ «Համլետով»:  
Սակայն 80-ական թվականներին, նրա առաջին տարի-  
ներին «Համլետը» հայ թատրոնում մի հատիկ երևույթ  
չէր: Երջադարձ էր այդ, մեծ բեկման սկիզբ, Միմյանց  
հաջորդող մելոդրամաների հերոսների դիմաց գծազրո-  
վում են նոր կերպարներ, ինչպես հայրենական, այնպես  
էլ ոռուական և նվրոպական լավագույն թատերախաղե-  
րից: Միքայելի («Ելի մեկ զոհ») կողքին՝ Մասիսյան  
(«Խաթրալա») և Ատրներոն («Ռուզան»), Ռուսական  
կերպարների մի ամբողջ շարք՝ Զացկի («Խելթից պա-  
տուհաս»), Ժազով («Եկամտավոր պաշտոն»), Կրեշին-  
սկի, Խենտակով («Ռևիզոր»), Արրենին («Դիմակահան-  
դեն»), հետապայում Օթելլո և Լիր արքա: Նկատելի փո-  
փոխություն է մտնում Աղամյանի մելոդրամային խա-  
ղացանկի մեջ, Մեկը-մյոււսին հաջորդում են այնպիսի  
գերեր, ինչպես Սյուլիվանը («Սեր և նախապաշար-  
ումնք»), Կորրադոն («Ռնճաղործի ընտանիքը»), մի-  
փոքր ավելի ուշ՝ Թինը («Հանճար ու անառակություն»):  
Ինչպես այս, այնպես էլ մելոդրամային նախկին կեր-  
պարներին անդրադառնալիս Աղամյանը ձգտում էր հե-  
րոսի հոգեկան կյանքը ճշմարտացի պատկերման հասց-  
նել:

Սա նշանակում էր, որ հայ թատրոնը, վերագրուելով

այն, ինչ մի ժամանակ ուներ ու կորցրել էր, այժմ ոտք  
էր գրել զարգացման նոր հուն, ավելի լայն, քան առաջ-  
ավելի հախուսն, բան անցյալում։ Եերսպիրն ու Շիր-  
իերն այն ժամանակ հայ թատրոնի կյանքում դիպվածա-  
լին արտահայտություններ էին։ Նույնը և Օստրովսկին  
ու Սովորով-Կորիլինը, ինչ խոսք, որ գրանց թեկուղ մե-  
կական անգամ ներկայացվելը, թեկուղ հատվածաբար  
խաղացվելը, այն տարիններին մեծ ժառայություն էր։  
Բայց դա չգցեց այնպիսի խոր արմատ, ինչպես այժմ։  
ՀՕ-ական թվականներին Վաթսունական թվականներին  
Մի-երկու անգամ ներկայացված Եերսպիրն այլնս թե  
քարձրացավ, նույնը նաև Օստրովսկին և մյուս ուս-  
ունդինակները Հասարակական մերկացնող ուղղության  
գլխավոր հենարանն անցյալում Սունդուկյանի կոմեդիա-  
ներն էին, այն օրերին ծնունդ առնող դրամատուրգիան։  
Ութսունական թվականների հայ թատրոնը շունեցավ մի-  
այդպիսի հայ հեղինակ։ Այդ ամբողջ տասնամյակում  
Սունդուկյանը ոչ մի նոր պիես չգրեց նոր հեղինակներ,  
բացի Մուրացանից, հանդես շեկան, սա էլ ընդամենք  
մի գրամա որեց առարեղի վրա, այն էլ պատմական  
թեմայով։ Ժամանակակից նոր պիեսներ, որ գրել էին  
Ս. Արծրունին («Թիֆլիսի ասպետներ») և Ալ. Քիշմիշ-  
յանը («Օրիորդ Բերոյանց») և գերասանների ձեռքով  
կազմված մի-երկու պիես, ոչ գեղարվեստական մակար-  
դակով, ոչ էլ հասարակական նշանակությամբ չէին կա-  
րող խաղալ այն հսկայական դերը, որ կատարեցին  
Սունդուկյանի պիեսները հայ թատրոնում մի ժամանակ։  
Սունդուկյանի պիեսները թեմազրվում էին և այժմ, շա-  
րունակելով կատարել իրենց դերը, բայց այլնս թատե-  
րական կյանքի կենտրոնում չէին։ Ութսունական թվա-  
կաններին հայ թատրոնը շունեցավ իր հայրենի գրամա-  
տուրգիան։ Եվ ասպարեզ շեկած այն նոր գրամատուրգին

փոխարինելու եկան թարգմանական հեղինակները՝ Եպրապիրը, ոռուսական դրամատուրգիայի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպես Դրիբոյեդովին ու Գոգոլը, Օստրովսկին ու Լերմոնտովը, որոնք մտան հայ թատրոն, գրավեցին իրենց տեղը ու մնացին նրա կյանքում մշտապես: Հետագայում, երբ հայ նոր հեղինակների պիեսները բեմ սարձրացան, այդ թվում Պարոնյանի կոմեդիաները, Եկրվանդեի դրամաները, այնուամեները, այնուամենայնիվ, Օստրովսկին, Գոգոլն ու Լերմոնտովը և մանավանդ, Եկրապիրը շարունակեցին իրենց կյանքը, ինչպես առաջ: Թարգմանական նոր հեղինակներ մուտք գործնցին հայ թատրոն, ինչպես Իրսենն ու Հայուալտմանը, Գորկին ու Տոլստոյը, իսկ Օստրովսկին կար ու կար, Գոգոլը նույնպես: Եերսպիրն արգեն գարձել էր բոլորովին հարազատ մի հեղինակ, առանց որի անկարելի էր պատկերացնել թատերական կյանքի դիթ մի տարի:

Աղամյանի շրջապատն անմիջապես նկատել է նրա մեջ կատարված բնկումը: Այսպես, օրինակ, Մանդինյանն իր հիշատակարանում մի առիթով ասում է, թե ունացի գերասանները չեն աշխատում ինչպես հարկն է և այդ պատճառով նրանց մոտ զգալի առաջադիմություն նկատելի չեն. և հետո ավելացնում է. «Նույնը չի կարելի ասել ողունեցի հյուրերի մասին» նրանց մեջ մեծ փոփոխություն է նկատվում. և՛ Աղամյանին, և՛ Աստղիկին ճանաշեն դժվար է՝ չնայելով որ անցել է ընդամենը շորս ամիսու նույն Մանդինյանը մի այլ օր գրի է առել հետելյալը. «Աղամյանը ապացուցեց, որ ինքը ճշմարիտ տաղանդ է, զնում է առաջ և թողնում է իր հին շկոլան և իր հետ բերած փատած ռեակերտուարը: ...իմ կարծիքով, եթե Աղամյանը շարունակի իր այս ընթացքը և նոր դերեր ուսումնասիրի, մանավանդ կլասիկ հեղինակներից, մեծ ապագա կունենա՞»:

Մանդինյանը մի այլ անգամ ևս Պ. Աղամյանի ու նրա պիտից եկած մյուս արվեստակից ընկերների մեջ կատարվող փոփոխությունը՝ առաջադիմությունը և բեկումը դեպի սեալիզմ, նշել է արդեն նրանցից մեկի խոստովանությամբ:

Վրույրը, որ մոտիկից էր ճանաշում Աղամյանին, խաղացել էր հետք և լավ ծանոթ էր նրա անցած ճանապարհին, ասում է, թե երբ անցավ ժամանակ, ենա զգաց հին գպրոցի սիւալները, ինքնաշխատությամբ ուղղեց և կազմակերպեց յուրը»<sup>30</sup>,

Սա արժեքավոր վկայություն է: «Հին գպրոց» ասելով, Վրույրը հասկանում է այն ուղղությունը, որին պատկանում էին Եթշյանը և Ֆասուլանյանը: «Նորանց խաղը,— ասում է նա, — մեծ ներգործություն էր ունենում նորատի դերասանի վերա, քանի որ նույն բեմի հրովն էր տոշորվածք: Նշելով Աղամյանի հեռացումը այդ դպրոցից, Վրույրն ասում է, թե «կազմակերպեց յուրը»: Նշանակում է մինչ այդ, չնայած իր արտակարգ ընդունակություններին, նա հետևող էր և ապա միայն, իր անցյալը վերանայելուց հետո, ստեղծում է իր արվեստը, որ իրենն է և այլևս ոչ որինը:

Ուրիշ տվյալներ էլ կարելի է բերել:

Աղամյանի տաղանդի զարգացումը նրան կանգնեցրեց կլասիկ դրամատուրգիայից կերպարներ կատարելու պահանջի առաջ, Ասել, թե նա լիովին պատրաստ էր դրան՝ անշուշտ ճիշտ շի լինի: Առաջին խաղերին դեռևս զգալ էին տալիս մելոդրամատիկ արվեստի որոշ շհաղթահարված կողմեր, բայց դրանք էլ վաղ թե ուշ վերանալու էին իսպառ Այն հանգամանքը, որ նա թե կուզն ընդամենը յոթ դեր, բայց թատերական մի շըրջանում ստիպված էր կատարել, լայնորեն բացեց դռները նրա տաղանդի առաջ, լարեց նրա էությունը, և այս-

պես, արվեստագետի հնարավորություններն ավելի հավաք ու կազմակերպված ուղղություն առան, որպեսզի նա կարողանար իրեն զգալ այն բարձրությանը, որի վրա դանվում էին Եփլերը, Եերապիրն ու Գրիբոյեդովը:

Աղամյանի մեջ առաջացած բեկումը նկատելի է դառնում նաև «Մշակի» համար, Վերջինիս էջերում դեռասանի առաջադիմությունը, նրա շրջադարձը դեպի ճշմարտապատում արվեստը արձանագրվել են տարրեր բիմարությունների տակեթով, Բատրոնը ներկայացնում է Ա. Գյումայի «Թամմիմաղարդ» տիկինը։ Աղամյանը խաղում է Արման։ «Աղամյանը» (Արման), — գրում է «Մշակը», — անցյալ տարվանից մեծ առաջադիմարյուն է արել և կատարելագործվել է։ Նա ավելի բնական է երևում, նրա դիկցիան ավելի խելացի և ավելի պարզ է<sup>21</sup>։

Մի որոշ ժամանակ անց թատրոնը ներկայացնում է Ա. Քիշմիշյանի «Օրինրդ Բերոյանց» պիեսը, Աղամյանը կատարում է բժիշկ Զանոնայանի դերը, «Մշակում» կարդում ևնց. «Առաջին անգամ ես տեսա Աղամյանին մի դերի մեջ, որտեղ նա խաղում էր մի կենդանի մարդու և շնորհավորում եմ նրան։ Նրա մշտական դրամատիկական սեպերտուարի կյանքի մեջ գոյություն շունեցող փփված անձնավորությունները խաղալուց հետո ես վերշապես անսա մի կենդանի տիս՝ Զանումյանցին։ Ապա ասելով, թե «անհնարին էր ավելի լավ խաղալու», քննադատը բնութագրում է կերպարը <sup>22</sup>, Աղամյանի կատարած շրջադարձը նկատող և դրա համար նրան շնորհավորող քննադատը թերթի խմբագիրն է, Գր. Արծրունին։ Երբ Աղամյանը բեմ բարձրացակ Ֆրանցի դերով, «Մշակը» դրական գնահատեց նրա խաղը, նորից ընդգծելով խաղի բնականությունը, իրականությանը հարա-

զատ մնալու հետղհնտե զարգացող ձգտումը զերասաա-  
նի մեջ:

Ադամյանի արվեստում առաջացած բեկումը այնքան  
ակնհայտ էր, որ այլևս ոչ մի կասկածի տեղիք չէր տա-  
իս:

Հետագայում, արդեն Պոլսում, ոչ միայն բարեկամ-  
նիրի հետ ոմնեցած զրույցների պահին, այլև մամուլի-  
էշերում, արվեստագետք հրապարակով խոստովանել է  
այն բարերար ազդեցությունն ու դերը, որ իր կյանքում  
կատարել է Թիֆլիսը, այն միշավայրը, որի մեջ գործե-  
է երեք տարի շարունակ: Դա էլ օգնեց նրան դուրս գա-  
լու աղդային իրականության շրջանակներից և իր ար-  
վեստը հանձնելու մի աշնազիսի խիստ քննադատության  
դատաստանի, ինչպիսին ոռւսականն է:




Գ-ԼՈՒԽ  
ԵՐԿՐՈՌԴ

ԿԱՍԻԿ ԴՐԱՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՃԱՆԱՊԱՐՀԻՆ



---



## ԿՈՐՐԱԴՈ

Աղամյանի լավագույն դերերի թվին է պատկանում Կորրագոն։ Դերասանի ժամանակակիցների մեջ եղել նև այնպիսիները, որոնք այս դերակատարումը գերադասել են նրա մյուս խաղերից, այդ թվում նաև Համլետից։ ԱԱյդ դերակատարմամբ Աղամյանը գերազանցեց ինքն իրեն, — զբում է մի ուսա թատերագիտ, — և մենք համոզվեցինք, որ Կորրագոն պետք է անկատկած աղամյանական ստեղծադործությունների պսակը ճանաչվի»։

Այս գնահատության հետ համաձայնել չի կարելի։ Դժվար չէ ապացուցել, որ դա այդպիս չէ։ Բայց խնդիրը դրա մնաց չէ։ Տվյալ դնութում այս կարգի վկայության արժեքն այն է, որ արտահայտված լինելով ներկայացման անմիջական սույավորության տակ, դրսեորում է դերասանի խաղի ներգործության աստիճանը հանդիսառեսի վրա։

Նորրագոն Աղամյանի հիմնական խաղացանկից ժիակն է, որ ուղեկցել է նրան մինչև գործունեության

ամենաուշ շրջանները։ Ճիշտ է, Աղամյանի սիրելին Համբատն էր, և ոչ մի կերպար, նույնիսկ կիրք, նրան չէր հասնի Բայց, ինչպես Հայտնի է, Թուրքիայում Աղամյանին արգելվեց նրանով ըսմ բարձրանալը իսկ մյուդերերը՝ Օթելո, Ռուբել, ավելի ուշ շրջանի կերտվածքները էին։

Պառլո Զիոնկոմետտիի «Ռճրագործի ընտանիքը»՝ յնլորպամա է և աշխի յի ընկենում գեղարվեստական մեծ արժանիքներով։ Այդ հասկանում էին ոչ միայն Կովկասում և Մուսաստանում, այլ նաև Թուրքիայում։ «Թատերախաղը»,— ասում է Պալսի քննադատներից մեկը, — Թույն և գաշույնի ազդատումնեն էս ։ Սրամիս է դիտեն պոլսարայ թատերագններից մեկը, որը Աղամյանի ներկայացումների կապակցությամբ ասել է, թե «Օթելոյին հնար տեսնել Թորրագոն»՝ կնմանի Պուրկոնի ադսիվ գինինն հնար գարեջուր խմելուա ։ Եվ, շնայած զքրան, Ռուսաստանի քաղաքներում այդ մնալորամատիւ պիեսը այն տարիներին բավական մեծ տարածում էր գտնելի Կորրագոյի դերը սիրով սատանձնել են ինչպես ուստինմի գերասանները, այնպես էլ օտարերկրյա, որոնց թվում Թոմազո Սալմինին, էռնեստո Ռուսին, Անշուշտ, ուշադրավ է նաև այն փաստը, որ այդ պիեսը ուստինինի է թարգմանել Շատրովսկին։ Հետաքրքիր է նաև այն, որ այդ պիեսին Ռուսաստանում վիճակված հաջողությունը համընկալ օօ-ական թվականներին։ Ե՞ քննադատները, ե՞ հանդիսատես հասարակայնությունը, համենայն դեպո նրա մի մասը, հասկանուած էին պիեսի մելոդրամատիկ բնույթը։ Բացասելով բոլոր այն մնալորամաները, որոնք գեղարվեստական արժանիքներ շոնենալով հանգերծ նաև ցածրիմաստ էին, այնուամենայնիվ ընդունում եւ տեղ էին տալիս այնպիսի մելոդրամա-

Ների, որոնք, ինչպես և Ռերագործի ընտանիքը, հասարակական որևէ խնդիր էին արծարծում:

Զինկոմատիի պիեսը անհատի աղատության գաղափարն է պաշտպանում: Բողոքող շնչով է որված այն և ուղղված է կզերականության դեմ: Դրանով պետք է բացատրել, որ այդ պիեսը մնձ հաջողություն ուներ հեղինակի հայրենիքում, հատկապես այն տարիներին, երբ աղզային-աղատագրական ոլորտար էր ծավալվել Խտահայում: Այս պիեսը պրալի է դերասաններին՝ նախ այն պատճառով, որ բհմական տեսակետից խիստ շահեկան է և հնու՞ կնրանք հիմնական ուաթուը աղատությունն է, անհատի աղատությունը: Այսանքն արգելքներ է զնուանանապարհին: Նա բարձրանում է իր անձից և իր կյանքին վերջ տալու վճռական քայլով ուրիշների երշանկությանն է հանում: Զարմանալի չէ, որ պիեսի ռուս թարգմանիչը, նշանավոր Օստրովսկին, առաջարկում էր չուորրագոյին դարձնել ոչ թե ռերագործ, այլ քաղաքական հանցագործ... և կրակի տակ առնել ոչ թե քրեական օրենսգիրքը, այլ կզերականությունը»<sup>5</sup>: Օստրովսկուն չհաջողվեց իր մտադրությունը կենսագործել: Նա, ինչպես ուսումնահրողներն են ասում, կրճատել և պիեսից վերացրել է միայն նեղ, բարոյախոսական առանձին արտահայտություններ:

Եթե Ագամյանը, որ մելոդրամաներ խաղալու համար ժամանակին խիստ քննադատության էր ենթարկվել և հեռացել էր նման խաղացանկից, այնուամենայնիվ Կորրադոյի գերը իրեն հատուկ համառությամբ պահպանում և շարունակում էր խաղալ, այդ հարկավոր է բացատրել ավելի լուրջ պատճառներով, քան դեպի մնկութաման ունեցած վաղեմի սիրո վերապրուկով:

«Ննադատության մեջ լսվել է կշտամբանք՝ «Ռերագործի ընտանիքը» խաղալու համար. Աղամյանը հաշվի

չի առնել և շարունակել է խաղալու նու հասկացել է այդ պիսի քննադատության նեղ, զաւու գրականական ընույթը, այնպիսի մի քննադատություն, որը արվեստի երեւությների գնահատությանը մերձնենում է դերասանյապրած ժամանակի պահանջներից անկախ, ընդհանրապես վերացական շափանիշներով, նվազություն նա պետք է անսար քննադատությանը, երբ նրա ասածը, թե «Ոճագործի ընտանիքը» գրական կողմից բարձրարժեք բարեղագործություն չէ՝ ինքն էլ պիտեր Դերասանը լավ գիտեր, որ իտալական այս մելոդրաման շատ հետու և շամլետա, ուիրա կամ «Օթելո» լինելուց հեռու էր նաև իր խաղացած Գրիբոյեդովից և Սոտորիվսկուց, նվազ, այնաւանայնիվ, շարունակում էր խաղալու նա գիտեր, հասկանում էր և այն, ինչ շգիտեր կամ դուցք չէր հականում քննադատությունը. այն, որ այդ ոչ-բարձրարժեք, բայց զեմոկերատական ոգով ստեղծված երկի օդ-նությամբ նա կարողանում է կլանքի կոշնչ այնպիսի մտքեր, այնպիսի զգացումներ, որոնք զուրու են գալիս հանդիսատեսի զուտ էսթետիկական բավականության շրջանակներից, ընկնաւմ են նրա հոգու խորքը, խոր հետքեր թողնում այնտեղ:

Աղամյանն աշբի առաջ ամներ և՛ այն, որ այդ պիեսն իր սյուժետային կոմկրետությամբ, և այն, որ գլխավոր հերոսը արսորից փախած յարգ է, այդ օրերին առանձնապես կհնչիր Կորրադոյի պատմությունը զուգորդություններ առաջ կրերի, կլանքում տեղի ունեցած դեպքեր կհիշեցնի, հնարավորություն կտա մոտիկ անցյալում կամ հենց հիմա էլ տեղի ունեցող իրադարձությունների հետ համեմատություն կատարել, ինչպես նաև այդ հարցերի շուրջը մտածելու մղում և առիթ կտա:

Եղած վկայություններից առանձնացնենք թեկունիքը:



Կորրադո

Պ. Զիակոմեսի. «Ոճքագործի ընտանիք»



«Պարոն Ազամյանը այդ անձնավորությանը (Կորրագոյ) ներկայացնելով, — գրում է մի քննադատ, — մելոդրամային տվեց կենդանություն, վասն որո թատրոնից գոհ դուրս եկան մինչև անգամ նորա, որոնք հոգվու չափ առում են մեր բնմի վրա մելոդրաման»<sup>6</sup>:

Այս տողերի հեղինակը Եիրվանզադեն է:

Դիտավորյալ նշեցինք հեղինակին, որովհետև նա ավելի, քան մի այլ հայ հեղինակ, իր գրական հասկացողություններով և հակումներով, ոչ թե հնուու էր մելոդրամայից, այլ կատաղիորեն հակառակ: Եվ եթե նոխոսում է մելոդրաման ամբողջ էությամբ ատողների մասին, արդյոք նախ և առաջ նկատի չունի՝ իրեն և երբ ասում է, թե նույնիսկ դրանք, մելոդրամա ատողները թատրոնից դոհ դուրս եկան, ճիշտ չի լինի, եթե դիտվի որպես անկեղծ ինքնախոստովանություն:

Եթե պինսից անբավական Եիրվանզադեն գոհ է դուրս եկել թատրոնից, չի նշանակում արդյոք, որ Ադամյանը կարողացել է իր խաղով ընդլայնել հեղինակի թաշած սահմանագիծը և ներկայացման մեջ զնել այնպիսի միտք, այնպիսի ապրում, որ մի պահ, գոնե ներկայացման ժամերին, մոռացնել է տվել թատերկի գեղարվեստական պակասները:

Ասում են, որ Ռուստովում եղած ժամանակ, 1882-ին կամ 1885-ին, հավանաբար այս վերջին թվականին, Ադամյանը մի օր փողոց է դուրս եկել այն պահին, երբ շղթայակապ կալանավորների մի մեծ խմբի տանում էին կայարան՝ աքսորավայր ուղարկելու հարաբ: Ասում են Ադամյանի վրա ցնցող տպավորություն է գործել տեսարանը: Նա շի կարողացել հայացքը պոկել այդ խմբից և մայթի վրա ետ-ետ գնալով՝ նայել է նրանց, հետները հասել մինչև կայարան<sup>7</sup>,

Քաղաքական կալանավորներ էին դրանք: Այդ

թվականներին սաստկացող ռեակցիայի մոայլ իրազբության մեջ մարդիկ հեշտությամբ բանա էին նետվում, արսոր ուղարկվում: Աղամյանը նայում էր նրանց և տեսնում, թե որքան տարրեր գեմքեր են իր առաջ, բոլորն էլ մտասույզ, բոլորն էլ հոգի մեջ, մեկի աշքերը վշտոտ, մյուսը խստահայաց, երրորդը խոժոռագեմ: Կային և ընկճված արտահայտությամբ գեմքեր: Արտիստը նայում էր՝ մոռացած իրականությունը, մոռացած փողոց ու մարդկանց, նայում էր զգացված մինչև հոգու հասակը, կամենալով թափանցել նրանց լույս արտահայտության խորքը, հասկանալ, թե ով ինչ է մտածում, որի մտքում ինչ կատարում էր, և նրանց գեմքը, ամեն մեկին առանձին, դրոշմվում էր արտիստի երևակայության մեջ, հետո բոլորը միանում էին իրար, ասես խառնընկնով դառնում մի մարդ, մի գեմք, մազերն ու մորուքը օճախսիվ, արտահայտությունը տառապանքով լի, աշքերի մեջ տագնասու:

Կորրագոն է...

Իր Կորրագոն է այդ, աքսորական Կորրագոն:

Հետո նորից գեմքերն առանձնանում են, տարրերակվում իրարից, և գերասանը տեսնում է գույներ, որ պակասում են իր Կորրագոյին, այնպիսի շարժում և արտահայտություն, որ թվում է, թե աետք է Կորրագոն ունենար: Իր Կորրագոն ստեղծված է երևակայության օդնությամբ, իսկ հիմա կյանքը, իր մերկ անողորությամբ, կանգնած է իր առջև նայիր, տես և տար բեմ: Զգում է գերասանը, որ իր Կորրագոն փոխվում է, նոր կյանք առնում, մեծանում իր աշքին, ավելի խորը դառնում, այնպիսին, ինչպես տեսավ քիչ առաջ, ինչպես կյանքումն է, իրականության մեջ, որի համեմատությամբ իր երևակայությունը խեղճ ու շնչին թվաց:

Դժբախտաբար ոչ մի վկայություն չի պահպանվել,

թե Աղամյանի Կորրադոն ի՞նչ էր մինչ Ռոստովում պատահած դեպքը և ինչ՝ դրանից հետո։ Սակայն թերթելով մամուլը, ծանոթանալով տարրեր ժամանակների դնահատություններին, կարելի է եզրակացնել, որ մի անգամ ստեղծված կերպարը բարացած չի մնացել, անցնող տարիների հետ աճել, խորացել է։ Միակողմանի կլինիկ վերագրել ու միայն դերասանի ընդհանուր աճին, երա ստեղծագործական զարգացմանը, անկախ այն ազդեցությունից, որ ունեին կյանքի պայմանները արվեստագետի վրա ընդհանրապես, այս կերպարի վրա՝ հատկապես։

Պետք է դրանով բացատրել այն ամուր կապը, որ սամանակի ընթացքում առաջացավ դերասանի և նրա ծնած կերպարի միջև։ Դրա համար ուր էլ զնաց, Մոսկվա, թե Կազան, Օդեսա, Թիվուն, միննույն է՝ Կորրադոյին հետը տարավ և ամենուրեք ներկայացրեց նրան որպես կենդանի բողոք կյանքի անարդար ձևերի դեմ։

Կորցված երջանկությունը գտնելու համոզված ձրգում—ահա այն հիմքը, որի վրա դերասանը բարձրացրել է փախստական աքսորականի բեմական կերպարը։

Այսպիսով, ինչպես բոլոր մնացած կերպարները, այնպես էլ սա, բնույթով տարրեր, սյուժետային պատմությամբ բոլորովին այլ, գալիս միավորվում են դերասանի ստեղծագործության հիմնական թեմայի շուրջը։ Մարդը երազում է, բայց հենց որ երազանքը բախվում է իրականությանը՝ փշրվում է, փոշիանում։

Կորրադոն ուներ երջանկություն, կորցված երջանկություն, Նա երազում է այդ երջանկության մասին։ Զգում է նրան։ Եվ երբ թվում է, թե հասել է երազի իրականացման պահը՝ ամեն ինչ փլվում է։ Նույնիսկ նը-

բանք, որոնց համար ապրել է՝ անցնելով անլուր տառապանքների միջով, որոնց համար պահել է իր սրտի շերտությունն ու մաքրությունը, չեն կարող միանալ նրան։

Զկա այս աշխարհում երշանկություն։

Բավական է բեմում երեար Ադամյան-Կորրագոն, որ հասարակական խնդիրների մի ամրող խումբ կանգներ հանդիսատեսի առաջ, Դա սովորական հանցագործ չեր, ոչ էլ շատերի նման մի փախստական, որին դուցե և կարելի է կարեկցել, գուցե և ոչ Նրան պոկել են, զըրում է մի թերթ, շերմորեն սիրելի կնոջ զրկից, շղթայակապ հնուացրել են կյանքից։ Բայց նա հանդիսաւ չէ։

«Այս միտքը, որ իր սրտին թանկ ճրկու արարածներ զրկված են պաշտպանությունից, թափառում են անտուն և անհաց, նետված են ճակատագորի քմահանույբին՝ այրում է նրա ուղեղը, և նա ծվատում է իրեն, դեռ ու դեն ընկնում վանդակի մեջ, փորձելով խորտակել իր շղթաները»։

Սրան հետևում է սեղմ բնութագրում։

«Նա մարդ է, ամուսին և հայր»։

Եվ հետո թերթն ավելացնում է։

«Կորել նրան կյանքից, մեկուսացնել հասարակությունից, շղթայել՝ կարելի է, և արել են, բայց կանգնեցնել հոգու շարժումը, խլացնել, ոչնչացնել հոգեկան պոռթկումները՝ երբեք»։

Ադամյանի ամենամեծ ծառայությունն այն է, որ նրա կորրագոն ասես բեմից խոսում էր հանդիսատեսի հետ, նրանց հետ, որ դահլիճում նստած դիտում են ներկայացում, իսկ կյանքում տնօրինում ուրիշների բախտը։ Կարծես նա նախատելիս լիներ մարդկանց, որ փողոցում փախստական մարդկանց հանդիպելիս երես են դարձնում, ամոթ համարում մի խոսք անդամ փոխանակել նրանց հետ։

«Ի՞նչ է, ողորմած պարոն, միայն դուք ունեք մարդկային հոգի, միայն դուք եք ընդունակ զգալու, սիրելու և տառապելու, միթե միայն ձեզ են հատուկ մարդկամին զգացումները և լոկ դուք իրավունք ունեք բավարարություն տալու նրանց։ Ո՞ւ, մենք էլ հոգի ունենք, մենք էլ ձեզ նման զգում ու սիրում ենք, ձեզ նման ուրախանում, ձեզ նման տառապում ու տանջվում»։

Աղամյանի խաղի տալավորության տակ այդպես է զրում «Նուվորոսիյսկի տելեգրաֆը» Կորրադոյի անունից, «Երշում ավելացնում է»։

«Մի խանգարեք, մեզ էլ շնորհեք ձեզ նման ապրելու իրավունքը, մեզնից երես մի դարձնեք և երրեք մի կարծեք, որ եթե ազատ շրջում եք փողոցում, իսկ մենք մեր ձեռքերին ու ստրերին շղթաներ ենք կրում՝ ավելի վատ ենք, քան դուք»<sup>5</sup>։

Իսկ մի ուրիշ թերթ պարզ զրում է, որ գերասանի խաղը ճիշտ և խորը հասկանալու համար անհրաժեշտ է հիշել, թե որքան փախստականներ հայրենիքի, քննանիքի կարուից՝ մեր սիրիոյան տայգաների զոհն են դառնում»<sup>6</sup>։

Ահա նա, Աղամյան-Կորրադոն մտավ բեմ։ Միթե, Հարցնում է մի քննադատ հանդիսատեսին, ձեզ հարկավոր է մոտիկից իմանալ, որ նա տասնշորս տարի կալանքի տակ է եղել։ Ամեննինու կավ նայեք այդ մարդուն, սեսեք նրա նիհարած, փոս ընկած այտերը, այդ ճերմակող մորուքը, նրա հոգնած, բայց տագնապած հայացքը, և միթե դուք անմիշապես շեք հասկանա, որ ձեր առաջ կալանքից փախած աքսորական է»։

Ուշադիր հետևեք նրա դեմքի արտահայտությանը։ Միթե սա նույն Կորրադոն է։ Տեսեք ինչպես փոխվեց դեմքը, ամբողջապես ողողվեց ներքին խնդությամբ։ Նա իմացավ, որ կինը ողջ է, կաւ Բայց ահա լսում է, որ աղ-

շիկը մոր հետ չէ։ Անհանգստության մի ամպ ծածկում  
է դեմքը, բայց հետո, երբ լսում է, որ աղջիկն էլ  
կա, նոր միայն խաղաղություն է իջնում վրան։ Ահա կըր-  
կին նրա դնմքը փոխվում է, դառնում խոժոռ, ցասկոտ,  
երբ իմանում է, որ կինը, դեռ բոլորովին երիտասարդ,  
ծառայության մեջ է նրա մոտ, որի հետ ապրում է աղ-  
ջիկը։

«Այստեղ, ինչպես տեսնում եք, ընթերցող,— ասում  
է քննադատը,— տպավորություններն այնպես արագ են  
հաջորդում միմյանց, անցումներն այնքան կտրուկ են  
և անսպասելի, մինչդեռ այդ ամենը տաղանգավոր  
գաստրոլյորն այնպիսի հստակությամբ դրսերեց, որ  
մնում է միայն զարմանալ մեծագույն արվեստագիտի  
վարպետության վրա»<sup>10</sup>։

Նկարագրում է քննադատը գերասանի խաղը և հե-  
տո, հիացումի խոսք շգտնելով, բացականշում։ «Մար-  
դու լեզուն պապանձվում է»<sup>11</sup>։

Քննադատն ասում է, թե շտեսնված տպավորություն  
է թողել Կորրագո-Ագամյանը անցյալի մասին արած  
իր պատմությամբ, բայց միաժամանակ ավելացնում է, թե այն, ինչ մեր աշքերի առաջ կանգնեց հաջորդ տեսա-  
րանում, մինչև հիմա տեսածը լքացավ, դարձավ ոչինչ։  
«Խոսակցությունը կնոջ հետ, երբ տառապած Կորրա-  
գոն մերթ խնդրում է, մերթ սպառնում, երբ նա զազա-  
նից վայրկենապես փոխվում է գուրգուրող երեխայի՝  
հնարավորություն տվեց Աղամյանի տաղանդին ծավալ-  
վելու, և այդ տաղանդը ծավալվեց իր ողջ անպարփա-  
կելիությամբ»<sup>12</sup>։

Սափահարություններին վերջ շկար։

Քննադատը զարմացած արձանագրում է, որ այս ան-  
դամ ծափահարում էին ոչ միայն վերնահարկից, այլև

այաբտերում և օթյակներում, որոնք այնպես զուսագ են  
սովորաբար իրենց հավանությունն արտահայտելիս <sup>13</sup>:

Իր բախտի համար մաքառող Կորրադոն ստիպված է  
զիշել: Ոչ կինը կարող է նրան միանալ, ոչ էլ աղջիկը  
պիտի իմանա, որ այս փախստականը իր հայրն է, եվ  
նա, թույն ընդունելով՝ մեռնում է:

Թունավորման և մահվան տեսարանի մասին հան-  
դիսատեսները պահպանել են անջնջելի հիշողություն-  
ներ:

«Տեսար ի ժիղնը» գրում է.

«Թույն ընդունելու տեսարանը Աղամյանը կատարում  
է զեղարվեստական երևելի շափի մեջ դրած: Արտիստը  
երևում է, որ այս տեսարանի ամենափոքր մանրամաս-  
նությունները խորապես կշռադատել է, և դա կարողա-  
ցավ արտահայտել արտիստորեն» <sup>14</sup>:

«Ելիսավետգրադոկի վեստնիկը» գրում է.

«Մահվանը նախորդող բոպեները և մահը առաջ բե-  
րին ամենաեռանդուն և շարունակական ծափահարու-  
թյունները» <sup>15</sup>:

«Արձագանքը» գրում է.

«Վերջին գործողության մեջ նրա թունավորվելը,  
շանավանդ ցնցումները և մեռնելը—դժվար է նկարա-  
գրել, այնքան ազդու էին և այնքան ներգործող մարդու  
շիզերի վերա» <sup>16</sup>:

«Մշակը» գրում է.

«Մի անգամ տեսնելով պ. Աղամյանի մահը Կորրա-  
դոյի դերում, երբեք շենք կարող մոռանալ նրան» <sup>17</sup>:

«Արևելքը» գրում է.

«Այդ մահն, հիվանդանոցի սենյակ մը կրերե աշ-  
րիդ առջև, ուր ջլախստավորք կգալարին իրենց տագ-  
հապներուն, և Աղամյան ի հայտ կաժե հոն ճարտար

դերասանի այնպիսի կարողություն մը, զի ամեն աշաց  
մեջ, որ խոշոր բացված են, ակներև կկարդացվի սոս-  
կում, և ամեն դիմաց ուսուցիկ երակներուն վրա՝ ար-  
հավիրք ։<sup>18</sup>

Մոսկվայի Փոքր թատրոնի դերասանուհի Նադեժդա  
Լյովինա Տիրասպոլսկայան Կորրագոյի մահը Աղամյանի  
կատարմամբ նկարագրել է հետևյալ ձևով.

«Կորրագոյի մահը ավելի քան ուժեղ տպավորու-  
թյուն է թողնում նրանով, որ Աղամյանը չի դիմում հո-  
գոցների ու հառաջանքների էֆեկտին կյանքը աստի-  
ճանարար թողնում է Կորրագոյին, նա ամբողջովին ինչ-  
որ թուլանում է, կախվում, և հանկարծ մի-փոքր ցըն-  
ցում, և նա ձգվում է լարի նման Հասարակ և միևնույն  
ժամանակ փառավոր մահ»<sup>19</sup>,

Այն քննադատը, որ այդ դերում տեսել էր Սալվի-  
նիին և, ինչպես երևում է, մնացել էր հիացած, հետե-  
լյալ խոստովանությունն է անում. «Համարձակ կարելի  
է ասել, որ ոչ մի արտիստ այդպիսի տպավորություն  
չի գործել»<sup>20</sup>.

Այդ տեսարանում... Բայց ավելի լավ է լսենք վերո-  
ւիշտալ քննադատի պատմածը.

«Կորրագոյի թունավորման նախանշանների ժամա-  
նակ հասարակությանը համակեց անբնական մի սար-  
ուուր, որը շուտով փոխվեց խումապահար երկյուսի:  
Շատ հանդիսատեսներ բնազդարար բարձրանում էին  
իրենց բազկաթոսից, կանալք փակում էին աշխերը...  
ընմում, հասարակությունից հինգ քայլի վրա, մերձի-  
մահ տանշանքների մեջ էր մի մարդ նրա ցնցումները,  
հառաջանքը, մեռնողի շուրթերից դուրս թռած անհաս-  
կանալի բառերն այնքան բնական էին, որ միտք ծա-  
գեց — պատահմամբ պ. Աղամյանը հո իսկապես շթու-  
նավորվեց: Եվ երբ վարագույրն իջավ ու օժտված ար-



Ուրիել  
Կ. Գուցեռվ. «Ուրիել Ակոստա»



արիստը դանդաղ և համեստ դուրս եկավ ընդառաջ ազ-  
մբկալի կանչերին, հիացումն այլևս սահման չուներ» Ա,

Ի՞նչ է այս իհարկե, վարպետություն, վարպետու-  
թյուն ամենարարձր մակարդակի Դրան ամեն գերա-  
սան հասնել չէր կարող Ասում են, որ Աղամյանը մահ  
պատկերելու մեջ եղակի է եղել Եթե այդպես է, ապա  
ուրեմն նրա ներկայացրած մահերի մեջ Կորրադոյի  
մահը պետք է ճանաչվի գերազանց Նուրբ և բարձր  
արվեստի արտահայտություն։ Այդքան միայն իհար-  
կե, ոչ վարպետություն այնքանով, որքանով. որ դե-  
րասանը կարողացել է հավատացնել հանդիսատեսին,  
սախալել, որ նա մոռանա թատրոնում լինելը, Բայց այն  
ցավը, այն կսկիծը, անհանգստության հետ միասին, որ  
այդ տեսարանում ապրել է հանդիսատեսը, գալիս է այն  
հարազատացումից, որ ներկայացման ընթացքում առա-  
ջացել է Կորրադոյի և հանդիսատեսի միջև Զէր կարելի  
տեսնել Աղամյան-Կորրադոյին, տեսնել, թե ինչպես  
ներկայացման այդ մի քանի ժամվա ընթացքում նա  
մաքառում է մարդու երշանկության համար այս աշ-  
խարհում՝ և շփրել նրան։ Ո՞ւմ սրտին մոտ լէ դա։ Ո՞վ  
այդ ցավը մի կրել իր կրծքի տակ։

Անապացուց լթվալու համար բերենք մի փաս-  
տարկ, որի նմանը թատրոնի պատմության մեջ հազ-  
վագեպ է լինում։

«Ոնքագործի ընտանիք» ներկայացմանը Օղեսայում  
1887-ի նոյեմբերի 12-ին մի հայ երիտասարդ է եղել  
որը... Բայց ավելի լավ է փոքր-ինչ հեռվից սկսել Այդ  
երիտասարդը Ակկերման քաղաքից էր, անունը Հով-  
հաննես, որդի Մարտինի, իսկ ազգանունը՝ Ասատուր-  
յանց։ Մի իղձ ուներ՝ գնալ Ֆրանսիա և գյուղատնտե-  
սական կրթություն ստանալ։ Նյութական հնարավորու-  
թյուններից զուրկ՝ նա իրեն մի կերպ գցում է Պոլիս,

այնտեղ զրամական աշակցություն գտնելու հուսով։ Ոչ  
ոք մի օգնում։ Ում դիմում է՝ բոլորը երես են գարձ-  
նում։ Զի հանդիպում նույնիսկ մեկը, որ գոնե ականչ  
դնի մինչև վերջ, լսի, թե ինչ նպատակներ ունի։ Ամեն-  
քից մերժված, մի անկյուն անգամ լի գտնում պատրս-  
պարվելու համար։ Միառժամանակ թափառում է փո-  
ղոցից-փողոց։ Պատմում են, որ տեսել են նրան փողո-  
ցում, ցեխոտած հացի կտորը ազաճարար լափելիս։  
Միառժամանակ անց՝ այլևս լի երես Պոլսի փողոց-  
ներում։ Պարզվում է, որ գնացել է Օդեսա, որտեղ այդ  
երիտասարդը հարուստ ազգականներ ուներ։ Բայց  
այստեղ էլ նրանից երես են դարձնում։

Ի՞նչ անել՝ չգիտերի Եվ մի օր, — դա նոյնմբեր ամ-  
սին էր, — սստիկանատանը գտնում են նրա դիակը,  
Անձնասպան էր եղել Չգիտես որտեղից և ինչպես՝ գտել  
է մի ատրճանակ և հինգ գնդակ մինչանց ետևից պար-  
պել սրտի մեջ։

Անձնասպանի զրապանում գտել են օրագիր, ուր նա  
զրանցումներ է կատարել ամեն օր, իր թշվառ գոյու-  
թյան վերջին օրն անգամ, նույնիսկ իր կյանքի վրա  
ձեռք բարձրացնելուց մի քանի վայրկյան առաջ՝ «Օդեսակի վեստնիկը» հրապարակել է այդ օրագրից ա-  
ռանձին հատվածներ, որոնք, հայերեն թարգմանու-  
թյամբ, լույս են տեսել «Արևելքում», Այդ օրագրիը, որ  
պարունակում էր հայ երիտասարդի խորհրդածություն-  
ները կյանքի և մանավանդ իր կյանքի մասին, թերթի  
առելով, դառն էին, սրտամորմոք և պղեկեց։

Այդ օրագրում, անձնասպան լինելուց առաջ, երի-  
տասարդն անդրադարձել է «Ոճրագործի ընտանիքը»  
ներկայացմանը, Ազամյանի Կորրագոյին։

«...Սակայն պարտ իմ անպատճառ գործադրել որո-  
շումը, մանավանդ հորմէ հետե տեսա մեծ դերասան

ով. Աղամյան: Ինչպես գեղեցիկ է նա... տեսած եմ զՍաւ-  
վինի, բայց Աղամյան անհամեմատ բարձր էր, անկեղծ  
ալդ դերի մեջ Նահատակ մ'էր Քորրադո և երեկ կթվեր  
ինձ թե Աղամյան ճիշտ իմ անձս կպատկերե թատերա-  
րեմին վրա... և սկսաւ լալ մանկան պես... իսկ այս  
Հազվադեպ երեսութ մ'էր կենացս մեջ:

...Պարտ իմ մեռնիլ Բայց այդ մահս քաղաքային է:  
Քորրադո-Աղամյանն ալ կուզեր ապրիլ, սակայն շըկա-  
րողացավ, իսկ ես ինչո՞վ լավագույն եմ Քորրադոյին:  
Նա տեղի տվակ ուրիշի մը, որ ավելի ընդունակ է կե-  
նաց, և ես ողորմելիս նմանապես պարտ եմ տեղի տալ  
անոնց, որ ընդունակ են մաքառելու կենաց հետ»<sup>22</sup>,

Ինչպիսի ուժեղ, ցնցող տապավորություն պիտի թող-  
ներ Աղամյան-Կորրադոյի խաղը, ինչքան անկեղծ պի-  
տի լիներ և հասներ մարդկային հոգու ամենախորքե-  
րը, որ անձնասպանության պատրաստվող մի թշվառ,  
կյանքի վերջին վայրկյաններին, երբ ամեն ինչ հավա-  
նորեն լուսմ է մարդկային հոգու, մտքի, սրտի և հիշո-  
ղության մեջ,— այդ զարհուրելի վայրկյանին հիշել է  
միայն մի էջ իր կյանքից՝ Աղամյանի կերպարած  
Կորրադոն, այն անզուգական արտիստին, որի խաղը  
առաջին ու վերջին անգամ իր կյանքում՝ արցումք է քա-  
յել իր աշքերից:

Աղամյանի Կորրադոյի մասին գրող «Արևելք» թեր-  
թի քննադատը հիշում է այս դեպքը, հիշում է ոչ միայն  
Աղամյանի խաղի ուժը ցույց տալու կամ Սալվինիի հետ  
արած համեմատությամբ պարծենալու համար: Նա հի-  
շում է դեպքը և նախատում կյանքից կտրված երիտա-  
սարդությանը՝ նրանց ուրք շոգենավին մեջ, կամ երե-  
կոյին, սիգարեթին և ղաճվեկին մեջտեղ, կընթեռնուն  
օրվա լրագիրը, ըսենք Արևելքը, թոշտում ակնարկ մը  
ինետեն ազգային լուրերեն հեռագրալուրերը, ներքին

Հուրերեն երրորդ երեսի հողվածները, և վերջացավ՝  
Կապոցի համար ինչքան լավ կուգա լայնածավալ լրա-  
գիրը, մեղք որ թուղթը թիշ մը բարակ է» ՀՅ, Այս ան-  
տարրերներին նա հակադրում է նրանց, ովքեր լրագրի  
էջերում իսկական կյանքն են որոնում, Նրանք հիշում են  
Հովհաննես Աստուրյանցի աղետալի պատմությունը,  
և երբ Պոլսում հայտարարվել է «Ոճրագործի ընտանի-  
քը» Աղամյանի մասնակցությամբ, հիշել են «Արևել-  
քամամամի միավորության մասին, որ գործել է դերասանի-  
քում» մի տարի առաջ կարդացածը և սարսուսի զգա-  
ցումով ճանապարհվել են դեպի թատրոն՝ ներկայացու-  
մը դիտելու

Եթե Աղամյան-Կորրադոյի մահվան տեսարանի մա-  
սին վկայությունների մի ամբողջ շարք բերինք, ապա  
դա ոչ միայն նրա համար, որ գաղափար տանք այն  
ցնցող տպակորության մասին, որ գործել է դերասանի  
խաղն այդ պատկերում, Աղամյանի Կորրադոն տար-  
րեր էր մեռնում, այլ կերպ, քան ուրիշ դերասանների  
պատկերացումով։ Տարբեր էր Սալվինի-Կորրադոյի մա-  
հը։ Տարբեր էր այդ երկուսից Ռոսսի-Կորրադոյի մահը։

Այս հարցը պահանջում է քննություն Վերադառնանք  
նախ՝ պիտեսին։

Ի՞նչ անի Կորրադոն, երբ համոզվում է, որ իր որո-  
նած երջանկությունը շգտավ, Եթե ձայն հանի, ձեռք  
բարձրացնի՝ դա ոչ միայն երջանկություն շի բերի իրենն,  
այլև կզրկի անզորից իր հարազատներին, Եթե այդ-  
պես է՝ ուրեմն թող գոնե նրանք վայելեն իրենց ստա-  
ցած մի կտոր բախտը։ Եվ որպեսզի գոնե իր պատճա-  
ռով շպղտորվի նրանց կյանքը՝ մնում է իրեն այս աշ-  
խարհից հեռանալ։

Պիտեսի թույլ կետերից է սաւ Ու թեև հեղինակն այն-  
քան մոտ է իտալական ազատագրական շարժման պայ-  
քարատենչ մարդկանց՝ Կորրադոյի մահվանը հասա-

բակական սրություն չի հաղորդել Այդ նրանից է, որ Հեղինակը և նրա հետ միասին հերոսը շեն գտնվել էլանքի հասարակական ըմբռնման այն աստիճանի վրա, թե Կորրադոյի հարազատների երջանկությունը այսօր կա, վաղը ոչ, որ դա լուծում չէ, որովհետեւ կյանքն ընդհանրապես մնում է այնպես, ինչպես եղել է և մեկի մասնավոր երջանկությունը, ըստ էության, մի դարձանում մարդու, աշխատող, կյանքի բարիքները ստեղծող, բայց տառապող մարդու սրտում կյանքի հարվածներից բացված վերթերը Դրա համար էլ պիեսում Կորրադոյի մահն ընկալվում է որպես նահանջ, դիշում, ոչ թե կռիվ, այլ հաշտություն, անձնազոհության գնով:

Զենք կարող պնդել, — մանավանդ որ դրա համար ոչ մի հիմք չկա, — որ իրը Աղամյանը հասկանում էր այն, ինչ շեր ըմբռնում նրա հերոսը և նրան ստեղծող հեղինակը Սակայն դերասանի ապրած դարաշրջանը իր կնիքն է դրել նրա խաղի վրա: Հետաքրքիրն այն է, որ Աղամյանի Կորրադոյի մահը չի ընկալվել իրրև նահանջ կամ հաշտություն: Դա ցույց է եղել, բողոք:

Ահա երկու լուսանկար: Երկու լուսանկար, որ պատկերում են Աղամյան-Կորրադոյին՝ տարբեր տեսարաններում: Մեկը այն տեսարանն է, երբ փախստական Կորրադոն նոր է եկել, երկրորդը՝ նրա կյանքի ավելի ուշ ժամանակներից է: Մեկն այն շրջանն է, երբ եկել է իր բախտի ետևից, մյուսը, երազած բախտը՝ անդառնալիորեն կորցրած:

Ուշադիր նայենք առաջին նկարին: Դեմքին կարու կա, աշքերի մեջ անհանգիստ մի սպասում, սակայն անհանգստություն, որ խաղաղ հեղության սահմաններումն է, գուցե նույնիսկ փոքր-ինչ ավելի խեղճացած: Նայենք մյուս նկարին. տեսեք, թե ինչպես վրդովված

է, թե ինչ զայրուցիք է զրոշմված դեմքին: Ե՛վ կեցվածքը՝ խրոխտ, և' ձեռքերի շարժումը՝ պրկված բռնցքներով՝ ասես հարվածի պատրաստ, և' զլիսի պահվածքը՝ խոռվ հպարտություն, և' աշքերի արտահայտությունը՝ ցասկոտ բարկություն — բոլորը, ամենն ինչ անհաշտություն են արտահայտում, անհաշտություն իր ճակատագրի, շրջապատի և իրականության նկատմամբ: Սա ոչ թե իր ճակատագրի հետ հաշտվող, այլ նրա համար մաքառող Կորրադոն է: Եվ գա նույնիսկ արտահայտվել է մահվան տեսարանում:

«Արևելքը» թողել է Ռոսսի-Կորրադոյի և Աղամյան-Կորրադոյի մահվան տեսարանների բաղդատական նըկարագրությունը: Զենք բերում ամբողջ նկարագրությունը, միայն, հենվելով դրա վրա, ասենք, որ «Ռոսսին հանդարտիկ մահ մը կներկայացներ»<sup>24</sup>, իսկ Աղամյանը թեև հոժարակամ էր գնում դեպի մահ, այնուամենայնիվ գնում էր շհաշտված, դրա համար էլ նրա պատկերած օրհասն ու մահը տսոսկումէ ավելի ծանր ազդեցություն մը կընեն»<sup>25</sup>: Եվ գա հասկանալի է, որովհետև այլ է, երբ մարդ հաշտված և խաղաղ ընդունում է մահը իրուն անխոսափելի ճակատագիր, բոլորովին տարրեր է, երբ մարդ բռնում է մահվան ճանապարհը՝ սիրելով կյանքը, և, սակայն, իր մահը դիտելով իրուն ցասկոտ բռղոք: «Աղամյան՝ մահու և կենաց մեջ մարտնչելով» էր<sup>26</sup> գնում այս աշխարհից: Զենք ուզում ասել, թե Ռոսսին հաշտվել էր իր ճակատագրի հետ, բայց Աղամյանի մահվան մեջ և' անհաշտություն կար, և' բռղոք:

Աղամյանի ամբողջ խաղը տոգորված էր մի գաղափարով — երշանկություն նվաճել: Զկա այդ, հնարավոր չէ: Զկա, չկա այս աշխարհում երշանկություն, օթե շկալարժե ապրել նրանց մեջ, որոնք բախտը դժբախտություն են դարձնում: Թող ապրեն նրանք, որոնք լունեն

իր հոգու վեհությունը, իսկ ինքը, որ վեր է նրանցից, հոգեսկես մեծ, ավելի արժանավոր, կհեռանա այս կյանքից, կհեռանա, որովհետև այն, ինչ որոնում էր՝ զատավի, իսկ եթե այդ այդպիս է, ուրեմն շարժե մեալ, շարժե ասլրել, շարժե լինել նրանց հետ և նրանց մեջ, որ արժանի չեն իրեն:

Աղամյանն այնպիս էր խաղում, որ նրա մահը ցույց էր դառնում, բողոք ընդդեմ այն բոլոր օրենքների, որոնք մարդուն զրկում են աղատությունից, կաշկանդում մարդկային հարաբերությունները, խոշընդոտում նրանց իրական երջանկությանը: Դա սովորական մահ չէ, այլ ընդդիմացման ձև: Հաշտությունն իւիներ այն դեպքում, եթե զլուխն առներ ու գնար, զինու տար իրեն, ու մի զիշեր գտնեին նրան անշնչացած, փողոցում, պատի տակ ընկած: Նա զնում է դեպի մահ—րայց ի՞նչ զնով — ամննաթանկագին՝ կյանքի զնով: Համարձակ դեպի մահ, թող տեսնեն, թող համոզվեն, որ կյանքի այդ պայմաններում հպարտ մահը գերազանցի է շարքաշ գոյությունից:

## ՈՒՐԻԵԼ ԱԿՈՍՏԱ

Ուրիել Ակոստայի կերպարը եղել է հին ողբերգակների սկզբուն ուշադրության առարկան: Թերևս շկարմի ողբերգու դերասան, որի խաղացանկում այդ կերպարը նոյած շլիներ: Բեմական տեսակետից շահեկան, կերպարի ներքին բովանդակությամբ հետաքրքիր այդ դերը հնարավորություն էր տալիս արտիստներին հընկեցնել մտքի առատության գաղափարը՝ միաժամանակ դրսեորել իրենց ողբերգական արվեստի ուժը:

Ուրիելը գրավեց նաև Աղամյանին: Այս կերպարի:

տեղը Կորրադոյի և Քինի կողքին է, նրանց հետ մի շարքում, թերևս ավելի բարձր Առաջին երկուաը մելոդրամայի լավագույն նմուշներ են, այնքան հետաքրքիր և այնքան բովանդակալի, որքան կարող է լինել մելոդրաման, Կարլ Գուցկովի պիեսը, զրանց համեմատությամբ, գրական իսկական ստեղծագործություն է, և Ադամյանի կյանքում ևս մի կամուրջ շեքսպիրյան ողբերգություններին հասնելու ճանապարհին Այստեղ ավելի, քան Կորրադոյում և Քինում, արտահայտվել են Ադամյանի բնմական «պոետիկայի» մի-երկու կարևոր առանձնահատկություն, որոնք արդեն նշմարվել էին վաղ Համլետում, բայց իրենց խորացած դրսեորումը դառան Օթելոյի և Լիրի մեջ, ինչպես նաև Համլետում, որը կատարելագործման անընդմեջ ընթացքի մեջ էր:

Առաջին դերասանը, որ հայ բեմում խաղացել է Ուրիելի դերը՝ Ադամյանն է: Նա է ստեղծել կերպարի բնմական տրադիցիան: Այնուհետև շատ դերասաններ են այդ դերը կատարել, որոնցից առանձնապես աշքի հն ընկել Գևորգ Պետրոսյանը և Վահրամ Փափաղյանը:

Ադամյանի Ուրիելի ռուս քննադատները մինչև նրան այդ դերում տեսնելը և այդ առթիվ արտահայտվելը, արդեն ծափահարել էին Ուրիելների մի բավական ըստվար խմբի: Մոսկվացիները այդ դերում տեսել էին Զոնենտալին: Իսկ Բառնայը, որ շատ ուրիշ դերերի հետ խաղում էր նաև Ուրիել, գաստրոլային ներկայացումներով շրջել էր ամբողջ Ռուսաստանը և եղել շատ քաղաքներում: Աղմկալի հաջողություն ուներ այդ դերում ռուսական առաջին Ուրիելը — Լենսկին: Նաև Պիսարելը Խաղում էրին, ինարկե, և ուրիշները: Թոլոր այս Ուրիելներից ռուս հանդիսատեսը ամենից ավելի հավանել է Բառնային: Ռուսական թատերագիտության մեջ

նույնիսկ այն համոզումն է հայտնվել, թե Բառնայի Ուրիելը հաջողության այն աստիճանի վրա էր գտնը-վրամ, ինչ Սալվինիի Օթելլոն կամ Ռոսսիի Լիրը, Մի խոսքով, իշխել է այն կարծիքը, թե Բառնայն այդ դերում ոչ միայն անդուպական էր, այլև պարզապես անգերադանցելի:

Աղամյանը պետք է բեմ բարձրանար Ուրիելի կերպարով այն ժամանակ, երբ այդ դերի շուրջը ոռաւական իրականության մեջ բառնայական նախապաշարմունք էր ստեղծված: Սակայն, ինչպես և ուրիշ դեպքերում, այնպես էլ այս անդամ, այն դժվարությունը, որը ծառացած էր Աղամյանի առջև, հաղթահարվեց եթե շահենք հեշտությամբ, ապա գննե հաջողությամբ:

Նախ՝ Զոնենտալի մասին:

Զոնենտալի Ուրիելի շուրջը գեռ խոսք կլինի: Առաջժմ այսքանն ասենք, որ «Մոսկովսկայա պշելան» բավական յանրամասն համեմատություն կատարելով Զոնենտալի և Աղամյանի Ուրիելների մեջ, հայտարարել է. «Աղամյանը բարձր է Զոնենտալից»<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է Բառնային, ապա ոռաւական մամուլում հանդիպում ենք հետեւյալին. երկու տարրեր հոդվածագիր համեմատում են Բառնային և Աղամյանին իրենց հայացքներից հրաժարվելու պատկերում, և առավելությունը տալիս են վերջինին<sup>2</sup>: «Այս տեսարանում նա բարձր էր Բառնայից», — գրում է «Օդեսսկի նովոստիի» քննադատը<sup>3</sup>:

\* \* \*

Ուրիել Ակոստայի դերում Աղամյանի ունեցած հաջողությունը վերագրել դերասանի մեծ տաղանդին յիսկ՝ ճիշտ չի լինի: Այդ ինքնըստինքյան: Սակայն, որա կողքին, ոչ-պակաս դեր է խաղացել նաև ժամա-

Նակը: Թվում է, թե սխալված չենք լինի, եթե ասենք, որ արվեստագետի միտքը Գուցկովի պիեսի վրա կանգ է առել ոչ այնպես, լոկ բեմական տրադիցիայի ուժով, ինչպես այդ լինում է գերասանների կյանքում, Համոզված ենք, որ դրա համար նա ավելի լուրջ պատճառներ է ունեցել:

Պիեսի թատերական օրինակներին հեղինակը կցել է իր գիտողությունները, որոնց մեջ գտնում ենք շուցում այն մասին, թե Հրեաների գերակատարները ինչպես պետք է հագնվեն: Միաժամանակ նա հարկ է համարել դգուշացնել, որ նրանցից ոչ մեկի, նույնիսկ Բեն Ալիպայի խոսքի կամ վարքագծի մեջ չպետք է նկատվի ազգային առանձնահատկության հետք անգամ<sup>4</sup>:

Նշանակալի զգուշացում:

Դրանով հեղինակը կամեցել է իր պիեսի գերակատարներին հեռու պահել տեղայնացման վտանգից, հասկացնել, որ ռողբերգության դաշտարական ընդհանրացումներն ավելի լայն են նրա ընդգրկած նլութից, որ, կարեկցելով հրեա ճնշված ժողովրդին, նա արտահայտում է հումանիստական կարեկցություն բոլոր ճընշրվածների նկատմամբ, որ փառաբանելով ազատախոհ հրեային՝ նա փառաբանում է ազատության և առաջադիմության դաշտարանների ամեն մի կրողի, որ դիմակազերծելով բարբիններին և հրեա հարուստներին՝ նա խարազանում է կրոնական ամեն մի մոլեռանդություն, շարշիական ամեն շարաշահությունը<sup>5</sup>,

Ուրեմն, թեև ողբերգության հերոսը պատմական անձնավորություն էր և նրա կյանքի անցքերի մեջ մասն էլ իրական աղքատություններին, այնուամենայնիվ, Գուցկովը կամենում էր, որ իր գործն ընկալվի ոչ իբր անցյալ ժամանակներում կատարված միայն մի դեպքի դրամատիկական նկարագրություն, այլ որպես ամեն

Համանակների համար նոր և բոլոր միջավայրերին հավասարապես վերաբերող մի երկու

Այս մոռեցումը Աղամյանին հարազատ էր:

Ուրիշի կերպարին անցնելով, նա, անշուշտ, ուսումնասիրել է պատմական անցքերին վերաբերող նյութերը: Դերապատկերը ստեղծելիս Աղամյանը դարաշրջանից չի հեռացել, հավատարիմ է մնացել պատմականկութիւններին: Հոգվածներում նույնիսկ նշվել է դա: Սակայն, միաժամանակ, կերպարի էությունը բացահայտել է այնպես, որ նրա ընկալումը ժամանակակից հընչեղություն է ձեռք բերել Մեզ թվում է, որ Աղամյանը Ուրիշի կերպարի վրա կանգ է առել՝ նկատի ունենալով իր ապրած ժամանակները: Ողբերգության և՛ նյութը, և՛ նրանից բխող գաղափարները կարծես թե հենց այն իրականությանն էին վերաբերում, որ տիրում էր Ռուսաստանում՝ օր-օրի վրա սաստկացող ռեակցիայի տարիներին: Գուցկովի պիեսի հոմանիստական գլխավոր գաղափարը մտքի աղատության պաշտպանությունն է: — պայքար խավարամտության դեմ, որ ճնշում, հալածում է մտքի աղատ ընթացքը:

Այս կերպարը ևս, ինչպես մյուսները, իր ամբողջ պատմությամբ դալիս լրացնում է արտիստի ստեղծագործության գլխավոր թեման՝ գեղեցիկ ձգտումների բախումը բիրտ իրականության հետ և նրանց խորտակման ողբերգությունը:

\* \* \*

Գուցկովի ողբերգության բեմական պատմությանը ծանոթանալիս տարբեր մեկնաբանությունների ենք հանդիպում, որոնց մեծ մասը, ի վերջո, համախմբվում է երկու հիմնական գծի շուրջ: մեկի համաձայն՝ շեշտվում է Ուրիշի և Հուդիթի սիրո ողբերգական պատմու-

թյունը. մյուս մեկնարանությամբ՝ ներկայացման առանցքը դառնում է աղատ մտքի փառարանումը ընդդեմ խավարամտության:

Այս մեկնարանություններից Աղամյանը որի՞ն նախապատվություն տվեց Առանձին-առանձին՝ ոչ մեկին: Խաղի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա այն համոզման էր, թե մեկն առանց մյուսի ընդունել՝ նշանակում է կողոպտել այն հարստությունը, որ ամփոփված է գլխավոր հերոսի մեջ: Բազմակողմանի և ավելի խորը ընդգրկում կատարելու համար, նրա կարծիքով, պետք էր նկատի ունենալ մեկնարանության երկու գիծը, շեշտել ե՛ մեկը, և՛ մյուսը: Եթե շեշտվի միայն մտածողը, ապա կերպարը կարող է կանգնել հուզականությունից որկվելու վտանգի առաջ. Եթե շեշտվի միայն սիրո ողբերգությունը՝ այդ դեպքում էլ պիեսի գաղափարական շրջագիծը կարող է սահմանափակվել: Ուրիշն, ճիշտն այն է, որ մեկի միջոցով պետք է գալ մյուսին և այդ ճանապարհով ընդգծել ոչ թե նրանց միշտ եղած հակասությունը, այլ ներդաշնակ համաձայնությունը: Դրան հասնել՝ նշանակում է հանգել այն կարևոր մտքին, որ ողբերգությունը ոչ թե նրա կրողների մեջ է, այլ նրանց շրջապատի, այն շրջապատի, որ մարդկանց մղում է դեպի կործանում:

Աղամյանի Ուրիելի մասին լույս տեսած առաջին հոդվածներից մեկը, ինչպես արդեն ասվեց, գրված է այն համեմատական մեկնարանությամբ, որ տվել են Զոնենտալն ու Աղամյանն այդ դերում:

Մի քննադատ այն համոզումն է հայտնել, թե ուղամյանը խաղում է Գուցկովի Ուրիելը, այսինքն՝ այդ դերը կատարում է այնպես, ինչպես ստեղծել է Գուցկովը, իսկ Զոնենտալը՝ ոչ:

Իր միտքքը նա հիմնավորում է հետևյալ կերպ:

Ուրիել-Աղամյանը մարդ է, Ուրիել-Զոնենտավլը՝ փիւլիսոփիա: Ուրիել-Աղամյանը հասարակ մահկանացու է, ճիշտ է՝ աղատախոր: Զոնենտավլը մտածող է, իր շրջապատից բարձր: Եվ քանի որ Աղամյանն ընդգծում է մարդուն, նրա Ուրիելը տատանումներ ունի, վճռականության պակաս: Իսկ Զոնենտավլը, շեշտելով փիլիսոփիան, ցույց է տալիս, որ նա իր համոզումների մեջ անդրդվելի է, միտքը համառ է, եռանդով լի և կամային կերպար է ընդհանրապես: Ահա այս տարրերությունն էլ, բնականաբար, անդրադարձել է կերպարների բեմական դրսնորման վրա: Այն ժամանակ, երբ Աղամյանի Ուրիելն իր պահվածքով, շարժուձեռվ, ինչպես և խոսքով, պարզ է, սովորական, Զոնենտավլ-Ուրիելի և՛ քայլվածքը, և՛ շարժուձեռը, և՛ կեցվածքը հանդիսավոր է: Աղամյանի Ուրիելը կրակուտ խառնվածք ունի, մինչդեռ Զոնենտավլի Ուրիելի մեջ համարյա ամեն պահ նշմարելի է սառը վճռականություն: Եթե Աղամյանի Ուրիելը շրջապատի մեջ զգում է իրեն հարազատ, սովորական ու պարզ, ապա Զոնենտավլի Ուրիելը ընդգծում է իր և շրջապատի միջև եղած տարրերությունը, սեփական անձի գերազանցությունը և մի տեսակ վերից է նայում նրա վրա:

Զոնենտավլ դերից առանձնացրել և սիրով խաղացել է բոլոր այն ճյուղերը, որոնք վերաբերում են դատողական Ուրիելին, նույնիսկ հատուկ ընդգծել է իր հերոսի խահերը, մինչդեռ Աղամյանը շեշտը դրել է այն ներքին բախման վրա, որ առաջացել է համոզումների և սիրո միջև տեղի ունեցած խզման հետևանքով և կերպարը մղել է հակասական ապրումների ոլորտը: Դրահամար, ասում է քննադատը, Զոնենտավլը թեթև է անցնում այն բոլոր տեսարանների վրայից, ինչպես Հուդիթի կամ մոր պատկերները, որոնք արտահայտում են

կերպարի ներքին հակասական կոփվը, իսկ Ադամյանը՝ ճիշտ հակառակը:

Նշելով Զոնենտալի խաղի ընդհանուր արժանիքները, նրա լավագույն տեսարանները, ինչպես, օրինակ, Ուրիելի վերջին մենախոսությունը, քննադատը միաժամանակ իր վերջնական եզրակացության մեջ հակվում է դեպի Ադամյանը. «Էստ երևութին,— զրում է նա, — Ադամյանն ավելի իրավացի է՝ Ուրիելին ներկայացնելով որպես մարդ։» Եվ իր եզրակացությունը հիմնավորելիս քննադատը ուշադրության արժանի պատճառաբանությունը է քերում, որ մեզ թվում է լիովին համոզիլ ճիշտ չէ՝, — զրում է նա Զոնենտալի մասին, — որ դրանից հետո մենք շենք հաշտվում, երբ Ակտուան անսում է սիրո ծայնին, և ոչ պարտականությանը, որի կողն է անսում և որին, ինչպես հավատացնում է մեզ Զոնենտալը, նա պատրաստ է ծառայել ամենուրեք և յիշու ճիշտ չէ», որ զրանից հետո անհասկանալի է հրաժարանքի տեսարանը, ինչպես և անձնասպանությունը»<sup>6</sup>,

Քննադատը իրավացի է. այդքան համոզվածություն, այդքան կամք և վճռականություն դնելով կերպարի մեջ, Զոնենտալը հակառակ է գնացել այն տրամարանությանը, որի վրա կառուցված է դերը և որը ապահովում է նրա աճը հակասությունների միջով՝ դեպի ողբերգական կործանում։

Ուրիշ քննադատներ ևս հաստատում են, որ Ադամյանը Ուրիել խաղալիս ընդգծել է մարդը։ Վերոհիշյալ հոգվածը, որի հիման վրա կատարվեց Զոնենտալի և Ադամյանի խաղերի համեմատությունը, զրվել է 1885-ին, Երկու տարի անց, 1887-ին, մի այլ քննադատ ասում է, որ «արվեստագետն իր առաջ բացեց

մարդուն և լուսավորեց նրա հոգում թաքնված ժաշ-  
բերը՝ <sup>7</sup>

Այս նշանակո՞ւմ է արդյոք, որ մտածող Ուրիելը  
չկար Աղամյանի մեկնարանման մեջ, կամ արդյոք կա-  
րո՞ղ է պատահել, որ պիեսի նյութն ուսումնասիրելիս  
դերասանը ուշադիր Ախներ կերպարի այդ կողմին:  
Իհարկե՝ ոչ!

Մի-երկու խոսք Աղամյան-Ուրիելի գերապատկերի  
մասին:

Դալուկ դեմք՝ մի խորին թախսիծի արտահայտու-  
թյամբ Գեղեցիկ գծագրված հոնքերի տակից փայլա-  
տակում էին համոզված մտածողի և զաղափարի նա-  
հատակի աշքերը, Բայց և բարձր ճակատը, որ վկայում  
էր մտքի տենդագին լարում, ակոսում են ապրած տագ-  
նապի կնճիռները։ Սև, ոլորում մազերը, քոմքերի մոտ  
արդեն ճերմակած, փոքր մորուքը, որ շրջանակում էր  
այդ ազնիվ դեմքը, հաղորդում էին նրան բիրլիական  
արտահայտություն։

Մի քննադատ Աղամյան-Ուրիելի արտաքին այդ  
նկարագրությունը տալով՝ բացականշում է. «Այդ դեմ-  
քը նկարչի վրձինին է արժանի» <sup>8</sup>.

Փորձենք հասկանալ այն տրամաբանությունը, որի  
օգնությամբ Աղամյանը կառուցել է Ուրիելի կերպարը։


Ինչո՞ւ է նա արդշափ ընդգծել մարդուն, արդյոք  
նրա՝ համար, որ մտածողին երկրորդական տեղ էր  
վերագրում կերպարի կյանքում։ Իհարկե, ոչ Նա այդ  
արել է մտածողի կերպարը ցայտումացնելու համար։

Չոնենտալը, սկզբից ևեթ շեշտելով մտածողին, ըստ  
որում իր հայացքների մեջ մինչև վերջ անդրդվելի Ու-  
րիելին, փոքրացրել է կերպարի զարգացման հեռա-  
նկարը։ Դերասանը բռնել է յուրահատուկ, իր տեսակի  
մեջ անպայման հետաքրքիր, բայց նվազ հեռանկարա-

յին ճանապարհը, Աղամյանն ընթացել է Հակառակ ճանապարհով, նա աշխատել է, որքան հնարավոր է, բարդացնել, հարստացնել իրադրությունը և այդ դժվարին ճանապարհով հասնել այնպիսի ընդգծումների, որոնք կարող էին օգնել՝ հասկանալու Ուրիելի, մարդ և միաժամանակ մտածող, մտածող և միաժամանակ մարդ Ուրիելի ողբերգական կացությունը:

Ի տարրերություն Համլետի, Օթելլոյի, Արքենինի և Զացկու, որոնք շգփտեն, թե ինչ է նշանակում նահանջը կյանքի գլխավոր իմաստից, Ուրիելը, ինչպես Հայտնի է, զիշումներ է անում: Իր և մանավանդ հարազատների, երշանկությանը հասնել՝ թեկուզ նահանջի գնով: Համոզումները, որոնցից, թվում է, թե ավելի թանկ ոչինչ չկա կյանքում՝ զիշում է հանուն Հուդիթի սիրո, մոր նկատմամբ ունեցած որդիական պարտականության և եղրայրական զգացման:

Աղամյանը Հուդիթի հանդեպ ունեցած սերն արտահայտել է շատ ուժեղ, զգացումների այնպիսի հարրստություն զնելով նրա մեջ, որ հանգիստատեսը ենթարկվել է հոգեկան այդ բուռն դրսնորմանը, և դա մղել է համաձայնելու, թե այս, այդպիսի սիրո համար գուցե և կարելի է զիշել: Գեղեցիկ սեր է դա, մի իսկական, համայնապարփակ զգացում: Հուդիթը նրա համար ամեն ինչ է, ոչ միայն շքնաղ էություն, այլև իսկական ընկեր, որ հասկանում է իրեն, գնահատում իր մտքի սլացումները և կանգնած է նրա կողքին՝ որպես բարի կողմնորոշում կյանքի այս խճճված բավիղներում: Հուդիթն իր հետ է՝ նշանակում է աշխարհն իր հետ է: Զկա Հուդիթը, իր հետ չէ Հուդիթը՝ նշանակում է աշխարհն էլ իր հետ չէ: Նա չի պատկերացնում կյանքն առանց Հուդիթի: Դա իդեալական սեր է, միաժամանակ այնպես մարդկայնացված, որ հանդիսատեսի սիրուց,



Գևորգ Աղամալյան

7. 17. 1912

ևթե սառն է եղել՝ շերմացել է, եթե շերմ է եղել՝ բուցավառվել, կրակ է կտրել:

Զոնենտալը կերպարի այդ կողմին առանձին կարեփրություն չի տվել. նա փիլիսոփիա է և միշտ՝ մտքերի ու գաղափարների վերացական մթնոլորտում: Այդ պատճառով նրա խաղում սերը և՛ դեպի Հուդիթը, և՛ դեպի մայրը ձևական է, ավելին արտաքին արտահայտությամբ դրսեռումած: Դրա համար էլ անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ է նա, այնուամենայնիվ, բռնում նահանջի ճամփան: Մինչդեռ Աղամյանը իր հոգու ողջ շերմությունը դնելով սիրո մեջ՝ նահանջի համար արդարացուցիչ հիմքեր է ստեղծել: Ուրիշելի քայլը հոգեբանական արդարացում է գտել: Ուրիշելի համոզված է, որ ինքն իրավացի է, որ իր համոզումները ճիշտ են, և ևթե նա, այնուամենայնիվ, նահանջում է, հրաժարվում իր գաղափարներից, ապա ուրեմն կան զորավոր այլ ուժեր, որ նրան ուրիշ կողմ են քաշում: Աղամյանը ոչ թե մի կողմ է թողել մտածողին, այլ համեմատաբար, այն էլ սկզբում, նվազ գունավորելով նրան, իր ամրող ուշադրությունը ողբերգության այս մասերում դարձրել է սիրո վրա, նրա հախուտն ու բուռն դրսեռման վրա: Ուժեղ, շեշտակի ընդգծման ենթարկելով կերպարի այս կողմը, նա ընդհանրապես բնմականորեն արդարացըել է կերպարի վարքագիծը, բացատրելով, թե ինչո՞ւ և ի՞նչ պատճառով նա կարող էր այդ քայլին դիմել:

Մտածել, սակայն, թե Աղամյանը երկու գույնի, սևի ու սպիտակի հակադրության վրա է կառուցել իր քայլը՝ սխալ կլինի: Թեև սերն անշափ ուժեղ, թեև պատրաստ հայացքների զոհարերության, բայց նա այդ քայլին գնում է ներքին պայքարով: Եթե Զոնենտալի խաղի մեջ անհասկանալի է Ուրիշելի նահանջը, իսկ Աղամյանի մոտ, ընդհակառակը, հասկանալի է, ապա այդ հասկաւ:

Նալիին դերասանը հասնում էր ներքին տանջալի պայտքարի միջով։ Երբ ասում ենք, թե նրա պատկերման մեջ սկզբում մտածողը աղոտ է գծված, ապա միայն համեմատարարության մեջ թույլ լինելով, առանձին վերցրած, դա մեծ ուժ է՝ ընդունակ համառ դիմադրության։ Եվ այդ դիմադրությունը ուղեկցում է կերպարին մինչև վերշին պահ։ Ասում են, թե այդ ներքին կախվը — հրաժարվել գրքից, թե՛ բարձր կանգնել շրջապատից, պաշտպանել համոզամները, թե՛ զոհ բերել դրանք — այս հակասական ապրումները Ադամյանը ներկայացրել է ցնցող ուժով։ Նույնիսկ զեր շի խաղացել այն հանգամանքը, որ ոռու հանդիսատեսը շի իմացել հայերեն։ Մի քննադատ ասում է, թե դերասանի խաղն այնպիս է, որ համակել ամբողջ դահլիճը, որ սրոլոր հանդիսատեսները, հավատացած է ինքը, հասկացան Ուրիելի ասածը, հասկացան, այլապիս ինչո՞վ բացատրել հանկարծ պոռթկած ծափահարությունը։ Իսկ հետո ավելացնում է. «Է ինչպես շհասկանալ, մի՞թե աշքերը, արտիստի ամեն մի շիղը չէր ճշում այն կովի մասին, որ տեղի էր ումենում նրա մեջ»<sup>9</sup>.

Եղբայրները բերում են կույր մորը։

«Եթե դուք թատրոնում լինեիք, — գրում է նույն քըննադատը, — դուք կտեսնեիք, թե տարարախտ Ուրիելը ինչպես դիմավորեց մորը, որքան վիշտ լսվեց նրա խոսքերի մեջ։

Դեռ զու նանաշո՞ւմ ես անիծյալիս։

Թայց եթե մինչև այժմ տեսածը թույլ էր տալիս հասկանալ Ուրիելին առանց իմանալու լեզուն, որով նա-

խոսում է, ապա վերջին մենախոսությունն ասելիս  
Աղամյանն ինքն իրեն գերազանցեց, Բառերով... բառե-  
րով անկարելի է արտահայտել այն, ինչ մարդ ինքը  
պետք է տեսներ, ինքը պիտի զգար, և այն ժամանակ  
միայն կարելի է պատկերացնել հառաշող Աղամյանին.

Մանվան բույնն է կրծքիս մեջ...

Վիշապուրված զազանի նման կցանկանայի  
Դոռալ...

Իսկ վերջին խոսքերի ժամանակ

Բալական է... Թողեմ ինձ...

Նս զնում եմ, զնում եմ, զնում:

Թատրոնը բառացիորեն դղրդաց ծափահարություննե-  
րից: Ընդմիջմանը ամենքն այն մասին էին միայն խո-  
սում, թե հոշակավոր ողբերգակը էսթետիկական ինչ-  
պիսի մեծ բավականություն պատճառեց հավաքված  
հասարակությանը: Հետագա խաղը այլևս ոչինչ չէր  
կարող ավելացնել. այս մենախոսության առաջ նսե-  
մանում է ամեն ինչը<sup>10</sup>,

Աղամյան-Ռւբիկելի սիրո և համոզումների միջև,  
վերջին հաշվով, հակասություն շկա: Եթե նա, այնուա-  
մենայնիվ, համոզումները զոհաբերում է, ապա նրա  
համար, որ ստիպված է այդ անել: Դա շրջապատի հրա-  
մայականն է: «Օդեսսկի վեստնիկ» քննադատն ասում  
է, թե հրաժարանքի տեսարանում հանդիսականը տես-  
նում է «մի մարդ», որը գերբնական շանթեր է գործ  
դնում, որպեսզի կարողանա հրաժարագիրը կարդա  
մինչև վերջ, հեռանալ այն ամենից, որ այնքան թանկ է  
նրա համար, որով նա ապրում և շնչում է: Քննադա-  
տը նկատում է, որ ինքը հիշում է թառնայի խաղն այդ  
տեսարանում, ուսակայն գերմանական ողբերգուին պա-

կասում էր Հոգեկան շնորհությունը, ամենազլիւավորը՝ Աղամյանի անկեղծությունը<sup>11</sup>, Այն, որ այդ պատկերն նաև բարձր է եղել Բառնայից՝ հաստատում է մի այլ հոգվածագիր Աս<sup>12</sup>:

Մի քննադատ, դարձյալ Օդեսայից, իր հոգվածում բավական արտահայտիչ ձևով նկարագրել է Աղամյան-Ռոբինին՝ հրաժարանքի տեսարանում, ավելի ճիշտ՝ Ռոբինի ակամա հրաժարիմքը, նրա ստիպվածությունը, հարկադրված լինելը:

«Հրաժարանքի տեսարանում,— զբում է նա,— զուք տեսնում եք դաժան իրականություն։ Նրա խաղում հոգե-ֆիզիկական տարրը այնպիսի իրական ճշտությամբ է հանդիս դալիս, որ ստիպում է ձեզ մոռանալ շրջապատողներին և պատկերացնել մեռյալների մեջ։ Նրա ամբողջ մարմինը նյարդայնորեն ճոճվում է, դեմքին՝ մեռելալին դժգումություն։ Սառը քրտինքն է պատել նրա ճակատը, տեսնդագին դողացող ձայնը րոպե առ րոպե խղվում է։ Սառը քրտինքը վրա է ավել, և նա ամեն անդամ ձեռքով սրբում է այլայլված դեմքը։

Երկու րոպե ևս, և ձեր առջև կանգնած է ոչ թե մարդ, այլ երկյուղալի մի ստվեր, որ տարուքերվում է և արձակում անկապ հնչյուններ... Սարսափը պատում է ձեզ, և ճնշված երեակայությունը պատկերացնում է հանգուցյալների գերեզմանները<sup>13</sup>,

Թուրոր քննադատներն էլ այս տեսարանը բեմական արվեստի գլուխ-գործոց են համարելի Ռոբի դերասանների խաղի հետ են համեմատել և առավելությունը տվել են նրան։ Մի քննադատ ասում է, թե այդ տեսարանում, դերասանների մեծ մասը, որպես կանոն, մելոդրամատիզմի մեջ է ընկնում և իր անկեղծ ուրախությունն է հայտնում, որ Աղամյանը խուսափեց դրանից, տալով ուսալիստական խաղ<sup>14</sup>,

Ուրիելը, ինչպես հայոնի է պիեսից, կրկին վերադառնում է իր հայացքներին, պաշտպան կանգնում նրանց, նա այժմ սերն է զոհաբերում:

Չոնենտալի համար՝ մի առանձին դժվարություն չեր ներկայացնում այս նոր անցումը, որովհետև նրա խաղում, ըստ էության, սեր չկարու իսկ այն, ինչ չկա, նրանից դժվար չէ հրաժարվել: Մինչդեռ Ադամյանը ինքն իրեն զրել էր ծանր դրության մեջ, ինչպես հրաժարվել սիրուց, երբ դա ամեն ինչ է նրա համար, ինչպես ցինել հնազանդ որդի, երբ աշխին երևում է կուրացած մոր դժրախատ կերպարանքը: Բայց պետք է հրաժարվել: Հեշտ է ասելը: Որքան հեշտ է ասելը, նույնքան դժվար՝ բայց մուռ բնկվել, մի այլ ընթացք բռնել, երբ մինչ այդ ամբողջ հոգին զրել է նրա մեջ, Դերասանը, իհարկե, դժվարությունը հաղթահարել է: Հարցը, սակայն, դժվարության մեջ չէ, որովհետև արվեստագետը կամովին գնացել էր դեպի գործի բարդացում: Ի՞նչ նպատակ է զրել դերասանն իր առջև, որքան թանկ է այն, ինչից հրաժարվում ես, այնքան ավելի է բարձրանում այն, ինչի համար զոհաբերում ես այդ թանկը: Ուրեմն Ադամյանի վերջնական նպատակը մտածող Ուրիելն էր, մտքի հաղթանակը: Այդ դժվարին անցումները դերասանը հանձն էր առել, որպեսզի մտքի հաղթանակը հնչի անվերապահ համոզվությամբ:

Հանդիսատեսների վկայությամբ, Ադամյանի խաղի մեջ երբ սերն էր իշխողը, թվում էր, թե իսկապես դրանից ավելի բարձր ոչինչ չկա, իսկ այժմ, երբ նրա Ուրիելը մաքառում է հանում՝ դավանած գաղափարների, խրսիտ ու անսասան, նույն հանդիսատեսները կարծում են, որ, այո՛, ճիշտ է Ուրիելը, իհարկե, հայացքները ամեն ինչից վեր են: Հետաքրքիրն այն է, որ դերասանն իր խաղով այնպես է համակել նրանց, որ թե մի դեպ-

բռամ և թե մյուս՝ հավատացած են եղել, որ իրենք ևս  
միայն այդպիս կվարվեին,

Ինչպիս ուրիշ դերերում, այնպես էլ Ուրիելի դերա-  
կատարման ժամանակ Աղամյանի խաղով կերպարն ա-  
ճում է, նման այն գետին, որ ճանապարհին իր մեջ առ-  
վակներ առնելով մեծանում է, հորդանում, ստանում  
այնպիսի ուժ, որ առաջ շկար նրա մեջ և չէր էլ կարելի  
ենթադրել.

Քենադատներից մեկը, նորից Հիշելով Զոնենտալին,  
ասում է, որ ուրիշ Ակոստան հրաժարվում է րոպեական  
խայտառակությունից՝ Զոնենտալը հոյակապ էր, խա-  
զում էր սրտանց, մինչդեռ Աղամյանը ստեղծում էր: Եվ  
հետո, կանգ առնելով միայն Աղամյանի վրա, շարու-  
նակում է. «Նկարագրել այդ տեսարանը դժվար է,  
պետք է տեսնել, վերապրել. այստեղ Աղամյանը ինքը  
զայրույթն է, մոլեգնությունը, ուա աշարկու տարերքն է.  
մի ահեղ մրրիկ. շկա այլևս նրա մեջ ո՞չ հյու աշակեր-  
տը, ո՞չ հնազանդ որդին, ո՞չ սիրահարված փեսացուն:  
Նա երկյուղալի է և վեհ, մարդարե և վրիժառու միա-  
ժամանակ, որը զգացել է իր մեջ այնպիսի ուժ, որի  
առաջ ընկրկում են վայրի ֆանատիկոսները և ծաղրա-  
կան խոսքեր լսում «իրենց սուրբ սինագոգի» հաս-  
ցեին»<sup>15</sup>,

Եվ եթե Աղամյանի Ուրիելի մասին առել հն, թե հի-  
շեցնում է մտքի այն մարտիրոսներին, որոնք ռաշխար-  
հին ազդարարել են նոր ճշմարտություններ և զռնվում  
են խարույկի կամ խաչի վրա՝ միանգամայն ճիշտ է<sup>16</sup>,

Հուղիթը, ինչպիս հայտնի է, մինչև վերջ հավատա-  
րիմ է մնում Ուրիելին: Ճիշտ է, հորը փրկելու համար  
համաձայնություն է տալիս ուրիշի հետ ամուսնալու,  
բայց հարսանեկան հանդեսին թույն է խմում: Այդ տես-  
նելով՝ Ուրիելը անձնասպան է լինում: Ըստ պիեսի՝ բե-

Հի հունում կավում է միայն կրակոց, կենսկին մի-փոքք շնդվում էր պիեսից, նրա Ուրիելը, տեսնելով անշնչացած Հուդիթին, հեռանում էր հյուրերից, քաշվում մի կողմ և բեմի մի անկյունում անձնասպան էր լինում։ Աղամյանը պիեսից շնդվում էր բոլորովին նա, ինչպես պիեսն է պահանջում, անձնասպանությունը կատարում էր բեմի հետեւում, բայց հետո, վիրավորված վազում էր բեմ և ձեռքի շարժումներով ու դիմախաղով մի կերպ հասկացնում էր իր խնդրանքը՝ թաղել իրեն Հուդիթի կողքին։ Ուրիելն ընկնում է Այլևս ուժ շկա վրան և, այնուամենայնիվ, մզգաւմ է զեպի Հուդիթի դիակը։ Ուժասպառ է լինում և, Հուդիթին շհասած, մեռնում կես-ճանապարհին 17.

Այս մանրամասնությամբ Աղամյանը միավորում էր ոզրերգության երկու գիծը, ցույց տալիս, որ չնայած ներքին պայքարին, իր և շրջապատի միջև եղած բոլոր հակասություններին՝ տարածայնություն չկա իր մարդկային նկարագրի և փիլիսոփայի միջև

ինչպես պիեսում, այնպես էլ Աղամյանի ներկայացման մեջ հերոսի ողբերգական կործանումը չի ընկալվել որպես պարտություն, Ընդհակառակը, նա իր մահով հաստատել է կյանքը, հաստատել է ազատ մտքի հաղթանակը, ծզել են զերասաններ, որոնք Ուրիելի մահը է վերջու ներկայացրել են որպես պարտություն։ Սակայն Աղամյանը, ինչպես նաև կենսկին, իրենց խաղով թույլ չէին տալիս, որ հանդիսատեսը մի պահ անգամ այդ մահը ընկալի որպես գաղափարական նահանջ։ Այս վերջում Աղամյան-Ուրիելը բեմից հեռանում է, վիրավոր նորից հայտնվում՝ հանդիսատեսը չի տեսնում նրա մեջ մռայլ ճակատագրի ծանր բեռան տակ կրած ու ջախջախնված մարդու, ընդհակառակը, նա նման է եղել ոմարտի դաշտում ընկած՝ դայիք առա-

շավոր գաղափարների հաղթանակի մունետիկի»։ Այդ ժահով, դերասանի խաղով ընդհանրապես, հաղթանակում էր այն միտքը, — շատ կարևոր 80-ական թվականների համար, — թե երջանկությունը պայթարի մեջ է և ոչ թե պայթարից նահանջելու:

Մի քննադատ, տարիներ առաջ, Ուրիելի դերում տեսել էր Բառնային։ Տեսել էր ու հիացել Շնար իմ հիշողության մեջ թողել է Ուրիելի համակրելի կերպարը, և ևս սիրում էի այդ կերպարը», — զրում է նա և միաժամանակ ասում, որ ինքը չէր կամ նույն այդ կերպարը տեսնել մի այլ ձևով, և ուրիշ դերասանների փորձերը՝ փոխել այդ կերպարի մեջ մի փոքրիկ զիծ անգամ՝ ինքը պատրաստ է եղել ընդունել որպես արվեստի հանդուգն գուեհացում, «Բայց, ճիշտն ասած, չգիտեմ, — շարունակում է նա, — բարկանա՞լ Աղամյանի վրա, թե՞ հիանալ նրանով, որը պոկեց իմ հոգուց այդ կերպարը և ցուց տվեց ինձ Ուրիելի բոլորովին այլ կերպար։ Եվ ևս տեսա ոչ միայն հղոր, այլև մարդ-Ուրիելին»<sup>18</sup>,

Թվում է, թե դերասանի համար, որքան էլ մեծ լինի նա, սա բարձրագույն գնահատություն է։

ԳԼՈՒԽ  
ԵՐԵՎԱՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ  
Ա Ճ Խ Ա Ր Ճ Ո Ւ Մ



---



## ՉԱՑԿԻ

Ժադով, հետո Զացկի — ահա այն առաջին երկու գնրը, որոնցով Աղամյանը մուտք է գործն լ ոռւսական կերպարների մի ամբողջ աշխարհ։

Ժադովը, իհարկե, Զացկի չէ։ Այդ հասկանում էր Աղամյանը։ Հասկանում էին նաև հասարակությունն ու քննադատությունը։ Եթե մամուլը դրական է արտահայտվել Աղամյանի ժադովի մասին, ապա նրա Զացկու վրա կանգ է առել շերմ հիացումով։ Ժադովի դերակատարումը պետք է զիտվի որպես մի նախապատրաստական քայլ՝ Զացկուն անցնելու համար։

Ենելթից պատուհասից բեմադրությունը հայկական բեմում մեծ դժվարությունների հետ էր կապված։ Առաջին անգամն էր, որ գրիբոյեցովյան հերոսները բեմից ողետք է խոսեին ոչ-ռուսերէն։ Բացի այդ, բարձր գաղափարները այստեղ դուգակցված են ոռւսական կյանքի տիպիկ գրսնորումների հետ։ Միանգամայն հասկանալի է, որ ոռւսական իրականության մասին աղոտ պատկերացում ունեցող գերասաններից, ինչպիսին Աղամյանն

էր, պետք է դա պահանջեր լրացուցիլ շանք՝ նպատակին հաջողությամբ հասնելու համար Եվ եթե ասվում է, որ Աղամյանը Զացկու կերպարը պատկերացնելիս գործի է կպել նույն ոգևորությամբ, ինչ որ Համլետի ժամանակ, բայց և նույն անհանգիստ սրտով, թե կկարողանա՞ արդյոք մի այդպիսի ծանրություն հաղթահարել՝ միանգամայն հասկանալի է:

Աղամյանի Զացկու հաշողությունը ոչ մի կասկածի տուիմ շտվեց, Թննադատությունն ասում էր, որ նրա խաղը, ինչպես նաև մյուս զլխավոր դերակատարներինը, զմայանք է պատճառում, հիշեցնում է ոռուական բնմի լավագույն դերակատարներին, այնքան արտահայտիլ է, որ «կարելի է իսկական հաճույքով հետևել նրանց խաղին, շիմանալով անգամ հայերեն լեզուն»<sup>1</sup>.

Ոչ միայն բարձր ու շերմ գնահատվեց, այլև իրրև կերպար մնաց հանդիսատեսի հիշողության մեջ, տեղ գրավեց նրա սրտում։ Ու թեև Թիֆլիսի հանդիսատեսը, ուր նա խաղաց Զացկու դերը, և առաջ, և հետո, բավական Զացկիներ էր տեսել, միննույն է, նրանցից շպտերի համար կերպարը ներկայանում էր այն նկարագրով, որ նրան հաղորդել էր հայ դերասաններ։

Աղամյանի խաղը բնութագրելուց առաջ անհրաժեշտ ենք համարում մի շեղում կատարել և խոսել այն մասին, որ «Խելքից պատուհասի» բնմադրությունը հասարակության տարրեր թենքը՝ առաջազարդուների և պահպանողականների միջև մի սուր վեճ բորբոքեց։

Այդ վեճը առաջին հայացքից ոչ մի կապ չունի Աղամյանի Զացկու հետ։ Եվ, իսկապես, վիճող կողմերը Աղամյանին չեն էլ հիշատակում։ Եվ, այնուամենահայնիվ, կապ կա։ Այդ այն է, որ պահպանողականների հարձակումը «Խելքից պատուհասի» վրա, իր արձագանքի էր գտնում հասարակության մեջ, կողմնակիցներ շահում

Հանդիսատեսների շրջանում։ Դա զերասանից պահան-  
շում էր լրացուցիչ ջանքեր, հանդիսատես հասարակու-  
թյան այդ մասի՝ Զացկու դեմ ունեցած նախապաշ-  
րումը արմատահան անելու համար։

Նախ անդրադառնանք այդ վեճին, ապա՝ Աղամյանի  
ուներակատարմանը։

\* \* \*

Թատերական հասարակայնության առողջ և առա-  
շագնեմ մասը ողջունեց «Խելթից պատուհասի» բեմա-  
դրությունը, իսկ նրա պահպանողական թեր, ճիշտ հա-  
կառակը, դժգոհ մնաց և ժխտական դիրք բռնեց։

Այդ առաջին անգամը շեր։

Ռուսական դրամատուրգիան, — խոսքը նրա ականա-  
վոր արտահայտությունների մասին է, — հաճախ է պար-  
բարի առիթ տվել հայ հասարակական կյանքի տարրեր  
խմբավորումներին։ Դեռևս 60-ական թվականներին,  
երբ Օստրովսկին առաջին անգամ էր հայ թատրոն  
մուտք գործում, գաղափարական կրթությունը բախումներ  
տեղի ունեցան։ Մի ամբողջ մտայնություն զարգացվեց  
այն մասին, թե ի՞նչ կարիք կա Օստրովսկուն կամ Սու-  
խովո-Կորիլինին տեղ տալ հայ թատրոնի խաղացանկի  
մեջ, եթե նեղ-ազգային հեղինակներ լինելով, անկարելի  
էր որ հայ հանդիսատեսի հետաքրքրությունը շարժեն։  
Սակայն դրան հակադրվեցին թատրոնի առաջադեմ  
գործիչները, ինչպես Զմշկյանը, Ամբիկյանը, Ման-  
դինյանը և կովկի բռնվելով թատերական քննադատու-  
թյան պահպանողական ներկայացուցիչների հետ, պայ-  
քար ծավալեցին ուսա դրամատուրգիայի համար, զար-  
գացնելով այն միտքը, թե հայ հանդիսատեսին որու-  
րամատուրգ Օստրովսկին իր պատկերած իրականու-

թյամբ, տիպերով, արծարծած խնդիրներով անհամեսատ մոտ է, ավելի հարազատ ու հասկանալի, քան էվրոպական դրամատուրգիայի մեծահամբավ հեղինակներից ոմանք։ Այժմ նույն պատմությունն էր կրկնվում հայ թատրոնի գաղափարական կյանքում։ Եթե 60-ական թվականներին Օստրովսկու և Սուխովո-Կոռիլինի (Նրանց հետ միասին նաև Սուխովսկյանի) դեմ սուր էր ճոճում «Հայկական աշխարհը», ապա այժմ, 80-ական թվականներին, այդ դերն իր վրա էր վերցրել «Մեղու Հայաստանին»։

«Փորձ» պարրերականը մի ընդարձակ հոդված է նվիրել «Խելքից պատուհասի» բեմադրությանը հայ թատրոնում։ Դրա հեղինակը վրաց նշանավոր գրականագիտ Դավիթ էրիսթովն էր, որին «Փորձի» խմբագրությունը ներկայացնելիս ասում է, որ նա՝ «տեղական համակրելի և սրամիտ բանասերներից մեկը, հիմնավորապես ուսումնասիրած է Գրիբոյեդովի կոմեդիան և հայտնի է ուստի գրականության մեջ յուր հետազոտություններով այդ բանաստեղծի կյանքի և գրվածքների մասին»<sup>2</sup>։

Ի միջի այլոց նկատենք, որ Թիֆլիսում գործող թատրոնասերների խմբակը, որ կազմված էր հայերից, ուրացիներից և ուստիներից, 1879-ին, Գրիբոյեդովի մահվան 50-ամյակի կապակցությամբ ուսուաց լեզվով ներկայացրել է «Խելքից պատուհասը», որտեղ Զացկու դերը կատարել է Դավիթ էրիսթովը<sup>3</sup>։

Էրիսթովը հանձն է առել գրել հայկական ներկայացման մասին, որովհետև հարցը վերաբերում է Գրիբոյեդովին, այսինքն՝ իր ուսումնասիրած և նախասիրած հեղինակին։ Բայց ոչ միայն դրա համար Վրացի գրականագետի քննադատական խոսքը ինքնին հետաքրքիր լինելով՝ ուշագրավ նշանակություն է ստանում նրանով,

որ նա չի սահմանափակում իրեն մի ներկայացման  
տված դնահատականով <sup>4</sup>։

Այդ հոգվածի սկզբում ասված է, թե «հայ դերա-  
սանների մշտական խումբը ներկայացրեց Գրիբոյեդովի  
ռաւ բանաստեղծի անմահ կոմեդիան» <sup>5</sup>, Կարծես թէ  
այստեղ ոչինչ ուշագրավ չկա, փաստի սովորական ար-  
ձանագրություն և ուրիշ ոչինչ, Բայց ոչ. ամեն ինչ այն-  
ուն չէ, ինչպես թվում է: Փաստի այդ սովորական  
արձանագրությունը զայրացրել է «Մեղու Հայաստա-  
նին» և ահա թե ինչու. նրա մեջ Գրիբոյեդովի կոմե-  
դիային բարձր գնահատական է տրված, որակված է  
այն որպես անմահ ստեղծագործություն: «Մենք չենք  
հասկանում,— գրում է «Մեղու Հայաստանին»,— այս  
հոգվածագիրը «անմահ» բառը ինչի՝ տեղ է ընդունում...  
Չենք հասկանում նույնպես, թե այդ կոմեդիայի մեջ  
ի՞նչ բան կա արդյոք անմահության արժանիք: Այս  
վրդուված հարցը տալուց հետո «Մեղու Հայաստանին»  
քննադատը շարունակում է: «Արդյոք նրա մեջ հայտ-  
նած ինքնուրուցն մտքե՞րը, կյանքի վերա ձգած նրա  
հայեցողություննե՞րը, արդյոք մարդկության ոգին ու  
միտքը բարձրացնող և ոգևորող աստվածային վսեմ  
զգացմունքնե՞րը և նրանց նուրբ արտահայտություն-  
նե՞րը, թե՞ ընդհանուր մարդկության համար հետաքրր-  
քիր բնավորությունների ճիշտ և գեղեցիկ նկարները...  
Արդյոք դրանցից մեկը կա՝ այդ «անմահ» կոչված կո-  
մեդիայի մեջ: Շնորհակալ կլինենք՝ եթե մեզ մատնա-  
ցուց անեն» <sup>6</sup>:

Սակայն պահպանողական քննադատը կամենալով  
հեռու մնալ միակողմանիությունից, նաև արժանիքներ  
է տեսնում «Խելքից պատուհասի» մեջ: «Մեր կարծի-  
քով,— գրում է նա, — կոմեդիայի միակ նշանավոր կող-  
մը նրա ստանավորի շափակցությունը, խոսքերի մեջ

և ամփոփ դասավորությունը և հանգերի կանոնավոր ու հաջող ելեկչներն են»... Բայց դա էլ, նրա կարծիքով, «կարող է միայն բռն ոռւախն կամ բռլորտվին ոռւա գրականության նվիրվածներին հետաքրքիր անել»<sup>7</sup>:

«Մեղու Հայաստանին» առարկությունները վերոհիշյալով շեն ավարտվում. «բեմական կետից այդ կոմեդիան աննշան, անպետք է, որշափ էլ լավ ներկայացվի. այնուամենայնիվ ձանձրալի է նա»<sup>8</sup>, Այնուհետև անդրադառնում է կերպարներին. անհաջող համարելով Զացկուն, գտնում է, որ հեղինակը տաղանդավոր է գտնվել մյուս տիպերի կենդանագրման մեջ, բայց... և այստեղ էլ նա մի վերապահություն է առաջ քաշում, գտնելով որ դրանք «մեզ վրա այնչափ տպավորություն են թող նում հիմա, որշափ որ մի թանգարանում կախած պատմական հագուստները»<sup>9</sup>:

Եվ քննադատը զուգահեռ է անցկացնում «Խելքից պատուհասի» և «Հայկ դյուցազնին» միջև՝ ասելով, որ առաջինով Ռուսաստանում տարվում են հնասեր ոռւաները, իսկ երկրորդով, այսինքն՝ Բագրատունու գրվածքով՝ գրարարականները Թվում է, թե ավելի անհիմն համեմատություն անել չեր կարելի. մեկը՝ «Հայկ դյուցազնը», հին գրականության լեզուն և ուղղությունը պահպանող ստեղծագործություն է, մյուսը՝ «Խելքից պատուհասը»՝ ճիշտ հակառակը, թե՛ լեզվի, թե՛ ուղղության կողմից նոր գրականության հիմքերը դնող նշանակալի երևույթներից է ոռւական իրականության մեջ: Չենք խոսում այն մասին, որ առաջինը պատմական խոր անցյալին է պատկանում, երկրորդը, թեկուզն անցած, բայց հեղինակին ժամանակակից կյանքն է պատկերում: Ուրեմն մեկի և մյուսի միջև, երբ նրանք ամեն իմաստով միմյանց ժըխտող երկեր են, ի՞նչ համեմատություն կարող է պրամա-

բանական ճանաշվելու թայց անդրադառնանք հոդվածագրի սկզբունքային առարկություններին:

Հստ հոդվածագրի, Գրիբոյեդովի կոմեդիան, նախ՝ նեղ-կենցաղային է, հետևապես ընդհանուր հետաքրքր-քըրություն չի կարող ներկայացնել, երկրորդն էլ՝ անցած արժեք է, արդեն պատմությանը պատկանող մի երկ, որն այսօր, ժամանակակից կյանքի զարգացման տեսակետից, ոչ մի ներգործություն ունենալ չի կարող ալլեա:

Անելքից պատուհասից քննադատի կարծիքով անմահ անունը կարելի է տալ այնպիսի հեղինակների, ինչպես Ենքապիրն է, Եփլերը, Գյոթեն, Բայրոնը և վայս առնչությամբ նա բացատրում է, թե որ դեպքում կարելի է հեղինակին կամ նրա գործը անմահ կոչել: Նրա տված բացատրության մի հիմնական կետն էլ այն է, թե անմահ կարող են կոչվել այն ստեղծագործությունները, երբ սամեն ազգ պարծանքով նրանց իր սեփականությունն է համարում»<sup>10</sup>: Հետաքրքիր է, թե ե՞րբ են իր աղքակիցները հետաքրքրություն հանդիս բերում դեպի Գրիբոյեդովը, մոտ ու հարազատ համարելով բեմադրում են հայ թատրոնում նրա կոմեդիան, առարկում են, բողոքում, վրդովվում՝ վերագրելով այդ ձեռնարկողների՝ մի կողմից՝ սահմանափակությանը, մյուս կողմից՝ ուսման տարիներին այդ ստեղծագործությունից ստացած ուժեղ տպավորությանը: Հետաքրքիր է նաև այն, որ այդ հոդվածը լույս է տեսել «Մեղու Հայաստանիում», որի էջերում, ինչպես արդեն տեսանք, շերմ սլաշտպանություն գտան ֆրանսիական մելոդրամաները: Ակամա ստացվում է այնպես, որ ըստ «Մեղու Հայաստանիի» այդ մեծ մասամբ անբովանդակ և գաղափարազուրկ մելոդրամաները իրենց պատկերած իրականությամբ և շոշափած հարցերով ավելի մոտ էին հայ:

ժողովրդին, նրա կենսական պահանջներին, քան և եւելթից պատուհասը»:

«Եսելթից պատուհասի» դեմ արտահայտվող «Մեղու Հայաստանին», ինչպես երեսում է, մոռացել է, թե այդ հոգվածը հրապարակելուց քանի տարի առաջ իր իսկ էշերում ինչ է գրվել Գրիբոյեդովի մասին. Այն ժամանակ նա ավելի ճիշտ հայացք էր պաշտպանում՝ ընդունելով Գրիբոյեդովի հեղինակությունը, նրա կոմեդիան որպես մի այնպիսի սքանչելի նմուշի, որից օրինակ կարող է առնել իր խանձարուրի մեջ գտնվող հայ ռեալիստական դրամատուրգիան։ Մոռացել է, ըստ երևոյթին, որ իր իսկ էշերում պաշտպանելով այդ նոր դրամատուրգիայի կազմը կյանքի ու նրա շունչն արտահայտող տիպերի հետ, հիշվել է «Եսելթից պատուհասը», ոչն անձինքը, — գրել է Միքայել Պատկանյանը 1860-ին «Մեղու Հայաստանին» էշերում, — որոնց ստեղծել է Գրիբոյեդովը իրա կոմեդիումը, մտացածին չեն, այլ դուրս քաշված են բնությունից իրանց սաղ հասակովը, հանած են գործնական կյանքի հատակից ։ 1881-ին Գրիբոյեդովի կոմեդիային նեղ-ազգային նշանակություն վերագրող «Մեղու Հայաստանին» 1880-ին գրել է, որ այդ հոշակավոր հեղինակությունը հայտնի է ևսաղ աշխարհի մեջ, որտեղ շատերը անգիր գիտեն։<sup>12</sup>

Ազգային սահմանափակությամբ առաջնորդվելով, «Մեղու Հայաստանին» ժխտում էր Գրիբոյեդովի կոմեդիան, բարեբախտաբար տիրապետող կարծիք չէր։ Շատերը, այդ թվում հայկական թերթերից «Մշակն» ու «Փորձը», ինչպես և ռուսական տեղական մամուլը, այդ հարցերում կանգնած էին հակառակ դիրքերի վրա։

Թե՛ «Մշակն», թե՛ «Փորձը» ողջունում էին «Եսելթից պատուհասի» բեմադրությունը հայ թատրոնում։ Առաջինը շնորհակալություն է հայտնում, որ այդ պիեսը բեմ

է հանվել, որը «թեպետ հին, պատմական և հեռավոր  
քաղաքի կյանք է նկարագրում, այնուամենայնիվ հա-  
սարակությանը օգուտ տվեց»<sup>13</sup>, որովհետև այդ գըր-  
վածքը պատկերում է, նրա ասելով, նոր սերնդի ան-  
հաշտ կոփվը հին սերնդի և նրա քարացած հասկացողու-  
թյունների դեմ՝ Երկրորդը՝ «Փորձը», ասում է, թե Գրիբո-  
յեղովի կոմեդիան «զարդարում է ուսաց բեմը, մի  
բախտ, որ վիճակիված է այնպիսի հանճարների գործե-  
րին միայն, որպիսին է Եեքսպիր, Մոլիեռ, Գյոթե, Շիլ-  
լեր և այլն. ավելի սակավ պատահում է, որ մի գրա-  
կանական գործ ժողովրդական գառնա, ինչպես սաւ:  
Հետևապես այդ «գրվածքի ներկայացնելը մեծ պատիվ  
է բերում հայկական թատրոնի վարչությանը»<sup>14</sup>: Ռու-  
սական մամուլը նույնպես ողջունում է «Խելքից պա-  
տուհասի» հայկական բեմադրությունը, սակայն քըն-  
նադատում է թատրոնի ղեկավարությանը, որ հոգ չի  
տարել պիեսի ու նրա արժանիքների համեմատ ձևավո-  
րում ապահովելու համար, ասելով, թե դա ևս կնպաս-  
տեր լավ ըմբռնելու Գրիբոյեդովի նման «հանճարեղ ար-  
վեստագետին, որի անյունը հանգուում է մեզ մոտ, Թիֆ-  
լիսում, և որի ազնիվ անունը հայրենի գրականության  
լուսատունների հետ միասին կարող է լինել Ռուսաստա-  
նի բոլոր զավակների եղբայրական միավորման լավա-  
գույն օղակ»<sup>15</sup>:

Իր բացասաման մեջ «Մեղու Հայաստանին» մենակ  
էր Մնացած մամուլը, ինչպես և թատրոնի առաջադեմ  
գործիչները չերմ պաշտպանում էին «Խելքից պատու-  
հասը» ու միայն նրա համար, որ նրանով բեմ էր բարձ-  
րանում գեղարվեստական տեսակետից մի կատարյալ  
երկ, այլ գլխավորապես այն տեսակետից, որ համոզ-  
ված էին նրա դրական ազդեցությանը հայկական կյան-  
քի վրա:

Հարցը պիեսի գնահատականը չէր միայն։ Դա հետաքրքիր է, անշուշտ, բայց այնքանով, որքանով վկայում է «Խելթից պատուհասի» շուրջը ծավալված պայշտարի ընթացքում «Մեղու Հայաստանիի» ժխտական մըտայնության դեմ եղած առողջ դիրքավորումը։ Ավելին կարևոր է այն հարցը, թե «Խելթից պատուհասի» բնմադրությունը հայ թատրոնի զարգացման, նրա առաջ 80-ական թվականներին ծառացած խնդիրների լուծման իմաստով ի՞նչ նշանակություն ուներ։ Ուրեմն հարցը «Խելթից պատուհասի» մեջ չէ, այլ այն ուղղության, որի հետ բերում էր նաև։

Մեջ բերենք երկու տեսակետ։

«Մշակը», որ միշտ քննադատել է Մասնաժողովի վարած գիծը՝ առատորեն ֆրանսիական մելոդրամաներ բնմագրելու համար, նկատի ունենալով Գրիբոյեգովի կոմեդիայի ներկայացման փաստը և նրանից առաջ «Արդյունավոր պաշտոն» ներկայացումը, ասում է. «Թող Մասնաժողովը շարունակե իր բռնած նոր ընթացքը։ Խորհուրդ է տալիս՝ «Թող առօրյա կյանքից վերցրած պիեսներ ներկայացնե, շրավականանա թարգմանություններով, այլ փոխադրել տա»։ Եվ վերջում եղանակակամ է հետևյալ ձևով։ «Այն ժամանակ հայոց թատրոնը շքեղության առարկա, ավելորդ զարդ չի լինի, այլ օգտավետ մի հիմնարկություն, մի ուսումնարան։ Երբ Մասնաժողովը հայ թատրոնը այն դրության կհասցնե, որ ժողովուրդը առօրյա պիեսաները տեսնելու համար նույնպես կլցնե թատրոնը, ինչպես և ումանտիկական անքնական պիեսները տեսնելու, այն ժամանակ նա ուղղած կլինի իր սկզբնական սխալը»<sup>16</sup>։

Նույն տեսակետը արտահայտել է նաև Դավիթ Էրիսթովը։

«Օգուտ եմ քաղում, — գրում է նա, — «Փորձիք խըմ-

բագրության հյուրասիրությունից, որպեսզի մի քանի  
խոսք ասեմ Հայոց թատրոնի առիթով։ Մի անաշառ դի-  
տողի ձայնը, որ կուսակցություններից դուրս է կանգ-  
նած, որին թանկ է ազգային թատրոնի զարդացումը  
Կովկասում, ինչ լեզվով և լինի այդ, զուցե ավելորդ չէ  
լսել Ես ուշի-ուշով հետևում եմ Հայկական թատրոնի  
ուսպերտուարին և նկատում այն ցավալի իրողությունը.  
որ ներկայացրած գրվածները բոլորն էլ թարգմանա-  
կան և մեծ մասամբ շատ ստոր հեղինակություններից  
«Կողոպատված փոստ», «Դուգլաս», «Փարիզի աղքատ-  
ներ» և այլ սոցա նման հեղինակություններ, որոնք հիմ-  
նը պատված են էֆեկտների անբնական դրությունների վրա,  
կարող են լոկ հասարակության ճաշակը խանգարել.  
Մենք շատ անդամ լսել ենք, որ թատրոնի վարչությունը  
իրեն արդարացնելու համար պատասխանում է, թե տե-  
ղական պիեսները եկամուտ շեն տալիս։ Մեր կարծիքով  
մեղքը զուցե մասամբ վարչությանն է, որ ի սկզբանէ  
անտի ընտելացրեց հասարակությանը «հոգին տակնու-  
վրա անող» գրվածքների և նթե դրանց մեջ սպանություն,  
թուավորություն և այլ այսպիսի սարսափեցուցիչ բա-  
ներ շկան—հասարակությունը ձանձրանում է, Հայկա-  
կան թատրոնի կողումը այն չէ, որ մեծ եկամուտներ աշ-  
քի առաջ ունենա, նա պետք է ոչ այնքան ժամանակ  
անցկացնելու միջոց, որքան ուսամենարան լինի։ Պետք է  
հասարակության ստիպել (իհարկե բարոյապես) հաճա-  
խել թատրոնը ազգային պիեսներ տեսնելու թանի որ  
թատրոնը չի արտափայլել իրանից՝ իրրե մի հայելիից՝  
մեր առաջինություններն ու ախտերը, քանի որ բեմի  
վրա շնորհապետել Հայաստանի անցյալի զգեստները  
և մեր արդի ռկարան—թատրոնը կլինի մի շքեղ խա-  
ղալիք, որ հարուստ մարդ ընծայել է աղքատ, սոված  
երեխային»<sup>17</sup>.

Խնչպես տեսնում ենք, «Խելքից պատուհասի» բեմա-  
դրությունն առիթ տվեց իրարամերժ դատողություննե-  
րի, երևան հանեց հակադիր հայացքների գոյությունը՝  
հայ թատերական մշակույթի զարգացման ուղիների վե-  
րաբերյալ:

Ահա այս մթնոլորտում փայլատակեց Աղամյանի  
Զացկին:

Անկախ նրանից, թե այս վեճում Աղամյանի անհմար-  
հելովվել է, թե ոչ, նա այդ վեճի մասնակիցներից է, այն  
դործում կողմը, որ պաշտպանում էր պիեսը, հայ թատ-  
րոնի բեմից ներկայացվելու նրա իրավունքը, իհարկե,  
ոչ միայն նա, այլև նրա հետ միասին՝ ներկայացման  
սյուս մասնակիցները, հատկապես գիշավոր դերակա-  
տարները՝ Մնակյանը, Զմշկյանը, Մանդինյանը, Սիրա-  
նուշը և ուրիշներ: Լոկ այն, որ Զացկու դերը ստանձնել  
էր Աղամյանը, ոչ միայն խոշոր, այլև սիրված դերա-  
սան, ներկայացման նշանակությունը, նրա գեղարվես-  
տական ուժը, հասարակական հնչեղությունն ու ներգոր-  
ծությունը կրկնակի շափեր էին ընդունում: Իր բարձ-  
րարվեստ խաղով Աղամյանը հակադրվեց այն գնահա-  
տությանը, որ տալիս էին պահպանողականները Զաց-  
կիուն, ապացուցեց, որ զրպարտություն է, թե իրը Շնա-  
ծաղը է հարուցում, ավելի ոչինչ, և իր տաղանդի կրա-  
կով բոցավառելով կերպարը, ներկայացրեց նրան որ-  
պես իր դարաշրջանի լավագույն մարդու, հայրենասների,  
հանդիսատեսի համար սիրելի ու հարազատ մի կերպա-  
րի, որը պայքարի մեջ լինելով կրանքի հետամնացու-  
թյան, քարացածության և նախապաշարումների դեմ,  
ոգևորում և նոր մղումներ է տալիս՝ հնին, ոեակցիոն  
հասարակությանը հակադրվելու, նրա դեմ մղվող մարտն  
ավելի հուժկու դարձնելու համար:

\* \* \*

Ի՞նչ մեկնաբանություն է տվել Հայ դերասանը Զացկու կերպարին։

Զացկու կերպարը դժվար դերերից է համարվում, մեկը նրանցից, որի կատարյալ մարմնավորմանը հազվագյուտ դերասանների է վիճակվում հասնել, թեև ոռւսական բեմի բոլոր աշխի ընկնող դեմքերն իրենց ուժերը փորձել են այդ ասպարեզում՝ Մոշալովից մինչև Կաշալովի Եվ ինչպես պահպանված նյութերի ուսումնասիրությունը ցուց է տալիս, խիստ սակավաթիվներն են հաջողության հասել։

Այդ սակավաթիվների շարքումն է նաև Աղամյանը։

Թերթում ենք ոռւսական անցյալի մամուլը, հատկապես նրա այն էջերը, որոնք նվիրված են «Խելքից պատուհասի» բեմադրությունների 70—80 թվականներին։

«Մինչև հիմա,— գրում է «Մոսկովսկին» վեղումութիւնը քննադատը,— Ռուսաստանում չի եղել մի դերասան, որ կարողանար ստեղծել Զացկու դերը»<sup>18</sup>։

Մի այլ քննադատ, որ հանդես է եկել «Գոլոսի» էջերում, գրում է. «Ես շատ վատ Զացկիներ եմ տեսել, այնին լավ է ասել, որ ես միայն վատ Զացկիներ եմ տեսել, որովհետև լավերը մինչև հիմա ոչ մի տեղ չեն եղել»<sup>19</sup>։

Կարելի է շարունակել և բերել բազմաթիվ անգամ կրկնված այն միտքը, թե ոռւսական բեմը դեռևս չի տեսել իսկական Զացկի, Կարելի է բերել նաև օրինակներ, թե ինչպես քննադատությունը իր դժգոհությունն է հայտնել Զացկու այս կամ այն դերակատարից, լինի այդ փորձված, հայտնի դերասան, թե նոր ու սկսնակ, լինի այդ մայրաբաղաքում, Պետերբուրգում կամ Մոսկվայում, թե Կովկասում։

Լավագույն Զացկիները ոռւսական բեմում համար-

զում են Սամարինը, Շումսկին, սովետական տարիներին՝ Կաշալովը, բայց այս մասին մի-փոքր հետո:

Դրիբոյեղովագետները, որոնց մոտ կարելի է գտնել նյութեր և տվյալներ «Խելքից պատուհասի» բեմական պատմությունից, Զացկու կերպարի մարմնավորման պատմական զարգացման մասին հետևյալ միտքն են արտահայտել:

Զացկու դերի բեմական տրադիցիան սկիզբ է առնում Կարատիգինից: Այդպես են գտնում մասնագետները: Անում են, որ նա, Զացկու դերի կատարման առիթով, իր առաջ ոչ մի նոր խնդիր չէր դրել, այդ պատճառով էլ հակասություն է առաջացել այն ողբերգական ավանդական արտասահմության, որ հատուկ էր Կարատիգինին ընդհանրապես, և Զացկու կերպարի ռեալիստական բընույթի միջև: Կարատիգինն այդ դերում ոչ այնքան Զացկի է եղել, որքան Ոլիմպիոսի բարձունքներից բոլորի վրա ահեղասաստ նայող մի Ազամեմնոն: Այս մոտեցումը զրկել է կերպարը կենդանությունից: «Պետերբուրգյան նշանավոր ողբերգուն, — զրում է «Խելքից պատուհասի» բեմական պատմությունը հետազոտղներից մեկը, — փլացրեց գործը տասնամյակներով, նրան ընդօրինակելով՝ դերասանները արտասահմում էին Զացկու դերը, որի պատճառով «Խելքից պատուհասի» պլատավոր գործող անձի կերպարը ոչ մի կերպ կենդանի մարդ չէր դառնում: Խաղի այդ կերպը, որ չէր բացում Զացկու կերպարի անձնական դրաման, խանգարեց նաև նրա հասարակական պաթոսի բացահայտմանը, և նրա բոլոր մերկացնող մենախոսությունները և սատիրական սուր աֆորիզմները, հեռանալով իրենց կենսական ճշմարտությունից, կորցնում էին ներգործման ուժը»<sup>20</sup>:

Հիշատակենք մի այնպիսի դերասանի Զացկին, ինչպիսին իվանով-Կողելսկին է: Ութսունական թվականնե-

րին, Աղամյանից երեք տարի հետո, այդ նշանավոր դերասանը Թիֆլիսում խաղացել է Զացկու դերը Տեղական մամուլն անբավական է մնացել, տսել են, որ նա չի կարողացել ամրողական կերպար ստեղծել, որ պակասում է պոետական կայծը, որ սառն է, ոեզանյորական է և այլն <sup>21</sup>:

Այսպիսով, ուրեմն, «Զացկու գերակատարների մեծ յասը սահմանափակում էր իրեն գրիբոյեգովյան շափածոյի արտասանական ընթերցանությամբ կամ թե ընկնում էին փրու վերամբարձության մեջ, և այդպիսով Ալեքսանդր Անդրենիշ Զացկու կենդանի կերպարը չէր ստացվում» <sup>22</sup>:

Բացառություն է կազմել Ս. Վ. Շումսկին, որը 1864-ին հանդես գալով Զացկու դերում, կամենալով կենդանացնել կերպարը, խաղացել է այլ կերպու հնչակես ասունմեն սովորական գրիբոյեգովագետները, Շումսկին անհրաժեշտ է համարել առաջին գիծ քաշել Զացկու՝ գետի Սոֆիան տածած բուռն սիրահարությունը, փոխադարձության հասնելու նրա ձգտումը: Լինելով խելոք և նուրբ արվեստագետ, ցույց տալով Զացկու մտքի հասունությունը և խորությունը, սեփական արժանապատվության գիտակցությունը, Շումսկին ընդգծում է նրա հանարակական վրգովմունքը, որը աճում է նրա մեջ սիրո հողի վրա ապրած տառապանքներից, այն գիտակցությունից, թե ինչպես կործանարար է անդրադառնում սիրելի աղջկա վրա շրջապատը: Զացկու սիրային դրաման, Շումսկու կատարմամբ, միահյուսվում էր հասարակական դրամայի հետ:

Աղամյանի խաղն իր ըմբռնումով և մոտեցումով նույն է եղել Շումսկու պատկերած կերպարին:

Կարո՞ղ է պատահել, որ Աղամյանը Շումսկու խաղից կաղափար ունեցած լիներ: Ալելի շուտ այս, քան ոչ:

Որ Աղամյանը ուսումնասիրել է պիեսը, խորացել է կերպարի մեջ, նաև կարդացել գրականություն նրա շուրջը՝ այդ անկասկած է, Բացի նրանից, որ այդ տպավորության էր մամուլը, ասելով, թե «ունիմիսյորը կամ նրա գործը կատարող անձինք լավ ուսումնասիրել էին պիեսան և խաղացողներին մեկնել էին բոլոր կետերի նշանակությունը»<sup>23</sup>, Հավանաբար Աղամյանը ժանոթ էր Ռելինսկու «ողբածին» գրված «Խելքից պատռհամի»<sup>24</sup> մասին, նա այն աստիճան էր խորացել նյութի մեջ, որ սպատրաստվամ էր աշխատությամբ հանդես դալ, ասել, թե ով ինչպես է ըմբռնել Զացկու կերպարը, ինչն է ճիշտ, ինչը ոչ, ինչպես է հասկանում ինքը կերպարը, նրա ընավորության դժերը, նրան ուղղություն տվող գաղափարները, հոգեկան ձգությունները և այլն, և այլն, ճիշտ է, այս մասին նա հայտարարություն արել է 1887-ին<sup>25</sup>, իր առաջին խաղերից վեց տարի անց, այն էլ այն դեպքում, երբ այդ տարիների ընթացքում, որքան մեզ հայտնի է, այլևս Զացկի խաղալու ոչ մի առիթ չի ունեցել: Այդ առավել ևս խոսում է Աղամյանի օգտին: Նշանակում է հենց սկզբից, և՛ մինչև խաղալը, և՛ խաղալուց հետո, Զացկու կերպարն այնպես է զրադեցրել նրան, այնքան սիրելի ու մոտ է զգացել իրեն, որ նա մտադրվել է դրա մասին աշխատություն գրել Այս շատ կարևոր է, նշանակում է թեև արգեն չէր խաղում, բայց շարունակում էր կերպարի հետ լինել, գուցե նույնիսկ լրացուցիլ նյութեր էր հավաքում, որպեսզի օրերից մի օր իրականացնի այդ ծրագիրը: որը, դժբախտարար, ոյզպես էլ անկատար մնաց:

Եթե, տարիներ անց, Զացկին շարունակում էր սիրելի մնալ Աղամյանի համար, ապա Աղամյան-Զացկին ևիրելի էր ու հարազատ նրա հանդիսատեսի համար նույնպես տասնամյակներ անց: Ահա մի տիկնոց

նամակ, որ գրվել է Աղամյանի մահից շատ տարիներ հետո, մեր օրերում Այդ տիկինը, որ եղել է Փարիզում, տեսել է Մունի-Մյուլի Համլետը, իր տպավորությունները Աղամյանից և նրա արվեստից գրի առնելիս հիշել է միայն երկու կերպար—Համլետը և Զացկին։ Վերջինիս մասին գրել է. «Ինչպե՞ս էր նա Զացկի խաղում, ինչպե՞ս էր կարողանում հաղորդել դարաշրջանը» 28.

Չկենսագործված ծրագրի վրա այդքան կանգ առանք միայն նրա համար, որ ինչպես ինքը, Զացկին, այնպես էլ Աղամյանի սրտին կերպարի այդքան մոտ լինելը վկայում է, որ գրիբոյեղովլյան հերոսը ևս պատկանում է արտիստի նախաստիրած այն կերպարների շարքին, ինչպես Համլետը, հետագայում նաև Օթելոն ու Լիրը, որոնք արտահայտում են գերասանի ստեղծագործության հիմնական թեման՝ վեհ իդեալների բախումը իրականության հետ և հանուն այդ իդեալների կենսագործման իր շըրշապատի դեմ անհամաշափ պայքարի մտած ազնիվ մարդու ապրուժ հոգեկան դրաման, որ հաճախ բարձրացել, հասել է ողբերգական հնչեղության աստիճանին։

Շատ հարավոր է, որ գերապատրաստման շրջանում ներկայացման կազմակերպիչները, որոնց մեծ մասը ուստական կրթություն ուներ, վերջապես ոչ միայն ուստական թատրոնի ղեկավարը՝ Պալմը, այլև դերասանները, որոնք եղել են հայկական թեմադրության մի քանի փորձի, Աղամյանին բացատրություններ տալիս կարող էին հիշել նաև Շումակու անումը, որի Զացկին, այդ տարիներին գոնե, գերազանցված լէր։

Այդ առթիւլ մի խնդրի վրա ենք կամենում կանգ առնել։

Քննադատության մեջ Աղամյանին, ինչպես նաև Յամառավի և Ռեպետիլովի գերակատարներ Մնակյանի և Մանդինյանի մասին արտահայտվելիս ասվել է, թե նը-

րանք այնպիսի ուժով էին խաղում, ինչպես «Խելքից պատռհասի» ռուսական բեմի կլասիկ դերակատարներից Շշեպկինը, որ Ֆամուառվ է խաղացել, Ժիվոկինին, որ Հայտնի էր իր Ռեպետիլովով և, վերջապես, Շումակին <sup>27</sup>:

Այս ինչ է, պատահական հիշատակություն, ընդհանուր վերացական կարգով, նկատի ունենալով հաշողության մակարդակը, թե՛ Շումակու անվան հիշատակությունը առաջացել է այն նմանությունից, որ կարուս և հայ դերասանների խաղերի միջև Խնչու Շումսկու անունն է տրված և ոչ թե մի ուրիշի, Թերևս ոչ գիտավորյալ և գուցն նույնիսկ չդիտակցված, բայց այդպիսի, զուգորդությունը հակված ենք կարծելու, որ քննադատի գրչի տակ կյանք է առել ոչ պատահմամբ:

Ժամանակակից մամուկը թեև հիշատակում և զնաւատում է Ադամյանի Զացկին, բայց խիստ ժղատ կերպով Միայն Դավիթ էրիսթովի հոգվածում է, որ թե՛ կուզե կցկտուր, բայց ինչ-որ մանրամասնություններ կարելի է գտնել, թե որ տեսարաններում ուժեղ է եղնի և որտեղ համեմատարար թույլ:

Էրիսթովն ասում է, թե «այն տեսարաններում, ուր պետք է քնքուրշ զգացմունք, սեր դեպի Սոփիան արտահայտել՝ Ադամյանը աննման էրու։ Հետո ավելացնում է՝ «Երրորդ գործողության մեջ այն մասը, ուր Զացկին հայտնում է իր սերը, նա մեծ զգացմունքով անցկացրեց, արժանանալով հասարակության արդարացի ժաֆահարություններին» <sup>28</sup>, Այստեղից այն եզրակացության գալ, թե Զացկու կերպարը Ադամյանն ընկալել է միայն որպես սիրո զրամա՝ ճիշտ չի լինի։ Պահպանված նյութերը դրա համար ոչ մի հիմք չեն տալիս։ Որ նա կերպարը ստեղծելիս սիրո թեմային լայն տեղ է տվել, քան այդ ժամանակները և դրանից առաջ ընդուն-

ված էր, այդ ճիշտ է, բայց դրա բացատրությունը բռ-  
յուրովին այլ է, քան Զացկու հոգեկան աշխարհում տեղի  
ունեցած անձնական և հասարակական դրամաները ան-  
հիմն կերպով միմյանց հակադրելը:

Զացկու կերպարն այդպիս են ընկալել նաև ուս հա-  
սարակական մտքի շատ երևելի գեմքեր:

Երկու օրինակ միայն:

Ա. Պ. Օգարյովը, 60-ական թվականների հայտնի  
ռենյուացիոն-գեներալրատներից մեկը, որին պատկանում  
են Զացկու բնութագրման փայլուն էջեր, նշել է կերպա-  
րի ապրած հասարակական և անձնական դրամայի ան-  
նզելիությունը<sup>29</sup>, Նույն տեսակետն է պաշտպանել նաև  
Ապոլլոն Գրիգորեց. սա ևս նշանակալի տեղ է տալիս  
Զացկու անձնական դրամային, նշելով այն սերտ կա-  
պը, որ կա նրա մզած հասարակական պայքարի և դրա-  
միշէ<sup>30</sup>: Այդ դիրքերի վրա է կանգնած նաև Ի. Ա. Գոն-  
չարովը<sup>31</sup>:

Այսպիսով, ուրեմն, տեսնում ենք, որ այն, ինչ զե-  
կավարել է Աղամյանին, ամրապնդված է ուսական գը-  
րականության ներկայացուցիչների տեսակետով:

Ներկայացման արդ երկու կողմերը—հասարակական-  
և անձնական—միմյանցից անջատելու և միմյանց հա-  
կադրելու համար ոչ մի առիթ չկա: Եթե աղբյուրը երիս-  
թովն է, ապա նրա գրած հոգվածը արդպիսի եզրակա-  
ցության տեղիք չի տալիս: Եվ, մեր կարծիքով, գրել, թե  
Աղամյանի մոտ ռավելի ուժգին է հնշել անձնական դրա-  
ման, սիրո խորտակումը, միանգամայն սխալ է: Դե-  
րասանների խաղի մասին խոսում է երիսթովը, իսկ  
որա մոտ էլ եթե սիրո տեսարանի մասին ասված է, թե  
Աղամյանը աննման էր, ապա վերջին մենախոսության  
վերաբերյալ՝ թե ռարտասանեց շատ ընտիր կերպնվա-  
քներես այդպիսի հետևության համար հիմք է ծառայել:

այն, որ էրիսթովը դրվատանքով չի արտահայտվել երեք նշանավոր մենախոսության կատարման մասին։ որոնցից երկուաը երկրորդ (դատավորներ, Բորզո), մեկը վերջին գործողության մեջ (ռահա այստեղ եմ, ով կեղծավորներ)։ Վերջինի մասին ասված է, թե «փոքրինչ թույլ էր», իսկ առաջին երկուաի վերաբերյալ ուավ արտասանեց և ավելի ոշինչ։ Սակայն այս դիտողությունը քննադատն արել է դգոյց, վերապահությամբ։ «գուցե այդ դարձյալ նրա մեղք չէ։ աստծուն է միայն հայտնի, թե կարելի՞ է արդյոք աշխաւութով, եռանդով արտասանել այս կերպ թարգմանած Գրիբոյեդովը»։

Այդ մեկի երկրորդն էլ՝ Ադամյանը այդ ճանապարհով շի գնացել և շէր էլ կարող գնալ, եթե աշքի առաջ առնվի նրա ընդհանուր մոտեցումը, որովհետև նրան իրքեա արվեստագետի զբաղեցնողն ավելի լայն խնդիր է եղել։ Դրա համար առավել ճիշտ կլինի մտածել, որ նրա խաղում կերպարի երկու հիմնական կողմերը—անձնականը և հասարակականը, միահյուսվելով՝ պայմանավորել են միմյանց։ Ոչ միայն անհույս սեր, այլ նաև փայփայած ձգումների խորտակում։

Զացկուն քնքորեն ծունկի բերելով սիրած կնոջ առշն, Ադամյանը նրան ոնալ հնարավորություն էր տալիս հետագայում, երբ Զացկին հիասթափվելու էր ոչ միայն Առֆիայից, այլև նրա հետ մեկ օդով շնչող հասարակությունից, ընդուստ վեր խոյանալ, կրթու կերպով օտարանալու նրանից։ Զերմորեն սիրելով, Զացկին իդեալականացրել էր սիրած էակին։ Մերժվելով նրանից, Զացկին աղատագրվեց իր ստեղծած պատրանքներից... իրականությունն առանց այդ պատրանքների, և մանավանդ նրանցից աղատագրվելուց հետո, Զացկուն ներկայանում է իր մերկ այլանդակությամբ։ Որքան ուժգին էր նրա սերը, այնքան, գուցե, առավել է այժմ հիասթա-

փությունը։ Զացկու գեղի շրջապատն ունեցած զայրութիւնը ու ատելությունը անցկացնելով նրա անձնական ապրումների բովով, Աղամյանը ոչ միայն համոզիչ էր դարձնում այդ զայրութիւնը ու ատելությունը, այլ, որ հատկապես է կարևոր, ցուց էր տալիս իր հերոսի և նրան շրջապատող իրականության անշատման անխուսափելիությունը։ Միակ կամուրջը, որ կապում էր Զացկուն շրջապատի հետ՝ խորտակված է, օտ վերադարձի և ոչ մի ուղի Աղամյանը պատկերում էր խորտակված ձգումների ողբերգությունը։ Այդ տեսակետից էլ նա մոտենում էր Զացկուն, ինչպես և դրանից առաջ Համլետին, իսկ հետո, տարիներ անց, դրա ընդհանուր եղբերն էր որոնում օթելլոյի և լիրի մեջ։

Բացի նրանից, որ արտիստի այդպիսի մերձեցումը հնարավորություն էր ընձեռում գերասանին իր հիմնական թեման արտահայտել, այս հարցն ուներ նաև այլ կողմ, որ առնչվում էր թեմական արվեստի հետ։ Աղամյանը, անկախ նրանից, թե իրեն հայտնի էր, թե չէ առնական Զացկիներից շատերի դառը փորձը՝ հասկանում էր, որ կերպարը, Զացկու կերպարը, որպեսզի զգրկվի մարդկային կենդանի նկարագրից, հարկավոր է այնպիսի երանքներ գտնել, որոնք կերպարին անհատականություն հաղորդեն։

Արդեն ասվեց, որ նա հավանաբար ծանոթ էր Թելինսկու հոգվածին, ևնդիրն այն է, որ Թելինսկու այդ հոգվածը գրվել է նրա մտածողության այն շրջանում, երբ քննադատը ապրելով իրականության հետ հաշտվելու մի շրջան, հեռացել է Գրիբոյեդովի կոմեդիայի հասարակական ըմբռնումից և ճիշտ չէ ընկալել Զացկու կերպարը, համարել է նրան շաղակրատ, բարբաջող, մի նոր Դոն-Կիխոտ, տղեկ, որ փայտին հեծած, կարծում է, թե նժույգի վրա է նստած, և այլն <sup>32</sup>, ճիշտ է, դրանից

առաջ և դրանից հետո այլ առիթներով գրված հոդվածներում անդրադառնալով Գրիբոյեգովի կոմեդիային և նրա հերոսին, Բելինսկին երկի հասարակական գնահատության ճիշտ դիրքերի վրա է կանգնած եղել, ծնթաղրելով, որ Աղամյանը ամենայն հավանականությամբ կարող էր ծանոթ լինել Բելինսկու հիշյալ հոդվածին, մտածում ենք, որ թերևս դա էլ նրան առիթ է տվել յտածելու, թե ինչպես և ինչ ճանապարհով կարելի է կերպարը ոչ միայն կենդանացնել, այլ ավելի համոզիչ դարձնել:

Հասարակականի հետ մեկտեղ լայն տեղ տալով սիրո թեմային, կարողանալով արտահայտել այն խսկապես սիրահարվածի անմիջականությամբ, նշանակում է կերպարը շերմացնել, նրա հոգեկան նկարագրին հաղորդել այնպիսի թրթիռ, որ վարակի, տանի իր հետևից հանդիսատեսին, ստիպի ոչ միայն հուզվել նրա դժբախտ սիրո համար, այլև զայրանալ, երբ խոսք է բացվում կյանքի հետամնաց երեսովթներից, կաշկանդող ձևականություններից, հոգեկան ճղճիմությունից, ստորաբարշությունից և մորթապաշտությունից:

Աղամյանի թղթերի մեջ պահպանվել է Զացկու գերի արտագրությունը, ավելի ճիշտ՝ մի մասը, որ կատարվել է Ա. Սարդարյանի ձեռքով, 1880-ի դեկտեմբերի 26-ին։ Դժբախտաբար ամբողջական չէ, բայց լավ է գոնե, որ այդքանն էլ կա, որովհետեւ Կ. Տեր-Աստվածատրոյանի թարգմանությունը չի պահպանվել, և դրանք՝ դերասանի թղթերի մեջ գտնվածները, այժմ գոնե միահակատառիկներն են, որոնց հիման վրա կարելի է մի որոշ գաղափար կազմել։ Այդ պատառիկները նաև այն արժեքն ունեն, որ դրանց վրա կան Աղամյանի ուղղումները։ Բավական է մի թեթև հայացք գցել այդ ուղղումների վրա՝ համոզվելու համար, թե ինչպես թարգմանու-

թշունը շահել է բոլոր այն մասերում, որոնց գիպել է դերասանի ձեռքը։ Դրական և բեմական արժեքից բացի, կատարված փոփոխությունները տեղ-տեղ գաղափարական մերձեցման իմաստ ունեն։ Օրինակ՝ թարգմանիլը գրել է «Ճայնով կաղալեմ», Աղամյանը դարձրել է «Ճս մի հատիկ օրինակը», Թվում է, յավականաշափ գաղափար է տալիս այն մասին, որ գերասանը կամեցել է ընդգծել բողոքի տարրը՝ Զացկու կերպարի մեջ։

Դերի վրա դերասանի կատարած աշխատանքից ուշադրության արժանի է, թերևս վերոհիշյալից ավելի, հետեւյալը։

Նախ։

Վերջին մենախոսության մեջ մի տեղ ոհմարկ կատարությամբ, այսինքն՝ զերմությամբ, որից հետո սկսվում է։

Ով կույր, մոլորյալ... Ո՞ւմ մեջ պտուի  
Բոլոր նեղությանց, բոլոր տանջանաց  
Վարձն ու պարզեք... <sup>22</sup>

Աղամյանը ոհմարկն ընդգծել է, որով նշանակում է հատուկ կարևորություն է տվել նրան։

Հետո.

Վերջին մենախոսությունից սիրային ամենաբուռն յասը

Արանց իմ սրտում ո՛չ բյուր խնդություն,  
Ոչ նեռու աջլարն, ո՛չ փոփոխություն  
Տեղի և երկրի շեն կարողացել  
Առաջացնել նոզվույս մեջ ու բար դարձնել...  
Արանցով միայն շունչ էի բաշում,

Որոնցով պարզած՝ անդու ինձ մաշտամ...  
Կոնյա կ'ասեիք, որ նաևկարծ գալըս  
Իմ կերպարանքը և իմ վարմունքը  
Զեզ ատելի են:— Այն ժամանակը  
Նս անմիջապես շուտ կըկտրեի  
Զեզ նետ իմ կապը և զլուխ կ'առնեի...  
Եվ ձեզնից այսպես նավետ բաժնվելով  
Չէի աշխատիլ այսպես տանջվելով  
Իմանալու, թե ո՞վ է այն մարդը,  
Որ խիստ գրավել է այդքան ձեր սիրտը... 34

Կրճատել է: Հարց է առաջ գալիս՝ ինչո՞ւ Զէ՞ որ դա  
խիստ շահեկան հատված է գերասանի համար ընդհան-  
րապես, Աղամյանի համար մասնավորապես, վերջապես՝  
շեշտը սիրո վրա դնող գերակատարի համար հատկա-  
պես թայց փաստ է, կրճատել է: Թվում է, թե նրա հա-  
մար, որ սիրո մասը մնա, բայց ավելի մեղմացած և  
այս դեպքում շեշտը դրվի ընդհանուր հիասթափության  
վրա, բողոքի և ընդվզման:

#### Այնուհետև.

Վերջին մենախոսության վերջին մասից մի մեծ  
հատված՝ ուսմ հետ էի ես խոսքերից մինչև ոսում  
լուրեր անենա՝ նույնակես կրճատել է: Կրճատել, բայց  
հետո վերականգնել է: Այս էլ կարենոր է: Կարելի է են-  
թադրություն անել, թե ինչո՞ւ է նրա մտքով այդպիսի  
կրճատում անցել, ծրեկի մտածել է, թե մենախոսությու-  
նը երկար է, և որպեսզի տեսարանի ոիթմը շխափանվի,  
խոսքը լինի կարճ, բայց թափով ասված և շեշտակի: Սակայն հետո, ինչպես երևում է, այն համոզման է ե-  
կել, որ դրան չի կարելի զոհ բերել այն թանկագինը,  
ինչ իրեկ իմաստ արտահայտված է այդ մասում, և վե-  
րականգնել է: Հնարավոր է, որ գտել է նաև բեմական

արտահայտման այնպիսի եղանակ, որ շկրճատելու դեպքում էլ պահպաներ խոսքի ներքին թափը և մենախոսության կորովի ընթացքը:

Թվում է, թե այս փաստերը բավականաշափ օգնում է կողմնորոշում են ճիշտ հասկանալու և զնահատելու այն գաղափարական ուղղությունը, որ ընդունել է ներկայացման մեջ Զացկու կերպարը՝ Ադամյանի խաղով:

Այս թյուր տպալորությունը, թե Ադամյանը անհրաժեշտ շափով կերպարի հասարակական դիմք չի շեշտել<sup>35</sup> կարող էր առաջանալ և նրանից, որ պիեսի հայկական ներկայացման երկրորդ գործողության մեջ Զացկու վենը Ֆամուսովի հետ ճապաղ է ստացվել: Սակայն դրա սրատասխանաւությունը Ադամյանի վրա չի ընկնում: Պիեսում այսպիս է, Զացկին խոսում է, խոսում է կրքուտ և բորբոքված, իսկ Ֆամուսովը արձագանքում է նրան կարճ, հաղիվ մնկ տող կազմող նախադասությամբ, այնպես, որ հակառակորդ կողմի առարկություններից երրեմն միայն մի բառով արտահայտված՝ Զացկու խոսքը չի ընդհատվում, մինչդեռ հայերեն թարգմանության մեջ Ֆամուսովի ուղղվեները, մեկի փոխարեն, երկու, երրեմն երեք տողով են թարգմանված եղել, «Այս է պատճառը, — գրում է քննադատը, — որ Զացկին ստիպված էր միշտ կանգ առնել, որպեսզի Ֆամուսովը իր երկարաբանությունները վերջացնի, որով ամբողջ տեսարանը սառն անցկացավ»<sup>36</sup>: Այս էական դիտողությունն է, որովհետև թափը, որով սկսվում է Զացկու խոսքը Ֆամուսովի հետ, պահանջում է արագ, աճող ոիթմ, իսկ Ադամյանի ակամա դադարեները խոսքը դրկել են հրապուցրից և կենդանությունից, դարձրել անգույն:

Մի հարց ևս: Բացի երկու տեսարանից, որոնց մասին քննադատը դիտողություն է արել, ասված է, թե «միացած մասերում պ. Ադամյանը շատ լավ կատարեց

իր դերը։ Սակայն հատկապես ընդունված է վերշին մենախոսության հաջողությունը։ Հիշեցնում ենք, ասված է՝ «արտասանեց շատ ընտիր կերպով»<sup>37</sup>։

Ի միշի այլոց նկատենք, որ քննադատությունը, Ադամյանի ժամանակի մասին արտահայտվելիս, հատկապես նշել է այն հաջողությունը, որ ունեցել է դերասանը վերշին մենախոսությունն ասելիս. «Աղամյանն արտասանեց գերազանց և առաջ բերեց աղմկալի ծափահարություններ», — գրում է «Կավեաղը»<sup>38</sup>, Սա ի՞նչ է, պարզ զուգաղիպություն, թե՝ բեմական դիտավորություն, որով գերասանը կամեցնէլ է երկու դնարքում էլ, ժաղովին և Զացկու, բոլոր ցրված թելերը հավաքել մի հանգույցի մեջ, այն էլ անպայման վերջում թվում է, թե Աղամյանը նպատակ է ունեցել մնացած գործողությունների ընթացքում մինչ այդ հատիկ-հատիկ արտահայտված հույզերի կուտակում կատարել և երբ նրանք արդեն միասին են, մի ուժ, մի ամբողջություն դարձած, այլևս ոչ մի պատվար չկանգնեցնել նրանց ուժգին հորձանքի առաջ։ Այս պատահական շինք համարում Զացկու վերշին մենախոսությունը, նրա ապրած հիասթափության բարձրակետն է, այն խոռվթը, որով նրա վրդովված հոգին վերշին անգամ բախման մեջ մտնելով իրեն շհանկացող, իրեն թշնամի շրջապատի հետ, թողնում հեռանում է։ Դերասանը թվում է, թե ճիշտ է վարվել, որ մնացած մասերում թեև զայրագին, բայց զուապ է անցկացրել, որ պոռթկումը մի անգամ տեղի ունենա, մի անգամ և անպայման վերջում, որպեսզի այն կրկնություն լինի, համբերությունը հատած, վշտացած, վրդովված մարդու մի ճիշ, գուցե նույնիսկ մինչ այդ անսպասելի, բարյաց իր ողջ ընթացքով արդարացված բողոք, ընդդիմառում իրականության այն բոլոր դառնությունների դեմ, որոնք կյանքը սպանում են, նրա զարգացումը կասեց-

Նում, շրջապատը դարձնում ճահճին, դարձնում միայն  
շնչին մարդկանց ասպարեզ։

...Վաս չեր լինի, որ սրախս քույնը.

Ամեն զայրավը և բարկությունը

Խս այժմ բափեմ աղջրկան և նորը.

Բոլորի վերան—

Այնպիս նեռանամ...

Ո՞ւմ նետ էի Խս: Խնձ որտե՞ղ ձգեց

Ճակատապիրը, ո՞՞՞ Երկիրը դրկեց...

Բոլոր միասին ինձ ճալածում են,

Բոլոր ճնշում և անիծում են,

Բրնձավորեների երսոսկ և ամրոխ.

Սիրո մեջ խարդախ և դավանանող,

Թշնամության մեջ անողոքելի,

Ամրոխ բանսարկված անսանձահարելի.

Անկապ, անկանոն խելացիների,

Չարանենց տխմար խումբ ապուշների,

Չարագուշակ պառավյալ կանանց,

Եվ նենզ, շարասիրտ ծերանի մարդկանց—

Ռունք ողջ կյանքը անդոզ զոհում են

Հընարելու վեպեր, սուտ լուսեր ամեն...

Դուք միարերան ինձ հոշակեցիք

Անմիտ, խելանեղ և հաստատեցիք,—

Մրավունք ունեք—միայն այն նոզին

Առողջ դրուց կը գա կրակի վրաանզին,

Որ կարող կը լի ձեզ նետ զեր մի օր

Միասին ապրել անխոռով և անդորր.

Մըծե նույն օդը և գլխումն առողջ

Անվճառ կմնայ յուր խելքը ամրող...

Հեռու Մասկվայից... կրկին եկող շեմ

Խս այս Երկիրը... կերպա՞մ, կը փախչեմ.

Կ'վագեմ, շեմ նայիլ... կերպամ աշխարհեռում  
Վերք տրված պատվացն որոնել անկյուն...  
Կարեաս բերե՛ք ինձ... կարե՛տ բերե՛ք ինձ...<sup>29</sup>

Թող որ ներկայացումը վերջանա Յամուսով-Մնակ-  
յանի վերջին խոսքով, թե

Ա՞յս տե՛ր աստված, իսկ ի՞նչ կասի  
Մարիա Ալեքսե՞նա իշխանումի՞ն <sup>40</sup>,

միևնույն է, հանդիսատեսն իր հետ տանելու էր Զացկի-  
Աղամյանի վերջին մենախոսության տպալորությունը,  
ասված կրակված սրտով, փոթորկալի շնչով:

Ճիշտ է, Աղամյանը հետագայում այլևս բեմ շրաբ-  
րացավ Զացկու կերպարը մարմնավորելու, բայց մըշ-  
տապես պահեց նրա պատկերն իր սրտում: Ընկերական  
միշտավայրում, լիներ այդ թիֆլիսում, Մոսկվայում թև  
Օգեստյանմ, նա հաճախ էր հատվածներ կարդում ինչ-  
պես Համլետի դերից, այնպես էլ Զացկու, ըստ որում  
նրբեմն ոչ թե հայերեն, այլ ռուսերեն, ու չնայած իր վառ  
իմացած ոռակերենին, նա, ինչպես վկայում է Վ. Ի. Նե-  
միրովիշ-Դանչենկոն <sup>41</sup>, կարողանում էր կենդանացնել  
այդ թանկագին կերպարը, այնքան հույզ և կորով գնել  
իր խոսքի մեջ:

Այն մեկնարանությունը, որով խաղացել է Աղամ-  
յանը Զացկու դերը, իր այն տարիների համար գեղար-  
վեստական առաջավոր մտածողության արտահայտու-  
թյուն էր: Սակայն նա չի մնում իր ժամանակվա շրջա-  
նակների մեջ և դուրս է գալիս այդ սահմաններից: Այս-  
պես, օրինակ, երբ ժանոթանում ենք ռինլիֆից պատու-  
հասիք բեմական պատմության այն էջին, որը վերաբե-  
րում է Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի նախա-  
սովետական բեմադրությանը, ապա վկա ենք դառնում

մի այսպիսի խոստովանության. «Պարզվեց, որ պիեսը չի կարելի հասկանալ, առավել ևս հանդիսատեսին հուզել, եթե Զացկու ջերմ և բուռն սիրահարվածությունն արհամարհվի, այսինքն՝ ըստ էության պիեսի սլուժեաից դուրս Զացկու կերպարը վերածվում է երդմյալ հըսկանութիւնի և դոկտրինյորի մտացածին կերպարանքի, ինչպիսի հրապարակախոսական ջերմությամբ էլ դերասանը շասի իր մենախոսությունները, թատրոնը խոստովանում է, որ իր նոր մոտեցումը ոչ այլ ինչ էր, բայց եթե ոչ հակադրություն կերպարի ռեղանյորական մեկնարանության, որ այն տարիներին տիրապետող էր ուռուսական բնմերում ՀՀ, Ավելին. այդ մեկնարանությունը դալիս հասնում է մինչև մեր օրերը «Խելքից պատուհանի» այն բոլոր բնմադրությունները, որ տեղի են ունեցել սովորական թատրոնում, Զացկու կերպարը լուսաբանելիս հասարակականը և անձնականը ոչ միայն շեն անշատել, այլ համագրել են, դիտել դրանք որպես իրարպայմանավորող կողմեր։ Այսինքն՝ ինչ արել է Ազամյանը, իսկ նրանից առաջ Շումսկին, սակայն, այն տարբերությամբ, որ թելադրված է ոչ թե դերասանների պատրաստության տարրեր մակարդակով, այլ նրանց ապրած դարաշրջանների։

1939-ին Մուկվայի Գեղարվեստական թատրոնը ձեռնամուխ եղավ «Խելքից պատուհանի» հորելլյանական բնմադրությանը, եվ այդ բնմադրության մեջ Զացկու կերպարի լուսաբանությունը շափազանց մոտ էր շումսկիական-ազամյանական ըմբռնմանը, «Զացկին, — հայտարարում է թատրոնը բնմադրության նախօրյակին, — կմնա թատրոնի աշքին և՝ իրքն ազատության տուազավոր գաղափարների կրքոտ մունետիկ, ստրկության և քարացածության թշնամի, իր հայրենիքի ազատատենչ հայրենասեր, և՝ խանդի ու խարված հույսերի պատճա-

ոած բոլոր ցավերը վերապրող սիրահարված մարդ» <sup>43.</sup>

Դրանից մի տարի առաջ Շենքից պատուհասին ոոր թեմադրությամբ հանդես եկավ նաև Սոսկվայի Փոքր թատրոնը: «Չացկուն մենք դիտում ենք,— հայտարարում են բեմագրության ռեժիսյորներ՝ Պ. Մ. Սաղովսկին, Ի. Ցա. Սուզակովը և Ս. Պ. Ալեքսեևը,— որպես իր դաշտաշրջանի առաջավոր մարդու, ժամանակակից հասարակության լավագույն գաղափարներն իր մեջ ամփոփած առաջավոր մտավորականության ներկայացուցչի: Սակայն հայտարերելով նրան հատուկ դիմակազերծողի գծերը, մենք շանում ենք կերպարն առավելագույն շափով մարդկայնացնել, ցույց տալ նրա անհատական հոգեկան հատկությունները, նրա սերը դեսի Սոֆիան, Չացկու հասարակական և անձնական դրամաներն աճում և զարգանում են մեկը-մյուսի հետ սերտ կապված» <sup>44.</sup>

Այդ մոտեցումը տիրապետող է դարձել ոչ միայն թատրոնում, այլ նաև գրականագիտության մեջ: Վ. Ն. Օռլովը, Չացկու կերպարը ընութագրելիս, ասում է, թե նա երկու կողմ ունի՝ մեկը ազատարադ հերոսի գաղափարական բախումն է ուսակցիոն հասարակության հետ, մյուաը՝ Սոֆիայի նկատմամբ տածած սիրո աղետայի խորտակումը: «Սակայն,— ասում է նա, — Չացկու երկու դրամաները—և հասարակական, և անձնական—առանձին-առանձին չեն ճյուղավորված, այլ փոխադարձ կապով՝ ներքին միասնության մեջ» <sup>45.</sup>

Այս մեջբերումները ցույց են տալիս, որ այն մոտեցումը, որ Չացկու կերպարի նկատմամբ հանդես են ընթել անցյալ ժամանակների լուսավոր մարդիկ, և որն իր արտահայտությունն է գտել նաև Աղամյանի խաղում, շարունակել է իր կյանքը նաև հետո, իր կատարյալ դարդացումը գտել այժմ:



Արքիլին  
Մ. Հերմոնեանց. «Դիմակահանդես»



## ԱՐԲԵՆԻՆ

Համեմատի դերակատարմամբ Ռուսաստանի մայրաքաղաքում հանդես դալը համարձակ քայլ է ամեն մի դերասանի համար, լինի նա ռուս, թև այլ բեմի ներկայացուցիչ։ Սակայն Արքենինի դերով Ռուսաստանում ընդհանրապես, Պետերովորդում մասնավորապես, բնմարդրանալը ոչ-ռուս դերասանի համար համարձակությունից մի քայլ էլ այն կողմ էր Պարզապես հանդրգնությունն։ Մարդիկ համեմատարար հաշտ էին նայում այն իրազարժանը, որ մի դերասան, լինի այդ հայ ողբերդակը, թե մանավանդ ևվրոպական բնմի աստղերից մնկը, կարող է և իրավունք ունի Համելիտ, Օթելլո կամ մի այլ դեր համաշխարհային խաղացանկից կատարել իր մայրենի լեզվով, դիմացն ունենալով ռուսաց լեզվով հանդեմ եկող խաղընկերների Բայց ոչ մի կերպ չէին կամենում համաձայնել, որ նույն փորձը կարելի է տարածել նաև կերմոնտովի դրամայի վրա Պահլիճում նըստած նրանք չէին հաշտվում։ Արքենինի մենախոսությունները մի այլ լեզվով, ավլյալ դեպքում հայերեն լսելու փաստի հետ նույնիսկ խոսք է եղել այն մասին, թե վիրավորական է իրենց համար ռուսական բանաստեղծական հանճարի երկաթակուռ չափածոն հայերենի բնմից լսել ոչ-ռուսերեն<sup>1</sup>։

Բացի այդ, Աղամյանի քայլը հանդուզն էր և այն իմաստով, որ Մոսկվայում, ինչպես նաև Պետերբուրգում, մանավանդ Պետերբուրգում, «Դիմակահանդեսի» շուրջն ստեղծվել և ամրապնդվել էր նրա ոչ-բեմական լինելու ավանդական պատկերացումը։

Նկատենք, որ «Դիմակահանդեսի» վրա հարձակումներ կատարվել են անկախ նրա բնմական լինել-լինելու հանգամանքից։

«Դիմակահանդեսը», ինչպես հայտնի է, Լերմոնտովը  
լույս չի ընծայելի Երբ բանաստեղծի մահից հետո,  
1843-ին, հրապարակվել է նրա երկերի ժողովածուն, որի  
մեջ նաև «Դիմակահանդեսը», Սենկովսկու գլխավորած  
ժուռնալը՝ «Թիրլիոտեկա դլյա շտենիա», խիստ քննա-  
դատել է հրատարակիչներին այն բանի համար, որ ժո-  
ղովածուի մեջ զետեղել են Լերմոնտովի օրոր շտպագըր-  
ված գործեր ևս։ Հատկապես քարկոծվել է «Դիմակա-  
հանդեսը», որպես անարժան գործ։ Բացի Սենկովսկուց,  
ժխտական վերաբերմունք ուներ նաև Շեիրելը Բայց սը-  
րանք հիացած չէին նաև բանաստեղծի խոռվաճույդ պոե-  
գիայու։

Ինչ վերաբերում է «Դիմակահանդեսի» բնմական  
սպառմաթլանը, ապա այստեղ մռայլ էշերը սակավաթիվ  
չեն։ Հույս տեսնելուց հետո էլ բնմադրության թույլտը-  
վություն շատացվեց։ Տասը տարի անց, միայն 1852-ին,  
առաջին անգամ խաղացվեց Ալեքսանդրինյան թատրո-  
նում, այն էլ ոչ թե ամբողջությամբ, այլ լոկ առանձին  
տեսարաններ դրամայից։ Այս բնմադրությունը մամու-  
լի տեսադաշտից դուրս մնաց։ «Դիմակահանդեսի» նը-  
կատմամբ մամուլի դավադրական լուսնումը խախտեց  
միայն «Սևերնայա պշելան»։ Դրանից երեք ամիս անց  
Ներկայացվեց Մոսկվայում։ Տասը տարի էլ էր հարկա-  
վոր, որ նոր միայն «Դիմակահանդեսը» ստանար բե-  
մադրության պաշտոնական թույլտվությունը։ Եվ, այ-  
նուամենայինիվ, կայսերական թատրոններն իրենց խա-  
ղացանկի մեջ այդ պիեսը նկատի շառան։ Եվ եթե խա-  
ղացվել է, այն էլ դեպքից-դեպք, ապա գլխավորապես  
որևէ խոշոր դերասանի նախաձեռնությամբ, ի նպաստ  
տրվող ներկայացումների ժամանակ։

Ոչ այնքան Մոսկվայում, որքան Պետերբուրգում  
«Դիմակահանդեսը» դիմադրության շատ է հանդիպել։

Ակդրում ասվում էր, թե թույլ, անկատար գործ է ընդհանրապես, իսկ հետո, երբ տարիներ անցան և իրքն գրական արժեք ճանաչում դտավ, ասպարեզ նետվեց նրա անբնմականության հարցը, նրա 1864-ին Պետերբուրգում ներկայացվեց «Դիմակահանդեսը», «Պետերբուրգում գիտակիցներին վեղումոսափի» լրագիրը այն միտքը հայտնեց, թե «Դիմակահանդեսը» առաջին դրամա, ինքնին, մասնավանդ բնմում և մեր ժամանակներում, ոչ մի նշանակություն չունեցի նրա թողած տպավորությամբ նույննէ, ինչ որ վարպետորեն կազմված և գեղեցիկ արտահայտություններով լի ֆրանսիական մելոդրաման»; Եվ դրանից հետո, շնայած այդ կրնատ «Դիմակահանդեսի» հինգ անդամ կրկնվելուն, լերմոնտովյան գրաման իշավ Ալեքսանդրինյան թիմից և այլն շատ երկար ժամանակ, շուրջ քառորդ դար, այդ բնմի լույսը լտեսավ:

Այս էլ ասենք, որ Ալեքսանդրինյան թատրոնը, ինչպես ժամանակին նկատել է Բելինսկին, որ հասարակությունն ուներ, սեփական կերպարանքով, հատուկ հասկացողություններով, պահանջներով, հայացքներով հասարակություն։ Քննադատը հեգնում է՝ ասելով, թե պ-ն Պոլեսը Ալեքսանդրինյան թատրոնի Շեքսպիրն է, պ-ն Օրոռովսկին՝ նրա Շեքսպիրը, Հիշեցնում է նաև, որ Գոգովի պիեսներից «Ամուսնությունը» և «Խաղամոլները» այդ թատրոնում հաջողություն չունեցան, և այդ առնշտությամբ ասում է, թե զարգանալի է, որովհետեւ այդ թատրոնի հանդիսատեսների մի մասի ճաշակը շրջացած է այնպիսի բարձրարվեստ գործերով, և ծաղրի համար հիշում է այդ թատրոնի թիմից ներկայացված մի շարք ստորարժեք պիեսներ։ Դրանից հետո ինչու զարգանալ, եթե «Դիմակահանդեսի» Ալեքսանդրինյան բնմադրության մասին հոդված գրող Զոտովը ժամանակին տրանշացել է, որ «Դիմակահանդեսը» հետաքրքրու-

թյուն շառաջացրեց հասարակության մեջ, և դա բացատրել է նրանով, որ հասարակությունը ետք է վարժվել բնույթը լուրջ գործեր նայելուց<sup>2</sup>:

Պարզ հետևություն:

Արմոնտովի սիմեոնը քիչ է հանվել հաղվադեպ, իրը կանոն՝ ձախողման է հանդիպել, և դա էլ պատճառ է դարձել, որ երկար ժամանակ նրա բնմական մարմնավորման մասին այլևս չմտածեն: Եվ հանկարծ հայտնվել է մի օտարազգի դերասան, այն էլ հայ, և իր վրա համարձակություն է վերցրել աննշու այն, ինչ սիրու չեն արել իրենք անել, ոու դերասանները, նույնիսկ նրանք, որ թատերական հասարակայնությունից սիրված են և վատաճ իրենց հաջողությանը:

Որքա՞ն բարյացակամ պետք է լիներ ոռւսական մամուլը Աղամյանի նկատմամբ կամ որքա՞ն հզոր հայ դերասանի տաղանդը, որ Արքենինի դերով Պետերբուրգում հանդիս գալու համարձակությունը ոչ միայն ներվեր, այլև պաշտպանություն գտներ, նույնիսկ դուշտի արժանանար:

Այժմ՝ ըստ էության:

Աղամյանի Արքենինի մասին քիչ է դրվել ընդհանրապես: Մոսկվան լոռություն պահպանեց Այլ քաղաքներ նույնպես շարձագանքեցին, եթե նկատի լունենանք Խարկովը և Բաքուն: Պետերբուրգը, որից թվում էր, թե ամենից ավելի պետք է երկյուղ կրիր նա, մի քանի ճիշտ է, ոչ-մեծ հոգվածով անդրադարձավ Արքենինի դերակատարմանը:

Բոլոր հոգվածներից ամենաուշադրավը Վ. Զույկովի գրածն է:

Նախքան այդ քննադատի հոգվածին անդրադառնալը, կամենում ենք հիշել նրա հետ կատված մի հետաքրքրական հարց: 1916-ին, Աղամյանի մահվան 25-

ամյակի առիթով «Տարագի» էջերում լույս տեսան հիշողությունները Սենեքերիմ Արծրունու, որը, «Համլետից» բացի, թարգմանել էր նաև «Դիմակահանդեսը»: Մի օր, տարիներ անց, երբ Արծրունին Պետերուրդումն է եղել, նրան այցելել է Չույկոն, ծանոթացել հետո և զրուցյի ժամանակ, ի միջի այլոց, ասել է նաև հետեւալը:

«Երևակայեցեք, որ Դիմակահանդեսը Աղեքսանդրինյան թեմից վանդված էր, իրրե անբեմական և ուշադրության անարժան գործ Պետք է, որ գա Պետերուրդ պոլուցի մի հայ դերասան, կատարե Արքենինի դերը, գեղցիկ և բարեհնշուն հայկական լեզվով և ապացուցե, որ մենք սխալված ենք եղել, և թե կերպունտովը, բացի այն, որ մեծ բանաստեղծ է, նաև մեծ դրամատուրգ է» ։

Այսպիսի խոստովանությունը չի կարելի անուշադիր թողնել:

Նշանակում է Աղամյանի հանդինությունը՝ խաղալ Արքենին, խաղալ ուստաների առաջ, ըստ որում մայրաքաղաքում, ոչ միայն զուր ջանք լի եղել, ոչ միայն գընահատվել է, այլև նույնիսկ դրական հետևանքներ է տվել, բարձրացրել է ոռու բանաստեղծի, որպես դրամատուրգի, հեղինակությունը ուստաների աշխում, առիթովնել և մղել նրանց տեսնելու այն, ինչ մինչ այդ նըրանց աշքից մնացել է աննկատ, կամ էլ, որպես արժանիք, կասկածի է ենթարկված եղելի Գուցե ավելի ճիշտ կլինի ասել, որ Աղամյանը ոստաց բեմի գործիշներին աղատագրեց «Դիմակահանդեսի» նկատմամբ ոմնեցած ավանդական մոտեցումից:

Ի միջի այլոց նկատենք, որ համանման մի պատմություն էլ կապված է Պուշկինի «Թարք հյուրի» հետ: Ահա մի պիես, մեծ արժանիքներով հանդերձ, որ հազվագյուտ է խաղացվել, եվ երբ Պետերուրդում Գոն-

Գուանի գերով հանդես է եկել էռնեստո Ռոսսին, պետքը ուղարկինքինը համոզվել են, որ պուշկինյան դրաման շատ ավելի է արժանի ուշադրության, քան այդ եղել է մինչ այդ եվլ դրանից հետո դարձանալի չէ, եթե մամուլը գրում է. «Մենք հարկադրված ենք սպասելու ռուարերկրյա արտիստի, որպեսզի տեսնենք ուստա մեծ բանաստեղծներից մեջի ուստական դրաման լավագույն կատարմամբ»<sup>4</sup>:

Սա գրել է Զույկոն 1884-ին։ Այժմ շարումակենք լսել Արծրունուն ասած նրա խոսքը, որը գեռ ավարտված չէ, մանավանդ, որ նրա ասելիքի երկրորդ մասը արդեն մեջքերվածի զարգացումը լինելով, ըստ էության, եթե ոչ ավելի, առա գեթ նվազ նշանակալի չէ։

«Ենորհիվ ձեր Աղամյանի, — ասել է Զույկոն Արծրունուն, — Դիմակահանդեսը կրկին մտավ Աղեքսանդրինյան բեմի ռեպերտուրի մեջ և ներկայումս ներկայացնում են, հետեւելով ձեր դերասանի տվյալ հոգեբանությանը»<sup>5</sup>,

Ուրեմն, Աղամյանի խաղի ներգործության արդյունքն այն նղավ, որ նախ «Դիմակահանդես», որպես թատերկ, վերարժեքավորվեց, երկրորդ՝ տեղ գտավ Ալեքսանդրինյան թատրոնում և, երրորդ՝ Արբենինի կերպարը լուսաբանելիս ելակետ ընդունվեց հայ դերասանի մշակած ըմբռնումը»։

Միշտ էլ մի առանձին սիրով ու երախտագիտությամբ է մեղանում արձանագրվել այն ազգեցությունը, կասեինք վճռական, որ ուսական բեմական արվեստը ունեցել է հայ թատերական մշակութը կողմնորոշելով դեպի զարգացման ռեալիստական ոլորտներ։ Այդ ազդեցության ընդհանուր պատճերը գծելիս երբեք չի մոռացվել Աղամյանը, որի ստեղծագործական կյանքում ռուական գրականությունը, ուսական արվեստն ու

Հատկապես բեմը փոքր դեր չեն խաղացել, եվ այժմ  
ներկայանում է լավագույն առիթը խոսելու նաև այն  
մասին, որ ուսական թատրոնից այնքան շատ ստացած  
Աղամյանը, Արքենինի կատարմամբ և այն նշանակու-  
թյամբ, որ այդ կատարումն ունեցավ ուսական թատ-  
րոնի կյանքում, ավելի ստույգ՝ «Դիմակահանդեսի» բե-  
մական պատմության մեջ, պարտքի տակ շմնաց:

Չույկոյի նկատածի հետաքրքիրն ու էականը այն է  
թվում է մեզ, որ ուսական բեմի գալիք Արքենիները,  
նրա ասելով, հետևել են այն հոգեբանության, որ Աղամ-  
յանը տվել է լերմոնտովյան հերոսին:

Ի՞նչ հոգեբանություն է դա: Այդ մասին խոսք չկատ:  
Չույկոն չի ասել, թե՝ Արծրունին հարկ չի համարել ա-  
վելի ծավալիի և վերարտադրել զրույցն իր բոլոր ման-  
րամասնությունների մեջ՝ հայտնի չէ:

Առանց այդ հարցը պարզելու անկարելի է առաջ  
անցնել, և ոչ մի ձևով չի էլ կարելի գնահատել Աղամ-  
յանի խաղը և մանավանդ որոշել նրա կատարման նոր-  
արարական արժեքը: Դրա համար անհրաժեշտ է վե-  
րադառնալ այն հոգվածներին, որոնք թեև կցկտուր,  
բայց զրվել են Աղամյանի տված ներկայացումից հե-  
տո, նրա խաղի թարմ և անմիջական տպավորության  
ներքո:

Բոլոր այդ հոգվածներից ամենաուշագրավը, ինչպես  
վերն ասվեց, Չույկոյինն է:

Ենթամ դեպի անցյալը:

Աղամյանը 1882-ին Նոր-Նախիջևանում խաղացել է  
Արքենինի դերը: Ռ. Պատկանյանը, որ ներկա է գտնվել  
Լեռմոնտովի երկի բեմադրությանը, «Մեղու Հայաստա-  
նիի էջերում հրապարակել է մի քննադատական հոդ-  
ված: Նրա Համլետով հիացած Պատկանյանը խստա-  
գույն քննադատի աշքով նայելով՝ մերժել և բացասել է

Արքենինի գերակատարումը, իր այդ հոդվածում բանաստեղծն այն միտքն է արտահայտել, թե կերպունուովի պիեսը, լինելով անշափ հետաքրքիր իր գրական ստեղծագործություն, բնմական տեսակետից նույն արժեքը շռնի:

«Եատ սակավ թատերական շարադրություն կգտնը-վի, — զրում է բանաստեղծը, — ուր այնքան առատությամբ թափված լինի մարդկային խորումներ դպացմանց արտահայտությունն, որքան այս հրշված զրվածքը, և փոխադարձ՝ շատ սակավ թատերական հոդված կգտնվի կերպունուովի Դիմակահանդեսի նման անհարմար թատրոնի բեմի համար: Կյանքիս մեջ հիսում անդամնեն ավելի կարգացել եմ Դիմակահանդեսը և եթե այսուհետեւ ես նույնքան կարգամ՝ չեմ ճանձրանալ, և ամեն անդամ ավելի ու ավելի նոր գեղեցկություններ կգտնեմ մեջը: բայց և այնպիս, անկեղծորեն պիտի խոստովանիմ, որ նա բեմի վրայն անախորժ տապավորությունն արավ վրաս: Եվ այդ իսկ է պատճառը, որ ոչ Պետերբուրդի և ոչ Մոսկվայի մեջ սովորություն եղած չէ նրան ներկայացնելու, և եթե ներկայացրել են, այն էլ հազիվ երրեց»:

Ու թեև Պատկանյանը գտնում է, որ Աղամյանը սաստիկ պատերազմեց իր առաջ կանգնած անընկճելի դըժվարությունների դեմ, բայց, ավա՞ղ, չհաջողեց:

Ոչ մի հիմք չկար անվատահությամբ վերաբերվելու այնպիսի մի հեղինակության, ինչպիսին Պատկանյանն է, մանավանդ որ նրա առածը, թե կերպունուովի գրաման ավելի ընթերցելու, քան բեմից խաղալու երկ է, այն ժամանակները, և նաև հետո, տարածված և տիրապետող կարծիք էր:

Սակայն վերապահություն անելու հարկ կա:

Մեզ համար փոքր-ինչ անհասկանալի է Պատկանյանի առարկությունն ըստ էության: Եթե նա Աղամյանի

անհաջողությունը վերագրեր դրամատիկական երկի ոչ-  
բնմական լինելուն, այդ բնական կլինիքու Սակայն նա  
այդպիս չի վարվել Դրամայի անբնականության հարցը  
նա առաջ է քաշել կերմոնտովի գրվածքի ընդհանրապես  
ընմ բարձրացնելու աննպատակահարմարությունը սկզբ-  
րումքով հաստատելու համար, ինչպես և ասելու, թե հե-  
տեւապես զուր է Աղամյանը ձեռնամուկն եղել գրա բե-  
մական մարմնավորմանը և նոդիքն այն է, որ Պատկան-  
յանը Արքենինի կերպարն է քննադատության առարկա  
դարձնում և, գժրախտարար, անճիշտ բնութագրություն  
տալիս նրան։ Բանաօտեղծի պատկերացմամբ Արքենինը  
հրեշ է, և զակի մի անհատ, որ պից թե ոռւսաց կյանքի  
մեջ 40 թվականներումն հայտնված լինի այս և այն սա-  
լինում և ինչպես էֆեմերյան միջատ, նույնիսկ ծնած օրն  
աներեւութացած լինի աշխարհում ։ Կամենում է ասել,  
որ Արքենինը մարդկային կյանքի մի բնորոշ երևութ չի  
եղել իր ժամանակի համար, հետեւապես նա չի կարող  
հետաքրքրություն ներկայացնել այսօր, Յ0-ական թվա-  
կաններին, մանավանդ որ նրա համոզ նամբ որեմը պի-  
տի ներկայացնե տիպեր, որոնց նմանները եղել են, կան  
և պիտի լինեն։ Հարց է առաջ գալիս. այդ գեպքում ին-  
չո՞ւ է Պատկանյանը այդքան բարձր կարծիքի ռո՞իմա-  
կահանդեսի մասին, որպես գրական ստեղծագործու-  
թյան։ Մի՞թե Արքենինը բեմում և Արքենինը գրական  
ստեղծագործության մեջ նույն բաները չեն։ Այլ հարց է,  
եթե նա պնդեր, որ Արքենինը կերմոնտովի գրվածքում  
մարդկային ոճալ նկարագիր ունի, որը բեմում, Աղամ-  
յանի խաղով, վերածվում է անիրական պատկերի՝ խը-  
տացած հրեշացման։ Բայց նա այդպիսի միտք չի զար-  
գացնում Եվ այն, ինչ ասում է Արքենինի մասին՝ ասում  
է կերմոնտովի ստեղծած կերպարի մասին, որի բեմա-  
կան մարմնավորումը նա հարմար չի դառնում, որովհե-

տեւ այդպիսի ռճիվաղների տեղը բնական գիտությանց թանգարանն է և ոչ թատրոնի թեմը <sup>8</sup>: Եթե այդ արդպիս է, ապա անհասկանալի է, թե ինչպես է ապա դժոնում, որ այդ գրվածքի հետ թիւ պիես կարող է համեմատվել, ուր այն քայլքան առատությամբ թափված լինի մարդկացին խորումկ զգացմանց արտահայտությունն: Որտե՞ղ է այդ բոլորը գտնում: Մնում է ենթադրել, որ ոչ Արքենինինի կերպարի մեջ իսկ չէ՝ որ գրվածքի կենտրոնական գեմքը Արքենինն է և դրաման կառուցված է նրա կերպարի վրա: Նրանից դուրս և նրա շուրջը հորդացող կյանքը դրամայում պայմանավորված է նրանով միայն: Այդ կերպարը, իհարկե, ոռոմանտիկական երանդավորում ունի, բայց նրա կենսական հիմքերը ժխտելու դեպքում, հետևողական լինելու համար, Աղամյանից առաջ պետք է հաշտվել կերմոնտովի անհաջողության հետ և մերժել պիեսն ընդհանրապես, ինչպես այդ արվել է Կրթեմն ոռուսական գրականության մեջ:

Մնում է միայն հետևյալ ենթադրությունն անել:

Արդյոք ճիշտ չի՝ լինի, եթե մտածենք, որ Պատկանյանի ըմբռնած ճիվաղ Արքենինը Աղամյանի խաղով ըստացել է այնպիսի իրական շունչ, որը բանաստեղծը համարել է ոչ-ճիշտ շեղում կերմոնտովի երկից: Այդպիս ևնք կարծում, որովհետև ոռուսական քննադատության ասելով՝ Աղամյանը իսկապես այդպես է մերձեցնել կերմոնտովի հերոսին: Ինչ վերաբերում է Պատկանյանին, ապա նրա առնչությամբ մի-փոքր առաջ ասվածը ենթադրություն է, գուցե և ցանկալի, իհարկե, դերասանի համար, բայց ենթադրություն, որի համար բանաստեղծի հողվածը, դժբախտաբար, միայն մի շատ հեռավոր հիմք է տալիս:

Մի որոշ տարբերությամբ նման իրողության առաջնք, կանգնած նաև այժմ:

Չույկոն սկզբում բացատրում է, թե Արքենինի կերպարը ինչ է իրենից ներկայացնում ու հետո, թեև ասում է, որ «Աղամյանը խաղում էր աննման, զարմանալի նուրբ և ամբողջական՝ կերպով ստեղծեց Արքենինի գեմը»<sup>9</sup>, բայց միաժամանակ քննադատում է դերասանին՝ կերպոնտովից շնորհելու համար:

Երբ թափանցում ես այդ քննադատության էության մեջ, տեսնում եմ, որ Աղամյանի ստեղծած կերպարը բոլորովին այլ է, քան այն պատկերացումը, որ զրական նյութի հիման վրա կազմել է քննադատը Ավելի ճիշտ կլինի ասել, որ քննադատի ունեցած պատկերացումը աշքի շի ընկնում ինքնուրունությամբ, նա ասում և կըրկնում է այն, ինչ վաղուց ասվել է կերպոնտովի դրամայի մասին, մի տեսակետ, որ տասնամյակների ընթացքում ձեռք է բերել զորեղ տրադիցիայի ուժ, որի դեմ հազվագեց են պատահել ծառացողներ, կարճ։ Չույկոյի հիմնական միտքն այն է, որ «Դիմակահանդեսը» իր ամբողջությամբ ընդհանրապես, նրա գլխավոր կերպարը՝ Արքենինը մասնավորապես, ուստական իրականության հողի վրա ծնունդ առած երեսութիւններ չեն։ Դրական ձեռի կողմից դա Վիկտոր Հյուգոյի դրամաների օրինակով է արված, իսկ ոգին բայրոնական է։ Այլ կերպ ասած՝ կերպոնտովը իր պիեսը և կերպարը կերտելիս ոչ թե իրականությունից է մղումներ ստացել, այլ զրականությունից, այն էլ օտար, գլխավորապես ֆրանսիական և անգլիական։ Այսպիսով, բացասվում է Արքենինի կերպարի ոչ միայն կենսական կապը իրականության հետ, այլև նրա ազգային ընույթը։

Որ Չույկոն սխալվում է՝ այնքան ակնհայտ է, որ թվում է, թե հակառակն ապացուցելու կարիքը շկա, մասնավոնդ որ իր խաղով Աղամյանը հաստատել է այդ մվ, իսկապես, բավական է թերթել տարրեր քննադատ-

ների տարրեր ժամանակ և տարրեր թերթերում հրապարակած հոդվածները՝ համոզվելու համար, որ Աղամյանը ստեղծել է կենդանի կերպար:

Նախքան թերթերից մեջբերումներ անելը, անհրաժեշտ ենք համարում թեթևակի հայացք նետել մի խնդրի վրա:

Աղամյանի արածն ըստ ամենայնի գնահատելու համար, հարկավոր է աշքի առաջ ունենալ «Դիմակահանգեսի» բնմական պատմության հիմնական հարցը, այն, թե գերասանները մինչև Աղամյանը ինչպես են մեկնարանել Արքենինի կերպարը:

Արքենինի անդրանիկ գերակատարը պետերուրդյան Կարատիգինն է եղել Նա, ինչպես հետազոտողներն են ասում, Արքենինին ներկայացրել է որոշես մելոդրամատիկ շարագործ։ Մոսկվայում այդ գերի առաջին մարմնավորողը Սամարինն էր։ Սա էլ իր խաղի շատ մասերում մելոդրամատիկ բնավորություն է հազորդել կերպարին։ Նույնն է ասկում նաև Արքենինի մի ուրիշ գերակատարի՝ Վիլդնի մասին։ Ուրեմն, մինչև Աղամյանը, երկար տարիներ, Արքենինի գերը բեմից մեկնարանվել է մելոդրամատիկական տեսանկյունից, մեծ մասմբ ի զեմս նրա բեմ հանելով մի խկական շարագործի։

Բացառություն է կազմում Մ. Պիսարենի Արքենինը, Պիսարենը և Աղամյանը միաժամանակ են սկսել Արքենինի գերը կատարել, Պիսարենի մեկնարանության մասին բազմակողմանի տեղեկություններ շեն պահպանվել, սակայն ուստական թատերագիտությունը գտնում է, որ Արքենինների ողջ շարքից առաջինը սա է, որ մոտեցել է լերմոնտովյան դրամային։ Պիսարենը համարվել է ռուսական բեմի լավագույն Արքենինը, հատկապես 80-ական թվականներին։

Այժմ տեսնենք, թե ինչ են ասում պետքը բուրգիան  
թերթերը Աղամյանի Արքենինի ռեալիստական բնույթի  
մասին:

«Նովոյե վրեմյան» գրում է.

«Արքենինի դերից նրա մոտ (Աղամյանի—Ռ. Զ.)  
ստացվում է ավարտված կերպար, ոչ թե էֆեկտավոր,  
այլ իրականությանը մոտ»<sup>10</sup>,

«Պետքը բուրգիայա գաղետան» գրում է.

«Ամեն ինչ լիովին համապատասխանում է 30-ական  
թվականների սալոնական հիասթափված հերոսի դերի  
պատկերացմանը»<sup>11</sup>,

«Իսկուսատվոն» գրում է.

«Արքենինի բնավորությունը տաղանդավոր արտիս-  
տի կատարմամբ ստացվել է լիովին ավարտված և մի-  
անգամայն կենսական»<sup>12</sup>,

«Նովոստին» գրում է.

«Դուք ձեր առջև տեսնում եք իսկապես կենդանի  
մարդու»<sup>13</sup>,

«Երջապես, «Մշակը», պետքը բուրգիան լրագրերի  
հիման վրա, գրում է.

«Արքենինի դերից նա ստեղծում է ոչ թե երևակայա-  
կան, այլ իրականությանը մոտիկ մի պատկեր»<sup>14</sup>,

Հիշենք Պատկանյանին: Այդ տեսակետից բնորոշ չէ՝  
արգելք Պատկանյանի քննադատության մեջ այն կնտը,  
ուր ասված է, թե տինչ ոչ-բնական է գրվածքում, Աղամ-  
յանը անօգուտ ջանքեր է թափում բնական դարձնելու»<sup>15</sup>.

Ուրեմն բանաստեղծն էլ այն կարծիքին է, որ Լեռ-  
մոնտովի մոտ Արքենինը բնական չէ, մինչդեռ Աղամյա-  
նը չանք է թափել այն բնական դարձնելու

թվում է, թե ավելի պարզ չէր կարելի ասել:

Կարծում ենք այսքանն էլ բավական է՝ հաստատե-  
նու համար, որ Աղամյանի կատարումով Արքենինը դար-

ձել է կենդանի, իրական անձնավորություն, որի հոգեկան կյանքի բարդ շարժմանը հանդիսատեսը հավատացել է, և ոչ թե Բայրոնից և Հյուգոյից փոխ առնված մի գրական սինմա, ինչպես ներշնչել և համոզել են տարիների ընթացքում, աշակերտական նստարանից սկսած՝ գրականության դասերին:

Իսկ եթե սրան ավելացվի նաև այն գնահատականը, թե ուղ. Աղամյանը ցուց տվեց լերմոնտովյան տիպի լիակատար ըմբռնումը<sup>16</sup>, կամ Խարկովի մի ուսուդերասանի ասածը, թե «երեկ դուք գերազանցեցիք ինքներդ ձեղ. այդպես էր պատկերացնում հեղինակը Արքենինին, երբ ստեղծում էր նրան»<sup>17</sup>, ապա հասկանալի կդառնա ողբերգակի հաջողությունը և այդ հաջողության հարուցած ազգեցությունը հանդիսատեսի զգալի մասի վրա, թեկուզ այն մասի, որը դերասանի խաղը նայելուց հետո հարկադրված է մտածել, թե ի՞նչն է ավելի ճիշտ ու մոտ լերմոնտովի դրամային, ա՞յն, ինչ ինքը կարգացել է գրքերում և դրա հիման վրա պատկերացում կազմել, թե՝ այն, որ իրը կերպարի վերանայում առաջարկեց Աղամյանը բեմից:

Դա հարցի մի կողմն է միայն, էական, բայց ոչ սպասիլ, իմաստ ստանձնող: Կարևորն այն է, թե իրականությանը մոտ, կենդանի կերպար ստեղծելով, Աղամյանը մարդկային ի՞նչ բովանդակություն է զնում նրամբը:

Ահա այդ հարցում վեճ և հակասություն կա դերապանի ու նրա քննադատի միջև:

Իրավացին Աղամյանն է և ոչ թե Զույկոն:

Ոչ միայն այն թվականներին, այլև հետո ժամանակը հաստատեց դերասանի ըմբռնման ճշտությունը: Այդ ինչպես արդեն առիթ ունեցանք համոզվելու Արծրունու հուշերից, ընդունել է նաև Զույկոն: Այս հարցը, սակայն,

ունի մի այնպիսի կողմ, որ շատ ավելի էական է։ Սովորական թատրոնը 50-ական թվականներին Արքենինի կերպարին անդրադառնալու առիթներ շատ ունեցավ։ Եվ այն ըմբռնումը, որ մշակվեց Արքենինի գերակատարների մեծ մասի մոտ, իհարկե, տարբեր անհատականությամբ, ինչպես նաև մանրամասնությունների զանազանությամբ, մի ընդհանուր, միասնական տեսակետի վրա է հիմնվում, որի հեռավոր նախորդը համարձակ կերպով կարելի է ճանաչել Աղամյանին, նրա հետ միասին նաև այն ոռու գերասաններին, որոնք նրանից առաջ կամ նրա ժամանակ, հաջող կամ անհաջող, ավել կամ պակաս, մոտեցել են Արքենինի կերպարի նույնատիպ ընկալմանը։

Այսպիսով, կարելի է այն հաստատ պնդումն անել, որ ժամանակը և սերումդները սկաշտպանեցին Աղամյանի իրավացիությունը։

Ի՞նչ է ասում Զույկոն։

Քննադատը բերում է այն տողերը, որոնցով Շտրաչը բնութագրում է Զվեզդիչին և նկատում, որ սա թեն առկած է ուրիշի մասին, բայց Արքենինի փայլում բնութագրությունն է միաժամանակ։ Այնքան պարզ է այս սխալը, որ ապացուցի կարիք չի զգացվում։ Հարցը, սակայն, դա չէ, այլ այն, որ հիմք ընդունելով շփացած և սնամեց Զվեզդիչին տրված բնութագիրը, Զույկոն Աղամյանի կատարմանը ներկայացնում է պահանջներ՝ այդ լույսի տակ։ Հետաքրքիրն այն է, որ դրանից հետո էլ շտապում է ասել, թե ինչու գերասանի վերստեղծած Արքենինը նման չէ իր երեսակայած Արքենինին։ Նորից կրկնելով, թե դա բայրոնական հերոս է, միայն տեղափոխված ոռուսական միջավայր, նրա մեջ տեսնում է ավանդական գեմոնականությունը, որը թույլ չի տալիս ճիշտ մերձեցում գտնելու դեպի կերպարը և հասկանա-

լու նրա վարքագիծը դրամայում։ Հստ Զույկոյի, Արքենինը ոչ թե խսկապն հիասթափած է, այլ հիասթափության դիմակ է քաշել վրան, ձևանում է դիվային մի խառնվածք, արհամարհում և վերից է նայում մարդկանց։ Ոչինչ մարդկային Զույկոն չի տեսնում կերմոնտումի հերոսի մեջ ։ Կրկնում է այն, ինչ երկու տարի առաջ հայկական մամուլում գրել էր Պատկանյանը։ Երկուսի մոտեցման աղբյուրը նույնն է, Արքենինի կերպարի ավանդական պատկերացմանը տուրք տալը, որից գերասանը աղատ է զգացել իրեն։

Ի՞նչ էր խաղում Աղամյանը։

Ոչ թե բայրոնական ոգի, այլ մարդու նա կերպարը դեմոնական բարձրաթթոիլ ոլորտներից իշխցնում, մոտեցնում էր իրականությանը։ Ավելին, մարդկայինացնում էր այն Ասել, թե Աղամյանի Արքենինը բացասական գծեր շուներ՝ սխալ կլինի, բայց նա հոգեբանական հիմնավորում էր տալիս նրա վարքագծին և այնպես, որ հանդիսատեսը հասկանում էր, որ իր առջև կանգնածը ոչ միայն մեղավոր է, այլև զոհ։

Զույկոն կշտամբում է Աղամյանին, որ նա նվազշափով է տեղ տալիս սարկազմին և մանավանդ նրա անհոգի լինելուն, զաժանությանը։ Այս մոտեցումը, մեր կարծիքով, անհրաժեշտ է համարվել, որովհետև Աղամյանը կամեցել է ոչ այնքան իր շրջապատին վերից և արհամարհանքով նայող, որքան նրանից հիասթափած մարդու կերպարը առաջ մղել Ահա այսանդ է բացատրության բանալին։ Օթե ճիշտ է, որ Աղամյանը հարազատ է մնացել կերմոնտովյան դրամային, խորն է հասկացել այն, նշանակում է նա պատկերել է օժտված մի մարդու, որը իր սուր մտքի և ուժեղ կամքի համար ասպարեզ չի գտել նա ամեն ինչ տեսել է, ամեն փորձության մեջ եղել է և գիտե, թե ինչ է իրենից ներկայաց-

Նում կյանքը: Ոչ միայն ցավ է տեսել, այլև ցավ է պատճառնել, Գուցե ոչ այնքան հարվածվել է, որքան ինքն է հարվածնել, կործանումներ և խորտակումներ հասցրել: Անկախ նրանից, թե դերասանը ինչպիսի գաղափար ուներ գեկարրիստական շարժման (անկարելի է, որ այդ մասին նա լսած լիներ Թիֆլիսում՝ և Խելքից պատուհասի» բեմադրության կապակցությամբ) և զրան հաջորդած տարիներին ոռու ազնվական մտավորականության շրջանում տիրող արամադրությունների մասին, նա գնացել է ոչ թե զրաման ոռուական իրականությունից անշատող զրական բացատրությունների նետնից, այլ կյանքին ավելի մոտ կանգնելով, արտահայտել է հիասթափությունը, հուսնականությունը, անզործունությունը, որոնք ետ-դեկարրիստական դարաշրջանի բնորոշ գծերը լինելով՝ իրենց կնիքը դրել են նաև զրամատուրդի ստեղծած կերպարի վրա: Արբենինը հոգնել է, հիասթափվել մարդկանցից, կյանքից: Այլևս ոչինչ չի գրավում նրան, ոչ թղթախաղի կանաչ սեղանը, ոչ էլ ուրախ վայնլիքի ժամերը: Նայում է շուրջը, և մարդիկ թվում են օտար ու ինքն էլ օտար նրանց համար: Սակայն նա մի անկյուն ունի կյանքում, ուր կարող է գտնել հոգու անդորրը: Դա իր երիտասարդ կինն է: Սիրում է ու հավատում: Այդպես է կարծում Արբենինը: Այդպես չի կարծում, սակայն, նրա արիստոկրատ միջավայրը: Մարդիկ չեն ներել նրան՝ իրենց շրջապատից մենկուանալը, և ստեղծված առաջին իսկ առիթը՝ Նինայի ապարանջանի կորուատը օգտագործում են նրա հոգեկան կյանքը պղտորելու և վրեժինդիր լինելու համար: Եվ Արբենինը, որ հեռացել էր ճահճից, բայց մինչև վերջ չէր մաքրվել անցյալի ցեխից, ենթարկվում է ազնվական շըրջանների բանսարկություններին, թումավորում կնոջը և հետո, երբ իմանում է նրա անմեղությունը՝ ցնորվեմ է:

Այս նպարտ միտքն էլ այսօր ընկնվեց:

Խորտակումն անխուսափելի է, և այդ ողբերդական կործանման հիմքում ընկած են հնից մնացած, լիովին շհաղթահարված այնպիսի հակումներ, ինչպես անհատապաշտություն, հավատի բացակայություն կրանքի նկատմամբ։

Փախիր, կարմրիր, արհամարհնալած մարդ:  
Թեզ էլ, ինչպես և զատ ուժիշներին,  
Մեր ներկա դարը սեղմել է գետնին <sup>19</sup>։

Այսպես է ասում Արքենինն իր մասին։  
Աղամյանը, ինչպես կարելի է մակաբներել Զույկոյի գրած Հոգիվածից, Հոգու խաղաղությունն արդեն կորցրած Արքենինին մի ձևով է խաղացել, երբ նա նինայի հետ է, այլ կերպ, և բոլորովին այլ ձևով՝ աղնվականների միշտավայրում։

Առաջին դեպքում, Նինայի հետ եղած ժամանակ, շնայած խանդի դրսնորումներին, զայրազին պոռթկումների կողքին երբեմն անշափ քնքուշ է եղել, ինքը Զույկոն էլ է ասում, որ այդ Հոգերանական անցումները՝ բարկությունից գեպի քնքություն և գուրգուրանքից դեպի վրդովմունք, դերասանը կատարում էր աննկարոգրելի վարպետությամբ։ Եվ հասկանալի է այդու Դամիայն վարպետության խնդիր չէ, այլ նաև մոտեցման, Նա մարդ է պատկերում, հակասական ապրումների մեջ գեգերող մարդ Ապարանշանի կորուստը փաստ է, դաժան, անհերթելի փաստ։ Բայց նա նայում է նինայի աշխերին, մաքուր, անմեղ հայացքով իրեն նայող աշ-

բերին, և չի տեսնում նրանց մեջ թաքնված մեղքը: Ահա այդ հողի վրա էլ տեղի են ունենում հոգեկան տատանումներ: Այդպես է խաղացել, երբ բացատրություն է պահանջել, թե որտեղ է ապարանջանը: Այդպես է խաղացել նաև Նինայի թունավորման պատկերը: Նույն ձևով՝ Նինայի մահվան տեսարանը:

Մի մանրամասնություն:

«Այն ժամանակ,— ասում է Չույկոն, — երբ Նինան մահանում է և ցավից ճշում, Արբենինը շրջվում է և ձեռքերով փակում ականջները: Պատմում է Չույկոն և ասում, որ այդ տեսարանը իրեն հատկապես դուր է եկել Դուր է եկել, որովհետև ռայտեղ շատ ճշմարտություն կատարված է: Եվ բացատրույթ է, որովհետև չի կամենում լսել այդ ճիշճը<sup>20</sup>:

Զի՞ կամենում, թե՞ չի կարողանում: Զի ռկամենում և ըստովի Արբենինից եկող բացատրություն է, հետևապես չի համընկնի, չի էլ նպաստի Աղամյանի խաղացածը հասկանալուն, իսկ եթե բացատրվի, որ չի կարողանում, իսկ դա միայն այդպես պետք է բացատրվի, ապա մեր առջև կկանգնի մարդ-Արբենինը, որը թեև անողոք գծեր ունի, բայց և ընդունակ է մարդկայնորեն ցնցվելու Թեև համոզված, որ ինքն իրավացի է կնոքը թունավորելով՝ Արբենին-Աղամյանը դարձյալ տանջվում է, մարդկայնորեն սոսկում իր աշքի առջև կատարվող մահվան դժինմ տեսարանից: Մեկը մեռնում է, մյուսը, թեև նրա մահվան բուն պատճառը՝ տանջվում է:

Այստեղ ես դերասանը կրկին անգամ տեսնում է նյութ՝ իրեն ալնպես հուզող հիմնական խնդիրն արծարծելու համար: Բուրժուական իրականությունը, որի մեջ ապրել է դերասանը, այնքան անողոք է իր դաժան էության մեջ, որ ամեն մի երազ, որքան էլ գեղեցիկ և

անսուստ, բախվելով կյանքի գոհհիկ հարաբերություններին, մեկ առմիշտ փշրվելու է:

Չացկին հույս ուներ Սոֆիայի մեջ գտնել իր հոգու անդորրը, իր բախտը Բայց այդ չեղավ, նրա վերջին հույսն էլ խորտակվեց, եվ դառնացած ու զայրագին՝ երես դարձրեց ու փախավ, Արքենինը չուներ Չացկու դադափարները, բայց իրը բնավորություն ավելի ուժն լինելով, կամենում է վրեժ լուծել, պատճել բոլոր նըրանց, ովքեր պատճառ դարձան հոգեկան ալեկոծումներին. Նինան մեղք է գործել, պետք է մնոնի, Զվեդդիւր հարվածի տակ է գրել իր արժանապատվությունը — պետք է խայտառակվի, ամոթահար արվի հասարակայնորենն Վրե՛ժ, վրե՛ժ — սա էր Արքենինին ղեկավարողը, բայց նա չէր հասկանում, որ ուժն լինելով ամեն մեկից առանձին-առանձին, թույլ էր և տեար իր ամրոց շրջապատի հանդեպ:

Ազնվականների միջավայրում, լինի այդ Զվեդդիչի կամ Շտրայլի հետ ունեցած տեսարանները, ինչպես և վերջին պատկերը, Աղամյանը կառուցել է՝ հիմք ընդունելով վրեժինդրության թեման Արքենինը լավ է ճանաշում իր շրջապատը, զիտի էլ, թե ինչ ստորությունների է ընդունակ, բայց ինքը, թեև հակադրության մեջ նրա հետ, շկարողանալով բարձրանալ նրանից, ևնթարկվում է, դառնում նույնը:

Թղթախաղի տեսարանում, ուր նա ձեռնոցով ապահում է Զվեդդիչին, Զույկովի ասելով, չի պահպանել արտաքին հանգստությունը, ձայնը բարձրացրել է, օրթիշ արձակել, նույնը արել է նաև Զվեդդիչի տանը. Շտրայլին հանդիպելիս Գրեթե նույնը պատմում է մի այլ հոդվածագիր: Այստեղ ևս չկա հանգիստ և սունարյուն Արքենինը, կա մի մարդ, որ ցասումով բռնկված՝ կամենում է վրեժ լուծել, Վրեժը նրան հանգիստ

ի առաջիս, բորբոքում, կրակով է լցնում հոգին, մզում  
դեպի գործողություն, ընդգծված, գործուն:

Վերջին պատկերում, ցնորվելու տեսարանում, այս  
երկու գծերը միահյուսվում են, գալիս խաշածավում մեկ  
տեղ:

Երանուճի Շահրապյանին Մոսկվայից գրած նամա-  
կում Աղամյանը պատմում է «Դիմակահանդեսի» վեր-  
ջին տեսարանի մասին. «Երբ պոռալով, շապիկս պա-  
տառելով՝ հարձակեցա Անհայտին վրա, մի կին, որ  
առաջին կարգում նստած էր՝ վախցավ ու պոռալով  
փախավ»<sup>21</sup>, Մի կողմ թողած վախեցած կնոջ փաստը,  
Չույկոյի պատմածի համաձայն, Աղամյանը նույն ձևով  
է խաղացել նաև Պետերբուրգում: Նվ Չույկոն այն հա-  
մոզման է, որ դա պետք է համարվի դերասանի խաղի  
բարձրակետը: «Այսանդ կիրքն է,— ասում է նա,— որը  
արդեն չի կարելի զսպել, հորդում է հեղեղի պես և նրա  
մեջ լսելի է հուսահատություն, կատաղություն, զղջում,  
թնթչություն, գեղարվեստական զարմանալի ճշմարտա-  
ցիությամբ արտահայտված զգացմումքների մի ամբողջ  
գամմա»<sup>22</sup>:

Այս ասում է Չույկոն: Ասում է՝ զնահատելով Աղամ-  
յանի խաղը, նրա համար գտնելով դրվատանքի ջերմ  
արտահայտություններ: Քննադատն անկեղծ է, ոչ թե  
զիջում է, որովհետև հենց սկզբից, դեռևս Համ-  
լետի խաղից, համակրությամբ է վերաբերվել Աղամ-  
յանին,— այլ նրա համար, որ ներկայացման ընթացքը  
քննադատին ևս ենթարկել է այն տրամարանությանը,  
որի վրա կառուցված է ողբերգակի կատարումը:

Շարունակենք լսել Չույկոյին:

Այս փոթորկի ճնշման տակ, պատմում է նա, Ար-  
քենին-Աղամյանը չի դիմանում, նա պատռում է շա-  
պիկը, ինչպես մի կատաղած գաղան հարձակվում Ան-

Հայտի վրա, հետո թուղանում է և ասես կաթվածից շարգված, հեկեկալով վազում դեպի Նինայի դադաղը <sup>23</sup>, Ողբերգական վախճան։

Լավ է դիտել մեկը. Լերմոնտովը որի հերոսի բանականությունը մարեց, բայց կյանքը պահպանեց <sup>24</sup>. Սա նվազ ցնցող չէ, քան մահը, մանավանդ եթե նկատի առնվի կարատիգինյան մահը։ Ասում են, որ Կարատիգինի Արքենինը անձնասպան էր լինում. Վարագույրը փակվելուց առաջ ասում էր. «Մենիր և դու, շարագործ» և դաշումահարվում էր <sup>25</sup>. Այդ խոսքերը, ինչպես հայտնի է, Լերմոնտովի մոտ չկան, ոչ էլ հերոսը պիսում այդպիսի վախճան ունի. Այնպիս, ինչպես գրել է Լերմոնտովը և հեղինակին հարազատ մնալով խաղացել է Ադամյանը՝ ողբերգական ընդհանրացում է, նախանշված ոչ միայն կերպարի բնավորությամբ, նրա ներքին կյանքի զարգացմամբ, այլև ապրած դարաշըրշանով։ Մարդը մնում է կենդանի, իսկ նրանից խլվում է ամենաթանկագինը՝ բանականությունը։ Սա է ողբերգական կացությունը հետդեկարրիստական ժամանակաշրջանի բոլոր այն մարդկանց, որոնք սիրու ու միտք ունեն, ահագին եռանդ, բայց զուրկ են գործելու ասպարեզից։

Այս ամենը նկարագրելուց հետո Զուլկոն ավելացնում է. այս տեսարանը Ադամյանի խաղում աննման է, և առանց որևէ խոսքի օգնության՝ ապացուցում է, որ նա մեկն է ամենաաշքի ընկնող ողբերգու արտիստներից։

Չենք կարող այստեղ շարձանագրել այն փաստը, որ Արքենինի կերպարը մինչև Ադամյանը նշանակալի կատարողներ չեն ունեցել Բացառություն է Պիսարու։ Մեկ էլ հիշատակվում է դերասան Ագրամովը, որի մասին պահպանվել է միայն ընդհանուր դրական գնահա-

տական, և ոչ մի ուրիշ մանրամասնություն։ Ուրեմն մինչև Աղամյանը ոչ մի խոշոր անհատականություն փորձ չի արել այդ կերպարին մերձենալու Հայտնի է, որ Մոշալովը բուռն ցանկություն ուներ խաղալու Նա մեծ հույսներ էր կապում լերմոնտովյան դրամայի բեմադրության հետ։ Մի անգամ նույնիսկ ասել է՝ եթե «Դիմակահանդես» ներկայացվի, ինքը հարություն կառնի<sup>25</sup>, Եվ, այնուամենայնիվ, նրան չի հաջողվել խաղալ Մոշալովի կատարումը հետաքրքիր կլիներ, և շատ հնարավոր է, այսինքն ոչ թե հնարավոր է, այլ կասկածից դուրս է, որ բոլորովին այլ ուղղություն կտար կերպարի բեմական տրադիցիային։ Այդ դեպքում Աղամյանը խազի օրինակ կունենար աշքի առաջ, որը կարող էր ընդունել կամ մերժել, բայց բոլոր դեպքերում մզում կատանար, մինչդեռ այդ դերը նա փաստորնեն պատրաստել է՝ չունենալով նախորդ, ոչ էլ նույնիսկ նյութի մեջ փոքրիշատե խորացված գրականագիտական ուսումնասություն իր ձեռքի տակ։ Այս կապակցությամբ վերստին հիշելով Պիսարևին, ասենք, որ նրա արածը Աղամյանին հայտնի չէր, մանավանդ որ չէր տեսել, և գրականության մեջ էլ նրա Արքենինի մասին առանձնապես չի գրվել<sup>27</sup>։ Եվ, վերջապես, արժե այստեղ հիշատակել մեծ դերասանուհի Մարիա Երմոլովայի կարծիքը։ Մոսկվայում տեսնելով Աղամյանի խաղը Արքենինի գերում, հռչակավոր դերասանուհին ասել է, թե պետք է Պիսարևին խորհուրդ տալ, որ այլևս այդ գերով բեմ չբարձրանա<sup>28</sup>։

Ծատ երկար տարիներ, կարելի է ասել՝ տասնամ-

յակներ, Աերմոնտովի «Դիմակահանդեսը» դիտվել է ուրակս բայրոնական ոգով զրված ռոմանտիկական դրամայի օրինակ։ Այդ տեսակետը հեկել հասել է մինչև Չույկոյի ժամանակները և զրականագիտության մեջ գոյության իրավունք պահպանել նաև դրանից հետո։ Աղամյանը այդպես շի ըմբռնել լերմոնտովյան զրամայի ժամրային յուրահատկությունը նա ոչինչ բայրոնական շի տեսել այդ դրամայում, և ինչպես պարզ երեվում է նրա խաղի մասին զրված Հոդվածներից, Արքենինի կերպարին ռեալիստական մեկնաբանություն է տվել։ Ոչ միայն մեկնաբանությունն է եղել ռեալիստական, այլև կատարումը, խաղանքը նվ այդ հանգամանքն էլ գրական որոշակի նախապաշարումներ ունեցող մարդկանց տարօրինակ է թվացել, զարմանալի և առարոտիւ նրանք բեմում սովորել են տեսնել բայրոնական ռոմանտիզմի ոգով տոգորված մի կերպար, գեմոնական շնչի մի պոռթկուն արտահայտություն, և հանկարծ տեսնում են ռեալիստական կատարում, այնպիսին, որը վերացական սակառնումների փոխարեն, հանդիսատեսին առաջարկում է մարդկային ցայտում հոգեբանություն, հիմնավորված ոչ միայն կերպարի վարքագծով, այլև պատմական, իր ապրած միջավայրի հասարակական հարաբերությունների տեսակետից։

Ուրեմն Աղամյանը հեռացել է տրադիցիայից, ոչ միայն կերպարի ըմբռնման, այլև այն բեմական մարմնավորման ենթարկելու արտահայտության միջնորդ է միայն կերպարի խաղի ընդհանուր ռեական ուղղության տեսակետից։ Ասենք դրանք այնքան անանշատելի հասկացողություններ են, որ հասկանալի է, թե ինչու այդպես միասնացած էլ արտահայտվել են։

Եվ եթե, այնուամենայնիվ, գտնվել են քննադատներ, որ չեն ներել Աղամյանի շեղումը տրադիցիոն ըմ-

բըսանումից, ապա այդ նաև նրա համար, որ նրանք չեն  
կամ նցել կամ զուցե չեն կարողացնել հաշտվել այն իրո-  
ջության հետ, որ միշտ լեռների կատարներին սավառ-  
նող գեղունական ոգին երկնքից տեղափոխվի երկիր,  
հաղորդվի նրան իրական կյանքի դարձերակ, կենդանի  
մարդու գծերը

Աղամյանի այս քայլի նորարարական բնույթն իր  
նշանակությամբ ոչ միայն անկասկած է, այլև մեծ:


Մի՞թև ճիշտ չի լինի, եթե ասվի, որ լեռմոնտովյան  
գրամայի ժամանակին յուրահատկության այսպիսի ըմ-  
րընում մշակվեց և նվաճվեց բավական տարիներ անց  
ինչպես գրականագիտության մեջ, այնպես էլ բնմում:  
Որքա՞ն ժամանակ էր անցնելու, որ գրականագիտու-  
թյունը, շուրանալով «Դիմակահանդեսի» ոռմանտիկա-  
կան հիմքերը, կապեր այն ոռուական ռեալիստական  
գրամատուրդիայի զարգացման ընդհանուր գծի հետ,  
նրա մեջ տեսներ սուր քննադատական վերաբերմունք  
գեպի պետերբուրգյան հասարակությունը, տալով հնա-  
րավորություն՝ դիմակազերծելու բարձրատոհմիկ շըր-  
ջանի բարբերն ու հարաբերությունները՝ կենդանի բնա-  
վորությունների ստեղծման հանապարհով: Սխալված  
չենք լինի, որ ասենք, թե ողբերգակը այդ ըմբռնման  
եթե նախակարապետը չէ, համենայն դեպս՝ մեկն է  
նրանցից:



ԳԼՈՒԽ  
ՉՈՐՉՈՐԴ

ԱԴԱՄՅԱՆԻ ՇԵՔՍՊԻՐԸ

1870-1871



## Օ Թ Ե Լ Լ Ո

Օթելոյի անդրանիկ ղերակատարը հայ բեմում Զմշկյանն է եղել Ինչպես է խաղացել—շգիտենք, որովհետեւ, բացի մերկ փաստից, ուրիշ տվյալ չի պահպանելի Այդ կատարման հետ կապված բոլոր կարգի դատողությունները, որ արվել են թատերագիտական գրականության մեջ, գուցե և ճիշտ, բայց ենթադրություններ են, որոնց համար հիմք է ծառայել Զմշկյանի՝ որպես արվեստագետի և քաղաքացու ընդհանուր նկարագիրը<sup>3:</sup>

Անուրանալի է Զմշկյանի պատմական ծառայությունը, որպես մեր իրականության մեջ շեքսպիրյան կերպարների անդրանիկ ղերակատարի Նույնը կարելի է ասել նաև Վարդովյանի մասին։ Սուաշինը՝ Օթելո և Շեյլոկ, երկրորդը՝ Մակբեթ, Ինչ խոսք, որ այդ ղերակատարումները ունեցել են իրենց գերը թե՛ գեղարվեստական, թե՛ գաղափարական առումով։ Սակայն, ինչպես երևում է, Զմշկյանի շեքսպիրյան ղերակատարումների շուրջը չի տիրել այն հիացումը, ինչը հենց սկզբ-

բից և շատ երկար ժամանակ գոյություն է ունեցել  
նույն Զմշկյանի Պեպոյի քեմական մարմնավորման  
շուրջը:

Զմշկյանը սունդուկյանական թատրոնի դերասան էր:

Այլ կերպ ասած, Օթելլոյի կերպարը տակավին-  
նվաճված չէր գեղարվեստական այնպիսի մակարդա-  
կով, որ առիթ տար նկատելու, թե դա մոտենում է շե-  
քսպիրյան շնչին:

Ահա այդ խնդիրն էր ծառացած Ադամյանի առաջ-  
ինչպիսին կլինի նա Օթելլոյի դերում, մանավանդ որ  
ուսւական մամուլը, խոսքը Պետերբուրգի և Մոսկվայի  
մասին է, մինչև այդ չէր զրել նրա Օթելլոյի մասին, հե-  
տևապես Բաբվի և Թիֆլիսի հանդիսատեսը շուներ ոչ  
մի կանխակալ կարծիք, ոչ դրական, ոչ բացասական:  
Եթե կար վերաբերմունք՝ ապա մի կողմից այն կույր  
հավատն էր, թե ինչին կպչի Ադամյանի շունչը, ան-  
պայման մի բան կստացվի. մյուս կողմից՝ եթե ոչ թե-  
րահավատությունը, ապա տարակուսանքը, թե Ադամ-  
յանը փոքրամարմին լինելով, կկարողանա՞ արդյոք  
հաղթահարել մավր զօրավարի դերը. Այդ տարակու-  
սանքն արտահայտել է Շիրվանզադեն:

«Հայտնի է, որ հայ դերասանը ի բաց առյալ ներ-  
թինը, յուր արտաքին ֆիզիկական հատկություններով  
ավելի Համլետ է, քան թե Օթելլու Օթելլոյի դերը պա-  
հանչում է հաղթանդամ կազմվածք, զորեղ և կոշտ  
ձայն, այսպես են բացատրում գոնե շատ քննադատ-  
ներ և այդպես է երևում պիեսայի բովանդակությունից:  
Այնինչ ալ. Ադամյանի կազմվածքը փոքր է և նուրբ,  
ձայնը թեև տրագիկական է մշակված, բայց ոչ այնքան  
հսկայական և զորեղ, որ հարկավոր է ունենալ Օթելլո  
Ներկայացնելու համար. Աշքի առաջ ունենալով այս  
ֆիզիկական առանձնահատկությունները, մենք իրա-

վունք ունեինք սպասելու, որ պ. Աղամյանը չպիտի ունենա այն հաշողությունը, որ ուներ Համլետի դերում։ Այդ կանխակալ կարծիքով մենք մտանք թատրոն ամսույս 17-ին, անցյալ երկուշաբթի։

Բայց պ. Աղամյանը հաղթեց մեզ։

Առաջին անգամ էինք տեսնում պ. Աղամյանին Օթելլոյի դերում, և նա մի անգամ ևս մեզ համոզեց, որ զուտ տաղանդի համար նշանակություն չունեն մինչև անգամ ֆիզիկական պակասությունները»<sup>31</sup>։

Այս կարգի տարակուտանքներ արտահայտվել են հայ հետու։

Թեև Շիրվանզադեն իր հոգվածը ավարտում է ասելով՝ «ի բաց առյալ այդ շնչին սխալները, Աղամյանի Օթելլոն աննման է», սակայն տարիներ անց, ճշտելով իր վերաբերմունքը, գրել է. «իրոք Օթելլո նա բավական տկար էր»<sup>32</sup>։

Այս ակամա հակասությունը կարելի է բացատրել Առաջին դեպքում նա կարծիք է հայտնել ներկայացման անմիջական տպավորության տակ, մի տպավորություն, որի ստեղծման մեջ, անկասկած, ինչ-որ ազդեցություն է ունեցել նաև հանդիսատես հասարակայնության ծայրահեղ հափշտակությունը։ Ինչ վերաբերում է երկրորդ կարծիքին, ապա այն հայտնվել է ոչ պակաս, քան մի քառորդ դար հետո, տարիների միջից անցած, ստուգված տպավորությամբ։ Թերեւ դրան մի առանձին նշանակություն չտայինք, եթե միայն նա այդպես մտածեր։ Ինդիրն այն է, որ Շիրվանզադեի տարիներ հետո հայտնած կարծիքը արտահայտել են նաև ուստի քննադատներից մի քանիսը՝ նրա դերակատարումը ժամանակակից մամուլի էշերում լուսաբանելիս։ Եվ եթե երկար կանգ ենք առնում այս խնդրի վրա, ապա այն պատճառով, որ զործ ունենք մի իրադրության հետ, որը ինքնին հետա-

բըրքիր լինելով, միաժամանակ նպաստում է հարցի պարզաբանմանը՝ ըստ էության:

Աղամյանի Օթելլոյի մասին միահամուռ համոզում չի եղել Ինչպես և դրեթե նրա ոչ մի գերը միայն հիացում կամ լոկ գատապարտություն չի առաջացրել: Խսոքը, անշուշտ, նրա մարմնավորած այն կերպարների մասին է, որոնք դերասանի խաղացանկի հիմնական մասն են կազմում: Այս հանգամանքը ևս խիստ բնութագրական է, Բայց դառնանք Օթելլոյին:

Ահա մի քանի քաղվածք:

Մեկը գրում է.

«Այդ դերում նա շատ ավելի թույլ էր, քան ուրիշ, յինչեւ այժմ խաղացած դերերում»<sup>4</sup>:

Իսկ մի ուրիշն ասում է.

Այդ դերում ռառանձնալես վառ կերպով ծավալվեց Աղամյանի փայլում տաղանդը, զրա համար էլ ներկայացումը առաջ բներեց ճշմարիտ ովերություն և դարձանքի զգացում»<sup>5</sup>:

Մեկը գրում է.

«Մեր նշանավոր սկզբերգակը մեղ լտովնց ընդհանուր առմամբ, ամրողական, ավարտված տիպ»<sup>6</sup>:

Ահա մի ուրիշի կարծիքը.

Աղամյանը Շներկայացնում է մեղ միանգամայն ավարտված և խորապես ճշմարտացի տիպ»<sup>7</sup>:

Մի ուրիշն էլ, ասես, միանում է նրան:

Նրա կատարումը աշխի էր ընկնում ռգեղարվեստական ճշմարտացիության և վերարտադրվող բնակորության ամրողությամբ»<sup>8</sup>:

Մի հոգվածագիր նշում է.

«Աղամյանի խաղից հետո հանդիսատեսի համար պարզ չէ, թե ով է Օթելլոն»<sup>9</sup>:

Մի ուրիշ բննադատ արձանագրում է.



Օրենս

Վ. Շեքսպիր. «Օթելո»



Այդ դերակատարումը «նրան հաջողվեց հասցնել մինչև կատարելության ամենաբարձր աստիճանի»<sup>10</sup>,

Ահա մի կտրուկ գնահատական.

«Աղամյանը Օթելլոյի դերում մեղ շրավարարեց»<sup>11</sup>,  
Մի ուրիշը հիմնավորում է նրա միտքը.

«Երբ դուք դիտում եք նրան Օթելլոյի դերում, տեսնում եք, թե ինչպես խանդից տանջվող, մոլնդնած մավրը վայրի գաղանի նման նետվում է մեկ դեպի Յագոն, մեկ դեպի Դեղդեմոնան, և դուք նրանց փոխարեն չեք ստրսափում, ինքն էլ ձեզ վրա ցնցող տաղավորություն չի դորժում, չի ճնշում իր հզորությամբ և ուժով՝ ուշ, դուք կարեկցում եք նրան որպես փոքրիկ, անօդնական երիխայի»<sup>12</sup>,

Ահա և հիացական գնահատական.

«Մեր առաջ տեսանք մեծագույն արտիստին՝ իր զոր տաղանդի ամրող փայլով, և զմայլված էինք, ճնշված նրա խաղից»<sup>13</sup>:

Կարելի է շարունակել մեջքերումները Ի՞նչ իմաստ, երբ զանազան արտահայտություններով, բայց նույն երկու տարրեր գնահատությունների շուրջն է դառնում բոլորի խոսքը: Մեկը դրական է գնահատում, մյուս՝ բացանական: Մեկը հաստատում է, մյուս՝ ժխտում: Մեկը ոշնչացնում, խպառ բացասում է դերասանի խալը, մյուսը սրանշանում է, բարձրացնում ու ինքն էլ խոնարհվում նրա առջև:

Ի՞նչ է այս, ճաշակների տարրերությունն, Անշուշտ: Սակայն ոչ միայն այդ: Տարածայնություններն ավելի խոր հիմք ունեն: Մեջքերվեցին միայն գնահատականները, մինչդեռ նրանց հիմքում նրանց հիմքում ընկած է կերպարի ըմբռնում, ըստ որում տարրեր, մեկը մյուսին հակառակ, մի դեպքում կառչած ավանդական տեսակետին, մյուս

գեղքում բոլորովին ազատ և անկաշկանդ անցյալի ավանդներից, Եվ դա է պատճառը, որ քննադատների մի մասը չի ընդունում, մյուս մասն էլ, ընդհակառակը, պաշտպանում է:

Ի՞նչ հետևողակից կարելի է անել:

Աղամյանն իր Օթելլոյով վերանայեց այդ կերպարի քեմական ավանդական ըմբռնումը, հակադրվեց նրան և առաջ քաշեց նոր, տարածված և արդեն ընդհանուր ճանաչում գտած լուսաբանությունից միանգամայն տարրեր մոտեցում: Աղամյանը այս դեպքում, ինչպես և իր մյուս գլխավոր դերերը կատարելիս, զնաց տրավիցիայի դեմ, զնաց արագիցիաները քանդելու ճանապարհով: Նա ոչ միայն բացասում էր հինը, այլև ստեղծում նորը, իրենը, այնպիսին, որ նրա կարծիքով ավելի ճիշտ էր արտահայտում Շեքսպիրին, ավելի մոտ էր մեծ գրամատուրգի ոգուն և, դրա հետ միաժամանակ, արտահայտում էր արտիստի ապրած դարաշրջանի մի ժանի էական գծերը:

\* \* \*

Սուարկությունների զգալի մասի համար ի վերջո չիմք է ծառայել դերասանի արտաքին տվյալների անհարիր լինելը Օթելլոյի դերին:

Կանդ առնենք այդ խնդրի վրա:

Աղամյանը, ինչպես ուրիշ անգամներ, այնպես էլ չիմա, Օթելլոյի դերը կատարելիս կերպարի արտաքին կողմը ենթարկել է նրա էությանը, նրա հոգեկան դրսեվորումներին: Եվ այս իմաստով նրա Օթելլոն, լուսաբանության հիմնական դժերի առումով, այն տարիների համար առաջադիմական մի երեսով էր:

Աղամյանի Օթելլոյի քննադատները, խոսքը հատկապես վերաբերում է 1887—1888 թվականների ելույթ-

ներին, մամուլում ընդգծել են նրա մարմնավորած կերպարի մի շարք էական կողմերը, ինքնուրույնությունը,

Գրականության մեջ նշվել է, որ «Աղամյանի գրիմք»<sup>14</sup>, Այս ճիշտ է և բաղված է ժամանակակիցների վկայություններից<sup>15</sup>, Սակայն հարցը սրանով սկսվում է միայն, Պատահական չէ, որ Սալվինիի անունն է հիշված և ոչ մեկ ուրիշի, որովհետև այդ ժամանակները Սալվինին համարվում էր աշխարհի լավագույն Օթելլոն: Եթե նկատի շառնվի մի հոգված, որտեղ քննադատը մի քանի մանրամասների նմանությունն է տեսնում Սալվինիի և Աղամյանի գերակատարումների միջև<sup>16</sup>, ապա բոլոր մնացած հոգվածագրերը, տեսած լինելով իտալական ողբերգակի պատկերած մավրո, բարձր դնահատելով հանդերձ, շեշտել, ընդգծել են Աղամյանի խաղի անկախությունը Սալվինիից և ուրիշ հանրահոչակ գերասաններից, նշելով նրա լուսաբանության ինքնատիպությունը:

Մի հոգվածագիր, որ հիշում է Այրա Օլրիշին Օթելոյի դերում, էռնեստո Ռոսսիին, ուստի դերասաններից Զարսկուն, ասում է, թե բոլորից բարձրը, իհարկե, Սալվինին էր, «դրամատիկական բեմի ընդհանուրի կողմից ճանաշված այդ արքան»: Ել, չնայած դրան, նա գրում է. «Իսկական տաղանդի ուժն այն է, որ նա արտիստին միշտ հնարավորություն է ընձեռում խաղի մեջ անթիվ ինքնատիպ գծեր գտնել և գրավել հանդիսատեսին: Պարոն Աղամյանը ոչ միայն շփշացրեց իտալական ողբերգություն մնացած հիշողությունները, այլև Օթելլո-Սալվինիին մտարերելով՝ դրանք նպաստավոր ծառայություն արեցին արտիստին: Հանդիսականը հնարավորություն ունեցավ իր աշխարհով համոզվելու, թէ ինչքան բազմակողմանի է պարոն Աղամյանի տաղանդը»:

Եվ հետո ավելացնում է.

«Օթելոյի բնավորության մեկնաբանման խնդրում, իր ականավոր զինակցից բավական տարրերվելով հանդիրձ, պարոն Աղամյանը ներկայացնում է մեզ կատարելապես ավարտված և խորատես ճշմարտացի մի տիպը<sup>17</sup>.

Ուրեմն, արձանագրված է ոչ միայն տարրերությունը Սալվինիից, այլև դերասանի բացարձակ հաջողությունը այդ տարրերության մեջ:

Այլ քննադատներ ևս նշում են, որ Աղամյանը իր խաղով ցուց տվեց, թե ինչպես խորացել է կերպարի ինքնուրուց ուսումնասիրության մեջ, որ այս անգամ էլ նրա տաղանդը դրսեռքեց ինքնատիպություն։ Մի ուրիշ դեպքում էլ նրան համեմատում են Բառնայի մարմնավորած Օթելոյի հետ և գերադասությունը տալիս են հայ ողբերգակին։ Իսկ մի քննադատ էլ ասում է, թե Աղամյանի խաղում հանդիպում են այնպիսի սքանչելի մանրամասներ, որոնք կարող էին շարժել ավագուցն Օթելոների նախանձը<sup>18</sup>:

Սակայն վերադառնանք կերպարի արտաքին ըմբռուման հարցին։

Մի զրուցի ժամանակ, տեղի ունեցած Օդեսայում՝ 1887-ին, գերասանին հարց են տալիս, թե նա Մակրեմի դերը խաղում է։ Աղամյանը պատասխանել է.

— Նրան ես պատկերացնում եմ առողջ ու հուժկութամարդ՝ ատլետի կազմվածքով, իսկ իմ արտաքինը հարմար չէ այդպիսի ֆիդուր պատկերելու համար։

Անմիջապես առարկել են.

— Լավ, իսկ Օթելոն մի՞թե հուժկու չէ, ատլետ չէ, բավական է հիշել նրա սպառնալիքները Կասիոյին՝ մենամարտի ժամանակ, այն տեսարանը, երբ նա խեղում է Ցագոյին և, վերջապես, նրա պատմածը մահմե-

դականի մասին, որին նա բռնել է կոկործից ու անշընչացրել:

### Ահա Աղամյանի բացատրությունը.

— Այս, Օթելլոն իբոք հուժկու է ու քաջ, բայց աւլիս չէ։ Օթելլոն հոգեկան ու բարոյական վսեմ հատկությունների տեր մարդ է։ Օթելլոն հանճարեղ զորավար է՝ հզոր, ուժեղ կամքով, իսկ ընդհանրապես բոլոր հանճարեղ զորավարները հայտնի էին ավելի շատ մտավոր, քան թե Ֆիզիկական հատկություններով. մավրիտանական ցեղը գերազանցորեն աշքի էր ընկնուամուրուր, բայց համաշափ կազմվածքով և ոչ-բարձր հասկով։ Եթե շեք հավատում՝ ճշտեցեք պատմությունից Հնագույն ժամանակներից սկսած մինչև նորագույն դարաշրջանի գրեթե բոլոր հանճարեղ զորավարները միշտհասակ են եղել — Սթիլան, Լենկիթեմուրը, Սուվորովը, Նապոլեոնը, Մոլթկին և ուրիշներ <sup>19</sup>,

Այս պատասխանը մի քանի տեսակետով ուշադրավ է։

Ամենից առաջ պարզվում է, որ Աղամյանի կատարյան մեջ պատահականություն չկա, ամեն ինչ մտածված է, խորապես կշռադատված։ Մի հանդամանք, որի վրա հատկապես մնջ ուշադրություն են դարձրել գերասանի ռուս քննադատները։

Երկրորդ. ինչպես ուրիշ գելքերում, այնպես էլ հիմա զարմացնում է հայ գերասանի հանրագիտական այդպիսի պատրաստությունը։

Երրորդ. նկատելի է գերասանի հակագրությունը նրանց, ովքեր զորավարների կերպարի նկատմամբ հանդիս են բերում արտաքին մոտեցում, մինչդեռ, նրանքարձիքով, այստեղ ևս վճռողը մտավորն է, գուցե նաև զարդացումը. բայց ավելի շատ՝ մտքի բնական սրությունը։

Կարելի՞ է վիճել Աղամյանի հետ հՀարկե Կարելի է իրական, փաստական ճշմարտացիությանը հակադրել բեմական ճշմարտացիությունը, թեկուղ նրա համար, որ հաղթանդամ արտաքինով դերասանի համար չբացառվի հանճարեղ զորավար, տվյալ դեպքում Օթելո Խաղալու հնարավորությունը։ Աղամյանի պնդումը պետք է ընդունել որպես բանավեճ՝ ուղղված ոչ այնքան հաղթանդամ Օթելոների դիմ, որքան ի պաշտպանություն՝ իր և իր նման արտաքին ուժեցող ողբերգակների Օթելո խաղալու իրավունքի։

Սակայն, ոչ միայն այդքանը։

Աղամյանի տվյած պատասխանի մեջ, այդ ամենի հետ, կա մի կետ, որը խիստ ուշագրավ է և ըստ էության սնդմ բացատրություն այն լուսարանության, որ գտել է մավրը հայ ողբերգակի կատարմամբ։

«Օթելոն, — ասում է նա, — հոգեկան և բարոյական վսեմ հատկությունների տեր մարդ է»։ Այստեղ ընության պադրված է Օթելոն Աղամյանի հասկացողությամբ։ Ուրեմն նրա Օթելոն հասկանալու, բացատրելու, հետեապես և գնահատելու համար պետք է հլակետ ընդումվի հենց սա, մանավանդ, որ թատերախոսականները դրա համար բավականաշափ հիմք են տալիս։ Ուրեմն, ոչ թե խիզախ և ազնիվ սրտի տեր մարդ Այդ պետք է, Դա կա խաղի մեջ։ Ոչ թե արևելցի։ Այդ պետք է։ Դա էլ կա խաղի մեջ։ Ոչ թե կասկածամիտ ու խանդու մարդ։ Դա էլ է, անշուշտ, պիտք Եվ դա է։ Կա նրա խաղի մեջ։ Բայց այդ բոլորին զեկավարողը։ Ժիտցնողը և ընթացքի մեջ զնողը հոգեկան և բարոյական վսեմ հատկություններն են, այս, դրանք և՛ այն ժամանակ, երբ նա սիրում է, և՛ այն պահերին, երբ կամկածում ու խանդում է, և՛ մըրեժինողրության ցասման մեջ, երբ ոնիր է գործում ու սպանում Դեղդեմոնային։

և, վերջապես, նաև այն ժամանակ, երբ ձեռք է բարձրացնում իր վրա։ Մի խոսքով, միշտ էլ, ըստ Աղամյանի, Օթելլոյին և մինչև քառու և քառուի պահին մղուավողը բարոյական բարձր հատկություններն են։

\* \* \*

Ժամանակակիցները թողել են Օթելո-Աղամյանի արտաքին նկարագրությունը։ Բացի այդ, պահպանվել են նաև լուսանկարներ։ Նրա Օթելլոն այնքան էլ տարիքով չէ, ինչպես հուշում է ողբերգությունը։ Ամենաշատը՝ քառասուն, բայց ոչ ավելի։ Սրա մասին հետո, որովհետեւ սա ես, մեր կարծիքով, խորապես մտածված է եղել։ Աղամյանի Օթելլոն արար է, զտարյուն արար, Դեմքը ոչ թե թուխ է, այլ համարյա բոլորովին սև երևում է, թե Աղամյանը որքան լավ է իմացել շեքսպիրյան դարաշրջանի հետ կապված շատ պատկերացումներ։ Մայր բառը այն ժամանակներում գործածվել է «սեւամորթ» մարդ իմաստով։ Հնագույն բալլագներից հայտնի է, որ Շեքսպիրի օրով և հետագայում, բավական երկար ժամանակներ, Օթելոյին ներկայացրել են սև, ոչ թուխ կամ բրոնզագույն։ Սկզ բրոնզագույնի է փոխել էղմումդ Քինը<sup>20</sup>, Անգլիական ողբերգուն դրա համար ուներ երկու պատճառ։ Նրա կարծիքով իր բոլոր նախորդները՝ Բետոներմանը, Բարբին, Գարիկը, Քեմբլը, որքան էլ մեծ արտիստներ, նեզոր էին ներկայացնուամ, մինչդեռ Օթելլոն մավր է և, նրա համոզումով, կովկասյան ցեղերի հետնորդներից։ Բացի այդ, փոխելով գույնը՝ նա կամնենում էր ասել, որ Օթելոյի ապրուաների մեջ ուինչ բացառիկ չկա, որ այդ զգացումները կարող են հատուկ լինել շատ ու շատ մարդկանց<sup>21</sup>, Գլուխսրգանգրախիտ, գեմքը լայն այտոսկրներով, բեղ ու մոռուրով, կրակոտ աշքերով, հաստ և մսոտ շուրթերով։

որոնց տակից ժապավիս երևում էր ճերմակ ատամնա-  
շարը <sup>22</sup>, ժամանակակիցների ասելով, նա Օթելոյին  
չէր հաղորդել արտաքին հրապույր Պիետում ասված  
խոսքերը եթե շրջենք՝ նա ավելի գեղ էր, քան գեղեցիկ.  
Ի միջի այլոց նկատենք, որ Պուշկինն էլ Օթելոյին գե-  
ղեցիկ չէր համարում, ասում էր՝ «Ճերմակ այլանդակ  
նեգր», երբ Աղամյանը Օթելոյի դերով 1888-ին հան-  
դես է եկել Մոսկվայում, մի քննադատ զրել է. «Չի կա-  
ռելի պ. Աղամյանի գրիմավորման մտածված լինելու:  
Վրա ուշադրություն շդարձնել: Մեր կարծիքով նա շատ  
ավելի հաջող էր գրիմավորվել, քան, օրինակ, պ. Լենո-  
կին նույն գերուած Օթելո—պ. Աղամյանը ստացվեց ա-  
վելի ռայլանդակ էություն», քան վերջինը, որ հայտնը-  
վեց որպես գեղեցկատես արարք <sup>23</sup>: Բվում է, թե Աղամ-  
յանը մտածված է այդպիսի արտաքին ընտրել: Ըստ  
երևույթին այն նպատակով, որ ասի, թե մարդու մնչ  
չականը ներքին գեղեցկությունն է և ոչ թե արտաքին,  
այսինքն՝ հենց այն, ինչ որ կարողացավ, ի վերջո, այն-  
պիս բարձր գնահատել միայն Դեղդեմոնան:

Նկատենք, որ Շեքսպիրը ոչ մի հիմք չի տալիս  
մտածելու, թե նա Օթելոյին գեղեցիկ է պատկերացրել:  
Հակառակը հաստատող վկայություններ կան, թեկուզ  
այն, որ ոչ Բրաբանցիոն, ոչ Էլ Յագոն ոչ մի կերպ չեն  
դարողանում հասկանալ Դեղդեմոնայի վարմումքը <sup>24</sup>:  
Մինչդեռ Զինտեխի նովելում պարզ ասված է Օթելոյի  
գեղեցկության մասին. «Ժամանակով Վենետիկում ապ-  
րում էր մի մամր, շատ քաշ և գեղեցիկ մի մարդք <sup>25</sup>,  
Սրանից չի կարելի, իհարկե, եզրակացնել, թե գեղեցիկ  
Օթելը ներկայացնող դերասանները, ինչպես Մունե-  
Սյուլի, Մաջի, Լենսկի, Փափազյան, Օստուժե, Մորդ-  
վինով, Տիսապսակ և ուրիշներ, ավելի մոտ են նովելին,  
քան ողբերգությանը: Բայց որ Աղամյանը իր խաղը

կառուցելով տգեղ արտաքին, դեղեցիկ ներքին սկզբ-  
ռոմնքի վրա, շեշտակի հեռացել է Զինտիոյից և մերձե-  
ցել Շեքսպիրին՝ անկասկած է։ Այսինքն՝ դերապատկերի  
կառուցման հիմքը դերըմբռնումն է, այն գաղափարնե-  
րից մեկը, որ դրված է ողբերգության մեջ։

Տեղին կլինի երեխ մի զուգահեռ անցկացնել, Յա-  
ռոյին միշտ պատկերացրել են նրա շար ներքինը դրսե-  
նորող արտաքինով։ Այդպես էր խաղում, օրինակ Մի-  
այել Մանվելյանը և նրանից առաջ շատ ուրիշներ։  
Մինչդեռ Զանանը մեր թատրոնում, Վասածեն՝ վրացա-  
կանում այլ ճանապարհով գնացին։ Նրանց Յագոն ար-  
տաքին հրապուցրից զուրկ չէ, նվ սա է՛լ ավելի ճիշտ է  
ու մոտ Շեքսպիրին, ինչպես և այն հակադրության  
սկզբունքին, որով Աղամյանը խաղում էր Օթելո։ Նախ-  
այդ անհրաժեշտ էր թեկուզ նրա համար, որ արդարաց-  
վի այն վստահությունը, որով վերաբերվում են Օթելոն  
և Դիզգեմոննան Յագոյին։ Երկրորդ՝ դարձյալ արտաքին  
և ներքին հակադրության նույն սկզբունքը, — հոգին  
շարագործի՝ իսկ դեմքը գրավիլ ու տրամադրող նթե  
Աղամյանի սկզբունքը տրամաբանական զարգացման  
հնիքարկենք, պետք է մտածենք, որ ողբերգակի պատ-  
կերացումով Յագոն արտաքինով լինելու էր Օթելոյի  
հակապատկերը, եթե ոչ գեղեցիկ՝ գոնե գրավիլ։ Մինչ-  
դեռ այն ժամանակների տրագիցիան թելադրում էր  
Յագոյի՝ շարագործի արտաքին նկարագիր։ Հայտնի է,  
որ Աղամյանը, մի սրտագին զրուցի ժամանակ, ցան-  
կություն է հայտնել Յագոյի դերը խաղալու, առնել է, որ  
նթե Օթելոյի մի կարգին դերակատար գտնվի, ինքը  
միրով հանձն կառնի Յագոյի դերը։ Արդյոք նրա այս  
ցանկությունը նպատակ չունե՞ր վերանայել քարացած  
տրագիցիան, մանավանդ, որ նրա սխալ է ությունը անդ-

բադառնում է, բնականարար, Օթելլոյի դերակատարի բեմական հաջողության վրա ևս <sup>26</sup>:

Օթելլո-Ազամյանը Վենետիկում տեղական տարագով է, միայն ապարոշը և զենքերն էին արևելյան <sup>27</sup>. իսկ կղզում՝ արևելյան զգեստով է <sup>28</sup>:

Ահա սրա վրա էլ կամենում ենք կանգ առնել:

Մեզ զրադեցնողը Օթելլոյի զգեստի պատմական հարազատության հարցը չէ: Հարցի այդ կողմը պարզ է, մանավանդ որ հայտնի է, թե Ազամյանը և ուրիշների, և՛ իր նկատմամբ բծախնդրության հասնող պահանջկատություն էր հանդես բերում, լընդունելով ոչ մի շեղում. լինելով զգեստի, պատմականորեն ճշգրտված վերաբարդության կողմնակից:

Երկու փաստ:

Ազամյանի մոտ, Օգեսայում, հավաքված են եղել մի շարք արվեստագետներ — դերասաններ, նկարիչներ, գրողներ, ինչպես նաև ժուռնալիստներ և այլն: Աշխատություններից խոսք է բացվում «Օթելլոյի» վերջին ներկայացման մասին: «Երբ դերասան ընկերներից մեկը, — պատմում է «Օգեսսկի» վեստնիկի» աշխատակիցը, — մի դիտողություն արեց Օթելլոյի կոստյումի մասին: Ազամյանն անմիջապես իր գրադարանից հանեց մի ֆրանսերեն հին մենագրություն՝ վենետիկյան հանրապետության մասին, որտեղ այդ ժամանակվա զինվորականների կոստյումները բավական մանրամասն նկարագրված էին» <sup>29</sup>:

Ահա և մյուս փաստը:

«Թեոդոսիայում, — գրում է Ազամյանը՝ Շահբաղյանին ուղղած նամակում, — երբ բենեֆիս տվի, Այվազովսկու պես շատ բան չհավանող մարդը, տեսնելով իմ Օթելոն մի ողորմելի բեմի վրա, եկավ հագնվելու սենյակս, ճակատիցս համբուրեց և ասաց, որ բացի

իսաղիցս, ԿՈՍՏԻՕՄ-իս պատմական ճշտությունը գովելի  
և զարմանալի է»<sup>30</sup>:

Աղամյանի Օթելլոն թեև մավր, բայց կրթված ու  
զարդացած մարդ էր և ոչ թե հետամնաց մի արևելցի,  
որ դիրքի ու աստիճանի է հասնէ՝ իր մեջ ամբարված  
վայրի քաջության շնորհիվ Եթե նա զորավար է, որի  
հետ հաշվի են նստում, ապա դա, իր իսկ Օթելլոյի  
կարծիքով, նրանից է, որ ինքը ոչ մի տարրերություն  
չի դնում իր և վենետիկցիների միջև, այն համոզման  
լինելով, որ ինչպես նրանք, այնպես էլ ինքը ազնվո-  
րեն ծառայում են Վենետիկի հանրապետությանը: Այդ  
սկառագում էլ Վենետիկում նա բոլորի նման է հագնը-  
վում: Նա չի հիշում, որ ինքը մավր է, ոչ էլ ամաշում է  
դրա համար: Նա չի էլ մտածում դրա մասին: Եվ եթե  
հիշում է իր հայրենիքը, իր ցեղակիցներին, ապա զեր-  
մությամբ, այն սիրով, որով, ի տարրերություն վենե-  
տիկցիների, ականջին օղեր է կրում, բազուկներին՝ ա-  
ռարանջան:

Ընդգծենք մի հանգամանք:

Եատ գերասաններ, այդ թվում և մեծ համբավի,  
Օթելլոյին ներկայացրել են որպես մի մարդու, որը թեև  
ընությամբ բարի ու ազնիվ, բայց մտածողությամբ  
սահմանափակ մի ռազմիկ է: Աղամյանի Օթելլոյի  
առավելությունը այս կարգի գերակատարների նկատ-  
մամբ այն է, որ նա մավրին ներկայացնում էր որպես  
զորեղ մտքի տեր մի մարդու Նրա Օթելլոն նույնպես  
բարի է ու ազնիվ, երեխայի շափ ոյսուահավատ, բայց  
ոչ կիսավայրենիի մեկը, արևելյան հետամնացության  
տիպար, այլ, ընդհակառակը, կուլտուրայի միջամտու-  
թյամբ մշակված մտավոր նկարագրի տեր մի անհա-  
ռականություն:

Աղամյանի լուսաբանության հիմնակետերից է սա:

օթե պատահել են քննադատներ, որոնք չեն ընդունել Աղամյանի Օթելոն, առարկել են, քննադատեալակա դրա մի պատճառն էլ այն է, որ դերասանի մոտեցումը նոր լինելով, չէր համընկնում տրադիցիոն պատկերացմանը, որից կառշած՝ նրա խաղը շախչախելու փորձեր են կատարվել:

Նույնը շի՞ կատարվել արդյոք Լենսկու հետ, որը 1888-ին փորձեց Օթելոյի դերը խաղալ, ըստ որուն ընտրելով այն ճանապարհը, որի վրա կանգնած էր նրա վաղեմի ծանոթը՝ Աղամյանը: Պահպանված բոլոր վկալությունների մեջ կենսկին խիստ քննադատության և ենթարկվել: Ուսումնասիրողներն ասում են, թե ոչ մի հիմք չկա պնդելու, թե նա հաջողությամբ է Օթելոյի դերը խաղացել, մանավանդ, որ դերասանը, ինչպես պատմում են, ներկայացումը վերջացրել է մի կերպ հաղիվ, տեսնելով իր անհաջողությունը հասարակության մեջ: Միաժամանակ նրանք գտնում են, որ ձախողման պատճառը կերպարի նոր մեկնությունն էր<sup>31</sup>. Օրինակ, Ս. Վասիլեսը, որ, դերասանի ժամանակակիցը լինելով, գովել է կենսկուն տոփոտ և հնշուասեր Օթելո շխաղալու համար, անբավականություն է հայտնել, որ նրա ստեղծած կերպարում բացակայում է գեներալգորավարի հոյակապությունը և ցավ հայտնել, որ նրա Օթելոն թվում է խաղաղ, հեղ, ազնիվ մարդ<sup>32</sup>:

Երկու դերասանների ճակատագիրը Օթելոյի դերուն նույնն է, այն տարրերությամբ միայն, որ կենսկին միայն քննադատվել է, որի պատճառով այլևս չի խաղացել այդ դերը, իսկ Աղամյանը որքան քննադատողներ է ունեցել, նույնքան, ճիշտ կլինի ասել ավելյած աթիվ, պաշտպաններ և հիացողներ, ու երիտասարդական կորովով խաղացել է այդ դերը երկար տարիներ:

Մի քննադատ 1887-ին Օդեսայից հողված է ուղարկել Մոսկվա «Տեսատրալնի միրոկին»։ Հոդվածը կոչվում է «Թատերական Օդեսա»։ Այն ամբողջապես նվիրված է Աղամյանի գաստրոլներին։ Կարճ, մի պարբերությամբ դրական է գնահատված Համլետը, իսկ հոդվածի մնացած մասը նվիրված է Օթելլոյի բեմական կերպարի գնահատությանը։ Տեղ-տեղ դրական գնահատելով կառարումը, ընդհանուր առմամբ քննադատում է։ Ի գեպ, նա արտահայտում է այն միտքը, թե Աղամյանի արտաքին տվյալները շեն համապատասխանում Օթելլոյի դերին են, իր տեսակետից մավրին բնութագրելիս, նախ ընդգծում է նրա քաջ զինվոր լինելը և ապա որակում նրան որպես «քաղաքակրթական հատկություններից զուրկ սպա»<sup>23</sup>։ Մի՛թե պարզ չէ, որ այս հայեցակետն «մեցող քննադատը շէր կարող զո՞հ մնալ Աղամյանի խաղից և պետք է դնար իր համար խորթ մեկնարանությունը ժխտելու ճանապարհով»։

Աղամյանի կատարումը շատ թելերով կապված է նզել իր ժամանակի հետ։ Նույր ու մեծ արվեստագետ լինելով՝ նա շէր կարող Օթելլո խաղալ այնպես, ի միշտ այլոց, եթե խաղում էր, ուրեմն ասելիք ուներ։ Ոչ միայն իր հիմնական թեմայի իմաստով, այլ ավելի կոնկրետ, երկրի քաղաքական իրադրության պայմանների հետ կապված։ Միշտ պետք է հիշել, որ Աղամյանը իր Օթելլոն, ինչպես և Համլետը, Ուրիհելը և այլ կերպարներ, կատարել է 80-ական թվականների կեսերին ու վերջերին, երբ Ռուսաստանում մոլեգնում էր ռեակցիան։ Աղամյանը տեսնում էր, թե ինչ է կատարվում շատրքն ընդհանրապես, թե ինչպես ամեն մի ազատագրական ձդում ճնշվում և հալածվում է, տեսնում էր ճամանավորապես, թե ինչպիսի հետապնդման են ենթակա մանր ազգությունները՝ հրեաները, հայերը, վրա-

ցիները, աղբրեշտանցիները և այլ ժողովուրդներ: Եվ այս  
հանգամանքը, եթե ոչ ուղղակի, ապա անուղղակի, շեր  
կարող ազդեցություն շունենալ մի այնպիսի դերասանի  
վրա, ինչպիսին Աղամյանն էր: Եթե նա Օթելոյին  
ներկայացնում էր ոչ թե իրոն վայրի մարդ, որի բարու-  
թյունն ու ազնվությունը շրջապատն օգտագործում է  
նրան ողբերգական կացության մեջ դնելու համար,  
այլ մարդ, որ իր զարգացմամբ, մտքի փայլով, ընդու-  
նակություններով իր շրջապատում ոչ ոքի շի զիշում:  
Եվ եթե, այնուամենայնիվ, տեղի է ունենում այն, ինչ  
չպիտի տեղի ունենար, ապա նրա համար, որ կյանքի  
հասարակական կառուցվածքը անարդար էր: Դրա համար  
էլ այն, ինչ ասված է Զմշկյանի Օթելոյի կապակցու-  
թյամբ, որպես ենթադրություն, թեկուղեւ հավանական:  
միանգամայն ճիշտ կլինի տարածել Աղամյանի Օթել-  
ոյի վրա, այն է՝ ճանաշել բոլորի մարդկային իրա-  
վունքները, անկախ նրանց աղզային տարբերություն-  
ներից <sup>34:</sup>

#### Այժմ դառնանք տարիքին:

Պատկերացնելով Օթելոյին հիսումից անց, շաս-  
դերակատարների մոտ սիրո բնությը, ակամայից կա՛-  
գիտակցարար, փոխվել է, ձեռք է բերել հայրական-  
երանգ: Այդպես էր խաղում, համենայն դեպս, իր կյան-  
քի վերջին տարիներին, Հովհաննես Արելյանը: Դրան-  
էր մոտենում նաև Օստուժենի նշանավոր խաղը, որի  
մասին գրող քննադատներն ասում են, թե նրա վերա-  
բերմունքի մեջ դեպի Դեղոքմոնան կար խրատող ու-  
սուցչի շեշտու Հարց է առաջ գալիս, թե դրանից հետո  
ինչո՞ւ զարմանալ կամ հիանալ այդ սիրո մաքրության  
վրա: Այդպես էլ պետք է լինի: Այո, ծնողական սեր,  
ընթույշ, շերմ, դաստիարակի սեր դեպի սանը, հոգա-  
տար, բայց ոչ ամուսնու, ոչ այն զգացումներով առյե-

յուն, որով սիրող ամուսինը կվերաբերվի կնոջը, ինչպես խաղում է Վահրամ Փափազյանը։ Աղամյանը, խաղալով հազիվ քառասունը բոլորած տղամարդու, — իսկ մի քննաղատի ասելով նրա Օթելլոն երեսունից-քառասուն տարիքն ուներ <sup>35</sup>, — հանդիսատեսին մղում էր գեղի հիացած զարմանք, որովհետև իր վերաբերմունքի մեջ դեպի Դեղդեմոնան նա դնում էր ոչ թե՝ կիրք, ոչ թե տղամարդու մղում դեպի կինը, այլ մաքուր, անրիծ սեր:

Երկու Օթելլո, երկու սեր:

Փափազյանի մավրը, հակառակ Աղամյանի մոտեցան, գեղեցիկ է, լի արտաքին հրապույրով և հմայքով, կազմվածքը կառուցիկ, ասես քո առաջ կանգնած է մի սքանչելի քանդակ՝ ամբողջական, ձուլ, ավարտուն։ Օթելլո—Փափազյանն էլ հիացած է Դեղդեմոնայով, բայց նրա սերը կրակուտ է, իր բոլոր թրթումների մեջ բուռն։ Օթելլո—Փափազյանի սերը կյանքով լի է, զգայնության մի թեթև երանգով։ Օթելլո—Աղամյանի սերը պոետական շնչով է տոգորված։ Ինչպես միշտ և բոլոր դեպքերում, Փափազյանի Դեղդեմոնան շքնաղ է, ավելին, գեղեցկուհի է։ Երկու գեղեցկություն ձգտել ու գտել են իրար։ Փափազյանի խաղի լույսի տակ Դեղդեմոնային իր շըրջապատից վեր բարձրացնողն այն է, որ հաղթահարելով ցեղալին նախապաշարումը՝ սիրել ու ամուսնացել է սեամորթի հետ։ Իսկ Աղամյանի խաղի լույսի տակ Դեղդեմոնան կարող էր և շատ էլ գեղեցիկ լինել։ Օթելլո—Աղամյանը արտաքին գրավչություն չի որոնել։ Որոնել է մարդ։ Որոնել է հոգեկան արժանիքներ։ Նըրանց միացնողը ներքին հարստությունն է՝ հոգեկան և սարույական վսեմ հատկությունները։ Եվ Աղամյանի Դեղդեմոնայի վարքագծի խիզախ դրանորումն այն է, որ նա, վենետիկյան բարձրատոհմիկ մի աղջիկ, բացի այն,

որ հաղթահարեց ցեղային նախապաշարումը՝ ընտրեց Օթելոյին որպես կյանքի ընկեր՝ հմայված նրա մարդկային նկարագրով։ Նա Օթելոյի մեջ տեսավ իսկական մարդուն։ Եվ, ըստ պիեսի էլ, մի՞թե այդպես չէ։ չէ՞ որ մավրը սենատի տեսարանում ասում է։ Նա ինձ սիրեց բաշածու տառապանքների համար, իսկ ես նրան՝ որովհետեւ հասկացավ ու կարեկցեց ինձ։ Ահա թե ինչու ժամանակակիցները Օթելո—Ազամյանի սիրո մեջ ոչ այնքան ուեալիղմ են նշմարել, որքան ուոմանտիկա, պատպանեկան հափշտակության շափեր ընդունող սիրահարվածությունն, երբ սիրո առարկայիդ մեջ ես կենարունացնուած ամեն ինչ, ամբողջ աշխարհը։ Կա սեր, կա այդ աշխարհը։ Զկա սեր՝ շկա և աշխարհը։ Դա սովորական սեր չէ։ այլ երկրպագություն մարդու ներքին գնդեցկությունների առջև։

Ահա ինչ են ասում ժամանակակիցները։  
«Ազամյան—Օթելոն իր սերն արտահայտում էր այնպես, որ Դեղքեմոնային փաղաքշելիս նրբեմն չէր հպվուանրան, այլ վառվող աշքերով նայում էր նրան ու ձեռքերով նուրր շոշափուած նրա շուրջը տարածված օդը, կարծես քնքշորեն ուրվագծում էր օդում կնոջ զլուխն ու իրանը»<sup>36</sup>։

Այստեղ Ազամյանը մոտ էր Ալբա Օլրիշին։ Ռուբննադատները Օլրիշին և Ռոսսիին հակառակ են միմյանց։ Հակառակ Ռոսսիին, Օլրիշի խաղումն, ո՛չ սենատի տեսարանում, ո՛չ Կիպրոսում, ասում են նրանց, զգայնութության նշույլ իսկ շկար Դեղքեմոնային հանդիպելիունա մերձենում էր նրան, ինչպես սրբության սերը ներթափանցել էր նրա բոլոր շարժումների մեջ, գրգանքը, փաղաքշանքը, երջանկությունը նրա աշքերումն էր, ձայնի մեջ»<sup>37</sup>։

Այսպիսով, նա՝ Ազամյան-Օթելոն, կամենում է,

ընդդժել սիրո անաղարտությունը, և այդ երիտասարդ տարիքին, որի համար կարծես թե բնորոշ պետք է լինեին սիրո ավելի բուռն, կրօռու արտահայտություններ:

Ըստ Աղամյանի խաղի՝ Դեզդեմոնան Օթելոյի միայն աերը չէ, այլ նաև պատիվը, հավատը, մի խոսքով՝ բարոյական այն բոլոր հասկացողությունները, որոնք մարդկային կեցությունը հասցնում են երջանկության հատարյալ ներդաշնակության:

Այս շատ կարևոր է:

Եթե շընդգրավիլի այդ ներդաշնակությունը, ապա այլեւ ինչ տույավորությունն նրա խախտումից:

Այս առնշությամբ թերևս անհետաքրթիր շինի մտառերել ուրիշ Օթելոների, այնպիսիններին, որոնք ժամանակակից են եղել Աղամյանին, նրա պես եկել են Ռուսաստան, խաղացել զրեթե նույն տարիներին, նույն թեմներում։ Այս կարգի համեմատությունը նախ պատմականորեն ավելի հիմնավորված է թվում մեզ և ապա հնարավորություն կտա ողբերգակի արժանիքները տեսնել նրա ապրած կճնդանի միջավայրում։

Ահա այն ժամանակ աշխարհով մեկ անուն հանած Օթելոները. Թոմազո Սալվինի, Այրա Օլրիշ, Լյուդվիգ Բառնայ, Էռնեստո Ռոսսի:

Կանգ առնենք վերջինի վրա։

Նախ՝ մի թեթև շեղում դեպի պատմության խորշը։

Օթելոյի անդրանիկ դերակատարը եղել է Ռիշարդ Աերբեչը, Էրկրորդը՝ Ֆիլդը, որին այդ դերը, ինչպես պարզված է, Գլորուս թատրոնի դեկավարը զիշել է իր յահից մի փոքր առաջ։

Թերբեչը և Ֆիլդը նույն դերը տարրեր ձևով են կատարել։

Պահպանված մի հիշատակության մեջ Թերբեչի Օթել-

կոն որակված է «վշտացած մավր»։ Եղբակացություն։ Իր խաղի ժամանակ Թերթեջը շեշտը դրած է եղել վշտահարության, այսինքն՝ այն զգացման վրա, որ առաջ է ուրեմն խանդր նրա մեջ։

Ֆիլդը, ընդհակառակը, շեշտելիս է եղել խանդը։

Ֆիլդյան մեկնարանությունը, շատ հնարավոր է՝ անկախ գերասանի ցանկությունից, շեքսպիրյան գործի իմաստը նվազեցնում է, ողբերգությունը մզելով դեպի անձնական դրամայի ոլորտները։ Ըստ էության դա նշանակում է հեռանալ Շեքսպիրից և մոտենալ, ավելի ըստույզ արտահայտվենք՝ իշնել մինչև Զինտոյի նովելի մակարդակը։

Թերթեջի ըմբռնումը, հակառակը, ավելի խորն է ընդգրրկում երևույթը, բացում, ընդլայնում երկի փակագծերը՝ նյութը մզելով դեպի ընդհանրացում ։

Այս բաժանումը, իհարկե, անվերապահ ընդունել չի կարելի, որովհետև մեկից-մյուսի մեջ անցել են տարրեր գծեր. և այդ փոխներթափանցմամբ շատ անգամ խառնվել և կորել են երկու մոտեցման սահմանները։

Ֆիլդյան մեկնարանությունը շատ կողմնակիցներ ուներ ծվ հանդիսատեսը այն ոգով էր դաստիարակվելի ռասնամյակների ընթացքում, որ Օթելլո նայելիս պետք է վկա լինի ոչ թե «Վենետիկի մավրի», այլ «վայրի մավրի» ապրումներին, այնքան կատաղի, որ շուրջը առ սարսափ է տարածում։ Դրա դեմ վրդովված արտահայտվել է ուսաւական մամուլը՝ «Ռուսակին վեղումուտիք պարբերականը ասում է, թե քանի որ շատերը, և նույնիսկ նշանավոր դերասաններ, այդ ճանապարհով են գընացել, առաջացել է վայրի և հեշտասեր Օթելլոյի բնական տրադիցիա և տայնքան ուժեղ է՝ այդ տրադիցիան, որ ներկայումս Ռուսակի և Բառնայի նման ականավոր գերասաններն անգամ խաղում են հենց այդպես։ Ահա

այդ միտքը հաստատող մի օրինակ ևս. «Օթելոյի կատաղության տեսարանը Բուտսի ներկայացման մեջ զարգացրեց բոլորին, Օթելոն վերափոխվեց վայրի դադանի, նա մռնչում էր և մեր առաջ կրնացնում ատամները»<sup>39</sup>; Այս արձանագրելուց հետո քննադատն ավելացնում է. «Բայց շնայած այդ ամբողջ շափուզանցությանը, էղիլին Բուտսը էնտուզիաստների պակաս չէր զգում, և այդ նորի երկրպագուները նրան բոլոր արտիստներից բարձր էին դասում»<sup>40</sup>։

Ահա այդ հասարակության առաջ պետք է հանդես գար Աղամյանը։ Ի՞նչ հղոր տաղանդ էր պետք այդ նախապաշարումները հաղթահարելու համար։

Ինչպես էր խաղում Ռոսսին։

Ռուա շեքսպիրագետ Ստորոժենկոն գտնում էր, որ տիխնիկական առումով Ռոսսիի խաղն Օթելոյի դերում, իհարկե, ղարմացնում էր բազմաթիվ, վարպետորեն պատկերված գծերով, բայց այդ գծերը ավելի ևս նկատելի էին դարձնում մտահղացման և դերի հիմնական ոգու անճշտությունը<sup>41</sup>։

Քննադատի հաստատում համոզմամբ, Ռոսսիի սըխալն այն է, որ նա ամենուրեք առաջին տեղն է տվել ցեղային արտանշաններին, Օթելոյի աֆրիկյան խառնքվածքին և մավրին պատկերել է ոչ միայն կրոտ, այլև հեշտասեր մարդ։ Նույն քննադատը հիմնավորելով իր տուարկությունը՝ ասում է, որ թեպետ Օթելոն կրոտությամբ էր սիրում կնոջը, բայց տվյալ դեպքում առաջին տեղը տալ մարմնականին, մի բան, որ չի համասղատասխանում Օթելոյի ոչ հասակին, ոչ նրա հոգու իդեալական բնույթին, նշանակում է դեմ գնալ Շեքսպիրի մըտահղացմանը։ Օթելոյի սիրո բնավորության միակողմանի լուաարանությունից, բնականարար, բխել է նրա խանդի միակողմանի լուաարանությունը։ Թանի որ ար-

ոիստը Օթելլոյի սնրը դիտել է որպես զգայական սեր, բնականաբար, Օթելլոյի խանդին էլ պետք է բացառապես զգայական շունչ հաղորդի, մինչդեռ իրականում Օթելլոյի թե՛ սիրո և թե՛ խանդի մեջ գերակշռում է իդեալական տարրը: Վիրավորանքի զգացում, անամոք վիշտ՝ փշրված իդեալի համար, վերջապես՝ ոտնահարված պառիվ—ահա թե՞ որն էր, քննադատի կարծիքով, Օթելլոյի ռարոյական տանջանքների աղբյուրը, որ նրան հասցրին կնոշ սպանությանը<sup>42</sup>:

Թե այդ մեկնարանությունը որքան հեռու էր Շեքսպիրց՝ առավել ցայտուն կերպով երևում է Բառնայի խարից: Վերջինս այդ մեկնության ծայրահեղ արտահայտումներից է:

Ահա թե ինչպես է նրա մասին արտահայտվել Շնորհյան վրեմյային քննադատը, երբ գերմանացի ողբերգուն Օթելլոյի դերով հանդես է եկել Ալեքսանդրինյան ժատրոնում: Քննադատն ասում է, թե դերասանն առաջին արարում ցուց տվեց, որ «Նրա Օթելլոն կենդանի է», երկրորդ արարվածում «զգացնել տվեց, թե որքան դաժան է այդ կենդանին»: Վերջին արարում կա մի պահ, երբ Շնորհյանում է հովազի, և նվազ շափով մարդ է: Քննադատն ասում է, թե երբ Բառնայ—Օթելլոն Դեզեմբեռնային հասցրեց ուշագնացության, էմիլայի վրա գոռգոռուց ու գնաց, վարագույրն իշնելուց հետո ու ոք շհամարձակվեց ծափ տալ ո՛չ պարտերում, ո՛չ վերնահարկում: Շնորա Օթելլոն ահռելի է,— շարունակում է հույն քննադատը,— և ես մնացել եմ զարմացած, թե՝ շարրորդ արարվածում, երբ այդ արյունաբրու անասունը զարկում է իր փխրուն և հրաշալի դոհի երեսին, թե՝ այդպես ինչպե՞ս ոչ մի հեռադիտակ բեմ շնետվեց»:

Այդ բոլորի բացատրությունը քննադատությունը տարիս է հետեւյալ ձևով. «Բոլոր հոլակավոր դերասաննեն-

ուը, — զրում է նա, — շանացել են բացատրել, ընդգծել և  
առաջ քաշել, Օթելլոյին պատկերացնելիս, մարդկային  
հպարտությունը, սերը և խանդը աֆրիկական կենդանու,  
մեր, Հյուդվիդ Բառնայը հանձն առավ խնդիրը լուծե,  
միանգամայն հակառակ իմաստով. նա առաջ քաշեց  
թույլ շափով կուլտուրականացած մարդու մեջ աֆրիկա-  
կան գաղանի հաղթանակը»<sup>43</sup>:

Հիշենք և մի այլ գերակատարի՝ Սալվինիին, որը բո-  
ւորովին այլ, ավելի ճիշտ՝ հակառակ ճանապարհով է  
գնացել, քան վերջինից յալ երկուաւը. Ստանիսլավսկին Սալ-  
վինիի Օթելլոն տեսնելուց հետո այսպես է արտահայտ-  
վել. «Օթելլո—Սալվինին մղնումնենտ է, հուշարձան, որ  
իր մեջ մարմնացնում է ինչ-որ անփոփոխ օրենք»<sup>44</sup>:

Սակայն Սալվինիի Օթելլոն իր բոլոր հաղթական ա-  
ռավելություններով հանդերձ՝ ուներ մի խոցելի կողմ:

Ստորոտենկոն, որին հիշեցինք Ռոսսիի կապակցու-  
թյամբ, գտնում է, որ վերջինիս համեմատությամբ Սալ-  
վինիին հարկավոր է տալ առավելություն, որովհետե-  
ղա մի քայլ էր գեպի առաջ՝ կերպարը շեքսպիրյան ո-  
գով մեկնարաննելու ճանապարհին. Չնայած դրան, ուու-  
ժննադատը անբավականության առիթ ուներ: «Սալվի-  
նին ևս,— գրում է նա, — մեր տեսած Օթելլոներից լա-  
վագույնը, լիազես խորամուխ շեղավ Օթելլոյի բարդ  
բնույթին, նրա հոգու իդեալական կառուցվածքը շտա-  
լով ամբողջականությամբ: Զկա Օթելլո առանց բուռն  
խառնվածքի, ինչպես և շկա Օթելլո՝ առանց հոգու իդեա-  
լական կառուցվածքի, որը և կազմում է Շեքսպիրի Օթե-  
լոյի գլխավոր տարրերությունը Չինտիոյի նովելից»<sup>45</sup>:

Միայն Ստորոտենկոն չէր այդ տապակորության: Ահա  
մի ուրիշ քննադատ, որը Մունե-Սյուլիի խաղն այդ գե-  
րում նայելիս վերջիշել է Սալվինիի Օթելլոն և արել գրե-  
թե նույն դիտողությունը:

Սալվինիի Օթելլոն Կուգելի կարծիքով պլեբեյ է։ Դա մի սրանչելի, բայց ոչ բարդ հոգի է։ Նա ընդունակ է արյուն թափել հայրենիքի համար, քաջության հրաշքներ գործել, բայց կասկածելի է, որ Սալվինիի պատկերած Օթելոն պիտանի լինի ուազմագիտական ծրագրեր կաղմելու և մահավանդ խաղաղ ժամանակ կղզի կառավարելու համար։ . . . Օթելլոյի հոգու հիմնականը, շարումակում է քննադատը, անշուշտ պարզամտությունն է։ Սակայն պարզամտությունը երկու տեսակ է լինում։ Պարզամտությունը կարող է անկիրթ լինելու և մտահորիզոնի սահմանափակության հետևանք լինելը Բայց պարզամտությունը կարող է ծագել նաև բարձր խոհականությունից, որին մտահորիզոնի ընդարձակության հետեւանքով անմատչելի են կենցաղային մանրությունները . . . Սալվինիի Օթելլոն, նրա կարծիքով, պարզամիտ է այն պատճառով, որ ուղղակի հասարակ մարդ է և ոչ թե նրա համար, որ նրա միտքը վեր է կյանքի մանրություններից <sup>45</sup>։

Թվում է, թե հիմա արդեն հասկանալի պետք է լինի, թե ինչու քննադատների մի մասը դժգոհ է մնացել Աղամյանի Օթելլոյից։ Նրանք Օթելլոյի լուսարանության հարցում եղել են ոսսսիական և մանավանդ սալվինիական։ Եվ եթե, այնուամենայնիվ, գտնվել են Աղամյանի Օթելլոյով սքանչացած քննադատներ, ապա նրա համար, որ նրա խաղի մեջ տեսել և գտել են այն, ինչ շկարայն երկու, թեկուզեւ շատ երևելի դերասանների կատարման մեջ։ Ավելի մոտ կանգնած լինելով շեքսպիրյան ըմբռնմանը, այդ քննադատները կամենում էին Օթելլոյին տեսնել հոգեկան բարդ կառուցվածքով, այն իդեալական հայացքով դեպի մարդիկ ու աշխարհը, որը բուժուական եսասիրական հասարակության մեջ ցեխի հետ է հավասարեցված։

Քննադատությունը Աղամյանին դիտողություն է ա-  
րագին երկու գործողության մեջ անգույն լինելու:  
Համարու Մի հոդվածագիր նույնիսկ ասում է, թե երբ  
տուաշին արարից հետո վարագույրը իշավ, տպավո-  
րությունն այնքան տիսուր էր, որ դահլիճում ոչ մի ծափ  
չլսվեց: Քննադատը ծաղրում է հանդիսատեսներին, ա-  
սում, որ նրանք, ըստ երևութիւնի, սուր զգացողություն-  
ների սիրահար լինելով, շավանեցին Աղամյանի հան-  
գիստ խաղը սենատի տեսարանում, ուր նրա կատարու-  
մը աշքի է ընկել պարզ խստությամբ: Արտաքին տպա-  
վորության ոչ մի ձգտում, ընդհակառակը, ամեն ինչ  
պարզ, հասարակ և խիստ: Ու թեև մավրը պատմում է  
իր անցյալից, գործած սիրանքներից, չի զգացվում  
սնապարծության և ոչ մի արտահայտություն, ընդհա-  
կառակը, համեստություն, որ հրապուրում է մարդկանց  
իր անկեղծությամբ: Չնայած համեստությանը և մի ո-  
րոշ շափով անհարմարությանը, որ զգում է ամեն կար-  
գին մարդ, երբ հարկադրված է խոսել իր հաջողություն-  
ներից, Աղամյան—Օթելլոյի պահվածքի, ձայնի, հա-  
յացքի մեջ ընդգծվել է արժանապատվության զգացում,  
ըստ որում այնպիսի նրբությամբ նվաճված, որ ոչ ոքի  
մտքով չի անցել, թե համեստության դիմակով քողարկ-  
ված՝ պարծենկոտ ցուցամոլություն է դա: Սենատորնե-  
րի առաջ արած սիրո ամրող պատմության մեջ չի եղել  
մի պահ անգամ, որ Աղամյան—մավրը խնդրի: Միանգա-  
մայն վստահ իր արդարացիության վրա՝ նա խոսել է  
արժանապատվությամբ: Ոչ այնքան այն գիտակցությու-  
նից, որ իր ծառայությունները նշանակալի են հանրա-  
պետության առաջ, ոչ էլ այն մտքից, որ ինքը այժմ ան-  
փոխարինելի է, որքան համոզված, որ իր սերը դեպի  
Դեղնամոնան միանգամայն բնական է, մարդկայնորեն  
հիմնավորված՝ անկեղծ ու անեղծ, հետևապես և օրինա-

կան: Ոչ թե ընդառաջում են, ոչ թե զիջում է արվում ի-  
քեն, այլ ևնթարկվում են բնության ձայնին: Ինչ անննք,  
որ մեկը ճերմակ է, մյուսը աև Դա ինչո՞ւ պետք է մարդ-  
կանց հնացնի իրարից կամ նույնիսկ հակառի մի-  
ջանց: Նշանակություն ունի այն, որ իրենք փոխագար-  
ձարար սիրված են: Որ տարրեր են ազգությամբ՝ իրեն-  
ցից անկախ է և իրենց կամքից գույս հանգամանք:  
Իսկ որ միմյանց սիրում են, հասկանում և երջանկու-  
թյուն փնտրում իրար մեջ, այդ արդեն իրենցից է, իրենք  
էությունից՝ հոգուց ու մտքից:

Սա է Աղամյանի լուսարանության ելակետը:

Քննադատը, որ պաշտպանում էր Աղամյանի խաղը  
տռաշին տեսարանում, դժգոհ է մնացել, ուակայն, Կիպ-  
ռոս կղզում Դեղզեմոնայի հետ ունեցած առաջին հան-  
գիպումից: Հիշում է Բառնայի խաղն այդ պատկերում  
և գտնում, որ նա անհամեմատ լավ էր: Դիտավորյա-  
հիշեցինք Բառնային, որովհետեւ այդ ևս կապվում է Ա-  
դամյանի տված լուսարանության հարցի հետ:

Քննադատն ասում է, թե թնդանոթների կրակոցի և  
ընդհանրապես կղզում տիրող հանդիսավորության մըթ-  
նոլորտում Օթելլո-Բառնայը, իշնելով նավից, վազուա-  
չ դեպի Դեղզեմոնան, սեր, հիացմունք դեմքին և նվա-  
զուամ նրա գրկում: Մի-փոքք անց, հանկարծակի պոկվում  
է կնոջ գրկից, ուրախ թռչկոտում, պտույտ դալիս տե-  
ղուամ, ծափ տալիս, մի խոսքով Օթելլոյի հումկու տա-  
րերքը գուրս է գալիս ափերից, ձուլվում դեպի Դեղզե-  
մոնան ունեցած ջերմ սիրո մեջ <sup>47</sup>:

Ամենեմն էլ պատահական չէ քննադատի հիացուամք:  
Նա չի ցանկանում հակառին Աղամյանին և Բառնային:  
Ավելին, կարելի է նկատել, որ նրա թաքում համակրու-  
թյունը Աղամյանի կողմն է, մանավանդ, որ մի այլ հոդ-  
վածից ելնելով, հնարավոր է պնդել, որ Բառնայի Օթել-

ւան այնքան էլ լավ տպավորություն չի գործել: Սակայն նա հիշում է Թառնայի խաղի այդ կտորը, որովհետեւ, նրա կարծիքով, այդպես, հենց այդպես պետք է Աղամյանը ներկայացներ Օթելլոյի հանդիպումը Դևզգեմանայի հետ Կիսրոս կղզում, մի քանի օրվա անշատումից հետո, այրող կարոտի ազգեցությամբ: Դժբախտաբար, ի ասված, թե ինչուես է խաղացել Աղամյանը: Սակայն սյատեղ դա չէ էականը, այլ այն, որ այս անգամ քննադատական դիտողությունը դարձյալ գալիս և լրացնում է նրա Օթելլոյի հիմնական բնութագիրը:

Նույն քննադատը հաջորդ տեսարանի մասին գըռում է:

«Բայց եթե Աղամյանը այդ տեսարանում թույլ էր, սպա մյուսում անցավ մարդկային արվեստի սահմաններից և ոտք գրեց աստվածայինի ոլորտը»:

Այսուհետեւ հիշվում է Կասիոյի հետապնդումը Ռոդոփոյին, բազմության իրարանցումը, Մոնթանոյի և Կասիոյի սուսներամարտը:

«Այդ ժամանակ,— գրում է քննադատը, — կուլիսներում լսվում է Աղամյանի ձայնը, բայց դա մարդկային ձայն չէր, այլ բնության մյուս տարերքների հետ պատերազմի մտած երկնային որոտ: Ահավոր ճայթունը, վայրի ճիշը խլացնում է ձեզ, և մի փշաքաղող ցուրտ է անցնում ձեր մարմնով»<sup>48</sup>,

Քննադատը պատմում է, թե ինչպես Օթելլոն սրի միշտումով կովողներին բաժանում է իրարից, Օթելլո—Աղամյանը աշխատում է շափակորել իր ցասումը: Դա նրանից ահազին ջանք է պահանջում: Զախս ձեռքը մեշքին է գրել, ասես ձգտելով մեկ անգամից ճնշել ամենափոքրիկ շարժումն անգամ: Նրա աշխերից կայժեր են թոշում:

Ու հանդիսատեսը, նույնիսկ նա, որ դժուհ էր սենա-

տի պատկերից, տեսնում և հասկանում է, թե ինչպե-  
գերասանը իր հերոսի բնավորությունը բացում է աստի-  
ճանարար: Նա հանգիստ է, զուսպ, հանդարտ վեհու-  
թյան մեջ, բայց առիթը ներկայանալիս՝ բռնկում, կա-  
տաղի, ցասումով լիս իր եռացող տարերքը հավասարա-  
կըշում է հազվագյուտ ինքնատիրապետմամբ <sup>49</sup>:

Եվ, ինչպես միշտ, բոլոր դեպքերում Աղամյանը ձբդ-  
տել է անհատականացնել կերպարը, բնավորության գծե-  
րով կենդանացնել նրան: «Հուր, մտածեստ, բայց վայր-  
կենապես բռնկվող», — ահա նրա պատկերած Օթելոյի  
ռնավորության հիմնական նկարագիծ:

Քննադատն ասում է, թե Աղամյանը «ընդհանրապես»  
խորապես հասկացել է Օթելոյի բնավորությունը և այն  
պահպանեց սկզբից մինչև վերջ, որը չի հաջողվում բռ-  
լորին, նույնիսկ մեծագույն դերասաններին» <sup>50</sup>:

Մեզ զրադեցնողը Աղամյանի հասցեին արված փա-  
ռարանությունը չէ: Շատ լավ է, որ ոսւա քննադատու-  
թյունը նրան այդպիսի որակումներ է տալիս: Սակայն  
ինդիրն ավելի խորն է: Թե որքան մեծ արվեստագետի  
հետ գործ ունենք, այդ երևում է այն բանից, թե նրա  
բեմական վարպետությունը, ամեն սահմանից դուրս  
արտիստայնությունը ինչպիսի բռվանդակությամբ է  
ապրել բեմի վրա, ինչպես միշտ և ամեն ինչ ենթարկ-  
ված է եղել մի սևեռուն գաղափարի: Բնավորության այն  
հիմնական հատկանիշը, որ քիչ առաջ ասվեց, մի կող-  
մից լուր-մտածեստ, մյուս կողմից վայրկենապես բռնը-  
կող, պատահական չէ, և ոչ էլ կերպարը կենդանացնող  
մի սովորական հատկանիշ: Հիմք ընդումելով մավրի  
վարքագիծը՝ կասկածի ու հավատի, որպես հողեկան  
կացությունների հաջորդականություն, արտիստն իր խա-  
ղը կառուցել է դրա վրա:

Մի առիթով արդեն ասվեց, որ ոսւական քննադա-

ռությունը Օթելոյի դերում Աղամյանին առավելություն  
և տվյալ Բառնայի նկատմամբ:

«Անցյալ տարի,— գրում է մի ոռու քննադատ,— այդ  
գերում հանդես եկավ պ. Բառնայը, բայց նրա կատա-  
րումը շատ նրին ամեննին չգոհացրեց, քանի որ գերմա-  
նական արտիստը ինքնատիպության և նատուրալիզմի  
հետեւ ընկնելով, վենստիկյան մավրին դարձրեց պագ-  
ցուտ գաղան»<sup>51</sup>:

Դրանից հետո նույն քննադատը անմիջապես ավե-  
լացնում է.

«Պ. Աղամյանը շեքսալիրյան հերոսին նայում է լայն  
հայացքով»<sup>52</sup>:

Ի միշի այլոց նկատենք, որ մեջքերում կատարեցինք  
ոչ այնքան ստուգի, Բաց թողեցինք մի բառ, որ քննա-  
դատը գրել է վերոհիշյալ նախադասության սկզբին: Այդ  
բառն է՝ «միայն»: Ուրեմն՝ «միայն Աղամյանը»: Աղամ-  
յանը և ոչ թե Օթելոյի բոլոր մյուս գերակատարները,  
որոնց, ասենք թե, առիթ է ունեցել տեսնելու այդ քննա-  
դատը: «Դա» է կամենում ասկել նաև ծրնի: Բայց գրա վրա  
առանձնապես կանգ չենք առնում, որովհետև այդ «միայ-  
նը», որպես էություն, այլևս չի բացահայտվում և զար-  
գացվում հոգվածի շարունակության մեջ: Ծվ մանավանդ  
որ խնդիրը ամեննին էլ այն չէ, թե միայն Աղամյանն  
է այդպես իւաղացել, թե՝ մի ուրիշն էլ, թեև, ընդունենք,  
որ զա էլ նշանակություն ունի, եթե, մանավանդ, նկա-  
տի առնվի կերպարի բեմական պատմությունը, մեկնա-  
րանության զարգացման ընթացքը և մեծագույն ողբեր-  
գակների տեղն այդ պատմության մեջ: Կարևորն այս-  
ուղղ այն է, թե ի՞նչ մերձեցում է հանդես բերել Աղամ-  
յանը, ինչպես է բացել կերպարը, ի՞նչ է կամեցել ասել  
նրա միջոցով, և այդ ամենը ի՞նչ ազդեցություն է ունե-  
ցել նրա ժամանակակիցների վրա:

Վերադառնանք Բառնալի քննադատությանը:

Բառնալին հիշատակելը այստեղ ևս պատահական է: Գերմանական ողբերգութին հասցեազրված քննադատական կշտամբանքից կարելի է նզրակացություններ կատարել հօգուտ Աղամյանի լուսաբանության:

Նախ՝ Աղամյանի կատարման մասին միշտ էլ ասվել է, թե աչքի է ընկնում ինքնատիպությամբ: Եվ այդ ասվել է միայն և միայն դրական առումով, մինչդեռ Բառնալին քննադատում են ինքնատիպության համար: Նշանակում է քննադատությունը կարողացել է զանադանել թե երբ է գերի նկատմամբ ինքնուրույն մոտեցումը բնուում կերպարի նոր և ավելի լայն ընդդրկման, և, ընդհակառակը, երբ է այդ ինքնատիպությունը ինքնանապատակ, սոսկ ուրիշներից տարրերիվելու և առանձնանալու յիտում:

Երկրորդ՝ այն որակումը՝ պադշատ գաղան, որ տըր վում է Բառնալին, բացատրում է Աղամյանի յուսարանության առավելությունը: Երկու դերասաններն էլ որպես հիմք ընդունել են Օթելլոյի սերը դեպի Գեղդեմոնան, բայց այն տարրերությամբ, որ Բառնալը իր սիրո մեջ, ինչպես այդ պարզվում է վերոհիշյալ որակությունը, դրել է վայրի կիրք, մինչդեռ Աղամյանը՝ հոգեկանարձր բովանդակություն:

Ահա այստեղից էլ կերպարի հետագա կյանքի տարրեր զարգացումը:

Բառնայ—Օթելլոն ապրում է ողբերգություն, որուն հետև նրանից խլել են այն, ինչ միայն իրեն էր պատկանում:

Աղամյան—Օթելլոն ապրում է ողբերգություն, որուն հետև կորցնելով Գեղդեմոնային, կորցրել է այն բարոյական բարձր հատկությունները, որ տեսել էր նրա մեջ:

Որպեսզի մեր ասածը անհիմն հայտարարություն:

շթվա, շտապենք վկայություն բերել 80-ական թվական-ների մամուլից, այն, ինչ մի ոռու քննադատ գրել է Ա-գամյանի Օթելլոյի տպավորության տակ:

Մի քննադատ այսպես է բնորոշել:

Դժվար չեր հետևել այն փոփոխությանը, որ կա-տարկում էր մի մարդու մեջ, որը «իր սիրո ամբողջ ուժը և քնքությունը դրել էր մի կնոջ մեջ, որը դադա-ռում է նրա համար լույսի մարմնացում լինելուց և վե-րածվում է ինչ-որ ստորության և կեղծիքի» 53:

\* \* \*

Տարբեր Օթելլոներ տարբեր ժամանակ են ենթարկվե, Ցագոյի ներարկած թույնին. ոմանք շուտ, ոմանք ուշ, Այսպիս, օրինակ, Սալվինին ուշ էր ենթարկվում, եվ դա Հասկանալի է, որովհետեւ նրա Օթելլոյի բնորոշիչ գիծը հոգու բարությունն էր, հետեւապես, որքան էլ զյուրահա-վատ, նա ավելի հակված էր դեպի լավը, քան վատը. Մինչդեռ Բառնալը ճիշտ հակառակը, շատ շուտ էր են-թարկվում, «Երրորդ արարկածում Օթելլո—Բառնալը,— պրում է մի ոռու քննադատ,— միանգամից ընկնում է Ցագոյի ցանցը. այն երկարատև պայթարը, որ հանդեւ էր բնրում այդտեղ Սալվինին, մենք գերմանական ար-տիստի մոտ շտեսանք, նրա մարմնավորած Օթելլոն ա-սես ինքն է ընդառաջ վազում Ցագոյին»: Մի-փոքր հետ-նույն քննադատն ավելացնում է. «Դյուրացնելով իր անցումը դեպի հաջորդ բուտն տեսարանները և դրա հա-մար նվաստացնելով մավրի ազնիվ կերպարը, նա միա-ժամանակ կարծես թե ոչնչացնում է մեր համակրու-թյունն իր հերոսի նկատմամբ և մենք հետևում ենք նը-րան նվազ համակրությամբ» 54:

Նկատված է, որ Ագամյան—Օթելլոն այնքան էլ շուտ-ի ենթարկվում Ցագոյի ներշնչած կասկածներին:

«Օթելոն, — գրում է մի քննադատ Աղամյանի մասին, — միանգամից չի ենթարկվում խանդի»<sup>55</sup>:

Սա հական դիտողություն է, Աղամյան—Օթելոն, իշարկե, խանդի է և խանդել է բուռն կերպով, ինչպես և է Եեթապիրի ողբերգության մեջ, Սակայն նա մինչև վերջ հարազատ մնալով ողբերգության ոգուն, խանդի իր խանդի առանցքը չի դարձրել:

Թերևս դրանով պետք է բացատրել, որ այդ տեսարաններում, ինչպես մի հոդվածագիր էշտամբում և արտիստին, պակասել է «մավրի վայրի գաղանայի» խանդը»<sup>56</sup>, այն, ինչ հանդիսատեսը և նրա հետ միասին Աղամյանին պախարակող քննադատը սովորել եւ տեսնել Օթելոների մեջ, Ռուսիի և ուրիշ նշանավոր գերասանների խաղի վրա դաստիարակված հանդիսատեսը վարժվել էր խանդից գալարվող Օթելոների, նրանց՝ փոթորիկի նման բեմ մտնելուն ու դուրս գալուն, վագրային մանշոցներին, ըստ որում այն աստիճան, որ Ա. Չեխովի նման հանդիսատեսը բացասեց կենսկու Օթելոն, ասելով, թե «խաղը բարեխիղն էր, բայց չկար գըտիավորը—խանդը»<sup>57</sup>: Վերադառնալով Աղամյանին քըննադատող հոդվածագրին, նկատենք, որ նա Օթելո—Աղամյանի ընդհանուր պատկերագիծը տվել է հետեւյաձևով:

«Զեր առջև կանգնածը սրբազան զգացումների մեջ, խարված ամուսին է, խանդը հասցնում է նրան հանցագործության և դարձնում է անբախտ մարդ»<sup>58</sup>:

Խանդի տեսարանների ընդհանուր պատկերը, այսինքն՝ լուսարանության ելակետը պարզ է: Իսկ ինչպես էր այդ մեկնարանությունը առարկայնանում դերասանի խաղի մեջ, այս կարեռ է, նույնիսկ շատ կարեռ, որովհետեւ նրա Օթելոյի մասին արտահայտված քննադատների մեծ մասի կարծիքով երրորդ և չորրորդ արարված-

Ները կազմել են դերասանի կատարման բարձրակեռերը:

«Առանձնապես հոյակապ կատարեց, — հայտնում է իր կարծիքը մի քննադատ, — երրորդ և չորրորդ արարվածները՝ խանդի առաջացման և ճակատագրական թաշկինակը Դեղղեմոնայից պահանջելու տեսարանները»<sup>69</sup>,

«Պետք է արժանին տալ արտիստին, — ասում է մի սրբիշ հոգվածագիր, — երրորդ գործողությունը նա կառարեց աննման»<sup>70</sup>,

«Երրորդ գործողության կատարումը Աղամյանի կողմից, — գրում է թատերագետներից մեկը, — աչքի էր շնկնում մանրամասների սքանչելի և նրբին հղվածությամբ, ամեն մի շարժումը, ձայնի գրեթե ամեն մի հնչյուն ներդաշնակում էր Օթելոյի տվյալ վիճակի զգացողությանը»<sup>71</sup>:

Մի այլ քննադատի ասածով՝ երրորդ և չորրորդ աշարների մեջ Աղամյանն իր խաղով մոտենում էր Սալվինիի ստեղծած գլուխ-գործոցին<sup>72</sup>:

Իսկ մեկ ուրիշը, որ գարծյալ հիշում է Սալվինիին, ավելի առաջ է գնում. «Յագոյի հետ ունեցած տեսարանը, որտեղ վերջինս խախտում է Օթելոյի հոգեկան անգորը և խորամանկորեն հյուաված տակնահան գրգռույալ բորբոքում է մավրի տրոպիկական երևակայությունը, Աղամյանը անցկացրեց վարպետությամբ։ Այսուղ նա գտնվեց այնպիսի բարձունքի վրա, որին չեր հասել ուրդ տեսարաններում հանդիսատեսների բարձրածայն հիացմանն արժանացած Սալվինին անգամ»<sup>73</sup>։

Աղամյանը մարդկայնությամբ էր համակում կերպար։ Նույնն էին անում նաև Սալվինին և Օլրիշը, իսկ ավելի վաղ՝ Մոլալովն ու Թինը։ Աղամյանն իր խաղում ներեք շասավ մի այնպիսի կետի, որ թույլ տա իր մեջ գլուխ բարձրացրած վայրի տարերքին՝ թեկուզ մի պահ

Հաղթանակել, ինչպես այդ պատահել է և Սալվինիի, և Շլրիշի հետո Աղամյանի ամբողջ խաղը կառուցված է հեղել այն պայքարի վրա, որ մղում է Օթելլոն դրա գիմ, Մինչդեռ Շլրիշի խաղում, ուր մարդու կողմից զապված զազանը ազատություն էր ստանում (երրորդ արարվածի տեսարանն էր), նա իսկապես սարսափելի էր: Հանգիւասրահը սարսափից քարանում էր և առասպել չէ, այլ հշմարտություն, որ նրա խաղընկերներից շատերը այդ տեսարաններում պապանձվում էին իրենց կաշկանդող սարսափից ։<sup>64</sup>

Աղամյանը ոչ միայն միանգամից շէր ենթարկվում խանդին, այլև երկար ժամանակ, համարյա երկու գործողություն խանդին լի ենթարկվել ամրողապես: Հանգիստահար մեկ հիշում է նրան կասկածի մեջ, կատաղած, մեկ էլ «Դեղդեմոննայի հմայիլ գեղեցկության տրպավորության տակ խաղաղված, ճնշող կասկածները եւ յղելիս»<sup>65</sup>:

Խաղի մեկ մանրամասնը, որ այն ժամանակները մեծ ռպավորություն է թողել քննադատության վրա, բացահայտում է այդ ներքին, հակասական տանջանքը: «Ցագոյի հետ ունեցած տեսարանում,— կարդում ննը այն ժամանակ գրված մի հոգվածում,— որտեղ նա առաջին անգամ խանդ է հարուցում կնոջ նկատմամբ, Օթելլոն, հուզված և ցնցված, բայց գեռ վախի և հուլսի մեջ տառանվելիս, բացահայտորեն տեղ լի գտնում իր համար, մեկ նստում է, մեկ կանգնում, ապա նորից նստում. նորից կանգնում»<sup>66</sup>:

Մեկ կասկածում է, մեկ հավատում: Մեկ խանդում է, մեկ սիրում: Նա, ինչպես ճիշտ դիտել են ժամանակակիցները, պայքարի մեջ էր ինքն իր հետ:

Ընդգծում ենք սրա կարնորությունը: Եվ դրանից առաջ և այդ տարիներին, հետագայում ևս, ընդհուալ մին-



Օրելլն  
Վ. Շեքսպիր. «Օրելլն»



չև մեր օրերը, պատահել են Օթելոներ, որոնք մեկ անգամ ևնթարկվելով խանդին, երկու արարված անց են կացրել վայրի բռնկման մեջ, Աղամյանի կատարման արժանիքը հենց այն է, որ դեռևս այն տարիներին նա հեռացել է խաղի այդ ձևից, նա պատկերել է մարդ, տառապող մարդ, որ կասկածների մեջ էլ շարունակել է սիրել ու հավատալ:

Թաշկինակի տեսարանում անգամ, հավատարիմ իր մոտեցմանը, Աղամյանը չի կառուցել իր խոսքը պահանջի, կտրուկ և հրամայական պահանջի ձայնի վրա: Այստեղ ևս նուրբ անցումներ ունի սիրուց դեպի խանդ, կասկածից դեպի հուզ: Մոսկվայի Փոքր թատրոնի դերասանուհի Նադեժդա Լվովնա Տիրասպոլսկայան թողել է խաղի այդ հատվածի նկարագրությունը:

Երեք անգամ Աղամյանն ասում է «Թաշկինակ», երեք անգամն էլ ձայնի տարրեր ելնէջներով: Առաջին անգամ ինքնատիրապետումը կորցրած, համարյա գոռալով՝ «Թաշկինակ...»: Դադար: Եվ ապա ավելի զուսպ, բայց բարոքում արտասանում է վանկ առ վանկ՝ «Թաշ-կինակ...»: Նորից դադար: Դրանից հետո շատ մեղմ, սիրով նայելով Դեղդմոնայի աշքերին՝ կրկնում է դանդաղ, ասես պաղատում է խոստովանել «Թաշ-կի...» և ապա կարծես Դեղդմոնայի աշքերում տեսնելով դեպի կասկած վերադարձնող արտահայտություն՝ Աղամյանը հուսահատության ամրողը ուժով ավարտում է վերջին վանկը՝ «...նա'կ»<sup>67</sup>:

Դերասանուհին ասում է, թե Աղամյանի արածը «համարձակ էր ու զորավոր»: Եվ այդպիսով նրա ապրումները պատկերող տպավորությունը լիակատար էր, սպառիչ:

Ծուա դերասանուհու պատմածը թանկագին վկայության արժեք ունի, որովհետեւ, ինչպես քննադատության

մեջ գիտվել է, թաշկինակի տեսարանը շատ դերասանների համար գաղանացին ցամանակ ամենապուժեղ դրսեվորման պահն է եղել Սալվինին, ճիշտ Աղամյանի պես, անհուն մարդկայնություն էր հաղորդում այդ տեսարանին Իտալական ողբերգում ոչ թե պահանջում, այլ խնդրում էր թաշկինակը Կործանվող մարդու տառապանքով լի խնդրանք էր դա, որ հնչում էր հետզհետե ուժգնացող շեշտով՝ Ել եթե ուրիշ դերասաններ ահեղ ցասմամբ էին ավարտում տեսարանը, նույնիսկ հրում, գետնով տալիս Դեղդեմոնացին, ապա Սալվինին հեռանում էր բեմից անհավասար քայլվածքով, խեղճացած, ասես հյուծված լիներ այդ մի քանի րուսեում, և ապա, մի պահ կանգ առնելով՝ գլուխը հննում էր պատին ու հեծկլուում։ Թաշկինակը պահանջելիս Սլրիշը տարրեր է եղել և՛ Աղամյանից, և՛ Սալվինիից. երեք անգամ միմյանց ետևից նա ասել է «թաշկինակ» և երեք անգամն էլ կատաղի ցասումով, բայց հետո բեմից հեռացել է շիուլ հեծկլտանքով և Դեղդեմոնացի գեմքին անասելի տառապանքով նայելով»<sup>68</sup>,

Թվում է, թե հետաքրքիր կլինի իմանալ, թե ինչպես էր այդ տեսարանը պատկերացնում իր կյանքի հասում տարիներին Ստանիսլավսկին։ 1929—1930 թվականներին նա կազմել է «Օթելլոյի» ապագա բեմադրության սանրամասն ծրագիր։ Նա հարկ է համարել մավրի դերակատարներին թաշկինակի տեսարանի կապակցությամբ զգուշացնել մի քանի անգամ, որ այստեղ կարիք չկա խաղալ բացահայտ բարկությամբ, տեմպերամենտի բուռն դրսեորումով, բարձր լարվածությամբ։ Զգուշացնում է, որ դերասանը դեռ այդպիսի առիթներ կոմնենա, իսկ այստեղ «թաշկինակ» երեք բացականչություններից առաջինը պետք է լինի աղերսանք, երեք բարորդը զգուշացնում, երրորդը՝ որոշակիություն։ Իսկ դրանից հետո,

Նրա կարծիքով, պետք է այնպես լինի, որ ասես Օթել-լոն սղաշտագանվում է հարձակումից, կովում ինքն իր հետ։ Դադար Հետո... կը լինի այն, ինչ աստված կուղար-կիր Թող արտիստը միակատար ազատություն տա իր զգացմանը, Վատ կը լինի, եթե վաղի, փախչի, ինչպես այդ արվում է միշտ, լավ կը լինի նրա կրծքից մի հառաշ պոկվի կամ մի ինչ-որ հուսահատ շարժում, և նա քայլի կորաքամակ, շարդիված—ինքն էլ շգիտե, թե ուր, Այդ պահին նա պետք է խելքը կորցրածի պես լինի<sup>69</sup>։

Մանրամասնությամբ տարբեր, սակայն մեկնաբա-նության սկզբունքով Ստանիսլավսկին մոտ է եղել Սալ-վինիին, որի նկատմամբ ունեցած սգմորությունը, ինչ-պես տեսանք, անսահման էր, մոտ է եղել նաև Աղամ-յանին, որի խաղը շեր տեսել:

Տարբեր ճանապարհներով, բայց նույն կետին են հասնում Սալվինին և Աղամյանը Երկուսն էլ, թեև կաս-կածների մեջ, բայց ավելի սիրում են, քան խանդում, Երկուսն էլ պատերազմի մեջ են իրենց տարերքի հետ։ Բայց ահա այստեղից էլ ճանապարհները բաժանվում են, և նրանք հեռանում են միմյանցից։ Մինչև այստեղ Սալվինի-Օթելլոն հակասությունների մեջ էր Այստեղից սկսած՝ ներքին պայքարն ավարտված է նրա համար։ Եղ նա, ինչպես ուստ քննադատությունն է նկատել, այն էլ նրանով հիացած, թաշկինակի տեսարանից հետո, մինչև Դեղդեմոնայի անմեղությունն իմանալը, իր խաղը վա-րում է դաժան հանգստության մթնոլորտում։ Կասկած և տատանում շկա։ Կա մեղավոր, կա մեղադրող, նույն ճանապարհով էր գնում նաև Օլբիչը։ Թաշկինակի տե-սարանից սկսած դառնում էր հանգիստ, խաղաղ։ Կնոջ հանցանքը հաստատված է, և դա էլ վերջ է տալիս նրա ներքին պայքարին։ Լոկ մի միտք է այժմ նրան զրա-զեցնում։ Վրեժինդիր լինել<sup>70</sup>, իսկ Աղամյանի կատար-

մամբ Օթելլոն շարունակում է սիրել և որովհետև սիրում է, մինչև վերջն էլ չի կարողանում հաշտվել Դեղդնմոնայի մեղավոր լինելու մտքի հետ։ Ահա այս տարբերությունն էլ ուղեկցում է երկու դերասաններին մինչև այն պահը, երբ նրանք խեղգում են Դեղդնմոնային։

Քննադատներից ոմանք դերասանին կշտամբել են նրա համար, որ խանդի ամենացասումնալի պահին անգամ հոգեկան տատանումներ է ապրում։ Եվ դա վերագրել են նույնիսկ այն բանին, որ իրը նա չի կարողանում կատաղի բռնկումը հասցնել բարձր կետի։ Մինչդեռ այստեղ կարողանալու կամ չկարողանալու խնդիր չէ, այլ մոտեցման Նա, իհարկե, կարողացել է, ինչպես և պետք է ըստ պիեսի, բայց շեշտը դրել է մարդկային տառապանքի վրա, հոգեկան տվայտանքների։ Եվ նույն քննադատը, որքան էլ խիստ, այնուամենայնիվ, ներքին համակրությամբ է արտահայտվում զերասանի արդ բընույթի տեսարանների մասին, շհասկանալով, որ նա հենց դրանց վրա էլ կառուցել է իր խաղը։

«Դրա փոխարեն արտիստը սքանչելի է, — գրում է Նա, — խաղաղ, թախծի ու տխրության տեսարաններում, որտեղ կորսված սիրո և երշանկության պատճառած վիշտն ու ցավը տիրապետող են վայրի խանդի ու վրեժի ողոքակումների հանդեպ։ Այդ տեսարանների մեջ նա դնում է այնքան խոհ, այնքան անկեղծություն և շերմություն, որ զորեղ տպավորություն է զործում»<sup>71</sup>։

Ուրեմն ոչ թե վայրի բռնկում, այլ թախիծ և տխրություն, ոչ թե գաղանային պոռթկումներ, այլ խոհ։

Հարկադրված ենք հիշեցնել ավելի վաղ ասվածը։ Աղամյանի Օթելլոն մտքի մարդ է, հոգեկան բարդ կառուցվածքով՝ այն Օթելլոների համեմատությամբ, որոնք շեքսպիրյան հերոսին ներկայացնում էին պարզասիրտ, բայց և պարզամիտ, քաջարի, բայց կիսակիրթ։

Եվ ուրիշ ի՞նչ կերպ կարող էր լինել, եթե Աղամյանը խաղում էր ոչ թե խանդի ողբերգություն, այլ խարված մարդու ողբերգություն, եթե նրա խաղը կառուցված էր, ինչպես ճիշտ դիտել է զերասանի ժամանակակիցներից յևկը, «Օթելոյի լուսավոր և վեհացած զգացման աստիճանական շիշման վրա»<sup>72</sup>:

Տառապում է մարդը: Տառապում է նա, որովհետև կորցրել է ո՛չ միայն կնոջը, ո՛չ միայն սերը, այլ շատ ավելի լայն, բարձր ու վսեմ հասկացողություններ, կյանքի ըմբռնումը, որ նրա գիտակցության մեջ գալիս առնչվում էին սիրո ու կնոջ հետ:

«Դուք լսում եք,— զրում է մի քննադատ,— սրտապատառ մռնչյուն, խոշտանգված հոգու ճիշ, և ձեր հոգին արծագանքում է Օթելոյի խորագույն տվյալտանքներին և զգում բյուր ցավ»<sup>73</sup>:

Սակավաթիվ չնն այն զերասանները, մանավանդ անցյալում, որոնք վայրի տարերքի ընդգծումով, հենց սկզբից և շատ վաղ Օթելոյին մղելով Ցագոյի ցանցի մեջ, մտադրված, թե անկախ իրենց կամքից, հանգի ևն այն մտքին, որ մարդկայինից մինչև գաղանայինը մի քայլ է միայն: Օթելո—Աղամյանը, ընդհակառակը, այդ երկուսի միջև ընկած անջրակետը, որքան հնարավոր է՝ մեծացնում էր, շեշտը դնելով մտքի վրա և դրանով ցույց տալով բանականության ընդվզումը՝ բնազների դրսեվորման դեմ: Եվ դա նրա համար, որ նա մտքի մարդ էր, խոհերով լի, հոգեկան բարդ կառուցվածքի տեր:

\* \* \*

Մի-երկու խոսք էլ վերջին գործողության մասին:

Օթելոյի բնմական պատմությունից հայտնի է, որ զերասաններից շատերը այս արարն առանձնապես չեն շեշտել, Երրորդ և չորրորդ արարները համարելով դրա-

մատիկական լարվածության բարձր կետեր, այլևս չեն կարևորել Դեղդեմոնայի սպանության պատկերը, ինչ-պես և իր, մավրի ինքնասպանությունը, ըստ երևութիւն այն մտքին լինելով, թե դրամատիկական գործողությունն ինքնին սրտառուց է, ցնցող ու տպավորիչ:

Բացառություն է կազմում Մոշալովի Օթելլոն, որի մասին Թելինսկին ասում է, թե այդ տեսարանը նրա խաղողի պսակն էր <sup>74</sup>, նույն կարգի վկայություններ են թողել Քինի ժամանակակիցները, ասել են, որ նա ովերջին պատկերում հոյակապ է եղել» <sup>75</sup>: Ա. Վոլկոնսկին Ալբերտ Բասերմանի Օթելլոյի մասին գրած իր հոդվածում ասում է, թե «Բասերմանի խաղից այդ տեսարանում ոյինչ չկա հիշելու, Այնուամենայնիվ, կարծես նշանավոր դերասանին արդարացնելու համար, նշում է. ովերցին պատկերը ոչ ոքի մոտ չի հաջողվնել» <sup>76</sup>: Թերևս Վոլկոնսկին իրավացի էր, որովհետեւ նույնիսկ Սալվինիի քննադատը՝ Լյուիսը նկատել է. «Հինգերորդ արարվածում դադարեցի սրանշանալը, իսկ մի այնպիսի դերասանի, ինչպիսին Ալբերտ Ֆեխտերն է, ֆրանսիացիք մեղադրել են, որ հինգերորդ արարվածը նրա կատարմամբ ավելի մոտ է ֆրանսիական մելոդրամայի ոգուն, քան անգլիական ողբերգությանը: Տպավորություն չի գործել հինգերորդ արարը նաև այլ առիթներով արդեն հիշված Բառնայի կատարմամբ:

«Ինչ վերաբերում է ավարտին,— գրում է մի ռուս թատերագետ,— այսուղ էլ Աղամյանը հավատարիմ մընաց իրեն: Արտասահմանյան, ինչպես և մեր ռուս արտիստների մոտ այդ տեսարանն անցնում է անհետք. նբանց կատարումով, պիեսի վերջում, ասես Օթելլոյին շես ճանաշում: Այդպես չէ Աղամյանը» <sup>77</sup>:

Դժբախտաբար հիմնավորում չկա: Կա միայն մի սեղմ նախադասություն. Աղամյանը «այսուղ ցույց է

տալիս հոգու լիակատար թեկվածությունն ո՞ւ, Որպես  
որինակ բերվում է Բառնայը, որ այդ տեսարանը խա-  
ղացել է դաժան հանդարտությամբ, որը, քննադատի  
կարծիքով,— և դա, իհարկե, ճիշտ է,— չի բռնում Օթել-  
լոյի կրակոտ խառնվածքին։ Նույնն են պատմում նաև  
Սալվինիի մասին։ Ասում են, երբ նա հինգերորդ արա-  
րում սուրբ ձեռքին ներս էր մտնում՝ բոլորը զարհուրում  
էին։ Նույնը ասվում է նաև Օլրիշի մասին։ Ճինած կնոջ  
ննջարանը նաև մտնում էր հանդիսատ, խնամքով փակում  
էր դուռը... Բայց այդ հանգստությունը զարհուրելի էր՝<sup>79</sup>։  
Մի քննադատ ասում է, որ ինքը երեք անգամ տեսել է  
Սալվինիի Օթելոն և երեք անգամ էլ նկատել, թե ինչպես  
«Ահա պատճառը» մենախոսությունը ոչ մի ազդեցու-  
թյուն չի գործել, որովհետև դերասանի կատարմամբ  
չի կրել «խորազգաց թախիծի բնույթ»<sup>80</sup>, Ա. Յարլուկի-  
նան, որ խոտալական ողբերգակի հետ խաղացել է Դեղե-  
մոնայի դերը, ասում է. «Ներկայացման ժամանակ, երբ  
Սալվինին նետվեց դեպի ինձ, ես իմ ամբողջ էությամբ  
հասկացա, որ վերջս հասել է, այնքան ցնցող, սարսա-  
փելի էր Սալվինին»<sup>81</sup>. Նույն կերպ է խաղացել նաև Օլ-  
րիշը «Դեղեմոնայի սպանության տեսարանում»,—  
պատմում է Ա. Կոնին, — նա սկարզապես զարհուրե-  
լի էր։ Մտնելով ննջարան, կատվի նման գաղտագողի,  
շտապում էր իր անողորմ մտադրությունն ի կատար ա-  
ծել՝ հասունացած վճռականությամբ<sup>82</sup>, ինչ վերաբերում  
է Ադամյանին, ինչպես երևում է նրա մոտ, շնայած կնո-  
շը սպանելու նախանդես կայացրած վճուն, շարունակ-  
վել են հոգեկան տատանումները, ներթին պայքարը, նա  
խաղում է ոչ թե դահիճ, այլ մարդ, որին տառապանք է  
պատճառում սեփական մտադրությունը։ Ներթին ալեկո-  
ծությամբ լի, հոգեկան չլատված, նա իրագործում է վը-  
ճիռը, խեղղում է, հետո դաշումահար անում։

Մի այլ քննադատ, որ գրել է Աղամյանի նույն ներկայացման մասին, ինչ որ նախորդը, թողել է, ճիշտ է, դարձյալ կարճ, բայց շատ արժեքավոր վկայություն:

«Դեղքեմոնայի դատաստանը,— գրում է նա, — հատուցումն է խարված վստահության, ու առաջինության հատուցումն է կարծեցյալ արատին» <sup>83</sup>,

Սա բանալի է, որի օգնությամբ կարելի է հասկանալ ոչ միայն հինգերորդ արարը, համեմայն դեպս մինչև այն տեսարանը, երբ Օթելլոն սպանում է Դեղքեմոնային, այլև գործողության ծավալման ընթացքը մինչ այդ, ինչպես և այն, թե ինչու են քննադատները գրել, որ նա ավելի լայն հայացքով է նայել կերպարին:

Օլրիշը, ինչպես և Սալլինին, հինգերորդ արարում տարբեր էր Աղամյանից: Դեղքեմոնայի անմեղությունն այնպիսի ցնցող ուժով էր պառակտում Օթելլո—Աղամյանին, որ նա ոչ ուրախություն էր ապրում Քինի նման, ոչ էլ բուռն զղջում, ինչպես Օլրիշի մոտ էր Ասես գրանով խլվեց ամեն ինչ, մի տեսակ ամայացավ ներսը: Մինչդեռ Օլրիշը, լսելով կնոջ անմեղ լինելու մասին, կատաղի, գաղանային ոռնոց էր արձակում, ուայդ ոռնոցը տարածվում էր երկինք, երկիր, տիեզերքով մեկ, որպես հենց նոր միայն կատարված շարագործության նըղովք: Օլրիշը պատեսպատ էր ընկնում, պոկում էր մազերը, զգեստները, միշոց էր որոնում իրեն պատաստելու Սարսափելի ու ցավալի էր լսել ու նայել նրան» <sup>84</sup>:

Աղամյանի խաղը, որ հոգեկան ալեկոծություններով լի էր մինչև Դեղքեմոնայի սպանությունը, դրան հակառակ, բոլորովին այլ հոմի մեջ է մտնում, հետո ընդունելով միանգամայն այլ նկարագիր: Իր վերջին մենախոսությունը նա ասում էր հանգիստ: Այդպես է խաղացել նաև Քինը: Վերջին մենախոսությունն ասել է առանց հետաքրքրության դեպի խոսքը, մեքենայորեն <sup>85</sup>, եվ այն

բացատրությունը, թե դերասանն այդպես էր ասում դիտավորյալ, որ շրջապատի ուշադրությունը չգրավի իր վրա և շխանդարեն իրեն անձնասպանություն գործելու՝ իհարկե, ճիշտ է: Ի միջի այլոց նկատենք, որ Ֆեխտերը նույն մտքին լինելով, իր վերջին մենախոսության վերցին խոսքերն ասելիս՝ դաշույնը ճեղքին հարձակվում էր Յագոյի վրա իրը սպանելու համար, բայց հարվածում էր ոչ թե նրան, այլ իրեն Սակայն Աղամյանի այդպես խաղալու պատճառներն ավելի խորն են: Պայքարն ավարտված էր Բուլլ է տրված մեծ սխալ, որն է բերվել մի լըթնադ կյանք, բայց այդ թանկ գնով նվաճվել է մեծ դառնափար՝ հարություն է առել մարդու նկատմամբ կորսված հավատը Աղամյան—Օթելլոյին պաշարած հանգըտությունն անտարերություն չէ, այլ կամքի արտահայտություն, որովհետև այժմ նա միայն մեկի դեմ է սուր խաղացնելու Այդ մեկն էլ ինքն է: Այժմ նրա մեջ հակասություններ չկանու ծակատագրական սխալի հեղինակը ինքն է, հետեւապես պատիմն էլ ինքն է կրելու Որոշումն ընդունված է և ոչ մի ուժ չի կարող նրան կանգնեցնել:

Հայտնի էր Աղամյանին, թե ոչ, բայց այդպես է խաղացել նաև Մոշալովը: Թելինսկին ասում է, թե Մոշալովի Օթելլոն մեռնում էր առանց վհատության, խաղաղ, ինչպես մարդ քնելու համար, օրվա հոգնեցուցիլ զանթերից հետո, անկողին մտնի<sup>86</sup>: Եվ արդյոք այդ աղղեցության տակ չէ<sup>87</sup>, որ Սալվինիով սքանչացած, բայց նրա հինգերորդ արարվածի խաղից դժո՞ն ուսական ընսպատռությունն այն միտքն է հայտնել, թե Դեղդեմոնայի անմեղությունն իմանալուց հետո ցանկալի էր նրան տեսնել ուշ թե լացակում, այլ հանգիստ, մի խորին խաղաղության մեջ:

Ինչպես Աղամյանը, այնպես էլ Մոշալովը իրենց

կատարումը կառուցել են հակադրության սկզբումքի վրա, մի կողմից ալեծուփ փոթորիկ, մյուս կողմից՝ խաղաղություն։ Եվ դա ոչ միայն նրա համար, որ այդպես էին պատկերացնում Օթելլոյի բնավորությունը, այլ նաև այն պատճառով, որ շեշտակի հակադրության հնարանքը տիրապետող էին տեսնում կրթերով ու բախումներով մի շերսպիրյան դրամատուրգիայում։

Այսպիսով, ուրեմն, Աղամյանն ամփոփում էր իր խաղի ընթացքը, տրամարանական ավարտման հասցնում, կատարում մի կարևորագույն հանրագումար։

Ի՞նչ հետևություն կարելի է անել

Եթե մինչև հիմա մեզ համար պարզ էր, թե Աղամյանը հոգեկան ինչպիսի բարձր բովանդակություն է դրբել մավրի ինչպես սիրո, այնպես էլ սիրո անլուր տառապանքների մեջ, եթե թեկուզն ակնարկի ձևով պարզ էր և այն, որ նրա բոլոր տառապանքները կապված էին ոչ միայն դավաճանված լինելու, այլ նաև մարդկացին ամենավսեմ զգացումների կործանման հետ, ապա այժմ, վերջին արարի մասին պահպանված վկայությունն ասում է, որ Օթելլոյի վրեժիսնդրությունը, այսինքն՝ Դեղոնմոնայի սպանությունը, ըստ Աղամյանի, ուներ ավելի խոր բովանդակություն, քան դավաճան կնոշ նկատմամբ խարված ամուսնու հղացած անողոք սկատիժը։

Միշանկյալ նկատենք հետևյալը

Քննադատությունը, ի դեմք Շիրվանզադեի, Աղամյանին դիտողություն է արել. «Օթելլոն իրան սպանում է և ընկնում Դեղօնմոնայի մարմնի վրա, կոչելով՝ «Համբույրով սպանեցի թեղ», և համբույրով հանդիպում եմ նահանջությունը, եվ Օթելլոն համբուրում է Դեղօնմոնայի անշունչ դիակը։ Իսկ պ. Աղամյանը այդպես շի անում... գեթ մի հայացք անդամ չի ձգում Դեղօնմոնայի դիակի վրա, որ ցույց տա, թե Օթելլոն դարձյալ սիրում է նո-

րան և զգում է, որ յուր գործածը մի ոճիր է և ոչ թե իրավացի վրեժիսնդրությունն է<sup>87</sup>:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե ֆինալում արտիստն իրոք հակառակ է զնացել իր մեկնության տրամարանությանը։ Բայց միայն առաջին հայացքից Ահավասիրկ Դեղդեմոնային սպանելով, Օթելլոն համոզված էր, թե շարը է պատճում, իսկ հիմա պարզվեց, որ շարը հենց ինքն է, իսկ Դեղդեմոնան՝ անմեղ զոհ։ Եթե այդպիս է, ուրեմն ինքը սիրել կարող է, բայց համբուրել ոչ, որովհետեւ Դեղդեմոնան, թեև անշնչացած, բայց արդարություն է, մաքրություն, որին ինքը այլևս իրավունք չունի մերձենալու։ Նրա աշխին դա սրբազնություն կլինի։ Սրբազնությունն ու Օթելլոն անհամատեղելի են։ Եվ Օթելլոն ոչ միայն չի համբուրում զոհին, այլև չի նայում նրան։ արժանի չի համարում իրեն՝ շարագործին, այդ վայելքը։ Իր արարությունը զրկել է իրեն այդ իրավունքից։ մավրն անողոք եղավ Դեղդեմոնայի հանդեպ, նույնքան անողոք է և իր հանդեպ։

Ի միշի այլոց նկատենք, որ Քինը փորձ էր անում համբուրել Դեղդեմոնային, բայց չհասած նրան՝ մեռնում էր<sup>88</sup>։ Նույնը և Օլրիջը, որի մասին պարզ ասված է, թե իրեն սրախողիող անելուց հետո ձգվում էր դեպի Դեղդեմոնան, բայց, «ասես անարժան նրան, ընկնում և մեռնում էր կես-ճանապարհին»<sup>89</sup>։

Մավրի դասական բնութագրությունը պատկանում է Պուշկինին՝ «Օթելլոն բնությունից խանդուտ չէ, ընդհակառակ՝ դյուրահավատ է»<sup>90</sup>։

Աշխարհի բոլոր բեմերի լավագույն Օթելլոնները, անկախ իրենց ապրած ժամանակից և աղդեցությունից, ընկնում են այս բնութագրման տակ։ Այստեղ են Մոշալովը, Սալվինին, Օլրիջը, հհաբեկ, նաև ուրիշներ։ Սըրանց կողքին է Ադամյանը նույնպես։ Բոլորն էլ մի-

մլանց նման են և միաժամանակ իրարից միանգամայն տարրերու նման են, որովհետև դրանցից ոչ մեկի Օթելլոն բնությունից խանդուտ չէ, բոլորն էլ դլուրահավատ են: Եվ, այնուամենայնիվ, տարրեր են: Խոսքն այն մասին է, որ կերպարի ընդհանուր ըմբռնուամբ նույն է, իսկ ըմբռնման մեկնարանությունը՝ յուրաքանչյուրի մոտ տարրեր:

### Վերցնենք Սարվինիին և Աղամյանին:

Այս երկու Օթելլոներն էլ հոգեկան մաքրությամբ են աշխի ընկնում: Եվ, այնուամենայնիվ, տարրերություն կատ: Տարրերությունն այն է, որ մեկի մաքրությունը, խոսքը Սարվինիի մասին է, բնության զավակի պարզ հայացքն է աշխարհի, մարդկանց ու նրանց փոխհարաբերության վրա: Մյուսի մաքրության հիմքը քաղաքակիրթ մարդու լայն հայացքն է: Սարվինիի Օթելլոն մաքուր է մնացել, որովհետև չի հասել վենետիկյան կեղծ քարքերին: Աղամյան-Օթելլոն մաքուր է, որովհետև բարձրացել է այդ քարքերից: Առաջինը քաղաքակրթության գեմ է, երկրորդը՝ քաղաքակրթության ներկայացուցիչ: Մեկը քաղաքակրթության զոհն է, մյուսն այն խըզման, որ առաջանում է նրա ձգտուաների և իրականության միջև: Պատահական չէ, որ Սարվինիի մասին գըրված հողվածների մեծ մասում նրա Օթելլոն անշանված է բնության զավակ, մինչդեռ Աղամյան-Օթելլոն որակվում է որպես հոգեկան բարձր կազմի տիպար: Սարվինիի Օթելլոն կանշում է ետ, դեպի բնությունը, իսկ Աղամյան-Օթելլոն այլ ճանապարհով է գնում, քայլում է դեպի առաջ: Մեկը սրամիտ կերպով դիմել է, թե Սարվինիի ձայնը ամբողջ ժամանակ կանշում է դեպի պարզը, հասարակը, բնականը, դեպի ժան-ժակ Ռուառոն, դեպի մարդու բնական իրավունքի ուամունքը<sup>91:</sup> Իսկ Աղամյան-Օթելլոյի հայացքը ուղղված է դեպի ապա-

զան։ Եվ եթե նա անընդհատ պայքարի մեջ է, ինչպես  
ինքն իր հետ, այնպես էլ շրջապատի, ապա նրա հա-  
մար, որ ոչ մի կերպ չի ուզում կորցնել հավատը մար-  
դու նկատմամբ։ Եթե Օթելլո-Սալվինին սպանում է  
Դեղնմոնային և գրանով կտրում այն վերջին կապը, որ  
կար ազատ, վայրի բնության և քաղաքակիրթ աշխարհի  
միջն, համարելով այդ երկուսի համագործակցությունն  
այլնս անհարիր, ապա Աղամյան—Օթելլոն սպանում է՝  
շարի առաջն առնելու համար, որի գոյությունը սպան-  
ում է մարդու կոշման գնդեցիկ ու ներդաշնակ ըմբցու-  
մանը։

\* \* \*

Իր վրեմիսնդրության մեջ Աղամյանը դնելով մեծ,  
լայն, ընդհանրացնող բովանդակություն, բարձրացնում  
է Օթելլոյի կերպարը ըմբռնման նոր աստիճանի, Այլ  
կերպ ասած՝ գերասանը կերպարին մոտենում էր մի  
այնպիսի կետից և տալիս նրան այնպիսի բացատրու-  
թյուն, որով ոչ միայն լուսաբանել կարողանար շեքըս-  
պիրյան երկը, այլև իր հանդիսատեսի հետ խոսել, 80-  
ական թվականների ոճակցիայի պայմաններում ապ-  
րող հանդիսատեսի հոգու և մտքի հետ, ինչպես ժամա-  
նակակիցը ժամանակակցի։

Արդարադատությունն անողոք է։ Նա չի ճանալում  
որևէ զանազանություն մարդկանց միջն, լինի այդ սե-  
ռի, դասի, թե ցեղի... միջն Արդարադատության սուրբն  
անխուսափելիորեն պետք է իշխնի նրա գլխին, ով մեղան-  
չել է արդարության դեմ, ով էլ նա լինի, չերմորեն սի-  
րածդ մերձավորը, թե հենց ինքու Արդարությունը վեր է  
սիրուց և մարդուց։ Նրանից լխուսափեց ամենալուսա-  
վորը՝ մավրի շքնաղ Դեղնմոնան, լխուսափեց և ինքը՝  
Ժավրը։

Արդարության դատ տեսնելով՝ Դեղզեմանայի վրա օթելոն անարդար գտնվեց, ուրեմն թող հենց ինքը, Օթելոն, արդարադատության պինվորը, ահեղ դատաստան տեսնի և իր գլխին։

Իրեն նվիրելով՝ արդարադատությանը՝ Օթելո—Ադամյանը զոհվում է որպես նրա զինվորը։

\* \* \*

Այն լուսաբանությունը, որ տվեց Ադամյանը Օթելոյի կերպարին, առաջ բերելով հիացում, մասամբ և զըժգուհություն՝ աստիճանաբար հաղթանակեց և, ի վերջո, գարձավ տիրապետող։ Հեռու ենք դա նրա անմիջական ազդեցությանը վերագրելու մտքից։ Դա չէ էականը էականը սկզբունքն է։ Եթե սկզբունքը ճշմարիտ է, ուրեմն վաղ թե ուշ պիտի հաղթանակի։ Այդպես էլ եղավ։ Առանց տարակուաանքի կարող ենք ասել, որ Ադամյանը եղավ այդ հաղթանակը նվաճողների առաջին շարքերում։

Արդեն առիթ ունեցել ենք լենսկու Օթելոն հիշելու 1888-ի փետրվարի 23-ին լենսկին փորձեց Օթելոյի գերը Մսսկվայի Փոքր թատրոնի բեմում մեկնաբանել նորովի ու հակադրություն Օթելոյի դերակատարների մեծ մասի, պ. լենսկին,— գրում է այն ժամանակվածնադատներից մեկը,— Շեքսպիրի բարեկամ, անգլիական ողբերգու Ռիշարդ Բերեխի օրինակով, Օթելոյի հագելինակի կենտրոնը դարձրել է վիշտը, ետ մղելով վայրի կրքի կուպիտ դրսերուամները»<sup>92</sup>։

Սա այն ելակետն է, որով խաղացել է Ադամյանը։ Ուրեմն, անկախ միմյանցից, երկու դերասան հանգել են միևնույն ճշմարտությանը, այն տարբերությամբ, ուակայն, որ մեկի արածն ընդունվել է, իսկ մյուսինը՝ լենսկունը, քննադատվելու

Նույն ճանապարհով է գնացել նաև էմաննուել Զիո-

վանին, որը 90-ական թվականներին Ռուսաստանում հանդես է եկել Օթելլոյի դերով, Մամուլը նշել է, թե ինչպես պատշու գաղանին վանելով բեմից՝ դերասանը մարդկայնացրել, ազնվացրել է կերպարը, ցույց տալով, որ նրա ասլումները հետևանք են ոչ թե խանդի, այլ տանըող վշտի <sup>93</sup>,

Բայց ահա մի ուրիշ, ռուսական Օթելլու նոսքը Մամոնտ-Դալսկու մասին է: Շնա կենդանի դեմք ստեղծեց, առնդմվածային և դիմային պոռթկումներով էությանը հազորդեց մարդկային պարզ կերպարանք <sup>94</sup>: Կարդում ես, և թվում է թե Աղամյանի մասին է գրված, մինչդեռ խոսքը մի ներկայացման շուրջն է, որ կայացել է 1900-ին: Եվ, ինչպես պետք էր սպասել, Դալսկուն ես քննադատողներ են նղել: Դա շպետք է վերագրել տադանդի նվազ ուժին, մանավանդ, որ թեև թիշ, բայց այդ խաղն ուներ նաև գնահատողներ: Հարցը հաջողության աստիճանը չէ, այլ այն, թե ինչպես ստեղծագործական միտքը տարբեր ուղիներով դերասաններին տանում է դեպի բարձր ու ճշմարիտ նպատակետը:

Հետեւովայում. Աղամյանը կանգնած էր մի ճանապարհի վրա, որի մի հեռավոր ծայրը գնում-հասնում է շեթըսպիրյան ժամանակները՝ Բերբեչի խաղը մավրի դերում, մյուս ծայրը ձգվում է դեպի մեր օրերի թատրոնը, ուր Օթելլոյի կերպարի լուսաբանությունը, մինչ այդ արտահայտված տարբեր շափով՝ հասավ մարդկայնության բարձրագույն դրսնորմանը:

## ԼԻՐ ԱՐՔԱ

Լիրի դերակատարումը տարակարծությունների տեսլիք է տվել: Հենց սկզբից, մինչև այդ դերում Աղամյանին տեսնելը, ինչպես նաև Օթելլոյի դերակատարմանը

ժամանակ, մարդիկ կասկածում էին, թե բավական ուժ կունենա՞ արդյոք մի այդպիսի վիթխարի դերի հետ շափկելու համար, Բացի զրանից, առաջին ներկայացման օրը, թատերաբանում, հետո էլ թատրոնի պատերից դուրս, մամուլի էշերում և ընտանեկան հավաքույթներին մի միասնական կարծիք շի եղել այդ դերակատարման շուրջը։ Այդպես էլ հետո, ուրիշ քաղաքներում, լինի այդ Օդեսան, Ելիզավետպորապը, Կազանը, թե՝ մի այլ վայր։

Հիշատակենք մի օրինակ։ Մոսկվայում, 1888-ին, Ադամյանը խաղաց Համլետ և Օթելլու «Տեատր ի ժիզնի» քննադատը, որ այն կարծիքին էր, թե ամենքը պետք է տեսնեն Ադամյանի խաղը, նրա վերոհիշյալ երկու դերակատարումները քննության առնելուց հետո, գրում է, թե «լսել է, որ Ադամյանը կատարելու է նաև Ռոբիելի, Կորրադոյի և Լիրի դերերը։ Նա իր կարծիքն է հայտնում, թե որ դերում՝ ինչպես կլինի դերասանը։ Հետաքրորդիրն այն է, որ չկասկածելով, թե Ռոբիելը նրա լավ դերերից մեկն է լինելու, Կորրադոյի մասին խոսելիս նշում է այն տեսարանները, ուր արտիստը լավ պիտի խաղա։ Եվ իսկապես, նա մատնացուց է արել այն տեղերը, որոնք քննադատությունը միշտ էլ բարձր է գնահատել։ Այսպիսի թափանցման տեր քննադատը տարակուառամ էր, թե Ադամյանը կկարողանա՞ արդյոք հաղթահարել հսկա Լիրին։ «Այդ հարց է։ Կապրենք՝ կտեսնենք»<sup>1</sup>։

Ինչպես Օթելոյի ժամանակ, այնպես էլ հիմա իրարամերժ գնահատականներ ստացավ Ադամյանը։ Մի կողմից ժլատ, զուսպ վերաբերմունք, մյուս կողմից՝ անզուսպ հիացում։ Մի դեպքում բացասաւմ, մի այլ դեպքում՝ շերմ պաշտպանություն։ Եվ այդ ամենը իր արտացոլումն է գտել մամուլի էշերում։

## Մի-երկու փաստ

Մի քննադատ գրում է, որ Աղամյանի կիրը ռամենաշաշողն է նրա մինչև այժմ խաղացած բոլոր դերերիցը<sup>2</sup>: Մի ուրիշն էլ գրում է, թե «կիր արքայի մեջ նա թույլ էր» Յ. Մեկն այն կարծիքին է, թե կիրը Աղամյանի պատկ կազմող դերերից չէ և պետք է հիշել, որ նա հոչակի է հասել ոչ դրա շնորհիվ<sup>4</sup>: Իսկ մեկ ուրիշն ասում է, թե Աղամյանը, շնայած ուկոր արքա» ներկայացման ընդհանուր աննպաստ պայմաններին, «հրաշքներ էր գործում»<sup>5</sup>:

Նույնիսկ Շիրվանղաղնն, որ գրեթե միշտ բարձրացրել է Աղամյանին, վերապահ վերաբերմունք ուներ գեղի կիրը:

Սակայն այդպես էր դատում ոչ միայն քննադատությունը:

Հանդիսատես հասարակության մեջ էլ այդ կերպարի գնահատության շուրջը լուրջ տարածայնություններ են եղել: Օրինակ՝ մի քննադատ իր հոդվածը կառուցել է շմահավան հանդիսատեսների հետ մղվող վեճի վրա: Հոդվածում ասված է. «Այն ժամանակ, երբ հանդիսականների մեջ մասը, առավելապես ուսանող երիտասարդությունը, սքանչացած էր Աղամյանի խաղով և իր հավանությունը արտահայտելու մեջ հասնում էր մոլեգնության, դահլիճում սակալաթիվ շեհն այնպիսինները, որոնք թեև առաջ հիացել էին Աղամյանի խաղով, այժմ գտնում էին, որ կիր արքայի դերը նրա հնարավորություններից դուրս է»<sup>6</sup>:

Ոչ մի վկայություն չի պահպանվել, թե ինքը, գերասանը, ի՞նչ վերաբերմունք է ունեցել կիրի շուրջն առաջացած տարակարծիք քննադատության հանդեպ: Սակայն, դրա փոխարեն, մի-երկու տվյալ է մնացել այն

մասին, թե ինքը ինչպես էր վերաբերվում Արքի կերպարին:

Արքի կերպարը Աղամյանի սրտովին էր Նրանով դերասանը պարզապես համարյա հափշտակված էր, ինչպես Համլետով՝ Թարգմանիլը հետաքրքիր հիշողություններ է թողել անդրանիկ ներկայացման պատրաստման օրերից. «Նա կորցրել էր յուր քունը, — պատմում է Սենեքերիմ Արծրունին, — գիշերները անկողնուց կելներ և ճեմելով մութ սենյակում, մոնուղակներ կարտասաններ, տեսարաններ կստեղծեր, ինքն իրն կխոսնիր», Եվ երբ Աղամյանը այդ մասին պատմել է Արծրունուն, ասել, թե ինչպես մի գիշեր թռել է անկողնուց և արտասանել Արքի առաջին հիասթափությունն արտահայտող մենախոսությունը՝ «Պուր իմ դստերքը չեք, ես ձեզ թագավորություն շեմ ընծայել...», Արծրունին կարծել է, թե արտիստի առողջությունը խախտվել է, նրա հետ լուրջ բան է պատահել, խորհրդակցել է թատրոնի մյուս դեկավարների հետ, որ հոգ տանեն, մտածեն, թե ինչ կարելի է անել՝ գալիք դժբախտությունը օր առաջ կանխելու համար<sup>7</sup>. Որ Աղամյանի առողջությունը խախտված էր՝ այդ ճիշտ է, բայց ճիշտ է և այն, որ դա ոչ մի կապ չուներ «Լիր արքա» ներկայացման ու նրա պատմության հետ: Այն, ինչ պատմել է Արծրունուն, իսկ տարիներ հետո նաև Պոլսի մտերիմ բարեկամներից մեկին, վկայում է այն ուժեղ ինքնամփոփման մասին, որի մեջ էր գտնվում Աղամյանը՝ դերը պատրաստելու շրջանում<sup>8</sup>:

Նշանակում է հափշտակված էր դերով, ըստ որում այն աստիճան, որ շատ էր ցավում Պոլսում Լիր, ինչպես և Համլետ խաղալու իրավունք շստանալու համար, Եվ հաճախ, ընկերներով շրջապատված, կամ նրանց խնդրանքով, կամ էլ առանց սպասելու, որ խնդրեն, նա

արտասանել է Համլետից «Էկինել թե Ախնելը», իսկ Էկինից՝ անեծքի տեսարանը:

Թանի որ խոսք բացվեց Լիրի նկատմամբ արտիստի ունեցած վերաբերմումքի մասին, նկատենք հետևյալը.

Ինչ-որ մի շրջան եղավ, երբ Աղամյանը իր գաստրոլային ներկայացումները սկսում էր «Համլետով» (ի դեպ, այդպես է արվել միշտ և ամենուրեք, բացի Բաթվից և Թիֆլիսից, 1885-ին և 1886-ին) և ավարտում «Լիր արքայով»։ Այդպես է վարվել Օդեսայում։ Նույնն է արել նաև Ելիդավետդրադում, ինչպես և Կաղանում։ Թևավ էլ պատահական զուգադիպություն չէ սա, այլ նախապես մտածված և նպատակային հաջորդականություն։ Ոչ թե սիրելի դերով էր սկսում և նույնչափ սիրելի դերով ավարտում, այլ մեկով սկսելու և մյուսով վերջացնելու մեջ նա որոշակի իմաստ էր դնում։ Ով-ով՝ նա լավ գիտեր, որ Լիրի շուրջը վեճեր կան և նույնիսկ լուրջ վերապահություններ։ Ուրեմն ինչ միտք՝ հասարակայնության, թեկուղե մի մասի, դրանից առաջ ստացված լավ տպավորությունը թուլացնել, իր շուրջը եղած ոգնորությունը իշեցնել։ Եթե չէր կամենում «Ռնրագործի ընտանիքով» վերջացնել, որը հատկապես վերջին տեսարանում միշտ էլ ցնցել է հանդիսատեսին, ապա կարող էր վերստին ներկայացումների շարքն ավարտել բոլորի կողմից արդեն անվերապահ գլուխ-գործոց ձանաշված «Համլետով»։ Եթե չէր կամենում կրկնել, կարող էր հանդես գալ «Ռնրիելով», որը նույնպես համարվում էր նրա լավագույն դերերից մեկը։ Բայց նա այդպես չի վարվել։ Եվ դա, թվում է թե, պատճառաբանված քայլ էր։

Ինչպես որ Աղամյանի խաղացած բոլոր գլխավոր դերերը, որոնք նա պահել էր իր շրջագայության խաղացանկում, այնպես էլ Լիրը մի մեծ թեմայի տարրեր

ճասն էր կազմում կամ, ավելի ճիշտ, նույն այդ մեծ  
թեժան էր արտահայտում՝ տարրեր բնավորությունների  
և մարդկային տարրեր հարաբերությունների մեջ, Մենք  
արդեն ասել ենք, որ դերասանի ստեղծագործության  
մեջ արծարծվել է մի հիմնական հարց՝ մարդու բարձր  
երազանքը և դրա կործանումը՝ բիրտ իրականության  
հետ բախվելով, ե'վ Համլետը, և՛ Արքանինը, և՛ Օթելոն,  
և՛ Ուրինը, այդ թվում նաև Լիրը, այդ գլխավոր մտքի  
հաստատմանն էին ծառայում: Դա ոչ այլ ինչ էր, բայց  
եթե իրականության ճանաշման ընթացք, իսկ դա թերևս  
ոչ մի կերպարի մեջ այնպես ցայտուն չի արտահայտ-  
վել, ինչպես Լիրի ծվ եթե նկատի ունենանք, որ Լիրը  
ամենամեծն էր տարիքով Աղամյանի մյուս բոլոր հե-  
րոսներից, և Համլետն էլ ամենաերիտասարդը, ապա  
ստացվում է այնպես, որ նա մի կյանք է պատկերել,  
թող տարօրինակ շթվա, մի մեծ, համայնապարփակ  
կյանք, որ տարրեր առիթներով ընկել է տարրեր պատ-  
մությունների մեջ և յուրաքանչյուր անգամ առարկայ-  
նացել մի ինչ-որ բնավորության մեջ, մի դեպքում աք-  
սորական Կորրագոյի, մի այլ դեպքում զորավար մավ-  
րի, երրեմն Ուրինը, ու չնայած բոլորի ոչ միայն բնա-  
վորության, այլև զբաղմունքի տարրերությանը, բոլորն  
էլ, ըստ Աղամյանի խաղի, մտածողներ են և եթե չեն  
էլ, ապա կյանքը նրանց դարձնում է այդպիսին, և  
նրանցից յուրաքանչյուրը սկզբում ոգևորված կյանքով  
ու մարդկանցով, հանգում է հիասթափության, մի մեծ  
ողբերգության և այդ ճանապարհով գալիս-հասնում է,  
ճիշտ է, մահվան, բայց մաքրված, վեհացած, ինչպես,  
նրա համոզումով, պետք է լինի իսկական մարդը:  
Աղամյանի հերոսներն անցնելով հիասթափության քար-  
քարոտ արահետներով՝ հասնում էին կենսահաստատ-  
ման մեծ գաղափարին:

\* \* \*

«Էիր արքան» բեմում սովորաբար մեկնաբանվել է որպես նենդ և երախտամոռ աղջիկներից խարված հոր պատմություն։ Այսպես ևն բնութագրում շեքսպիրագետները շեքսպիրյան ողբերգության բեմական տրադիցիան անցյալում։

Իբրև ընդհանուր գնահատական այս բնորոշումը, իհարկե, ճիշտ է, սակայն հազիվ թե հիմնավոր լինի և մանավանդ գիտական՝ մտածել, որ կիր խաղացող դերասանները, մեկը-մյուսից մեծ արվեստագետ, մնացել են պիեսի դադափարական մեկնաբանության այդ անձուկ շրջանակների մեջ։ Մի՛թե շեղումներ չեն եղել, մի՛թե ոչ ոքի մտքով մի նոր, այլ մոտեցում չի անցել։ Կամ այդ ինչպե՞ս է պատահել, որ այդքան խոշոր դերասաններ, թեկուզն ներքին մղումով, չեն ընթացել դեպի մարդկային հարաբերությունների ավելի լայն ընդգրկում։

Պարզապես նյութը, ինչպես հարկն է, ուսումնասիրպած չէ և երևի դրանով միայն պետք է բացատրել, որ կիրի անցյալ դերակատարները ընկել են մի հայտարարի տակ։ Համոզված ենք, որ հիմնավոր հետազոտությունը վերանայման կարող է ևնթարկել վերոհիշյալ բնորոշումը։ Կիր խաղացող, իհարկե, ոչ բոլոր դերասանների, բայց մի մասի համար համենայն դեպությունը առաջարկության օրինակի վրա։

Աղամյանի խաղը կիրի դերում՝ այդ կերպարի ավանդական ըմբռնումից շեղվելու, ավելի թարմ բացատրությամբ խաղալու խիզախ փորձ է։ Որ այդ այդպես է՝ կասկածի տեղիք չեն տալիս ոռւսական մամուլի այն էջերը, որ անցյալ դարի 80-ական թվականներին նվիրվել են։ Աղամյանի կիրին։ Եվ ինչպե՞ս կարելի է, առանց

ծանոթ լինելու այդ նյութերին, գրել, թե կիրի դերակատարներից Պելցովը ռկատարեց առաջին քայլը. նա կործանեց հին կիրը, այսինքն՝ ձգտեց ցույց տալ կիրի զարգացումը, նրա աճը, բռնակալի վերափոխումը մարդու<sup>9</sup>:

Ուրեմն ի՞նչ. ստացվում է այնպես, որ գոյություն է ունեցել կիրի պատկերման ավանդական մեկնությունն և այդ մեկնությամբ են խաղացել անցյալում կիրի բոլոր դերակատարներն անխտիր, և միայն 20-ական թվականներին են այդ տիրապետող համոզումը վերանայելու առաջին փորձերը կատարվել:

Այսպիսի հապճեպ եղրակացությունը մի այլ վտանգ էլ է կրում իր մեջ։ Կամա թե ակամա, նորը հնից արմատապես անշրպետում է, չի տեսնում անցման գծեր և փոխանակ տեսնելու, թե ինչ բնական կողմերով է հինը գալիս մերվում նորին, ակամա կանգնում է անցյալի և ներկայի մերկ հակադրության ճանապարհին, որը, իհարկե, լուծման պարզ և դյուրին, բարդություններից հեռու ուղին է, ինչպես նաև տրադիցիաների հաջորդականության բացառման անառողջ, սխալական ուղին:

Երբ խորանում ենք Աղամյանի կիրի մեջ, ապա, մի կողմից, պարզվում է, թեկուզն ընդհանուր գծերով, այն տարբերությունը, որ կար նրա և կերպարի ավանդական ըմբռնման կողմնակիցների միջև, մյուս կողմից՝ հստակ երեսում են այն գծերը, որոնցով այդ կատարումը այն հեռավոր ժամանակներից աղեքը է նետում դեպի մեր ժամանակների թատրոնը և ընդհանրության եղրեր գտնում կիրի այն նոր բացատրության հետ, որը նվաճելի գարձավ սովետական թատրոնում։

Զարմանալի երեսւյթ. երբ խորանում ես շեքսպիրյան կերպարների աղամյանական լուսաբանության մեջ,

ապա Հես կարող չնկատել, թե ինչպես նրա կատարած աշխատանքը այդ կերպարների վրա իսկապես որ գալիս-հասնում է մինչև մեր օրերը, մինչև այն բարձունքները, որ սովորական թատրոնը նվաճեց Շեքսպիրին բոլորովին նոր մնակեաբանությամբ ներկայացնելու անապարհին, Օստուժեմ Օթելոն և Միխոելսի Լիրը բոլորի կողմից ճանաչված թանկագին ձեռքբերումներ են: Ծիշտ է, այդ մակարդակին չհասավ Համլետի մարմնավորման բազմաթիվ փորձերից ոչ մեկը մեղանում: Թայց արդյո՞ք այն մարդկայնությունը, որի՝ վրա կառուցվեց օստուժեյան Օթելոն՝ նախորդ շռմի: Իհարկե ունի: Ոչ միայն Աղամյանը, ուրիշները նույնպես: Բայց նա ևս Մի՞թք հիմք չկա մտածելու, որ Միխոելսի Լիրը, ըմբռնման որոշ կողմերով, կանխվել է Աղամյանի կողմից: Չէ՝ որ հիմնական միտքը և կերպարի զարգացումը երկուսի մոտ էլ նույնն է, այն տարբերությամբ, անշուշտ, որ կա երկու արվեստագետներին միմյանցից բաժանող կես դարի հասնող ժամանակաշրջանի միջև, և այն ամենի, որ կարող էին պայմանավորել տարբեր դարաշրջանները:

Լիրը սովորական թատրոնում, իհարկե, միայն Միխոելսը չէ: Նրանից առաջ և հետո եղել են այլ դերակատարումներ, այլ լուսարանությամբ, գուցե նույնիսկ, կարելի է ասել, հակառակ դիրքերի վրա կանգնած: Դերասան Արժալիլովը Լիրի նկարագրի մեջ գլխավորը բարությունն է դիտել, իսկ մնացած՝ դրա հետևանքի: Կերպարներ կառուցելիս հենվում էր թաթարական բանահյուսության վրա, որտեղ ժողովրդի կողմից մշակվել է ապերախտ աղջիկներից խարված, բարի ու դյուրահավատ հոր սրատուշ պատմությունը<sup>10</sup>: Եվ եթե, բեմական տրադիցիայի առումով, Արժալիլովի նախորդը կարող է ճանաչվել Լիրի անդրանիկ դերակատար

Բերբեցը, ապա Միխոնելսինը Աղամյանը չէ՝ արդյոք Չենք մտածում, թե Միխոնելսը գաղափար է ունեցել Աղամյանի խաղի մասին. Նա դրան հանդել է միանգամայն անկախութեան երբ արվեստագետները կերպարի ըմբռուման ճիշտ ճանապարհի վրա են կանգնած, ընդհանրությունը դառնում է անխուսափելի. Օստուժեի մասին խոսելիս սովորաբար ճիշում են ուրիշ գերասանների և, առաջին ճերթին, Աղամյանի ժամանակակից լենսկում. Միխոնելսի մասին գրելիս նախորդներ չեն նշվում: Մեզ հայտնի չէ, թե ուրիշներ իսկապես կան, թե ոչ, բայց նյութի ուսումնասիրությունը իրավունք է տալիս պնդելու, որ Միխոնելսը Աղամյանի զարգացումն է, այն, ինչ առանձին զծեր են լոկ Աղամյանի խաղի մեջ՝ Միխոնելսի մոտ ամբողջական խորության է հասել, բարձրացվել փիլիսոփայական ընդհանրացման մակարդակին:

Այս բոլորը հիմք է տալիս մտածելու Աղամյանի մարմնավորած կիրի նորարարական նշանակության մասին: Հնարավոր է, որ եղել են այլ դերասաններ թե՛ Ռուսաստանում, թե՛ Արևմուտքում, որոնք տրադիցիային գերի չեն մնացել: Զենք կասկածում, որ նյութի ապագա հետազոտությունը ցույց կտա մեր ենթադրության իրավացիությունը, իսկ հիմա նշենք թեկուզ մի փաստ: Անցյալ դարի 50-ական թվականների վերջերին և դրա հաջորդ տասնամյակին, Մոլալովից, Կարատիգինից և Սաղովսկուց հետո, հայտնվում է կիրի մի նոր դերակատար՝ Վասիլի Վասիլևիչ Սամոյլովը: Վերջինս, որքան մեզ հայտնի է, նախ ձգտել է հեռանալ իր նախորդների ոռմանտիկական տրադիցիայից. և ապա կիրի վարքագծի հիմնավորման մեջ մոտենալ մի բացատրության, ինչ որ հետագայում նկատվել է նաև Աղամյանի խաղում: Ճիշտ է, տարբերիչ կողմեր էլ կան, այն էլ

հական, բայց կա մի գիծ, որ նրանց մոտեցնում է միջանց, Ամեննին զարմանալի չէ, որ Սամոյլովի վրա և Հարձակվողներ են եղել: Օրինակ՝ «Սևերնայա պշելան» նույնիսկ գրել է, թե նա այդ գերը պարզապես չպետք է խաղարք Ռմեցել է գնահատողներ և պաշտպաններ, բայց ավելի քիչ թվով: Գրեթե նույն պատմությունը, ինչ որ Աղամյանի ժամանակի Հետո կանորագառնանը Սամոյլովի և Աղամյանի մեկնարանության նման և տարրերիչ կողմերին: Իսկ այժմ դառնալով Աղամյանին, ասենք, որ ինչպես մնացած բոլոր դերենում, այնպես էլ այս դեպքում, կիր խաղալիս տրադիցիայից հեռացել է և նրա խաղի նշանակությունը, առաջման որպես միակն այդ տարիներին, առաձնանում և ըստըցանում է:

Դրանով, միայն դրանով պետք է բացատրել, թե ինչու գտնվեցին մարդիկ, որ անկեղծ դժգոհություն և այլունեցին նրա խաղը նայելիս նորարարությունը մեծ մասամբ դիմադրության է հանդիպում: Եթե մարդիկ իրենց պատկերացումը, ըստ որում հաճախ ոչ թե պիեսի ընթերցանությամբ, այլ մի երեւելի արվեստագետի խաղի ազդեցությամբ են կազմել, ապա միանգամայն հասկանալի է դառնում դրանց վրդովված անհանդուրժողականությունը: Որպես օրինակ հիշատակենք Օլրիչի խաղին ուված մի գնահատական՝ «Ահա» կիր, ահա՝ այն զաղափարը, որ կազմում ենք մենք՝ ողատկերացնելով կիրինա<sup>11</sup>: Ոչ միայն հիացում, որ հասկանալի է, այլև կտրուկ սահմանագծում, որից շեղվելը դատապարտելի է: Եվ եթե քննադատն ու հանդիսատեսը մի կիրի սպառիչ պատկերացման անձում շրջանակների մեջ են ամփոփվել, պարզ է, որ դրանից հետո չէին ընդունի այն, ինչ դուրս է իրենց պատկերացման սահմաններից, չենք խոսում այնս հակառակը լինելու մասին:

Այդպիսիների թվին է պատկանում նաև Եփրվանգաղեն, որը տեսել էր Ռոսսիի Լիրը և ամբողջապես գտնվելով Նրա տպավորության տակ, չէր կարողանում այնքան անկախանալ, որ Աղամյանի խաղը գնահատեր ըստ էության, համեմատությունից դուզու Հնարավոր է, որ Ռոսսիի ներկայացրած Լիրը համընկնում էր Եփրվանգաղենի պատկերացմանը Սակայն միթե Լիրի դեռում Աղամյանն այնքան նվազ էր, որ արվեստի հարցերում հմտությունը հաճախ նրբությունների մեջ թափանցող Եփրվանգաղեն իրավունք շտար մի այլ, իր և Ռոսսիի ունեցածից տարբեր հայացք միննույն կերպարի վրա։ Տարիներ անց փորձելով ճշտումներ մատցնել Աղամյանի կյանքի փաստների աղավաղումների հարցի մեջ, ինչպես և նրան արվող գնահատականների, հայտարարեց, որ Աղամյանի Լիրը վար էր Ռոսսիի Լիրից, իսկ Աղամյանի կենդանության օրով նրա գրած չերմ խոսքն այն էր, թե երկրորդ անդամ խաղալիս ցույց տվեց առաջդիմություն։ Օվ մեկ էլ՝ «ազդու կերպով նամանավանդ կատարեց վերջին տեսարանը, երբ նա յուր խեղդված աղջկան, Կորդելիային, զրկած դուրս եկավ»<sup>13</sup>։ Տարիներ հետո այս դրական գնահատականից էլ է հրաժարվելի իսկ ընդհանրապես նա գտնում էր, որ «Աղամյանի ֆիդիկականը բոլորովին չէր համապատասխանում ոչ Օթելլոյի և ոչ մանավանդ Լիրի դերերին», նկատենք, որ աշխարհահռչակ Թինը, որի Լիրը և մանավանդ Օթելլոն նանազվել են բացառիկ կւառարումներ, ոչ միայն հաղթանգամ շի եղել, այլ Աղամյանի նման նրբակազմ էր։ «Ես այսօրվա պես հիշում եմ, — գրում է Եփրվանգաղեն, — թե որպիսի անասելի շանք էր գործ դնում, ինչպես էր հնում ու քրտնում նա, երբ Լիրը սպանված Կորդելիայի դիակը զրկած դուրս էր գալիս բեմ, ինչպես մի վտիտ մանուկ նա ընկնվում էր»

իր բեռան տակը <sup>13</sup>, Եվ երբ բերում է առաջին և երկրորդ ներկայացուամների միջև եղած տարբերությունը, մարդ մնում է զարմացած, թե արժե՞ր արդյոք, որ մի այդպիսի ականավոր դեմք, ինչպիսին Շիրվանզադեն է, իրի մասին խոսելու բարի առիթը օգտագործելու փոխարեն, եռանդ է վատնել՝ աննշան դիտողություններ անելու համար Այդ հոգվածում նա խոստանում է ապագայում մանրամասնորնն խոսել Աղամյանի կիրի մասին, ողուշացնելով, որ մատնացույց է անելու մի քանի պակասությունները, որ նա ցույց է տալիս այդ դեմք մեջ <sup>14</sup>: Շիրվանզադեն իր խոստումը շկատարեց, ծրեսուն տարի հետո էլ նա կրկնեց իր խոստումը, ասելով, թե միայն արտաքինը չէ, որ խանգարում էր, «կային և ուրիշ պատճառներ, որոնց մասին մի օր կխոսնմ» <sup>15</sup>: Իր այդ խոսքն էլ շկատարեց, իսկ ինչ վերաբերում է այն դրական գնահատությանը, որ նա տարիներ առաջ, այնուամենայնիվ, փորձել է տալ, ըստ երեսութին դրանով կամենալով ջերմացնել իր սառը խոսքը, պետք է որ Աղամյանի համար վիրավորական լիներ, որպես բարյացակամ ներողամտության արտահայտություն, որին արտիստը, այն էլ այս դեպքում, ամեննին կարուտ չէր:

\* \* \*

Կիրի մեկնարանության բեմական տրադիցիան, ինչպես արդեն ասվեց, այն օրերին ընտանեկան դրամայի վրա էր հիմնված, և զլխավոր հարցը ապերախտության դատափետումն էր:

Նկատենք, որ երկար ժամանակ, 17-րդ դարի վերջին տասնամյակից մինչև 19-րդ դարի կեսերը, «կիրարքան» ներկայացվել է Նելտի փոխադրությամբ: Այս փոխադրության մեջ բնագրից կատարված շեղումները

անթիվ էին և սկզբունքային։ Օրինակ՝ բոլորովին այլ կերպ էր վերջանում պիեսը, կիրը կրկին բարձրանում էր գահ, նրա հանցագործ աղջիկները և էղմունդը մեռնում էին, իսկ Կորդելիան ամուսնանում էր Եղիարի հետ։ Կիրը, ի վերջո, դահը հանձնում էր այս երկուախն, իսկ ինքը Գլուխերի հետ առանձնանում էր, ծերումառկան խաղաղության մեջ վերապրելու անցած կյանքը։ Այդ փոխադրությամբ մի շրջան խաղացել է նույնիսկ այնպիսի դերասան, ինչպիսին էղմունդ Քինն է, որը հետագայում հրաժարվեց դրանից և վերադարձավ բուժ-Շեքսպիրին<sup>16</sup>։

Աղամյանն ավելի լայն դրեց խնդիրը, քան ընդունված էր ըստ տրադիցիայի Խարված Հոր և ապերախտաղջիկների բախումը դերասանի համար լոկ սյուժետային նշանակություն ունեցավ, իսկ այդ առնչությամբ արծարծված հարցերին ընդհանրացնող իմաստ հաղորդվեց։ Նրա կատարումը միաժամանակ սմբեր հաօարակական մերկացնող պաթոս, նվազեցնելու մասնակի առնվենժամանակները, որոնց հարազատ ծնունդը որիտի համարել կիրի այսպիսի լուսարանությունը, ապա միանգամայն հասկանալի կղառնա նրա խաղի արդիական շեշտը, կապը 80-ական թվականների իրականության հետ։

Ռուս քննադատներից մեկը Աղամյանի կիրի դերակատարման մասին հրապարակել է Հոդված՝ բավականալով իր անվան և աղջանվան սկզբնատառերը միայն դնելով։ Նկատի ունենալով դերակատարման շուրջ առաջացած վեճերն ու տարածայնությունները, նա ծավալուն հոդված է գրել՝ լուսարաննելով դերասանի խաղը և առնելով նրան իր վստահ պաշտպանության ներքու։

Հոդվածագիրը սկզբում պարզում է, թե ինչպես է

ինքն ըմբռնում կիրի կերպարը Նա ասում է, որ Կիրի բնավագության մեջ երկվություն կա. առաջին մասում բռնակալ, երկրորդում՝ մարդու Զինելով հանդիսատեսին սկզբում իր գեմ, ողբերգության ընթացքում սրտագին կարենկցություն է առաջացնում <sup>17</sup>:

Եերսպիրագիտական գրականության մեջ այն միտքն է զարգացվել, թե կիրն իր ունեցածը բաժանում է աղշիկներին մղված հայրական անհուն սիրուց: Դա բարի կիրն է: Մասն է նա բեմական տրադիցիայի մեջ, մի տրադիցիա, որի նախահայրը Բերբեչն է, և վերջին ներկայացուցիչներից մեկը՝ Արժալիլովը: Այդ երկուսի միջև բարձրանում է մի այնպիսի հսկա, ինչպիսին Օլրիչն է:

Թե ինչու է կիրը իր տերության բաժանման մտքին հանգում, ինչպես հայտնի է, համարվել է տարօրինակ, անբռնական և նույնիսկ արտառոց: Օրինակ՝ Գյոթեն այն կարծիքին էր, որ ողբերգության հանգույցը կամայական է և ոչ հիմնավորված: Այս հանգամանքն էլ պայմանավորել է կիրի կերպարի բեմական մարմնավորման գմբվարությունը: Ծես շեքսպիրյան մյուս հերոսների կերպարը ներկայացնելու համար պետք է խոշոր, աշքի ընկնող տաղանդ, զարգացում, ապա այստեղ, դրանցից բացի, դերասանը պետք է կարողանա բացատրել այն, ինչ բացատրված չէ ողբերգության մեջ: Որքան գերասանը բնական բացատրություն գտնի կիրի արարքի համար, այնքան ավելի համոզիլ կդառնա գերասանի խաղը՝ հանգույցի խճճման և լուծման ընթացքում:

Օլրիչի քննադատներն ասում են, որ նեզր ողբերգակի խաղի համաձայն՝ կիրի վարքագծի մեջ ոչինչ տարօրինակ չկա: «Դա ոչ թե թագավորի քմահաճույք է, — գրում է շեքսպիրագետ Ա. Ն. Բաժենովը՝ ողբերգակի

խաղը նայելուց հետո,— այլ մի հոր ցանկություն՝ ճանաշելու արդեն մեծացած աղջիկների ինքնուրույնությունը, որի համար նրանք լիակատար իրավունք ունեն»<sup>19</sup>, Այդպես են կարծում և ուրիշները Անցյալ դարի 60-ական թվականների մի հոդվածագիր հայտարարում է. «իրի բռնկման և անարդարացի զայրույթի ու սարսափելի նզովքի պահերը նրա մեջ ծագում են բարության և արդարամտության խիստ զարգացած զգացումից, կիրի բնավորության այս գիծը Օլրիչը հասկացել է սքանչելի կերպով»<sup>20</sup>. Այս և նման այլ տվյալների հիման վրա Օլրիչի բեմական ժառանգության հետազոտողներն այն եղրակացության են եկել, որ Գյոթեի կողմից անհեթեթ հայտարարված հանգույցը դերասանի խաղում խոր իմաստ է ստանում. Արքայական գաճը կիրը թողնում է ընդմիշտ՝ զավակների նկատմամբ ունեցած սահման շնանաշող սիրուց<sup>21</sup>, Այսպիսի բացատրությունը, անշուշտ, վեճի առիթ է տալիս, բայց որ նա կենսագործում է գոտել և իրրև բեմական տրադիցիա, դեռևս Բերբեչից սկսած, հարյուրամյակների ընթացքում շատերին է համոզնել՝ անկասկած է:

Կիրի արարթին բոլորովին այլ բացատրություն է տվել Ռոսսին: Յու. Յուրեց, որ տեսել է Ռոսսիի կիրը Մոսկվայում, ասում է, թե անհամբերությամբ էր սպասում իտալացի ողբերգակի առաջին մուտքին, որովհետեւ ինքը լավ գիտեր այդ ողբերգությունը, կարդացել էր նրա մասին քննադատական աշխատություններ և գտնում էր, որ հանգույցը ճշմարտապատում չէ: Ենթադր որ դժվար է ենթադրել, — գրում է նա, — որ առողջ դատողությամբ և պայծառ հիշողությամբ մարդը կարողանար շնորհուեն սիրելի իր դստերը նզովել և վանել իրենից, դրա համար շունենալով թվում է թե բավկանաշափ լուրջ առիթները<sup>22</sup>,

Մինչ Ռուսին, Ցուրկը այդ դերում տեսել էր էռնստ Պասարախին, և նա իր խաղով շի ցըել ուսա դերասանի ունեցած տարակուտանքները թեմ էր դուրս գալիս նա իրու մի վեհ արքա, ամուր հենված իր ծանր սրի վրա և բազմում էր դահին՝ միահեծան ինքնակալի շուրջով։ Բեմի վրա էր իմաստուն տիրակալը, հավաքած իր մերձավորներին՝ պետական կարևորագույն խնդիրների լուծման համար։ «Նրա վարքագծում ոչ մի բան չէր կանխաղուշակում այս պատկերի ավարտը, և նման մեկնարանության դեպքում կիրի հետագա արարքը կատարյալ անակնկալ էր»,— գրում է Ցուրկը <sup>22</sup>, Սրանից հետո պարզ է նրա բուռն ցանկությունը՝ տեսնելու, թե ինչպես է Ռուսին հիմնավորելու կիրի արարքը։

Ահա թե ինչ է պատմում նա։

Սկսվեց առաջին գործողությունը։ Բեմումն են Քենտը, Գլուխերը և էղմունդը։ Կարճ խոսակցություն նրանց միջև Հասարակությունը լսում է ցըված։ Բոլորը սպասում են հոչակավոր արտիստի հայտնվելուն։ Լըսվում է արքայի մուտքը ազդարարող փողհարություն։ Հանդիսավոր կերպով մտնում է շքախումբը և շրջապատում դահը։ Ոչ-մեծ դադարի Հանդիսատեսը լարվում է և սպասում արքայի հայտնվելուն, որը թվում է, թե պետք է վեհ ու հանդարտ քայլերով հապատ առաջանա դեպի իր դահը։ Եվ այլ կերպ ինչպես կարող էր լինել, Զէ՞ որ կիրը արքա է, արքա ոտից մինչև գլուխ, ինչպես ինքն է իր մասին ասում։ Եվ հանկարծ, բոլորի համար անսպասելի կերպով, ծնծղաների հնչյունի տակ մտնում է կիրը, ո՞չ շի մտնում, կասեինց ներս է վազում մուրը մահակի նման թխկթխսկացնելով և ինչ-որ նյարդային դրդովածությամբ; աչ ու ձախ օդային համբուլը ուղարկելով, աստիճաններով արագ բարձրանում դեպի իր դահը <sup>23</sup>։

Ճուլոնի պատմածից, ինչպես, իհարկե, նաև այլ աղ-  
բլուրներից, կարելի է եզրակացնել, որ, ըստ Ռոսիի,  
Հիրի հետագա խելագարության հիմքերը կային արդեն  
ողբերգության սկզբում:

Հիրի արարքը Սալվինին և ուրիշ դերասաններ բա-  
ցատրել են այլ կերպ, Սիրում էր՝ բաժանեց, իսկ դրա  
պատասխանը՝ ապերախտություն Եվ այդ հողի վրա  
Հոգեկան խորին կսկիծ, որը խարված հորը խելագարու-  
թյան է հասցնում: Այսպիսի լուսարանությունը սահ-  
մանափակում է ողբերգության խնդիրը և նրան, նայած  
զերակատարին, գնում մնալողամատիկ երանգավորման  
վտանգի տակ: Սրտագին շեշտը ազգում է մարդկանց  
վրա, արցունքներ պրոկում:

Այդ մոտեցումը Աղամյանին չեր բավարարում: Եվ  
եթե նա մի այլ, տարրեր տեսանկյումից դիտեց Լիրի  
կերպարը, ապա ոչ թե մյուսներից զանազանվելու հա-  
յար, այլ նախ և առաջ Շեքսպիրին բոլորովին այլ կերպ  
ըմբռնելու պատճառով: Վերջապես, նրան ոչ առաջնե-  
րում, ոչ էլ այժմ բնակ չի զրադեցրել հանդիսատեսի  
նյարդերի վրա խաղալու և այդ գնով հաջողություն շա-  
հելու խնդիրը: Ապա ինչպե՞ս բացատրել Լիրի տարօ-  
րինակ արարթը: Ոչ թե դեպի աղջիկներն ունեցած սի-  
րով, ոչ թե բարությամբ, այլ շփացածությամբ, գոռո-  
զամտությամբ կամ, ինչպես քննադատն է ասում, սա-  
մողուրությամբ: Սա սկզբունքային տարրերություն է և  
ունի ելակետային նշանակություն բնավորության, ինչ-  
պես և նրա հետ կապված գաղափարի հետագա զար-  
գացման համար:

Չետք է ենթադրել, որ նա հասկանում էր իր ընտրած  
հանաւարժի անհարթությունը: Հրաժարվելով գորովա-  
գութ հայր ներկայացնելու մտքից, նա ոչ միայն սրտա-  
ռուշ տեսարան ունենալու հնարավորությունից էր զր-



Ար

Ա. Շեքսակիր. ուիր արցաշ



կում իրեն, այլև սիրող, զորովագութ հորը փոխարինելով երես առած բռնակալով, կամայական բնավորության տեր մարդով, ինչպես ինքը, դերասանն է ասում, «խստարարու և կամշոտ իիր թագավորով»<sup>24</sup>, իրեն զնում էր ծանր կացության մեջ, Կերպարի բնմական լուծման նոր առաջարկը կարող էր ոչ միայն անընդունելի լինել, այլև տաղտկալի հանդիսատեսի համար նա կուզեր, որ իր առջև սիրող հայր լինի, որպեսզի հետո, երբ նա զայրանա, թեև թյուրիմացության պատճառով, բայց վըրդովմունքի անկեղծ զգացմունքի պոսթկումով, նվ այդ հանդիսատեսը կշարումակի սիրել ու համակրել արքային, որի բարի կամքը միայն ցավալի թյուրիմացության տեղիք տվեց: Աղամյանը հասկանում էր դա և, այնուամենայնիվ, հրաժարվեց այդ ճանապարհից: Նվ թվում է, թե միանդամայն գիտակցարար:

Սամոյլովի ստեղծած կերպարի հիմքում, ինչպես ժամանակակիցներն են ասում, ընկած է եղել «իր իշխանությունը շնանաշող մարդկանց դեմ ունեցած անզոր վրդովմունքը: Կամակոր ծերուկը մտածում է, թե իր մեծությունը ոչ թե թաղի մեջ է, այլ իր սեփական անձին՝<sup>25</sup>, Այս հարցում Աղամյանի և Սամոյլովի դիրքերը նույնն են: Թայց հետո արդեն նրանք հեռանում են միմյանցից: Սամոյլովի մասին զրոզներն ասում են, թե իրը նրա լիրը իր տերությունը բաժան-բաժան է անում, որովհետեւ ծերացած լինելով, թագավորությունը վարելու ուժ չուներ այլևս<sup>26</sup>, Յավալի է, որ այնքան հաջող գտնված սկզբնակները Սամոյլովի խաղում ստացել է լինելի զարգացում: Հետազոտողներն այդ համարում են օրինական այնքանով, որքանով որ դա նրան հնարավորություն է տվել հոգեբանորեն արդարացնելու իիրի արարքները ողբերգության սկզբում:

Պահպանվել է Աղամյան-իիրի լուսանկարը. մի փա-

ռահեղ ծերումի, փարթամ, ճերմակ մորուքով ընկողմա-  
նած է գաճի մեջ թվում է, թե իսկական արքա է, ծիրա-  
նին ուսերին, թագը գլխին, ինքը խստահայց։

Թննադատը ասում է Աղամյանի մասին. ոչ թե ար-  
քա, այլ բռնակալ։

Ու եթե Աղամյան-Լիրը հայտարարել է.

Մենք մեզ պահում ենք մի բազավորի  
Անունը միայն և ախտղոսները <sup>27</sup>,

ինքնահավան շեշտով՝ պարզ է, որ շատերին կարող էր  
տարօրինակ թվալ, որովհետեւ նրանք սովորել են այդ  
տեսարանում տեսնել արքայի, որին միայն հատուկ հը-  
պարտ վեհությամբ էլ արտասանվել են այդ խոսքերը.  
Մինչդեռ ռեալիստական մտածողությունը Աղամյանին  
յղել է գեալի այլ գումավորում. եթե մեր առջև կանգնա-  
ծը բռնակալ է, ըստ որում ինքն իրենից գո՞ւ ու բավա-  
կան, մի՞թե պարզ չէ, որ արքայական վեհությունը ան-  
հարկի երանդ է մտցնում. բռնակալ է նա և նրան դուր է  
գալիս, որ բոլորն իր առջև խոնարհվում են, կամենում  
են հաճոյանալ, իրեն դուր է դալիս բոլորի թաքուն զար-  
մանքը հարուցող կամայականությունը՝ ախտղոսով մը-  
նալ թագավոր, իսկ տերությունը բաժանել դուատրերի  
միջև։

Հոդվածներից մեկում պարզ առված է.

«Նրա մեջ շտեսանք այն արքայական վեհությունը,  
որ կար Միլոսավսկու մեջ» <sup>28</sup>,

«Նրա մեջ շտեսանք այն հղորությունը, որ դրսեորում  
էին Բառնայը և Ռոսսին» <sup>29</sup>,

Աղամյանի Լիրի մեջ թննադատը որոնել է այն, ինչ-  
կա և չէր էլ կարող լինել Ավելի ստուգ՝ լպետք է լի-  
ները Եվ դա ոչ թե նրա համար, որ հաղթանդամ Ալենե-  
լով՝ ի վիճակի չէր արտահայտելու հղորություն և վե-

։ություն։ Ֆիզիկական նույն տվյալները արգելք չեն եղել, որ նա, ինչպես ժամանակակիցներն են վկայում, անհրաժեշտ դեպքում նույնիսկ հսկա թվա Օթևլլոյի դերում <sup>30</sup>, Ուրեմն՝ ոչ թե հուժկու արտաքինի խնդիր է, ինչպես կարծել են որոշ հոգվածագրեր, այլ մոտեցման, Այն մեկնարանությունը, որով դերասանը կամ ենում էր բանալ կիրի բնավորությունը, նրա հոգեկան աշխարհը, ուահանջում էր արտաքին բոլորովին այլ նկարագիր թվում է, որ Աղամյանին պակասել է հետևողականությունը, կամ, թերեւս ճիշտ լինի ասել, որ դերասանը համարձակություն չի ունեցել մինչև վերջ զնալու, այսինքն՝ հրաժարվելով ավանդական կիրից և տեղև առաջարկելով նորը, փոխել նաև կիրի արտաքին պատկերման ավանդական եղանակը, հեռանալ վեհ արքայի արդեն տրադիցին պատկերագծից, Նկատենք, որ Սամոյլովը, թեև հեռու այդ դերում աղամյանական անհավասարելի կատարելությունից, իր մեջ արիություն գտավ հակադրվելու արագիցիային նաև արտաքին նկարագրի կողմից։ Երբ գաստրոլներով Մոսկվա է եկել և առաջին անգամ քեմուա երևացել է կիրի դերում, բոլորն անակնկալի են եկել։ «Թեմ են բերում, — ասում է «Մոսկովսկին վեղոմստիին քննադատը, — թագակիր ծերունուն։ Հանդիսատեսը զարմացած է, իր առջև ուժանպառ ծերունի է, ճերմակ, երկար մորուսով, հազիվ ողջ, կորաֆամակ, դեմքը և քայլերը ճգնավորի։ Մի՛թե սա կիրն է։ Ո՞ւր է առնական թայլվածքը, որտե՞ղ է վեհությունը և իշխանությունը։ Որտե՞ղ է իր հզորության գիտակցությունը <sup>31</sup>։ Սա մեծ համարձակություն էր, այն էլ այն ժամանակ։ Աղամյանը շդմաց տրորված ճանապարհով։ Այն, ինչ թվում է, թե պետք է աներ Աղամյանը, բայց շարեց, շատ տարիներ անց իր փայլուն իրագործումը գտավ Միխոնլսի խաղում, որի կիրը շոմի ավանդական փառահեղ մորու-

թը, բնդհակառակը, անրեղ-անմորուք է, ճաղատ, ան-  
նշմարելի մի ծերուկի, Թվում է, թե մոտավորապես այս  
արտաքինը պետք է ունենար նաև Աղամյանի կիրը: Ու  
թե հաստատում քայլ, ոչ թե վեհ կեցվածք, վսնմ շար-  
ժուձե, այլ, այդ բոլորի փոխարեն, ինչպես հրեա դերա-  
սանին են նկարագրում՝ «մանրաքայլ», հոգնած, մարած  
աշխերով, շփացած մարդու ժպիտն արդեն թորշոմած  
գեմքին»<sup>32</sup>: Եթե խաղում էր բռնակալ, նա կարող էր  
Միխոնելսից բոլորովին տարբեր արտաքին ունենալ՝ լի-  
նել զոռող, խստահայաց, սարսուազեցիկ, ինչպես և է  
նա վաստորեն նկարում, սակայն մենք հիմք ունենք մը-  
տածելու, որ Աղամյանը այդպես չի պատկերացրել կի-  
րին իր երևակայության մեջ, մանավանդ որ կատար-  
ման մեջ էլ նկատելի են եղել դրա թեթև դրսեռումնե-  
րը: Գոներից հետ ունեցած տեսարանի կապակցու-  
թյամբ հոգվածներից մեկում ասված է, թե մոռացվեց  
կիր—Աղամյանի ծերունական հյուծվածությունը: Այս  
առիթ է տալիս մտածելու, որ Աղամյանը արտաքին նը-  
կարագրի ավանդական ձևը պահելով, առաջին պատկե-  
րում, այնուամենայնիվ, փորձ է արել ընդգծելու, որ նրա-  
կիրը ոչ-արքայական վեհությամբ է ներկայանում, որ  
գոյ հյուծված, խարիսխած մի ծերուկ է: Այս հարցը դեռ  
կարուտ է սառումնասիրության և հնարավոր վեճերը նրա-  
շարուշը կարող են միայն հավանական ճշգրտության են-  
թարկել:

\* \* \*

Աղամյանի խաղում,— խոսքը առաջին տեսարանի  
ժամկին է,— զեպի աղջիկները քնքշություն չի նկատվել:  
Եատերը դժգոհ են մնացել դրանից: Ինչո՞ւ պետք է լի-  
ները թեմում խելառ ծերուկ է Աղամյանի կիրը, իր ամե-  
նակարողությունից շփացած մի մարդ, որը եթե մտա-

ծել է իր ունեցածը բաժան-բաժան անել, ապա դա էլ մի կամայականություն է: Ի՞նչ քնքշության մասին կարող է խոսք լինել, երբ նա, ստորագրաշության ընտելացած, ինքնազո՞ն սպասում է իր ինքնասիրությունը շոյող բարձրագոլ արտահայտություններ լսելու ծվ եթե Գոներինի ու Ռեգանի խոսքերի վրա ժամում է, ապա ժպտում է ոչ թե սիրող ու բավական հայրը, բարի ու գորովազութ մարդը, այլ ինքնահավան բռնակալը, որի ինքնասիրությունը թիշ առաջ շոյել են: Ծվ եթե նա վըրդովվում է Կորդելիայի դեմ, ապա նրա համար, որ շլսեց նույնը նրանից: «Լիր—Աղամյանը,— ասում է քննազատը, — վիրավորված հայր չէ, որը կասկածում է դստեր սիրո վրա դեպի ինքը, այլ բռնակալչի: Ի միշի այլոց նըկատենք, որ Աղամյանից շատ ժամանակներ առաջ այդպիս է խաղացել նաև Քինը. ասում են, որ Կորդելիայից վրդովվելու տեսարանում նա ոչ թե զայրացած հայր է, որը հրաժարվում է անհնազանդ աղջկանից, այլ շըզայնացած իշխանավոր»<sup>33</sup>: Սակայն դառնանք նորից Աղամյանին:

Հաստ էական ցուցում: Զկա արքա: Զկա նաև հայր: Կա միայն բռնակալ, շփացած ծերուկ, որը չի կարող հաշտվել այն մտքի հետ, թե իր կամքը կարող է անկատար մնալ: Ուրիշն, ոչ թե հայրական կասկած կամ վրդովվելունք՝ Կորդելիան սիրում է իրնեն, թե ոչ, այլ բարկություն, զայրույթ, անհանդուրժողականություն. այդ ինչպես է պատահել, որ մեկը, ով էլ լինի նա, դուստր, թե մեկ ուրիշը, միննույն է, հպատակ, հնթակա լինելով՝ հանդպնում է շեղվել իր կամքից, շկատարել իր ցանկությունը, իր՝ խենթ ու խելառ, շփացած ծերուկի. Նրա անսանձ խառնվածքի, որը մեկ սանձակոծ լինելով՝ այլև հնթակա չէ բանականության հսկողության:

Այսպիսով կարելի է եղրակացնել, որ Աղամյանը

հասկացել է, որ կիրը, իրեն մշտապես շրջապատելով թծնանքով և ստորաբարշությամբ, ժամանակի ընթացքում այնքան է ընտելացել դրան, այնքան ներքին պահանջ է դարձել այդ նրա համար, որ կորցրել է նրա իրական իմաստը և իր նկատմամբ եղած, արքայական դիրքով պայմանավորված թծնական վերաբերումունքը ընդունել է իրեն մարդկային ընական հարաբերությունների անկեղծ դրսեռում։ Չենք կարող այստեղ չհիշել Դորրությունին, որը դիպուկ ճշմարտացիությամբ ասել է, թե այդ բոլորը հասկանալի է մի մարդու համար, որը ոսովորել է համարել իրեն բոլոր ուրախությունների և վշտերի աղօրյուր, իր թագավորության բոլոր կյանքի սկիզբն ու վերջը՝<sup>34</sup> Դերասանը հասկացել է, որ կիրը չի ճանաշում իր շրջապատը և շգիտեն էլ, թե դրամի վրա հիմնված իրականությունը ինչ գիշատշական հոգերանություն է պատվաստում մարդու մեջ։ Աղամյանի պատկերացմամբ՝ նա չի ճանաշում իր ամրոցի պատերից այն կողմ դժուկող կյանքը, ինչպես նաև այն, որ իրականության ունականությունը նրա համար ամփոփված է արքայական փայլի մեջ և այդ արտաքին հանդիսավորությունն ընդունելով իսկականի տեղ, կարծել է, թե ինքը կարող է թագավոր մնալ և առանց տերության, նրա այդ վարժունքը, ինչպես Դորրությունի է դիտել, «ի է այն հըպարտ գիտակցությամբ, թե նա ինքը, ինքնիրեն մեծ է, և ոչ թե իշխանությամբ, որ պահում է իր ձեռքում»<sup>35</sup>.

\* \* \*

Դոներիլին նզովելու տեսարանը Աղամյանը նույնպես կառուցել է այլ կերպ, քան ուրիշ դերասանները։ Այն հանդիսատեսը, որի ճաշակը կազմավորվել է այդ դեռասանների խաղի վրա, ընական է, որ չպետք է հաշտ-

վեր Աղամյանի կատարման հետո նա գտավ, որ դերա-  
տանը շափաղանցնում է, որ եթե այստեղ տեսարանը  
կառուցված է պոռթկման վրա, ի՞նչ է անելու ապա Ռե-  
գանի հետ հանդիպելիս Արքան, առում է հանդիսատե-  
սը, սովոր միշտ կարգադրություն անելու, ինչո՞ւ պետք  
է բարձրացնի ձայնը, կորցնի իրեն և այլն։ Մինչդեռ  
այն քննադատը, որի հոգվածի վրա հենվում ենք այս  
վերլուծական փորձը կատարելիս, ճիշտ հակառակ հա-  
մոզման է։ Նա պարզ և բավական հաստատ կերպով ա-  
ռում է, որ Գոներիլի տեսարանում կիրը պետք է այդ-  
պես լիներ։ Հետո ավելացնում է՝ միայն այդպես, այլ  
կերպ չի կարող լինել։ Եվ ոչ միայն քննադատը, նրա  
հետ միասին՝ նաև թատերաբան մեծ մասը, որն այդ  
տեսարանը, ինչպես ասված է այն ժամանակ գրված  
հոդվածում, ընդունել է ծափահարությամբ <sup>36</sup>,

### Եվ ահա թե ինչու

Քննադատը հիշեցնում է. մենք գործ ունենք մի մար-  
դու հետ, — խոսքը կիրի մասին է, — որը սովոր շեր ա-  
ռարկության։ Եվ հանկարծ նրան ոչ միայն առարկում  
են, այլև հանդուժն ալատասխան են տալիս եվ ո՞վ—  
դու ատրը, այն դուատրը, որին տվեց իր կարողության  
կեսը։ Նա կատաղում է, հաւենում զայրույթի գագաթնա-  
կետին։ Եթե առաջին պատկերում տեսնում էինք, որ նա  
ժեր է, այն էլ արդեն հյուծված մի ծերուկ, ապա այժմ,  
սաստիկ բարկության պահին, մոռացված է այդ ամենը,  
յեր առաջ կանգնած է նա ինչպես մի ասպետական առ-  
յուծ, որ մոնշում է ցավից և անզորությունից։

### Այդպես էր Աղամյանը։

Մենք ասացինք, որ կարողությունը բաժանելու  
պատկերում նա խաղում է ծերուկ, բարձրամիտ ու գո-  
ռոզ, ինքնագուն բռնակալը Այնուեղ չկա արքա, երբ ար-  
քա է՝ կարող է թույլ տալ իրեն պահել և այնպես, ոչ ար-

քայլավայելի նակ հիմա ճիշտ հակառակն է, նա արքա է։ Նա հիշում է, որ ինքը արքա է, տերության գլուխ, իրավունքների տեր, Եվ եթե նա զայրույթի մեջ առյուծ է, այսինքն՝ հպարտ, թեև կատաղած, այդ նրանից է, որ նա վերադարձնում է իրեն արքայի դերի մեջ, զգալ իրեն առաջվապես ամենակարող, ինչպես էր գահի վրա նստած պահին, երբ շփացածությունից՝ կատակի տալով խաղում էր կրակի հետ, համարելով, որ իր հզորությունը կա և պիտի լինի այնքան ժամանակ, քանի ինքն ապրում է աշխարհի երեսին։

Այսպիսի բացատրությունը, իհարկե, անսպասելի էր, Եվ, ճիշտ ասած, շատ էլ չենք զարմանում, որ մարդիկ խրոշել են Սակայն չէ՝ որ դրանց կողքին եղել են գնահատողներ և այն էլ ավելի մեծ շափով։ Շկրելում եմ, — առում է քննադատը, — Գոներիլին նզովներ տեսարանը ավելին ցանկալու տեղ չի թողնում։ Եվ եթե հանդիսատեսն այդ տեսարանը ծափահարությամբ է ընդունել, ապա ոչ միայն արտիստի վարպետությունը գնահատելու համար, այլ նաև իրը հովանավորություն այն նոր բացատրության, որ տվել է դերասանն այս տեսարանին։ Հանդիսատես հասարակությունը, այն էլ նրա երիտասարդական մասը թնրես չէր դտնվում հարցի ըմբռնման այն մակարդակի վրա, ինչ ներկայացման քննադատը, բայց նա զգում էր կիր—Ազամյանի վարքադիր իրավացիությունը, իրեն դնում էր նրա տեղը և հասկանում, որ համանման պայմաններում ինքն էլ կապրեր նույն ցառումն ու զայրուկթը, ինչ որ հինավորց Բրիտանիայի տերը։

Առարկության է հանդիսել նաև Ռեգանի հետ ունեցած հանդիպման տեսարանը։ Այս անգամ արդեն հակառակ բնույթի դիտողություն է արվել Ռեգանը, ինչ-

պես հայտնի է, Գոներիլից շար է, Ընտելացած տրադիցիային՝ հանդիսականը սպասում էր, որ այս տեսարանում պետք է կիրի զայրույթը պայթի և հասնի գագաթնակետին։ Դրա համար նրանք ըընդունեցին նախորդ տեսարանում կիր—Աղամյանի ցասումնալի պոռթկումը։ Պետք է բարկանար, բայց ավելի պակաս, որ այստեղ, արդեն այս պատկերում իր բոլոր զայրույթը թափեր մյուս դատեր գլխին։ Նվայժմ հանդիսատեսը մնաց զարմացած, երբ տեսավ Աղամյանի խաղը իր սպասածից հեռու, և նույնիսկ հակառակ, նա տեսել է թառնային, տեսել է նույնիսկ, որոնց պոռթկումն այս տեսարանում ուներ հրարիսային ժայթքման ուժ։ Մինչդեռ Աղամյանը այստեղ թեև բարկանում էր, բայց շեշտը զրավրա շէր զնում։ Կիր—Աղամյանին զրադեցնող գլխավոր խնդիրը բարկությունը շէր, այլ բոլորովին ուրիշ հարց։ Գոներիլի ժամանակ նա զայրացավ, զայրացավ, որովհետեւ հանկարծակիի եկավ, ոտք նրա համար անսպասելի էր, և նա իրեն կորցրած՝ ձայնը գլուխը դցեց։ Իսկ այստեղ, այստեղ է, որ առաջին անգամ կիրի սիրտը կասկած է ընկնում, թե ինքը սիսալ է թույլ տվել, մեծ ու ձականագրական սիսալ Դրա համար էլ Աղամյանի խոսքի ինտոնացիան կառուցված է եղել ոչ թե բարկության վրա, — այդ էլ կա, անշուշտ, բայց, որպես երկրորդային (գլխավոր լինելով նախորդ տեսարանում), — որքան դառնության։ Այս արդեն նոր գույն է, նոր բացատրություն կիրի կերպարը պատկերելիս։ Ինչպես կարող է կրթի բռնկման վրա կառուցել դերասանն այս պատկերը, երբ այստեղ աղջկա ապերախտության աղդեցության տակ արագ ու լարված գործում է նրա միտքը, և այստեղից էլ ծայր է առնում հոգեկան բեկումը։

Զենք կասկածում այն զորեղ տպավորությանը, որ հանդիսատեսի վրա գործել է այս տեսարանում ցաս-

յան բուռն ատելությամբ համակված կիրերի խաղը: Դա նույնպես պատկերման հնարավոր եղանակ է: Ապերախտության առաջին հարվածը բարկացրեց, երկրորդը վրգովմունքը հասցրեց զայրութիւն Մի խոսքով՝ աստիճանական զարգացում: Կրկնում ենք, հնարավոր է և այսպիսի խաղ:

Ողբերգության բեմական պատմության մեջ անթիվ են կիրերը: Հետևապես նրանցից յուրաքանչյուրը կարող է տարրեր բնավորություն ունենալ և ըստ այդմ է: Պրսեորել իրեն: Եվ դա ոչ միայն նրա համար, որ զերասանի անհատականությունն իր անխոսափելի կնիքն է: Պնում խաղի վրա: Դա կախված է նախ նրանից, թէ զերակատարը ինչպես է հասկանում կերպարի աստիճանական աճը: Հետաքրքիր է հիշել Ռոսսիին: Ցուրն առում է, որ այդ երկու տեսարաններում էլ Ռոսսին խաղում էր անշնորհակալ աղջիկների քարասրտությունից բխած զարմանք, վրդովմունք, բարկություն, զղում, կատաղություն և այլն: Նրա խաղի հետաքրքիր կողմը եղեւ է այն, որ նման հոգեվիճակների համար գտնել է արտահայտչական տարրեր զրունակում: Ինչ խոսք, որ մեծ վարպետություն է պետք դրա համար. Ալյոտեղ բավական չէ բնական տաղանդը, բեմական փորձը և զերասանի վարպետությունը. այստեղ, բացի խելքից և կուտուրայից, անհրաժեշտ է առանձնահատուկ օժովածություն՝ մարդկային հոգու խորքը ներթափանցելու շընորհք, — եղրակացնում է Ցուրնը <sup>27</sup>, Այսպես, անշուշտ, կարելի է խաղալ: Այդ և այն պատկերացումը, որ տվել են Աղամյանին նախորդած կիրերը, որքան էլ հնարավոր և միանգամայն օրինական, բեմական տվյալ խընդրին, այնուամենայնիվ, տալիս են լուծում ըստ լայնքի: Աղամյանի առաջարկը մեջ թվում է նույնքան հետաքրքիր, բայց ավելի համոզիլ, մանավանդ որ դա հնարա-

Նարություն է տալիս բեմական նույն խնդիրը լուծել արդեն ոչ թե ըստ լայնքի, այլ ըստ խորքի:

Եթե կիրի մեջ շեշտվում է միտքը, այն, որ պայծառանալով հանգելու է իմաստության, ապա, ուրեմն, աղամյանական լուծումը կարելի է համարել, իհարկե, ոչ միակ ճիշտը, բայց առավելը մինչև այդ եղածների նկատմամբ, եթե նրանք առաջարկում էին երկու միատիպ տեսարանների նկատմամբ միննույն վերապրումը, վրդովված հուզմունք, միայն տարրեր աստիճանների, ապա Աղամյանը առաջարկում է երկու նման տեսարանի երկու տարրեր վերապրում. մի դեպքում՝ զայրույթ, երկրորդ դեպքում՝ զառնություն, հիասթափություն, որ խորհրդածության առիթ է տալու Դա հասկանալի է ուրնական. ծայրահեղ բարկություն, որ ցասման է հանում, որովհետեւ տեղի ունեցավ այն, ինչ չէր սպասում, ինը նրան հանկարծակի բերեց: Ծվ առաջին հակաղղեցությունը ձայն բարձրացնելն է, պոռթկումը: Իսկ հետո արդմն ցավ, հիասթափություն, որ խոհ է ծնում, ստիպում մտածել, տանջել միտքը՝ անհասկանալին, առեղծվածայինը հասկանալու համար: Սա համոզիլ է թվում կերպարի ընդհանուր աճի տեսակետից՝ զայրույթ, հիասթափություն և, այդ հողի վրա՝ մտքի տենդացին լառաւ:

Էրբն ասում է.

Դուք մտածում եք՝ ես լաց կլինեմ...

Ո՞չ, լաց չեմ լինի...

Բայց բռդ այս սիրառ բյուր կառ լինի,  
Նախքան լաց լինեմ.— Ո՞վ, իմ խեղկատակ.

Ես կրիսենքանամ:

Կարող է խոսք լինել զայրույթի ու ցասման մասին:  
Հհարկե, ոչ Սա հուզմունքով լի զարմանք է, հառաջալի

բացականչություն, սա խուզ տնքոց է, երբ պրկում եւ մկաններդ, բոլոր ուժդ հավաքում, գերազույն լարման մեջ մի խորին կսկծի դիմանալ կարողանալու համար:

Աղամյանի քննադատը բերում է վերոհիշյալ տողերը և ասում, որ ռիթրը հասկացավ, թե ինչ է եղել ինքը և այդ գիտակցությունը լսվում է Աղամյանի բացականչության մեջք: Այսինքն՝ Լիրը ըմբռնեց, թե ինչ էր ինքը տռաջ և ինչ է այժմ: Ահա այս դառը գիտակցության վրա էլ Աղամյանը կառուցել է այդ տեսարանի խաղը: Եկ քննադատն էլ, որ ուշի-ուշով հետևում է նրա խաղի ընթացքին, ասում է, թե ինքը լիովին համաձայն է Ռեգանի հետ ունեցած տեսարանը այսպես ներկայացնելու հետ:

\* \* \*

Այժմ երրորդ արարի մասին: Այստեղ աճում և հասկ է արձակում այն հատիկը, որ Ռեգանի պատկերում դեպասանը պահ էր տվել հողին:

Զկա նրա ո՞չ բռնակալական ինքնավստահությունը, ո՞չ էլ դայրույթն ու ցասումը: Հանդիսատեսի առջև կանգնած է արհամարհված, խեղճ մի ծերուկի: Սա արդեն ուրիշ մարդ է, ուրիշ Լիր, հսամոլի փոխարեն՝ մի բարի ծերումի, անձնական քմահանույթներից բացի, ուրիշ ուժին շտեսնող, դռուղ Լիրի փոխարեն՝ իրենից դուրս և իր շուրջը խլրտացող կյանքին լայն բացված աշքերով նայող ու ճանաշող Լիրն է սաւ:

Լիր—Աղամյանը իմաստության ճանապարհին է:

Եթե Ռեգանի հետ տեսարանը անցկացներ զայրացկու կատաղության բռնկումներով, դա ոչ միայն գույների կողմից կրկնություն կլիներ, այլ նաև բոլորովին:

Հեր նախապատրաստի այդ տեսարանը, Յասումը կրթի  
բոնկուն արտահայտություն է, այն ինչ, մինչ այդ տե-  
սարանին հասնելը, պետք է որ կիրի միտքը մի պահ  
գամվեր իր վիճակի վրա, թե ինչ կատարվեց իր հետ,  
որ հետո, հաջորդ տեսարանում կարելի լիներ նրան մը-  
ղել դեպի խորհրդածություններ:

Արտաքսված ու անապատան, նա թափառում է ինչ-  
պես մի հետին աղքատ: Տառապանքի օրեր են դրանք:  
Դա օգնում է նրան՝ տեսնել, ճանաչել ոչ միայն կյանքի  
ժիրտ օրենքները, այլ այդ օրենքների զոհերին, անտուն,  
անտեր, թշվառ մարդկանց, որ իրենց կյանքը մթնեցնում  
են դեպքումների մեջ, ինչպես ինքը հիմա:

Ահա այստեղ, այս տեսարանում, փոթորկի պատ-  
կերում Աղամյանի խաղը ձեռք է բերել հասարակական  
մերկացնող իմաստ: Այստեղ է, որ նա, մոռացած իր  
անձնականը, բարձրանալով իր ապրած դժբախտությու-  
նից, սրտի խորին ցավով ապրում է բախտակից թշվառ-  
երի վիշտը, այրող ատելությամբ բռնկվում կյանքի ան-  
արդարության դեմ:

Խե՞ն մերկ աղբատներ, ուր էլ որ լինեմ?  
Այս ժանտ մերիկից մարակված, տանջված.  
Ինչպե՞ս կարող եմ ձեր անտուն զլիսով  
Եկ սովալըրակ ձեր ստամոքսով,  
Եկ պատառոտուն ցնցոտիներով  
Պատսպարել ձեզ այսպիսի օդից:  
Օ՞ն, ես այդ մասին շատ իիշ եմ խորհել.  
Դե՞ղ խմիր, նոխուրյուն. կըրիր մի անգամ՝  
Ինչ որ կըրում են շշավորները,  
Որ դու էլ բափ տաս և ավելորդը  
Խեղճերի նամար, և ցույց տաս նըրանց.  
Գեր մի ավելի ողորմած երկինք:

Ի՞նչն է էական Շեքսպիրի կիրի, հետևապես նաև Աղամյանի պատկերած կերպարի մեջ, այն, որ կյանքի նոր պայմանները բացում են կիրի հոգու լուսավոր կողմերը, ցույց տալիս, որ նրան մատչելի է մեծահոգությունը, քնքությունը, կարեկցությունը, մարդկային ամեն առաքինությունն: Կերպարի զարգացման ուժը ոչ միայն նրա մեջ է, որ տնա նզովում է իր աղջիկներին, այլև Կորդելիայի հանդես ունեցած իր հանցանքի գիտակցության: Ինքնահաղթահարումն է սա, որ մարդուն բնորում հասցնում է իմաստության:

Կարելի է պատկերացնել, թե ինչ ցնցող տպավորություն է գործել արտիստը հանդիսատեսի վրա, եթր մռացած, թե ով է կիրը, ոչ միայն անցյալը, այլև ներկան, մտածել է իր ապրած ժամանակների մասին, այն բոլոր զրկանքների, որոնց ենթարկված ուսա մարդը, նրա հետ հայր, հրեան, ուկրաինացին,— տառապում է, քարչ տալիս կյանքը՝ տանջող հոգար մտքում, ազնիվ զայրույթը կրծքի տակ, հույսն աշխերի մեջ:

Ժամանակակիցներն ասում են, որ Աղամյանի արվեստը արդիական հնչեղություն ուներ, աղդու կերպով նա բերում կապում էր բեմի վրա կատարվողը հանդիսատեսին հուզող մտքերի հետ:

Եթե Աղամյանը կարողացել է իր խաղով ցույց տալ, թե ինչ այլանդակ կյանքի ու պայմանների ծնունդ էր կիրի կամայական բռնակալությունը, ապա բեկել հանդիսատեսի վերաբերմունքը նրա նկատմամբ այն ասահճան, որ կարեկցեն և նույնիսկ սիրեն երրեմնի արքային, որ այժմ տառապող մարդկանց դատի պաշտպան է դարձել, հոգու ամբողջ ուժով ատեն, ինչպես Թորովյուրովն է ասել, այն հակամարդկային կեցությունը <sup>35</sup>, որ մարդուն դատապարտում է թշվառության, դա մեծ արվեստ է՝ բոլոր թելերով կապված ժամանակի հետ:

\* \* \*

Եվ աշխարհի լարն ու բարին ծանր ու թեթև անելով,  
Դժվարին խոհերի ծանրության տակ կքած՝ կիրը հաս-  
նում է խելագարության: Իր մոլեգին վիշտը դերասանը  
պետք է ապրի այնպես, հոգերանական այնպիսի ան-  
դամներով, որ երևույթը համոզիլ ու բնական լինի:

Ինչպես է արտիստն արել՝ չգիտենք: Տվյալներ չեն  
պահպանվել, բայց որ նա հասել է իր նպատակին, որա  
սպացույցը տալիս է քննադատը, այս անգամ, զժրախ-  
տարար, միայն վկայությամբ, առանց նկարագրական  
ժանրամասնությունների:

«Եթե մինչև երրորդ գործողությունը, — գրում է քըն-  
նադատը, — ձեր մեջ դեռևս ուժ կար կշտամբելու, կիրին  
հասցված վիրավորանքների մեջ տեսնելու պատիժ, որին  
նա արժանի է, ապա տառապող կիրը երրորդ արարում  
հաշտեցնում է ձեզ իր հետ, խղճահարությունն ավելի է  
յեծանում, երբ հոչակավոր ողբերգակը ասես նախա-  
պատրաստում է հանդիսատեսին չորրորդ արարի հա-  
մար, դիմախաղով, շարժումներով և իրեն այնպես են-  
թարկվող ձայնով սկսում է արտահայտել մտավոր խան-  
դարման սկիզբը»:

Ադամյանն ունի մի ուտանակոր, գրված 1887-ին, որի  
յեշ նկարագրում է կիրին.

Սպառաժոտ լիոների մեջ  
Ամպ է իշել բապանալից.  
Արտաձայն նա գոռում է  
Կայծակներով լիքը ծոցից:

Մըրբնշելով նանկարծ բամին  
Տապալում է մեծ-մեծ ծառեր,  
Երբ շանքերը շառաշելով՝  
Տալիս են խոզ արձագանքներ:

Այդ տարրերաց կրուիին մեջ,  
Խորդ ու ժայռատ լեռան վըրա  
Մի ծերունի քափառական  
Արցունիք քափե, անեծ զոռա:

Գաաառոտուն նորա ըզգեստ,  
Մազն ու մորում խառն ըսպիտակ  
Ծածանում են ժամու շընչից,  
Տուր աղեաթին իրեւ դրօշակ:

Զէ կարելի զանազանել՝  
Ո՞րն է ավել զարնուրելի.  
Շառաշյունն այն կայծակների՝  
Թէ ծերուկին ողը ցավալի:

Ցուրաֆանցյուր նորա կոծին  
Մասնակցում են կարծես ամպեր.  
Որոց կրթակն էլ չէ՝ կարող  
Ցամաքացնել յուր արցունիներ զ:

Կարելի է պատկերացնել լիր—Աղամյանին տափաս-  
տանում, երեկոյան պահին: Փոթորիկ է, երկնքում կայ-  
ծակ է ճայթում, շուրջը մոայլ ու սարսափելի, իսկ ինքը  
կանգնած նայում է, նայում է այնպես, ասես ամեն ինչ  
առաջին անգամն է տեսնում. աշքերն ակնապիշ, դեմքը  
խոռվ արտահայտությամբ, ճերմակ մազերը քամուն  
տված, մի ձեռքով ծածկել է բաց կուրծքը, մյուսով  
կարծես ուզում է կանգնեցնել կյանքը, թռող ժամանա-  
կը, գեթ մի պահով, որ հարց տա՝ պատասխան ստանա:

Չկա արքան: Չկա և բռնակալը: Կա մարդը, որ ա-  
ռաջ չկար: Մարդ, սակայն ոչ Դոներիլի նման, ոչ Ռեգա-  
նի, այլ այնպիսին, ինչպիսին Կորդելիան է: Եվ գեռ ա-

զելին՝ մարդկային բոլոր վշտերը ճաշակած, մեծ սըրտի տեր մարդ:

Տառապանքների ճանապարհը, որով անցավ Լիրը՝ հուսախար ու խռով, բերեց հասցրեց նրան կյանքի ճանաշողությանը, մտքի պայծառացմանը, հոգեկան կյանքի վերափոխությանը,— մի դժվարին ուղի, որը մաքրուած վեհացնում է մարդուն:

\* \* \*

Լիրի խելագարությունը, վերադարձը դեպի կյանքը և ապա մահը, փայլում հաջողությամբ է պսակվել: Դա վկայում է քննադատը, որից հաճախ մեշքերումներ կատարվեցին: Նրա իսկ ասելով՝ Աղամյանի Լիրը լընդունող, վերապահ մոտեցում հանդես բերողներն անգամ հիացել են, գտել, որ այդ տեսարաններում ողբերգակը ճշմարիտ արվեստի բարձրության վրա է գտնվել: Ի միջի այլոց նկատենք, որ զրանք գերակատարման գնահատության մեջ վերապահումներ անող Շիրվանզադեին էլ բավարարել են<sup>40</sup>: Սակայն դա չէ կարևորը, դառնանք ոռութնադատին, որին պարտական ենք Լիրի գերակատարման մանրամասնությունների պահպանման համար:

«Ես խոստացա ձեզ,— դիմում է նա ընթերցողին իր հոգլածի վերջում,— Աղամյանի խաղի լրիվ վերլուծությունը կատարել, բայց այդ նշանակում է, որ ես պետք է արտադրեի նրա ամրող գերը և յուրաքանչյուր խոսքի դիմաց կրկնեի՝ այստեղ արտիստը խաղաց սքանչելի, իսկ այստեղ՝ ավելի լավ, և այլնաւ Եվ ապա ավելացնում է. «Պետք է տեսնել Աղամյանի խաղը Լիր արքայի գերում»: Ցավոք սրտի քննադատը դժվարացել է նկարագրել այդ տեսարանը, միայն հետևյալն է նշել. ինչպես ասվում է Լիրի մասին, թե արքա է ոտից-գլուխ, այնպես էլ Լիր—Աղամյանի մասին այս տեսարանում

կարելի է ասել՝ խելագար էր ոտից-գլուխ, նա խոսքեր լի գտել իր հիացմունքն արտահայտելու համար. ասել, «ր նա տաղանդավոր արվեստագետ է՝ դա միևնույն է, թե կրկնել այն, ինչ հազար անգամ արդեն ասված է. և նա մի փորձ է անում ասել, թե ինչպես է անցել կրի պայծառացման տեսարանը, ու կանգ է առել դժվարության առաջ, չի թաքցրել ընթերցողից իր ծանր զգացույթը. և օս դժվարանում եմ,— ասում է նա,— բառ ընտրել... ավելի, շատ ավելի, քան սքանչելի էր»: Եվ հասկանալով, որ չկան այնպիսի բառեր, որոնց օգնությամբ կարելի լինի մի այդպիսի ցնցող տպավորություն թղթին հանձնել, նա, ինչպես երկում է փորձված լրագրող, դիմում է մի հետաքրքիր հնարանքի. նկարագրում է դահլիճը, նրա վերաբերմունքը գեպի արտիստի խաղը:

«Եթե մինչև հիմա, — գրում է նա, — կային հանդիպատեսներ, որոնց չէր գոհացնում Աղամյանի խաղը, ապա չորրորդ գործողության մեջ, սիրելի Կորդելիայի դիակի մոտ ունեցած տեսարանից հետո, ամբողջ թատրոնը, ասես, փոխարկվեց մի հանդիսականի: Դստեր դիակի առջև Աղամյանը գերազանցեց ինքն իրեն»:

Եվ այսպես՝ խաղն ավարտված է: Մենք կամենում ենք վերադառնալ այն մտքին, թե առաջին տեսարաններում, երբ կրը արքա է, Աղամյանը խաղում է ինելառ և շփացած ծերուկ, իսկ դրան հաջորդած տեսարաններում, երբ արդեն արքա չէ, այլ միայն ծերուկ, խաղում է արքա: Մի դեպքում խելառ ծերուկն է արքայի գեմ, մյուս դեպքում՝ արքան խելառ ծերուկի: Չլինե՞ր արքա, «ր այդ ապերախտներից վրեժ լուծեր: Խելառ ծերուկը արքայի գլխից հանեց թագը, կրը կր է և առանց թագի: Այդպես էր մտածում ծերուկը: Եվ դա էր նրա խելառությունը: Իսկ թա՞գը... Թագը իր հետ տարավ իշխանություն, անմոռնչ ենթակայություն և հպատակների

սարսափին ու քծնանքը, որ նա ընդունել էր պատկառանթի տեղի Նա այդ հասկացավ, երբ հարազատ աղջիկների դոները փակված տեսավ իր առաջ: Այժմ արդեն կատաղի շասման մեջ է ծերուկի գեմ, այն խելառի, որ իրեն հասցրեց այս օրվան: Ճիշտ է, չկա այլևս թագը, չկա նաև ծիրանին, ոչ էլ գաճ ունի, որ բազմի ու հրամայի: Բայց կա մարդը, բնության և կյանքի արքան, անտուն և անտիրական, բայց հպարտ, անիրավունք, բայց բարձր ու վեհացած: Փշոտ էր ճանապարհը, դժվար, անհնարին արգելքներով լի, բայց նա գնաց դեպի ճշմարտությունը, ճանաշեց այդ ճշմարտությունը և կրեց այդ ճշմարտությունն իր մեջ:

Դա հաղթանակ էր, որ կիր—Աղամյանը ներկայացման վերջում բերում էր իր հանդիսատեսին, որպես մեծադույն պարզեւ:

## ՀԱՍԼԵՏ

Աղամյանի ներկայացրած շեքսպիրյան կերպարներից, ընդհանրապես նրա կատարած դերերից ոչ մեկն այնպիսի հետաքրքրություն չի հարուցել ժամանակակիցների մեջ, այնպիսի թանկագին հիշողություններ չի թողնել գալիք սերունդների համար, ինչպես Համլետը, Ճիշտ այնպես, ինչպես համաշխարհային գրականության մեջ ոչ մի կերպարից այնքան չի խոսվել, որքան Համլետից: Եթե Աղամյանի Օթելլոյի մասին հրապարակված հոդվածները, փոքր թե մեծ, տասնհինգից շենոնցնում, կիրի մասին գրվածը մի տասնյակի սահմաններում է մնում, ապա Համլետի շուրջ եղածն ավելի է, քան այդ երկու կերպարների վերաբերյալ լույս տեսածը՝ միասին վերցրած:

Դա բացատրել սոսկ նրանով, որ խոսքը Համլետին է վերաբերում՝ ճիշտ կլինի, բայց մասամբ ինչ խոսք, որ դրա մի և այն էլ էական, պատճերած Համլետը հետաքրքրություն է առաջացրել և լուսաբանության տեսակետից, որ կարելի էր անել նրա և նույն կերպարի այլ դերակատարների միջև, վերջապես՝ այն ոգեշունչ խաղի երբեմն հակասական ընկալումով՝ հանդիսատեսի մեջ:

Աղամյանի Համլետը թերագնահանատելու փորձեր եղել են: Զանք է թափվել զախշախմելու այն, ոչնչացնելու, նույնիսկ ծաղրի ևնթարկելու Սակայն դա ինչ նշանակություն ունի, բացի նրանից, թերևս, որ թունավորել են արտիստին, պղտորել նրա հոդին, նրան որել նյարդային կացության մեջ, ճիշտ է, շատ չէ այդ կարգի հարձակումների թիվը, ոչ էլ մեկ անգամ միայն արտահայտված: Դա պատահականություն էլ չէ, բայց, ի վերջո, դերասանի այդ ստեղծագործության գնահատության միջավայրում այսօր արդեն ներկայանում է որպես խղճուկ ոտնձգություն, որ գուցե ավելի հեզնոտ ժպտի, քան վրդովմունքի առիթ է տալիս:

Համլետը Աղամյանի ստեղծագործության գլուխ-գործոցն է, նրա բնմական արվեստի պսակը:

Սա վեճ վերցնող խնդիր չէ. պետք է արձանագրել ու անցնել առաջ:

Այդպես էին կարծում ժամանակակիցները և այն օրերին, երբ Աղամյանը փայլատակում էր բեմի վրա, և այն ժամանակ, երբ նա այլևս չկար և արտիստի մասին պահպանված հիշողությունը անցած-գնացած կյանքի, թանկագին, վառ ու գեղեցիկ օրերի շարքին էր պատկանում:

Համլետը Աղամյանի շահած այն հաղթանակն է, որով նա ոչ միայն դուրս է եկել ազգային իրականության

աահմաններից, այլև, ինչպես ոռւսներն են ժամանակին դնահատել, թեակոխում է արվեստի համաշխարհային ոլորտները Եվ եթե այսօր շեքսպիրագիտության զրականության մեջ Աղամյանի անունը չի տրվում կամ էլ հիշվում է ազոտ, ի միջի այլոց, ապա դրա պատճառը եղած նյութերի բացակայությունը չէ կամ պակասը, ոչ էլ շարակամությունը, ինչպես միամտությամբ կարծում են ոմանք, այլ դրանց, այդ նյութերի ինչպես հարկն է ուսումնասիրված և մատուցված շինելը<sup>1</sup>, Մենք էլ ենք մեղավոր, այն սերունդը, որ իրեն նվիրել է հայ թատրոնի պատմության հետազոտմանը: Թվում է, թե վազուց է հասումացել պահանջը՝ մոռացումից և փոշիների տակից հանել, լույս աշխարհ բերել ոռւսական մամուլի այն թանկագին էջերը, ուր մեծարված է Աղամյանը ու նրա հետ միասին փառաբանված Համլետը:

Ի միջի այլոց նկատենք, որ ոռւսական անցյալ թատերական քննադատության դերն այդ հարցում անգնահատելի է, անշափի մեծ, և այդ անուրանալի ծառայությունն էլ ինչպես հարկն է դեռ գնահատված չէ. այն ստեղծագործությունը, որը թեկուզե տակաւին անկատար, արտիստի առաջ նոր և հեռավոր հորիզոններ ընդգրկող ճանապարհ էր խոստանում, հայկական մամուլն ու քննադատությունը արժեքավորել շկարողացան: Ծիշտ է, տարիներ անց մեղանում էլ բարձր շնչով խոսեցին նրա Համլետի մասին<sup>2</sup>, բայց դա արդեն նրանից հետո, երբ արտիստը գնահատված էր Մոսկվայում և Պետերբուրգում: Ոռւսական իրականության մեջ գիտակցվեց նրա իսկական մեծությունը:

Վերադառնանք այն իրողությանը, որով սկսեցինք: Խոսքն այն մասին է, որ Աղամյանի Համլետի շուրջ շատ է գրվել: Դերասանի ժամանակակիցներն այն անհեղծ համողումն ունեին, թե ինչ որ գրվում և ասվում է

Նրա Համլետի մասին՝ շափաղանց քիչ է։ Այս տրտունջը երկու կողմ ունի Նախ դժողով էին, որ խաղի ազգեցությամբ իրենց համակած մտքերն ու ձգտումները շատ ազելի հարուատ ու բուռն էին, քան իրենց ձիրքը՝ այդ ամենը գրավոր արտահայտել կարողանալու համար։ Եվ որկրորդ՝ գանգատվում էին, որ լրագրում իրենց հատկացված տեղը փոքր է, նեղ, այնքան սուզ, որ չեն կարող իրենց բոլոր զգացածն արտահայտել, ծավալվել կամ, ինչպես նրանցից մեկն ասում է, հողվածում քայլ առ քայլ հետևել արտիստի խաղին, ասել, թե որտեղ ինչ անում, պատմել, գաղափար տալ ընթերցողին, և եթե նա չի տեսել՝ վարակել նրան այն հուզական մթնոլորտով, որ ապրել է ինքը, իր հետ միասին նաև ուրիշները՝ մի բախտավոր երեկո ներկա լինելով արվեստի այն եզակի պոռթկմանը, որը մարդիկ գեղեցիկ երազի հետ են համեմատելու։

Սրանից հետո զարմանալի՝ է, եթե Շիրվանզադեն Համլետի առիթով դրված ընդարձակ հողվածում, ըստ որում, այն ժամանակները մի դերակատարմանը երբեք այդքան ծավալ չի հատկացվել, — ասում է, որ «Պատմանի մասին շատ երկար կարելի է խոսել և այդ երթեք շատախոսություն չեր լինի»<sup>3</sup>,

Միայն նա չէ այդ կարծիքին։

«Օդեսսկի լիստոկի» հողվածագիրը, գանգատվելով, որ լրագրային հոդվածի սահմանները թույլ չեն տալիս նորամյանի խաղին հանգամանորին անդրադառնալու։ ասում է, թե Համլետի դերակատարումը «թատերական քննադատության համար հարուատ նյութ է»<sup>4</sup>։

Ո՞ւ Շիրվանզադեն, ո՞չ էլ ոռա անհայտ հեղինակը երեկի չէին կասկածում, որ մի օր այդ կարվի Մեղ էլ թվում է, որ Աղամյանի Համլետը մի այնպիսի ուշագրավ և նյութի կողմից համեմատաբար առատ առպա-

րեզ է, որի մասին արժե մի ամբողջ գիրք շարադրել։ Զկանկածելով, որ կդա ժամանակը, երբ այդ էլ կարվի (և մի՛թե դրա ժամանակը չի եկել), ապա մենք կրավականանանք այնքան միայն խորանալով նյութի մեջ, որքան այդ տեղին կլինի ոչ միայն մի խնդրի, այլև ընդհանրապես Աղամյանի կյանքին, ամբողջ ստեղծագործությանը նվիրված մի աշխատությամբ թելադրված պահնչի համեմատ։

\* \* \*

Ռուական թատերական քննադատության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե Համլետի կերպարին Աղամյանի տված մեկնարանությունը նորություն է։

Այսպես, օրինակ, Վ. Չույկոն Աղամյանի մասնակցությամբ «Համլետ» ներկայացման մասին գրած հոդվածում ասում է. «Իր խաղով շատ բան նա լուսաբանում է նոր, անսպասելի տեսակետից. չի ընդօրինակում ոչ մի բնմական մեծության, աշխատում է լինել ինքնուրուցն. այս վերջինը երիտասարդ գերասանի լավագույն կողմերից է; Նրբեմն նա հակադրվում է ավանդական ըմբռնումներին և, մեծ մասամբ, այդ խիզախումները հաջողվում են նրան»<sup>5</sup>.

Սա միայն Չույկոյի կարծիքը չէ: Այսպես են մտածել և ուրիշները՝ անկախ Չույկոյից, ծանոթ Ալինելով նրա գրածներին: Եվ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև այդ էր թելադրում Աղամյանի խաղը՝ նրա մասին դրել ցանկացող քննադատներին: Բայց ավելի լավ է փաստացի լինել: Թերթենք այն տարիների ոռուսական պարբերական մամուլը, գտնենք լրագրի կամ ամսագրի այն համարները, ուր խոսվում է Աղամյանի Համլետի մասին և տեսնենք, թե ինչ է առված մեղ հետաքրքրող հարցի շուրջը։

Ահա մեր առջևն է «Օղեսսկի լիստոկ» թերթի այն համարը, որտեղ Աղամյանի գաստրոլներին նվիրված մի հոդված է տպագրված։ Հոդվածադիրն ասում է, թե հայ գերասանի «գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նա կառշած չի մնում ակադեմիական հանրածանոթ ժամանակած կարծիքներին»<sup>6</sup>։

Ահա մի բաղվածք էլ մի ուրիշ թերթից, որ կոչվում է «Ելիսավետոպոգրադսկի վեստնիկ»։ Սրա էջերում ասվում է, թե Աղամյանը բոլորովին այլ Համլետ ցուց տվեց, քան մինչ այդ իրենք տեսել էին, և միանգամայն վըստահ հայտարարվում է, թե նա տալդ դերի պատկերման մեջ նորարար է»<sup>7</sup>։

Գուցե այդպես է թվացել թատրոնից, նրա պատմությունից հեռու կանգնած և անզիտակ հոդվածագրերին։ Ծիշտ է, մենք արդեն բերինք մի այնպիսի հեղինակության վկայություն, ինչպիսին Զույկոն է եղալ ժամանակին, բայց վատ չեր լինի իմանալ, թե մասնագիտական մամուլն ինչ դիրք է ընդունել։ Օրինակ՝ Մոսկվայում հրատարակվող «Տեհատրալնի միրոկ» թերթն ասում է, թե «Աղամյանը Համլետին պատկերում է շափազանց ինքնահատուկ ձևով» և ասպա ավելացնում է, թե այդ հաճելի ինքնատիպությունը գլխավորապես որ տեսարաններումն է արտահայտվել։

Ահա և «Իսկուստվո» շաբաթաթերթի կարծիքն այդ մասին.

«Ոչ ոքին շընդօրինակելով, ոչ ոքի շհետնելով՝ Համլետի հանրընդունելի պատկերացողներից՝ նա ստեղծեց թերևս փոքր-ինչ յուրահատուկ, սակայն լիովին դեղարվեստական մի տիպ, որ մշակված էր մինչ ամենաշնչին մանրամասները, զարմանալիորեն կուռա»<sup>8</sup>։

Ա. Ցարիչկինն էլ ասում է. «Շատերը գնալով թատրոնից՝ տարակուսում էին, որ Աղամյանի խաղը նայելիս

հրենք տեսան Համլետին ոչ այնպես, ինչպես սովոր էին տեսնել նախորդ դերասանների խաղով»<sup>9</sup>:

Կարելի է ուրիշ մեջբերումներ էլ կատարել, բայց թվում է, թե այսքանն էլ բավական է, մանավանդ որ վկայությունների այս շարքը կամենում ենք եզրափակել մի հեղինակության ասածը ևս հիշելով: Նկատի ունենք ակադեմիկոս Ալեքսեյ Վեսելովսկուն: Անդրադառնալով Աղամյանի Համլետին՝ նա գրում է. «Այս Համլետը չի համընկնում շեքսայֆրյան այն վշտահարի և մտքի նահատակի հետ, որը կտակել են քննադատության տիրապետող բացատրությունները, մեծ կատարողների գերըմբռնումը. դա Համլետի և համլետիզմի անկախ ըմբռնողության ներշնչած համատարած նորամուծությունն է, որը դրսնորվում է հերոսի հոգեբանության բուրք ծալքերում, պիեսի բոլոր ցայտում մումնենաների և անցումների մեջ»<sup>10</sup>:

Վեսելովսկու այս վկայությունը գրված է ոչ թե 80-ական թվականներին, գերասանի կենդանության օրով, այլ նրա մահից հետո, շատ տարիներ անց: Սա անկարուոր հանգամանք չէ: Ժամանակին, խաղի անմիջական տպավորության տակ գրվածները այն արժեքն ունեն, ինչ արժեք ունենում են դրանք ընդհանրապես: Ուշ գրվածի նշանակությունը տարբեր է: Անցած ժամանակը, մանավանդ այդքան երկար ժամանակը, ստուգման բովից է անցկացնում ստացած տպավորությունը և թողնում հիշողության մեջ լոկ ամենահականը: Եվ քանի որ հեռավոր ժամանակներին է արդեն պատկանում խաղը, ինչպես և նրա առաջ բնրած ոգևորությունը, երեվույթի մասին մարդ դատում է համեմատաբար սառը, ավելի հանգիստ, հավասարակշիռ եվ, չնայած դրան, Վեսելովսկու համար դա ոչ միայն անհական կետ չի

եղել, այլ ճիշտ հակառակը՝ շատ կարևոր, որոշ իմաստով մեկնակետի նշանակություն ունեցող:

Ավելի հետաքրքիր է մի այլ հարց:

Որ Ադամյանը Համլետ խաղացել է ոչ ավանդական ըմբռնումով, այդ արդեն պարզ է: Այժմ տնանենք, թէ ինչ է իրենից ներկայացնում այն, ինչ հայ դերասանի ռուս գնահատողները համարել են ոչ միայն շեղում ախրապետող հասկացողությունից, այլև նույնիսկ նորարարությունն: Դրա համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թե քննադատների ասած աիրապետող տրադիցիան ո՞րն էր:

Տեսնենք, թե ուսական իրականության մեջ 60—70-ական թվականներին Համլետի կերպարի ինչ պատկերացում էր իշխում:

«Սովորեննիկին դեմ լիրերալ ու ռեակցիոն թեյգաղափարական պայքարում նկատվել է շեշտված միտում՝ հեռանալ Եերսպիրի ըմբռնման բելինսկիի կան և մոշալովյան դիրքերից: Ավելին, Եերսպիրն օգտագործվում էր Բելինսկու դեմ մղվող պայքարում ընդհանրապես: Այսպես, օրինակ, Ա. Դրուժինինը թելինսկու, ինչպես և Դորրուլուրովի ու Զերնիշևսկու մատերիալիստական էսթետիկային հակադրվելու նպատակով Եերսպիրին հայտարարում է մաքուր արվեստի ներկայացուցիչ: Իսկ մի ուրիշը, Մ. Զագուլյանը, ավելի՝ հեռուներն է գնում: Կամենալով հակադրվել Զերնիշևսկու և նրա զինակիցների այն մարտակոչյին, թե պետք է երկիրը փրկել դարավոր ստրկությունից և ստեղծել աղատ, հպարտ և անկախ մարդկանց նոր հասարակությունն, նա, այդ Զագուլյանը, այնպես է ներկայացնում Եերսպիրին, որ իրը թե նրա «Համլետի» փիլիսոփայությունը ոչ այլ ինչ է, բայց եթե «մարդկության անզու

ուրբյունք ճակատագրի և կյանքը կառավարող ուժերի  
նկատմամբ»<sup>11</sup>:

Գաղափարական այս մթնոլորտում նախապատ-  
րաստվեց հայեցողական և կրավորական Համլետի երե-  
կան գալը ոռաւական բնմում։ Առաջին օրինակը տվեց  
Սամոյլովը։ Թերևս ո՞չ պատահական է և ո՞չ էլ հետա-  
քրքրությունից զուրկ այն փաստը, որ Սամոյլովը, գրա-  
ժարվելով Պուստի թարգմանությունից, որով խաղում  
էր Մոլալովը և որին արդեն ընտելացել էր հանդիսա-  
տես հասարակությունը, բայց է բարձրացել Զագույանի  
թարգմանությամբ։ Դերասանն ըստ երևույթին այդ  
թարգմանությունն ավելի մոտ է գտել իր պատկերաց-  
րած Համլետին։ Բաժենովի ասելով, նրա ռՀամլետը բա-  
րոյապես ցնցված մարդ է, սեփական անզորության  
նահատակ, մարդկային ոգու բոլոր լավ առաքինություն-  
ներով առատորեն օժտված մարդ, որի մոտ այդ բոլորը  
կորչում է ապարդյուն՝ հաստատում կամքի բացակա-  
լության և այն պատճառով, որ վախենում է գործել»<sup>12</sup>։

Սա արդեն զյոթեական Համլետն էր։ Նորություն էր  
ռուական բեմում, որը, ինչպես հետազոտողներն են  
ասում, 60-ական թվականներից ոռաւական բեմում ձեռք  
է բերում կայուն տրադիցիայի ուժ՝<sup>13</sup>։

Արդյոք առաջավոր վաթսունականներից մեկը, Գ. Զ.  
Ելիսեևը, նկատի շունե՞ր հենց այդ, երբ ցավելով գրե:  
է, թե «մեզանում կորաված է նրանց (Եկբագիրի ողբեր-  
գությունների մասին է.—Ռ. Զ.) ժամանակակից ըմբցուն-  
ման բանալին»<sup>14</sup>։ Այս և նման այլ ելույթներ, անշուշտ,  
կատարում էին իրենց դերը, բայց և միաժամանակ  
իրողություն է, որ և այդ տարիներին, և' 70-ական  
թվականներին, և' դրան հաջորդած տասնամյակում ոռու-  
սական բեմում գերիշխում էր հայեցող ու կրավորական  
Համլետի տրադիցիան։

Չեքսպիրին Գյոթեն հաճախ է անդրադարձել, բայց այն, ինչ նկատի ունեն Աղամյանի քննադաւաները՝ գըանում ենք նրա «Վիլհելմ-Մելիստերի ուաման տարիները» գրվածքում, որտեղ բեմական մտահղացման շուրջ եղած զրուցն ավարտվում է շեքսպիրյան հայտնի ողբերգության լուսարանությամբ, որը, ինչպես շեքսպիրագետներն են ասում, մի ամբողջ դարաշրջան կազմեց Համլետի շուրջը եղած գրականության պատմության մեջ:

Չույկոն ասում է, թե Աղամյանն իր խաղով որոշուրովին վերացնում է Գյոթեի մեկնարանությունը՝ նույնը հաստատում են և ուրիշները, ասենով, թե նրա պատկերածը «գյոթեական» Համլետը չէ»<sup>15</sup>, Աղամյանի առնշությամբ Գյոթեի անունը սովորաբար հաճախ է հիշվում: Եվ դա հասկանալի է, որովհետեւ ավանդական մեկնարանության դասական սահմանումը կապված է գերմանական բանաստեղծի անվան հետ:

Ըստ Գյոթեի՝ Համլետը ազնիվ, մաքոր, բարձր բարյականության տեր էակ է, բայց քանի որ զուրկ է այն զգացումներից, որոնք մարդուն հերոս են դարձնում, ուստի կործանվում է մի այնպիսի ծանրության տակ, որը նա ո՛չ կարող էր կրել. ո՛չ էլ վրայից նետել: Նրանից պահանջում են անկարելին, ոչ թե ընդհանրապես անկարելին, այլ այն, ինչ անկարելի է նրա, Համլետի համար<sup>16</sup>:

Նույն հայացքը պաշտպանել է նաև Հեգելը: Վերջինիս կարծիքով՝ Համլետը գործի մարդ չէ. թույլ է բնավորությամբ, իր հոգու ներքին ապրումների մեջ խորասուզված: և չի վճռում դուրս գալ այդ ներքին ներդաշնակությունից:

Այն, ինչ Գյոթեն ու Հեգելն են ասում՝ ըստ էության Համլետի կերպարի մի այնպիսի ըմբռնում է, որ մին: այդ էլ գոյություն է ունեցել ինչպես գրականության

մեջ, այնպես էլ թատրոնում։ Եվ երկար ժամանակ էլ, ընդհուար մինչև Աղամյանի օրերը, և նույնիսկ նրանից հետո, շարունակվել է դիտվել իրոք տիրապետող կարծիք։

Այսպիսով, ուրիմն, Համլետի տիրապետող ըմբռանումը, այսպես ասած գյոթեական ըմբռնումը, աշքի առաջ ունի ոչ այլ ինչ, բայց եթե շեքսալիրյան հերոսի նախ և առաջ թույլ կողմերը, և, այդպիսով, իր ընդհանուր նկարագրով ներկայանում է որպես կրավորական և հայեցող մի տիպ։

Աղամյանը ուստական բեմում երևաց հենց այն ժամանակ, երբ ոչ միայն թատերական աշխարհը, աչքն գեղարվեստական հասարակայնության զգալի մասը շեքսալիրյան կերպարի գյոթեական պատկերացման պավորության տակ էին գտնվում։

Դրա պատճառները հասարակական էին։ Այն հասարակական անտարբերությունը, որ ուսակցիայի մթնոլորտում նկատելի էր ուստական մտավորականության որոշ շերտերում, սնունդ էր տալիս և սնունդ էր առնում այդպիսի Համլետից։

Գնալ այլ ճանապարհով՝ դժվարին գործ էր։ Հակառակնե՞լ գրեթե անհնար հանդգնություն։ Այդ նշանակում էր վիճի բռնվել Դյոթսի հեղինակության և տրադիցիայի ուժով նախապաշարված մի հասարակության հետ։

Աղամյանը անվարան կանգնեց այդ ճանապարհի վրա։

Աղամյանի խաղը մի ակնհայտ շեղում էր Համլետի հանրահռչակ այս մեկնարանությունից։ Ինչո՞ւ շեղում էաւ պարզ հակադրություն էր։ Այդպես են նկատել հայողքերգակի ուստ քննադատները, Համենայն դեպս նըսանց մեծ մասը։ Ոմանք այդ գտել են վիճելի, ոմանք նշել են երևույթը և անցել, ոմանք էլ արձանագրեն ու

Հակվել են պաշտպանելու դերասանի տված լուսաբանությունը:

Երզվելով ավանդական մեկնաբանությունից կամ հակադրվելով տիրապետող ըմբռնմանը, ինչպես էր Աղամյանը լուսաբանում Համետի կերպարը:

Չույկոն ասում է. «Աղամյանը խաղում է ոչ թե ֆլեգմատիկ հյուսիսեցու, ինչպես պետք է լինի Համբետը, այլ հարավցու, ավելի եռանգում և կրոստ, բան թե ոչ ֆլեկտիլ, ճնշված մարդու տեսակետից» Սրանք են այն երանգները, որոնցով Աղամյանը ներկայացնում է Համետի ընդհանուր պատկերը: Այդպես է Աղամյանը հասկանում շեքսպիրյան հերոսին»<sup>18</sup>:

Նույնն է ասում նաև Վեսելովսկին. «Հարավցու գում ասես օտար հյուսիսային ոճֆլեքտիայի ուժն ու անհյուսալիությունը և մարդուն համարյա թե սխելագարության սահմաններին» հասցնելու ընդունակ պսիխոպաթոլոգիան չէին կարող իսպառ անհետանալ, բայց ենթարկվում էին ակտիվուրյան ձգումանը, բողոք պոսթկումներին, շլատված կամքի և շախչախոված իդալների տրագեդիային»<sup>19</sup>:

Թեև մեզմ և քաղաքավար, բայց և՝ Չույկոն, և՝ վեսելովսկին քննադատում են Աղամյանին, նրա արածավելի առանձնահատկություն են համարում, բան պակասություն, բայց դրանից ավելի կարևոր այն է, որ բարձր գնահատելով հանդերձ նրա խաղը՝ զտնում են, որ նա Շեքսպիրից հեռացել է:

Սրանց կողքին կային պաշտպաններ: Դրանցից է. օրինակի համար, պետերբուրգյան «Էսկուսատվոյի» հոդվածագիրը: Այս շարքը պետք է դասվի նաև Ա. Յարիշկինը: Կային և այնպիսիները, որ վեճի մեջ էին մտնում Չույկոյի հետ, առարկում նրան, Օրինակ՝ Պոլսի «Մասիսում» հրապարակվել է մի հոդվածաշարք՝

Աղամյանի պետերբուրգյան ներկայացումների մասին։  
Հոդվածի հեղինակը թաքնված է էմիր ծածկանվան  
տակու Հոդվածը գրվել և թուրքիա է ուղարկվել Պետեր-  
բուրգից։ Բերելով Չույկոյի թատերախոսականը գրեթե  
ամբողջությամբ, էմիրը մինում է ոռու քննադատի  
հետ Բերենք նրա մի առարկությունը, որը անմիջապես  
վերաբերում է մեզ հետաքրքրող հարցին։ «Անգիացի  
մեծահանճար Ենթապիրը, իր այդ պիեսան ստեղծագոր-  
ծելու միջոցին, Համլետի ընավորության մեջ մտցրած է  
այնպիսի հոգեկան կողմեր, որ նրա հերոսը սոսկ պա-  
հարյուն անձնավորություն լինելով, անկարելի է, որ  
իրականացներ, կենդանացներ Համլետի այն տիպարը,  
որ շատ անգամ միայն բուռն կրքի ու աշխուժի աղղե-  
ցության կարող է նա, ինչպես Համլետ գոյություն ու-  
նենալ» <sup>20</sup>։

Այլ կերպ, բայց նույնն է հաստատում նաև Ցարիշ-  
կինը։

Ասելով, թե «զուր են շատերը Համլետին համարում  
առը հսասեր, որը ոչինչ չի ուզում ճանաշել, բացի իրե-  
նից, համարելով նրան թույլ կամքի տեր մարդ», Ցա-  
րիշկինը գրում է. «Աղամյանն իր գեղարվեստական  
դատարումով հաստատում է հակառակը։ Նրա Համլե-  
տը այլասեր է, ուժեղ կամքով, իր ծնողներին ու ըն-  
կերներին, ինչպես և ամբողջ աշխարհը սիրող, մաքուր  
բանականության տեր է, ոչինչ չի անում հենց այնպիս,  
ուսանց կշռադատելու, անշափ տպավորվող է և մտա-  
դրվելով որևէ բան անել՝ այդ նպատակի համար զո-  
հարերում է ամեն ինչ» <sup>21</sup>։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Աղամյանի Համ-  
լետի համար բնորոշ է եղել ակտիվության ձգտումը,  
ավելի եռանդ ու կիրք, ուժեղ կամք, նպատակասլացու-  
թուն, բողոքի պողոթկումներ և այլն։

Երբ պարզ է, թե Համլետի աղամյանական մեկնարանությունը իրենից ինչ է ներկայացրել, քննության առնենք այն հարցը, թե կերպարի նման մեկնարանությունը իսկապես նորություն է եղել, թե՞ ոչ:

Աղամյանից առաջ, այն էլ բավական առաջ, Համլետն այդպես լուսաբանվել է գրականության մեջ: Այդպես է մտածել և գրել, օրինակ, Բելինսկին: «Համլետը,— ասում է նա,— բնությամբ ուժեղ մարդ է. Նրա մաղձու հեգնանքը, նրա վայրկենական պոռթկումները, կրծոտ բռնկումները մոր հետ ունեցած խոսակցության ժամանակ, հորեղբոր նկատմամբ ունեցած հպարտ արհամարհանքն ու անսթող ատելությունը,— այս ամենը վկայում են նրա հոգու մեծությունն ու եռանդը»<sup>22</sup>:

Ճիշտ է, այդ շրջանում Բելինսկին իր փիլիսոփայական ըմբռնումներով հեգելական էր, բայց նա ոչ միայն Համլետի բնավորությունն է տարրեր գտնում, քան Գյոթեն և Հեգելը, այլև պատմական հողի վրա է գնում այն պատճառները, որոնք խանդարում են Համլետին գործելու. ուրիմն Բելինսկին շրջել է Գյոթեի հայացքը՝ Համլետի անգործումնությունը համարելով հետևանք և ոչ թե պատճառը Բելինսկին, վերլուծելով Համլետի վարժագիծը, չի էլ փորձում ժխտել կամքի թուլության և անվճուականության պահերը նրա բնավորության մեջ, բայց Համլետի էության պարզաբանումը նա կատարում է բոլորովին նոր լույսի տակ, երբ խոսելով այն տառապալի պայքարի մասին, որ մղում է Համլետն ինքն իր դեմ, ասում է, որ նրա անվճուականությունն անխուսափելի հետևանքն էր այն աններդաշնակության, որ կար Համլետի իդեալների և իրականության միջև:

Բելինսկուց հետո ակտիվ Համլետի միտքը եվրոպական շեքսակիրագիտության մեջ պաշտպանել է Վերդերը, Բայց Վերդերը ոչ միայն շկարողացավ առաջ:



Համելիս  
Վ. Շեքսպիր. «Համլետ»



տանել թելիննկու հայացքը, այլև նրա հասարակական-փիլիսոփայական ընդհանրացումը փոխարինեց հարցի սոսկի իրավաբանական-հոգեբանական բացատրությամբ։ Ըստ Վերդերի՝ Համլետին գործնոււ խանդաբում էին օրյեկտիվ պատճառներ, օրինակ հենց այն, որ Համլետը շտմեր ոչ մի ապացուց Կյավերիոսի ոճրագործությունը հաստատելու համար։ Ըստ Վերդերի՝ Համլետի ողբերդության աղբյուրն այդ է և, ընդհակառակն, եթե Համլետը փաստեր ունենար մարդկանց ապացուցելու այն, ինչ միայն իրեն ասել էր ուրվականը, ոչ մի ողբերդություն չեր լինի, հետեւապես Համլետը կկարողանար անարգել լուծել իր հոր վրեժը։

Ուրեմն, ըստ ավանդական հայացքի, Համլետի թուլության պատճառները պետք է որոնել նրա բնավորության մեջ, բացատրել նրա կամազրկությամբ, այսինքն՝ այն, ինչ միայն հետեւանք էր, գիտվել է Գյոթեի և մյուսների կողմից իրեն պատճառ, մինչդեռ, ըստ Թերինսկու, այն հիմնիվեր խախտված ներդաշնակության հետեւանք է, որ կար Համլետի իդեալների և իրականության միջև։

Այս լուսաբանությունը գտել է նաև իր բեմական մարմնավորումը։ Օրինակ՝ Մոլալովի պատկերած Համլետը, որ ստեղծվել է անցյալ դարի 30-ական թվականների վերջներին, սարեմն, քառասում տարի ավելի վաղ, քան Աղամյանի հանդես գալն այդ դերում։

Մի՞թե դա հայտնի չէր Աղամյանի ժամանակակիցներին և հատկապես նրանց, որոնք խանդավառված դերասանի խաղից՝ գրիշ էին վերցնում նրա Համլետի ժամանակին գրելու թե ինչու Զույգոն կամ Վեսելովսկին շեն գրել, դժվարանում ենք բացատրել, բայց որ Աղամյանով հիացողների մեջ եղել են այնպիսիները, որ նրա խաղը դիտելիս անմիջապես հիշել են Մոլալովին՝ այդ

ևս գիտաւութեան է։ Օրինակ՝ ոռու հայտնի դերասան Անդրեա-  
Բուրլակը ասում է. «Համլետի դերում Աղամյանը հի-  
շեցնում է նշանավոր Մոշալովին»<sup>23</sup>.

Մի հարց ևս. արդյոք ժանո՞թ էր Աղամյանը Համ-  
լետի մասին Բելինսկու գրած աշխատությանը, հետևա-  
պես դադափար ունե՞ր, որ մի այլ դերասան իրենից  
առաջ, այն էլ մի քանի տասնամյակ առաջ, քեմում  
մարմնավորել է կերպարը ընդհանուր առմամբ այն  
պիրքերից, ինչ որ ինքը

Սենեքերիմ Արծրունին, «Համլետի» թարգմանիլը,  
ասում է, թե այն երեք ամսում, երր Աղամյանը պատ-  
րաստել է Համլետի դերը՝ ինքը պարապել է նրա հետ,  
թարգմանել նրա համար Համլետի մասին նղած մի շարք  
գործեր, այդ թվում և Բելինսկու ընդարձակ հոդվածը<sup>24</sup>.  
Արծրունին, Բելինսկուց հետո, տալիս է նաև Մոշալովի  
անունը, ասելով, թե թարգմանել է նաև նրա դրվագք-  
ները. Մոշալովը, որքան մեզ հայտնի է, ոչինչ չի գրել  
Համլետի մասին։ Ամենայն հավանականությամբ մի  
պարզ թյուրիմացություն է այդու թվում է, թե խոսքն այն  
մասին է, որ Արծրունին Աղամյանի համար թարգմանել  
է Բելինսկու հոդվածը, որի առաջին կեսը նվիրված է  
ողբերգությանը, նրա գաղափարի և տիպերի վերլուծու-  
թյանը, իսկ երկրորդ մասը՝ Մոշալովի ներկայացրած  
Համլետի քննությանը՝ մանրակրկիտ նկարագրությամբ  
հանդերձ։

Թացի այդ, Համլետի մասին գրած իր աշխատության  
մեջ, որ լույս է տեսել 1887-ին, այսինքն՝ առաջին խա-  
ղից լոթ-ութ տարի անց, Բելինսկու հոդվածը հիշատա-  
կում է, ինչպես նաև Մոշալովի խաղը<sup>25</sup>.

Ինչպես էլ բացատրելու լինենք վերոհիշյալ, այսպիս  
ասած, թյուրիմացությունը, համենայն դեպք մի քան  
պարզ է, այն, որ Աղամյանը ժանոթ է եղել Բելինսկու

գրվածքին, հետևապես և նրա միջոցով՝ ոռւս ողբերգակի խաղին:

Չենք կասկածում, որ այդ ժանոթությունը իր նշանակությունն է ունեցել Աղամյանի համար: Այդ նշանակությունն իր ամբողջ խորությամբ և բոլոր կողմերով մեղ հայտնի չէ, որովհետև Արծրունին, դժբախտաբար, ոչ մի մանրամասնություն չի հաղորդում, բացի փաստի նշումից:

Անկասկած համարելով թելինսկու մտքերին և Մուշալովի խաղին ժանոթ լինելու դրական իմաստը Աղամյանի կյանքում՝ Համլետի կերպարը պատրաստելիս, հակված չենք կարծելու, որ հայ գերասանը ակտիվ Համլետ ներկայացնելու գաղափարին հանգել է լոկ դրա ազգեցության տակ: Այդպիսի լուրջ մտահղացման առաջացումը պետք է որ ավելի խոր հիմքեր ունենար:

Չենք կարող, իհարկե, համաձայնել և այն բացարության հետ, որ Համլետի աղամյանական մեկնարանությանը տալիս են Չույկոն և Վեսելովսկին:

Չույկոն տրամադիր է Աղամյանի խաղի մեջ երեսնեկած այդքան եռանդը և կիրքը բացատրել գերասանի հարավոցի լինելով: Ուրեմն ոչ թե մոտեցում, ոչ թե երևույթի գաղափարական ըմբռնում, այլ արդյունք դերասանի հարավային խառնվածքին նույնն է ասում և Վեսելովսկին, որը գտնում է, թե անհուսալիությունը քնորոշ լինելով հյուսիսցու համար՝ բնորոշ չէ հարավուն, ինչպիսին Աղամյանն է, հետևապես օտար է նրա ողուն:

Նախ նկատենք, որ Վեսելովսկին մի փոքր հետո ինքնիրեն հակասում է, ասելով, թե արևմտյան նորագույն ուսումնասիրությունների մեջ մեծ ձգտում է նկատվում դեպի այն բացատրությունը, որ մի քանի տասնամյակ

առաջ Համլետի կերպարին տվել է Աղամյանը։ Երկրորդ, Վեսելովսկին, ինչպես և, իհարկե, Չույկոն, աշխարհագրական ազդակին այդքան վճռական տեղ տալով՝ բայց էության հանգում են դերասանի ստեղծագործության մեջ աշխարհայացքի բացասմանը։ Այս առումով շատ հետաքրքիր է Չույկոյի մտքի զարգացման տրամարանությունը։ Չհամաձայնելու, նույնիսկ վիճելի համարելով Համլետի ադամյանական բացատրությունը, նա ասում է, թե ինքը դրա համար դերասանին չի կշտամբում և հնարավոր է համարում, որ տարրեր կարող են լինել համողումները։ Նույնիսկ ասում է, թե դըժվար է դանել երկու դերասան, որ Համլետի բնավորությունը միատեսակ հասկանան Միաժամանակ նա ավելացնում է և հետևյալը։ Համլետն այնքան հարուստ նյութ է բովանդակում իր մեջ, որ ամեն մի տաղանդավոր դերասան կարող է շատ բան անել, թնկուզն նրա ընդհանուր ըմբռնումը շհամընկնի մերի հետ։ Ահա այդպիսի դերասան է նաև համարում նաև Աղամյանին։ Ամեն ինչ կարծես ճիշտ է ասված մինչև այստեղ։ Սակայն Չույկոն անհրաժեշտ է համարում ոչ միայն պաշտպանել արվեստագետի աղատությունը՝ իր ըմբռնումի համեմատ լուսարանելու կերպարը, այլև բացատրել, թե ովքալ դեպքում ինչու է դերասանը հանգել այդ և ոչ այլ համազման։ Ահա այստեղ է, որ Չույկոն սայթաքում է։ Նա ասում է, որ նման մոտեցումը դերասանի մեջ առաջացել է իր անձնական խառնվածքի և Համլետի բնավորության միջև հնարավոր, լիակատար ներդաշնակությունը պահպանելու օրինական ցանկությունից։

Ոչ մի կերպ շենք կարող համաձայնել քննադատի հետ։ Ի՞նչ խոսք, որ արվեստագետի խառնվածքը դեր է խաղում։ Դա ամեն կասկածից վեր է։ Բայց ոչ այնքան վճռական, որ դրանով պայմանավորվի մի այնպիսի

Հիմնական երևույթ, ինչպիսին դրական կերպարի բեմական լուսարանությունն է:

Թվում է, թե հարկ չկա առանձին ջանք գործ զնել և ապացուցել այսօր, որ գերասանի աշխատանքի հիմքում ևս ընկած է ստեղծագործողի աշխարհայացքը:

Դերասանի ստեղծագործությունը, այն էլ մի այնպիսի արվեստագետի, ինչպիսին Աղամյանն է, մանավանդ երր խոսքը վերաբերում է Համլետի նման հոյակապ դերակատարմանը, և ընդհանրապես անկախ նրանից, թե ինչ է խաղում, սերտ կապի մեջ է այն իրականության հետ, որի ծնունդն է նաև Եվ որ այդ ստեղծագործության դադարիարական մղումները պայմանավորված են նրանով, թե գերասանն իր ըմբռնումներով հասարակական ո՞ր խմբակցությանն է հարում:

Ինչպես տեսանք, Համլետի բնեմական մեկնարանությունները, վերջին հաշվով, կարելի է բաժանել իրարից միանգամայն տարրեր երկու հայացքների: Այդ այն վեճն է, որ վաղուց ի վեր ծայր է առել ու շարունակվել է և, վերջին հաշվով, հանգել, մի կողմից՝ կրավորական, հայեցող և, մյուս կողմից՝ գործող, ակտիվ համլետների միջև մղվող պայքարին: Մնացած բոլոր մանրամասնությունները դալիս խմբավորվում են այդ երկու հայացքի շուրջը, նայած թե գերասանը ինչպիսի Համլետ է խաղում՝ պասսի՞վ, թե՝ ակտիվ:

Աղամյանի խաղացած կերպարներից ոչ մեկը թերևս այն աստիճան շի արտահայտում արվեստագետի ստեղծագործության զլիավոր թեման, որքան Համլետը: Եվ դա այն պատճառով, որ գերասանի միտքն ու երևակայությունը հուզող հարցը շեքսալիրյան այս երկում գտել է իր ուղղակի արտահայտությունը՝ իդեալի և իրականի բախումից առաջացած ողբերգություն: Դրա վրա ժամանակին ուշադրություն է դարձրել Թելինսկին: Նա դրա

մեջ է տեսնել Համլիտի ապրած հոգիկան դրամայի բացատրության բանալին:

Այսպիսով, ուրեմն, Աղամյանը կարիք չուներ որոնումներ կատարելու կերպարի կյանքում այն կոչանները գտնելու համար, որոնց վրա հենվելով՝ կարելի կլիներ թեման բանալ թեման կար, մնում էր կյանք տալ նրան և նորից, մի անգամ էլ, խոսել դրա մասին:

Իմ առջև, գրում է «Նովովոստիլսկի տելեզգրաֆի» թղթագատը Աղամյանի մասին, կանգնած է մի մարդ, որ համալսարանական նստարանից կանգնել է կյանքին զեմ-դիմաց, բախվել նրա հետ, կյանք, որ հակասում է նրա գաղափարներին, համոզումներին, ձգտումներին:

Աղամյանը, ինչպես մյուս բոլոր կերպարների, այնպես էլ Համլիտի միջոցով արտահայտել է իր ապրած ժամանակների նկատմամբ ունեցած դժգոհությունը և կոչել մարդկանց՝ անհաշտ մնալ իրականության հետ:

Եթե Զացկին փախչում է, Արքենինը խելագարովում, ուորրադոն, Ուրիելը և Օթելլոն ձեռք են բարձրացնում իրենց վրա, Լիրը մեռնում, ապա Համլիտը պայքարում է իր գաղափարների և ձգտումների համար և ընկնում հենց այդ պայքարում:

Այսպիսով, ուրեմն, նյութն իր մեջ կրել է այդ պայքարը: Ահա դա էլ պայմանավորել է կերպարի ակտիվությունը Աղամյանի խաղում:

Մեզ թվում է, որ Աղամյանը ակտիվ Համլիտի մտահղացմանը հանգել է ինքնաբերաբար և անկախ, պատմական այն մթնոլորտի աղղեցության տակ, որի ծընունը է նրա ստեղծագործությունը, հատկապես 80-ական թվականներին: Ինչպես որ Մոլալովը և Թելինսկին համլիտականության նոր ըմբռնումով, վերջին հաշվով, արտահայտեցին այն պայքարն ու անհաշտությունը, որ նրանց ժամանակների ունուցիոն-դիմո-

կրատակրուն մտածողությունն ուներ անցյալ դարի 30—40-ական թվականների իրականության նկատմամբ, այնպես էլ Աղամյանի Համլետի մեջ եղած ակտիվության ձգտումը ոչ այլ ինչ էր, բայց եթե իր գորությունը պահպանելու համար մի ժողովրդի պատմական ճակատագրի անուղղակի արձագանք:

Նվազության միանգամայն իրավացի է ծու Յուլյուսկին, երբ անդրադառնալով Աղամյանին, նրա Համլետին, ասում է, թե դրա մեջ ուկարելի էր տեսնել ոչ միայն մի մարդու կերպարը, այլև ազգության կերպարը <sup>26</sup>:

Չի կարելի շնչամաձայնել միշտ է զգացնել, ճիշտ է ընդհանրացրել:

Աղամյանը որպես մեծ անհատականություն, մեկն էր նրանցից, որ շատ կողմերով խտացնում էր իր մեջ հայրներ ժողովրդին: Նա, ինչպես 80-ական թվականների հայ մշակույթի մյուս ականավոր գործիչները, ժողովրդի հետ էր, նրա մեջ և գործում էր նրա՝ համար, բարձրանում էր բնմ և խոսում իր ժողովրդի անունից:

Պարզ և ուղղակի գիծ քաշել Համլետի և հայ ժողովրդի պատմական ճակատագրերի միջև՝ անխոհեմություն կլինի: Բայց և միաժամանակ պետք է ընդունել, որ ժողովրդի պատմական ճակատագրերը, որ այնպես հուզել է Աղամյանին, զրադեցրել նրա միտքը, շէր կարող ինչ-որ ձևով, ինչ-որ շափով շանդրադառնալ նրա ստեղծագործության վրա, շապայմանավորել մի այնպիսի կերպարի ըմբռնման ուղղությունը, ինչպիսին Համլետն է:

Պոլսում ծնված ու ապրած լինելով, Աղամյանը ոչ միայն լսել ու տեսել է, այլ սնվական անձի վրա է զգացնել այն բոլոր ճնշումները, որոնց ենթակա էին հայ, ընդհանրապես մանր ազգությունները սուլթանական

Թուրքիայում, Եթե անզամ հեռու շգնանք և շխորանանք այլ բնագավառների մեջ, ինչպիսին է Հայերի տնտեսական, քաղաքական կացությունը այդ տարիներին և աշքի առաջ ունենանք Հայկական մշակույթի մի ասպարեզը միայն՝ Թատրոնը, ապա բավական է հիշել, թե ինչ ապրեց Հայ բեմը 70-ական թվականներին, թե ինչպես առաջնանաբար հեռանալով իր անցյալից, տարեց տարի աղջային ճնշման ենթարկվելով փակվեց, արգելով տակ դրվեց, Մենք դիտավորյալ հիշեցինք հուզմունքի, վրդովմունքի, ցասման այդ տոիթը, հիշեցինք ոչ միայն նրա համար, որ դա մոտ լինելով Աղամյանին խորապես վիրավորել է, հարվածի տակ դրել նրա կյանքի ամենաթանկագին շահերն ու հետաքրքրությունները, այլև այն պատճառով, որ հայտնի է, թե ինչպես Աղամյանը, Հակառակ իր արվեստակից ընկերների ճնշող մեծամասնության, անկախություն է հանդիս բերել Թատրոնի շուրջը դորձող պայքարում։

Կարո՞ղ էր արդյոք Աղամյանի նման զգայուն արվեստագետը, տարիներ անց, Համլետ խաղալիս շհիշել իր ապրած դառնությունները։ Չէ՞ որ նա, ինչքան էլ երիտասարդ, պետք է հասկանար կամ գոնե զգար, որ թատրոնի նկատմամբ թուրք կառավարության բռնած գիրքը միայն թատրոնին չէ որ վերաբերում է, այլ ավելի լայն ընդողկման մի դրսեւրումն է այն հալածանքի, որը վաղը վտանգի տակ է գնելու մի ամբողջ ժողովրդի մշակույթային կյանքը, իսկ հետո էլ իրեն՝ այդ մշակույթը ստեղծողին։

Համլետի այն խոսքը, թե Դանիան մի բանտ է՝ չէ՞ր կարող արդյոք կրկնել Աղամյանը Թուրքիայի մասին։

Հարցը միայն անցյալի մեջ չէ, գուցե ոչ այնքան անցյալի, որքան ներկայի, Աղամյանի Կովկաս գալը, ավելի ճիշտ՝ նրա գործունեությունը, մի կարճատև շըր-

շանից հետո, զուգաղիպեց ամբողջ Ռուսաստանով մեկ տարածված ռեակցիայի մոայլ տարիներին Եվ զուցեայն, ինչ անցյալից Եթև շասենք մոռացվել էր, ապա հետին շարք էր մզվել նոր միջավայրի թարմ տպավարությունների և աղմկալի հաջողությունների ազգեցության տակ, այժմ այդ բոլորի ներգործությամբ, ինչ որ տեսնում է Աղամյանը Ռուսաստանի մի ծայրից մյուսն անցնելով՝ կրկին վերակենդանանում են անցյալի դառն յատապատկերները, կապվում նոր տպավորությունների հետ և մի նոր ուժով ստիպում տեհնդադին գործելու նրա ձիաքը:

Մեզ թվում է ոչ անհետաքրքիր այն հարցը, թե, այսուամենայնիվ, այդ ինչպես է պատահել, որ Համլետի պատմյանական լուսարանությունը ոռուական քննադատությունը հայտարարել է նորությունն Մտածել, որ բոլոր քննադատներն էլ շգիտեին Բելինսկու հոդվածը, հետեւապես և Մոշալովի խաղը, կամ տեղյակ լինելով՝ չին հիշում, անշուշտ, ճիշտ չի լինի. Օրինակ, Աղամյանով ընդհանրապես հիացած և նրա Համլետը մեկնարանության տեսակետից պաշտպանող Յարիշկինն իր հոդվածում հիշատակում է Բելինսկու հոդվածը, կանգ առնում Մոշալովի խաղի վրա: Ուրեմն մոռացության վերագրել չի կարելի, թեև ընդունում ենք, որ կարող էին լինել և հարցի պատմությանը անիրազեկ մի երկու հոդվածագիր:

Ինչի՞ն վերագրել, ուրեմն, այդ:

Մեզ թվում է, որ այդ հարցի պարզաբանումն ունի յի քանի կողմ, որոնց վրա և կամենում ենք կանգ առել համառոտակի:

Ճշտենք նախ հարցը:

Պարզ է հետևյալը. Աղամյանի Համլետը, ինչպես տեսնում, մեկնարանության կողմից ընդհանրության

մեջ է այն բացատրության հետ, որ նրանից առաջ շեքը սպիրիտան կերպարին տվել են թելինսկին ու Մոլալովը նշանակում է ի դեմս ոռւս ողբերգակի Աղամյանն ունեցել է նախորդու Սա ճիշտ է, ըստ որում այնքան, որ հազիվ թե գտնվի գրա դեմ առարկող ողջախոհ մի հետազոտող, եթե չի կամննում իրեն ծիծաղելի վիճակի մեջ դնելու դնով ինքնատիպ երևալ:

Եվ եթե Աղամյանը, այնուամենայնիվ, ժամանակակիցներին նոր ու թարմ է թվացել, ոա էլ պետք է իր լուրջ հիմքերն ունենար, և վերագրել մոռացությանը կամ անտեղյակությանը՝ ճիշտ չէր լինի. Որ Մոշալովի և Աղամյանի մեկնակետը նույնն է եղել, ըմբռնումն ընդհանուր՝ շենք կասկածում, ինչպես և շենք կասկածում, որ գրա մարմնավորումը չէր կարող տարբեր ըլինել. Եվ ոա հասկանալի է: Դերասանը ինչքան էլ մի ուրիշի նման մտածի, անկախ, թե նույնիսկ նրա ազդեցության տակ, միևնույն է, կզանազանովի, որովհետեւ արվեստագետն այն ընդունում է, բայց յուրովի, բեկելով իր մտքի, ու հոգու մեջ Մի՞թե դրանից հետո պարզ չէ, որ ինչքան էլ մոտեցումը նույնը լինի, միևնույն է, այն դրոշմը, որ խաղի վրա անխուսափելի կերպով դնում է արտիստի զորեղ անհատականությունը՝ նրան կհաղորդի միանգամայն այլ երանդ, տարբեր շունչ:

Եթե այդ այդպես ըլիներ, ապա Աղամյանի խաղը չէր ունենա այն արժեքը, որ ունեցել է, քանի որ, հակառակ պարագայում, նա հանդես եկած կլիներ որպես ինքնուրույնությունից զուրկ մի արվեստագետ, որպես Մոշալովին կրկնող Սակայն մեզ թվում է, որ Աղամյանը ընդհանրության շատ եղբեր ունենալով Մոշալովի հետ, զաղափարական աղերսի մեջ գտնվելով, տարբեր էր նրանից և մի այլ տեսակետից:

Մենք ընդունում ենք, որ Համլիտի քեմական պատ-

մեջ Աղամյանը պետք է դիտվի որպես մոշա-  
լովյան տրադիցիայի ներկայացուցիչ, թայց ոչ միայն  
այդքան, նա ոչ միայն պահպանում է, — որ, ինքնըստ-  
ինքյան փոքր արժեք չէ, և դրան մննք դեռ կանորադառ-  
նանք, — այլև շարունակում է տրադիցիան։ Աղամյանը  
Մոշալովյաց տարրեր էր իր խամավածքով և բնույթով, և  
ոտեղծագործում էր ավելի ուշ ժամանակներում։ Հետե-  
մասն չէր կարող մնալ այն կետին, որին հասել էր  
նախորդը։ Նա պետք է առաջ մզեր տրադիցիան, հաս-  
ցըներ մի այնպիսի կետի, որին չհասավ Մոշալովը։ Եվ  
ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Դրա համար էլ մենք  
այն համոզման ենք, որ նա մոշալովյան տրադիցիան  
ոչ միայն պահպանում է, այլև շարունակում է, այսինքն՝  
զարգացնում է։

Դնրասանի ժամանակակիցների մոտ մեր այս միտ-  
քը հաստատող հիմքեր կա՞ն, թե ոչ կան։ Մեր պնդու-  
մը հննվում է ոչ այն վերացական մոտեցման վրա, թե  
այդպես պետք է լիներ, միայն այդպես, քանի որ գործ  
ումենք Աղամյանի նման մի մեծության հետ։ այն  
պարզաբեր արդյունք է պահպանված նյութի ուսում-  
նասիրության։

Բելինսկին, որ իսկապես հիացած էր Մոշալովի խա-  
ղով, այն համոզման էր, թե նրա ներկայացրած Համ-  
ետը այնքան շեքսպիրյան չէ, որքան մոշալովյան։

«Մենք տեսանք, — ասում է նա, — մեծ դերասանի  
գեղարվեստորնն ստեղծած Համետը, հետևապես  
կենդանի, իրական, կոնկրետ մի Համետ, բայց ոչ  
այնքան շեքսպիրյան, որքան մոշալովյան, որովհետեւ  
ուրդ գեղքում դերասանը բանաստեղծից անկախ և ինք-  
նակամ կերպով Համետին տվել է ավելի ուժ և եռանդ,  
քան կարող է ունենալ ինքն իր դեմ պայքարի մեջ մտած  
և իր համար անտանելի դժբախտության ծանրության

տաեկ կրած մարդը, և տվել է նրան շատ ավելի քիչ թախիծ ու մելամաղձոտություն, քան պետք է ունենա շեքըսպիրյան Համլետը:

Քննադատը դժգո՞հ չէր, որ գերասանն ընդգծել է Համլետի ուժը և եռանդը, նա դժգո՞հ էր, որ տվել է ավելի, քան կարսղ էր ունենալ Համլետը: Ուրեմն՝ մի կողմի նվազ դրսեորումն ընդգծել է մյուս կողմի շափականցված լինելը:

Դա է պատճառը, որ Աղամյանին նվիրված իր ակնարկում Յարիշկինը հիշում է Բելինսկուն, ասելով, թե նա բարձր է գնաճատել Մոլալովի խաղը, բայց հույս է հայտնել, որ կդա ժամանակ, երբ ուստ հասարակույնությունը իր բեմում կտեսնի այդ իսկական Համլետին: Այդ ժամանակը, նրա ասելով, եկել է, հայտնվել է մի արվեստագետ, որ նոր գույներ է բերել հետը և ստեղծել է Համլետին այնպես, ինչպես գուցն, ամենայն հավանականությամբ, պատկերացնում էր նրան ինքը, անմահ բանաստեղծը<sup>27</sup>:

Այս դերասանը, Յարիշկինի անվերապահ կարծիքով, Պետրոս Աղամյանն է:

Ի՞նչ է հետևում այս ամենից: Եթե անգամ մի պահ ընդունենք, որ շափականցված ոգևորության արդյունք է Յարիշկինի հայտարարությունն այն մասին, թե Աղամյանը Համլետին ներկայացրել է ճիշտ այնպես, ինչպես պատկերացրել է նրան հեղինակը, դարձյալ կարող ենք ասել, որ նա, լինելով մոլալովյան տրադիցիայի շարունակող, մի քայլ առաջ է տրադիցիայի նախահորից:

Աղամյանի Համլետը մոլալովյան տրադիցիայի զարգացման նոր, ավելի բարձր աստիճան է, որովհետեւ, ժամանակակիցների ասելով, հաղթահարված է նրանում նախ Բելինսկու քննադատած միակողմանիությունը, և

ապա՝ կերպարն ընդգրկված է իր առավել բազմազանության մեջ Ո՛չ միայն եռանդ, այլև թախիծ, ո՛չ միայն հույզ, այլև միտք, ո՛չ միայն վճռականություն, այլև տատանում, ո՛չ միայն բողոքի պոռթեկում, այլև հուսահատություն։

Այս բոլորից հետո թվում է, որ հասկանալի պիտի ինի, թե ինչու ժամանակակիցները Աղամյանի Համլետը նորություն են համարել։

Աղամյանը Համլետի դերում, ինչպես արդեն առվեց, հանդես է եկել Մոշալովի խաղից շորս տասնամյակ հետո։ Այդ ոչ այնքան էլ կարճ ժամանակամիջուում սակավ թվով Համլետներ չեն երևացել ոռու բեմում, ինչպես ոռաներ, այնպես էլ եվրոպացիներ։ Այդ նույն ժամանակաշրջանում մի անգամ չէ, որ ոռու գրականությունն անդրադարձել է Համլետի կերպարին, համլետականությանն ընդհանրապես։ Արտահայտվել են առողջ մտքեր, ճիշտ դատողություններ, բեմական փայլատակումներ ևս եղել են, բայց կերպարի ըմբռոնը ման ընդհանուր զարգացումը, դժբախտաբարը, շեղվել, հեռացել է Բելինսկուց և Մոշալովից։ Իսկ այն տարիներին, երբ այդ գերով Աղամյանը բեմ բարձրացավ, ճիշտ շի լինի կարծել, որ թատրոնում և մանավանդ գրականության մեջ մռացվել էր ՅՕ-ական թվականների տրադիցիան։ Նույնիսկ այնպիսի մի առաջավոր դերասան, ինչպիսին Լենսկին էր, դարձյալ Մոշալովի ճանապարհով զգնաց, իսկ գրականության մեջ նկատելի էր Բելինսկու ըմբռոնման դեմ ուղղված արդեն գաղափարական պայքարի շափեր ընդունող աշխատացում։

Գաղափարական ճնշումների մթնոլորտում մոշալովյան տրադիցիայի վերականգնումը նույնիսկ այնպես, ինչպես թողել էր նա, առանց զարգացման, ինքնին ար-

գեն մի խիզախ քայլ պիտի դիտվի: Այստեղ հարցը Մոշալովի մեջ չէ և ու էլ անդամ թելինսկու Հարցը վերաբերում է այն դեմոկրատական պարունակությանը, որ 30—40-ական թվականների առաջավոր, կարելի է ասել ռուսացիոն մտավորականությունը իր երկու հանճարեղ ներկայացուցիչների միջոցով դրել է Համլետի կերպարի մեջ: Եվ այն հանգամանքը, որ մի ուրիշ հանճար 80-ական թվականներին, ծանր ռեակցիայի մռայլ օրերին վերականգնեց, պահպանեց ու զարգացրեց այդ գեմոկրատական տրադիցիան, Աղամյանի պատմական անուրանալի ծառայությունն է:

\* \* \*

Թե ինչու Համլետի դերում Աղամյանը կարող էր տարակուանքներ առաջացնել, ուներ և մի այլ պատճառ, որի վրա և արժե մի փոքր կանգ առնել:

Մինչև Աղամյանի հանդես գալը, Համլետը շատ հանախ ներկայացվել է՝ պահպանելով ողբերգական հերոսական կերպարի պատկերման ավանդական եղանակը: Խոսուցման խնդիր է, Համլետը չի ներկայացվել որպես սովորական մարդ, որին կյանքը դրել է ողբերգական կացության մեջ: Ընդհակառակը, ներկայացվել է իրրեի իգեալ, որպես բացառիկություն, ոչ միայն իր դրությամբ և հոգեվիճակով տարրեր ուրիշներից, այլև իր բոլոր բարեմասնությաններով, թե արտաքին և թե ներքին, մի խոսքով՝ ի վերուստ իշած: Հասարակությունը սովորել է, գորում է մի քննադատ, որ Համլետին անսնել, որպես մի արտասովոր անհատականության, որ աչ ու ձախ նետում է վերամբարձ մտքեր, բոլորին նայում է վերնից, շանթ ու որոտ արձակող իսկական մի ուղուցաղն, արքայական, հանդիսավոր...<sup>25</sup>

Աղամյանը լընդումեց իր նախորդներից եկող պատկերման այդ կերպը: Դա նրա համար խորթ էր և անհասկանալի: Նրա համար դա Շեքսպիր չէր, թերևս Կոռնելյը, Ռասին, բայց ոչ Շեքսպիր: Եվ, ինչպես միշտ, նա որոնեց այն ուղին, որը շպետք է վերացներ, բայց կրնատելու էր ներկայացրած հերոսի և հանդիսատեսի միջև ընկած անջրպետը:

Հրաժարվելով բացառիկ Համլետ ներկայացնելու մտքից, պատկերելով նրան որպես մի սովորական մարդու, բնական է, որ նա պետք է բախման մեջ մտներ արվեստի տիրապետող ավանդածները պաշտպանող մտայնության դեմ, անկախ նրանից, թե դրա կրողը Համլետը ներկայացնելու հավակնությամբ տառապող գերասա "է, թե" տրադիցիաներին կառշած քննադատ կամ այդ ոգով զաստիարակված հանդիսատես: Աղամյանի Համլետը սովորական մի պատանի էր, այո՛, սովորական մի մարդ, որին, իր կամքից անկախ, միմյանց արագործն հաջորդող դրամատիկական սուր դրությունները մղում են դեպի զնպթերի կենտրոն:

Սա խիստ կարևոր հանգամանք է: Սրա կողքով ի միջի ալլոց անցնել չի կարելի, Զի կարելի, որուշեալ միայն Համլետին վերաբերող հարց չէ: Սա էսթետիկական ընդհանուր նշանակություն ունեցող խնդիր է: Մշտպես խաղացել է ոչ միայն Աղամյանը: Այդ ճանապարհով է գնացել ուստի գերասաններից Ա. Մ. Մաքսիմովը:

Մինչև այս դերասանը, ուստական քեմում տիրապետում էին Համլետի այն պատկերացումները, որ ատեղձել էին Կարատիգինը և Մոլալովը: Առաջինը սահղձել էր Համլետի կլասիցիստական կերպարը, երկրորդը՝ սոմանտիկական: Այս երկուսից հետո հանդես եկած բոլոր գերասանները կրկնում էին նրանց, բայց,

ինչպես բոլոր ընդօրինակողները, արդյունքի շէին հասնում: Ահա այդ ժամանակ էլ հայտնվում է Մաքսիմովը, որը կերպարին մոտեցավ ոչ թե իդեալական, այլ մարդկային տեսակետից: Համլետի կերպարի մարմնավորման ռեալիստական հիմքը դրվեց ուստական բնմում: Թնագատության ասելով՝ ողբերգական կերպարի այդ կարգի վերապատճերումը նոր քայլ էր արվեստում: «Մաքսիմովը հասկացել է, որ կարելի է լինել հերոսական դադարելու սովորական մարդ լինելուց»<sup>29</sup>:

Ավելի ուշ շրջանում նույնն է արել նաև կենսկին: Վերշինս աշխատել է Համլետ խաղալիս Դանեմարքացի իշխանի պատկերը գծել իր մարդկային պարզության մեջ: Այսպիսի խիզախումը շէր կարող անպատճիժ մնալ: Եվ գտնվում են քննադատության մեջ մարդիկ, որոնք ըմբռատանում են կենսկու դեմ, կասկած են հայտնում, թե նա պե՞տք է արդյոք Համլետ կամ ընդհանրապես ողբերգական դերեր ստանձնի, թե ո՞չ: Գտնվում են և այնպիսիները, որոնք կտրուկ հայտարարություն են անում, թե ոնք Համլետը մենք չենք ընդունում: Տարբեր ձևերով, բայց Աղամյանի Համլետը բացասարդ քննադատներ նույնպես եղել են: Այդ երևույթի ճիշտ բացատրությունը տվել է Աղամյանի քննադատներից մեկը: Անվերապահ հիացողների կողքին եղել են նաև այնպիսիները, որոնք պարզապես շեն հաշտվել Համլետի այդ նոր տիպի հետ: Թնագատն այդ համարում է միանգամայն բնական երևույթ: «Բոլոր արվեստագետների ճակատագիրն այդպիսի դեպքում միանման է: արվեստի նորությունը հասարակությունը դիմավորում է պարսավանքով կամ անբավականությամբ, մինչև որ լրնտելանա այդ նորությանը և շնանաշի նրա օրինականությունը»<sup>30</sup>:

Կա՞ն տվյալներ այն մասին, որ Աղամյանը իսկա-

ողես Համլետի կերպարի երկնային պատկերացումը փոխարինել է երկրայինով։ Այդ նպատակով թերթենք ռուսական մամուլի էջերը։

Բացում ենք Օդեսայի լրագրերից մեկը, «Նովորուսիյսկի տելեդրաֆը»։ «Ձեր առջև, — գրում է քննադատը Ազամյանի Համլետի մասին, — ամենից առաջ մարդ է առավելապես»<sup>31</sup>։

Օդեսայից անցնենք մի այլ քաղաք։ Բացում ենք «Ելիսավենտոգրադսկի վեստնիկը»։ Ահա Համլետին նըշվիրված մի հոդված, որտեղ հիշատակվում են Համլետի կերպարը լուսաբանող մի շարք տեսակետներ՝ Գյոթեից սկսած։ Քննադատը սեղմ բանաձևման ենթարկելով այդ տեսակետները, ասում է, որ Ազամյանի Համլետը գրանցից ոչ մեկին էլ նման չէ։ «Համլետ-Ազամյանը, — գրում է նա, — ոչ այլ ինչ է, բայց եթե պարզապես իր ծնողներին սաստիկ սիրող և այդ սիրո պատճառով անտահելի դժբախտ մի մարդ»<sup>32</sup>։

Մի վկայություն էլ բերենք։

«Արտիստ Ազամյանի ստեղծած Համլետը, — գրում է մի քննադատ, — ոչ ավել, ոչ պակաս մի սովորական երիտասարդ է, կրթված պատանի, որ իր ծնողներին, հորը և մորը, անշափ սիրում է, ազնիվ-իդեալական, հումանիստ, բնությունից հոգեկան ընդունակություններով առատորեն օժտված, բայց կյանքի հանգամանքների դասավորումով խորապես անբախտ և իր դժբախտության մեջ մնօ մարդ։ Մի փոքր հետո նույն քննադատն ավելացնում է. «Առաջին մուտքից դուք տեսնում եք մի սովորական մարդու և ոչ թե փծում, եսասեր Համլետի»<sup>33</sup>։

Ուրեմն, մի դեպքում բացառիկություն, մյուս գեղարդում՝ մարդկային պարզ նկարագիր։ Առաջինը՝ իդեալ, երկրորդը՝ սովորական մարդ։

Բացի նրանից, որ այդպիսի եզրակացության համար բավականաշափ նյութեր են տալիս ժամանակակիցների թողած վկայությունները, Աղամյանը մի առիթով նույնիսկ արտահայտվել է այդ մասին:

Ոչ միայն թեմում, այլև գրականության մեջ Համլետը հաճախ ներկայացվել է իրեն իդեալական մի կերպար: Այդպիսի տեսակետ է զարգացրել, օրինակ, անդիմական մի քննադատ՝ Հենրի Մասուցլին: Նրա գիրքը անցյալ դարի 70-ական թվականներին լույս է տեսել նաև ոռուակերներ: Աղամյանը վեճի է բռնվել այդ հարցի շուրջը նրա հետ: Աղամյանն ընդունում է, որ Համլետի ապրած հոգևորական տաղնապը նրան մղում է դեղի անսովոր վարմումը, բայց այդ պատճառով նա չի դառնում հղակի անհատականություն կամ, մինչև անդամ, զաղափարական անձ: Նկատենք, որ այն տարիներին իդեալական բառը հայերնենում թարգմանում էին զաղափարական և Աղամյանը Մասուցլինի և նրա նմանների մոտեցումը համարում է ումարդկանց կարճամիտ դատողությանց հետևանք: Այլ կերպ ասած՝ դերասանի ըմբռընումով՝ Համլետը ոչ թե բացառիկություն է, ոչ թե իդեալական, այլ սովորական մարդ է:

Ավելի մեղմ ձևով նա առարկում է նաև Վիկտոր Հյուգոյին, երևի միշտ հիշելով պատաններան տարիների սերը դեպի նա: Հյուգոն ևս այն միտքն է հայտնել, թե Համլետը ովերացյալ և առանձնացյալ մի արարած է<sup>25</sup>:

Հետաքրքրիրն այն է, որ, դերասանի կարծիքով, եթե կերպարը վերացական է, եղակի, զաղափարական կամ առանձնակի, նշանակում է գործ ունենք անընական մի բնավորության հետ: Վրդովված առարկում է դրա դեմ, որ հանճարի տասնհինգ տարիների անդուզ աշխատանքը արդյունքը չեր կարող աշխարհին պարզել մի անընական տիրու: Աղամյանն ասում էր. «Եթե նորա ներկայաց-

բած անձանց բնավորությունները մեզ անհասկանալի թվեն, այդ չէ նշանակում որ դոքա անքնական ենք:

Մեղ համար կարևորն այս վեճի մեջ նախ այն է, որ Աղամյանը իդեալականը և բնականը հակադրում է միմյանց, երկրորդ՝ որ ինքը բնականի, այսինքն՝ մարդկայինի, այսինքն՝ ռեալիստականի կողմնակից է և, վերջապես, երրորդ այն, որ Համլետի կերպարը համարում է բնական՝ ի հակադրություն եղակի անձնավորության կամ բացառիկության դրսեորման:

Հնարավո՞ր է կերպարի հերոսական-ուժանտիկական լուսաբանությամբ դաստիարակել աճող սերնդին, որպեսզի նա իր աշխի առաջ միշտ ունենա մի իդեալի օրինակ, ձգտի նմանվել նրան: Անշուշտու Մարդու հոգեկան աշխարհի էսթետիկական դաստիարակության ձևերից մեկն է դա, որը կարելի է և շրնջունել, բայց ոչ բացառել: Այդպես էր, օրինակ, Աղամյանը, իդեալական պատկերացման կողմնակից շէր, իր ստեղծագործությամբ նա կանգնած էր բեմական կերպարի բնական ու ատշելի դարձնելու դիրքերում: Ոչ թե իդեալականացում, այլ մարդկացին կյանքի պարզ նկարագրության միջոցով իդեալի պատկերում:

Ի՞նչ հետևություն կարելի է անել սրանից: Աղամյանի ստեղծագործական դիրքավորման հիմքում էսթետիկական ի՞նչ մտայնություն էր ընկած:

Համլետի հետ պատահածը հեռավոր անցյալում եղած պատմություն է: Բայց այն կրքերը, որ զնկավարում են մարդկանց, բախումներ առաջացնում, նրանց իրար զնմ հանում, արդիական հնչեղություն ունեին: Ուրեմն, պատմությունն ուսումնասիրել կերպարը ծնող դարաշրջանը ճիշտ հասկանալու համար, բայց ոչ թե կերպարը պատմական դարձնելու, այսօր ապրող հանդիսատեսից դարերով հեռացնելու, ալ, ընդհակառակը,

դերասանի ապրած ժամանակներին մոտեցնելու հրա-  
մայական պահանջի լուսի տակ:

Թե պատմականության և արդիականության ներ-  
դաշնակ զուգակցումը, որ կազմում էր Աղամյանի ար-  
վեստի ելակետներից մեկը, բմբոնման ինչ աստիճանի  
վրա է գտնվել՝ այլ հարց է, բայց դա նրան որպես  
արվեստագետի բարձրացնում է, տալիս գերազասու-  
թյուն, որովհետև այն ժամանակ կարողացել է կանոնել  
մի ուղու վրա, որ անցյալներից զալիս-ձգվում է դեպի  
մեր օրերում լիակատար իրավումք ձեռք բերած էսթե-  
տիկական սկզբունքներից մեկը:

Աղամյանը գիտեր, որ գեղքերը Դանիայում են կա-  
սարվել, բայց Ենթապիրը Գրամատիկոսի ասքից օգտը-  
վել է իրրե նյութ՝ իր ժամանակն արտահայտելու հա-  
մար:

Այդպիս գրելուց հետո որոշեցինք մի անգամ է:  
Թերթել Աղամյանի գիրքը Համլետի մասին, մոռացած  
մինելով, որ այնտեղ ևս պաշտպանվում է նույն հա-  
յացքը: Եվ իսկապես Բացում ենք գրքի էջերից մեկը  
և կարգում: «Ենթապիր յուր «Համլետ» ողբերգության  
մեջ,— գրում է նա,— դրել է ոչ թե միայն վիպասանա-  
կանը իրականության հնտ խառնած բարոյական մի  
կատ, այլ գլխավոր գեղքերը յուր ժամանակակից ան-  
ձանց է պատահարաց, մանավանդ յուր սեփական ան-  
ձին ցավացն և փորձառությանց տիպարովն ու զրոշ-  
մովն է կնքել»<sup>35</sup>: Գիտնալով Ենթապիրի ստեղծագոր-  
ծության հույժ առարկայական բնույթը, Աղամյանը  
հասկանում էր, որ նա չէր կարող դրել մի երկ, որի  
պատմությունը, որքան էլ հեռավոր ժամանակներից  
բարդած, անցած լիներ նրա հոգու միջով, շխարսխովն  
բանաստեղծի սեփական կենսափորձի վրա:

Այդպիս է ընդհանրապես, և եթե Աղամյանը նշում է,

զարմանալու ոչ մի առիթ չկա: Բայց ահա բացում ենք մի ուրիշ էջ և գտնում այնտեղ մի ավելի կարևոր, մեր հայտնած միտքը հաստատող դրություն եվ, որ գլխավորն է, այդ արդեն վերաբերում է ոչ թե երկի ամբողջությանը, ինչպես թիշ առաջ բերվածն էր, այլ նրա գլխավոր հերոսին՝ Համլետին: Նա ասում է, թե Համլետ-մարդը ներկայացնելու համար Ենթապիրը դիմել է ոչ թե Գրամատիկոսի գրի առած առասպելական պատմությանը, «որո միայն՝ իմ կարծյոք, կմախքն է առել, այլ քաղել է յուր ժամանակակից քաղաքական անցքերիցը»<sup>37</sup>: Կարևոր պնդում: Խիստ կարևոր պնդում: Ուրեմն առասպելը ծառայել է միայն որպես կմախք՝ սյուժե կառուցնելու նպատակով, իսկ կերպարը, նրա մարդկային նկարագիրը գծելու համար նկատի է առնվել գրողի ժամանակը, այն քաղաքական դեպքերն ու իրադարձությունները, որ կատարվել են հեղինակի ազրած օրերին:

Մի՛թե այս բավական չէ հաստատնելու, որ Աղամյանի համար Ենթապիրն իր՝ ապրած ժամանակի նկատմամբ անտարբեն հեղինակ չէ: Համլետի պայքարի մեջ նա դրել է իր օրերի քաղաքական կյանքի արձագանքը, իր վերաբերմունքը:

Իր այս ըմբռնումով Աղամյանը որքա՞ն մոտ է կանգնած գրականության և արվեստի հիմնական հարցերի շուրջը մղված պայքարի այն թևին, որը մատերիալիստական էսթետիկայի ըմբռնման դիրքերից հակադրվում էր ռարկեստը արվեստի համար» տեսության կողմնակիցներին: Բնավ էլ հակված շենք կարծելու, թե ունույուցիւն-դեմոկրատական մտածողության հետ կարելի է նույնացնել Աղամյանի էսթետիկական ըմբռնումները, որոնք ազատ շեն եղել իդեալիստական երանգավորումներից: Սակայն կամենում ենք մի օրինակի վրացուց տալ, որ նա իր ստեղծագործության և իր էսթե-

տիկական մտածողության մեջ, ինչպես այդ պատահում  
է առաջավոր արվեստագնուներից շատերի հետ, նույն  
ժաքերին է հանգել, ինչ մատերիալիստական էսթետի-  
կայի ներկայացուցիչները, Վաթումական թվականնե-  
րին այդ մասին արդեն խոսք եղել է, որուսական իրա-  
կանության մեջ Եերսպիրին արդիականությունից կըտ-  
րելու փորձեր են արվել: Մատերիալիստական էսթետի-  
կայի կողմնակիցները, հակառարված տալով այդ փոր-  
ձերին, այն միտքն են զարդացրել, թե նա «չի գրել մի  
ողբերգություն», որը շունենար իրականության հետ ա-  
մենամերձավոր կապը»<sup>55</sup>, Մի՛քն սա, ձևակերպման  
տարրերությամբ, նույնը չէ, ինչ որ ասում էր Ադամյա-  
նը: Ծվանկախ նրանից, թե դերասանն իր այդ դատո-  
ղությունն անելիս նկատի ունե՞ր որևէ մեկին նրանցից,  
որ Յօ-ական թվականներին չանք են թափել Եերսպի-  
րին ներկայացնելու, որպես մաքուր արվեստի բարձրա-  
գույն մարմնացում,— այս զենքով էականն այն է, որ  
նա, իբրև ստեղծագործող, տեսնում էր այն անխուսա-  
փելի կապը, որ կա Եերսպիրի և նրա ապրած դարա-  
շրջանի միջև:

Եթե այդպես է, ինչո՞ւ Ադամյանը չէր կարող թույլ  
տալ մտածելու, որ ինքն էլ կարող է, Եերսպիրի օրի-  
նակով, նրան ներկայացնելիս իր ապրած ժամանակա-  
շրջանը նկատի ունենալու Ո՛չ միայն կարող էր, այլ պար-  
տավոր էր: Սա է եղել դերասանին դեկավարող նշանա-  
բանը: Պատմական հանդերձանքը հեռավոր միջավայրի  
պատրանքը թող տան, խոկ խաղը, պահպանելով այդ  
պատրանքը, նույնիսկ այն աստիճան, որ մարդիկ մտա-  
ծեն, թե ինչքան մոտ է ու հարազատ հին ժամանակնե-  
րին, խաղն իր մեջ կրի այնպիսի բռվանդակություն, որ  
մզի անցյալ ժամանակների մեջ այսօրը տեսնելու, նմա-  
նություն գտնելու, զուգահեռ անցկացնելու:

Կա՞ արդյոք վկայություն այն մասին, որ Աղամյանի Համլետը իսկապես մոտ է եղել արդիականությանը: Մի քննադատ, որ հանդես է եկել «Օդեսսկի լիստովկի» էջերում, ողբերգակի պատկերած Համլետի ամենամեծ արժանիքը համարում է նրա թարմությունը, այն, որ նա իր կերպարը կառուցնվում չի ենում համընդհանուր, բոլորին հայտնի, ակադմիական հնանուկ հայացքներից: Այս ասելուց հետո նա ընդգծում է, որ դա տկլասիկական, սառը, դատողական Համլետ չէ, որը կարող էր զանցում տալ Շեքսպիրի կոմննտատորների պահանջներին», այլ «օրվա շարիքը սրտին մոտ ընդունող», Հետո շարունակում է. և ոքանի որ այդպիսի Համլետը ավելի մատչելի է, հասկանալի մեղ, հարկ կա՞ արդյոք ավելացնելու, որ Աղամյանը հասարակության մեջ էնտուրիազմ է առաջացնում»<sup>29</sup>: Բայց նա սրանով էլ չի բավարարվում: Նշելով Աղամյանի շեղումը տրադիցիաներից, նրա խաղի նորարարական արժեքը, անհրաժեշտ է համարում շնչառել, որ նպա «ներկայացրեց մեղ մեր կյանքին ու բնությանը». հարմարեցված Համլետի ախատ:

Սա հարցի մի կողմն է լոկ:

Երկնային ոլորտներից իշեցնելով, հողի վրա կանգնեցնելով Համլետին, երկրային արարած դարձնելով նրան, ըստ որում սովորական մարդու կերպարով, Աղամյանը նվաճում էր Շեքսպիրի արդիականացման հնարավորությունը նաև մի այլ կետից: Այդ ճանապարհով նա վերացնում էր Համլետին իր հանդիսատեսից անցրապետող տարածությունը: Համլետին և հանդիսատեսին նա մոտեցնում էր միմյանց: Կերպարի հերոսական լուծման տրադիցիան այդ հնարավորությունը չէր տալիս: Ընդհակառակը, դա, կարելի է ասել, նույնիսկ անհասանելիության, անմատչելիության վտանգ էր կրում

իր մեջ՝ Զէ՛ որ հերոսական պատկերացումը ենթադրում է նաև բացառիկությունն կամենալ՝ կարելի է, իսկ կարողանա՞լ լի Մի՛թե կամենալը արդեն կարենալ է, Եվ բացառիկության տարրը ընդգծվելով կերպարի մեջ, չէ՛ր շեշտվում արդյոք այն անմատշելի տարածությունը, որ բաժանում էր սովորական մահկանացու հանդիսատեսին՝ Համլետի իդեալական, ռոմանտիկական, ոյուցազնական կերպարից։ Եվ, այդպիսով, ինչքան էլ նա ձրդում է իդեալին հասնել՝ նա դարձյալ մնում է իդեալ, մի անհաս բարձրություն։ Կերպարի աղամյանական լուծումը այդ տարածությունը նվազագույնի հասցնելու միտում է ունեցել։ Համլետը մարդ է, սովորական մարդ։ Ուրեմն նա այն է, ինչ որ ես, դու, մյուաը, բոլորը, որ այստեղ, դահլիճում նստած՝ նայում են Աղամյանին։ Մենք բոլորս կանք Համլետի մեջ, և Համլետն էլ մեր մեջ Զկա մեզ իրարից բաժանող տարածություն։ Մենք նույնն ենք, տարրեր են լոկ ժամանակները, միջավայրը։ Եթե Աղամյանի Համլետին նայող հանդիսատեսը մի պահ գրվի նույն պայմանների մեջ, ինքն էլ կանի նույնը, ինչ որ նաև Այդպիսով դերասանը իր հանդիսատեսին հուշում էր այդ բոլորից բխող մի պարզ հետևողականություն։ Եթե Համլետը մեծագործություն է անում, ապա ոչ նրա համար, որ հերոս է ի բնի, պայմաններն են նրան այդպիսին դարձրել։ Ուրեմն ոչ թե ծնվել է, այլ դարձել է։ Այսինքն՝ հոգեկան կյանքի այնպիսի վերափոխություն, որ կարող էր տեղի ունենալ ամենքի հետ։ Հերոսականության ըմբռնման այս դեմոկրատական դիրքավորումը մարդուն իր հոգեկան կարելիությունների նկատմամբ ոչ միայն հավատ, այլև մեծ գործ անելու հնարավոր մատշելիություն էր ներշնչում, միայն թե նա իր կամեցածն անելու բուռն մղում ունենա, ամբողջ չությամբ հրդեհված լինի իր ազնիվ մտքերով ու նպա-

տակներով, դարձնելով այդ ամենը կիրք, էություն, ինչ-  
ու Համլետը կյանքում:

Մարդկայնացնելով կերպարը, գերասանը հանդիսա-  
ւածն օդնել է բարձրանալ դեպի Համլետի բարոյական  
բարձրութները: Աղամյանի Համլետը հիմն է ոչ միայն  
Համլետին, այլև նրա միջոցով՝ մարդուն:

Այն, որ Աղամյանը Համլետի և իր՝ գերասանի ժա-  
մանակակիցների միջև առնչություններ էր տեսնում,  
արդիականության գծեր գտնում՝ կասկածից դուրս պետք  
է համարվի ոչ միայն այն պատճառով, որ արտիստի  
քննադատները դրա մասին թողել են հավաստի վկա-  
յություններ: Խնդիրն այն է, որ ինքը՝ գերասանը ոչ  
միայն այդպիս է մտածել և այդ ոգով էլ խաղացել է,  
այլև իր «Համլետ» աշխատառության մեջ նման պնդում է  
արել: Վեճի բռնվելով նրանց հետ, ովքեր Համլետին  
պատկերացնում են որպիս մի ոռմանտիկական և իդեա-  
լական կերպար, Աղամյանն ասում է. «Բնդհակառակին,  
նա մեզ ժամանակակից մտածող մարդու տիպարն է»<sup>40</sup>:  
Եթե քննադատների ասածը, այնուամենայնիվ, տպավո-  
րություն է, խաղից ստացած տպավորություն, և այն-  
քանով փաստ, որ մեկը շի ասել, այլ մի քանիսը, ապա  
սա արդեն գերասանի հայտարարությունն է, որ համ-  
ընկնում է նրա խաղին:

Ցավալի է, որ գերասանն այդ հայտարարությունն  
արել ու անցել է, շի բացել միտքը, շի ծավալվել նրա  
շուրջը: Սակայն կարևորն ասված է, ասված է այն, ինչ,  
համենայն դեպս, կազմում է միտումի բուն հիմքը: Ու-  
րեմն ոչ միայն դերասանի խաղից, այլև իր՝ գերասանի  
խոստովանությունից պարզ են դառնում այն կապերը,  
որ նա նետում է տարբեր ժամանակներ, միմյանց զո-  
գելու, անցյալը ներկային մոտեցնելու համար: Այլև  
կասկած շի մնում, որ գործ ունենք մի արվեստագետի

հետ, որը ակտիվ վերաբերմունք ուներ դեպի պատմությունը և տվյալ նյութը՝ Պատմությունը պատմություննալով՝ նրա աշխին ծառայում էր արդիականությանը:

Սա ելակետ է, կերպարի կատացման սկզբունքային հիմնաքարի ԱՀա այդպիսի պատվանդանի վրա է Ազամյանը կանգնեցնում իր Համլետին։ Բայց, ներեցե՛ք Ստույգ պատկեր լընտրվեց. պատվանդա՞ն և վրան բարձրացված արձա՞ն, — սա, այնուամենայնիվ, ևնթադրում է կեցվածք, հանդիսավորություն, վերամրարձություն, — հանդամանքներ, որ օաար էին ազամյանական Համլետի ընդհանուր նկարագրին։ Եիշտ հակառակն է եղել. պատվանդանի վրա բարձրացված Համլետին նա իշեցրել է ցած, դեպի միջավայրն այն մարդկանց, որ շրջապատել էին այդ արձանը և մի ակնածանք իրենց սրտում, հեռվից-հեռու հայացքները հառնէ վրան։ Եվ երբ Ազամյանի ուղեկցությամբ նա իշավ ցած, կանգնեց իր մով հիացողների շարքում, մարդիկ զարմանքով համոզվեցին, որ նա էլ, թեև արքայազն, իրենց նման մարդ է։

Մի ակամա շեղում։

Ով թերթել է «Համլետի» բնմական տարեգրության այն էջերը, որ նվիրված են սովորական թատրոնի բնմադրություններին, անպայման նկատած կլինի, որ այդ պատմության ուշագրավ դեմքերից մեկի՝ ուզբեկ դիրասան Արքար Խիդոյատովի՝ Համլետի մասին խոսելիս, հետազոտազները գրել են, թե նա ժներկայացման առաջին տեսարաններում շվախեցավ Համլետին հաղորդել առօրյականության գծերը<sup>41</sup>, կամ, ինչպես մի ուրիշ անք կարդում՝ «նա որոշեց ողբերգության սկզբում պատկերել նրան որպես երիտասարդ մարդու, օժտված ազնիվ հատկություններով», բայց ոչ մի բանով աշխի լընկնողը։

Ի՞նչ է այս, նույնը չէ՞՝, ինչ որ շատ տարիներ առաջ գրել են Ազամյանի մասին։ Եվ արդյոք այս ձգտումը

Հարդկալին ողարզ նկարագրով ներկայացնել Համլետին՝  
պահանջ շղարձա՞վ արդյոք կերպարի նոր լուծման պա-  
հերին թե՛ սովետական թատրոններում և թե՛ արտասահ-  
մանյան բեմերում։ Չենք էլ մտածում, թե այդ մտայնու-  
թյան հեղինակները գաղափար են ունեցել, թե իրենք ո՞ւ  
ժառանգորդներն են այդ հարցում։ Նրանք գործել են ան-  
կախ, երբեմ շմտածելով անգամ, թե շուրջ մի հիմնամ-  
յակով իրենք կանխված են եղել ուրիշների և, առաջին  
հերթին, Աղամյանի կողմից։ Սակայն էականը դա չէ,  
այլ այն, որ ինքը կյանքը, կերպարի հետ կապված որո-  
նումների զարգացումը արվեստագններին բերեց և  
հանգեցրեց նոր ըմբռնումների։

\* \* \*

Մի-փոքր առաջ միանդամայն պատահմամբ հիշե-  
ցինք Համլետի իշխանազում լինելու նա թագաժառանդ  
էր։ Կերպարի լուծման դեմոկրատական սկզբունքը, որով  
առաջնորդվում էր Աղամյանը, չէ՞ր հանում արդյոք Դա-  
նեմարքայի իշխանի նկարագիրը իր միջավայրից, չէ՞ր  
զնում նրան առօրյական լինելու հարվածի տակ ։ Երբեք  
չմոռանանք, որ նա արքայորդի էր, և ասված է, թի նա  
արքայազն էր ոտից մինչև զլուխ։ Սա նույնակես կարևո-  
րություն ներկայացնող հարց է, որ պահանջում է ուշա-  
գրություն։ Սա այն ասպարեզը չէ, որտեղ դերասանը  
կարող էր աներկյալուզ կորուստ տալ հոգու այն անդոր-  
րությամբ, թե դա չի ավերի իր ստեղծած պատկերի ամ-  
բողջականությունը։

Ստիպված ենք դարձալ դիմելու ժամանակակիցնե-  
րին։

«Մուկովսկին Վեդոմոստիի» քննադատը հրապարա-  
կել է մի հաղորդում։ Նա թեև նշում է մի-երկու արժա-  
նիք, բայց ընդհանրապես, մի-փոքր էլ նյարդային տո-

նով, արտահայտում է իր ընդհանուր դժգոհությունը Աղամյանի Համլետից, Մեզ հետաքրքրող հարցի շնորչը նրա մոտ ասված է. «Եթապիրյան խոսքերը, թե Համլետը արքայազն է ոտից-գլուխ, ալ, Աղամյանի կատարմամբ հաստատում շդտան, Նրբագեղության և աղնվազարմության բացակայությունը զգացվում էր ամեն քայլափոխում»<sup>42</sup>:

Անշուշտ կարելի է քննադատական այս կշտամբանքը կովան դարձնելով հավաստել, թե Աղամյանը իսկապես սովորական մարդ էր խաղում, այն աստիճան հասարակ, որ չկար նրա մեջ աղնվազարմություն և ոչ էլ նման կարդի այլ հատկանիշներ Առաջին հայացքից այդպես հնարավոր է, իսկ ըստ էության՝ ոչ նախ՝ դա կհակասի այն մտքին, որ Ենքոպիրը պատահականորեն չէ իրու հերոս ընտրել արքայազնին: Եվ, վերջանկես, դա կհակասի բհմական իրողությանը, որից բիսել է այն եղբակացությունը, որ հիմա կամենում ենք ասազարկել ուշադրության:

Սակայն, նախքան այդ, թվում է, թե անհրաժեշտ է վերականգնել իրականությունը այնպես, ինչպես եղել է, համոզվելու համար, որ «Մուկովսկիին Վեղոմուստիբերնադատը միտում հանդես բերելով՝ ճիշտ չէ արձանադրել բեմական դրաստը»:

Վկայություններ շենք բերի, դրանց թիվը շատ է, համարյա այնքան, որքան նրա Համլետի մասին հոգիած է զրվել: Բոլորն էլ անհրաժեշտ են համարել ընդդեմ նրա աղնվազարմությունը՝ իրու արտիստի ստեղծած դերապատկերի անբաժան հատկանիշներից մեկը:

Աղամյանը պատմական հարազատության պահպանական դիրքերի վրա էր կանգնած, սակայն հիշեցնում ենք, ոչ թե պատմությունը պատմության համար՝ պատմության թանգարանային ըմբռնումով: Պատմությունը

ժառայում է այսօրվան։ Բայց պատմությունը մնում է ոգատմանից յուն, և Եթե պատկերացնում ես այն, բարի եղիք հարազատ մնալ նրան, հակառակ դեպքում սպառնում է արդիականացման այն վտանգավոր շափու, որ ընդունեց Ա. Գորյովովի Համլետը վախթանգովյան թատրոնում։

Չի կարելի արքայորդու զդիսաների մեջ լինել, իսկ մյուս առավելներով արքայորդի լինել։ Նախ հանդիսատեսին պետք է համոզիլ, որ նրա տեսածը իշխանազում է, և ապա միայն աստիճանաբար բանալով Համլետի հոգնեան կյանքի ծալքերը, ընդհանրության հանդուցյներ դցել թատերասրահում նստածների հետ, որ Համլետն էլ նույնապիսի մարդ է, ինչպես իրենք։

Ժամանակակիցները նկարագրել են Աղամյան-Համլետի գիրապատկերը. շեշտել են հատկապես աշքերը. դարմանալի են այդ աշքերը, ասում է մեկը՝ խոշոր, խելոք, խիստ և, զրա հետ միասին՝ անսահման բարի, այնպիսի աշքեր, ինչպես ունենում են լավագույն մարդիկ. այսինքն՝ Համլետը <sup>43</sup>։

Այստեղ շենք կարող չհիշել մի առարկություն, որ Չույկոն և Շիրվանզադեն ներկայացրել են արտիստին։

«Պ. Աղամյանը իսկական Համլետ չէ։ Այս ասում է Չույկոն։ Ինչպես է հիմնավորում իր առարկությունը։ «Աղամյանը շափուց դուրս գեղեցիկ է, — շարունակում է իր միտքը նա, — հարավցու գեղեցկությամբ. նրա աշքերը շափից ավելի վառլում են, շարժումները շափազանց ստհում են և ներդաշնակ։ Մինչդեռ Համլետը մի-փաքը պետք է դեր լինի, պետք է հնոցով խոսի. (այդ մասին կա անքստի ցուցումը), իսկ պ. Աղամյանը խոսում է սահուն և ավելի նիհար է, քան գեր» <sup>44</sup>.

Երկու տարի անց, այդ նույն դիտողությունը արել է և Շիրվանզադեն։ Նա ասում է, որ Համլետի բոլոր ու-

սումնասիրողները «հաստատում են, թե նա մարմնով գեր է»: Հետո հենվում է արքայամոր մի խոսքի վրա, և ապա ասում. «Հզիտներ ինչու ալ. Աղամյանը հակառակ է սորան և գտնում, որ Համլետը շատ նրբակազմ է»: Այնուհետև Եիրվանզադեն ասում է, որ Եթե Հերոսի մոր խոսքն էլ Ամիներ այդ գիրության մասին, ուազուամենայինիվ Եեքսպիրի այդ տիպը փոքրիշատե ուառմնասիրովի համար նա սկատերանում է ավելի դեր, քան թե նիշար»<sup>45</sup>.

Դերասանի արտաքինը աղետը է համապատասխանի նրա մարմնավորած կերպարին: Դա ոչայնանական հասկացողություն է, և հաճախ է պատահել, որ հաղթահարվել է, այսինքն՝ մեծատաղանդ գերասանն իր խաղով կարողացել է այնպես կլանել հանդիսատեսին, որ նա յոռացության է ավել արտաքին անհամապատասխանությունը: Հարցի այդ կողմը մեզ մի զքաղեցնում: Զբաղեցնողը արտաքինի պայմանական ըմբռնումն է, նրա բնմական հասկացողությունը:

Մի առիթով, երբ խոսքը վերաբերում էր Աղամյանի օթելլոյին, մենք արդեն անդրադանք այդ հարցին: Եվ թվում է, թե Եշմարտացի լուծում գտնվեց. նայած թե ինչ է դերասանը խաղում, եթե զորավար, որի ուժը և բաջությունը պետք է ընդգծվեն, ինչ խոսք, որ դերակատարը պետք է ֆիզիկապես խոշոր լինի: Եթե խաղում ես հոգեկան բարձր հատեկությունների տեր մարդու կարող է և խոշոր սինելի: Նայած թե կերպարի որ կողմն ես շեշտադրում: Անկախ Օթելլոյից, ո՞ւմ համար պարզ չէ, որ բնմական հասկացողությամբ քաջությունն ընդհանրապես կատված է ներկայանալի արտաքինի հետ: Չի կարելի մնելին, որ վտիտ է, դուրս բերել բնմ և առաջարկել հանդիսատեսին հավատալ, թե նրա մի զարկից անթիվ մարդիկ են ընկնում:

**Շեքսպիրը** Շեքսպիր է և, այնուամենայնիվ, կարծում ենք, որ անհասկանալի է, թե ինչու, ըստ պիեսի, Համլետը գեր է: Ո՞չ բռվանդակությունը, ո՞չ կերպարի ընդհանուր բնուվթագիրը անհրաժեշտ հիմքեր չեն տալիս զրա համար:

Համլետը մտքի մարդ է: Ինչուես էլ ուղում ես խաղա, կերպարի որ կողմն ուղում ես շեշտիր, եթե քո Համլետը մտածող չէ, հակիւծ չէ զեպի խոհը, արդեն նա եթե շասննը Համլետ չէ, ապա ոկետք է գոնե ընդունենք, որ նրանից բավական անցանկալի տարածության վրա է պահպամ: Անկախ նրանից, թե բնությունից Ադամյանն ինչ արտաքին ուներ, և ինքը Համլետ խաղալու էր, թե ոչ, նա ոկետք է այն համոզման լիներ, որ Համլետը չի կարող գեր լինել: Մեզ հայտնի է Օթելոյի առիթով նրա տվյած հիմնավորումը: ԶԵ՞ որ այն դեպքումն էլ նրա զվարացոր կովանը կերպարի հոգեկան բարձր, մտավոր մակարդակն էր: Խոկ եթե այդ այդպես է Օթելոյի դեմք-քրում, ապա մի՞թե ոկերդ չէ, որ Ադամյանը, և միանգա-մայն իրավացի, բացասելու էր Համլետի գիրության վեր-ջին խոկ համարավորությունը, այն էլ այնպիսի շափների հասած, որ տակավին պատանի, եռանդի աշխույժ վատ-նըման պայմաններում հնոց ունենաւ:

Հազարոս Աղայանը Շիրվանզագեի քննադատությանը հակադրվելու նկատումով լի՞ գրել արդյոք «Հուկ-մումքների այն ահեղ ալիքները, որոնց մեջ ծփում է Համլետը, և այն բնավորությունը, որ նա ունի, կարող էին մի օրումն ևս մաշել նրան, եթե դեր էլ եղած լիներ մի ժամանակ»<sup>46</sup>:

Համլետի միտքը իր հետ բերում է տառապանք, հոգեկան ծանր վիճակներ, ներքին այնպիսի լարվածություն, որը մարդուն հյուծում է: Եթե այդ նիշտ է, ուրեմն Համլետի զերապատկերը չի կարող կառուցվել գիրու-

թյան սկզբունքով, Թննաղատությունը, հակառակ ջուրկոյի և Եփրվանդադեի, համարյա թե անվերապահ, բնդունել է, որ Աղամյանի արտաքին տվյալները բախտավոր կերպով համընկնում են Համլետի վերոհիշյալ ընդհանուր պատկերացման հետ:

Նուրբ, փափուկ, մտածկութ—ահա այսպես է Աղամյանը պատկերացրել Համլետին<sup>47</sup>: Վերջապես կա Աղամյանի նկարած Համլետը: Իր դերապատկերի ստեղծման մեջ նա հարաբերական ազատություն ուներ, ինչպես յուրաքանչյուր դերասան, որը, վերջին հաշվով, կախման մեջ է բնության շնորհած տվյալներից: Իսկ նկարը իր պատկերացումն է, այնպես, ինչպես կերպարը ներկայանում է իր մտքին ու երևակալությանը: Երջանակի մեջ է առնված պատանեկան մի գլուխ: Թուխ զհմրէ, մարդկային պարզ արտահայտությամբ: Զնայած կենարունացած մտքին, ավելի եռանդուն է երևում, հոգեկան կորովի դրսնորումով, քան հանդարտ ու նուրբ<sup>48</sup>:

Աղամյանի «Համլետը» լույս է անսել 1887-ին: Դրանից առաջ նրան արդեն դիտողություն էր արվել արտաքինի վերաբերյալ: Օգտագործելով այն առիթը, որ շերսապիրագիտական գրականության մեջ վեճեր կան Համլետի տարիքի և զիրության մասին, նա իր կարծիքն է հայտնում այդ հարցերի շուրջ և դրանով, ըստ էության, պատասխանում իր քննադատներին, առանց անունները տալու:

Աղամյանն ասում է, թե «Համլետը» որ մտածում և տանջվում է, պետք է բնական բերմամբ նիշար լինիա: Իվ իրեւ իր մտքի աղացուց, հիշատակում է Հուլիոս Կեսարի խոսքերը Կասիոսի մասին՝ թե ռաստիկ նիշար երևույթ ունի, երևի շատ է մտածում»<sup>49</sup>:

Իսկ մի անգամ էլ զարմացած հարց է տալիս. «Մի՞թէ Համլետի նման հոգեպես տանջվող մի անձն կարող է:



Համլետ  
Ա. Շեքսպիր. «Համլետ»



գեր լինելու, նվազա սահմանում է արտաքինի բեմական հասկացողությունը. ոմտատանշությամբ չարչարդող մարդկանց գեր և պարարտ լինելը բացառություն է. և բացառությունն ընդունելի չէ գեղարվեստի մեջ Յօ, Այս շատ կարևոր ցուցում է, որի նշանակությունը դուրս է գալիս հարցի սահմաններից:

Մոսկովյան մի քննադատ, որ բարձր կարծիքի չէր Աղամյանի Օթելլոյի մասին և, ընդհակառակը, ոգևորված էր նրա Համլետով, գրում է. «Համլետի դերը, ըստ իս, շատ այլին է մոտենում պատվավոր դերասանի հընարավորություններին, քան Օթելոն։ Դալուկ, խոհուն, հմայթով և թախիծով դեմքը, արտահայտիլ խոշոր աշքերը, թավշյա, սրտալի ձայնը, անգամ կազմվածքը այստեղ ավելի տեղին են, քան այնտեղը»<sup>51</sup>: Վրացական մի քննադատ Վալիկո Ի-ան, որ բժախնդրորեն է վերաբերվել Աղամյանի Ուրիելին և Օթելլոյին, և, հակառակը, շատ է հավանել Համլետը, ասում է, որ նրա շահմազանց արտահայտիլ դեմքը, քաղցր և հաճելի ձայնը—զարմանալի հարմար են գալիս Համլետի դերին<sup>52</sup>: Խսկ մի այլ քննադատ այն կարծիքն է հայտնել, որ Աղամյանի արտաքին տվյալներն այնքան են համապատասխանում Համլետին, որ նա առանց կեղծամի և գրիմի էլ Համլետ է<sup>53</sup>:

Աղամյանի Համլետի ներգործությունը մարդկանց վրա այնպիսի զորեղ շափեր ընդունեց, որ ժամանակի ընթացքում մարդիկ Համլետին պատկերացնում էին ճիշտ այդպես և միայն այդպես, ինչպիսին էր Աղամյանի ոտեղծած դերի ընդհանուր պատկերը: Նշանակում է, նա կարողացել է տիրել հանդիսատեսի մտքերին, իրեն ենթարկել նրա պատկերացումը՝ այն աստիճան, որ երևակայությունն անգամ սպառվել ու կանգ է առնել այդ կետի վրա:

Եվ դրա ազգեցության ներքո չէ՝ արդյոք, որ շատ տարիներ անց Եփրվանզաղեն հրաժարվել է իր այդ մըտքից և գրել ճիշտ հակառակը, ասել, թե մեծ ողբերգակը և վտիտ մարմին ուներ. այս էր պատճառը, որ Եփրսպիրի կերպարներից, ըստ իս, միայն Համլետն էր համապատասխանում նրա կազմվածքին ։

Այս բոլորից, թվում է, թե կարող ենք հետեցնել, որ Աղամյանը խոկապես Համլետ էր ոտից-գլուխ։ Սակայն դա վերաբերում է դերապատկերին, իհարկե, պայմանավորված կերպարի ներքին պարունակությամբ։

Ե՛վ Աղամյանից առաջ, և՛ նրանից հետո, Համլետին սրակես մատածող ներկայացնող դերասանները երրեմն խուսափել են նրան երիտասարդական նկարագիր հաղորդել, հենվել են ֆրանսիական այն ասացվածքի վրա, թե այն, ինչ պատանեկությունը չգիտե՞ գիտե ծերությունը Եվ դրա համար նրանք խաղում էին ոչ թե պատանի, ինչպես Աղամյանն էր, այլ միջին տարիքի փիլիսոփիա, ըստ սրում՝ մորուսով։ Այդպես է խաղացել Մունե-Սյուլին Նույնն է արել և Սամոյլովը։ Նաև ուրիշները։ Մորուսակիր Համլետ էր Ցուժինը ևս։ Արտաքին այդ կերպարանավորումը ոչ Ռուսաստանում, ոչ էլ Եվրոպայում արմատ շգթեց։ Բնորոշ է, այդ տեսակետից, այն զրույցը, որ տեղի է ունեցել երիտասարդ Ռուսսիի և Գուստավ Մոդենայի միջև։ Երբ աշակերտը ուսուցչին հարց է տալիս, թե ինչո՞ւ նա Համլետ չի խաղում, մեծ արվեստագետը պատասխանում է.

— Դու կատակո՞մ ես, որդյակատ Նայիր ինձ! Նմա՞ն եմ Համլետին։ Կարելի է ասել, որ շատ երկար եմ սովորել վիտեմբերգյան համալսարանում, և որտեղից կգտնվի մի Օֆելիա, որ իմ սիրուց խելքահան լինի ։

Մողենան իրավացի էր։ Եվ այդ օրը Համլետի դերը նա հանձնեց իր աշակերտին՝ Ռուսսիին։ Իրավացի էր ոչ

լոկ այն պատճառով, որ տարիք էր առել, այլև այն՝ որ Համլետը, նրա կարծիքով, իսկապես պետք է երիտասարդ լիները նվազ այդ տրադիցիան, Համլետին երիտասարդ ներկայացնելու տրադիցիան, որի լավագույն ներկայացնեցիներից մեկը Աղամյանն էր, հաստատվեց և մինչև հիմա էլ մնում է ուժի մեջ:

\* \* \*

Համլետը արքայորդի է: Սա անառարկելի է, բայց եթե Համլետը մնա լոկ արքայորդի, դա կերպարի իմաստը կփոքրացնի, նրա հետ կապված դեպքերը կվերածի վրեժինդրության սովորական պատմության: Իսկ եթե Համլետը մարդ է, որին անձնական կենսափորձը մղել է իր նմանների, իր նման մարդկանց մասին մտածելու, մարդկության ճակատագրով մտահոգվելու, սա արդեն բոլորովին այլ բովանդակություն է տալիս դերասանի խաղին և, նայած նրա տաղանդի աստիճանին, մղում դեպի ընդհանրացումների լայն հորիզոններ:

Ահա այս ճանապարհի վրա էր կանգնած Աղամյանը: Ժամանակակիցներն այդպիս մտածելու համար մեզ տալիս են բավարար հիմք:

«Ծնննակի վեստնիկից քննադատը, որ հրատարակել է իր հողվածը Ֆ. ստորագրությամբ, գրում է. «Ճանդիսականը տեսնում է ոչ միայն Համլետ-մարդուն, որի վրա ընկած է իր սպանության վրեժը լուծենելու ժանր վիճակը, այլև Համլետ-իշխանին, այնպես որ սկիեսի վերնագիրը՝ «Դանիայի թագաժառանգ Համլետ» ասես ստանում է առանձնահատուկ նշանակություն: Արքայազն է ոտից-գլուխ, բայց արքայազն, որը տոգորված է մարդկության նկատմամբ ունեցած խորին սիրով և տառապում է տեսնելով նրա անկատարելությունը» 68:

Թվում է, թե ամեն ինչ պարզ ասված է. նախ՝ մարդ

է, բացի այդ, իսկական արքայազն, և վերջապես՝ մարդկության ցավերով ապրող ու տառապող էակ:

Այժմ տեսնենք, թե ինչպիսին էր նա այդ տեսակետից: Սա է կարևորը, հակառակ ոլարագայում արտաքին համապատասխանությունը, նույնիսկ գերազանց շափերի հասնող, էական նշանակություն շռմի:

\* \* \*

Աղամյան-Համլետը հայտնվում է բեմի վրա: Նա մուալլ է, — պատմում է մի հոդվածագիր, — խորտակված անառելի վշտից, որը նրան ուր որ է՝ կճնշի, կկլանի իսպառ <sup>57</sup>: Նույնն է ասում և մնկ ուրիշը. «Միրելի հոր կորսույան վիշտը ամբողջապես կլանել է նրան» <sup>58</sup>: Բայց ահա նրա միտքը անդրադառնում է մորը: Եղել են դերասաններ, հիմա էլ կան այդպիսինները, որոնք, վրդովված այդքան շուտափույթ ամուսնացած մոր դեմ, որուում են ինչպես կայծակ՝ մոր և ընդհանրապես կանանց հոգեկան խեղճության դեմ: Մի քննադատ Աղամյանին հակադրում է այդ դերասաններին. «Մոր շուտափույթ ամուսնության վերաբերյալ դատողությունը լի արտահայտում ո՛չ շարություն, ո՛չ էլ արհամարհանք կնոջ նըկատմամբ, այլ միայն խաղաղ զարմանք»: Համլետը դեռ լի հասկանում այն ամենը, ինչ կատարվել է և կատարվում է իր շուրջը: Նրա մտքի կենտրոնում հոր մահն է, այդ թվում և մոր հարցը, որը դրան ենթակա խնդիր է: Այն հարվածները, որ մեկը-մյուսին հաշորդելով Համլետին հանեցին իր կյանքի բնական հունից՝ դարձրին յի մարդ, որն այլևս նպատակ ու ձգտումներ շռմեր:

Դալիս է Հորացիոն:

Աղամյան-Համլետը ժպիտով է ընդունում իր մտերքին: Այդ ժպիտը հիվանդագին արտահայտություն ունի: Թնականաբար խոսք է բացվում հոր մասին.

«Մարդ էր կատարյալ, այս բառի բուն նշանակությամբ,— ասում է Համլետը, և հետո ավելացնում.

«Նորա նմանը ես չեմ տեսել»<sup>69</sup>:

Սրտագրավ ու ջերմ, հոգու խորքից եկող խոսքեր: Եվ այս պետք է դերասանին, և ոչ միայն նրա համար, որ արտահայտի սգացող որդու սերը: Սա միայն զգացմունք չէ: Հուզմունք է դա, միաժամանակ միտք, ընդհանրացում: Այդ ընդգծումով Աղամյանը բանալի է տալիս՝ հասկանալու Համլետին, այն Համլետին, որ ներկայացնում է ինքը:

Հորացիոն պատմում է ուրվականի մասին:

Համլետը, ինչպես տանջված մարդ, այրող պահան, է զգում տեսնել հոր ուրվականը: Քննադատների ասելով՝ այստեղ Աղամյանի Համլետի միտքը մի անգամ էլ, ասես, խառնվում է, հոգին տակնուալրա լինում և դրան անմիջապես հաջորդում է մտքի լարված աշխատանքի այնպիսի պահ, որի ընթացքում նա կարծես գտնում է որոնածի հետքը: Դեռ չգիտե, թե այդ հետքը իրեն ուրկտանի, բայց ինչ-որ հույս լուսավորում է, հանում նըրան անհույս վիճակից: «Նրա հոգին,— գրում է մի քըն-նադատ,— աղոտ կերպով նախազգում է ինչ-որ մուայի բան, վերջին դեպքերի հանելուկը լուծելու բանալին»<sup>60</sup>.

Ի միջի այլոց նկատենք, որ ուսւական քննադատները այստեղ են Աղամյանին հակադրել են Համլետի մյուս դերակատարներին: Ո՞ւմ նկատի ունեն՝ չգիտենք, որովհետեւ անուններ չեն տրված: Բայց ասվածը խիստ էական է՝ Աղամյանի արվեստը գնահատելու համար: Շատ դերասաններ Համլետի հանդիպմանը և ապա՝ խոսակցությանը ուրվականի հետ հաղորդել են խորհրդավորություն, հասցնելով այն երևակայականի անհնար շափերի: Ըստ երևույթին, այն դրդմամբ, թե այդպիսի բան կյանքում չէր կարող լինել, բայց բանի որ Շեքսպիրը

զրել է, իրենք էլ պետք է խաղան, ապա որքան արտահայտեն այն ռեալականության կատարյալ բացակայությամբ, այնքան ավելի լավ Աղամյանի մոտ, քննադատի ասելով, այդ խորհրդավորությունն ու ֆանտաստիկ գույներն իսպառ բացակայել են, արտիստը զրան հաղորդել է լիակատար ռեալիստական բնույթը<sup>61</sup>, Նույնն է ասել նաև Շիրվանզադեն, ոնամանավանդ բնական էր ու սրանչելի պ. Աղամյանը ուրվականի հետ խոսելու ժամանակականը<sup>62</sup>:

Աղամյան—Համլետը գնում է ուրվականի ետևից, նա շտապում է: Չի կարելի ասել, թե նա կասկած չի ունեցնէ, վախի զգացում չի ապրել Դա արտահայտել է դերասանը Ռմանք նրան կշտամբել են, գտել, որ ոիր թե պիտի փոքր-ինչ խաղաղ կերպով գնար ուրվականի հետևից: Դրանց առարկում է Շիրվանզադեն. ոնա հոգնեան վերին աստիճանի խուվության մեջ է և ուղեղն ու սիրաը բոպեապես մղվում են դեպի այն կետը, ուր նա ընթանում էք<sup>63</sup>:

Ֆիզիկական ուժեղ լարմանը միշտ էլ հաշորդուած է ուժեղի անկում: Նա կովի մեջ է ինքն իր հետ, մի կողմից Երկնշում է, մյուս կողմից՝ մղվում դեպի ուրվականը նրբ Աղամյան—Համլետը ուրվականի հնտ մնում է մենակ, նյարդերն այլևս չեն դիմանում: Ոտքերը ծալվում են, և նա ծունկի է դալիս: Լեզուն կարկամել է: Չի կարողանում բառ արտասանել: Հայրն է իր առջև, նրա ձայնն է լսում:

Մի համեմատություն: Ֆրիդրիխ Շրեդերը, որ դերմանական թատրոնի «Փոթորկի» և գրոհի ժամանակաշրջանի աշխի ընկնող դեմքերից էր, ուրվականին լսելիս՝ ամբողջապես համակվել է վրեժի զգացումով և դա է դարձել տիրակալ զգացումը՝ նրա մյուս ապրումների նկատմամբ: Աղամյանն այլ կերպ էր խաղում: Նախ, ի տար-

բերություն Երեդերի, որը արդեն կասկածներ ուներ, սա  
ապշահար է մնում՝ լսելով արյունալի պատմությունը,  
նրան համակում է մտքի տանջող աշխատանքը, ոչ այն-  
քան փաստը, որքան նրանից բխող եզրակացությունը.  
ուրեմն ճիշտ է, որ մարդկային շարադրօքությունը կա-  
րող է այդպիսի քսամնելի լափեր ընդունել <sup>64</sup>,

Վերջապես հասու եղավ ճշմարտությանը. «Պետք է  
տեսնել նրա ծումոված բնրանը,— նկատում է մի քննա-  
դատ,— «ի՞նչ, սովանություն», և գուք կհասկանաք, թե  
ինչ է կատարվում այդ մեծ տառապողի հոգում: Մի  
պահ, և թվում է, թե նա ուշադնաց կլինի, կաթված կըս-  
տանա»: «Դուք վախենում եք նրա համար,— շարունա-  
կում է քննադատը,— ո՛չ, Համեստն այդպիսի տան-  
չանքների դիմանալ չի կարող, նրա զգայուն, սիրող սրտի  
համար այդպիսի հարվածն ուժերից վեր է»: Ամեն մի  
շարժումը, դեմքի մկանունքների ամեն մի խաղ, նրա  
ձայնի ամեն մի հնչյուն հանդիսականի առջև գծում է  
Համեստի հոգեկան սարսափելի դրությունը: Ցրված է  
դրսի նկատմամբ, բայց կենտրոնացած իր ներքին աշ-  
խարհում <sup>65</sup>,

Կերպարի աճի հիմքը դրված է:

Սա այլևս այն Համեստը չէ: Նա թախծոտ էր մինչև  
հիմա: Այժմ, երբ ոճրի հետքի վրա է, նրա վիշտն ավելի  
է մեծացնելի Թող այդպես լինի, բայց սա արդեն ուրիշ  
վիշտ է: Նրա առաջ ծառացած է նուատակ: «Այս ըս-  
պեիս,— գրում է մի քննադատ,— նա ահարկու վրիժա-  
ռու է» <sup>66</sup>: Նա ունի նպատակ, որ կողմնորոշում է նրան,  
մղում առաջ: Դեռ շատ կասկածներ և վարանումներ  
կկանգնեցնեն նրան, բայց կա նպատակ, որին հասնե-  
լու համար նա պատրաստ է կյանքը զոհել:

«Մարդ մի ախորժավից զմայլությամբ այդ տեսա-  
անում,— գրում է Երեվանզադեն,— հետևում է Ազամ-

լանին լոին դերակատարությանը, որը գրեթե անցնում է դեմքի արտահայտությամբ, և ակամա ափսոսում է, որ տեսարանը շուտով պիտի վերջանա, և վարագույրը պիտի քողարկե հասարակության առաջ ալ. Աղամյանին, որ այդ տեսարանում կարծես թե իրականացած գեղարվեստ է դառնում»<sup>67</sup>: Իսկ մի ոռու քննադատ, Եիրվանզադեից երկու տարի անց, 1888-ին, նույն այդ տեսարանի մասին գրել է. «Այսակա Համլետի ամեն մի շարժումը արվեստի գոհար է»<sup>68</sup>:

Հորացիոն ու ընկերները նրան գտնում են քարին նստած, ուրվականի ասածները գրի առնելիս: Տպավորությունները շատ են, իրարից տարրեր և մեկը-մյուսից ժանր ու խորհրդավոր: Միտքը լարված գործում է, Ութեև ընկերների ներկայությամբ ուժ է գործ դնում վրան՝ շրացվելու համար, բայց և այդ պահին, և հետո, զինաերդման տեսարանում, և ընկերների հարցերին կցկը-տուր, անկատ պատասխանելիս, երեսում է, որ նրա միտքը շարունակում է ուրվականի ասածների հետ լինել<sup>69</sup>: Մտացվում է մի կողմից կենտրոնացում, մյուս կողմից՝ ապակենտրոնացում: Հոր ասածը կենտրոնացրել է նրա միտքը, շեղել ամբողջ ուշադրությունը արտաքին աշխարհից, որի նկատմամբ ցրված է, ապակենտրոնացած:

\* \* \*

Կասկածն ընկել է Համլետի սիրտը, գուցե իսկապես հորեղբայրն է սպանել: Դա կասկած է լոկ, տանչող, մաշող կասկած, որը հետապնդում է նրան ամեն թայլափոխում: Ահա Աղամյան-Համլետը նստած է գիրքը ձեռին, մտասույզ գեմքով, կարգում է, որ ցրվի, հեռացնի իրենից տխուր մտքերը: Կարդում է, բայց գիրքը շիզագեցնում նրան, չի կտրում այս աշխարհից: Կասկա-

որ, որ բուն է զրել նրա մեջ, գրքի տողերի արանքից դալիս-կանգնում է նրա առջև, պահանջում է նրա ուշադրությունը, նրա ամրող էությունը ենթարկում իրեն։

Պոլոնիուազ, որ նոր միայն ներս է մտել՝ հարցնում է։  
— Այդ ի՞նչ եք կարդում, իշխան։

— Բառեր, բառեր, բառեր, բառեր։

Ժամանակակիցները պատմում են, թե ինչպես էր ժերասանը իմաստավլորում նույն բառը, ամեն անգամ մի այլ, տարրեր տրամադրություն արտահայտող երանգավորում գտնելով նրա համար։

«Առաջին անգամ Համլետը, — զրում է Ցարիչկինը, — բառերը արտասանում է հանգիստ, կարծես՝ իր անդրբը շխռովնելու խնդրանքով, ապա՝ մի-փոքր պառակատալով՝ հարցական հայացքով նայում է Պոլոնիուաին, և երկրորդ անգամ ասած բառերը լսվում է արդեն ինչոր զրգովածություն, որը երրորդ և չորրորդ կրկնությամբ այլևս զայրույթի է վերածվում»<sup>70</sup>։

Ու հետո, երբ ասում է։

— Այն ամենից, ինչ որ դուք կարող եք վերցնել ինձ-սից, ոչինչ չեմ զիշի ձեզ առավել հաճույքով, քան իմ կյանքը, իմ կյանքը...<sup>71</sup>

Այսանդ վերադառնում է առաջին ինտոնացիային, ասել է թե՝ կրկին խնդրում է իրեն հանգիստ թողնել։

Հայերեն թարգմանության մեջ բառերը երեք անգամ են կրկնված։ Նույնն է նաև ոռւսական թարգմանության մեջ, նվազագույնը է նաև բնագրում։ Արտիստը երեքը չորս է դարձրել՝ ինտոնացիոն հարստություն հաղորդելու նպատակով։ Պոլոնիուաի հարցին այլ Համլետներ պատասխանել են արագ, նույներանգ, վերաբերմունք արտահայտելով ավելի դեպի գիրքը, քան հարցելողը, այն իմաստով, թե կարդացածը մի բան չէ, «Շ

միտք կա, ո՞ւ էլ զգացմունք, պարզապես բառակույտ է, մի մեկնություն, որ ոճ է դարձել և դարձել արդեն թևավոր խոսք:

Գալիս են գերասանները:

Համլետը տխուր նստած լսում է Առաջին գերասանի մենախոսությունը: Սկզբում լսում է, հետեւում արտասանությանը, ասկա նրա ասածի տպավորության տակ հիշում է հորը և կրկին անձնատուր լինում մտատանգությունների: Բայց հանկարծ շրթումքներին ժայռ է երևում, զեմքը մի պահ լարվում է. նա միտք հղացավ, մի ամբողջ ծրադիր. թափառաշրջիկ գերասանների միջոցով ստուգել կասկածը:

Մի քննադատ Աղամյանին կշտամբել է, որ նա այդ տեսարանում շշտասղում էր այնպես, որ յուր խոսակցին ժամանակ չէր տալիս ավարտելու յուր խոսքը և իսկույն պատասխանում էր կամ հերքում... Եթե այդքան շշտապեր, ավելի լավ կլիներ»<sup>72</sup>: Մի՛թե իսկապես լավ կլիներ, Շատապելը արդյոք միշտ չի եղել Աղամյանի համար՝ ցույց տալու, որ Համլետի միտքը այնքան արադ է գործել, որ նրան արդեն այլ խնդիր էր զբաղեցնում, թան դիմացինի ասածը: Մինչ զրուցակիցը պատասխան կտար՝ նրան նոր միտք էր զբաղեցնում: Աղամյանի Համլետը հանգիստ շի խորհում, մտածում է կրօպտ, տենդագին, մանավանդ, երբ տանջալի առեղծվածը լուժելու նլթ է գտնվում: Իսկ գերասանների հետ ունեցած տեսաբանը այդ լուծման նախապատրաստումն է: Ինչո՞ւ հենց ալդ տեսարանում է ալթի ընկել Աղամյանի շտապ խոսքը: Բոլորովին էլ պատահական չէ: Դա վճռի խմորման, նրա կայացման պահն է, երբ նրա միտքը դառնում է լարված, անհամբեր, ունեռում: Վերջապես հաշվի շի առնըգել Աղամյան—Համլետի ընդհանուր նկարագիրը, նրա բուռն անմիջականությունը, երկար ժամանակ քողարկ-

ված մնալու հուսահատ անկարողությունը, երբ իրեն պաշարած մտքերն այնպես են համակում նրա ներքին աշխարհը, որ ելք են պահանջում դուքս հորդալու համար: Եվ ահա Համլետը, մենակ մնալու անհամբեր ցանկությամբ, կարճում է նրա խոսքը. դրանով իր հոգեվիճակին համապատասխան ոիթմ է հազորդում տեսարանին:

Վերջապես մենակ է, միայն ինքն իր հետ:

«Ենրջապես ես մենակ եմ: Ո՞հ, ինչ շարագործ և առելի ստրուկ եմ եսու:

Հանդիսատեսի առաջ Համլետն ամենատարածախտ մարդն է աշխարհիս երեսին, որ պայքարի մեջ է ինքն իր հետ, մի մարդ, որ սաստիկ սիրում է հորը և կասկածում, որ նա սպանված է հորեղբոր ձեռքով, մարդ, որ ծիծաղում է իր վրա, ծաղրում, ծանակում, դատավինում է իրեն՝ կատարված ոճիրը հաստատել շկարողանալու և վրեժինդիր վիճելու համար և, միաժամանակ, մարդ, որ կասկածի տակ է դնում նման ոճի հնարավորությունը:

Քննադատն ասում է, որ այս մենախոսությունը բոցկըլտաց դերասանի կատարմամբ: Հանդիսատեսի առջև ազնիվ մարդն է, անկեղծ մինչև վերջ, մտածող, խորհրդածություններ անող: Նա տանջվում է, հասնում հուսահատ տիրության: Հիստերիկ, ճնշող, մարդու սիրտը սարսուռի բերող ծիծաղով, բռնում է գլուխը, շգիտե ինչ անել, ինչպես գտնել ճշմարիտ ելքը, արցումքները զալիս սեղմում են կոկորդը, ձայնը փոխում...

Ո՞հ, Համլետ, Համլետ,  
Ամոր է, ամոր...

«Մենախոսության այդ մասը կատարվեց աննման և հազիվ թե կարելի է ավելի լավ կատարել», — գրում է Յարիշկինը:

Այս մենախոսության կատարմամբ Ադամյանը շեշտեց Համլետի գծերից մեկը—ինքնաղատափետումը, Մինչև հիմա տեսանք տիրություն, թախիծ: Այժմ, երբ թվում է, թե նպատակ կա առջև՝ վրեժինդրություն, հանդես է բերում անվճռականություն, որի համար է իրեն դատապարտում է: Բայց այստեղ մի առանձին երանգ կա նրա կատարման մեջ: Հարուստ դադարներով, նուրբ անցումներով՝ այս մենախոսությունը կատարվել է ակզրում մեզմ շնչով, հետդհնես զգացումները խռնցվելով՝ դուրս են ժայթքել հուժկու հորձանքով: Եվ հուզախոսվ խոսքը տարրերային ուժ է ստացել, որի առաջնական ոչ մի պատվար կանգուն չէր մնա:

Հանդիսատեսի առաջ կանգնում է ինքնախարազանող մարդը, թեև այդ պահին անվճռական, բայց կդամի օր, երբ ուժ կգտնի՝ վրեժինդիր լինելու համար:

Եեղում չի եղել արդյոք մենախոսության մեջ ընդհանրապես, նախատինքի վերջին տողերում թաքնված մի ակնարկ, որ դերասանը նետել է դահլիճ, ստիպել մարդկանց՝ մտածել իրենց մասին: Սա այն դեպքը չէ: Երբ գերասանը մոտեցնում է երկու տարրեր դարաշըրշաններ, առիթ տալիս տեսնելու այն, ինչ ընդհանուր է երկու դեպքում:

Ռեակցիայի տարիներ, մռայլ ու ճնշող: Հիշենք, որ այդ այն ժամանակներն են, երբ, ինչպես լենինն է ասել, «Ալեքսանդր Երրորդի կառավարությունը անողութայքարի մեջ մտավ հասարակության՝ դեպի ազատությունն ու ինքնուրույնությունն ունեցած բոլոր և ամենատեսակի ձգտումների դեմք՝ Ոչ մի ազատ խոսք: Այն տարիներն են դրանք, երբ մի խոսքի համար մարդ կարող էր աքսորի հանապարհը բռնել: Հալածանք հրեաների դեմ: Ազգային ճնշում ընդհանրապես: Մեծ նպատակների, հուժկու կրթերի բացակայություն և, դրանց փո-

սարեն, հասարակական անտարբերություն, չնշին, մա-  
նըր ու գծուծ կյանք:

Ու երր Աղամյան—Համլետը նախատում էր իրեն, ա-  
ռոթահար անում, չէ՞ր կշտամբում արդյոք դահլիճուա  
նստած մարդկանց, .ի զեմս նրանց ավելի լայն բազ-  
մությունների, որ լոռում են, տանում, հանդուրժում, խո-  
նարհում գլուխները հալածանքի առաջ:

Սա առաջին պայթյունն է Համլետի դերակատար-  
յան մեջ: Դեռ կան ու կլինեն այդպիսի պայթյուններ  
նրա խաղում: Բայց որ նա իր հոգու ամբողջ կրակը գրել  
է այդ մենախոսության մեջ, շերմացրել նրա ամեն մի  
խոսքը իր հուզով, երրեմն այն աստիճան, որ յուրա-  
շանչուր բառ դահլիճ է հասել՝ իր հետ տանելով մի  
ռառապած հոգու ոչ միայն աղեկտուր հառաշը, այլև  
ընդվզումը, որ ցասում դառած այժմ ուղղված է իր զեմ,  
իսկ վաղը ուղղությունը փոխելու է Համլետի չնշին ու  
ռամարդի շրջապատի զեմ:

Վարագույրն իշել է, մարդիկ ոտքի կանգնած ծափա-  
հարում են արտիստին: Ցնծության աղաղակները բռնել  
են ամբողջ սրահը: Այդպիս է եղել Պետերբուրգում: Նույ-  
նը կրկնվել է Կիևում և Թիֆլիսում: Ինչ խոսք՝ նաև Օդե-  
սայում: Եվ ուրիշ շատ քաղաքներում, ու այդ աղմուկ-  
աղաղակի մեջ մարդկանց լսողությունը առել-տարել է  
իր հետ զեպի կյանք՝ մի արդարացի կշտամբանք.

ՈՒ, Համլետ, Համլետ,  
Ամոք է, ամոք...

\* \* \*

Տեսարաններ կան ողբերգության մեջ, որոնցից է  
կախված դերասանի հաջողությունը. ուրվականի հետ,  
«վերշապիս ես մենակ եմ» մենախոսությունը, «ինել թե

Այնեւը», Օֆելիալի հետ, բեմ բեմի վրա, մոր հետ, զերեզմանատանը, եղբափակիլ պատկեր Կարողացավ դերասանը նվաճել այս տեսարանները՝ լավ, ոչ՝ ուրիշն կանգնած է ձախողման առաջ Այս բոլոր տեսարաններից, սակայն, «Էկինել թե Այնեւը» առանձնանում է: Նույնիսկ կարծիք է հայտնվել՝ կա «Էկինել թե Այնեւը» կա նաև Համլետ, եթե չի հաջողվել գերասանին այդ նշանակում է նա չի նվաճել կերպարի հիմնական դիմք՝ մտածող գանհիացումն թեև ժայրահեղ և լափաղանցված, բայց նշանառության հատիկ կա սրա մեջ Հայտնի է, որ Թելինսկին բարձր էր գնահատում Մոլալովի Համլետը, բայց ցավում էր, որ նրա կատարման մեջ հարկավոր լափով չի ընդգծված մտածող Համլետը: Եվ զրանից հետո զարմանալի չէ, որ նա չի հավանել նրա «Էկինել թե Այնեւը», որին ինքը սպասել է մի առանձին հուզմունքով և, ինչպես ասում է, ներկայացման ժամանակ հուսախար է եղել<sup>74</sup>:

Աղամյանն այն բախտավոր գերասաններից է, որին քննադատությունը, հատկապես սուսական, բարձր է զրնահատել այդ տեսարանում:

Դեռևս 1883-ին, երբ նա առաջին անգամ էր Համլետով բեմ բարձրացել Մոսկվայում, «Մոսկովսկին վեդոմուստի» թերթը գտավ, որ նրա խաղի այդ կտորը շատ տպավորիլ է եղել... հանգիստանը տարել է իր հետ ուժեղ, ներդաշնակ ներգործություն<sup>75</sup>:

Նույնը նաև մի տարի անց, Պետերբուրգում, «Էկինել թե Այնեւը» մենախոսությունը պ. Աղամյանն արտասանեց հոյակապը<sup>76</sup>:

Բարձր գնահատության է արժանացել նաև Օդեսայում: Նախ ծարիշկինն է ընդունվել նվիրելով, և հետո՝ «Պշելկան» է հիացմունք արտահայտել՝ ասելով, թե «մեր կարծիքով, այս մենախոսության մեջ նա հազիվ թե մըր-

ցակիցներ ունիւ <sup>78</sup>, «Սքանչելի» է, իսկապես սքանչելի է—ըացականշում է մի ուրիշ քննադատ։ Իսկ մի քննադատ էլ ասելով, թե ոշատ և շատ լավ է, այն կարծիքն է հայտնել, թե ոս ամենահաջողված կտորն է ամբողջ դերակատարման մեջ։

Սքանչացման արտահայտություններ կարելի է դարձալ բերել, բայց այսքանը բավական է։

Պատահել են զեպքեր, երբ զերասաններին հաջողվել է դժվարին մենախոսության արտասանությունը բարձրացնել նրա ներքին պաթոսի մակարդակին, բայց մի թիրությամբ, այն, որ ստացվել է համերգային կատարում <sup>79</sup>, այսինքն՝ այդ հատվածն անջատվել է խաղի ընդհանուր հյուսվածքից, թողել անկախ տպավորություն, թեև բարձր, բայց չմերվող, ամես արհեստականորին ներմուծված։ Ահա այդ դժվարությունը Աղամյանը, քննադատության վկայությամբ, հաղթահարել է ոյուրությամբ։ Մի քննադատ ասում է, որ այլ ձամւնետների մոտ այդ մենախոսությունը ստացվում է կողմնակի, առանձնացված, իսկ Աղամյանը արտասանել է այնպես, որ ամրողի ներդաշնակությունը չի խախտվել <sup>80</sup>։

Ինչպես այլ հատվածներ իր խաղից, այնպես էլ «կինել թե Աինելը» Աղամյանը մշակել է, փոփոխության և նթարկել առանձին մանրամասնություններ, միշտ ձգտել կատարելության՝ այն մղումով, որ ամեն գտած նորություն ավելի ցայտուն արտահայտի պատկերի բուն իմաստը։ Սա ձգտում է, որ թեև միշտ չէ իրականացում գտել, բայց զեկավարել է դերասանին, պահելով նըրան զլիավոր իմաստը կարելի հարստությամբ արտահայտելու համար։

Բոլոր այն զերասանները, որոնք մտածող մարդուն Համլետի մեջ մղել են ետ կամ բոլորովին տեղ չեն տը-

զել, «կինել թե վինելն» ասելիս անհաջողության առաջ են կանգնել Եվ այդպես էլ պետք է լիներ: Եեքսպիրի հերոսներից ոչ մեկը շունի Համլետի մտքի ո՞չ ընդգրկույթը, ո՞չ խորությունը, ո՞չ էլ հարստությունը: Սրամիտ է ասել մեկը, թե Եեքսպիրի պիեսները նրա հերոսներից միայն Համլետը կարող էր գրել <sup>81</sup>,

Թե ինչպես է Աղամյանը խաղացել Թիֆլիսում՝ շգփտենք, տվյալներ չեն պահպանվել, հակիրճ վկայություններ կան Օդեսայի և Մոսկվայի ներկայացումների մասին:

Սալվինին և Ռոսսին այդ մենախոսությունը ասել են բայց ելով: Մոշալովի խաղը մոտ էր առաջին երկուամին: Սա սկսում էր բեմի խորքից և բայցում դեպի բեմառաջրը, ուր հասնելիս ասում էր արգեն վերջին բառերը: Աղամյանի քննադատը վկայում է, որ նա այդ նշանավոր մենախոսությունն ասաց ինքնահատուկ կերպով: Սալվինիից և Ռոսսիից տարրերող այդ առանձնահատկությունը քննադատը բացատրել է բեմի շափաղանց փոքրը լինելով, որ, նրա կարծիքով, լուրջ արգելք է եղել՝ վերոհիշյալ դերասանների նման տեսարանը կառուցելու: Համար: Նրա ասելով, բեմական այդ անհարմարությունն էլ Աղամյանին մղել է մի այլ լուծման, ինչպեսինքն է ասում՝ երջանիկ մտահղացման <sup>82</sup>: Քննադատը սիալվում էր: Աղամյանի մտահղացումը որևէ շափուկ կապված չի եղել բեմի շափերի հետ: Նա երբեք բայցելով չի ասել այդ մենախոսությունը, նույնիսկ այն դեպքում, երբ իր տրամադրության տակ եղած բնմը տալիս էր բայցելու ազատ ասպարեզ:

Աղամյանը բեմ էր մտնում և ժնատում դահաթուի աստիճաններին, գլուխը ետ գցելով դեպի գահը, ասելինքնամոռացության մեջ, աշքերը փակ, սկսում էր.

— Կինել, թե վինել—ահա այս է խնդիրը—Որն է ազելի ազնիվ, տանե՞լ շարագործ բախտի նետերը և հար-

լածները, թե՝ դիմադրել թշվառության օվկիանոսի գեմ  
և պատերազմելով՝ վերջ տալ նոցաւ

Ու երբ մենախոսությունը հասնում էր, «բայց եթէ  
այն քնի մեջ մեզ երազներ այցելենք խոսքերին, արտիս-  
տը երկյուղած վեր էր թոշում՝ ասես լիներ մի ահավոր  
քնի տպավորության տակ<sup>83</sup>: Այդպես է խաղացել  
1883-ին, Մոսկվայում: Հազիվ մի տարի անց, Պետեր-  
րուրդում նա այլ կերպ է խաղում: «Լինել թե վինելը»  
ասելիս նա բեմ էր գալիս դաշույնը ձեռին: Որպեսզի  
այն տպավորությունը շտացվի, թե ինքնասպանություն  
գործելու մտադրությամբ մտավ բեմ, նա պետք է բեմա-  
կանորեն հիմնավորեր, թե ինչու է ձեռին մերկացրած  
դաշույն: Դրա համար նա բեմ էր գալիս ձեռին փայտի  
կտոր: Տաշում էր Զքաղմունք է սա, գուցե այնպես, ինչ-  
պես գիրքը երկրորդ արարվածում՝ ցրվելու, տանջող  
մտքերից մի պահ հեռանալու նպատակով: Բայց երևում  
է, որ նրան այդ չի հաջողվում: Մտքերը հանգիստ չեն  
տալիս: Այսպիսով, նա հիմնավորում էր, թե ինչու Համ-  
իետը հանկարծ սկսեց խոսել:

Ահա թե ինչպես է նկարագրել Յարիշկինը:

«Համեմետը բեմ է գալիս մի դաշույն ունենալով ձեռ-  
ին և այնքան սոսկալի ու ճնշված վիճակում, որ մարդ  
արսուու է զգում: Ջեր առջև այդտեղ կանգնած է ահա  
մի մարդ, որ վճռել է ինքնասպանություն գործել, հրա-  
ժեշտ տալ այդ կործանված կյանքին, մի մարդ, որ՝ թը-  
կում է ահա, հենց այս վայրկյանին ձեր աշքերի առջե  
ինքնասպանություն է գործելու... Նա դանդաղորեն մո-  
տենում է գահին, նստում է նրա սանդուղքների վրա և  
արտասանում է, բայց ինչպես է արտասանում իր հոչա-  
կավոր մենախոսությունը—«Լինել թե վինելը... Սկսում  
է Աղամյանն այդ մենախոսությունը շատ մեղմ ձայնով,  
յեծ պատղաներով. երևում է, որ նրա մտքերը խառնվուած

նն, արագորեն փոխարինելով մհկը-մյուաին, հոգեկան մեծ հուզմունքի պահին նրա ձայնը երբեմն խղվում է, նա շնչարգել է լինում, իսկ երբ ասում է.

— Ո՞վ տնօթալով և քրտինքով կտաներ կյանքի ծանրությունները, եթե ետմահվան երկյուղը այն անծանոթ աշխարհը, որտեղից ոչ ոք չէ վերադարձել...

Համլետը ցնցվում է ՏԱ:

Դաշույնը նորամուծություն էր Թեմական պատմության հեռավոր էջերում այդ կապվում է Գարիկի խաղի հետ: Ահա այդ դաշույնն էլ տարածայնության տեղիք է տվել:

Զույգոն պաշտպանում էր Նա ասում էր, որ «գա բոլորովին նոր է և շտապում եմ ավելացնել՝ հաջող»<sup>85</sup>: Բայց ահա մի ուրիշը, որը կտրականալիս շէր ընդունում այդ նորամտությունը և նույնիսկ, մի որոշ շափով, հեգնում էր:

Բացատրելով դաշույնի թեմական հիմնավորումը և այդ առթիվ կանգ առնելով գիայտիկի վրա, քննադատն ասում է. «Մենք բոլորս, իհարկեն, կարդացել ենք Սաքսո Գրամատիկոսի «Ասք Համլետի», ավելի ճիշտ՝ Ամլետի մասին»: Ծիշում ենք, որ Համլետը վառարանի մոտ նստած փայտ էր կտրատում և չորացնում ածխի վրա: Ահա թե որտեղից է պ: Աղամյանը փոխ առել փայտիկը: Կարելի՞ է, հարց ենք տալիս, փայտիկով հեռուները զընալ, այսինքն կարելի՞ է խառնել միմյանց Ամլետին Եկբաղիրի Համլետի հետ, և նյութ քաղել առաջինից՝ երկրորդի համար: Այն ժամանակ հարկավոր է արդեն ցնցուտիներ հագնել, կեղտոտել ձեռքերը և մարմինը պատել ամեն տեսակի աղտեղություններով: Այլն, ինչպես այդ պատմված է Սաքսո Գրամատիկոսի մոտա»<sup>86</sup>:

Ինչ խոսք, որ կարելի է դերասանի հետ վիճել, թե արդյոք արժե՞ր այդ տեսարանում դաշույն խաղացնել:

Այդ հարցին գեռևս կանդրադառնանք: Թննադատը, ինչքան էլ խիստ խոսք ասի, ոչինչւ Դա նրա իրավունքն է, մանավանդ, երբ փորձ է անում հիմնավորել իր տեսակետը: Բայց հեգնել՝ ցույց տալու համար իր պատրաստության պաշարը, թե որքան իրեն ծանոթ են Համլետի հնագույն աղբյուրները՝ մեզմ ասած՝ վայել չե յայրաքաղաքի բննադատին, մանավանդ որ գործ ուներ մի արվեստագնտի հետ, որի մի տարի առաջ հրապարակած ուսումնասիրությունը Համլետի աղբյուրների վերաբերյալ՝ իր բացառիկ լայն ընդգրկումով, կարող էր միայն քննադատի զարմանքը շարժել, թե ե՞րբ, որտե՞ղ և ինչպես կարդաց մի դերասան այդքան:

Անդրադառնանք, սակայն, քննադատի ասածին՝ ըստ էության:

Թննադատին զրադեցնող կենտրոնական հարցը ինքնասպանությունն է. Համլետը կարո՞ղ էր այդ քայլին դիմել, թե ոչ ռեամենո՞ւմ է արդյոք Համլետը, —ընդգծում է քննադատը, —Եեքսպիրի Համլետը, մեռնել հիմա, մեռնել առանց վրեժինդիր լինելու հոր մահվան համար: Արդյո՞ք Համլետի համար մահը վերջնական ձգտումն է ու ցանկությունը: Թե՛ այդ մենախոսությունը ոչ այլ ինչ է, բայց եթե փիլիսոփայական դատողություն՝ ունայնության, մարդկային կյանքի մասին ընդհանրապես, պայմանավորված այն ճնշող իրադարձություններով, որոնք մթամած ամպերի նման կախվել են թշվառ արքայազնի գլխին՝ առանց այն էլ արդեն խելացնորության շափ շախախված՝ ջերմորեն սիրելի հոր կորստյան պատճառով»<sup>67</sup>:

Հոգվածագրի դատողության մեջ կա տրամաբանական մի անհամաձայնություն: Անհասկանալի պատճառներով փիլիսոփայական խոհը և անձնասպան լինելու փորձը հակադրված են միմյանց: Կարծես թե զրանցից

Տեկն է միայն հնարավոր՝ կամ փիլիսոփայել, կամ անձնասպան լինել, Անհասկանալի է, թե ինչու Համլետը չէր կարող անձնասպանության մտադրություն ունենալ և այդ առթիվ դատողություններ անել աշխարհի շարի ու բարու մասին:

Կան դերասաններ, ինչպես և շեքսպիրագետներ, որոնց կարծիքով ուկինել թե Ալինելու մեջ անձնասպանության միտքն անգամ չկա: Սա ուշ շրջանի տեսակետ է, և, անշուշտ, պատիվ է բերում հոգվածագրին, որ դըրան հանգել է դեռևս այն տարիներին: Բայց դա կարծիք է, որի հետ ոչ միայն այն ժամանակները, այլև այսօր կարելի է համաձայնել կամ չհամաձայնել: Օրինակ՝ սովորական շեքսպիրագիտության մեջ ճանաշված անուն է Մ. Մորոզովը: Նրա հետ կարելի է մի շարք հարցերի շուրջ վիճել, բայց շեքսպիրագիտության մեջ նրա կատարած ծառայությունը անուրանալի է: Շեքսպիրին նվիրած իր մի աշխատության մեջ կանգ առնելով «Ունել թե Ալինել» մենախոսության վրա, նա ասեւմ է, «Տեքըստի ուշադիր ուսումնասիրությունից հետո մի առանձին ցայտունությամբ հիշվում է կերպարը մի մարդու, որը մերկացրած դաշույնը ձեռքին՝ կանգնած է իրեն կըշանելու պատրաստ՝ կատաղած բազում ալիքների առջև» <sup>58</sup>:

Հստ Մորոզովի, նշանակում է Համլետը մտածում և անձնասպանություն գործելու մասին: Հետո, հետաքըրքիրն այն է, որ շեքսպիրագետը հենց որ կամեցել է իր միտքն արտահայտելու համար պատկերի օգնության գիմել, նրա երևակայությանը Համլետը ներկայացել է գաշույնը ձեռքին:

Փակագծերի մեջ նկատենք, որ «Համլետ» անգիտական կինոնկարում, որտեղ հերոսի դերով հանդես է եկել ժամանակակից նշանավոր ողբերգակ Լոռուկենս Օլիվիեն:

«Ավնել թե Աբնելու» տեսարանը տեղի է ունենում ամ-  
ռոցի ծովահայաց մասում. կանգնած է Համլետը, ձեռ-  
քին դաշույն, իսկ ցածում խռովահույզ ծովի ալիքներն  
են, որ գալիս և զարնվում են էլսինորի անմատչելի պա-  
ռերին:

Ուրեմն ինչո՞ւ զարմանալ, որ մի դերասան, այն է:  
յոթանասուն տարի Մորոզովից և Օլիվիեից առաջ, կա-  
ռող էր նույն պատկերը հղանալ:

Թվում է, թե կարիք չկա վեճի առարկա դարձնել այն  
հարցը, թե մենախոսությունը անձնասպանության միտք  
տալի՞ս է, թե ոչ:

Անկախ նրանից, թե մենք կամ ուրիշները դրա շուր-  
ջը ինչ դատողություններ կարող ենք անել, այս դեպքում  
որոշողն այն է, որ դերասանը այդ համոզման է եղել.  
այսինքն՝ ոչ մի կասկած չի ունեցել, որ այդ մենախո-  
սության մեջ անձնասպանության միտք է ակնարկվում<sup>8</sup>,  
Ուրեմն, և՛ քննադատությունն է այդ տպավորությունը  
ստացել, և՛ ինքը՝ դերասանն է, այդ հաստատում: Իսկ  
եթե խոսքը այն Համլետի մասին է, որ ստեղծել է Աղամ-  
յանը, ապա պետք է հիմք ընդունվի նրա խաղը, որից հե-  
տո հետազոտողի իրավումքն է, թե ինչպես գնահատել,  
բայց գնահատել այն, ինչ կա խաղի մեջ, և ոչ թե փընտ-  
րել այն, ինչ չկա և գուցե չէր էլ կարող լինել: Աղամյանի  
Համլետը անձնասպան լինելու մտադրություն ուներ:  
Այդ վեր է արդեն ամեն կասկածից Եվ մեզ թվում է, որ  
էականը այնքան դա չէ, այլ այն, թե Համլետը ի՞նչ ճա-  
նապարհ է անցնում, ի՞նչ ան է ապրում մենախոսու-  
թյան սկզբից մինչև վերջ, թե ինչպես է նա հաղթահա-  
րում հուսալքությունը, ինչպես է գալիս կյանքի հաս-  
տատման գաղափարին:

Նախ՝ վերադառնանք Աղամյանի կատարմանը:

«Ինչպես մարվող ճրագն է՝ մարելուց առաջ մեկ ան-

գամ ևս բոցավառվում պայծառ,— նկարագրում է Յա-  
ռիշկինը,— այնպես էլ Հանկարծ կենաց մի կայծ է թըր-  
թըռում նորից Համլետի ողջ մարմնում, նա ուղղվում է  
մի պահ և արդահատանքով մի կողմ է նետում դաշույ-  
նը: Ճգնաժամն անցնում է, նա կրկին դեպի կյանք է  
վերադառնում...» <sup>90</sup>

Տեղին կլինի այս առթիվ հիշել այստեղ մի բարյա-  
ցակամ առարկություն՝ դարձյալ դաշույնի հետ կապ-  
ված:

«Ելիսավետգրադսկի վեստնիկի» քննադատը, որ  
հիացած էր Աղամյանի Համլետով, ինչպես դրանից հե-  
տո նաև կիրով, իր հոդվածում ասում է. «Գյոթեական  
Համլետը իր երկիրեղկված հոգով գուցե և կարող էր դա-  
շույն պահել ձեռքում և չխրել կուրժքը, բայց Աղամյա-  
նի պատկերած Համլետը, եթե մերկացրեց դաշույնը, ար-  
դեն լի կարող մի կողմ նետել» <sup>91</sup>:

Հոդվածագրի վրիպումը, ըստ երևութին, այս է, որ  
նա Համլետի վարքագիծը բացատրելիս ելնում է կերպա-  
րի խառնվածքից, և ոչ թե պատմա-հասարակական այն  
պայմաններից, որոնց մեջ ձևավորմել էր նրա հոգեկան  
աշխարհը, որպես վերածնության դարաշրջանի հումա-  
նիզմի ներկայացուցիչ: Այդ ժամանակների հումանիստ-  
ները շեշտված հակադրությունների բնավորություններ  
էին: Այդպես էր ինքը՝ Շեքսպիրը, Համենայն դեպի այդ  
է ապացուցում նրա ամբողջ դրամատուրգիան: Այդպես  
է նաև նրա հերոսը, Համլետը: Ահա այդ ուժեղ հակա-  
դրության սկզբունքով էլ գրված է ուկինել թե վիճելը:  
Որքան էլ այս հակադրությունները հավասարելու լինենք  
ապրելուն և մեռնելուն մի կողմից, պայթարելուն և անձ-  
նատուր լինելուն մյուս կողմից՝ երկու դեպքում էլ գործ  
ունենք ուժեղ հակադրության հետ:

Մի՞թե հոդվածագիրը, որ այնքան նուրբ և խորն է

Հասկացել Աղամյանի կիրը, այդ դեպքում չի նկատել, որ Համլետի ուժեղ հակադրություններով կառուցված կերպարի զարգացումը առաջնորդում է նրան դեպի հոգեկան զորացում։ Համլետը երկրորդ արարվածում խոսում է իր թուկության մասին, իսկ վերջում արդեն՝ ուժի։ Սա չի նշանակում արդյոք, թե առաջին երկու արարի ընթացքում հոգու արիությունն իսպառ չի դրսեորվել, ինչպես և չի նշանակում, թե չորրորդ արարվածում թուկության ոչ մի արտահայտություն այլևս չկա։ Բայց գլխավորը վարժագծի ընթացքն է, կերպարի աճը, այն, որպայտարի բանվելով իր շրջապատի հետ, Համլետի ուժը կողմերը հետզհետե ավելի են ամրանում, իսկ թուլությունները՝ մի կողմ նետվում։ «Էինեկ թե Աինելը» կերպարի ներքին աճման ճանապարհին, եթե կարելի է այսպես ասել, գտնվում է սահմանադժում։ Մինչ այդ հասկածն ու տատանումն է շատ, որանից հետո ուժն ուժնականությունն են դառնում իշխող։

Աղամյան—Համլետը մտածում է անձնասպան լինելու մասին։ Այդ պարզ է ոչ միայն նրանից, որ ձեռին դաշտույն կա, այլև այն, թեկուզ շատ պարզ պատճառով, որ դաշույնի սուր ծայրը մի պահ մոտեցնում է կրծքին։ Բայց իսկույն դաշույնը շպրտում է մի կողմ, ըստ որում ոչ սովորական ձեռվ, այլ այնպես, որ հեռացնելով դաշտույնը՝ վանում է նաև անձնասպան լինելու միտքն ընդհանրապես։ Այսպիսով, ուրեմն, հոռետեսության և լավատեսության պայքարը վերջանում է լավատեսության հաղթանակով։ Համլետ—Աղամյանն այդ քայլին չի դիմում, որովհետև նրա համար դա հարցի լուծում չէր։ Եթե նրան զրադեցներ միայն իր վիշտը, գուցե և նահանջեր, անձնասպանություն կատարեն։ Բայց ամբողջ խնդիրն այն է, որ նրա անձնական վրեժը վերաճում է, ոտանում հասարակական ընդհանուր իմաստու եվ դա է։

պահում է նրան։ Նա զգում է, որ իր վրա պարտք է դրված, մեծ խորհուրդ Այո՛, Աղամյան—Համլետը, բուռն ու անմիջական, կարող էր անձնասպան լինել, բայց չի լինում։ Ինչո՞ւ ասենք թե եղավ. հետո՝, դրանից ինչ կփոխավի աշխարհում, Ոչինչ նա ասում է, որ կյանքում մարդը տեսնում է տիշխանասերների ճնշումը, գոռողների անարգանքը, մերժված սիրո տանշանքը, դատավորաց ինքնակամությունը։ Իհարկե, կարելի է սարի մի հարվածով—ուզում է ասել անձնասպանություն գործելով—այդ ամենից աղատվել։ Այդ գնապքում ո՞վ պետք է կռվի շարիթի դեմ, շրջապատի դեմ։ Ոչ ոք։ Ուրեմն պետք է ապրել, ապրել՝ կռվելու համար, ապրել՝ շարի առաջն առնելու համար։

Հասկանո՞ւմ էր արդյոք Աղամյանը, որ Համլետը կերպարում շեքսպիրյան ժամանակաշրջանի հումանիզմի և ուժեղ, և թույլ կողմերն են դրսնորում գտել. մի կողմից դարաշրջանի արմատական արատների ըմբռնում և, մյուս կողմից՝ նրանց դեմ պայքարելու անդիտություն։ Հաղիվ թե, Շեքսպիրի աշխարհայեցողության մեջ անհատի դերի գերազանցաւություն կա։ Նույն դիրքերի վրա էր կանգնած և Աղամյանը։ Համլետը նրա համար իդեալ էր։ Եվ դերասանն էլ, նրա նման, տեսնում էր, զգում և իր պարտքն էր համարում բնմից խռուել, ողիմադրել թշվառությանց օվկիանոսի դեմ և պատերազմելով վերջ տալ նոցա։

Հոգեկան կոփվը, ուժեղ և հակասական, ավարտվում է կյանքի հաղթանակով։ Այսպիսով, ուրեմն, հայտնի մենախոսությունը բեմական լուծմաբ լավատեսական բնույթ է ստացել Աղամյանի բեմական կատարման մեջ։ Այդ շատ լավ զգացել և հասկացել են դերասանին ժամանակակից ոռւա քննադատները, որոնցից մեկը, «կինե,

ՑԵ ԱՐԻՆԵԼՈՒ ԿԱՄԱՐՈՎԱՄԲ ՆԿԱՐԱԳՐԵԼՈՒԸ ՀԵՏՈ, ԲԱՑԱ-  
ԿԱՆՉՈՒՄ Է.

«ՎԵՐԱՃՆՈՒԹՅԱՆ ԻՆՆ ՀՐԱՉԱԼԻ պատկեր է բացվուի  
ՆԵՐ ԱՀՅՔԵՐԻ առջև» <sup>93:</sup>

Դաշույնի հարցը շատ է զբաղեցրել մարդկանց, նը-  
ռանցից այնքան ուշադրություն խլել, որ կատարման  
ժուակողմնորին չեն անդրադարձել այլնաւ Սակայն, միա-  
ժամանակ, ինչպես ասվեց, այդ գժվարին մենախոսու-  
թյան կատարումը առաջ է բերել դարմանք և սքանչա-  
դում:

Ինչպես բոլոր այլ դերերում, այնպես էլ այստեղ Ա-  
րամյանն աշքի է ընկել անցումների նրբին ալիքավորու-  
մափ, խոսուն դադարների հարստությամբ, ամեն անգամ  
հոգեվիճակին համապատասխան գույներ ընտրելով: Այս  
ամենից բացի, կամ ավելի ճիշտ, այդ բոլորի օգնու-  
թյամբ նա կարողացել է ցույց տալ կործանման եղրին  
կանգնած մարդու մուայլ անհուառությունը, պատերազմն  
ինքն իր դեմ և այդ ներքին պայքարի ավարտը՝ ապրե-  
լու, ապրելու և կովելու գաղափարի հաղթանակի այն-  
պիսի կենդանի պատկերացումով, որ հանդիսատեսը եթե  
չկըրում մի պահ փշաքաղվել է, տեսնելով Աղամյան—  
Շամլյանին անդունդի եղրին կանգնած, ապա այժմ հըրճ-  
ագին խնդրությունից նրա սիրութ կանգ է առել, շհա-  
լատալով, ասես, տեսածին, ապա հաջորդ պահին նույն  
այդ հոգեկան բերկրանքից ուրախությամբ է դիմա-  
վորել Համլետի նման սիրելի մարդու վերադարձը

Ծիլ եթե հանդիսատեսը այդշափ հիացել է, իր հետ  
ուարել ամնկարագրելի տպավորություն, ապա ոչ միայն  
դերասանի անբաղդատենի վարպետության շնորհիվ:  
Վճռական դերը այստեղ պատկանում է այն բովանդա-  
կությանը, որով դերասանի խաղը հագեցած է եղել: Այն,

որ այդ մտքերի և հույզների խառնակ մթնոլորտում Առ-  
դամյան-Համլետը իր քվեն տվել է կյանքի օգոտին, ապ-  
րելու և պատերազմելու օգոտին։ Դա ոչ միայն դերասա-  
նի լուծումն է, այլև հանդիսատեսի թեմում կերպարը,  
դահլիճում՝ հանդիսատեսը դերասանի խաղի միջոցով,  
ասես մի մարդ, մի էոթյուն դարձած, վճռում են նույն  
հարցը։ Որտեղ էշանք՝ այնտեղ՝ իրենք։ Դա է այն ար-  
վեստը, որ էսթետիկական մեծ բավականությունից բա-  
ցի, մարդուն հոգեկան զորություն է տալիս, պայծառ  
հայացք կյանքին նայելու համար, զինում շարիքի գեմ՝  
նրա առաջն առնելու համար։

\* \* \*

Ադամյանի խաղի գլուխ-դորժոցներից է «ընմի վրա  
բեմ» տեսարանը։

Այստեղ էլ նա մշակումներ է կատարել, փոխել է  
կտորներ, երրեմն արդատական շափով ու ձևով։ Սակայն  
տեսարանի ըմբռնման սկզբունքը բոլոր դեպքերում էլ  
գրեթե նույնն է մնացել։

Նստում էր Օֆելիայի մոտ և ներկայացման ժամա-  
նակ հետեւում էր ոչ թե զերասանների խաղին, այլ Կլավ-  
դիոսին։ Ի՞նչ տպավորություն է թողնում խաղը թագա-  
վորի վոա։ Կլանված դրանով, նա կիսապակած շարժ-  
վում էր դեպի Կլավդիոսը, Ամանք քննադատել են, դի-  
տողություն արել, որ հաշող չէ, ոչ էլ բնական, գտնվել  
են և պաշտպաններ։

Բեմում մարդասպանը թույն է լիցնում քնած թագա-  
վորի ականջի մեջ։

Կլավդիոսը վեր է ցատկում այլայլած և կարգադրում  
դադարեցնել ներկայացումը։ Թոլորը խառնվում են, աղ-  
մուկ-աղաղակի Սարսափելի առեղծվածը լուծված է  
Համլետի համար։ Կլավդիոսը է սպանել իր թագավոր

Հորը Ալեն ոչ մի կասկած: Կարող ես վրեժինդիր լինել և հոգուց վրա մեղք չի ժանրանա:

Ի՞նչ է զգում Համլետը:

Ահա զրա բեմական մարմնավորումն է, որ զրադեցրել, տանջել է դերասանի միտքը և ի վերջո բերել նրան այնպիսի մի մտահղացման և զրա կատարյալ արտահայտման, որ այդ, միայն այդ բավական էր, որ նա մշշապես հիշվեր «Համլետի» բեմական պատմության մեջ:

Երբ բոլորը խառնվում են, Պոլտնիուար գոռում է. «Հուկու, լուկուու:

Ագամյան-Համլետը «Վաղում», վերցնում էր մի կերպն՝ ջան, կայծակի արագությամբ մոտենում էր հուզված թագավորին, մեկնած լույսով լուսավորում էր նրա գնմքը և դնողի կուլիս ընթացող Կյավելիոսի առաջ այդպիս ետ-ետ զնալով՝ մի պահ անհետանում էր, ու ապա աղայակելով նորից բեմ վաղում՝ <sup>93</sup>:

Հետագայում Ագամյանը սրանից հրաժարվել է: Խեղու—հայտնի չէ: Թվում է, թե միանգամայն իզուր, ուսովհետն այսուհեղ կա բեմական լեզվով արտահայտված շայտուն իմաստ: Թաքնված հանցագործի երեսից պոկված է դիմումակը: Շուրջը մութն է, և նա լուսավորում է գնմքը ոճրագործի, որ բոլորը, բոլորն իմանան, թե ո՞վ է արքայասպանը, տմարդի ոճրագործը:

Թերևս անհետաթրքիր Ալենի հիշատակել վախթանգվյան թատրոնի «Համլետ» ներկայացումից մի բեմադիմակ: Խոսքը վերջին բեմադրության մասին է, որն իրականացրել է՝ մեզանում, ինչպես և ուսական իրականության մեջ, ունգոր թուրշովից բեմադրությամբ հըռակված Բ. Զախավան:

Բեմ-բեմի վրայի մարդասպանի դեմքը, երբ նա քնաի ականջի մեջ թույն է կաթեցնում՝ շնոր տեսնում: Գըլ-

խաշորով ծածկված է երեսը։ Երբ Կլավդիոսը վրդով ված՝ կարգադրում է ներկայացումը դադարեցնել, բեյը մթնում է, բոլորը խառնվում են իրար, Համլետ-Աստանգովը շահը ձեռին՝ բազմության մեջ է, նա անհանգիստ ու ջղային՝ իրեն այս ու այն կողմ է նետում։ ոճուագործ Կլավդիոսին է փնտրում, որը վաղուց գլուխ առել-փախել է։ Բազմության մեջ է նաև բեմական մարդասպանը, որը, բոլորի նման, նույնպես խումապի մատնըված՝ կամենում է փախչել։ Երբ նա բեմառաջքով անցնում է, դիմացը հայտնվում է շահը ձեռքին Համլետը, և կանգնեցնում։ Տեսնելով, որ դեմքը ծածկված է, նա երեսից գլխաշորը ետ է գցում և շահով լուսավորում դեմքը։ Եվ ի՞նչ է տեսնում... Ո՞վ զարմանք, իր առջև կանգնած է այլայլված մի մարդ՝ ճիշտ և ճիշտ Կլավդիոսի դեմքով։ Համլետը ապշահար այդ նմանությունից ընկրկում է, իսկ մարդասպանի դերակատարը, զրանիք օգտվելով, խառնվում է բազմությանը և փախչում։

Ռեժիսյորական հայտագործություն է դա, բեմական հաջողված մի ակնարկ, որը նայելիս, Համլետի նման, հանդիսատեսն էլ երկու մարդասպանների նմանությունից մի պահ զարհուրում է։

Զախավայի գտած այս բեմավիճակը Աղամյանի առածից տարբեր է և նույնքան, եթե չասենք ավելի, Հետաքրքիր ու արտահայտիչ։

Վերադառնալով Աղամյանին՝ կրկնում ենք. զուր և հրաժարվել, մանավանդ որ նրա նոր հայտագործությունը, որի մասին դեռ խոսք կլինի, չեր խանդարի, բանց որ փաստորեն հաջորդում է դրան։

Ահա այդ տեսարանի մի այլ մշակում, որից նա չկառողացավ անմիջապես ազատվել։

Երբ ամեն ինչ պարզվում է, Աղամյան—Համլետ վագրի նման ոստնում է տեղից, Նրա աշքերը վառվում

հետ Հաղթականորեն հրճվում է, իր մեջ նոր ուժ է զգում, ոհմաղում է. այժմ գիտե, թե ինչ պետք է անել<sup>94</sup>,

Այս մարմնավորումը նորություն չէր, ոչ էլ ինքնուռուցին հղացում, ինչպես երեսում է, Աղամյանը դրան հանգել էր Մոշալովի խաղին ծանօթանալով:

Ահա թե ինչպես էր Մոշալովը խաղում այդ տեսառունը:

Ամենթը գնացին: Մնացել են Համլետը և Հորացիոն: Կանգնած է, Համլետը նստած: Տեղից կատաղի մի սոխը ցատկում է Մոշալով-Համլետը, թոշում բեմի կենտրոն, ձեռքերը թափառում, ոտքերով դոփում հատակը, վազում բեմով մեկ, ինչպես վանդակից փախած առյուծ, և ապա ամբողջ թատրոնը լեցնում թրիթի հանգարծակի պոռթկումով<sup>95</sup>:

Մանրամասնությունների տարրերությամբ՝ նույն խաղն է այդ, որից Աղամյանը հրաժարվեց: Եվ դրանից առաջ, և զրանից հետո, նա այլ կերպ է խաղացել: Դա էլ պետք է համարել հիմնականը, մանավանդ որ գրականության մեջ այդ մշակումը հիշվում է ավելի հաճախ:

Նախ տեսնենք, թե Աղամյանը ինչ հիմք ուներ այդ ահսարանի մոշալովյան ըմբռնումից հրաժարվելու համար:

Թելինսկին հրացած էր Մոշալովի խաղով, բայց հայիվ թե քննադատը, եթե Աղամյանին տեսներ՝ դրվագներ, Ոչ թե ուրիշի մոտեցումը սեփականելու համար, ավելի սկզբունքային պատճառով: Այն, ինչ կարող էր և բանում էր Մոշալովին, չէր կարող և շպեաք է համապատասխաներ Աղամյանին, հակառակ այն հարազատ ընդհանրությանը, որ կար կերպարի ըմբռնման մեջ երկու դերասանների մոտ ինչով որ Աղամյանի Համլետը տարրերվում էր Մոշալովի Համլետից, բա-

ցասում էր ոռւս ողբերգակի խաղի մի բացը կրկնելո, վտանգը Մոշալովի Համլետը փիլիսոփիա չէր, այլ մարտընչողի բուռն կրքով համակված մարդ, որ որսնում է ոճրագործին՝ վրեժիսնդիր լինելու համար։ Մինչև հիմա կասկածում էր Արդեն կասկած շկա, ոճրագործը գտնըված է։ Հաղթական հրճվանք. նախ ինքը ճիշտ դուրս եկավ և երկրորդ՝ կարող է արդեն հոր վրեժը լուծել։

Ի դեպ, Վաղարշ Վաղարշյանն էլ այդպես էր խաղում. շահը ձեռքին փակում էր թագավորի ճանապարհը, ապա բարձրանում էր գահի վրա, մի ձեռքը պարզում էր զեպի կողքի գահը, մյուսով բարձր պահում շահը և հաղթականորնեն քրքչում <sup>95</sup>։ Տեսարանի այսպիսի վախճանը Վաղարշյանի համար տրամարանական էր, քանի որ նրա պատկերած Համլետը նույնպես մարտնչողի կերպար էր։ Այդպես էր ոչ միայն Վաղարշյանը։ Նրանից առաջ նույնն է արել նաև Ռ. Դուդնիկովը՝ լենինգրադյան բնմադրության մեջ նոսքը հատկապես այդ բեմադրության առաջին ներկայացումների շուրջն է։ Նրա մասին ասում էին, թե «արտահայտեց Համլետի հաղթանակը, բուռն հաղթանակը, երրեմն սանձարձակ շափերի հասնող հաղթությունը» <sup>97</sup>։ Դուդնիկովից ավելի վաղ արել է նույնը նաև Ա. Ցուժինը, որի մասին ասուան, թե այդ տեսարանում «ստիպեց հիշել Մոշալովին» <sup>98</sup>, նվազագույն դաշտում չէ, որովհետև բոլոր այդ դերասաններն էլ ներկայացրել են կամային կերպար՝ մարտնչողի և պայքարողի։

Այն գերասանի համար, որի Համլետը մտածող էր, այսինքն խաղում շեշտված էր միտքը, կերպարի խոհական կողմը, ի վերջո այս լուծումը գոհացնել չէր կարող։ Պետք է որ ճիշտ հակառակ ընթացք ընդունեն նրա մտքերը և հույզերը նա չի կարող հաղթական հրճվանք ապրել, և ահա թե ինչու

Սակայն ավելի լավ է նախ ասենք, թե ինչպես է Աղամյանը խաղացել:

Միայն Համլետն ու Հորացիոն են բեմում: Աղամյան—Համլետը մի պահ մնում է արձանացած: Լուռ է: Ոչ մի խոսք չի ասում: Ոչ, չի կարողանում ասելի Ասես պապանձվել է, կորցրել խոսելու ընդունակությունը: Մոտենում է Հորացիոյին, գլուխը դնում ընկերոջ կըրծին ու հեկեկում:

Պետերբուրգյան երկու քննադատն էլ, որոնցից կազմեցինք այս համառոտ նկարագրությունը, գտնում են այս մշակումը ռհրաշալի, գերազանցա <sup>99</sup>: Նրանք հայողերգակին հակադրում են նշանավոր Սալվինիին, որն այստեղ բռնկվում էր կատաղի դայրութից, և գերագասությունը տալիս են Աղամյանին:

Սակայն հարցը գնահատականների մեջ չէ, մանավանդ որ այդ քննադատները, որքան էլ պարտական լինենք նրանց՝ Աղամյանին գնահատելու և նրա շուրջը Պետերբուրգում հասարակական կարծիք ստեղծելու համար, միևնույն է, ոչ Սալվինիին, ոչ էլ Աղամյանին ուսուցիչ շեն կարող դայ, որպեսզի իրավունք ունենան թվանշաններ դնել նրանց:

Խնդրին պիտի նայել ըստ գերասանի արտահայտած իմաստի:

Համլետը փիլիսոփա է: Նրա միտքը հակված է դեպի ընդհանրացումներ: Իհարկե, նա ծարավի է իմանալու՝ հորեղբայրը ոճրագո՞րծ է, թե՛ ոչ Բայց յուրաքանչյուր փաստ, այնուամենայնիվ, մնում է փաստ, և մտածող Համլետի համար, ինչպիսին եղել է Աղամյանի ներկայացրածը, կարևորը երևույթն է: Փաստը նրա աշքին երևույթի արժեք է ստանում կամ, գուցե ավելի ճիշտ կլինի ասել, որ փաստը առիթ է, իսկ նրա միտքը գրաղեցնողը երևույթն է: Մտաբերենք նաև, որ պատ-

Ճականորեն Համլետը պատկանում է այն ժամանակա-  
շրջանին, երբ փիլիսոփայության մեջ փաստը և փորձ՝  
հիմնական կովաններ էին: Աղամյանի խաղով Համլետը  
փաստը ենթարկում է նրանից բխող եղրակացության:  
Այդպիսին է Աղամյանի Համլետը, այսինքն՝ ոչ միայլ  
յաքառող, այլ նաև խորհրդածող, մտածող Նրա պայ-  
քարը մարդու համար է, այնպիսի մարդու, ինչպիսին  
հայրն էր: Նա կասկածում է հորեղբոր վրա, բայց ուրախ-  
կիներ, որ իր կասկածը շհաստատվեր: Եթե կասկածը  
հաստատվի, նշանակում է ահա մի նոր կովան և՝ մար-  
դու նկատմամբ հավատը կորցնելու ճանապարհին:  
Մինչդեռ նա հակված է պահելու այդ հավատը, նա շ-  
ուզում կորցնելի Առանց այն էլ կորուատներ շատ է  
տվելի թե ինչ է Պոլոնիուսը՝ հավանորեն գիտեր մինչև  
Վիտեմբերգ գնալն էլլ Նույնը նաև Օղբիկը, եթե միայլ  
ճանաշում էր մինչ այդ: Բայց ահա իր երկու ընկեր-  
ները—Ռոզենկրանցը և Հիլդենշտերնը—ներկայանուե-  
նն իրրե բարեկամ, մինչդեռ թագավորից կարգված  
լրտեսներ են: Ի՞նչ մնաց մոր մասին ունեցած պատ-  
կերացումից — համարյա թե ոչինչ, երբ իմացավ նրա  
շուտափույթ ամուսնությունը: Հույս ուներ, թե կա  
սնկյուն, ուր կարող է անարատ մաքրություն գտնել:  
այց ահա համոզվում է, որ այդ շքնազ աղջիկն էլ խա-  
ւալիթ է դարձել իր հակառակորդների ձեռքին: Այսքան  
էլ կորուատու թափական չէ: Նա բարձր կարծիքի չէ հո-  
ռեղբոր մասին, հիացմունք չունի, բայց ձեռքին փառ-  
շկա մեղադրելու համար եվ, վերջապես, համոզվել, որ  
նա է հորն սպանողը՝ եղբայրասպանը, նշանակում է  
կորցնել ավելին, քան երբեմնի բարեկամին: Այդ նշա-  
նակում է արդեն գալ հուսահատ ընդհանրացման, մա-  
նավանդ որ խոսքը թագավորի մասին է, որից, երս  
կարծիքով, կախված է երկրի և ժողովրդի ճակատու-

դիրը։ Այդ գեղքում էլ ո՞ւմ հավատաս, ո՞ւմ վրա հենց ինս։

Այսպես շեր կարող մտածել Մողալովի Համլետը, բայց այդպես, և միայն այդպես կարող էր և պետք է մտածեր Աղամյան—Համլետը նվ եթե նա մի պահ արձանացել է ու հետո էլ հեկեկացել, ապա այն պատճառով, որ Կլավդիոսի հետ կապված սահմոկեցուցիչ ճըշմարտությունը, մարդու նկատմամբ ունեցած թանկագին հավատը կորցնելու մի նոր անհերքելիորեն ուժեղ կը ուժան տվեց։

Այս ձեռվլ Աղամյանն իր խաղով ընդդում էր մտածող Համլետին ոչ միայն խորհրդածություն անելիս, այլև գեղի աշխարհն ու մարդիկ ունեցած վերաբերքունքով։

Այս տեսարանի աղամյանական մշակումը բեմական հշմարիտ հաղթանակ է, ձեռք բերված ոչ թե միանգամից, այլ գերի վրա աշխատելիս, որոնումների ընթացքում, պրկված մտքի և լարված զգացմունքի արգասիք։ Հայտնություն է այս, ըստ որում այնքան տրամաբանական՝ Համլետի համար, այնքան հարազատ իր խաղի ընդհանուր հյուսվածքի մեջ, որ նույնիսկ դժվար է հավատալ, թե հետո է մշակվել և ժամանակ անց է միայն մռայք գործել և գտել իր տեղը Աղամյանի խաղի կուռ նկարագրի մեջ։

\* \* \*

Մարդու նկատմամբ ունեցած հավատի հարցը զբաղեցրել է Աղամյան—Համլետին նաև մոր հետ ունեցած տեսարանում։ Այս տեսարանը ևս քննադատությունը հանաշել է որպես գերազանց կատարման օրինակ։ «Ավելի ճիշտ և ավելի զրավիլ կատարել, — զրում է Շիրվանդադին, — բայ թե կատարում է ալ։ Աղամյանը

այդ պատկերը, ճշմարիտը խոստովանած, մեզ անհավատալի է թվում՝ <sup>100</sup>, նույն կարծիքի են և ոռու քննադատները, որոնք միշտ էլ առանձնապես ընդգծել են դերասանի բացառիկ հաջողությունն այդ տեսարանում.

Ենքսափիրագիտությունը պատասխան չի տվել այն հարցին, թե Հերտրուդը ամուսնու սպանության մեջ անմիշական մասնակցություն ունի՞, թե ոչ նախապատրաստվող ոճրին տեղյակ եղե՞լ է, թե ոչ:

Այս հարցի մոտով են անցնում շատ բնմադրություններ, այդ պատճառով էլ թաղուհու կերպարը ներկայացման մեջ հաճախ անհասկանալի է մնում: «Տեսնեմ» անգլիական թատերախմբի բնմադրության մեջ, որ իրականացրել է Պիտեր Բրուկը, փորձ է արված այդ հարցին պատասխան տալ. թագուհին անմեղ է, նա ոշինչ չդիտե և չի էլ կասկածում: Նրա հանցանքը շուտափույթ ամուսնությունն է՝ ամուսնուն կորցնելուց հետո: Դա էլ ներկայացման մեջ բացատրված է թագուհու բուլակամ ու թեթև խառնվածքով: Կլավդիոսը, որ ըստ այդ բնմադրության, նույնպես վավաշոտի մնկն է, խելքից հանել է նրան և մղել դեպի այդ անխոհնմ քայլը: «Կիմելի» է. թերևս, բայց բացատրություն կա, և ոչ ոքիսյորի շեղոք դիրք այդ հարցում, որից ոչ ոք, Ենքսափիրից մինչև հանդիսատես, շահ չունի:

Աղամյանի համար այստեղ ոչ մի մութ կետ չկա: Նրա համար պարզ է, որ Համլետի մայրը ռկլավդիոսի արրանյակն է» եղել և «անհոգողղ և անշեշ է յուր հանցանքի մեջ» <sup>101</sup>: Գնայած դրան, նա, հակառակ այլ գերասանների, այս տեսարանը չի կառուցել մեղադրական ինտոնացիալի վրա: Պատահել են դերասաններ, օրինակ, Սամոյլովը, որ սկզբից մինչև վերջ մի երանգ ևն հաղորդել տեսարանին: Այդ երանգը եղել է մռայլությունը: «Այստեղ,— գրում է մի քննադատ Սամոյ-

լովի մասին, — նա ազատություն է տալիս մոայլ զայրույթին, որը վաղուց ելք էր փնտրում. զայրույթը փոխվում է ցաման, նա դառնում է անողորմ, անգութ և խոսքները նրա, ինչպես սուր, կտրատում են մոր սիրութ. անարդում է, վերջապես դառնում մարդասպան։ Ամեն ինչ միավորվել է այստեղ կարծես նրա համար, որպեսզի ցույց տրվի Համեստի հոգու մոայլությունը՝<sup>102</sup>, Մամոյլովին և այլ գերասանների, որոնք այս պատկերն այդպես են մեկնարանել՝ ղեկավարել է Համեստի այն խոսքը, թե ոկին, անունդ թուզություն է։ Ազամյանը դրանից շեր ենուում Համեստի հոգեկան վիճակը նրան ավելի բարդ էր ներկայանում։ Այո՛, Հերտորուդը մեղագոր է։ Այդպես է մտածում Ազամյանի Համեստը։ Բայց նա իր մայրն է, իր ծնողը։ Այդպես էլ է նա մտածում միաժամանակ։ Ահա այս հատկությունն է ապրում նրա հերոսը։ Եվ նա այդ հանդիպմանն էր գնում հակասական զգացումով՝ ատելությամբ դեպի Կլավդիոսի կինը, և որդիական զգացումով՝ դեպի մայրը։ Այս երկու զգացումները կռվում են նրա մեջ։ Որը կհաղթի՝ շղիտե։ Սակայն գնում է համոզված, կամենալով, որ հաղթի որդին։ Նա կկշտամբի, կնախատի մորը։ Այդ իրավունքը տալիս էր նրան այն, որ որդին էր նրա և մեռած հոր զավակը։ Դուցն կարելի կլինի դարձի բերել, խլել, պոկել նրան թշնամիների միջից։ Ի՞նչ կհաջողվի Համեստին — ահա դրանից էլ կախված է մի մեծ խնդրի լուծումը՝ մարդու նկատմամբ հավատի հարցը։

Այդ է ասում նրա խաղը՝ իր բոլոր հակասական անցումներով։ Այդ է ասում նաև այն, ինչ արձանագրել ու թողել է քննադատությունը՝ իրքն վկայություն գալիք սերունդներին։

Ցարիշկինն ասում է, թե մոր հետ ոմեցած տեսարանում «Ազամյանը խոսում է կամաց, ժանր շնչելով».

շեշտելով իր ասած յուրաքանչյուր բառը, որոնց մեջ՝  
մուրճի խուզ հարվածների նման, լսվում են դժբախտ  
որդու և մարդու օրհասական տառապանքները» <sup>183</sup>,

Որդու կողքին շեշտված է մարդը. ոչ միայն որպես  
որդի է ձգում հասկանալ մորը, այլ նաև որպես մարդ  
ընդհանրապես Եվ Համլետի այն խոսքները, թե «Դուք  
իմ մայրն եք», ուրիշ դերասաններ սովորաբար արտա-  
րերամ են ծաղրով, արհամարհանքով, թարնված բար-  
կությամբ։ Աղամյան—Համլետը ասում էր իրեն համա-  
կած մեծ վշտի տիսուր շեշտերով։ Այդ պատճեռով էլ  
այս տեսարանը դարձացնում էր հոգի ցնցող զորեղ  
տօքավորությամբ։ Բայց երբ թաղումին ասում է. «Եթե  
այդպես է, թող ուրիշները քեզ հետ խոսեն», որ նշա-  
նակում է, թե «մարդիկ կկանչեմ քեզ խելքի բերնեն»,  
Աղամյան—Համլետը միանդամից փոխվում էր։ Դա ար-  
դեն հարված էր։ Մարդկային արժանապատվությունը  
զիրավորված էր Ռում, իրեն հարկադրեն խոսել, ճնշում  
զործ դնեն, կարգին հրավիրեն։ Զարձացած նայում էր  
մորը, ասես շհավատալով, որ այդ խոսքերը իր մոր  
ինքանից դուրս եկան, իսկ հետո հանդիսաւ, բայց հուծ-  
կու, սարսառազդեցիկ ձայնով բռնում էր մոր ձեռքը և  
ապա կրկին փոխելով ձայնի ելևէցը՝ աղերսում էր լսել  
իրեն։

Թագումին վախի մեջ՝ օգնություն է կանչում։ Վա-  
յագույրի ետև թաքնված Պոլոնիուաը նրա կանչի վրա  
դգալ է տալիս իր ներկայությունը։ Եվ Համլետը, մինչև  
հոգու խորքը վրգովված, որ մոր և որդու խոսակցու-  
թյանը ներկա է մի ուրիշը, արհամարհանքով լի ձայ-  
նով, ասես նողկանքով, սպանում է թաքնվածին՝  
կարծելով, թե դա թագավորն է։ Եվ ապա շարումակում  
է քննդատված խոսքը։ Զկա այլևս վիշտը, ոչ էլ որդիա-  
կան մեղմությունը, որ մի փոքր առաջ այնպիս կաշկան-

դում էր Աղամյան—Համլետին: Նա դարձել է ահեղ, մի սարսափելի վրիժառու հոր մահվան համար, նրա համար, որ մայրը ծաղրեց սրբությունը և, վերջապես, ինչպես Աղամյանի մասին գրող մի քննադատ է ասում, «նրա համար, որ մայրը կործանեց նրա հոգում հավատքը դեպի մարդ-արարածը, լցրեց նրա կյանքը մեծախոր վշտով»<sup>104</sup>:

Աղամյանը Համլետի միակ դերակատարը չէր, որ այս տեսարանում կառուցված էր խաղը ապրումների հակասական փոխանցումների վրա: Հայողաբերքակից շատ առաջ այդպես էր խաղում Ֆրանսուա Ժոզեֆ Տալման: Համլետ—Տալման մորը ստիպում է հոր աճյունասափորի առաջ նրգվել, որ ինքը չի մասնակցել այդ սպանությանը: Մայրը տատանվում է, շփոթվում, և ի վերջո, խոստովանում հանցանքը: Այն ժամանակ Համլետ—Տալման մերկացնում է դաշույնը, որը հոր պատվերով պետք է խրեր մոր կործեցը, բայց այն վայրկանին, երբ թվում է թե հարվածելու է, որդիական սիրո քնքշությունը, կարեկցության զգացումը պաշարում է նրան և նա, շրջվելով դեպի ուրվականը՝ բացականշում է: Շխնամահարվեր, խղճահարվեր, հայրա: Սրտի խործից եկած հառաջանքով են ասվում այդ բառերը: Համլետն ընկնում է ուշաթափ մոր ստերի առջև: Սակայն Տալման այդպես էր խաղում և ուրիշ կերպ չէր էլ կարող, որովհետև Դյուախի փոխադրությունը, որով նա կատարում էր, ոչ միայն ենթադրում է այդպիսի շեղում Ենքապիրից, այլև այն, որ որդին ներում է մորը, ասելով, թե՝ որքան էլ մեծ լինի նրա հանցանքը, մի՛թե երկնքի բարությունն ավելի մեծ չէ<sup>105</sup>:

Խնդիրները բոլորումին տարրեր են: Եթե դերասանը, ըստ պիեսի, արգարացնի մորը, ների, ուրեմն պետք է, որ դրա համար հիմքերը ունենա: Աղամյանի խըն-

զիրն ավելի ծանր էր։ Նրա Համլետի մեջ ներողամտությունը չկա։ Նա ասում է, թե ինքը անողոք է, որպեսողի բարի լինի։ Այս հակասությունից էլ առաջ է գալիս հոգեվիճակի ողջ բարդությունը։ Ատելությունն ու սերը փոխնիփոխ են արտահայտվում։ Մորը դաշտմահար անելու պատգամ չունի ուրվականից, բայց մոր հետ խոսելիս՝ նա սպառնալի սրաներ ունի, որոնցից մեկի ժամանակ նրա աշխին երևում է հայրը, և Աղամյան-Համլետը, տեսիլքի ազդեցության տակ, կրկին խոսում է գուրգուրալի մի ձայնով։

Աղամյանը, ինչպես ասում են, այս տեսարանում ուրվական դուրս չեր բերում։ Թննադատությունը այդ դեել է ավելի հաջող։ Նախ՝ անհասկանալի է, թե ինչու մի դեպքում, բացի Համլետից, ուրիշները, Հորացիոն և նրա ընկերները ուրվականին տեսնում են, այս դեպքում թագուհին՝ ոչ Երկրորդ՝ այն, որ աշխին է երևում, և ոչ թե հայտնվում, արդեն իսկապես տեսիլքի տպավորություն է առնում և դրանից խաղն ավելի քնականություն է ձեռք բերում։ Ի միջի այլոց նկատմանը, որ այդ մանրամասնությանը տարբեր, բայց հետաքրքիր լուծում է տվել Պիտեր Բրուկը։ Նրա բեմադրության մեջ ուրվականը հայտնվում է, հայտնվում է գիշերային խալաթով, և մի պահ հետո, երբ Համլետն արդեն մոր մոտից գնացել է, ննջարան է մտնում Կլավդիոսը՝ նույն խալաթով։ Կողոպուտ՝ գահից մինչև անձնական իրը, հագուստը։

### Վերադառնանք Աղամյանին։

Հորը տեսնելով՝ նրա խոսքն ավելի է մեղմանում։ «Նրա ինտոնացիայում, — գրում է մի քննադատ, — որքա՞ն սեր կա, մարդկայնություն և մեծ հոգու ազնվությունն»։ Այս անհնար անցումները մի հոգեվիճակից մյուս, միշտ միմյանցից տարբեր, միշտ իրար հակա-

ռակ, Աղամյանը կատարել է նրբին վարպետությամբ, այդ իրարամերժ ասլրումների համար այնպիսի բնորոշ գույններ գտնելով, որ այդ ամենը ընկալվել է անվերապահ համոզությամբ:

Մայրը չի հասկանում որդուն, չի ըմբռնում նրա ապրած տառապանքը, համարում է հիվանդ, խելագարված, նրա բոլոր խնդրանքներն ու բացատրությունները թողնում է անարձագանք, և դա վիրավորում է նրան, եվ երբ բոլոր բացատրություններից հետո մայրը, այնուամենայնիվ, հարցնում է. «Ես ի՞նչ պետք է անեմ», Աղամյան—Համեմետը հասկանում է, որ դրությունն անհուսալի է, մայրը դարձի չի գա, հարկադրված, հրամեշտի պահին վիրավորում է.

«Մնաս քարե, մայրիկ — քարի զիշեր»:

Դերասանը փոխում է թարգմանությունը, հեռանում երանից և ասում.

«Բարի զիշեր, քազումի»:

Չկա այլևս մայրը, կա միայն թագուհին! Հեշտ է ասելու Հեշտ շէ այդ պահը, մոր կորուստը որդու համար, թարեմաղթություն անելիս նա դողում է, ուզում է հրաժեշտ տալ, ուժ չի գտնում իր մեջ, կամենում է համբուրել՝ արգահատանքը թույլ չի տալիս! Վերցնում է մոմակալը, ուզնեցնելով մորը՝ գերմարդկային ճիգ է թափում՝ կրկնելու համար.

«Բարի զիշեր, քազումի...»:

Ցույց է տալիս Կլավդիոսի՝ պատից կախված դիմանկարը և ծիծաղում էր խայթող, սարկաստիկ քրթը-

շոցով, կարծես ասում էր, թե «ցանկանում եմ քեզ նրա  
հետ երջանիկ լինել և վայելել...»:

Չույկոն քննադատում էր Աղամյանին դրա համար:  
Նախ՝ այն պատճառով, որ այստեղ դերասանը շեղվել  
է Եեքսպիրի տեքստից, որի համաձայն Համլետը թող-  
նում է թագուհուն և հեռանում՝ հետը քարշ տալով Պո-  
լոնիուաի դիակը, երկրորդ՝ համարելով այդ անողոք և  
անբնական<sup>106</sup>: Գրականության մեջ, ավելի ուշ ժամա-  
նակներում, այդ կտորը զիտվել է որպես գուհիկ ակ-  
նարկ<sup>107</sup>: Եեղում կա, այդ ճիշտ է, Դրա համար եթև  
պետք է՝ կարելի է քննադատել: Սակայն քննադատելիս  
պետք է մռանալ, որ նա կամեցել է տեսարանի հա-  
մար գոնել մի այնպիսի ավարտակետ, որը ամփոփեր  
տեղի ունեցածը՝ արտահայտելով այդ պատկերի համ-  
լետյան գլխավոր իմաստը — մարդու նկատմամբ ունե-  
ցած հավատի կորուատը: Ինչ վերաբերում է անբնական  
և անողոք լինելուն, Չույկոյի ըմբռնած Համլետի հա-  
յար, այո՛, այդ այդպիս է, բայց ոչ Աղամյանի Համ-  
լետի:

Անդրադառնալով այն որակմանը, թե գուհիկ ակ-  
նարկ է, ապա լոկ զարմանք է հարուցում, որովհետև  
անկախ նրանից, որ Եեքսպիրի մոտ այդպիսի բան չկա՝  
մոտեցումով և ոգով՝ մոտ է նրան, նույնիսկ շափազանց  
հարազատ: Հիշենք, թե ինչ է գրված Եեքսպիրի մոտ,  
ինչ է ասում, վերջապես, Համլետը մորը.

Եվ ի՞նչ, և ապրել մի նարպատ մանի գարշ  
բրտինելի մեջ,

Ախտի մեջ խաշված՝ իրար զգվելով ու սիրվածելով  
Մի խոզանոցի աղբյուսի վրա:

Մի՞թե այսքան պարզ արտահայտվելուց հետո  
Համլետը շէր կարող մորը վերոհիշյալ ակնարկն անել:



Համլետ  
Ա. Եկըսաղիր. «Համլետ»



Դէ՞ որ այդ ակնարկի իմաստը նույնն է, ինչ ասված է այդ մի քանի տողի մեջ, Եթե գոեհիկ է ակնարկը, ապա գոեհիկ են և այդ տողերը, ուրեմն պետք է հետևողական լինել և գոեհկություն վերագրել ոչ միայն գերասանին, այլ նաև դրամատուրգին, կամ ավելի ստույգ՝ նախ դրամատուրգին, հետո միայն գերասանին, որովհետև նա է նյութ տվել վերջինին՝ այդ անելու թայց ճիշտ չի լինի արդյոք, որ զրանից առաջ պատասխան տրվի— զոեհկություն է դա: Ո՛չ, դա գոեհկություն չէ: Նախ՝ նման ակնարկներ և տողեր Եեքսափիրի մոտ շատ կան, և, վերջապես, ինչո՞ւ գոեհկություն, և ոչ անսթող ճըշ-մարտություն, որից չի խուսափել Եեքսափիրը, առանց կորուստներ տալու Եվ մենք չենք զարմանում, որ հենց այդ պատկերը նկարագրող մոսկովյան մի քննա-դատ իր հոգվածում բացականշել է.

«Այդ բոպեին Աղամյանը մեծ էր»<sup>108</sup>:

Ուշադրության արժանի մի հարց:

Ինչպես Պոլոնիուսի հետ ունեցած զրույցի ժամա-նակ («Թառեր, բառեր, բառեր»), այնպես էլ այստեղ Աղամյանը իր մտահղացման համապատասխան, վե-րախմբագրության է ենթարկել Համլետի հրաժեշտի խոսքը<sup>109</sup>, Հայերեն, ինչպես նաև ոռական մի քանի թարգմանության մեջ, եղած սմայրը Աղամյանը զար-ձրբել է «Թագուհի»: Ստուգեցինք նաև բնագիրը. այն-ունեղ ևս «մայր» է: Եեղվելով բնագրից՝ Աղամյանը գի-տակցարար, հատուկ նպատակով «մայրը» փոխարինել է «Թագուհիով»: Խաղի տրամաբանական զարգացումը դերասանի առջև այդպիսի պահանջ է դրել: Անրավա-կան մայրը որդուն կանշել է իր մոտ: Ինչպես ասվեց, Հակառակ ուրիշ գերասանների, Աղամյանի խաղում այստեղ, գոնե սկզբում, դեռ սեր կա դեպի մայրը, հե-ռավոր հույս, որ նրան կարելի է փրկել: Ուստի և նկա-

տեղի է մեղմ շերմություն, նույնիսկ քնքշություն։ Հետո, վերջում, նա կորցնում է հույսը, տեսնում սեփական ձգուումը ջախչախված, և ո՞ւմ ձեռքով՝ մոր Ահա այս-տեղ է, որ նա կորցնում է մորը։ Այլ կերպ ասած՝ մարդկային հարաբերությունները պատկերելիս նա կանգնում է ընդհանրացումների ճանապարհին։ Զեա այլևս մայր, կա թագուհի, միայն թագուհի։ Մայրն արդեն անցյալ է, նրա դիմաց՝ թագուհին է, նույնը, ինչ որ թագավորը, Պոլոնիուսը, մյուս պալատականները, մեկը-մյուսից վատթար ել, այնուամենայնիվ, նրա համար դժվար է «թագուհի» կոչել. դրա մեջ խայթ կա, ծաղր, արհամարհանք, Բայց առավել դժվար է «մայր» կոչել, երբ հարազատության փոխարեն նրանց միջև ընկած է այժմ թշնամանք։

Սակայն շարունակենք, դերասանի խաղը գեռ շի ավարտվել։

Մայրը գնում է։ Տիուր նայում է մոր հետեւից։ Եվ հետո, ինչպես միշտ լինում է, լարված վիճակին հաջորդում է թուլացում։ Նա նստում է, ո՛չ, փլվում է բազկաթոռին և դառն արցունքներ է թափում։

«Տիսարանը խորապես ցնցող է...— բացականչում է մի քննադատ,— վարագույրն իջավ մեռելային լուս-թյան մեջ, կարծես ամեն ինչ քարացել էր այդ արցունքներից — այնքան խորն էր ազդված ողջ սրահը տպավորության անսահման ուժից, իսկ հետո դահլիճը թնդաց ծափահարությունների որոտից և Աղամյանին բեմ կանչելու աղմուկից»<sup>110</sup>.

Ոչ թե որդիական զղում էր, հարազատի հասցրած վիրավորանքի համար թափված արցունք, այլ սրտակեղեք ցավ կորստի համար, վերջնական կորստի, մորը, հարազատ մորը կորցնելու համար։ Իմաստով սա նույնն է, ինչ որ բեմ բեմի վրա տեսարանի վերջվածքը։

Շատ հնարավոր է, որ Աղամյանը մի առանձին կը սկիծ է զրել այս տեսարանի մեջ, հայրենի առասպելների աղղեցությամբ, որտեղ անկաշառ սիրով տոգորված մոր կերպարն է վերստեղծվելու Մանկությունից դաստիարակված ժողովրդական այդ առասպելների զորեղ աղղեցությամբ, ընտելացած արդեն այն մտքին, որ կյանքում ամեն ինչ կարող է ծախութ լինել, բացի մայրական սիրուց, Աղամյանը պետք է որ այս պատկերում արտահայտեր այն անհնարին գժիւարությունը, որ ապրում է Հերոսն իր մոր իսկական կերպարանքը ճանաչելիս: Չկարողանալով հաշտվել այն մտքի հետ, որ մայրն էլ կարող է լինել նույնը, ինչ որ մյոււները, իր ամբողջ գարշելի շրջապատը, արտիստն այնպիսի հույզ է զրել իր խաղի մեջ և արտահայտած միտքը կարողացել է հասցնել ընդհանրացման այնպիսի բարձր լարվածության, որ ամեն ինչ, և՛ խոսք, և՛ ձայն, և՛ շարժում, և՛ պահվածք, և՛ աշքերի արտահայտություն — ամեն ինչ, ամեն ինչ անցել է դահլիճ, որպես հույզի մի թըրթիու, դիպել մարդկանց սրտի ամենանուրբ լարերին, մի պահ ստիպել շունչները պահել, և ապա արտահայտվել հիացման որոտընդուստ ծափերի ու կանչերի միջով:

Եիրվանդաղեն ասում է. Աղամյանի խաղը «այնպիսի խորը տպալորություն ներգործեց մեզ վրա, որ երբ վարագույրը ընկավ, մենք մի քանի վայրկյան մնացինք հափշտակված դրության մեջ, մինչև որ մեր հավանությունը կարտահայտեինք անկեղծ ծափահարությամբ» <sup>111</sup>:

Եիրվանդաղեն մեկն էր նրանցից, որ քննադատում էր Աղամյանին այդ տեսարանը Եեթսպիրից տարբեր և փոփոխված վերջավորությամբ խաղալու համար: Հետաքրքիրն այն է, որ այդ փոփոխված վերջավորությունից հետո Եիրվանդաղեն այնուամենայնիվ այնքան

է տպավորվել, որ անմիջապես շի ծափահարել: Նշանակում է այն, ինչ մտածել է դերասանը, գտնի է իր հրաշալի իրականացումը: Հարցը միայն խոր տպավորության մի վերաբերում, այլ նրան, թե ինչպես իր խաղով հարկադրել է մտածել, շարժել միտքը և մի պահ, մինչև հանդիսատեսը փորձ կաներ մտքով հասնելու դերասանի երկակայության առաջարկած անընդապասելի թոփշի ետևից՝ իջնող վարագույրը հիշեցրել է հանդիսատեսի բնական պարտքը՝ ծափահարությամբ, գնահատել խաղը:

\* \* \*

Կանդ առնենք ողբերգության վերջին պատկերի վրա: Պահպանված տվյալները խիստ սակավաթիւլ են և, այնուամենայնիվ, ինչպես դրանք՝ մի քանի կցկտուր տնդեկությունները, այնպես էլ այդ տեսարանը պահանջում է ուշադրություն, քանի որ այստեղ են գալիս և փնջվում ողբերգության սկզբում արծակված թելերը:

Այս տեսարանի կապակցությամբ մի լուրջ դիտողություն է արվել արտիստին:

Երբ Համլետը, արդեն վիրավորված, տեսնում է, որ մայրը մեռնում է, նետվում է գեպի կլավդիսը, սրահար է անում նրան, ապա ցած գցում գահից, ստիպում թագավորին՝ խմել ուրիշների համար իր իսկ պատրաստած թույնը: Չույկոն ասում է, թե Աղամյան-Համլետը վերցնում էր թագը, մատենում Հորացիոյին, մեռնում՝ սեղմելով այն իր կրծքին: Մի այլ քննադատ, որի անունը մեզ հայտնի չէ, այսպես է նկարագրում. ռվերջին տեսարանում Համլետ-Աղամյանը սրահարելով թագավորին, նրա զլսից հանում է թագը և սեղմում կրծքին մինչև վերջին շոմացը, ասես հույս ունենալով, թե դեռ պետք է ապրի և կրի այն, և միայն վերջին շունչը

փշնլիս, Յորտինբրասի վերադարձից հետո թագը հանձնում է Հորացիոյին։ Չույկոն գտնում է այդ ռանցազող և մտահղացման կողմից շնչին»<sup>112</sup>։ Ոչ մի բացատրություն չի տալիս։ Իսկ մյուս քննադատը փորձում է իր առարկությունը հիմնավորել. «Ես տեսել եմ, թե ինչպես շատ ուրիշ զերասաններ թագավորի գլխից թաղթ պոկել նետել են ցած, իբր թե ցուց տալով, որ արժան չէ թագավորը կրելու այն։ Դա ինձ համար հասկանալի է։ Այդ տեսարանի կատարմամբ պ-ն Ադամյանը հանդիսատեսին ստիպում է մտածել, որ Համլետը թագավորին սպանեց ոչ թե հոր վրեժը լուծելու, այլ դիմավորապես թագին տիրանալու համար»<sup>113</sup>.

Ստիպած ենք այս հարցի վրա կանգ առնել։

Համլետը հումանիստ է։ Այս ճիշտ է։ Բայց Շեքսպիրի դարաշրջանի հումանիստ։ Հետեապես, մտածել, որ Համլետը եթե պայթարի մեջ էր Կլավդիոսի հետ, սպա նա հակագահական էր՝ կլինի ոչ-պատմական մատեցում։ Համլետը Կլավդիոսի և նրա նմանների թագավորության դեմ էր։ Ոչ նրա հումանիզմը, ոչ էլ կյանքի երևույթները ըմբռնելու և բացատրելու աստիճանը չէին հանգել այն մտքին, որ գահի առկայությունն ընկալվեր որպես հասարակական շարիքի ընդհանրացած գումար։ Նա դեմ էր Կլավդիոսի նման թագավորին, բայց դեմ չէր այնպիսի թագավորի, ինչպիսին եղել էր իր հայրը, և, իհարկե, ոչ նրա համար միայն, որ դա իր հայրն է եղել։ Դրանով էլ պետք է բացատրել նրա ուրախությունը մահից առաջ, որ Դանիայի գահը Յորտինբրասին պետք է հասնի, ծիս Համլետը, ասենք թե, ողջ մնար, չէ՞ր գրավելու հոր գահը, որին Կլավդիոսը տեր էր կանգնել իսկապես ապօրինաբար։ Ի դեպ, ողբերգության մեջ մի տեղ Համլետն ասում է, որ հորեղբարը խցկվել է իր և հոր արանքը։ Բայց սա ի միշտ այլոց։

ԽՀԱՐԿԵ, նա բարձրանալու էր գահ և թագավորելու էր իր ձգտումների համեմատ։ Օրինակ, ԲԵԼԻՆԱԿԻՒՆ չէր կասկածում, որ նա ողջ մնալու գեպքում թագավորելու է։

Թվում է, թե այս հարցի շուրջը վիճելն ավելորդ է։ Այլ հարց է, թե Համլետի պայքարը պինսում գահի համար է, իհարկե, ո՞չ Ոչ մի դեպքում։ Այդ պայքարը ավելի լայն, ավելի մեծ իմաստ է բովանգակում։ Նվազեթիւնը մի դեպքում սկսել է Հորացիուին՝ Ֆորտինբասին հանձնելու համար, իսկ երրորդ դեպքում դրել է Հորացիուի գլխին, ապա դա գահակիրության ապացուց չէ, այլ դարձյալ նրա, որ թագավորությունը, այսինքն՝ Երկիրն ու ժողովուրդն ազատվեցին այնպիսի տիրակալից, ինչպիսին Կլավդիոսն է։

Սա հին արմատներ ունի։

Ով ծանոթ է «Համլետի» բեմական պատմությանը, նա անպայման կհիշի, որ մինչև 17-րդ դարի կեսերը, նույնիսկ ավելի, Ենքսակիրի ողբերգությունը մեկնարանվում էր հենց այդպես, որպես հատուցման ողբերգություն։ Օրինակ՝ Գարրիկը այդ լուսարանության կողմնակիցներից էր, նախ՝ նա Ենքսակիրից տարբեր վերջվածք էր հորինել ներկայացման համար, որտեղ, Կլավդիոսին սպանելուց հետո, մեռնում էր ինքնակամ՝ նետվելով կաերտի սրի վրա։ Երկրորդ՝ մահացու վիրավորված, Հորացիոյի և կաերտի ձեռքերը միացնում էր։ Առաջինը նրա աշխում անձնավորում էր օրինավորություն, երկրորդը՝ պարտքի և պատվի ասպետական ըմբռունում <sup>114</sup>, Համլետը օրհնում և բարեմաղթում էր նրանց թագավորելու։ Այդպես էր Գարրիկը խաղում։ Կարևորն այն է, որ նա այդպես էր ըմբռունում ողբերգությունն ընդհանրապես, այնպես որ դա, թեկուզ

Հավելումով, նրա ընդհանուր ըմբռնման մի մասն էր դառնում, ավելի ստույգ՝ նրա ստեղծած կերպարի բուն նապատակետը։ Այդ նույնը չի կարելի ասել Աղամյանի մասին, մանավանդ որ և՛ պիեսի, և՛ կերպարի նրա ըմբռնումը բոլորովին այլ է և թագի հետ կապված մանրամասնը պետք է դիտվի իբրև արդարության համար մղված պայքարի մի արտահայտություն։ Պայքար բոլոր ճակատներում, հանուն արդարության, որի իշխանությունը, Աղամյան—Համլետի կարծիքով, պետք է տարածվի կյանքի բոլոր ծալքերի վրա, բոլոր ասպարեզներում, դրանց մեջ՝ նաև գահակալության։

Մի օրինակ էլ հիշենք բեմական պատմությունից։

Սամոյլովը սրահար է անում գահին բազմած կլավդիոսին, հետո, օձիքից բռնելով, թույնը լեցնում էր նրա թերանը և զլսիվայր ցած զցում, իսկ ինքը նստում էր սճրագործից մաքրված գահին։ Ո՞ւմ մտքով կանցնի, թե Սամոյլովի Համլետը մի մեծ ողբերգություն ապրեց ու տառապեց՝ հոր գահին տիրանալու համար։ Պետք է նկատի առնվի դերասանի ըմբռնումը իր ամբողջության մեջ, և տվյալ մասը քննության առնվի դրա համեմատ։

Հիշենք Համլետի և Հորացիոյի առաջին հանդիպումը։ Հորացիոն թագավորի մասին ասում է.

Ես տեսել եմ երան։ Ազնիվ քագավոր էր նա։

Համլետը խմբագրում է.

Մարդ էր կատարյալ, այս բառի բուն  
նշանակությամբ։

Սա վճռական ուղղում է։ Հումանիստական գաղաւարներով դաստիարակված Համլետը, բնական է, որ

ամենքի մեջ և ամենից առաջ, պետք է որոներ մարդուն՝ Հովանիստի համար այդ հարցի պարզաբանումն ունի, առաջնային նշանակություն:

Վերհիշենք մի տեսարան ևս:

Համեստի մոտ են գալիս Ռոգենկրանցը և Հիւդեա-տերնը:

Համեստը հիանում է մարդ-արարածով։ Այստեղ, ի դեպ, մի նուրբ կետ կա, որ շեքսպիրագետները չեն կարողացել բացատրել:

«Ինչ օրինակելի ստեղծագործություն է մարդը, որը բան բարեծնունդ է յուր խելքով։ որպես անսահման զանազան են նրա ընդունակությունները, որքան զմայլելի, գեղեցիկ է նա դեմքով և շարժվածքով, ինչպես նա դործով նման է հրեշտակին, իսկ ըմբռնողությամբ՝ աստծուն։ Նա զարդ է տիեզերքի, ստեղծագործության թագը...»։ Եվ հանկարծ, զրանից հետո անմիջապես, առանց որևէ հիմնավորված անցման, ասում է. որայց այնուամենային ինձ համար նա կատարելագործյալ փոշի է։ Մարդը ինձ չէ դուր գալիս։

Սրա բացատրությունը ոչ մի գրքում չենք հանդիպել։ Չգիտենք, թե ինչպես է Ադամյանը այդ անցումը կատարել։ Ուշի-ուշով հետևել ենք մեր տեսած Համելնուներին և դրա պատասխանը շնոր ստացել հայ և ու միայն հայ Համեստների խալից։ Բացի անգիտական ոգբերգու Մայկլ Ռեյդրեվից, որի խաղը տեսանք էենինգրադում, ուր Ստրադֆորդի շեքսպիրյան մեմորիալ թատրոնը ներկայացուամներ էր տալիս։ Նա կատարում էր այսպես. մենախոսության այն հատվածը, որ վերաբերում է մարդու փառարանմանը, ասում էր ոգեորված, այնքան հափշտակված, որ վերանալով՝ մոռացել էր, թե իր կողքին մարդ կա։ Բայց հետո, երբ հանկարծ հայացքն ընկնում է ընկերներին, աշխից ու ճախից կանգ-

նած այդ երկու երկերեսանիներին, գեմքի արտահայտությունն անմիջապես փոխվում է, կարծես կամենում էր առել — «սրա՞նք էլ են մարդ, սրա՞նք էլ պետք է համարվին տիեզերքի զարդը», և դրա ազդեցության տակ՝ խոսքի շարունակությանը անսպասելի կերպով հակառակ ուղղություն էր տալիս:

Այս խաղը հիշեցինք՝ ցույց տալու համար, որ Համելետը մարդկանց բաժանում էր երկու խմբի. մի խմբումն էին Պոլոնիուար, Կլավդիոսը, Ռողենկրանցը, Հիլդերշտերնը, մյուսի մեջ՝ ինքը, Հորացիոն, հանգուցյալ հայրը: Մարդը մարդ է նրա համար՝ անկախ կյանքում իրա զրաված դիրքից, լինի իր հոր նման թագավոր, թե Հորացիոյի պես ուսանող հնչէ ներկայացնում իրենից որպես մարդ, ո՞ր խմբի մեջ է, որտեղ հայրն էր, իսկ այժմ ինքը և Հորացիոն, թե՝ Կլավդիոսի, Պոլոնիուարի և սրանց նմանների հետ: Ուրեմն հարցը այն չէ, թե ինչի տեր է մարդը, արքունիքի՝, խրճիթի՝, այլ այն՝ թե մարդը մարդ է, թե ոչ:

Աղամյանի խաղում թագը խորհրդանիշ է:

Բոլորովին պատահական չէ, ինչպես արդեն ասել ենք, որ Եեթսպիրի հերոսը արքայազն է: Նա թագաժառանգ է, բայց նրա մղած պայքարը անձնական շահերի ոլորտից բարձր է: Համլետի պայքարը թագավորի գեմ պայքար է մարդկության համար, պայքար է մարդկայնության համար: Այդպես է մարմնավորել Աղամյանը Համլետին: Յարիշկինն առարկելով այն շեթսպիրագիներին, որոնք Համլետին համարում են կամազուրկ և սառը եսասեր, գրում է. «Աղամյանն իր գեղարվեստական խաղով ապացուցանում է հակառակը. — Նրա Համլետը ալտորուխստ է, ուժեղ կամքի տեր, մի մարդ, որ սիրում է և՛ ծնողներին, և՛ բարեկամներին, և՛ բովանդակ աշխարհը, մի մարդ, որ օժտված է մաքուր բանա-

կանությամբ, որ անմտաբար ոշինչ չի անում և այնքան տպավորվող է, որ եթե հետապնդում է որևէ նպատակ, այլևս ամեն ինչ զոհում է այդ նպատակին հասնելու համար»<sup>115</sup>, Եվ եթե մենք Աղամյանի Համլետին պայքարող ենք համարում, ապա երբեք շենք մտածում, թե պիեսում նրա պայքարը դահի համար է: Բայց սյուժեի, նա պայքարում է հոր վրեժը լուծելու համար, ըստ գաղափարի՝ բռնության և կեղծիքի դեմ՝ հանուն մարդկայնության: Եվ եթե մենք դասում ենք նրան պայքարող և ոչ թե հայնցող Համլետների շարքը, ապա նկատի ունենք նրա էության բուռն զրուցումները. ամեն ինչ զործուն արտահայտություն ունի նրա մոտ — և' սերը, և' հիասթափությունը, և' վրդովմունքը, և' ոգևորությունը, և' անբավականությունը: Այս չի նշանակում, թե նա մեղմության պահեր չունի կամ երբեք խաղաղ չէ, ինչպես չէ, այդ էլ կա, մանավանդ որ նա հակազրությունների սիրահար՝ խաղը կառուցում է ինչպես ուժեղ անցումների, այնպես էլ հոգեկան տարրեր վիճակների նուրբ հյուսվածքի վրա:

Սերը Համլետի էությունն է: Դա նրա համար նույնն է, ինչ և ապրելը: Միրով մտավ կյանք, բայց սեր չըգտած՝ հեռացավ աշխարհից: Մայրն ապերախտ գտնըվեց, Օֆելիան այն կինը չէր, որ պետք էր նրան. Օֆելիան շատ էր հեզ և հնազանդ տիրող բարքերի հանդեպ: Կարելի է պատկերացնել, թե ի՞նչ կկատարվեր, եթե Համլետի կողքին Օֆելիայի փոխարեն Դեղդեմոնան լիներ: Բայց դա այնպես, ի միջի այլոց: Զկարողանալով հրաժարվել սիրուց, Համլետը սերը սրտում՝ անողոք պայքար սկսեց շրջապատի դեմ: Պայքար հանուն սիրո, հանուն այն կյանքի, ուր մարդկանց փոխարարեցությունների նշանաբանը սերն է լինելու Եվ ինչ միամտություն՝ Համլետին թուլամորթ անվանել: Համլետի

կամքի ուժը, այդ կամքի շափանիշը Օֆելիայի նկատ-  
մամբ բռնած դիրքն է։ Որքան հեշտ կլիներ Համլետի-  
համար, եթե նա աշխարհի դասնություններից հանգիստ  
գտներ սիրած կնոջ գրկում։ Բայց գաղափարը նախ և  
առաջ Համլետի մարդկայնությունն իր իսկ հավատի  
մեջ է դնալի մարդը, իր իսկ սիրո մեջ։

Եթե Կավղիոսի ոճրագործության հաստատումը  
Աղամյան—Համլետի աշքերից արցունքներ խլեց, որով-  
հետև դա խորտակիլ հարված էր այն սիրույն ու հա-  
վատին, որ նա տածում էր դեպի մարդը, առա կարելի  
է պատկերացնել, թե որքան սիրառատ էր նա, որ որա-  
նից հետո էլ ուժ չգտավ մեջը, որպեսզի արցունք  
Շափինը մոր անկումը տեսնելով։ Որքան քնքուշ է եղել  
նա Օֆելիայի հետ «կինել թե վինելուց» հետո, նույն-  
քան, դեռ ավելի դաժան՝ երբ հիասթափվել է նրանից։  
Այդ տեսարաններում Աղամյան—Համլետը իրոք մոտ է  
եղել խելագարության։

Վերադառնանք թագին։

Մի՞թե դերասանը շի կամեցնել ասել, թե ինչքան  
իղձեր կան, որոնց կենսագործումը կապված է կյան-  
քում իրավունք և հնարավորություն ունենալու հետ։  
Իղձեր ոչ թե անձնական, այլ մարդկության բախտի  
հետ կապված։ Զի՞ կամեցնել արդյոք Աղամյան—Համլե-  
տը դրանով ասել, թե ահա ովքեր պետք է կյանքը տնօ-  
րինողներ լինեն — Համլետի նման մարդը, իսկական,  
ճշմարիտ մարդը։

Այս կապակցությամբ արժե հիշել այստեղ Թելինսկու  
խոսքը՝ Համլետի մասին։

«Չգիտենք, թե արդյոք նա կլինե՞ր մեծ թագավոր,  
որը կոչված էր դարաշրջան կազմելու իր ժողովրդի-  
կյանքում, սակայն գիտենք, որ երջանկացնել այն ամե-

Նր, ինչ իրենից է կախված և ընթացք տալ ամեն բարի գործի՝ նրա համար նշանակում էր թագավորելը<sup>116</sup>.

Համլետի և Կլավդիոսի մենամարտը այլարանական իմաստով հենց այդ էլ նշանակում է, եթե մենք ընդունում ենք, որ հոր սպանությունը և Համլետի վրիժառությունը լոկ առիթ է մարդկային ճակատագրերի մասին խորհրդածելու, ուրեմն պետք է ենթադրել, որ Համլետ—Ազամյանը մոտ էր Շեքսպիրին նաև այն տեսարանում, երբ թագը սեղմել էր կրծքին:

Այս էլ նկատենք, որ թագի մանրամասնը Ազամյանի խաղում մեր թատերադիտության մեջ դտել է և այլ բացարարություն. «Թագի մոմենտով նա ուզում էր հասկացնել, որ մեռնում է իր սիրելի հոր կերպարանքը աշխի առաջ ունենալով»<sup>117</sup>; Թերեւս ավելի ճիշտ լինի ասել, թե ինքը թագը փրկեց անարդանքից:

Ի միջի այլոց նկատենք, որ թագի հետ կապված ու թե մանրամասնը, այլ նրա իմաստը երբեմն-երբեմն արտահայտություն է գտնել «Համլետի» նաև սովորական բնմադրություններում:

«Հախթանգովյան անդրանիկ բեմադրության Համլետը, «լինել թե լինել» բառերն ասելիս, մատը շնչառակի զարկում էր դահին, որ նշանակում էր, թե՝ դահ բարձրանալո՞ւ էր, թե ոչ: Իմաստալի մենախոսության գուհի հացումն է սա, որի վրա շարժեն կանգ առնելի թալց ահա «Համլետի» լենինգրադյան բեմադրությունը, Դուտինիկովի Համլետը, որի մասին քննադատությունը գրել է, որ նա «մահանում էր ինչպես պետական գործիչ՝ մտահոգված և՝ իր հիշատակով, և՝ պետության ճակատագրով»<sup>118</sup>:

Այդ երկու օրինակը բերինք ցույց տալու համար, որ այդ հարցը մինչև հիմա էլ զբաղեցնում է Համլետի գերակատարներին: Դրանից հետո ինչո՞ւ զարմանալ,

որ մի դերասան, մեղանից շատ տասնամյակներ առաջ ապրած, դրա մասին նույնպես մտածել է, մանավանդ որ նա այն համոզման էր, ինչ Գյոթեի Վիլհելմ Մեստերը, որի Համլետը «կցանկանար թագավորել, որպեսզի բարյաց բարությանը դեմ խոշնողութեր շինին»<sup>119:</sup>

Բացասել կերպարի այս կողմն ընդհանրապես՝ նշանակում է հարցի քննությունը զրկել պատմական հիմքերից։ Հումանիզմը, որի ներկայացուցիչն էր Համլետը, դահը չեր ժխտում, բայց երազում էր նրա վրա տեսնել վեհ գաղափարներով ու ձգտումներով առաջնորդվող մարդ։ Եթե դահը դառնում է ձգտում, բեմական կերպարի կյանքը ղեկավարող նշանաբան, իհարկե, անցանկալի է, բայց եթե դա արդարության համար մղված բազում դրսերումներից մեկն է, ապա ոչ մի դեպքում դա չի հակասի պատմականությանը, թեև, մեզ թվում է, որ հիմա արդեն դրա վրա թեկուզ և փոքր շեշտադրում անելու հարկ չկա, Սակայն ամեննեին ճիշտ չի լինի, եթե մեր այժմյան տեսակետից պահանջներ ներկայացնենք մի դերասանի, որը սրանից ավելի քան յոթանասուն տարի առաջ է խաղացել։ Այլ կերպ՝ մեր մոտեցումը կլինի ոչ պատմական, կշտամբանքը՝ ոչ միայն խիստ, այլև անտեղի։

\* \* \*

Աղամյանի Համլետն անցնում է հիասթափությունների և ոգաւրությունների, թախիծի և բերկրանքի, կառկածի և համոզվածության միջով։ մեկ կորցնում է, մեկ՝ զտնում, բայց չի հաշտվում իր ձգտումների կործանման հետ։ Նրա կյանքը դրականի որոնումն է, այդ դրականի հաստատումը։

Աղամյանի բոլոր հերոսները, բայց ամենից առաջ

Համլետը, իրենց ձգտումների հաստատմամբ կրքոտ վերաբերմունքի են կոչել դեպի արդիականությունը:

Արվեստի մի խիստ թանկագին հատկանիշ է սա:

Աղամյանի Համլետը գործուն Համլետ է: Դա բեմական բանավեճ է հայեցողական Համլետների դեմ: Այդ վեճը զերասանը մղել է ոչ լոկ այն պատճառով, որ այդպես է ընկալել և ըմբռնել շեքսպիրյան կերպարը: Նշանակալի զեր է խաղացել ժամանակը:

Ինուս ինչպես հարկն է ուսումնասիրված չէ աղամյանական Համլետի աստիճանական զարդացումը: Ինը տարի՝ 1880-ից 1888 թվականը, ուրեմն շուրջ մի տասնամյակ նա խաղացել է Համլետ: Մի առիթով, իր բարեկամներից մեկին ասել է. «Տաս տարի Համլետ ներկայացրի. ներկայացնելի առաջ տաս տարի ուսումնասիրեցի և մինչև այսօր ուսումնասիրում եմ դեռ այդ տիպարը»: Սա ցույց է տալիս, որ իր աշխատանքը Համլետի կերպարի վրա արտիստը ավարտված չի համարել: Քանի ամյա որոնումները և ուսումնասիրությունը բավական չեն եղել բոլոր փակ դռները բանալու համար:

Տարիների ընթացքում փոխվել է նրա Համլետը: Առանձին տարրերությունների մասին խոսք եղել է, իսկ կերպարի ընդհանուր զարգացման վերաբերյալ, թե ինչ տարրերություններ է կրել կերպարը ընդհանրապես՝ ոչինչ լի ասված: Ուսումնասիրությունը իրավունք է տալիս մտածելու, որ տարիների ընթացքում նրա Համլետի ակտիվությունն աճել է, Դա մենք հակված ենք բացարելու ժամանակի ազդեցությամբ:

Երբ էլ Աղամյանը Համլետ խաղար՝ այդ կլիներ ակտիվ Համլետու թերևս պակաս, քան հիմա, բայց ակտիվ, որպէս դրա հիմքերը, անկախ ժամանակից, գտել ու տեսել է հենց Շեքսպիրի մոտ: Բայց այն հա-

տիկը, որ կա Եերսպիրի մոտ, դերասանի խաղում աճել-  
փարթամացել է, հասակ առել:

Եթև ճիշտ է, որ Աղամյանն իր ժամանակով ապրող  
արվեստագետ էր,— իսկ ու, իհարկե, ճիշտ է,— ապա  
ուրեմն այլ կերպ չէր էլ կարող լինելու նա զհջումների  
ճանապարհ շի բռնելու Նրա Համլետը թախծոտ է, որով-  
հետև այդպես է նաև պիեսում: Նրա Համլետն ունի  
անվճռուականության սղաներ, որովհետև այդպես է պիե-  
սում: Նրա Համլետը երրեմն կասկածամիտ է, երրեմն  
առատանվող, որովհետև այդպես է պիեսում: Այդ բոլորի  
կողքին՝ նրա Համլետը ակտիվ է, անհաշու Այդպես է  
նաև պիեսում: Բայց թերևս ակտիվությունը, անհաշ-  
տությունը այլ ժամանակներում, դերասանի մարմնա-  
վորման մեջ, այդ շափերով շեշտադրման շննթարկվեր,  
եթե նա, որպես բեմական կերպար, ծնունդ շառներ և  
լմշակվեր ունակցիայի տարիներին:

Երբ մարդիկ հաշտվում էին իրենց ապրած մոայլ  
իրականության հետ, հասկանալի չէ, որ Աղամյանի  
Համլետը պետք է անհաշտ լիներ: Աղամյանը, Համլետի  
միջոցով, անհաշտության օրինակ է տալիս: Երբ հա-  
սարակական անտարբերությունը դարձել էր տիրապե-  
տող, պարզ չէ, որ Աղամյանի Համլետը պետք է լիներ  
ոչ միայն ոչ-անտարբեր, այլև ակտիվ, բուռն, միշա-  
մբուռող:

Մի խոսքով, այն ըմբռոնումը, որին հանգել էր գե-  
րասանը նյութի ուսումնասիրության ընթացքում, ժա-  
մանակի աղղեցության ներքո հարստացել է նոր երանգ-  
ներով և գծերով:

\* \* \*

Ս. Մելիքսեթյանն իր ակնարկում Աղամյանի խաղից  
հետևյալ ուշագրավ կտորն է հիշատակում. «Մենամար-

ուից հետո, երբ Աղամյան-Համլետն արդեն վիրավորված է, չկա նախկին լուսավառ ու կենսախինդ երիտարազը: Չկա այլևս եռանդն ու կորովը: Նա կարծեք ծերացել է»<sup>120</sup>,

Թե ո՞րտեղից է թատերագիտը քաղել այս տվյալը՝ մեզ հայտնի չէ: Մի անգամ էլ նայեցինք մեր ձեռքի տակ եղած հսկայական նյութը, և այդպիսի վկայության շհանդիպեցինք: Սակայն ինչ փույթ, կարևորն այն է, որ կա, պահպանվել է:

Սերացել է...

Համլետը, որ ներկայացման սկզբում հայտնվում էր իբրև պատանի՝ վերջում ծերանում է:

Նորություն է, կարևոր ու էական նորություն: Եվ որքան բնորոշ աղամյանական մեկնարանության համար: Այո, հենց նրա, Աղամյանի համար այնքան բնութագրից երբ առաջին անգամ լսում եմ՝ հանկարծակիի ես դալիս, այնպես է քեզ ցնցում, բայց հետո, բավական է խորանաս, որպեսզի շատ շուտ համոզվես, որ այդպես էլ պետք է լիներ, միայն և միայն այդպես, և ոչ ուրիշ է երապ:

Բուռն ու անմիջական՝ Աղամյանի Համլետը հոգեկան եռանդ է դրել ամեն մի գործողության մեջ, և այն պահին, երբ տիսրել է, և այն պահին, երբ քնքուշ փարզել է, և այն պահին, երբ հանձնվել է մտքերի հորձանքին, և այն պահին, երբ պոռթկացել է զայրագին, և այն պահին, երբ դառն արցունք է թափել:

Սերացել է...

Սերացել է վշտից, ցավից ու կսկծից, ծերացել է միտքը աշխարհի շարի ու բարու վրա շարշրկելուց: Սերացել է հիսութափվելուց: Սերացել է մարդկային կորուստներ տալուց: Սերացել է ձգումներից, որոնց հանապարհին տեսել է հազար արգելք, հազար քար ու



Պերաս Աղամյան



պատվարի Սերացել է ուժերի պրկումից, այն գերագույն լարումից, որ մարդուն բերում-հասցնում է ղեղի նպաստակ, բայց խլելով նրա ունեցած հոգեկան բոլոր եռանդը Սերացել է միայնակ լինելուց: Սերացել է նրանից, որ հասկացել է միայնակ մարդու անզորությունը ամբողջ գարշ շրջապատի դիմաց, իր արդար, բայց անհավասար պատերազմը սահի և կեղծիթի, բըռնության ու անմարդկայնության դեմ:

Ի՞նչն է զլխավորը:

Համլետի ողբերգական վախճանը, Աղամյանի կատարմամբ, ցնցիլ է հանդիսատեսին, բայց լի ճնշել: Այս միտքը հաստատելու համար կան բավականաշափավալներ, որոնցից լավագույնը թողել է Լեոն Թալանթարը: Դերասանի ժամանակակիցների թողած վկայությունների հիման վրա նա վերականգնել է Աղամյան—Համլետի մահվան տեսարանը:

«Ո՞չ, ո՛չ, դու պետք է ապրիս», — Աղամյանն ասում էր այս խոսքերը պայծառացած ղեմքով: Ամբողջ ներկայացման ընթացքում նրա թախծուտ աշքերը լցվում էին ժամանակի փայլով: Մերձիմահ՝ նա արդեն ընկած էր զետին՝ պալատականներով շրջապատված: սակայն այդ խոսքերը արտասաննելիս նա՝ հենվելով շրջապատողների ձեռքերին, ամրող մարմնով ձգտում էր ղեպի վեր, ղեպի բարձրը, և անում էր այդ այնպիսի արտահայտիչ ուժով, որ կարծես թե հենց հանդիսատեսի աշքի առաջ ֆիզիկապես խոչըրանում, դառնում էր մի հակա արձան... Զկար ոչ մի կաթիլ թախիծ և քրիստոնեական հաշտվողականության ոչ մի նշույլ: Կար ամուր և հաստատ համատ ղեպի կյանքը, ղեպի ճշմարիտը»:

Պիեսի այն թարգմանության մեջ, որով խաղում էր Աղամյանը, Յորտինքրասը շէր հայտնվում: Այդպես էլ

խաղացել է Աղամյանն ընդհանրապես: Եվ դրա կարիքը շկար, որովհետև «Յորտինրասի գալուստը նախահափշտակում էր ինքը՝ Համլետ-Աղամյանը, վասնզի կականք, կա նշմարտություն» <sup>121:</sup>

Այդպես էր Աղամյանի ոչ միայն Համլետը նույնը կարելի է ասել նաև նրա մյուս կերպարների մասին: Ոչ մի հուսահատություն: Ընդհակառակը, նա կարողանում էր իր հերոսների սրտագին, բայց մռայլ պատմությունը ներկայացնել այնպես, որ այն ունի ու կորովը, որից զրկվում է հերոսն իր կյանքի վերջում, անցնի հանդիսատեսին, թևավորի նրան:

Ինչի՞ն վերապրել այդ:

Արտիստի վարպետությանը, Անշուշտ: Այն էլ բարձր վարպետությանը: Բայց դա ունի այնքան նշանակություն, որքան այդ կատարյալ վարպետությունը հիմք և հնարավորություն է տվել արտահայտելու մի մեծ և բոլվանդակալի կյանք, վսեմ գաղափարներ, մաքուող կյանք, որն ավարտվում է կործանումով, բայց բարողական հաղթանակ տարած:

Հանդիսատեսը ներկայացման ընթացքում այնքան է սիրում ու ջնմանում Համլետի նկատմամբ, որ նրա հաճվան համար չի կարող ցավ շապրեցնել Բայց այն, ինչ տեսնում է իր աշքի առջև, երբ. Համլետը կյանք մտավ ինչպես մի սովորական պատանի և կյանքի շրապտույտներում, ահեղ պայթարում, ընկնելով ու բարձրանալով կոփուկց, ամրացավ, ստացավ հերոսական նկարագիր: Եվ ինչպես չհիշենք այստեղ՝ մի ժամանակակցի հիացական խոստովանությունը. համեմատելով Աղամյանին Սալվինիի և Ռոսսիի հետ, ասելով, թե նրա և՛ խոսքը, և՛ շարժումը անհամեմատ եռանդուն էին ու կրթութ, նա գտնում է, որ «դրա շնորհիվ էլ ԵԵթուպիրի հերոսը նրա մոտ ստացվեց նշանակալի շափով ավելի

շայտուն, նրա կերպարանքն անեց, մնծացավ, բարձրացավ նրանով հափշտակված և հմայված հանդիսականի աշխարհ առջև։

Մի կողմից հավատ, որ ինքը հանդիսատեսը, սովորական մարդ, նույնպես կարող է այդպիսին լինել, իսկ մյուս կողմից՝ օրինական հպարտություն, որ մարդուն զինում է մեծ գաղափարների համար։ Ինքը չկա, բայց կա գաղափարը, գաղափարը շարունակում է ապրել։ Նրա հետ նաև Համլետի հիշատակը՝ ողայծառ և զորացնողը Այդ մահը կսկիծ է պատճառում, բայց ոչ հուսահատություն, որովհետեւ նրան նախորդել է մի կյանք՝ ոչ զուր, ոչ ապարդյուն։ Ու թեև խորտակված, բայց որոնածը գտած, ճշմարտությունը ճանաշած, ուրեմն և իմաստացած կյանք է դա։ Այդ մահը գործի է կոչում մարդկային բանականությանը, եռանդուն կյանքի հոգեկան կորովը՝ ընդդեմ աշխարհի բոլոր տեսակի շարումների։

\* \* \*

Աղամյանի Համլետի հիշատակը երկար ապրեց մարդկանց երևակայության մեջ, այնքան, ինչքան իրենք՝ դերասանի ժամանակակիցները կյանք ունեցան։

Բոլորին լավ հայտնի է, որ ժամանակակիցներն այդ գերում նրա խաղը համեմատելով աշխարհաճրուշակ մեծությունների խաղի հետ, առավելությունը տվել են Աղամյանին։ Բայց այդպես է եղել ոչ միայն արտիստի կենդանության օրով, այն զարեղ, այն ցնցող տպավորության տակ, որ տարել են իրենց հետ թատրոնից։ Այդ հասկանալի է և այդպես էլ պետք է լիներ։ Այդպես է էսթետիկական մեծ հրճվանքների ներգործությունը։ Քանի կա, և եթե իսկապես մեծ է, իր ազգեցության տակ է պահում, չի թողնում ոչ ոքի՝ նույ-

նիսկ հարեւանելու, ճիշտ այնպես, ինչպես հարազատի մահը կամ բուռն սերը, որ իրենց վրա են գամում մարդու ամբողջ էությունը, ենթարկում այն աստիճան, որու միայն այլևս դրանից գուրս ոշնչի մասին մարդը չի մտածում, այլևս տարօրինակ է թվում, երբ մեկ ուրիշը դրա հետ շառնչվող խնդրով է զրազվում: Սակայն անցնող ժամանակը ընտելացում է բերում, որը միշտ չէ, որ նշանակում է հոգու խորքում բույն դրած զգացմունքի թուլացում, բայց բոլոր դեսպերում կորչում է սրությունը:

Որ Աղամյանի խաղի պատճառած էսթետիկական բավականությունը մեծ է եղել, այդ անկասկած է, մանավանդ որ բոլոր ժամանակակիցներն են այդ վկայում: Թայց այդ ի՞նչ կայծ է ցցել արախստը մարդկանց սբրտերի մեջ, և ինչպես է բոցավառվել այդ կայծը, որ ամեն մի թեթև հիշողությունից հրդեհվել նն հոգիներ, որ ոչ միայն Աղամյանից անմիջապես հետո, այլ նաև շատ տարիներ անց մտարեբել են նույն հիշացմանը, նույն նախապատվությամբ, ինչ դերասանի կյանքի ամենափառաճեղ օրերին:

Երկու հեղինակավոր վկայություն:

Թումանյանը պատմում է.

«Իննսունական թվականների սկզբներին էր Աշխարհանշակակ իտալացի գերասան Ռոսսին եկավ Թիֆլիս: ... «Համլետի» ներկայացման գիշերն էր Ամբողջ Հասսրակությունը անհամբեր սպասում էր վարագույրը բացվելուն, որ Ռոսսու Համլետը համեմատի Աղամյանի Համլետի հետ: Դուրս եկավ Ռոսսին, հսկա դերասանը, Դանիայի գժրախտ ու փիճսոսփա արքայազունը: Հասարակությունը հափշտակված, շունչն իրեն պահած, հետևում էր մեծ ողբերգուին: Դործողությունը վերջացավ: Վարագույրն իշավ: Թատրոնը դդրդաց միահա-

մուռ և անընդհատ ծափահարությունից: Ռոսսին ստիպված մի բանի անգամ բեր դուքս եկավ, մինչև որ հասարակությունը հանգստացավ: Եվ հասարակությունը հանդուտացավ թէ չէ, նույնիսկ Ռոսսաւ թարմ խաղի աշազին տպավորության տակ գրեթե միաձայն արձակեց իր լինուր:

— Սքանչելի է... բայց Աղամյանին չի հասնի: Օս իմ կյանքում, թերեւս երբեք ինձ էնքան հպարտ չեմ զգացել իբրև հայ, ինչպես էն գիշեր»<sup>123</sup>:

Եիրվանդադեն պատմում է.

«Հիշում եմ այսպիսի մի զնպք: Օդեսայի քաղաքային մեծ թատրոնում էին եազում էր Մունե Սյուլին Համլետ: Չուզ նստած էր հայտնի դերասան և անտրեպրենյոր Յորկատին, այդ գեղարվեստավաշտ իտալցին, որին Կովկասը շատ բաներ է պարտ: Այն տեսարանում, երբ Համլետը արտասանում է իր նշանավոր էլինել թե վիճնելը», Յորկատին դարձավ ինձ.

— Դուք հիշո՞ւմ եք Աղամյանին այս տեսարանում:

— Եատ լավ:

— Համեմատո՞ւմ եք:

— Այո:

— Ի՞նչ կասեք:

Անհամենստ լթվալու համար պատասխանեցի:

— Թվում է ինձ, որ Աղամյանը նույնպես լավ էր այդ տեսարանում:


Յորկատին բարբոքվեց:


— Եվ դուք այդ դերասանին այդ դերում կարող եք համեմատել անզուդական Աղամյան—Համլետի հետ: Նա միակ Համլետն էր, միակը,— գոշեց նա ոգևորվելով:

Այսպես էր օտարի կարծիքը Աղամյանի մասին: Եվ որպիսի օտարի, մի մարդու, որ պեսել էր աշխարհի բոլոր հոչակավոր շեքսպիրիստներին»<sup>124</sup>:

Հարկ կա՝ արդյոք այս վկայությունների վրա որևէ  
բան ավելացնել: Հաղիկ թե՛ Եվ արդյոք սա այն գեղգը-  
չէ՝ երբ որևէ բացատրություն, որևէ խոսք դառնում է  
ավելորդ, և միայն փափազում ես մարդկանց կողել —  
ուզում ես՝ խոնարհիր գլուխող, ուզում ես՝ հպարտ ոլա-  
հիր, բայց հանեք գլխարկներդ Աղամյանի անգերադան-  
ցելի Համլետի առաջ:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն





---

Աղամյանի ստեղծագործական կյանքը դադարեց այն-  
քան ողբերգական, որքան նրա մարմնավորած հերոս-  
ներինը։ Դա էլ գեղեցիկ, սխրանքներով ու երազանքնե-  
րով չի մի կյանք էր, որ փշրվեց անողոք իրականության  
ժայռերի վրա։ Եվ մեծ արտիստի կյանքն էլ, ինչպես և  
իր հերոսներինը, զուր շանցավլ։ Ճիշտ է, շատ երազանք-  
ներ անկատար մնացին, բայց արվածն էլ բավական ե-  
ղավ, որ նա հասնի արվեստի բարձումքներին, բար-  
ձումքներ, որ տեսանելի եղան հետո՝ և հեռումներից և այ-  
սօր էլ գերում են մեզ իրենց գեղեցկությամբ, կատարե-  
լությամբ։

Արվեստի անշափելի ոլորտներում մեծ ճանապարհ  
կտրեց Աղամյանը։ Ավելացնենք նաև՝ վերընթաց ճա-  
նապարհ։ Զէ՞ որ բարձումքն սկիզբ է առնում ստորոտ-  
ներից, և դրանք անխուսափելի են, անշրջանցելի, եթե  
պետք է բարձումքին հասնեսու Հետո վերելքը դառնում է՝  
ավելի ու ավելի գմբվարին, բայց կուտակած փորձը և  
այն գիտակցությունը, թե նպատակը մոտ է՝ ոգեշնչում,  
օգնում են հաղթահարելու գժվարությունը։

Իհարկե, Աղամյանի խաղացած բոլոր գերերը արվես-

տի նշանավոր արժեքներ չեն եղել Բայց այդ գերերի, — իսկ դրանց թիվը հասնում է երեք հարյուրի, — մեծագույն մասը աստիճաններ են եղել, որ տարել են նրան դեպի բարձունքները: Մեկն ավելի, մյուսը պակաս, բայց յուրաքանչյուրն իր աներկրա նշանակությունն է ունեցել, Մենք քննության առանք դրանցից մի քանիսը միայն՝ Կորրազո, Ուրիել Ակոստա, Չաչկի, Արքենին, որոնց նշանակությունն առավել մեծ է եղել շեքսպիրյան բարձունքներին հասնելու ճանապարհին:

Ազամյանի ստեղծագործության բարձրակենտերը շերսպիրյան կերպարները եղան: Օթելո, Լիր, Համլետ — ահա այս երեք կերպարները: Ճիշտ է, նա մտածում էր այդ շրջանակից դուրս գալ, խաղալ նաև մի այլակիսի դեր, ինչպիսին Ռիշարդ Երրորդն է<sup>1</sup>: Այդ կերպարը նրան զրադեցրել և հուզել է ոչ պակաս, քան Լիրը: Մտածում էր նաև Մակրեթ խաղալ<sup>2</sup>: Սա տարօրինակ է, որովհետև նա մի առիթով խոսել է այդ գերի և իր արտաքին տըվյալների անհամապատասխանությունից: Ուրեմն առավել ևս հետաքրքիր է: Կթե մտածել է՝ նշանակում է յուրօրինակ լուծում է ենթադրել Ուշագրավ է նաև անզայման Յագո խաղալու նրա ցանկությունը<sup>3</sup>: Ամենայն համանականությամբ, խաղակից Յագոները չեին բավարարել արտիստին, և նա այլ կերպ էր տեսնում կերպարը:

...Հզացումներ, որոնց շուրջը թևածել՝ նրա միտքը, և ո՞վ իմանա, թե ի՞նչ հեռուներ է կտրել: Ամեն ինչ սուզված է անհայտության մեջ: Ինչեւ՝ Ազամյանի Շերսպիրը պարփակվեց Համլետի, Օթելոյի, Լիրի, ահա այս երեք կերպարների մեջ:

Երեք կերպար, բայց ժավալվելու ինչպիսի՝ լայն ասպարեզ, ի՞նչ մեծ ընդգրկում: Տարբեր աշխարհներ, տարբեր դարաշրջաններ, տարբեր բնավորություններ: Շե-

բըսպիրյան տարրերություն։ Ընդհանուրն այն է, որ բուրն էլ բախսան մնջ ևն իրենց շրջապատի հետւ նրանք արդար պատերազմ են մղում, միայնակ մարդու համար անհնար մի կոփվ, որին անխուսափելի հետեւում է ողբերգական վախճանն։

Երեք տարրեր բնամորություն, երեք տարրեր պատմություն, դերասանի ստեղծագործական կամքով, մի գաղափարի շուրջ համախմբված Երկուար գեղեցիկ ձրդուամներով կյանք մտան, բայց իրականությունն ամեն ինչ խառնեց և բարձրագույն երազն իսկ հողին հավասարեցրեց։ Երրորդը քառսից ելավ, բարձրացավ, բայց կյանքի անողոք հարվածների տարափը խլեց ոչ միայն երազը, այլև նրան ծնող միաբը, ու երր պայծառացավ միտքը, նա ընդլվեց այն աշխարհի ապականության գեմ, ուսկից զուրս էր եկել։ Ու շնալած ողբերգական խորտակման, երեքն էլ աշխարհից գնացին, որպես ժարդկության ապառայի համար մաքառողներ։

Աղամյանի խաղացածը իսկական Եեքսպիր էր։ Նրա որով հայ բնեմը տեսավ ու զգաց Եեքսպիրի ճշմարիտ մեծությունը։ Մեղանում նա՝ բացեց Եեքսպիրին։

Իննոսունական թվականներին թումանյանն ասել է. «Եեքսպիրը գարձել է մի շափ՝ ազգերի զարդացման աստիճանը սրոշելու համար։ Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տիգետ է. եթե չի հասկանում, կնշանակի տհաս է. եթե մի լեզու նրա վրա չի դաշիս, կնշանակի տկար է»։ Եեքսպիրը քննություն եղավ և մեր ժողովրդի համար։ Նրան թարգմանելու փորձերը վաղուց են արվել, անցյալ զարդ սկզբներից։ Բայց իսկական Եեքսպիրը հայոց լեզվով հնչեց միայն Հովհաննես Մասեհյանի թարգմանությամբ։ Դեռևս ոչ ոք չի զրադվել Մասեհյանի թարգմանությամբ ինչպես հարկն է, որպեսզի սահմանվի նրա տեղը ոչ միայն հայերեն թարգմա-

նությունների շարքում, այլև ուրիշ լեզուներով թարգ-  
մանված՝ Եեքսպիրի կողքին։ Այդպիս էլ Աղամյանը։  
Թումանյանն ասում է, թե «Հանկարծ մեր բեմի վրա ո-  
րոտաց Եեքսպիրի վիթխարի հանճարը Աղամյանի բե-  
րանով»<sup>4</sup>, Բանաստեղծը դա համարում է մի թոփք, մի  
հանկարծակի թոփքը Եվ եթե Վ. Նեմիրովիչ-Դանչենկո-  
յի նման մի մեծություն ասում է, թե Աղամյանը երե-  
վույթ էր<sup>5</sup>, իսկական առասպեկ՝ ճիշտ է։ Տեղին է նկա-  
տել, որ մինչև հիմա երեսութիւն վայել ուշադրությամբ  
փորձ չի արվել թափանցելու նրա անհատակ խորու-  
թյունները։ Աղամյանին, ինչպիս տեսանք, որպես շե-  
քրսապիրյան դերասանի, ընդունեցին ոռուները և անխոր-  
տակ փառքով պսակեցին ճակատը, և այն էլ մի այնպի-  
սի ժամանակ, երբ նրա կողքին քայլում էին աշխարհա-  
հողակ մեծություններ Եվրոպայից։

Եեքսպիրյան տրադիցիայի հիմնադիրը հայ թատրո-  
նում Աղամյանն է և ինքն էլ մնում է նրա ամենապայ-  
ծառ դեմքը։ Եթե հետո այդ տրադիցիան փայլում ներ-  
կայացուցիչներ տվեց՝ Սիրանույշ, Արելյան, Փափառյան  
և ուրիշներ, ապա նրա համար, որ ճանաւրով դեպի  
Եեքսպիր բաց էր այլևս։

Եեքսպիրի մուտքը հայ թատրոն, այն էլ այդպիսի  
հախուռն թափով, նոր մակարդակի հասցրեց նրան։ Եվ  
այն, որ հանձին Աղամյանի, անզլիական հանճարը դր-  
տավ իր անզուգական մեկնարանին՝ բարձրացրեց մեռ  
թատրոնի հեղինակությունը և տվեց նրան մի նշանակու-  
թյուն, որը երբեք չէր կարող ամփոփիվել մի աղջային  
իրականության մեջ։

Ասում են մի ժողովուրդ, որի գլխով շատ ազնտ ու  
փոթորիկ է անցել, խոսելու, արտահայտվելու մեծ պա-  
հանջ է ունենում։ Աղամյանի հանճարն ահա այդ պա-  
հանջի խտացած արտահայտություններից էր։

\* \* \*

Երկար տարիներ Աղամյանի արվեստը համարվել է ոռմանտիկական, Ալդախիսի կարծիք է հայտնել Գարեգին Լևոնյանը<sup>6</sup>, Նույն համոզմանն էր նաև թատերարվեստի այնպիսի գիտակ, ինչպիսին Լևոն Քալանթարն է<sup>7</sup>: Դա սիսակ է: Աղամյանը ռեալիստ էր: Ռեալիստ ո՞չ ժամանակակից ըմբռնումով, ո՞չ էլ անգամ այն հասկացողությամբ, որով իրեն դրսեորեց այդ ուղղությունը դարավերջին և հատկապես դարասկզբում՝ Գերմանիայում ու Ռուսաստանում:

Այն թյուր կարծիքը, թե Աղամյանը ոռմանտիկ է՝ մի քանի սկատճառ ունի: Նշենք երկուաը:

Մի պատճառը «Մշակի» բոնած գիրքն էր, այն թերթի, որը 80-ական թվականներին մեծ հեղինակություն էր վայելում: Աղամյանի թիֆլիս փոխադրվելու առաջին իսկ օրերից «Մշակը» նրան հայտարարեց ոռմանտիկական ուղղության դերասան: Եվ համառորեն, տարիներ շարունակ, երբ Աղամյանը էապես վերափոխվել էր՝ շեր կամենում իր փակցրած պիտակը վար առնել արվեստագետի ճակատից:

Երկրորդ պատճառը այն հակասությունն էր, որ կար աղամյանականների և սունդուկյանականների միջև: Խոսքը շի վերաբերում այն տարրերությանը, որով բնորոշվում էր մեկի և մյուսի ռեալիզմը, այլ այն պայքարի, որ առաջացավ Աղամյանի գալուց հետո՝ խաղացանկի հարցի շուրջը: Ծիշտ է, որպես արվեստագետ, Աղամյանը սունդուկյանական ռեալիզմի դիրքերի վրա շեր կանգնած: Նա շեր կարող ընդունել այն կենցաղայնությունը, ինչպես և տեղայնացնող կոլորիտը, որով ներկայացվում էին Սունդուկյանի կոմեդիաները: Այդ իմաստով Աղամյանի ռեալիզմը, իհարկե, Սունդուկյանի ռեալիզմը շեր: Բայց սունդուկյանական թատրոնի մի այն-

պիսի գերասան, ինչպիսին Չմշկյանն էր, իր խաղաք-նուլթով բավական մոտ էր Աղամյանին Սահայն նա է, տարածայնության մեջ էր Աղամյանի հետ Նրանց բաժանողը կամ, ավելի ճիշտ, միմյանց հակադրողը այս հարց էր, սունդուկյանցիները ոչ մի կերպ չէին կարողանում և չէին էլ կամենում հաշտվել Աղամյանի մելոդրամատիկական խաղացանկի հետ, որը, արտիստի թիֆլիսյան գործունեության վաղ շրջանում, հեռացնում էր թատրոնը ռեալիստական ոլորտներից: Բայց այդպես էր սկզբում, հատկապես առաջին տարին, իսկ հետո փոխվեց Աղամյանի խաղացանկը և դրա հետ միասին՝ գերասանի խաղառնը: Եթե Աղամյանի արվեստի աստիճանական զարգացումը ուրվագծվելու լինվի՛ ինչ խոսք, որ պետք է նշվի նրա գործունեության նաև ոչ-ռեալիստական փուլը. բայց այն, ինչ բնորոշ է եղել արտիստի բեմական կյանքի սկզբնաշրջանի համար, ինչո՞ւ տարածել հետագա տարիների վրա, մանավանդ, եթե Աղամյանը Աղամյան է դարձել ա՛յդ տարիների ստեղծագործությամբ:

Ահա այդ վաղ ժամանակներում տեղի ունեցած կըրպոտ բախումների տպավորությունն է, որ, տրադիցիայի ուժ առած, շատերին մղել է գեպի հարցի անճիշտ պատկերացում:

Աղամյանի ստեղծագործության քննությամբ աշխատեցինք ցույց տալ, որ նրա ռեալիզմը ոչ միայն իր տեսակով, բնույթով, այլև ընդգրկումով և զարդացման ընթացքներով մի բարդ երևույթ է: Ծնունդ առնելով հայ իրականության մեջ, այն խմբովել է ազգային ձգտումների բուռն դրսնորման տարիներին, բայց աճել և ամրացել է նաև ոռաւական կյանքի պայմաններում, իր մեջ առել այն պահանջները, որ թելագրում էր ոչ միայն միշտավայրը, այլև դարաշրջանը, որ ընդհանուր էր ինչպես

Թուսաստանի, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների համար:

Բացի այդ, Աղամյանի հասուն շրջանի ստեղծագործության ուղղությունը բնորոշելիս ծառանում է մի էական դժվարություն՝ կապված նրա արվեստի ոճական և գեղարվեստա-պատկերային բարդ բնության հետ:

Դժվար չէ, ի՞նարկե, հենվելով դերասանի ռուս քընադատների բազմից հայտնած և հաստատած կարծիքների վրա, եղրակացնել, թե Աղամյանը ոեալիստ ստեղծագործող էր: Բավական է հիշատակել թեկուզ մի քանի այդպիսի որակում:

Համեստի մասին գրված մի թատերախոսականում կարդում ենք հետեւյալը.

«Նրա խաղի զվարակոր արժանիքները, մնացյալ բոլոր արժանիքներից բացի, պարզությունն ու ոեալիզմն են»<sup>8</sup>:

Կորրագոյի կապակցությամբ ասվել է.

«Հարկավո՞ր է արդյոք խոսել այն մասին, որ պ. Աղամյանի խաղն ընդհանրապես աշքի էր ընկնում պարզությամբ և ոեալիկանուրյամբ»<sup>9</sup>:

Նույն Կորրագոյի առթիվ նշվել է.

«Պ. Աղամյանի խաղն այդ դերում աշքի է ընկնում վերին աստիճանի խիստ օրյեկտիվուրյամբ և ոեալիզմով»<sup>10</sup>:

Օթելոյի դերակատարման կապակցությամբ.

«Յուրաքանչյուր քույլը, յուրաքանչյուր շարժումը, զիմախաղը և, վիրշարդիս, ձայնը հանդիսատեսին զարմացնում են ոեալ, ճշմարտացի-գեղարվեստական ուղղությամբ»<sup>11</sup>:

Ուրիելի դերակատարման առիթով.

«Ռախից մինչև զլովս ոեալիստ պ. Աղամյանը այս տեսարաններում հասնում է բացառիկ արդյունքի»<sup>12</sup>:

Համեստի կատարման առիթով.

«Աղամյանի տաղանդի հատկանիշը դիմք ամեն մի դերի օրյեկտիվ վերարտադրությունն է հանդիսանում»<sup>13</sup>.

Այս մեջբերումներից հետո, թվամ է, դժվար է այլևս պնդել, թե Աղամյանի արվեստը ոռմանտիկական է եղել։ Սակայն խնդիրը միայն այդ չէ։ Դա հարցի լուծման մի կողմն է միայն և ոչ բուն լուծումը Աղամյանի արվեստի ուսումնասիրության ներկա փուլում տարակարծություն վերցնողը, ըստ երևոյթին, ոչ թե նրա ուսալիստ լինելու կամ շինելու հարցն է, այլ այն, թե ի՞նչ բնույթի էր այդ ուսալիզմը, ոճական ինչպիսի՝ առանձնահատկություններ ուներ։

Այս հարցի պատասխանը որոնելիս մենք հանդիպեցինք Աղամյան—Համլետի մասին գրված մի հոդվածի, որի հեղինակը Երվանդադեն է։ Այն, ինչ զրել է անվանի վիպասանը այդտեղ, շափազանց էական նշանակություն ունի առհասարակ Աղամյանի բնմարդկանությունը և անհետիկան պարզելու խնդրում։ «Աղամյանի խաղն ունի խորին ուսալական շինվածք, բայց միննույն ժամանակ նա այդ շինվածքին տալիս է մի իդեալական տեսք. դուքս է գալիս իրքն մի կատարելագործված, հղկված և զարդարում ամբողջություն»<sup>14</sup>.

Այն, որ այստեղ ամենից առաջ ընդգծվածը Աղամյան—Համլետի ուսալական շինվածքն է, միանգամայն հասկանալի է։ Կյանքը, ոնաև ճշմարտությունը՝ նախ և առաջ, Դա այն հիմքն է, որի վրա դերասանը բարձրացրել է իր կերտվածքները։

Ելակետ ունենալով ուսալ իրականությունը, Աղամյանը, անշուշտ, արվեստի բարձունքներին հասավ, երբ հաղթահարելով նյութի իրական տրվածությունը, ստեղծեց գեղարվեստի իր ուրույն աշխարհը՝ էսթետիկորեն արտահայտված իրականությունը։ Աղամյանի պատկերած իրականությունը հանդիսատեսին ներկայանում էր

ու միայն այնպես, ինչպես նա կար, այլ այնպես, ինչպես պետք է լիներ, այսինքն՝ իրականի և իդեալականի համապատճյամբ:

Այն, որ Օթելոն, Լիբը, Համլետը, ինչպես և Զացկին, Կորրագոն, Ուրիելը և այլք ինքնին հաստատվող կերպարներ են, պարզ էր և առանց դերասանի միջամտության: Սակայն կարողանալ ոչ միայն պաշտպանել նըրանց գոյության իրավունքը կյանքում, այլև հաստատել այդ կերպարները որպես գեղեցիկի շափանիշ, իրեն իդեալ՝ խոշոր դերասանի գործ է:

Որպես ոճական ստեղծագործող՝ Աղամյանի համար իդեալականն այն ոլորտն էր, որտեղ արտահայտվում էին նրա պատկերացումներն ապագայի մասին, նրա պայքարը հանուն իդեալի:

Երբ Շիրվանզագեն ընդգծել է, թե իդեալականի առկայությունն առավել կատարելության է հասցրել Աղամյանի ոճականը՝ նա հակասության մեջ չի եղել: Վիպասանը, գեղարվեստի իր բանիմացությամբ բացահայտել է դերասանի ստեղծագործության ոչ միայն ոճականության, այլև դասական բնույթը, ավելին՝ նրա արվեստի բում էությունը: «Իրականը զարդարել բանաստեղծականով—դորա համար հարկավոր է ունենալ սուր տաղանդ և նուրբ ճաշակ: Աղամյանը ունի այդ տաղանդը,— շարունակում է Շիրվանզագեն և ավելացնում,— եթե Համլետի դերում մենք սկսենք քննադատել նորան ոճական տեսակետից, գուցե գտնենք շատ մասնավոր թերություններ և անգամ սխալներ, բայց կլասիկական գեղարվեստը այդպես չէ քննադատվում: Յուր հրապուրիշ գեղեցկությունն աստվածային պատվանդանի վերա պահելու համար նա շատ անգամ արհամարհում է իրականությունը և շատ իրավացի կերպով: Մի փոքր հետո նա նորից է կրկնում՝ Աղամյանը շշատ անգամ իրականու-

թյան մանրամասնությունները զոհում է գեղարվեստին, և շատ խելացի կերպով։ Ասպա կտրուկ և զբակացնում է, «գեղարվեստին ծառայող շատ սակավ ընտրյալներին է հաջողվում այդպես անել»<sup>15</sup>:

Շնալիստ գրողը իր պաշտպանության տակ է առել կերպարը մինչև գեղեցկության պատվանդան բարձրացնելու՝ Աղամյանի ձգտումը, համարելով դա իրավացի դիրքորոշում դեպի իրականությունը իրավացի, բանի որ հեռանալով իրական ճշմարտությունից, Աղամյանը ավելի է մոտեցել գեղարվեստական ճշմարտությանը, հետևաբար՝ ոչ ուղղակի, այլ միջնորդված ձևով, բայց և առավել առնչվել իրականությանը իդեալականը ծառացնել է իրականի դրական էության բացահայտմանը, նրա էսթետիկական հաստատմանը։

«Արվեստը չի պահանջում իր ստեղծագործություններն ընդունել իրու իրականություն»։ Ֆեյերախի այս միտքը, որ այնքան սիրով ընդգծել է լինինը<sup>16</sup>, վերաբերում է ամեն մի ճշմարիտ ստեղծագործողի արվեստին։

Ոչ միայն ցույց տալ, որ Համլետը մարդկային է ստեղծ մինչև գլուխ, այլև ընդգծել, որ այդ մարդկայինը չնորինակման է արժանու Բացառիկ է ոչ թե Համլետը, այլ կյանքը, այն պայմաններն են բացառիկ, որոնցում նա ապրում ու գործում է։ Հակարանականը Համլետը շէ, այլ նրա շրջապատը. բացառիկությունը կերպարի համար դառնում է այն շափանիշը, այն նորման, որ զանազանում է մարդկայինը հակամարդկայինից, ճշշմարտությունը՝ կեղծիքից։ Արտակարգը ոչ թե գեղեցիկն է կերպարի մեջ, այլ այն անհամաձայնությունը, որ կա նրա և շրջապատի միջև Ուատի և, ըստ այդ արվեստի արամարանության, իհարկե, անխուսափելի է վերջինիս անկումը։

Աղամյանի ռեալիզմը իրականության ճշմարտացի  
պատկերման ռեալիզմ չէր միայն, այլև իդեալների  
պատկերման ռեալիզմ։ Դա կրքոտ, տեսնդենցիոզ ռեալիզմ  
էր, ուր ակտիվ դեր ունի էսթետիկական իդեալը։ Սա մի  
հանդամանք է, որն ընդլայնեց ոչ միայն երևույթների  
բնդրկման սահմանները Աղամյանի արվերտում, այլ  
որ հատկապես կարևոր է, նրա ռեալիզմի իմացական  
շրջանակները։ Այս բանի վրա Շիրվանզադեն ևս հա-  
տուկ ուշադրություն է դարձրել. «Խեալականը առանց  
բանասաննգծության մեր մեջ զարթնեցնում է, այսպես  
ասած, մակերևութական զգացումներ, մենք հոգով շատ  
հնուր չենք զնում մեր շրջապատող աշխարհից»<sup>17</sup>.

Նույն միտքն է հայտնել նաև Մաքսիմ Գորկին, որը  
դիմելով մեր դրամատուրգներին, ասում էր... «Արվես-  
տի հիմնական դերն է իրականությունից վեր բարձրա-  
նալ», այսինքն՝ ընթացիկ օրվա գործերի վրա նայել  
դեղեցիկ նպատակների բարձրությունից<sup>18</sup>:

Կարևոր է ընդգծել նաև հետևյալը:

Ոչ միայն Շիրվանզադեն, այլև գերասանի ոուս քըն-  
նադատներից շատերն են նշել, որ Աղամյանի կատարո-  
ղական արվեստը աշքի է ընկել մի կողմից գեղեցիկի  
սուր զգացողությամբ, արտիստական կատարելությամբ,  
մյուս կողմից՝ զերծ է եղել էֆեկտայնությունից։ Սա մի  
հանդամանք է, որ սկզբունքային նշանակություն ունի  
Աղամյանի ռեալիզմի բնույթը ճիշտ ըմբռնելու համար։

Կերպարը խարսխելով ռեալիստական հիմքերի վրա,  
ոչ թե բացարձակը, այլ իրականը պատկերելու նշանա-  
բանով, Աղամյանն իր ստեղծագործությունը զերծ պա-  
հեց իդեալականացման վտանգից։ Ոչ թե իդեալակա-  
նացնել կերպարը, այլ կերպարել իդեալը։ Սրանք երկու  
տարրեր սկզբունք են արվեստում, երկու տարրեր ուղ-  
ղություն։ Առաջինը տեսնդենցն է, որն արվեստը մղում է

արտակարգի, անսովորի, բացարձակի ոլորտը, Երկրորդ՝ արվեստը պահում է իրական երևույթների սահմաններում։ Եթե առաջին դեպքում իդեալականը դառնում է հաղվագեպի հատկությունը, ապա երկրորդ դեպքում այն պարզապես իրականի մասն է։ Մի դեպքում իդեալականը արտակարգի արտահայտման միակ ձևն է, մյուս դեպքում՝ իրական օրինաչափության հայտնության ձևերից մեկը։ Դա ոռմանտիղմի և ոեալիզմի սահմանադիմն է։

Աղամյանը գնաց երկրորդ ուղիով։ Ուստի նրա կըտրած ճամփան ոեալիզմի շափանիշով է շափվելու, սակայն այնպիսի ոեալիզմի, որը հղի է եղել ոչ միայն հակարանական, բիրու իրականության բացասամամբ, այլև լավագույնի, բանականի հաստատմամբ։

Այս ամենից հետևում է, որ իրական ճշմարտությունը Աղամյանի համար նշանակել է ոչ թե ճշմարտատիպ խաղակերպ, ոչ թե առօրեական պատկերում, այլ եկակետ։ Պա այն սկզբնակետն է, որից մզվելով՝ նրա արվեստը ոտք է դրել ռաստվածայինին (կամ գերազույն մարդկայինի) սահմանները։ Դրանք, ըստ երևույթին, դերասանի ստեղծագործության այն պահերն են նշանակել, երբ նա ոեալիստական ժխտումից անցել է ոռմանտիկական հաստատման։ Դա կազմել է Աղամյանի արվեստի առանձնահատկությունը, այն լեզուն, որով այդ արվեստը խոսել է իր հանդիսատեսի հետ։

Անտեսել Աղամյանի ոեալիզմի այս առանձնահատկությունները՝ կնշանակե աղքատացնել դերասանի արվեստը, լըմբոնել նրա յուրահատկությունը։

Դրանով շի՞ բացարվում արդյոք Աղամյանի այն քննադատների տարակուսանքը, երբ նրանք չկարողանալով բացատրել անուղղակի բնմավլիճակների, պայմանական արտահայտչամիջոցների առկայությունը նրա

արվեստում, դրանք պարզապես խորի են համարել նրա  
ուսացածական ստեղծագործության էությանը:

Աղամյանի ընտրած արտահայտչաձևերը ուղղակիո-  
րնեն կերպարի վարքագծի հետ կապելը կնշանակեա  
ռտեսել դերասանի գեղարվեստի տրամաբանությունը,  
նրա էսթետիկական վարքագիծը։ Աղամյանի արտա-  
հայտչաձևերը պայմանավորված են հենց նրա արվեստի  
ինքնատիպ լեզվով, լեզու, որը, ինչպես տեսանք, իր  
բառարանում ունեցել է ինչպես սովորականը արտա-  
կարգ կերպով, այնպես էլ արտակարգը սովորական ձե-  
մով պատկերելու միջոցներ։

\* \* \*

Աղամյանական կերպարների վերլուծությունը, թվում  
է, կարող է հերքումը լինել Աղամյանի հետ կապված մի  
թյուր մտայնության։ «Աղամյանական թատրոնին,—  
գրել է Լ. Թալանթարը,— որի ոճակերտուարի առանցքը  
կազմում էին Եեքսպիրի ողբերգությունները, այսուհան-  
դերձ շատ ավելի հատուկ էր,— օգտվենք էնգելսի բա-  
ռաստեղծությունից,— «շիլերարաններ», քան «շեքսպի-  
րարաններ»<sup>19</sup>։

Նախ՝ նկատենք, որ Շիլերը Աղամյանի խաղացան-  
կում մեծ տեղ լի գրավել է Ծիշտ է, այստեղ խոսքը վե-  
րաբերում է ոչ թե խաղացանկին, այլ արվեստի ըմբռո-  
նըմանը, ոճին, «շիլերական ոճին»։ Բայց սա էլ անկա-  
րևոր հանգամանք չէ, ուատի և հիշենք, որ երիտասարդ  
Աղամյանը Պոլսում խաղացել է Կառլ Մոորի դերը, հե-  
տագայում, մելոդրամայի հաղթահարման ճանապար-  
հին՝ Ֆրանց։ Մինչ այդ՝ Դոն-Կառլոս։ Ահա ամբողջը, Հե-  
տագայում նա շվերադարձավ Շիլերին, եթե հաշվի շառ-  
նենք այն, որ երբեմն հանդես էր գալիս Ֆրանցի մի մե-  
նախոսությամբ։ Մոսկվայում նրա այդ մենախոսությու-

նը գոտան անգույն, ոչ այն բարձրության վրա, ինչ Համ-  
լետն էր և ուրիշ դերակատարումների Դոն-Կառլոսով  
նույնպես չեն հիացել: Բայց հարցը, կրկնում ենք, խա-  
ղացանկի մեջ չէ միայն Մեկը կարող է Եփլեր շխազար,  
բայց շելլերական լինել ըստ կատարման ոճի, ըստ ար-  
վեստի ըմբռնման: Բայց դա էլ այդպես չէ: Երբ Աղամ-  
յանը մոտեցավ ռեալիստական դրամատուրգիային՝ Դրի-  
բոյեղովին, Օստրովսկուն, վերջապես Եկատերին, Ելի-  
չերն այլևս առաջվա հրապուրը շոմեր նրա համար:  
Նրա արտիստական խառնվածքը իրեն վստահ ու ա-  
զատ էր զգում շեքսպիրյան հողի վրա: Աղամյանուկան  
կերպարների քննությունն ապացուցում է, որ նա բոլոր  
դեպքերում, երբ ռեալիստական պիննոներում հանդիպել  
է շելլերական ոգով պատկերված կերպարի՝ «շեքսպի-  
րացրել» է, որպեսզի այն դառնա կենդանի մարդ, կադ-  
վի իր հողի և միջավայրի հետ և շմառ ժամանակի  
ձայնափողի անձուկ ոլորտներում:

Աղամյանին ազգային իրականությունից կտրել, նրա  
արվեստը հայտարարել չերմոցային, ստացական, դրսից  
ներմուծված՝ նշանակում է պնդել, որ Աղամյանի նման  
հոկա երկութը հայ թատրոնի պատմության էության  
մեջ չէ: Կոպիտ ու աններելի սխալ է հարազար և օրգա-  
նական համարել լոկ այն, ինչ եղել է մեր թատրոնի  
պատմության մեջ մինչ Աղամյանը, ինչպես նաև այն, ինչ  
հաշորդել է նրան, իսկ իրեն՝ Աղամյանին, հայտարարել  
ուսար ազդեցությունների արգասիք: Եվ դա այն դեպ-  
քում, երբ Աղամյանը ելնում է անցյալից և շարումակ-  
վում ապագայի մեջ: Աղամյանի արվեստի մասին հանձն  
առնել դատել առանց նյութ կուտակելու և նրա մեջ խո-  
րանալու հոյի է ահա այդպիսի կորստարեր վտանգնե-  
րով: Աղամյանի արվեստը բարդ խաշաձեռումն է: Դա ոչ  
այնքան դանդաղ, աստիճանական զարգացումն է, որ-

քան թոիչը, ժամանակով պայմանավորված հանկարծակի ալացում։ Ասել, թե նա շոմներ ակումքներ մեր թատրոնի անցյալում՝ սխալ է և, իհարկե, հետևանք անիրազեկության այն միջավայրի և նրա մշակույթի, որտեղից նա եկավ Կովկաս, հետո էլ անցավ Ռուսաստան։ Հայութարարնել այդ արվեստը ստացական և հակադրել նրան այն, ինչ հետագա տարիները տվին մեր բեմին՝ նշանակում է շատեսնել Աղամյանին նրա հաջորդների մեջ, Ժիտել այն վիթխարի ազգեցությունը, որ նա իսկապես ռւմեցել է մեր թատրոնի կյանքում ոչ միայն իր կենդանության օրով, այլև իր մահից հետո՝ շատ երկար ժամանակ։

\* \* \*

Համլետի, Օթելոյի, Լիրի դերակատարումները հռերանական հարստությամբ և կերպարի ամբողջ վարդապետի ու ապրումների կենսական հավաստիությամբ (վկայությունների մեջ քանիցու նշված հատկանիշ), կերպարներից յուրաքանչյուրի ներաշխարհի անկրկնելի, միայն այդ կերպարին հատուկ, բացահայտմամբ, մտքի և զգացմունքի ուժեների խորապես համոզիչ զուգորդումով՝ շեքսպիրյան ճշմարիտ ստեղծագործություններ են։ Ավելացնենք՝ նաև ևվերապրումներից արվեստի արտահայտություններ, որովհետեւ միայն այդպիսի՝ արվեստով կարելի է շեքսպիրյան ճշմարիտ կերպար ստեղծել։

Ենթապիրյան շոմչ, շեքսպիրյան հուզականություն, շեքսպիրյան թափի ու ավյուն, — սրանց հասնելու համար ևվերապրումից արվեստը գլխավոր պայման է Ավելին. այդովիսի արվեստը մի խոշոր շափով նպաստում է շշիլերականություններ ու շեքսպիրյանություններ դերասանական ստեղծագործության մեջ տարբերակելուն։ Եվ Աղամյանի ստեղծագործության մասին եղած

անհամար վկայությունների մեջ թերևս ոչինչ ալիքի շահուցի շեշտակ է շեշտակ, որքան այն իրողությունը, որ նա ովելուապրումներից արտիստ էր Ահա. «...երևում է, որ արտիստը վերապրում է այն տանջանքները, որ պատճառում են նրան»<sup>20</sup>, «Արտիստը երևում է, որ ապրում է բեմի վրա»<sup>21</sup>, նրա խաղը տայնքան իրական է և նշմարացի, որ մենք բոլորովին մոռանում էինք, թէ մեր առջև դերը պատկերող արտիստ է, Մեզ թվում էր, որ մենք տեսնում ենք իսկական Օթելլոյի, Համլետի կամ Կոռրադոյի<sup>22</sup>, «Ադամյանը վերապրում էր դրամատիկական բախումների հերոսների տառապանքները»<sup>23</sup>.

Այս ոգով հաճախ է դրվել, Դեպք է եղել, երբ քննադատը, Օթելլոյի դերակատարման կապակցությամբ, բացականչել է, թև «դա խաղ չէ, այլ այն, ինչ պատճռում է կյանքում»:

Եվ որպեսզի ովերապրումներից արտիստի օգտին խոսող այս վկայությունները հիմք չտան մեկ ուրիշ մըտայնության, թև Ադամյանը ապրումների գերի է եղել՝ հիշենք և ուրիշ՝ դերասանի վարպետությունն ու տնիկան հաստատող վկայությունները. «Պատրանքն այն աստիճան մեծ է, որ արտիստի անձնական առանձնահատկությունները ասես բոլորովին շքացել էին, այնոքև էր նա կարողացել իրեն զանազանակերպել...»<sup>24</sup>, «Դերասանի անձը չի երևում», «Այս ոչ բարձրահասակ յարդը վիթխարի տաղանդի տեր է և, բացի այդ, նա կարողացավ խելոք կերպով համատեղել Մոլալովի ներքինը և Շումսկու տեխնիկան»<sup>25</sup>,

Սրանցից վերջինը ուստի նշանակոր ողբերգակ Անդրեև-Բուլակի վկայությունն է, մի արտիստի, որ Ադամյանին ճանաշում էր մոտիկից, նրա կլանքի դեռևս թիֆլիսյան տարիներից:

Երբ խոսք է բացվում Ադամյանի տեխնիկայից, մը-

տարերում ես նրա անզուգական տվյալները և այդ տըմ-  
յալների հմուտ կիրառումը՝ թավշյա լեցուն ձայն, հա-  
րուստ դիմախաղ, մարմնի պլաստիկական տիրապե-  
տում, խոսուն պահպան ու շարժումն և այդ ամենի  
անսպառ երանգավորումներ՝ ըստ պատկերվող կերպարի  
խառնվածքի, այդ կերպարի հոգեվիճակի ու հուզումնե-  
րի, մի խոսքով՝ վերամարմնավորման արվեստ իր բար-  
ձրը արտահայտության մեջ:

Ուրեմն՝ դերասանական արվեստ, որ մի ստքով հեն-  
ված էր զգացմունքների հարստության, մյուսով՝ բարձր  
վարպետության, հզկված տեխնիկայի վրա:

Ակամա մտարերում ես երկու նշանավոր վախթան-  
գուլցիների պահանջը, թե մեր բնմական արվեստի զար-  
գացման շահը պահանջում է ոչ թե զգացումը և վերապ-  
րոզ և ուներկայացնող» դերասանների անշատում և հա-  
կադրում, այլ, ընդհակառակը, այդ երկուսի միասնացած  
արտահայտությունը, ինչպես եղել են ոռատական և  
նվազական բեմի նշանավորագույն վարպետներից մի  
քանիսը, ննշափիսին, կավելացնեինք մենք, եղել է նաև  
Աղամյանը:

«Հախթանգուլցիները միանգամայն իրավացի էին, երբ  
պատմում էին, թե «վերապրման» ճշմարիտ արվեստը,  
եթև նա չի վերածվել կյանքի նատուրալիստական ընօ-  
րինակման և պահպաննել է մեծ գաղափար արտահայ-  
տելու ընդունակությունը, միշտ էլ կրել է և կրում է իր  
մեջ ուներկայացնող» արվեստի ուժը: Նույնը և դրա հա-  
կառակը, եթև «ուներկայացնող» արվեստը կյանքից չի  
կարմէլ, դերասանական շտամպների, խղճուկ արհես-  
տավորության մի հասել՝ իր մեջ կրել ու կրում է իսկա-  
կան ապրումը:

Բոլոր դերասանների վրա էլ, որոնք ընդունակ են  
ոհալիստական լիարժեք կերպարներ ստեղծել, իշխում

են դերասանական արվեստին օբյեկտիվորեն հատուկ օրենքները թող մի խոշոր դերասանի խաղում տիրապետողը լինի արտաքին կողմը, մյուսի մոտ՝ ներքինը. երկուան էլ բեմում ապրում են երկակի կյանքով, երկուան էլ և՝ «վերապրում» են, և՝ «ներկայացնում», ինչպես այդ պահանջում է դերասանական արվեստի բնույթը, քանի որ անկարելի է ճշմարտացի ներկայացնել և շապրել, ինչպես և շի կարելի արտահայտիլ ապրել՝ առանց նարկայացնելու:

Երբ «ներկայացնող» թատրոնից շրանում են դերասանի կենդանի ապրումները, իսկ «վերապրումների» թատրոնից այն ամենը, որ կապված է ներկայացնելու հետ, այսինքն՝ վարպետություն, տեխնիկա, գեղարվեստական շափի, երկուան էլ՝ և՝ «վերապրումների» թատրոնը, և՝ «ներկայացնող» թատրոնը, զրկվում են նրանից, ինչ բեմին, արվեստին ընդհանրապես հաղորդում է հասարակական նշանակություն,— մնում է մի դեպքում՝ կյանքի ճշմարտությունից անկախ գործող մերկ տեխնիկա, մյուս գեղարվեստական արտահայտությունից զուրկ ապրում։ Իսկ երբ այդ երկուաը միանում են, ապա նրանք դառնում են մեծ արվեստ ստեղծելու ընդունակ, բերում են իրենց հետ կյանքի ճշմարտությունը՝ նշանակալի գաղափարների հետ միասին <sup>25</sup>:

Այս է վախճանգովցիների պահանջը:

Կարդում ես և մտածում, որ նրանք կրքու կիրապով պաշտպանում են այն արվեստը կամ, ավելի ստույդ, արվեստի այն տեսակը, որ իր կատարյալ դրսենումն է գտնել անցյալի մեծ վարպետների, այդ թվում նաև Աղամյանի արվեստի մեջ:

Արվեստի ամեն մի երևույթ պետք է ճանաշել և գնահատել իր պատմական ժամանակաշրջանում, իր ոճականավագրում, կապակցությունների մեջ։ Ինչպես Աղամյանի ստեղծագործության բովանդակությունը, նրա արվեստի ձևը, ոճը նույնպես պայմանավորված էր իր ժամանակով ու նրա համար բնորոշ առանձնահատկություններով։

Չպիտի մոռանալ, որ Աղամյանը, այսպես ասած, «մինչևնմիսյորական», «մինչանսամբլային» թատրոնի դերասան էր։ Դրանով պետք է բացատրել, որ նա մեծ կարևորություն շի տվել իր բնմական միջավայրին։ Մինչդեռ մեզանում երեսմն թյուր մեկնաբանություն է տրվել դրան, թե իրը այդպես է արել, որպեսզի շահի թուլլ շըրջադատի հանդեպ ունեցած գերազանցությամբ։ Հազիվ թե նա երկյուղ ունենար հակառակ պարագայից։ Ծիշտն այն է, որ մեծ արտիստը մինչև վերջ էլ չհանգեց անսամբլայնության գաղափարին։ Նրան չեր զրադեցնուած ներկայացման ամբողջությունը, այն ներդաշնակ համաձայնությունը, որ պետք է լինի բնմազրության տարրեր մասերի միջև։ Նա այն համոզումն ուներ, թե ներկայացումն ի՞ր համար է, միայն և միայն իր համար, իր մեջ է, իրենով է, իսկ մնացածն այնքան նշանակություն ունի, որքանով հնարավոր է զարձնում իր խաղը։ Դրա մյուտ պատճառը բնմական անհատապաշտությունն էր։ ինքը կերևած՝ բավական է, իսկ մյուտաներն ինչպես էլ լինեն՝ ոչինչ, օթե չնպաստեն՝ չեն էլ կարող խանգարել իրեն։ Սա ինքնավստահություն է, որ, Աղամյանից բացի, անեցել են նաև այն ժամանակվա հոչակավոր գերասաններից շատերը։ Օրինակ՝ Սալվինին։ Տիրասպոլսկայան, որն այլ առիթներով արդեն հիշատակվել է, պատմում է հետեւյալը։

Սալվինիի՝ Ներկայացումներն են Առուկվայում։ Խաղալու է «Ոճրագործի ընտանիքը»։ Փորձում է վերջին արարը՝ Կորրագոյի մահը, Բեմը կահավորված է, ինչպես պահանջում է տեսարանը։ Դրված է աթոռը, որի վրա պետք է մեռնի հերոսը։ Սալվինին հանկարծ աթոռը տեղափոխում է առաջ՝ հանդիսատեսը պետք է մահը տեսնի ամենափոքր մանրամասնություններով։ Իսկ հետո աթոռը տանում է ավելի մոտ բնմառաշրին։ Ներկայացման ռեժիսորը նյարդայնանում է, բայց ձայն չի հանում։ Սալվինին թարգմանչի օգնությամբ հարց է տալիս, թե ինչո՞ւ է հուզված ռեժիսորը։ Հոշակավոր գաստուլյորին սիրալիիր կերպով բացատրում են, որ ռեժիսորին մտահոգում է աթոռի շատ առաջ լինելը, բայց ելքն ալժմ գտնված է։ Եթե սինյոր Սալվինիին հաճելի է մահվան պատկերը տալ այդուղի, թող աթոռը մնա իր տեղում։ Ներկայացումը վերջանալիս կիշեցնեն լրացուցի։ Վարագույրը։ Սալվինին խնդրում է ցույց տալ, թե որտեղ է իշխում երկրորդ վարագույրը։ Նրան ցույց են տալիս հուշարարի խցիկի մոտ գտնվող սահմանը։ Եվ ոզրերգակն անմիջապես իր աթոռը տեղափոխում է բոլորովին բնմառաշր, նստում վրան և բարձրածայն ասում։

— Այստեղ եմ ես մեռնելու

Ռեժիսորը բռնում է զլուխը։

— Դարձյալ ի՞նչ է անհանգստացնում ռեժիսորին, — հարցնում է Սալվինին։

— Դուք բարեհաճեցիք աթոռը տանել սահմանից այն կողմ, որ անբնական է, և դա հուզում է ռեժիսորին։

— Ասացեք հարգելի մահստրոյին։ Երբ մեռնում է Սալվինին՝ հասարակության համար գոյություն չի կարող ունենալ և ոչ մի սենյակ։ Հասարակությունը պետք է ամբողջովովին կլանվի և գերվի իմ մահվան տեսարանով։ Եթե այդ պահին նա ընդունակ է դերասանի խաղից կը-

տըսվել և գիտել սենյակի պատերը, ապա այն ժամանակ այլնս գոյություն չունի Թումազո Սալվինին, ժամանակն է, որ ես թողնեմ բեմը, և եստա! <sup>27</sup>

Այսպես է դատելով միայն Սալվինին. սա հատուկ էր պրեմիներային թատրոնի, մինչանսամբլային թատրոնի բոլոր հանճարներին:

Ասում են Մոլալովը խաղում էր վատ դեկորներով շրջապատված, թատերական բանալ զգեստներով, նավթի լամպի աղոտ լույսի տակ և, այնուամենայնիվ, ցնցող տպավորություն էր գործում:

«Եթե ես այն խմբի ռեժիսյորը լինեի, — գրում է Ստանիսլավսկին, — որը բախտ ուներ իրեն անդամը համարելու այնպիսի արտիստի, ինչպիսին Մոլալովն է, գիտե՞՞ ես ինչ կանեի: Եատ պարզ, ոչինչ չէի անի նրա մասնակցության օրերին: Իմ ամրողը հոգոց կսահմանափակեր հետևյալով. նախ՝ մինչև ներկայացումը և դադարներին ամեն կերպ հանճարին հնորու պահել նրա տրամադրությունը փշացնող պատահականություններից: Երկրորդ՝ կշտամբել՝ այն արտիստներին, որոնք Մոլալովի մոտ կփորձեն ավելորդ խաղ տալ: Ինչո՞ւ ինձ համար բավական են նրա խաղից ստացածն տպավորությունները: Թող նրա խաղընկերները միայն համեստությամբ տան իրենց ռեպլիկները հանճարեղ արտիստին: Երրորդ՝ ես կկանգնեի վարագույրի մոտ և այն իր ժամանակին կրարձրացնեի ու կիշեցնեի:

Ես կմտածեի՝ դեկորների, զգեստների և ժողովրդական տեսարանների մասին: Եատ պետք է: Իզուր ինչո՞ւ ժամանակ կորցնել: Միևնույն է, զրանք ոչ ոք չէր նկատի:

Ես կնստի վարագույրի մոտ և կվայելեի Մոլալովին: Այն պահերին, երբ նա հեռանում է բեմից՝ ես կսկսեի մտքով վերլուծել նախորդ տեսարանի իմ տպա-

սորությանները և սրտի թրթիռով կսպասեի նրա մուտքին:

Ես նույնիսկ չէի սովորի, քանի որ նման խաղը չի կարելի սովորել, — ես միայն կնստեի և կվայելեի, խնայելով իմ ուժերը հետեւյալ օրվա համար, երբ նշանակված է ներկայացում՝ առանց նրա մասնակցության»<sup>29</sup>:

Ահա այդպիսի արտիստ էր նաև Աղամյանը: Նրա ուժի առաջ շքանում էր ամեն աննպաստ պայման, ամեն տեսակի դժվարություն և արգելք: Մի անդամ, միայն մի՛ անգամ նրան այդ պայմաններն ընկճեցին: Այդ էլ այն ժամանակ, երբ նրա խաղընկերները, հայտնի չէ թէ ինչ պատճառով, որոշել էին խանգարել արտիստին: Իսկ մնացած ժամանակները նա, ինչպես ուիր արքայ ներկայացման քննադատն է նկատել, հակառակ այդ բոլոր աննպաստ պայմաններին, հրաշքներ է գործել<sup>30</sup>, կարողացել է այնպես կենդանացնել կերպարը, որ հանդիսատեսին ստիպել է մոռանալ ամեն ինչ, ստիպել ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել հոգեկան այդ աշխարհի վրա, նրանից դուրս ոշինչ չնկատել:

Աղամյանին բնմում տեսնողները հիացել են նրանով, ենթարկվել նրա հմայքին և երկար ժամանակ նրա արվեստի տպավորության տակ մնացել Յվ եթե այդպիս է, իսկ ու, իրոք, այդպես է, բոլորովին զարմանալի չէ, որ 1888-ին, երբ Աղամյանը երկրորդ անդամ Մոսկվա գնաց, նրա առաջին ներկայացումներից հետո, քննադատներից մեկն իր հոդվածը սկսել է հետեւյալ ձեզով. «Համլետ» և Օթելո կատարող պլ. Աղամյանին տեսել եք: Ո՞չ շատ ցավալի է: Դուք շատ բան եք կորց-

Մուսաստանը ճանաչեց Աղամյանի արտիստական մնջությունը, գտավ, որ ոնա ազատ կարող է եվրոպական լավագույն բնմերի զարդը լինելը<sup>31</sup>, որ շուրջալում են, թե նա միայն հայ դերասան է, այսինքն՝ ամբողջապես մի ազգության պատկանող, և ոչ թե համաժողովրդական»<sup>32</sup>,

Մարդկային էր Աղամյանի արվեստը, հետևապես նաև լայն ժողովրդական։ Եվ դրանով պետք է բացատրվի հասարակությունից նրա ալղօան գուրգուրված լինելը։ Դադանիք չէ, մանավանդ, որ նրա մասին գրել են, թե հանդիսատեսը Աղամյանին համարել է ոչ միայն մեծ արտիստ, այլ ի՞ր արտիստը։

Եվ դա հասկանալի է, որովհետեւ նա ոչ թե խաղացել է, ոչ թե կատարել (այդ հասկացողությունները շեն քնորշում Աղամյանին, թեև շատ անզամ դորժածեցինք մեր շարադրության մեջ), այլ ապրել մի հուզախոռվ կյանք, իր կրակված հողին դրել ամեն մի ներկայացման մեջ ու բոցավառել մարդկային քյուր սրտեր։ Աղամյանը ամեն մի ներկայացման մեջ զնում էր իր կյանքի մի մասը և, ինչպես վառվառ մոմ, հալլում էր ներկայացումից-ներկայացում, այրվում, ողջակիզվում։ Սովորաբար խօսում ևնք նրա անժամանակ մահվան մասին։ Եվ ինչպես կարող էր այդ մահը ժամանակից վազ շգալ, երբ նա այրվում, կիզվում էր ներկայացումների ժամանակ և իր հոգու կրակը բաժան-բաժան անում բոլորի վրա։

Ինչքան հապարտ գլուխներ են խոնարհվել արտիստի առաջ, բայց դրանից ավելի ընդգծելին այն է, որ ամենը, բարձր մտավորականից մինչև բանվորը, նրան համարել են իրենց արտիստը։

Դրանից ավելի բարձր գնահատական չկա, մանավանդ երբ այդ գնահատության տակ ստորագրում է

բազմազգ հանդիսատեսը, դերասանի հայրենակիցներից բացի, ոռւսներ և ովկրաինացիներ, վրացիներ և աղքա- շանցիներ, ֆրանսիացիք և գերմանացիք, հրեաներ...

Կարելի է ազգությունների թիվն ավելացնել, հիշել անգլիացիներին և իտալացիներին նույնպես, Բայց գրա- նից ըստ էության ոչինչ չի փոփոխվում: Կարեռն այն է, որ իրենց բոլորովին անծանոթ լեզվով խաղացող դե- րասանին նրանք հասկանում էին այն աստիճան, որ, ինչպես բազմիցս խոստովանել են, լեզվի շիմանալը ար- դելք չի եղել հափշտակվելու նրա խաղով: Աղամյանի խաղը համեմատել են բաց զբրի հետ<sup>33</sup>, Վճռական դեր է խաղացել անշուշտ ձայնը, որի մասին դերասանի բո- լոր ժամանակակիցներն արտահայտվել են հիացմուն- քով<sup>34</sup>: Աղամյանի ձայնը, նրանց ասելով, հիշեցրել է Ռուսիմիի ջութակի ձայնը<sup>35</sup>.

Դերասանի ձայնը միշոց է ոչ միայն հեղինակի տե- քըստը հանդիսականին հասցնելու, այլև ենթատեքստը: Սակայն այս վերջինը կապված է ոչ այնքան խոսքի հետ, որքան նրա արտասանության կերպի՝ ինտոնացիայի հետ Եթե ինտոնացիան այն ոլորտն է, որի օգնությամբ հաղորդվում է կենդանի խոսքի հուղական-իմաստային բովանդակությունը, ապա որքան հարուստ է դերասանի խոսքը ինտոնացիայով, այնքան հարուստ է նրա խոսքի բովանդակությունը:

Աղամյանի խոսքի բնույթին այս առումով շափազանց բնորոշ է եղել: Նրա ինտոնացիան հարուստ լինելով, միաժամանակ եղել է դիպուկ, կոնկրետ և որոշակի: Հա- րո՞ւստ, երբ նկատի ունենք դերի գրական ողջ տեքստի պատկերումը, կոնկրե՛տ, երբ նկատի ունենք առանձին էպիզոդը, խոսքի արտահայտման առանձին պահը: Ան- շուշտ Աղամյանի խոսքի ինտոնացիոն դիպուկությամբ է բացատրվում այն հանգամանքը, որ, առանց լեզվին

ժանոթ լինելով, հանդիսատեսը հուզվել և ազդվել է նրա խաղից:

Այդ իմաստով շատ լավ է բնորոշնել Աղամյանին մեծ արտիստի կրտսեր ժամանակակիցը՝ Արմեն Աղմենյանը: «Դարելի էր չլսել նրան և հասկանալ նրա հոգեկան բոլոր հուզումները, — զրում է նա: — Մյուս կողմից՝ կարելի էր նույնպես շտեսնել նրան, և միայն ձայնի ելեւչներից ու շեշտագրություննից հասկանալ այդ հուզումների բովանդակությունը»<sup>35</sup>:

Այս ամենից հետո միթք զարմանալի է, եթե ռուսական քննադատությունը կորրադոյի զերակատարման կազմակցաւթյամբ հիացմունքով ասում է, թե ոռչ մի արտիստ այդպիսի տպավորություն չի դրծելը<sup>36</sup> կամ էլ ասվում է, որ նա ուղարկույն Ռուբեն Ակոստաներից մեկն է, որպիսին երրեկ տեսնել է բեմը<sup>37</sup>: Հանդիպում ենք և այսպիսի խոստովանությունների: «ավելի լավ Համեմատենք շենք տեսնելը»<sup>38</sup>. կամ՝ «Ո՞չ Սալմինին, ո՞չ Ռոսին, ո՞չ Պոսարաը, ո՞չ Բառնայը, Օդեսա այցելած ո՞չ մի ականավոր արտիստ մեզ չի տվին գեղարվեստական իմաստով այնպիսի ավարտուն Համեմատ: ինչպես Աղամյանը»<sup>39</sup>:


Այն, որ արտիստ Աղամյանը հաղթականորեն կտրեց լայնածավալ Ռուսաստանի մի ծայրից մյուսը՝ պետք է վերագրել նրա անզուգական արվեստին: Սակայն ոչ միայն զրան: Մեծ դեր է խաղացել ժամանակը: Աղամյանի կյանքի ամենաբուռ տարիները զուդադիպեցին ռուսական ռեակցիայի ծանր դարաշրջանին: Խավարի թագավորության մեջ Աղամյանը լույսի ճառագալթներից էր, որ փարատում էր ճնշող մութը: Հալածանքի աներևակայելի մթնոլորտում, ինչ կամեցել են մարդիկ առել, բայց ահից չեն ասել, արտահայտել է Աղամյանը՝

ճշմարտություն որոնող և ճշմարտության համար մարտընչող կերպարների միջոցով


Տոլստոյն ասում է, թե քաղաքի մարդիկ որբան է չանք էին թափում այլանդակելու հողը՝ սալահատակելու գետինը, այնուամենայնիվ գարումը մնում էր գարուն նաև քաղաքում, ու կանաչը մի ճեղք էր գտնում, ծիլ արձակում, հողի երես դուրս գալիս։ Այդպես էլ այս դարաշրջանում։ Որբան էլ ցարական կառավարությունը փակի տակ էր պահում մարդկանց, միւնույն է, ազատատեսենչ հոգիները ելք էին գտնում արտահայտվելու։ Աղամյանը Տոլստոյի ասած ծիլը եղավ, որ ելք գտավ, բարձրացավ և իր հետ բնմ բերեց ճնշված հոգիների բողոքի ձայնը, ըմբոստ հոգիների կանչը։ Ահա դա էլ Աղամյանի արվեստը հանեց զուտ էսթետիկական սահմաններից և մզեց դեպի հասարակական-քաղաքացիական բարձր նշանակության ոլորտները

Աղամյանի արվեստը լավատեսությամբ էր ողողված։ Չնայած նրա պատկերած հերոսների ողբերդական ճակատագրին՝ այդ արվեստը կյանքը հաստատող ուժ է ունեցել։ Աղամյանի հանդիսատեսը նրա խաղից թեև խրապես աղդված՝ երբեք չի հեռացել թատրոնից ճընշված, մարդկային ճակատագրի նկատմամբ մռայլ ու անելանելի խորհրդածություններով համակված։ Այդ մասին հաճախ է գրվել, թանի՛-քանի անգամ է ասվել, թե Աղամյանի խաղը բարոյական ինչպիսի ողմորությունն է առաջ բերում։ Իսկ մի անգամ նույնիսկ ասվել է, թե նրա խաղը կիրի գերում ընդունակ էր պատճենտավորված, այսինքն՝ անհույս հոգեահսների ողին անգամ բարձրացնելու<sup>41</sup>։ Հալածանքի, ճնշման ու բանության տարիներին Աղամյանը հպարտ կյանքի է կոշել ըմբոստ ոգիներին, մարդկության լուսավոր գալիքի հավատ ներշնչել, բարձրացրել մարդուն մարդու աշխաւ-

ԱՐՅՈՒԹՆԵՐ  
ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ







#### ՆԱԽԱՐԱՐՆ

1. М. Горький, «Собрание сочинений», ч. 26, 1953, № 424.  
2. Н. Н. Грибов, «Уральцы», ч. 10, 1949, № 316.  
3. Նույն տեղ,  
«М. Горький, «Несобранные литературно-критические статьи», 1941, № 392.  
5. З. Енгельс, «Революция и физиология», 1957, № 8.

#### Գ լ ա ւ ի ս ա բ ա շ ի ն

#### ՊԱՅՐԱՐ ԱԴԱՄՅԱՆԻ ԳԵՂՄ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Ա. Մ. Վրույր, «Պէտրոս Հ. Ադամյան, մի համառու հայացք կյանքի և գործունեաթյան վերաբ», 1891, № 15. Այսուհետեւ Ա. Վրույրը Վրույրի տառամ է, որ Ավամյանի խնդրանորս ցուցադրած և ինձ հանձնած էր մենք թե փերը այն բոլոր պիհաների և զերերի անունները՝ որոնց ներկայացրել է. բայց դժբախտաբար մի անոնդեկալ դեսպանի բերմամբ կորավ ոյդ հետաքրքիր ցանկը, բայց այսքանուց կարող ենց տաել, թե նա խաղացած է մենք և փարք 300-ից ավելի զանազան զերեր կոմմագիաներում, զրամաներում և ոզրեր-գություններում։ Մնոր մոտավոր հաշվառմներով՝ Թիֆլիսի գալաց հետո Ադամյանը խաղացել է շուրջ վարչուն գեր, որոնցից առնվազն առաջին գուսից բերգած, հետեւապես և այնուհետ խաղացված զերերից նաև։

- 2 Б. Альперс, «Актерское искусство в России», с. 1, 1945.
- 4 127. *Цыганский* Б. Альперс.
- 3 Н. В. Гоголь, «Полное собрание сочинений», с. 8, 1952.
- 4 182. *Цыганский* Н. В. Гоголь.
- 4 Б. Альперс, с. 127.
- 5 Н. В. Гоголь, с. 182.
- 6 Թատերագի դարսում մելոդրամայի վերահանձնությունը՝ շարքը բարձրացնել են բանական Ա. Բլոկը և թատերական թիվական Կուպելը:
- 7 «Հուշարձառ», 1905, № 9.
- 8 Նույն տեղ, № 15—16.
- 9 «Մեզու Հայուսանիկ», 1879, № 69.
- 10 Նույն տեղ, № 70.
- 11 Նույն տեղ, № 72.
- 12 «Կավказ», 1879, № 195:
- 13 «Тифлисский Вестник», 1879, № 190:
- 14 Նույն տեղ, № 200.
- 15 «Кавказский Курьер», 1881, № 24:
- 16 «Тифлисский Вестник», 1879, № 235:
- 17 «Մշակ», 1879, № 188.
- 18 Նույն տեղ:
- 19 Նույն տեղ, № 224.
- 20 Նույն տեղ, 1880, № 10.
- 21 Նույն տեղ, 1879, № 188.
- 22 Նույն տեղ, № 150.
- 23 Նույն տեղ:
- 24 Նույն տեղ, № 188.
- 25 «Կավказ», 1879, № 273:
- 26 ՏԵ՛ս «Մշակ», 1879, № 224.
- 27 Նույն տեղ:
- 28 Նույն տեղ, 1880, № 10.
- 29 «Հուշարձառ», 1912, № 2.
- 30 Ա. Վրույր, с. 12.
- 31 «Մշակ», 1881, № 168.
- 32 Նույն տեղ, № 235. Բա՛ նախորդ, թէ՛ այս ժեղսերժան բնութանիքը մերն են:

Դ Ա Շ Խ Ե Ր Կ Ր Ե Ր

ԿԱՍԻՄ ՇՐԱՄԱԾՈՒՐԳԻՆԱՅԻ ՀԱՆԱԳՈՎՐԾՄ.

Կ Ա Ր Ր Ա Դ Յ Ա

1 «Елисаветградский Вестник», 1888, № 13:

2 Պիեսի բնկական վերնադիրն է՝ «Թաղարացիական մահ» (La morte civile), Հայերներ թարգմանել են «Թաղարական մահ»: Թամաստանում և մնջանում ավելի հայտնի է «Ռերազործի ընտանիքը» վերնադրով: Այդպիս է վերնադիրն ոիկոսի ուստ թարգմանիչը՝ Ա. Ն. Օստրովսկին: Երբեմն կոշում են նաև պիեսի գլխավոր հերոսի անձնով «Կորրազոս»: Պալսում, Ագամյանի ներկաւացումների ժամանակ հայտարարվել է՝ «Թորրազոս» կամ դատապարայալի մը ընտանիքը: Աղամյանը խաղացել է Դ. Փրիզովյանցի թարգմանությամբ: Հաջորդ թարգմանությունը, որը լույս է տեսել, պատկանում է Էմիլ Տեր-Դրիդորյանին (1891):

3 «Արևիլը», 1888, № 1447:

4 Նույն տեղ:

5 А. Н. Островский, «Полное собрание сочинений», к. 14. 1953, էջ 187:

6 «Արձագանք», 1887, № 3:

7 Սա մեզ պատմել է Ս. Մելիքսահբյանը տարիներ առաջ, տակ-  
ուիվ, թե դրու մասին իր հուշերում գրել է նոր-նախիչեանի թատե-  
րակը Բիբրյանը վերցին նամակների ձևով գրի է առել և ուղարկել  
Մելիքսահբյանին Ագամյանին և վերված իր հուշերը:

8 Տե՛ս «Новороссийский телеграф», 1887, № 3903.

9 «Елисаветградский Вестник», 1888, № 13:

10 Նույն տեղ:

11 Նույն տեղ:

12 Նույն տեղ:

13 Նույն տեղ:

14 «Театр и жизнь», 1885, № 119.

15 «Елисаветградский Вестник», 1888, № 13:

16 «Արձագանք», 1887, № 3:

17 «Մշակ», 1886, № 16:

18 «Արևիլը», 1888, № 1442.

19 Н. Л. Тираспольская, «Из прошлого русской сцены».

1950, էջ 69, Այսուհետեւ՝ «Из прошлого русской сцены».

- 20 «Одесский Вестник», 1887, № 307:
- 21 Նույն տեղ:
- 22 «Արևելք», 1888, № 1442,
- 23 Նույն տեղ:
- 24 Նույն տեղ, 1889, № 1558,
- 25 Նույն տեղ:
- 26 Նույն տեղ:

Ուրիշ Ակուտաց

- 1 «Московская пчела», 1885, № 2:
- 2 «Одесский Вестник», 1887, 10 նոյեմբերի:
- 3 «Одесские Новости», 1887, № 847:
- 4 *Sht'ra* Карл Гунков, «Урнель Акоста», 1955. էջ 106:
- 5 Նույն տեղ:
- 6 «Московская пчела», 1885, № 2:
- 7 «Новороссийский телеграф», 1887, № 3895:
- 8 «Одесский Вестник», 1887, 10 նոյեմբերի:
- 9 «Елисаветградский Вестник», 1888, № 11:
- 10 Նույն տեղ:
- 11 «Одесский Вестник», 1887, 10 նոյեմբերի:
- 12 «Одесские Новости», 1887, № 897:
- 13 «Новороссийский телеграф», 1887, № 3895:
- 14 «Одесский Листок», 1887, № 303:
- 15 «Московская пчела», 1885, № 2:
- 16 «Одесский Вестник», 1887, 10 նոյեմբերի:
- 17 «Новороссийский телеграф», 1887, № 3895.

Դասիս Երրուսդ

ԱՊԻԱՑԱՆՆ ԿԵՐՊԱՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Զագեսի

- 1 «Кавказ», 1881, № 9:
- 2 «Փորձ», 1881, № 1:
- 3 «Кавказ», 1912, № 256:

4 «Փորձի» էջերում հրատարակված Հոդվածը թեև պատկանում է էրիսթավի դրչին, բայց գրված է խմբագրի միշտությամբ, հատկապես նրա այն մտաբրում, որոնք վերաբերում են պիեսի թարգմանության գնահատությանը՝ «ըինակների հիման վրա. «Որպեսզի Հոդվածը ցանկալի լիակատարություն ունենար,— գրում է խմբագրիը՝ Հոդվածին կցված ծանոթության մեջ,— մենք մեր կողմից մի քանի՛ լեզվին մերարերջաւ լրացրացիշ նկատողություններ ավելացրինք, որովհետեւ պ. էրիսթովը անտեղյակ է Հայերին լեզվին։ Նկատենք, որ Հոդվածում ևելլրից պատուհասի Հայերին թարգմանությունը բննադատված էր: Առիջից օգտվելով ասենք, որ տարիներ անց, 1886-ին, պետքրության մամուլում հրատարակվնց հետեւալը. . . Կոստանդին Տիր-Աստվածարյանը, Հայերին «Մեղուս լրագրի ասելով, ամենաշաղագ կերպով արել է Գրիբահղովի ոհման սահմանադատության—«Горе от умаз»-ի ստանալոր թարգմանությունը Հայերին ևելլրից պատուհաս մերնագրով։

Սույն այս թարգմանիչը նաև Գովոյն «Ծննդողոր կոմեդիան թարգմանել է:

Այս տպերի գրողը երեք նամակ ստացավ առանձին-ստանձին յուր երեք թարգմաներից Թիֆլիսում «Горе от умаз»-ի Հայերին եկեղեցացումից խոկույն ենթ, որոնց մեջ մեծ ցնծությամբ պատճիված էր Հայկական թեմի վրա Գրիբահղովի «Горе от умаз»-ի ոհմեցած Հարգության մասին Ապացույց թարգմանչի տաղանդի՝ բոլոր նամակները լիքին էին Գրիբահղովի ստանավորների Հատվածներով, Հայերին լնզվով» («Новое премье», 1886, № 3555). Այս մի քանի տողը թարգմանվել և տպադրվել է «Նոր գարում» (1886, № 39). Թվում է, թե սա «Փորձի» բննադատության դեմ ուղղված բանավեճի ուշացած արձագանքներից է:

5 «Մեղուս Հայաստանի», 1881, № 129.

6 Նույն տեղ:

7 Նույն տեղ:

8 Նույն տեղ:

9 Նույն տեղ:

10 Նույն տեղ:

11 Նույն տեղ, 1860, № 47.

12 Նույն տեղ, № 45.

13 «Մշակ», 1881, № 4.

14 «Փորձ», 1881, № 1.

15 «Կավказ», 1881, № 9:

- 16 «Մշակ», 1881, № 4;  
 17 «Փորձ», 1881, № 1;  
 18 «Московские Ведомости», 1876, № 230;  
 19 «Голос», 1877, № 11;  
 20 В. А. Филиппов, «Горе от ума» А. С. Грибоедова на русской сцене», 1954, № 14. *Այսուհետ* В. А. Филиппов.  
 21 «Кавказ», 1884, № 131;  
 22 В. А. Филиппов, № 19;  
 23 «Մշակ», 1881, № 4;  
 24 Հետաքրքիր է նկատել, որ հակառակ Տեր-Աստվածատրյանի գաղափարը մենքից պատճենաւ, որ հաջող լինելով ազանդական է զարձել՝ Ազամյանը Բարդմանել է «մենաց վիշտ»:  
 25 Պետրոս Ազամյան, «Երկեր», կազմեց Սովորոն Տարոնցի, 1955, № 435. *Այսուհետ* «Երկեր»:  
 26 ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի անտիկ նյութերից:  
 27 «Кавказ», 1881, № 9;  
 28 «Փորձ», 1881, № 1;  
 29 Н. Г. Огарев, «Избранные произведения», ч. 2, 1956.  
 № 477—478.  
 30 «Время», 1867, № 8;  
 31 И. А. Gonчаров, «Собрание сочинений», ч. 8, 1955;  
 32 В. Г. Белинский, «Полное собрание сочинений», ч. 3, 1853, № 420—486.  
 33 ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի անտիկ նյութերից:  
 34 Նույն տեղ:  
 35 Վ. Վարդամյան, «Գրիբոյեդովը և Հայ թատրոնը», 1955,  
 № 83;  
 36 «Փորձ», 1881, № 1;  
 37 Նույն տեղ:  
 38 «Կավказ», 1880, № 89;  
 39 Հայկ. ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի անտիկ նյութերից:  
 40 Բերդում է Գ. Արովի բարդմանությամբ (1958, № 152);  
 41 «Московская иллюстративная газета», 1891. № 144;  
 42 А. С. Грибоедов, «Горе от ума», к 40-летию МХАТ, 1939, № 9, 11.

43 Նույն տեղ:

44 «Горе от ума», постановка 1938 г. посвященная 150-летию со дня рождения М. С. Щепкина, № 35:

45 В. Н. Орлов, «Великий русский драматург А. С. Грибоедов». 1954, № 12:

### Արքիլիս

1 «Елисаветградский Вестник», 1888, № 10 փետրվարի:

2 Այս բոլոր տեղեկությունները քաղված են Կ. Ղոմանացի «Երգունուումի» «Դիմակահանդիսոց» պրակտ սոցիալական ողբերգությունն ուսումնասիրության տյա գիտից, որ նվիրված է այդ պիեսի բիմական պատմությանը (««Маскарад» Лермонтова», сборник статей под редакцией П. И. Новицкого, 1941).

3 «Տարազ», 1916, № 4—5:

4 «Новости», 1884, № 43.

5 «Տարազ», 1916, № 4—5:

6 «Մեզու Հայուստանի», 1883, № 35:

7 Նույն տեղ:

8 Նույն տեղ:

9 «Новости», 1884, № 43:

10 «Новое время», 1884, № 2859:

11 «Петербургская газета», 1884, № 42:

12 «Искусство», 1884, № 57:

13 «Новости», 1884, № 43:

14 «Մշակ», 1884, № 27:

15 «Մեզու Հայուստանի», 1883, № 35:

16 «Петербургская газета», 1884, № 42:

17 «Петр Иеронимович Адамьян» (Воспоминания Б. Е Писаревского), 1896, № 11: Այսուհետե՛ Բ. Е. Писаревский:

18 «Новости», 1884, № 43:

19 Ազամյանը «Դիմակահանդիս» խաղացել է, ինչպես Հայուսի է, Ս. Արքրունու թարգմանությամբ: Թարգմանությունը ժամանակին չի տպագրվել, ձևուագիրն էլ չի պահպանվել: Համենայն դեպք, յինչև հրմա չի գտնված: Ազամյանից հետո այդ դերը կատարել է Պ. Պետրոսյանը Հ. Զանումյանցի թարգմանությամբ: Վ. Փափառյանը, որ կ' Պոլսում, և՛ Բիբլիոսում կատարել է Արքներին դերը, խաղացել է իր թարգմանությամբ: Խել վերաբերում է նույն կեր-

պարի կատարմանց Սումգուլյանի անվան թատրոնում, ապա այս-  
տեղ Փափազյանն իր դերը կատարել է սեփական թարգմանությունը,  
իսկ խողընկերները՝ Տիգրան Հախումյանի, որով և խաղացել է  
նաև այդ ներկայացման հիմնական դերակատար էլ. «Կազարչյանը»:  
Ներկա մեջքերումները կատարված են «Շիմականդեսի» վերջին  
թարգմանությունից, որ պատկանում է էլ. Հովակիմյանին (1954,  
էջ 90, 146).

20 «Новости», 1884, № 43:

21 «Երերոս Ազամյան, «Նամակներ», կազմեց և ժանովադրեց  
Դ. Խ. Մանվելյան, 1959, էջ 50; Այսուհետեւ «Նամակներ»:

22 «Новости», 1884, № 43.

23 Տե՛ս նույն տեղ:

24 ««Маскарад» Лермонтова», էջ 37.

25 Նույն տեղ, էջ 60.

26 Նույն տեղ, էջ 56.

27 Ժամանակակիցները, բացի նրանից, որ արձակագրել են  
Պիսարեկի խոշոր հաջողությունը Արքներինի դերում, բառացիորեն  
ուշինչ չեն գրել, այն աստիճան, որ «Շիմականակնեմուխ» ընմական  
պատմությունը հետազոտողները, ինչպես նաև Պիսարեկի մտարին  
ուսումնամիրությունը գրող թատրագետները, օրինակ՝ Մ. Մորոզովը,  
իրենց արամագրության տակ նյութ չեն ունեցել այդ դերակատար-  
ման շուրջ համապատասխան նպակացություններ կատարելու  
համար:

28 «Նամակներ», էջ 50.

### Դ Լ Ո Ւ Խ Ն Հ Ա Ր Ր Ո Ր Գ

#### Ա Դ Ա Ր Ա Վ Ա Ւ Շ Ե Թ Ս Գ Ի Ր Ե

#### Օ Ր Ե Լ Լ Ա

1 «Սովետական գրականություն և արվեստ», 1948, № 5.

2 «Արձագանք», 1886, № 45.

3 «Մշակ», 1916, № 103.

4 «Елисаветградский Вестник», 1888, № 15:

5 «Казанский листок», 1888, № 151:

6 «Елисаветградский Вестник», 1888, № 15:

- 7 «Одесский Вестник», 1887, № 298;  
 8 «Новороссийский телеграф», 1887, № 3890;  
 9 «Елисаветградский Вестник», 1888, № 15;  
 10 «Казанский листок», 1888, № 151;  
 11 «Елисаветградский Вестник», 1888, № 15;  
 12 «Театр и жизнь», 1888, № 100;  
 13 «Казанский листок», 1888, № 151;  
 14 У. Шеллерштейн, § 121;  
 15 «Одесский Вестник», 1887, № 298;  
 16 «Театр и жизнь», 1888, № 100;  
 17 «Одесский Вестник», 1887, № 298;  
 18 «Русские Ведомости», 1888, № 80;  
 19 «Одесский Вестник», 1887, № 301 (*«Борбушашвили»* —  
*«Витин»*, 1938, № 3);  
 20 *SL'* М. Морозов, «Комментарии к пьесам Шекспира»,  
 1941, § 27; *Цинцаван* «Комментарии»;  
 21 И. Минц, «Эдмунд Кин», 1957, § 54—55; *Цинцаван*  
 «Эдмунд Кин».  
 22 «Одесский Вестник», 1887, № 298;  
 23 «Русский Курьер», 1888, № 81;  
 24 *SL'* «Комментарии», § 27—28;  
 25 Гриффин, «Оригинальные заметки о Шинкевиче»,  
 1922, § 139;  
 26 «Угол», 1886, № 131;  
 27 У. Шеллерштейн, «Французская литература в  
*Цинцаван* У. Шеллерштейн»;  
 28 «Угол», 1886, № 131;  
 29 «Одесский Вестник», 1887, № 301;  
 30 Шинкевич, § 151;  
 31 Н. Зограф, «Александр Павлович Ленский», 1955,  
 § 165;  
 32 *SL'* «Московские Ведомости», 1888, № 60;  
 33 «Театральный мирок», 1887, № 51;  
 34 «Угол» *«Гравюры на бумаге и дереве»*, 1946, № 5.  
 35 «Угол», 1886, № 131;  
 36 У. Шеллерштейн, § 121;  
 37 «Воспоминания Е. Ф. Юнге», § 171;  
 38 «Остужев—Отелло», сб. ВТО, 1938, § 8.

- 39 «Театр и жизнь», 1886, № 64:  
 40 *Чтвъртъ вѣкъ*:  
 41 *Сбънчъ «Артистъ»*, 1890, № 7:  
 42 *Чтвъртъ вѣкъ*:  
 43 «Новое время», 1882, № 2211:  
 44 К. С. Станиславский, «Моя жизнь в искусстве», 1936.  
 45 «Артистъ», 1890, № 7:  
 46 *Сбънчъ А. Кугель, «Театральные портреты»*, 1923, § 111  
 — 114:  
 47 «Новороссийский телеграф», 1887, № 3890:  
 48 «Новороссийский телеграф», 1887, № 3890:  
 49 *Чтвъртъ вѣкъ*:  
 50 *Чтвъртъ вѣкъ*:  
 51 «Одесский листок», 1887, № 298:  
 52 *Чтвъртъ вѣкъ*:  
 53 «Казанский листок», 1888, № 151:  
 54 «Русская мысль», 1897, *Чтвъртъ вѣкъ*:  
 55 «Одесский Вестник», 1887, № 298:  
 56 «Театральный мирок», 1888, № 51:  
 57 А. П. Чехов, «Полное собрание сочинений и писем»,  
 — 14, 1949, § 49—50:  
 58 «Театральный мирок», 1888, № 51:  
 59 «Одесский Вестник», 1887, № 314:  
 60 *Чтвъртъ вѣкъ*, № 298:  
 61 *Чтвъртъ вѣкъ*:  
 62 *Чтвъртъ вѣкъ*:  
 63 «Новороссийский телеграф», 1887, № 3890:  
 64 С. Дурыллин, «Айра Олдридж», 1940, § 98, *Цитаты*  
 «Айра Олдридж».  
 65 «Новороссийский телеграф», 1887, № 3890:  
 66 «Русские Ведомости», 1888, № 80:  
 67 «Из прошлого русской сцены», § 68—69:  
 68 И. Панаев, «Литературные воспоминания», 1932, § 271.  
 69 К. С. Станиславский, «Режиссерский план «Отелло»»,  
 1945, § 315—317.  
 70 «Русский Вестник», 1861, № 41, И. Панаев, § 271.  
 71 «Театр и жизнь», 1888, № 100:

- 73 «Казанский листок», 1888, № 151:  
 73 «Новороссийский телеграф», 1887, № 3890:  
 74 В. Г. Белинский, § 343.  
 75 «Эдмунд Кин», § 57.  
 76 «Русская мысль», 1897, դիրք «Հինգերութ»:  
 77 «Новороссийский телеграф», 1887, № 3890:  
 78 Ալիյ ահու  
 79 «Русский Вестник», 1862, № 12:  
 80 «Русские Ведомости», § 305.  
 81 Н. Яблочкина, «Жизнь в театре», 1953, § 74.  
 82 «Ежегодник императорских театров», выпуск первый,  
 1912, § 2.  
 83 «Одесский листок», 1887, № 298:  
 84 А. Де-Рибас, «Старая Одесса», 1913, § 122, Թաղված  
 և Ս. Դուրիլիսի «Այրա Օլրից» գրքից, § 92—93.  
 85 «Эдмунд Кин», стр. 57.  
 86 В. Г. Белинский, § 343.  
 87 «Արձագանք», 1886, № 45.  
 88 «Эдмунд Кин», § 57.  
 89 А. Де-Рибас, «Старая Одесса», § 123.  
 90 А. С. Пушкин, «Полное собрание сочинений», к. 7,  
 1949, § 515.  
 91 «Мастера театра в образах Шекспира», § 73.  
 92 «Русские Ведомости», 1888, № 58:  
 93 Տե՛ս «Артист», 1893, № 29.  
 94 «Петербургские Ведомости», 1900, № 36:

#### Լիր արքա

1 «Театр и жизнь», 1888, № 100, Համառապես հայտնի չէ,  
 թե Ադամյանը այդ տարի Մոսկվայում լինելով՝ կիր խաղացել է:  
 Ս. Մելիքսեթյանը գրում է. «Գաստրոլները Օդեսայում անօրինակ  
 խանդավառությամբ և փառավոր կերպով վերջացնելուց հետո  
 Ադամյանը մեկնում է Թիֆլիս, Ելիզավետպորտ, Պոլտավա և Նորից  
 Մոսկվա: Մրանով երրորդ (") անգամն է, որ նա այցելում էր  
 Ռուսաստանի Հինավուրց քաղաքը: Այս անգամ նա այնաեղ հանգիս  
 է գալիս ոչ միայն իր նախկին ռեպերտուրով, որոնց մեջ, ան-  
 շուշտ, Համեման էլ կար, այլև իր նոր դերերով՝ Ուրիշի Ակուստայով,  
 Օթելոյով և կիր արքայով («Թատերական ակնարկներ», § 127).

інքе *Університетській* аж у підкресленій симетрії відмінної та чудовішої. У цій роботі відмінно виконані всі елементи, які відповідають засадам художнього мистецтва: композиція, колорит, стилізація, пропорції та ін. Важливим є те, що відсутній драматичний ефект, який часто виникає при використанні пурпурного кольору. Але в цьому випадку пурпурний кольор не є пурпуром, а є більш пастельним та дещо блідим. Він не має жорсткості, але і не є дуже плавким. Він має певну вагу та стисливість, які надають композиції певну гармонію та спокій.

2 «Казанский листок», 1888, № 160:

3 «Елисаветградский Вестник», 1888, 10-й фебруарський:

4 «Одесский листок», 1887, № 321:

5 «Новороссийский телеграф», 1887, № 3912:

6 11 «Сибирь», № 17:

7 12 «Сибирь», 1916, № 4—5:

8 13 «Сибирь», 1916, № 4—5:

9 14 М. Морозов, «Избранные статьи и переводы», 1954.

15 63:

10 15 «Сибирь», № 84:

11 «Северная пчела», 1858, № 287:

12 «Сибирь», 1886, № 45 («Сибирь», № 45, 1886, 15 лютого, «Сибирь», № 45, 1886, 15 лютого).

- 13 «Մշակ», 1916, № 108 (Սիրվանզադե, հ. 9, էջ 466):
- 14 «Արձագանք», 1886, № 45 (Սիրվանզադե, հ. 9, էջ 71):
- 15 «Մշակ», 1916, № 108 (Սիրվանզադե, հ. 9, էջ 467):
- 16 Տե՛ս «Էմմուն Կին», էջ 85:
- 17 «Ելիսավետգրադский Вестник», 1885, № 17: Այսուհետեւ ուղրութեաց լի մտածանչվելու, որովհետեւ անընդհատ նույն Հեղինակի Հոգվածն է մեջբերվելու կամ նրա տառեն է վերաշարադրվելու՝ Ազատիանի խաղը կիրի գիրում բնութապրելիս Բակ արդ ընթացքում մի այլ հոգվածից կամ գրքից մեջբերում անելին աղբուսաց ցուց կարգի:
- 18 Н. Н. Баженов, «Сочинения», հ. 1, 1869, էջ 181.
- 19 «Русский Вестник», 1862, № 42.
- 20 «Лайра Олдридж», էջ 53:
- 21 Ю. М. Юрьев, «Записки», 1948, էջ 141: Այսուհետեւ «Записки».
- 22 Նույն անդ:
- 23 Նույն տեղ, էջ 141—142:
- 24 «Երկեր», էջ 434:
- 25 «Северная пчела», 1859, № 228:
- 26 И. Березарк, «Василий Васильевич Самойлов», 1948, էջ 98: Այսուհետեւ «Самойлов».
- 27 Վիլյամ Եերապիր, «Ընտիր երկեր», հ. 1, թարգմ. Հովհ. Մատևոսյանի, 1951, էջ 289: Այսուհետեւ Վիլյամ Եերապիր, Թարգմանությունը, որով Ադամյանը խաղացել է, դժբախտաբար, շի պահպանվել կամ գոնեն մինչև Հիմա լի հայտարերված: Միայն մի պատառիկ, ավելի ճիշտ մի-երկու տող այդ թարգմանությանից գտնում ենք թարգմանը հրատարակած հիշողությունների մեջ («Տարգ», 1916, № 4—5):
- 28 «Одесский листок», 1887, № 231:
- 29 Նույն տեղ:
- 30 Տե՛ս «Տարգ», 1916, № 4—5:
- 31 «Московские Ведомости», 1864, № 162:
- 32 Я. Гринвалльд, «Михоэльс», 1948, էջ 57:
- 33 «Էմմուն Կին», էջ 84:
- 34 Ն. Ա. Դորրուլուրով, «Թիեադատական հոգվածներ», 1947, էջ 117: Այսուհետեւ Դորրուլուրով:
- 35 Նույն տեղ:
- 36 Այդ տեսարանը արժանացել է նաև հայկական մամազի:

գնահատությանը. «Ամենից լավ էր խաղը և լի գրամտախզմով ձյկերորդ գործողության այն տեսարանում, երբ նու անիծում էր իր աղքերախտ անդրանիկ աղջկան» («Նոր դար», 1886, № 191). «Հիմնալին էր Ադամյանը, մանավանդ արև կառում, ուր չորած մղոթում է և յուր երկու աղջիկներին անիծում («Նոր դար», 1886, № 209).

### 37 «Յանիկ», էջ 142.

38 Տե՛ս Դորրույուրով, էջ 118, ի միջի այլոց նկատենք Հետեղալիք. «Ազամյանը և Դորրույուրովը իր Հոգվածում, որ լույս է անենալ «Տեսարան» (1859, № 9), և Ասմվելյանն ընդհանրությունն է անենում Հիրի մասին Դորրույուրովի Հայտնած մտքերի և այն լուսարանության միջն, որով ողբերգակը պատրաստել է այդ դերը. Մեզ թվում է, որ աս հավանական ենթադրությունն է և իրեն Ժիռը նորաւթյունն:

Երկու դիտողություններ և մի լրացում:

«Եիր արքա ներկայացման քինազանեների միջին եղած առարածայնությունը Հոգվածագիրն անվանելի է տաեցննդենաների մենամարտը. Դա սրամիտ է և ճիշտ: Բայց սիալվում է Հոգվածագիրը, երբ տուում է. «Թենիսադասությունն ամենուրեք նրա բնական առեղջադրությունների գնահատության մեջ Համամիտ էր: Ծվ միայն իրը տուշացրեց այսպիսի հակասուկան կարծիքները: Սա արդեն բնակ ճիշտ չէ: Նույնատիպ տարածայնություններ են եղել և Համեմայի շարքը. ինչպես նաև Արքենինի և, վերշապես, Օթելլոյի: Այս կարողի տարածայնություններ եղել են նաև Պերիելի առիթում: Ծվ դա բնական պետք է համարել, որովհետեւ Ադամյանը, ինչպես գրեթե բոլոր ժամանակակիցներն են նշում, ինքնուրույն մոտեցում է Հանդես բնակը դեպի իր բարեկարգությանը և կերպարները: Վերագրել դա միայն Արքին՝ նշանակում է ակամա նմազեցնել նրա կատարած ժողովերի նորարարական արժեքը:»

Այսուհետեւ Հոգվածում ասված է, թե իր Ադամյանը Արք Համարել է իր լավագույն ստեղծագործությունը: Միշտ չէ. այդպիսի պնդման համար, որքան մեզ հայտնի է, ոչ մի հիմք չի պահպանվել: Մի զբույցի ժամանակ Ադամյանն ասել է, թե ուրիշ ամեննեն փառավոր Հաղթանակներն մեկը եղած էր: Սա է ճիշտը, ոյսպէս և եպրափակել է իր Հոգվածը Սամվելյանը:

Մի լրացում, «Կերուիշյալ դիտողությունները, վերցին Հաշվով, երկրորդական նշանակություն ունեն այն ուշագրավ, իրականությունը շատ մատ ենթադրության համեմատությամբ, որ արել է Հոգվածի

Հեղինակը — էիրի կերպարի վերաբերյալ՝ ուստի նշանավոր քննաւութիւն և հայ ողբերգակի հայացքների նմանության վերաբերյալ։ Կամ մենալով հաստատել, որ Ադամյանը հիրավի ժանոթ է եղել Դորոյլյառության վերո՛իշշալ մարին և նրա ազդեցությամբ է մշակել իր մեկնարանությունը, մի շարք համոզիչ տվյալներ է բերում։ Աւարդութ կապակցությամբ կամ ննում ենք մի լրացում անել, ոչիր արքան թարգմանել է Սկներիմի Արքունիքն, նա, որ Թարգմանել էր նաև «Համբետ» Ագամյանի Համար։ Համբետի դերը պատրաստելիս թարգմանիլը, ինչպիս ինքն է պատմում, Ագամյանին ժանոթացընը է այն ծավալուն Հողվածի հետ, որ Բեղինակին գրել է Եկեղիքիրի «Համբետի» և այդ կերպարի մոշալովյան կատարման մասին։ Ինչու չենթագրել, և ու շատ Հավանական է, որ նույն Արքունիքն, ուստական կուլտուրայի ուղղվ դաստիարակված մարդ, էիրի պատրաստման շրջանում ծանոթացրած կլիներ Ագամյանին Դորրուլությունի այդ մտցերի հետ, որոնք, ի գեպ, արտահայտված են «Համարի թագավորության» մեջ, որը լավ ժանոթ էր ուստական կրթություն ստացած ամեն մի հայ ժամանականի։

39 «Երկեր», էջ 261, ոչիր արքային մենքնարանությունը, ըստ Ագամյանի շափածո դորֆի, ավանդական ցմրուման դիրքերից գրված լինելով, հակասության մեջ է բեմում մարմնավորածի հետ և յատեղ շեշտց գրված է զորավոր արքայի շար ազդիկների ապերախության մքա, որոր բարությանց յուր փոխարեն տվին նրան գտնացին վերցաւ Ոտանակորի վերջին մասը կրոնական երանկավորում ունի Թայց գու չէ հականը, այլ բացահայտ հակասությունը։ Դատառաշին գեպը չէ ո՞չ Ագամյանի, ո՞չ էլ ուրիշ դերասանների Է արքնատագեաների կյանքում, Հազգադիպ չէ, երբ գերասանի կամ գրազի մտահղացումը, ստեղծագործական կիրառում ստանալիս, իրականության ավելի լայն ընդգրկման է Հանդիպում, քան ծրագրված է եղել նախապես։ Այսպիս, օրինակ՝ Ագամյանը «Համբետին» նվիրված իր աշխատության մեջ տառմ է, թե «Համբետ» մարտուն Համար ծնած չէն (առն «Երկեր», էջ 455), մինչդեռ բեմում խաղացել է մարտառող Համբետ։ Նույնը կարելի է ասել նաև Հովհանոս Օթելլոյի մասին։ մի կերպ է բացարել կերպարի մեկնարանության հիմնական հարցը իր գրած նամակներում, բայց բոլորին այլ կերպ, պարզապես գրան հակառակ է խաղացել բեմում։

40 Տե՛ս «Արձագանք», 1886, թ 45։

Ն Անգլաֆրանս ենք համարում նշել Ս. Միլիբանի թուրհակալ աշխատանքը, որն առաջին առաջին և միակ փորձն է՝ վերականգնելու Համբաւի ադամյանական կատարման կմախըք («Թատերական ակնարկներ», էջ 116—117):

Տ Հայ թատերական գրականությունը Համբաւի գերակատարման շուրջը տունենապիս մանրամասնություններ չի պահպանել: Պետք է նեկատել, որ գերասանին ժամանակակից Հայուրակական պարրերական ժամուլը և՛ 1880-ին, և՛ նույնիսկ 1886-ին ու 1887-ին, կցկուուր է անդրադարձել Աղամյանի Համբաւին: Բացառություն է կազմում Երիտանգադինի «Աղամյան-Համբաւ» խորագրով՝ «Արձագանրում» (1886, № 17) լույս տեսած հոդվածը, որը թիւ ծավալով թե բնական արվեստի ըմբռնման տեսակետից շահեկանորդն տարրերվում է այն ժամանակները թատրոնի մասին գրվող և հրապարակվող բազմաթիվ հոդվածներից:

Այժմ մի այլ խնդրի մասին:

Հ ա վ Հ Թումանյանը, ինչպիս Հայունի է, պատանեկան տարիներից հացած էր Աղամյանի արվեստով և հատկապիս նրա Համբաւով: Այդ ովանրությունը նաև պահպանեց մինչև կյանքի վերջը: Նվազրդ Թումանյանի «Թումանյանը թատրոնի մասին» հոդվածում ազգած է: «Թումանյանն ուստիմասիրում էր Աղամյանի Համբաւի գիրը, նրա ձեռագրերի մեջ մնացել է անավարտ մի աշխատաւթյուն՝ «Աղամյանը Համբաւի դերում» («Էնորհրդային արվեստ», 1936, № 1): Թանաստեղծի ձեռագրի մեջ, գոնե մինչև այժմ, այդպիսի աշխատաւթյունը լիւ հայտարարեցած: Ոչ մի կասկած լիւ կարող լինել, որ Թումանյանի այդ աշխատաւթյունը, թեկուզն անավարտ, անպայման հետարրերություն կներկայացներ, մանավանդ որ բանահեղծը, ինչպիս դուստրն է վկայում, տեսել է Համբաւի այլ, այդ թվում նաև Հռչակավոր գերակատարների, և, այնուամենայնիվ, մնացել է այն Համբաւման, թե լավագույնը իր տեսած Համբաւներից Աղամյանի ստեղծածն է:

3 «Արձագանը», 1886, № 17.

4 «Одесский листок», 1887, № 295.

5 «Новости», 1884, № 30.

6 «Одесский листок», 1887, № 306.

7 «Елисаветградский Вестник», 1888, № 10.

8 «Искусство», 1884, № 56.

- 9 «П. И. Адамьян в роли «Гамлета» (Критический очерк)  
 А. Ярышкина, 1887, № 15. *Այլութեան* А. Ярышкин:
- 10 «Армянский Вестник», 1916, № 31 («Սովորական գրականություն», 1941, № 2).
- 11 *ՏԵՇ* «Шекспировский сборник», 1947, № 79.
- 12 А. Н. Баженов, № 295.
- 13 «Самойлова», № 104.
- 14 *ՏԵՇ* «Шекспировский сборник», № 80.
- 15 «Новости», 1884, № 30.
- 16 «Елисаветградский Вестник», 1888, № 10.
- 17 Гете, «Годы учения Вильгельма Меистера», 1935, № 248.
- 18 «Новости», 1884, № 30.
- 19 «Армянский Вестник», 1916, № 31.
- 20 «Եղանիս», 1884, № 3640. Հետաքրքրի կլիներ պարզել, թե  
 ով է կմիջրը նախ երևամ է, որ ասուց գատաղությունից բացի,  
 առաջ ժամանը է գրականությանը, «Համլետի» բիմական պատմության  
 մասնաւություններին։ Իր մարքը հաստատելու համար նա հի-  
 շատակում է Համլետի նշանավոր դերակատարներին, որոնց հետ  
 միասին նաև նվազ հայտնի անուններ, և ասում է, թե ով ինչպես է  
 յօպացնել Անկասկած է նաև, որ հոգվածադիրը մոտիկից ճանաչել է  
 Ազամյանին, անձամբ ժամանը է նույն նրան, որովհետեւ հոգվածում  
 գերասանի պետքրության կյանքին վերաբերող այնպիսի կետեր  
 կան, որոնց մասին կարող էր իմանալ միայն դերասանից կամ նրան-  
 ցաւ մոտ կանգնած մարդուց։ Նին պարզվի, որ նա Ազամյանի  
 մերձավորներից է, ապա լի՞ կարելի արդյոք մտածել, թե իր հոգ-  
 վածը գրեթե խորհրդակցել է դերասանի հետ կամ գուցե տեղակ-  
 դարձրել հոգված գրելու իր մտադրությանը, նրանից ոչ միայն ու-  
 ղեկությունները, այլ նաև խորհրդագներ ստացել Մրանք հարցեր են,  
 որոնք սպասում են իրենց լուսարանությանը։
- 21 А. Ярышкин, № 12:
- 22 В. Г. Белинский, «Сборник сочинений», ч. 1, 1948,  
 № 339.
- 23 Անդրեա-Բուրլակի մաքերը քաղված է Ազամյանի Ժամա-  
 նակակիցների հիշողություններից։
- 24 «Տարագ», 1916, № 4—5.
- 25 «Երկեր», № 489.
- 26 Ю. Юзовский, «Образ и эпоха», 1947, № 95.
- 27 *ՏԵՇ* А. Ярышкин, № 3.

- 28 Sh'и նույն տեղ, էջ 3—4;  
 29 Sh'и «Шекспировский сборник», էջ 77—78.  
 30 А. Ярышкин, էջ 15.  
 31 «Новороссийский телеграф», 1887, № 3899.  
 32 «Елисаветградский Вестник», 1888, № 10.  
 33 А. Ярышкин, էջ 4.  
 34 Sh'и Սրբագովոյանի ուսում-Հայերեն բառարանը. Идеальный  
 языческий фразеологический словарь. Արդիական գործառքականին:  
 35 «Երկիր», էջ 478.  
 36 Նույն տեղ, էջ 468.  
 37 Նույն տեղ, էջ 466.  
 38 Sh'и Գ. Զ. Արմենի Հոգվածը «Невский сборник» (1867).  
 39 «Одесский листок», 1887, № 306.  
 40 «Երկիր», էջ 463.  
 41 Sh'и Б. И. Зингерман «Шекспир на советской сцене». 1956, էջ 16. Александр Дейч, «Абрар Хидоятов», 1948, էջ 37.  
 Հայութը է պատճեն համարակալու. Մոլախովին, Կարապիչինին, Դաւ-  
 ակոն, Աղամյանին և ուրիշներին Ենջը Հայութը բարձրացնում է Խիզոյատովի-  
 նախորդներու ճիշտն ասած, զարմանալի է Կարապիչինի Հիշտու-  
 կությունն այս շարքում, սակայն որու հայութը միասին այնպիսի միաբ-  
 է հայութված, որը չփառենք, թե որքան Ծիչա կերինի Դաւակու և մա-  
 նազանդ Մոլախովի վերաբերյալ, բայց մոտ է Աղամյանի Հայ կուպ-  
 ած իրականությանը. Գրքի հեղինակն ասում է, թե Երանեց, ալսիներն  
 Համբեա կատարող այդ գերասանները, տեսականորեն ընդունելով  
 Համբեա անվճռականության և կամազրկության զու լինելու մեկ-  
 նարանությունը, իրենց խաղում մնացին այդ սահալ տեսության  
 շրջանակներում (էջ 41), Ծիչա է այն, որ Աղամյանի տեսական  
 պատկերացմամբ և բնմական մարմարավորման մեջ Հակասություն է  
 հղել. այդ քննադատին հայտնի էր թե ոչ՝ չդիտենք, սակայն զգաց-  
 վում է մարդի ավելի ստուգ ձևակերպման անհրաժեշտություն, այ-  
 լավագու կարող է այն թյուր սպավորությունը ստացվիլ, թե Աղամ-  
 յանի և նույնիսկ Մոլախովի խաղի հիմքում, այնուամենայնիվ, թե-  
 կազ ոչ համարարար, ընկած է եղել անվճռական Համբեան լուսա-  
 բանությունը:
- 42 «Московские Ведомости», 1888, № 87:  
 43 «Одесский Вестник», 1887, № 293:  
 44 «Новости», 1884, № 30:  
 45 «Արձագան», 1886, № 17 (Միրզանզադ, հ. 2, էջ 53):

- 46 «Аллегория», 1887, № 5—6.

47 «Урбикра», № 471.

48 Илья Николаев писал о том, что в 1887 году в Тифлисе состоялся конгресс арабистов, на котором было обсуждено значение арабского языка и культуры в Азии и Африке. Конгресс проходил в Тифлисе с 1 по 5 июня 1887 года. На конгрессе присутствовало более 100 человек из различных стран Европы и Азии. На конгрессе были обсуждены вопросы языка, литературы, истории, географии и политики арабского мира.

49 «Урбикра», № 471.

50 «Новости дня», № 100.

51 «Театр и жизнь», 1888, № 100.

52 «Советская Россия», 1886, № 47.

53 «Новороссийский телеграф», 1887, № 2899, Агаджанян

54 «Советская Россия», 1887, № 1 («Советская Россия», № 1, № 418).

55 «Советская Россия», 1887, № 1 («Советская Россия», № 1, № 418).

56 «Одесский Вестник», 1887, № 293.

57 «Пчела», 1887, № 44.

58 А. Ярышкин, № 4.

59 «Советская Россия», 1887, № 1 («Советская Россия», № 1, № 418).

60 «Пчела», 1887, № 44.

61 А. Ярышкин, № 4.

62 «Советская Россия», 1886, № 16 («Советская Россия», № 16, № 51).

63 «Новости дня», № 100.

64 «Мастера сцены в образах Шекспира», 1939, № 28.

65 «Новости дня», № 100.

66 «Пчела», 1887, № 44.

67 «Советская Россия», 1886, № 17 («Советская Россия», № 17, № 51).

68 «Елизаветградский Вестник», 1888, № 10.

69 А. Ярышкин, *тг* 6.

70 *Человек в толпе*, *тг* 7.

71 *Царь и птицы* Илья Морозов вспоминает: «Мы с Фёдором Фёдоровичем читали в старом журнале «Северо-Западный листок» статью профессора Баранова о том, что в Китае есть птица, которая может летать на крыльях, но не может лететь на ногах, и это несмотря на то, что у неё есть крылья».

72 «Илья Морозов», 1886, № 17.

73 Ч. Р. Кеннеди, Биркбюль, с. 4, *тг* 504.

74 В. Г. Белинский, *тг* 319.

75 «Московские Ведомости», 1883, № 45:

76 «Новости», 1884, № 30:

77 А. Ярышкин, *тг* 4.

78 «Пчела», 1887, № 44:

79 *Самоубийство бирбюля* — поговорка из Китая: «Когда я буду умирать, я буду говорить: «Я умру, потому что я умру». И когда я умру, я буду говорить: «Я умру, потому что я умру». И когда я умру, я буду говорить: «Я умру, потому что я умру» (М. Морозов, «Шекспир», *тг* 122), Цитирует М. Морозов:

80 «Пчела», 1887, № 44:

81 М. Морозов, *тг* 134.

82 «Русские Ведомости», 1883, № 45:

83 *Человек в толпе*:

84 А. Ярышкин, *тг* 8.

85 «Новости», 1884, № 30:

86 «Театр и жизнь», 1888, № 100:

87 *Человек в толпе*:

88 М. Морозов, *тг* 133.

89 «Бирбюль», *тг* 449.

90 А. Ярышкин, *тг* 9.

91 «Елизаветградский Вестник», 1888, № 10:

92 А. Ярышкин, *тг* 9.

93 И. Ульянова-Брюса, *тг* 116.

94 А. Ярышкин, *тг* 10.

95 *Слово* В. Г. Белинского, *тг* 321—323.

96 «Физиология китайской птицы» — птица, которая не может лететь на крыльях, но может лететь на ногах. Илья Морозов пишет: «Когда я буду умирать, я буду говорить: «Я умру, потому что я умру». И когда я умру, я буду говорить: «Я умру, потому что я умру». И когда я умру, я буду говорить: «Я умру, потому что я умру» («Учебник анатомии птиц», 1942, № 5—6).

97 И. Березарк, «Гамлет в театре им. Ленинградского

Совета», 1940, № 68; Цып էլ նկատենք, որ հետագայում Դուդնիկովը հանցավ իր այս նախնական մտահղացումից, որովհետեւ աստիճանաբար նրա խաղացած Համբետի մեջ տիրապետող դարձավ մասմազը, գիլիսովին:

98 В. Л. Филиппов, «Актер Южин», 1941, № 79.

99 *SL'»* «Искусство», 1884, № 56, «Новости», 1884, № 30:

100 «Արժանակ», 1886, № 17 (Երևանցագի, Հ. Զ., № 51).

101 «Երկիր», № 462.

102 А. Н. Баженов, № 296—298.

103 А. Ярышкин, № 11.

104 Նույն տեղ:

105 *SL'»* «Мастера сцены в образах Шекспира», № 47.

106 «Новости», 1884, № 30:

107 У. Մելիքսեբյան, № 114.

108 «Музыкальный и театральный Вестник», 1883, № 13:

109 Այսուղ հարկ կա հիշելու «Օդեսսկի վեռանիկի» թղթակցի դրաւցը Ազայանի հետ: Այն հարցին, թե Ազամյանը ի՞նքն է թարգմանել շերտպիրյան պիեսները՝ դերասանը պատասխանում է, որ ոչ, ուրիշները, բացի Համբետից: Խելու է այդպիսի պատասխան ավելի, չե՞ որ հայտնի է, որ «Համբետը» թարգմանել է Ս. Արծրունիին Խելզպես հայտնի է, Ազամյանը սովորություն ուներ իր դերերը, անկախ նրանից, թե ով է թարգմանել, խմբագրության ենթակել, այսինքն՝ համապատասխանեցնել բնմական արտահայտչականությանը: Խելզպես երեսով է, Համբետի գերի վրա չափ աշխատանք է կատարել, այնքան, որ նրան հիմք է ավել այդպիսի հայտարարություն աննշան: Միանդամայն հնարավոր է, որ գերասանի խոսքը վերաբերել է միայն մի դերի, իսկ թղթակցին այնպիսի է հասկացել, որ նրա ասածը ամբողջ պիեսի մասին է: Վ. Թերզիկրաչյանը ուշագրավ դիտողություն է արել այն մասին, որ Արծրունու թարգմանության մեջ Համբետի անքառը շահեկանորեն տարբերվում է զործող մյուս անձերի անքառից, և այդ հիման վրա եղանակացություն է կատարում: Էրծրունու «թարգմանության ապագրված անքառում մենք հանդիպում ենք հայերն ընտիր բառերի և ոճերի, մինչև անգամ բարձր ոճի գրաբարխառն դարձվածքների, որոնք իսկույն մատնում են իրենց աղբյուրը: Այդ աղբյուրը Ազամյանն է, Միհրաբրյանների մոտ լավ հայերն ուսած, բանասանդ, նուրբ ճաշակի տեր արվեստագետը («Եկեղեցիք հայերնե», 1956, № 71): Թերզիկրաչյանի տածը հասանալող կովաններից է Հովհ. Թումանյանի մի հոդվածը, որին

1800-ին, Գարեգին Հ. Բարազյանի «Համեստի» թարգմանության ժամանելու Այդ հոդվածում երկու անգամ հիշատակվում է Աղամյանն այն կապակցությամբ, թե ինչպես է եղել Արեգունու թարգմանության մեջ և ինչ խմբագրության է ենթարկել դերասանը. Պարզ առված է. «Հանգույցը» Աղամյանի դերի մեջ այսպիս է եղել, բերդած է օրինակը, որից հետո Թումանյանը նկատում է. «Բայց չնչի է և իր ձեռքով գրել այսպիս», կամ՝ «ճանոց. Աղամյանի իր գերի մեջ իր ձեռքով գրել է», և ապա հետում է օրինակը (Հովհ. Թումանյան, «Երկերի ժողովածու», հ. 4, 1951, էջ 70—72). Սա չի նշանակում արդյոք, որ բանաստեղծի ձեռքի տակ է եղել Արեգունու թարգմանության այն օրինակը, որի վրա Աղամյանն իր ուղղամեմերն է կատարել նվազ դրա հիման վրա չէ՝ արդյոք Թումանյանը մտադիր եղել գրելու կամ դրել է աշխատություն Աղամյանի Համեստի մասին. Որեա՞լ է «Համեստի» այդ օրինակը:

110. *Տե՛ս* А. Ярышкин, էջ 11—13, «Музыкальный и театральный Вестник», 1883, № 13, «Русские Ведомости», 1883, № 45, «Одесский Вестник», 1887, № 306, «Пчелка», 1887, № 44.

111. «Արձագանք», 1886, № 17.

112. «Новости», 1884, № 30:

113. «Театр и жизнь», 1888, № 100:

114. *Տե՛ս* «Эдмунд Кин», էջ 49—50.

115. А. Ярышкин, էջ 12.

116. В. Г. Белинский, էջ 290.

117. У. Մելիքսեբյան, էջ 117.

118. «Гамлет в театре им. Ленинградского Совета», էջ 63.

119. «Երկեր», էջ 474.

120. У. Մելիքսեբյան, էջ 117.

121. Պրոֆ. Լ. Թալանինարի «Ենքապիրը և Հայ թագունը» (Հայաստանական շրջան) զեկուցումից, որը նա կարգացել է 1944-ին, Մրկանում կայացած շեքսբիրագիտական Համամերիթենական կոնֆերանսին: Ծառ կողմերից հետաքրքրիր այդ զեկուցումը մինչև հիմա չի տպագրված: Անհրաժեշտ ենք Համարում տանել, որ Թալանինարի զեկուցման մեջ նկարագրվածը Աղամյանի Համեստի մասին լույս տեսած հոդվածներից, ինչպես և նրա մասին գրված հուշերից (իհուրդե, մեզ ժանոր) ու մեկի մեջ չենք հանդիպել:

122. «Искусство», 1884, № 56:

123. Հովհ. Թումանյան, «Երկերի ժողովածու», հ. 4, էջ 358.

124. «Մշակ», 1916, № 123 (Երբանազգի, հ. 9, էջ 471—472).

## ՎԵՐԴԱԲԱՆ

- 1 «Ենամակենք», էջ 211—212.
- 2 Նույն տեղ, էջ 209.
- 3 «Մշտիկ», 1916, № 231.
- 4 Հովհ. Թումանյան, «Երկիրի ժողովածու», հ. 4, 1951, էջ 25.
- 5 «Московская иллюстративная газета», 1891, № 144.
- 6 «Էլեկտրոգային արվեստ», 1936, № 10.
- 7 Նույն տեղ, № 13—14.
- 8 «Одесский Вестник», 1887, № 293.
- 9 Նույն տեղ, № 307.
- 10 «Новороссийский телеграф», 1887, № 3903.
- 11 «Театральный мирок», 1887, № 151.
- 12 «Одесский Вестник», 1887, 10 նոյեմբերի:
- 13 «Новороссийский телеграф», 1887, № 3890; Այս ժեղսեռութերում եղած բոլոր ընդունակները մերն են:
- 14 «Արձագանք», 1887, № 4.
- 15 Նույն տեղ:
- 16 В. И. Ленин, «Философские тетради», 1938, էջ 66.
- 17 «Արձագանք», 1887, № 4.
- 18 Մ. Գորկի, «Դրական հրապարակախոսական հոդվածներ», 1949, էջ 76.
- 19 «Էլեկտրոգային արվեստ», 1936, № 13—14.
- 20 «Театр и жизнь», 1885, № 119.
- 21 Նույն տեղ:
- 22 «Одесский Вестник», 1887, № 319.
- 23 В. Писаревский, էջ 31: Ըստ քննադատներից մեկն ասում է, թե Ազամյան այնքան բնական է խաղացել Կորրադոյի թունավորման և դրան հաջորդած մահվան տեսարանը, որ հանդիսատեսները, երբ նկատել են, որ իրենց ժաֆերի վրա ուշանում է վարսուցյան բացվելը, յատեն են, թե Այնի հանկարծ արտիստն իսկապես թունավորվել է: Հայ մեմուարային գրականության մեջ առաջարին այսպիսի վկայություն է պահպանվել. «Հանդիսատեսի աշքերից արցունքի ծով էր հոսում և շատերը խեղդվում էին լացից. կարծելով, թե իրոք թունավորել է և իրոք մենուս է հանճարեղ դիրասանը» («Էլեկտրոգային արվեստ», 1936, № 10). Պատմում են նաև այն մասին, թե ինչպես Թիֆլիսում «Անքարութիւն ընտանիքը» ներկայացնակ մի խոմք բժիշկներ գրավել են թատերա-

որաճի առաջին կարգի աթոռները, որ տեսնեն, թէ որինչ ազդեցություն է անում թույնը Աղամյանի վրա: ...երբ թույնը աստիճանաւրար սկսեց իր ազդեցությունը, այնքան ընական էր դերասանի տանշանը, որ բույր բժիշկները առանց շոնչ քաշելու մնացել էրն ցամաքած: Երբ Աղամյանն ընկալվ, մի քանիքն ասացին, որ նա վնասվեց: Բայց երբ ծափահարեցին, երբ նա երևաց բեմի վրա անվետ, բժիշկներն ազատ շոնչ քաշեցին («Մշակ», 1916, № 231):

Դերասանը, ինչպիսին Աղամյանն է եղել, խնկապիս կարող էր հանդիսանալին հավատացնել, որ բեմում կատարվածը իրականություն է: Բայց նույնը հավատացնել նաև խողընկերութը՝ թարառի պատմության մեջ եղակի է պատառում:

Առա մի աշխարհի դեպք կտպված է Աղամյանի նույն գերակատարման հետ:

Արտիստի կյանքի վերջին տարիներին էր 1888-ին Պոլսում խաղում է Կորրագու Օրիորդ Աղնիփը կատարում է Էմմայի գերը: Դա, թեև երիտասարդ, բայց արդեն տասը արարվա դերասանութիւն էր: Նույնին երիտասարդ, բայց ոչ անփորձ դերասանութիւն, որին շատ շագ հայտնի էին բեմական դաշտները: Հնանապես այնքան հեշտ էրան ազգել, ինչպիս հանդիսանալին: Ներկայացման վերջին պատկերն է, Կորրագո-Աղամյանը թույն է ընդունում: Տեսնելով Կորրագո-Աղամյանի տառապանքը, օրհասական տանշանելիքները, թէ ինչպես աթոռից բնիկում է սած և իրենից երկու քայլի վրա անշնչանում, դերասանութիւն այնքան և այնպես է հավատում բնմում անդիւ անհեցածին, որ դրանից աղդպած՝ ուշագնաց վայր է ընկնում:

Ժամանակակիցները պատմում են, թէ ինչպես է Աղամյանը շփոթվել այդ դեպքից: Ոչ ոք ուշադրություն չի դարձրել թատրոարանի կողմը, որ թնդում էր անվերջանալի ծափահարություններից: Ռուսորի ուշադրությունը ուշագնաց դերասանութուն կողմն էր: Աղամյանը դրկել է անրարրատ դերասանութուն և մի քանի անգամ ձայն ավել՝ քրժիշկ բերեցաւ Վերջապես ուշքի է եկել դերասանութիւն, ուժեղով, որ այլն չի կատարելու էմմայի դերը, այն էլ Աղամյան-Կորրագոյի հետ:

Այս պատմել է այդ ներկայացման մասնակիցներից մեկը՝ Արամ Վրույր (Ա. Վրույր, էջ 27—28): Այդ մասին պահպանվել է նաև ներկայացման մասին արտահայտված հոգվածադադրի միայնությունը («Արևելք», 1888, № 1447):

24 «Одесский Вестник», 1887, № 319: Այս մեջբերումներում եղած բոլոր ընդդժումները մերն են:

- 25 «Братская помощь», 1898.  
26 *Sb'* «Театр», 1956, № 8, 1957, № 1.  
27 *Sb'* Н. Л. Тираспольская, № 60—61.  
28 К. С. Станиславский, «Собрание сочинений», ч. 5, 1958,  
ч. 190—191:  
29 «Новороссийский телеграф», 1887, № 3912:  
30 «Театр и жизнь», 1888, № 100:  
31 «Призыв», 1897:  
32 «Одесский Вестник», 1887, № 293:  
33 «Новороссийский телеграф», 1887, № 3899, «Елисавет-  
градский Вестник», 1888, № 10.  
34 *Sb'* «Одесский Вестник», 1887, № 301, «Новороссий-  
ский телеграф», 1887, № 3886, «Іннірбрюхів шрфбюти», 1936,  
№ 10, № 13—14, «Іннірбрюхів шрфбюти», ч. 8, 1951, № 175 і тижні;  
35 «Іннірбрюхів шрфбюти», 1936, № 13—14;  
36 Іннірбрюхів шрфбюти;  
37 «Одесский Вестник», 1887, № 307:  
38 «Московская пчела», 1885, № 2:  
39 «Елисаветградский Вестник», 1888, № 10:  
40 «Одесский Вестник», 1887, № 293:  
41 «Новороссийский телеграф», 1887, № 3912:



---

---

## ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

- Արելլան Հովհաննես—174, 356;  
Արժայիլով Խ. Պ.—215, 221;  
Արտվ Գևորգ—386;  
Աղբամազ—150;  
Աղեիզ—404;  
Աթիլա—165;  
Արպերս Բ.—17, 18, 382;  
Աւերսեն Ս. Պ.—128;  
Ազայան Ղազարոս—287;  
Ամբիկյան Միհրատ—101;  
Այվազովսկի Հովհաննես—170;  
Անդրեև-Բուրյակ Վասիլի Նիկոլաևի—258, 368, 397;  
Աստրյան Հովհաննես—73, 76;  
Աստանգով Մ. Ֆ.—316;  
Աստղիկ—40, 48, 54;  
Ավալյան Մկրտիչ—48;  
Աբքազինի Գրիգոր—29, 32, 46, 47, 56;  
Աբքազինի Սենեքրիմ—53, 133, 135, 142, 210, 258, 259, 357,  
395, 399, 400, 402;  
Արմենյան Արմեն—377;  
Բաբաջյան Դ. Հ.—402;  
Բագրատոսինի Մմրատ—104;  
Բամենով Ա. Ն.—221, 251, 393, 397, 401;  
Բայրոն—105, 142բ;  
Բաշինչաղյան Գևորգ—10;

- Բառեալ Հյուզվիկ—80, 81, 91, 92, 96, 164, 177, 178, 180, 181,  
     184, 185, 187—189, 195, 199, 226, 233, 377;  
 Բասերման Ալբերտ—198;  
 Բարբի—167;  
 Բելինսկի Վիստրին Դրիգորիկ—114, 119, 120, 131, 198, 201,  
     250, 256, 259, 261, 262, 265, 270, 302, 317, 336, 339,  
     386, 391, 395, 397, 400, 402;  
 Բևատերման—167;  
 Բէրբէշ Ռիւարդ—77, 178, 206, 207, 216, 221, 222;  
 Բերեզարկ Ի.—393, 400;  
 Բլոկ Ալեքսանդր Ալեքսանդրովիկ—382;  
 Բրուկ Գիտեր—322, 326;  
 Բուսս Էզվին—179;  
  
 Դարրիկ Դավիթ—167, 305, 334;  
 Դյոթե Վոլֆանգ—30, 105, 187, 221, 222, 252, 253, 256, 257,  
     273, 341, 397;  
 Դոգալ Նիկոլայ Վասիլիկիլ—17—19, 39, 54, 131, 362, 385;  
 Դոնչարով Իվան Ալեքսանդրովիկ—117, 386;  
 Դորյումով Ա.—285;  
 Դորկի Ալեքսեյ Մաքսիմովիկ—8, 54, 363, 381, 403;  
 Դրամատիկոս Սարսո—276, 277, 306;  
 Դրիբոյեդով Ալեքսանդր Սերգեևիկ—40, 54, 56, 58, 102, 103,  
     105—108, 118—120, 366, 385—387;  
 Դրիգորիկ Ապուլոն Ալեքսանդրովիկ—117;  
 Դրինվալդ Յա.—393;  
 Դուբերնատիս Ա.—399;  
 Դուցկով Կարլ—80, 82—84, 384;  
  
 Դաղսկի Մամոնտ—207, 398;  
 Դւլլ Ա.—398;  
 Դհ-Ռիբաս Ա.—391;  
 Դինո—38;  
 Դյալենկո Վ.—31;  
 Դյումա Ալեքսանդր—56;  
 Դյուսիս—326;  
 Դյուկանժ Վիկտոր—38;  
 Դորուլուրով Նիկոլայ Ալեքսանդրովիկ—230, 238, 250, 393—395;  
 Դրուժինիս Ա.—250;

Դուղեմիով Պ.—318, 340—401.

Դուրիլին Ս. Ն.—390, 391.

Երիսեն Պ. Զ.—251, - 398.

Երևանիայան—398;

Երևանիա Մարիա Նիկոլաևնա—Զ, 151.

Երշտան Մահմետ—55:

Զագուլյան Մ.—250, 251.

Զախարյան Բ.—315, 316.

Հինգերման Բ. Ի.—398.

Զոգրաֆ Ն. Պ.—389.

Զոնենտալ—80, 81, 84, 85—87, 89, 93, 94.

Զոսով Ռաֆայել—131:

Հմիր—255, 397:

Հնդելու Ֆրիդրիխ—10, 365, 381.

Հովհաննես—102, 108, 116—118, 385.

Թերզիքաշյան Վահրամ—401.

Թիմրյան Կարապետ—383:

Թումանյան Հովհաննես—348, 355, 356, 396, 401—403.

Թումանյան Խվարդ—396:

Փիվսկինի—116:

Իրան Հենրիկ—54:

Իռամիմի Յոհաննեֆ—376:

Իվանով-Կողելսկի Միտրոֆան Տրտիմովիչ—112:

Լալայան—24:

Լենին Վլադիմիր Իլիիլ—8, 9, 300, 362, 381, 400, 403,

Լենսկի Ալեքսանդր Պավլովիլ—9, 34, 80, 95, 168, 172, 190, 206,  
216, 269, 272, 389,

Լենկիմով—165:

Լեսինգ—18:

Լերմոնտով Միխայել Յուրիկիլ—54, 129, 130, 132, 133, 135—139,  
141, 142, 144, 150, 152, 388,

Լյուիս—198:

Համամեռվ Կ.—387

Լեռնյան Գարեգին—357.

Խիդոյատով Արրար—282, 398.

Կարաս-Մուրզու—10.

Կարատիգին Վասիլիի Անդրեևիլ—112, 140, 216, 271, 395.

Կաշալով Վասիլիի Բվանովիլ—111, 112, 399.

Կոնին Ա.—199.

Կոռնելլ Պիեր—271.

Կուպիլ Ա.—182, 382, 390.

Հախոսմյան Տիգրան—388.

Հառապտման Հ.—54.

Հեղիլ—252, 256.

Հյուզոն Վիկտոր—27, 139, 142, 274.

Հովհակիմյան Վիկտոր—388.

Հովհաննեսիսյան Հովհաննես—10.

Մանդինյան Ամիրան—20, 48, 54, 55, 101, 110, 115.

Մանվելյան Միքայիլ—169.

Մաշի Անդրեան—168.

Մուսեյյան Հովհաննես—355, 369, 393, 399.

Մառուցիլի Հենրի—274.

Մաքսիմով Ա. Մ.—271, 372.

Մելիքսեբյան Մարգիս—343, 383, 389, 391, 392, 395, 400—402.

Մելվիլի—34, 38.

Միխոնէս Սոլոմոն Միխայլովիլ—215, 216, 227, 228, 393.

Միխոսլավսկի—226.

Մինց Ն. Վ.—389.

Մնակյան Մարտիրոս—110, 115, 126.

Մոդենա Գուստավ—290.

Մոյինո Ժան Բատիստ—17, 21, 30, 35, 107.

Մոլթկ—165.

Մոշալով Պավիլ Մտեպանովիլ—17, 111, 151, 191, 198, 201, 203, 216, 251, 257—259, 262, 265—271, 302—304, 317, 318, 321, 368, 373, 398.

Մորգինով Նիկոլայ Դմիտրիիլ—168.

Մորոզով Մ. Մ.—308, 309, 388, 389, 393, 400.

Մաւսե-Սյուլի—115, 168, 181, 290, 349.

Մուրացան—53.

Հարդակինտ Ալեքսանդրա Ալեքսանդրովնա—199, 391.

Հարիշկին Ա.—248, 254, 255, 265, 269, 297, 299, 302, 305, 310,  
323, 337, 393, 402.

Հուզովսկի Յու.—263, 397.

Յուզին Ալեքսանդր Իվանովիչ—290, 318, 401.

Յուրի Յուրի Միխայլովիչ—222—224, 234, 393,

Նուպովնոն Բոնապարտ—165.

Նեմիրովիչ-Դանչևնիկո Վ.—126, 356.

Նեյտ—219.

Նովիցիի Պ. Ի.—387.

Շահրապյան Երանեանի—149, 170.

Շերսովի Վիլյամ—9, 11, 30, 38, 40, 52—54, 56, 105, 107, 131,  
155, 162, 167—169, 178—181, 190, 215, 220, 224, 238,  
250—255, 271, 276, 277—279, 284, 287, 293, 304, 306—308,  
310, 312, 322, 325, 328, 329, 333, 337, 340, 342, 343,  
346, 354—356, 365, 366, 388, 389, 391, 393, 395, 398—402.

Շիլեր Ֆրիդրիխ—18, 35, 38, 40, 53, 56, 105, 107, 131, 365, 366.

Շիրվանզագի Ալեքսանդր—10, 54, 65, 158, 159, 202, 209, 218,  
219, 241, 246, 285—288, 290, 294—296, 321, 331, 349,  
360, 361, 363, 392, 393, 396, 398, 399, 401, 402, 405.

Շլեպիկին Միխայիլ Սեմյոնովիչ—116, 357.

Շրեգեր Ֆրիդրիխ—294, 295.

Շոմակի Մերգեյ Վասիլևիչ—112, 113, 115, 116, 127, 368.

Շեիրս—129.

Չարսկի—163.

Չայկովսկի Պյոտր Խլիբի—9.

Չեխով Անտոն Պավլովիչ—190, 390.

Չերնիշևսկի Նիկոլայ Գավրիլովիչ—250.

Չինտիս—163, 169, 178, 181.

Չմշկյան Գևորգ—20, 34, 48, 101, 110, 157, 158, 174, 358.

Չուլկո Վլադիմիր Վիկտորովիչ—132, 135, 139, 142—144, 146—150,  
152, 247, 252, 254, 255, 257, 259, 260, 285, 288, 306,  
328, 332, 333.

- Պալմ Ս. Ա.—50, 115.  
 Պանակ Իվան Խվանովիլ—390.  
 Պատկանյան Ռաֆայել—135—138, 141, 144.  
 Պատկանյան Միքայել—106.  
 Պարոնյան Հակոբ—56.  
 Պետրոսյան Գևորգ—80, 237.  
 Սիվցով Խըարիս Նիկոլաեիլ—214.  
 Պիոարկ Մ. Ի.—80, 140, 150, 151, 388.  
 Պիոարիսի Բ.—387, 403.  
 Պոլեսյ Նիկոլայ Ալեքսեիլ—131, 251.  
 Պոստրոս Էնհամ—223, 377.  
 Պոտեխին Ալեքսեյ Անտիպովիլ—31.  
 Պուշկին Ալեքսանդր Սերգեևիլ—133, 163, 203, 391.  
  
 Զանան Մկրտիչ—169.  
 Զանոմյանց Հ.—387.  
 Զիովանի Էմանուէլ—206, 207.  
 Զիսկոմետասի Պառլ—63, 63.  
  
 Ռասսոին Ժան—271.  
 Ռեպին Իլյա Եֆիմովիլ—9.  
 Ռեյդրեվ Մայկլ—336.  
 Ռիմսկի-Կորսակով Միխայիլ Նիկոլաեիլ—9.  
 Ռոսսի Էնիստոն—34—49, 62, 72, 76, 81, 134, 163, 176—179, 181—  
     190, 218, 222—224, 226, 233, 234, 290, 304, 346, 348,  
     349, 377, 395, 399.  
 Ռուսոս Ժան-Ժակ—204.  
  
 Սաղովակի Պրով Միխայլովիլ—124, 216.  
 Սալվինի Բուզազո—34, 62, 72, 75, 76, 81, 163, 164, 177, 181,  
     182, 189, 191, 192, 194, 195, 198—201, 203, 205, 224, 304,  
     319, 346, 371—373, 377.  
 Սալտիկով Շէնդրին Միխայիլ Եկոբաֆովիլ—9.  
 Սամարին Իվան Վասիլևիլ—112, 140.  
 Սամուլով Վասիլի Վասիլևիլ—216, 217, 225, 227, 251, 290, 322,  
     323, 335, 393, 397.  
 Սամվելյան Հ.—394.  
 Սամինա Մարիս Պավրիլովիտ—49.  
 Մարգարյան Ա.—120.

- Մենակովովի — 129;  
 Միքանուցը — 40, 48, 110, 355.  
 Մուսիմալավուշի Կոնսուանսին Սերգեյի — 181, 194, 195, 373, 390,  
     405;  
 Մուկանյան Գ. Խ. — 358;  
 Մոռուժինկո — 179, 181;  
 Մոռիչովի — 45;  
 Մուզակով Ի. Յո. — 128;  
 Մուխտօն-Դորային Ալեքսանդր Վասիլիի — 35, 40, 53, 101, 102,  
 Մունծուկյան Գարբինի — 25, 33, 35, 39, 47, 53, 102, 357, 388.  
 Մուզրով — 165;  
 Մուրհնյան Վարդպետ — 10;  
 Մուրիկով Խման Զախարավիլ — 9.  
  
 Վալբիկո Ի. Ա. — 289;  
 Վաղարշյան Վաղարշ — 318, 388, 400;  
 Վասաձի Ակակի — 169;  
 Վասիլի Ս. — 172;  
 Վարդանյան Վ. Տ. — 356;  
 Վարդովյան Հակոբ — 157;  
 Վարդուճի — 49;  
 Վհակովակի Ալբրիտ — 249, 254, 257, 259, 580,  
 Վհրդեր — 256, 257;  
 Վիլդե — 140;  
 Վուկոնովի Ս. — 198;  
 Վրույր Արամ Մ. — 55, 381, 382, 404.  
  
 Տարմա Ֆրանսուա Ժոզեֆ — 325;  
 Տարոնցի Սովորոն — 386;  
 Տեր-Աստվածատրյան Կ. — 120, 385, 386;  
 Տեր-Գրիգորյան Մ. — 25;  
 Տեր-Գրիգորյան Էմին — 383;  
 Տեր-Դամիլյան Գևորգ — 45, 48—50;  
 Տիրասպոլսկայա Նազեմյա Լվովիա — 72, 193, 371, 388, 405;  
 Տիմասիկ Վ. Վ. — 168;  
 Տոլստոյ Լև Նիկոլաևիլ — 9, 54, 378;  
 Տուրգենև Խման Սերգեյիլ — 30.  
  
 Դաշտի — 10, 11, 27, 28.

Փափազյան Ալեքսանդր—88, 168, 175, 356, 387, 388.  
Փրիզոնյան Գ.—383.

Թալանթոր Հենն—365, 357, 365, 402.

Թեմբը—157.

Թիկ Էգմանդ—167, 191, 198, 200, 203, 218, 220, 229, 389, 391,  
393, 402.

Թիւմիշյան Ալեքսանդր—53, 58.

Օրոգովովիկի—131.

Օգարյան Ն. Գ.—117, 386.

Օլիվյեն Լոււրենս—308, 309.

Օլբիչ Ալբա—163, 176, 177, 191, 192, 194, 195, 199, 200, 203,  
217, 221, 222, 390, 391, 393.

Օոլով Վ. Ն.—128, 387.

Օստրովսկի Ալեքսանդր Նիկոլաևիչ—35, 40, 53, 54, 62—64, 101,  
102, 366, 383.

Օստուժեն Ալեքսանդր Ալեքսեևիչ—168, 174, 215, 216, 389.

Յասոնուանյան Բովման—55.

Յեխտեր Ալբերտ—198, 201.

Ֆիլդ—177, 178.

Ֆիլիպով Վ. Ա.—386, 401.

Ֆոյնորախ—362.

Ֆորկասի—349.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նույարան

5

### Դ Հ Ա Հ Խ Ա Խ Ա Հ Խ Ե

Քայլար Աղամյանի դիմ՝ Աղամյանի նամար . . . . . 23

Մելոզաման Հայ Հասարակական մաքի դատաստանի

առաջ . . . . . 15

Աղամյանը քննադատության առաջ . . . . . 36

Դերիահաղթահարում . . . . . 47

### Դ Հ Ա Հ Խ Ա Բ Բ Կ Բ Ա Բ Դ

Կղասիկ դրամառուրզիայի նախապահին . . . . . 59

Կորրագու . . . . . 61

Ուրիել Ակոստա . . . . . 79

### Դ Հ Ա Հ Խ Ա Բ Բ Բ Ա Բ Դ

Ռուսական կերպարների աշխարհում . . . . . 97

Զագկի . . . . . 99

Արքենին . . . . . 129

### Դ Հ Ա Հ Խ Ա Հ Ա Բ Բ Ա Բ Դ

Աղամյանի Շենօղից . . . . . 155

Օթևալու . . . . . 157

Լիր արքա . . . . . 207

Համբետ . . . . . 243

Աւշարան . . . . . 251

Աղյուսներ և լրացումներ . . . . . 379

Անվանացունկ . . . . . 407

Խորեն Վահագի Զարյան  
Рубен Варосович Зарян  
«Ա. Դ. Ա. Տ. Ա. Ա. Ա»  
(Արվեստը)

Խմբադիր՝ Լ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ  
Հրատարակչական խմբադիր՝ Հ. Ե. ԳԱԼՅՈՍՅԱՆ  
Սուպեր շատիկը, կազմը և անվանաթերթը  
ԱՆ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ  
Տեխն. խմբադիր՝ Խ. ՄԱՄՎԵԼՃԱՆ  
Վերառուղու որրագրիչ՝ Ի. Ա. ԲՐՈՒԲՅԱՆ

ՎՃ 06017. ԽՀԿ 663: Պ. 2664: Հքամ. № 1910: Տիրաժ 2000:  
Հանձնված է արտադրության 2/IX 1960 թ.:  
Սոսրագրված է տպագրության 13/XI 1960 թ.:  
Թուղթ՝ 84×108<sup>1/32</sup>: Տպագր. 26 Ժ. + 13 Ներգ., Հքամ. 15,19 Ժ.:  
Գինը կազմով 11 ո. 76 կ.:  
1/1 1961 թ. գինը 1 ո. 18 կ..  
Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պալիգրաֆ արդյունաբերության Գլխավոր  
գործության № 6 ուղարան. Երևան, Խնկենի պողոտա Հե 51:

ՆԳԱՀԱՎԱՐ ՎՐԵԿԱԿԱՆԵՐ

համար	Տարի	Տարբերակած է	Գլուխ է ընթափ
10	24.	Խաժանաց և մակր	Խաժանաց և մակր
357	8-9 ա.	Կայքարի,	Կայքարի,
394	10 դ.	(1859, № 9),	(1859, № 9),
407	2 ա.	162 ը	142
410	17 ա.	Մառեկ էլեմենտ	Մառեկ էլեմենտ
412	7 դ.	Օկզիզով	Օկզիզով
413	9 դ.	Սուխովովսկովային	Սուխովովսկովային
413	16 ա.	280	260

1	99
2	75
3	100
4	100
5	100
6	100
7	100
8	100
9	100
10	100
11	100
12	100
13	100
14	100
15	100
16	100
17	100
18	100
19	100
20	100
21	100
22	100
23	100
24	100
25	100
26	100
27	100
28	100
29	100
30	100
31	100

ՎՃ 06017. ԽՀԻ 665. Պ. 2664. Հքառ. № 1910. Տիբառ 3000:

Հանձնված է արտադրության 21/IX 1960 թ.  
 Ստորագրված է տպագրության 12/XI 1960 թ.  
 Թուղթ՝ 84×108<sup>1/2</sup> Ցողազր. 26 մ. + 13 ներզ., Հքառ. 15, 19 մ.  
 Գինը կազմով 11 ո. 76 կ.  
 1/1 1961 թ. գինը 1 ո. 18 կ.

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հքանաքական-  
 թյառների և ուսմէդրության արդյունաբերության Գլխավոր  
 գործության № 6 տպարտն. Երևան, Անդինի պողոտա № 51:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Օրակ.



FL0022845

A 11  
5583